

**ԿԻԼԻԿԻԱՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ
ՆԱԽԱԳԾԵՐԸ 1914-1918 ԹԹ.:
ՀԱՅԿԱԿԱՆ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ԼԵԳԻՈՆԸ
ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ**



ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ

**ԿԻԼԻԿԻԱՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ
ՆԱԽԱԳԾԵՐԸ 1914-1918 ԹԹ.:
ՀԱՅԿԱԿԱՆ (ԱՐԵՎԵԼՅԱՆ)
ԼԵԳԵՈՆԸ**

ԵՐԵՎԱՆ

2023

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

Պ 797

*Մենագրությունը տպագրության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի կողմից*

Խմբագիրներ՝

պ. գ. դ., պրոֆեսոր Վանիկ Վիրաբյան

պ. գ. դ., պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյան

Գրախոսներ՝

պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյան

պ. գ. դ., պրոֆեսոր Վարուժան Պողոսյան

Պողոսյան Ս. Ա.,

Պ 797 Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.: Հայկական
(Արևելյան) լեզուներ / Ս. Ա. Պողոսյան.- Եր.: Քոփի Փրինթ, 2023.- 372 էջ:

Մենագրության մեջ հանգամանորեն ուսումնասիրվել և լուսաբանվել են 1914-1918 թթ. Կիլիկիայի շուրջ ծավալված ռազմաքաղաքական իրավիճակն ու դիվանագիտական պայքարը: Աշխատության խնդիրն է բացահայտել, վերլուծել ու հնարավորինս օբյեկտիվորեն ներկայացնել Անտանտի աջակցությամբ և հայկական գինուժով Կիլիկիան ազատագրելու ուղղությամբ կատարված բանակցությունները, նախաձեռնությունները, նախագծերն ու ծրագրերը: Մանրամասն ներկայացվում են Հայկական լեզուների կազմավորման շուրջ բանակցությունները, ձևավորման գործընթացը, մարտական ուղին: Ուսումնասիրության մեջ ճշգրտված է լեզուների մասնակցությունը Մեզիդոյի ճակատամարտին, և հայկական գինուժի կողմից Բեյրութի ու Կիլիկիայի ազատագրման հանգամանքները:

Աշխատությունը հնարավորություն է տալիս հասկանալու տերությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում տարբեր գերատեսչությունների ու գործիչների շահերի բախումը, որոշումների կայացման գործընթացը:

Մենագրությունը նախատեսված է պատմաբանների, դիվանագետների, ռազմական փորձագետների, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակի համար:

ՀՏԴ 94(479.25)

ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-875-74-3

© Քոփի Փրինթ, 2023

© Պողոսյան Ս. Ա., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	20
1.1 ԿԻԼԻԿԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ.....	20
1.2 ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ.....	26
1.3 ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ.....	52
1.4 ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ.....	85
1.5 ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1917 Թ. ԵՎ 1918 Թ. ՍԿԶԲԻՆ.....	93
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՓՀԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԸ.....	107
2.1 ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ.....	107
2.2 ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ.....	134
2.3 ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻՆ ԶԻՆՎՈՐԱԳՐԵԼՈՒ ՖՐԱՆՍ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ.....	153
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
ՀԱՅԿԱԿԱՆ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.....	173
3.1. ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ 1916 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ.....	173
3.2 ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ.....	191
3.3 ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.....	215
ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ	
ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ.....	268
4.1 ԼԵԳԵՈՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.....	268

4.2 ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐՈՎ	303
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	339
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	352

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մերձավոր Արևելքը, սկսած 19-րդ դարից, երբ Օսմանյան կայսրությունը թուլացել ու կանգնել էր մասնատման եզրին, հայտնվել էր խոշոր տերությունների հակամարտությունների կիզակետում: Այդ գործընթացները շարունակվում են նաև այսօր: Տարածաշրջանի կարևոր երկրամասերից է Միջերկրականի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան, որը բոլոր ժամանակներում ռազմավարական և տնտեսական մեծ նշանակություն է ունեցել:

Առաջին աշխարհամարտի տարիներին Կիլիկիան հայտնվել էր հայ քաղաքական շրջանակների և Անտանտի երկրների հետաքրքրությունների ոլորտում: Տեղի ունեցած բանակցությունների, նախաձեռնությունների ու համաձայնագրերի լուսաբանումն արդիական է մերձավորարևելյան ներկա գործընթացների համապատկերում: Հիմնահարցի ուսումնասիրությունը չափազանց կարևոր է, քանի որ թույլ է տալիս հասկանալ մեծ տերությունների խոստումների, համաձայնագրերի, դաշնակիցների նկատմամբ ստանձնած պարտավորությունների կատարման պատրաստակամությունը և խաբելու հավանականությունը:

Աշխատությունը հնարավորություն է տալիս հասկանալու տերությունների միջև, ինչպես նաև նրանց ներսում տարբեր գերատեսչությունների ու գործիչների շահերի բախումը, որոշումների կայացման գործընթացը: Հետևաբար՝ հիմնահարցի ուսումնասիրությունը կարող է կանխատեսելի դարձնել մեր տարածաշրջանում տերությունների քաղաքականությունը, և այն հնարավորություն է տալիս փորձելու գտնել նոր լուծումներ:

Ուսումնասիրությունն առնչվում է նաև Հայոց մեծ եղեռնին՝ այն կանխելու հնարավորությանը: 21-րդ դարում ականատես ենք լինում Սիրիայում, Իրաքում, Արցախում և այլ վայրերում էթնիկ ու կրոնական տարբեր խմբերի նկատմամբ կիրառվող ցեղասպանական գործողություններին և դրանց նկատմամբ «քաղաքակիրթ» աշխարհի արձագանքին: Նախորդող հարյուրամյակի ընթացքում տեղ գտած ողբերգությունները բավարար չափով չսթափեցրին մարդկությանը, որպեսզի ստեղծվեն նման զանգվածային հանցագործությունները կանխելու ավելի հստակ մեխանիզմներ:

Մենագրության գլխավոր նպատակն է հանգամանորեն ուսումնասիրել և լուսաբանել 1914-1918 թթ. Կիլիկիայի շուրջ ծավալված ռազմաքաղաքական իրավիճակն ու դիվանագիտական պայքարը: Կիլիկիան Անտանտի

աջակցությամբ և հայկական զինուժով ազատագրելու ուղղությամբ կատարված բանակցությունները, նախաձեռնությունները, նախագծերն ու ծրագրերը, հայկական այդ երկրամասին տիրելու նպատակով ծավալված դիվանագիտական պայքարը գրեթե ամբողջությամբ դուրս են մնացել պատմագիտական ուսումնասիրությունների շրջանակից: Մենք փորձել ենք լուծել այդ խնդիրը, բացահայտել, վերլուծել ու հնարավորինս օբյեկտիվորեն ներկայացնել այդ իրադարձությունների հետ կապված գործընթացները: Առաջնորդվել ենք պատմականության սկզբունքով, այսինքն՝ խնդիրը ներկայացրել ենք իրադարձությունների զարգացման ընթացքի մեջ: Դա մի ժամանակաշրջան էր, երբ ձգտումներն ու ծրագրերը, հավակնություններն ու ախորժակները փոփոխվում էին՝ կապված տարբեր ճակատներում բանակների հաղթանակներով ու պարտություններով, հեղափոխություններով ու պատերազմի մեջ նոր պետությունների մուտք գործելով:

Գիտական նորույթը.

1. Առաջին անգամ արխիվային նյութերի ու փաստաթղթերի ժողովածուների ուսումնասիրության հիման վրա ամբողջականորեն ներկայացվել են Կիլիկիան Անտանտի երկրների կամ հայկական զինուժով ազատագրելու ուղղությամբ կատարված բանակցություններն ու նախագծերը, դրանց հետ կապված խնդիրները և նպատակները պատերազմի տարբեր փուլերում:

2. Համակողմանիորեն լուսաբանվել են պատերազմի տարբեր փուլերում Անտանտի երկրների հետաքրքրությունները Կիլիկիայում, նրանց միջև տեղի ունեցող դիվանագիտական պայքարն ու բանակցությունները: Ներկայացվել են մեծ տերությունների տարբեր գործիչների ու գերատեսչությունների տեսակետներն ու հակասությունները Կիլիկիայի ապագայի հարցում:

3. 1914-1918 թթ. մեծ տերությունների վարած քաղաքականությունը Կիլիկիայի ուղղությամբ և այն ազատագրելու Անտանտի ծրագրերը մասնակիորեն և մակերեսորեն են լուսաբանվել: Տիգրան Սարուխանյանը ներկայացրել է Մեծ Բրիտանիայի¹, իսկ Երվանդ Գասպարյանը՝ Ֆրանսիայի² քաղաքականությունը՝ կապված Մեծ եղեռնը կանխելու նրանց հնարավորության հետ: Սույն աշխատության մեջ ներկայացվել են Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի ռազմական ու պետական գործիչների՝ Կիլիկիան բրիտանական, ֆրանսիական, հայկական, ճապոնական զորքերով

¹ Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005:

² Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000:

ազատագրելուն ուղղված առաջարկները, դրանց քննարկումներն այդ երկրների քաղաքական ու ռազմական իշխանությունների կողմից: Վերլուծության են ենթարկվել այդ ծրագրերի գործադրման հնարավորությունները և հետևանքները:

4. Առաջին անգամ գիտականորեն լուսաբանված են Կիլիկիայում ափ-հանում կատարելու ֆրանսիական ռազմական գործիչների նախագծերն ու հիմնավորումները, ինչպես նաև դրանք կյանքի կոչելուն խոչընդոտած պատճառները:

5. Պատմագիտության մեջ մեծ ուշադրություն է դարձվել մուսալեռցիների հերոսամարտին, սակայն հայրենի հողն ազատագրելու ուղղությամբ նրանց հետագա քայլերն ու նախաձեռնությունները մնացել են գրեթե անհայտ: Առաջին անգամ գիտականորեն լուսաբանվել ու վերլուծության է ենթարկվել նրանց կողմից արված առաջարկները, ռազմական մարզումները, ֆրանս-բրիտանական ծրագրերը՝ կապված մուսալեռցիների հետ:

6. 1914 թ. վերջերից քննարկվել է Կիպրոսում հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը: Դա 1916 թ. երկրորդ կեսին հանգեցրեց Հայկական լեգեոնի կազմավորմանը: Այս հիմնախնդիրը նույնպես ամբողջականորեն և գիտականորեն նախկինում գրեթե չի լուսաբանվել:

7. Հայկական լեգեոն կազմավորելու նախաձեռնության, դրա շուրջ բանակցությունների և համաձայնության կայացման մասին պատմագիտության մեջ շրջանառվել են տարբեր տեսակետներ, սակայն դրանք հիմնականում եղել են թերի կամ սխալ: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նախորդ ուսումնասիրողները հենվել են միայն լեգեոնականների հուշերի վրա: Ներկայացված է այդ գործընթացի ամբողջական պատկերը, ուղղումներ են մտցված նախկինում ընդունված տեսակետների վերաբերյալ:

8. Առաջին անգամ գիտականորեն ներկայացված են ամերիկահայերի, արգենտինահայերի և հայ ռազմագերիների կամավորագրության գործընթացի հետ կապված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված ջանքերը:

9. Պատմագիտության մեջ առաջ է քաշվել ոչ ճիշտ տեսակետ, որ իբր ամերիկահայ ավելի մեծ թվով կամավորների միացումը լեգեոնին խոչընդոտվել է ֆրանսիական իշխանությունների կողմից: Լուսաբանված են այդ խնդրի հետ կապված բոլոր մանրամասնությունները:

10. Հայ պատմագիտության մեջ Արարայի ճակատամարտի մասին շատ է գրվել, սակայն չի ներկայացվել, որ դա 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի կամ Արմագեդոնի ճակատամարտի դրվագներից մեկն

եր միայն: Քանի որ Պաղեստինյան ռազմաճակատի գործողությունները և Հայկական լեգեոնի պատմությունը գիտական լուրջ ուսումնասիրության չեն ենթարկվել հայ պատմագիտության կողմից, դա է պատճառ դարձել, որ այդ իրադարձություններից մեկ դար անց, հայ իրականության մեջ դեռևս Մեգիդոյի ճակատամարտը և դրանում Հայկական լեգեոնի իրական դերը չի լուսաբանվել: Հայագիտության մեջ առաջին անգամ մանրամասն ներկայացված է Պաղեստինյան ռազմաճակատի այդ խոշորամասշտաբ գործողությունը, որի արդյունքում թուրքական ռազմաճակատը փլուզվեց: Լուսաբանված են հայկական զորամասի իրական դերակատարումը, նրա գրաված դիրքը, ինչպես նաև ֆրանսիական իշխանությունների ձգտումը՝ հնարավորինս փառաբանելու լեգեոնի հաղթանակը՝ Ֆրանսիայի հեղինակությունը տարածաշրջանում մեծացնելու նպատակով:

11. Ուսումնասիրված և ճշգրտված է Մեգիդոյի ճակատամարտից մինչև Կիլիկիա Հայկական լեգեոնի ուղին: Այս հարցի շուրջ նույնպես հայ պատմագիտության մեջ սխալ տեսակետներ են առաջ քաշվել, որ իբր լեգեոնը մասնակցել է Դամասկոսի և Հալեպի գրավմանը: Իրականում լեգեոնը ծովափի երկայնքով է առաջ շարժվել մինչև Բեյրութ, իսկ այնտեղից նավերով տեղափոխվել է Կիլիկիա: Հայկական լեգեոնի 3-րդ գումարտակն է հանդիսացել առաջին դաշնակցային զորամասը, որը ուղք է դրել Բեյրութ:

12. Հատուկ ուշադրություն է դարձվել լեգեոնի կողմից Կիլիկիայի ազատագրմանը: Ցույց է տրվում, որ Ադանայի նահանգն ամբողջությամբ ազատագրվել է Հայկական լեգեոնի կողմից:

13. Բացահայտվել են հայ գաղթականներին աջակցելու, մահմեդականների մոտ գտնվող հայ կանանց ու երեխաներին ազատելու լեգեոնականների գործողությունները: Ներկայացված է տարագիր երիտասարդների ձգտումը՝ միանալու հայկական զորամասին՝ հայրենիքն ազատագրելու նպատակով:

Մենագրության ժամանակագրական շրջանակը 1914-1918 թթ. են: Դա պայմանավորված է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տեղի ունեցող ռազմաքաղաքական գործընթացներով: Այս ժամանակաշրջանն ընտրվել է, քանի որ Կիլիկիան թուրքերից գրավելու, նրա ապագան որոշելու շուրջ նախագծերը, ծրագրերը, նախաձեռնությունները նոր ջրբաժան են հանդիսանում: Մեծ տերությունները պատերազմից առաջ այդ խնդիրը չէին քննարկել, իսկ պատերազմի ավարտից հետո նոր գործընթացներ են սկսվում: Հետևաբար՝ աշխարհամարտի տարիներին Կիլիկիային

առնչվող իրողություններն իրենց բնույթով խորապես փոխկապակցված են, մեկ ամբողջություն են կազմում, և բնականաբար անհրաժեշտ է դրանք ուսումնասիրել միասնական թեմայի շրջանակում՝ որպես շաղկապված պատմական զարգացումների հարաբերականորեն ինքնուրույն ընդհանրություն:

Մենագրության մեջ փորձ է արվել հնարավորինս օբյեկտիվ մոտեցում ցույց տալ փաստերի և իրադարձությունների ներկայացման ժամանակ, եզրահանգումներում զերծ մնալ կանխակալությունից: Առաջադրված կարևոր խնդիրներից է թեմայի բազմակողմանի և խորքային ուսումնասիրությունը:

Ըստ ներկայացվող խնդիրների, թեմաների և ժամանակագրության՝ համակարգվել ու ներկայացվել են ուսումնասիրվող հարցերը գլուխներով ու ենթագլուխներով:

Հիմնահարցի ուսումնասիրվածությունը: Սկզբնաղբյուրներ:

Թեման նախկինում ամբողջական գիտական ուսումնասիրության չի ենթարկվել: Նյութը ներկայացվել է հիմնականում սկզբնաղբյուրների հիմքի վրա: Բնականաբար, թեմայի գիտականությունը կտուժեր, եթե չօգտագործեինք այն գիտական ուսումնասիրությունները, հուշագրությունները, որոնցում լուսաբանված է մեր թեմային առնչվող այս կամ այն խնդիրը:

Հիմնահարցի հետազոտման համար կարևոր աղբյուր են հանդիսացել **Հայաստանի ազգային արխիվի** տարբեր ֆոնդերում պահվող փաստաթղթերը: Հատկապես կարևոր են Կաթողիկոսական դիվանի (Ֆ. 57), 1918-1920 թթ. ՀՀ ԱԳՆ (Ֆ. 200), Արշակ Չոպանյանի (Ֆ. 282), Ազգային պատվիրակության (Ֆ. 430), Հայկական հարցի մասին (Ֆ. 450), Ապահ Պետրոսյանի (Ֆ. 453), ՀՅԴ (Ֆ. 1457) ֆոնդերում պահվող նյութերը: Օգտագործվել են նաև **Գրականության և արվեստի թանգարանի՝** Արշակ Չոպանյանի ֆոնդի որոշ նյութեր: Առանց դրանց ուսումնասիրման անհնար կլիներ ամբողջական տեսքի բերել թեման: Չափազանց կարևոր են **Փարիզի Նուբարյան մատենադարանի** «Արևելյան լեզեոն-հայ կամավորներ» և «Կիլիկիայի ֆրանսիական գրավումը 1919-1922 թթ.» ֆոնդերի նյութերը:

Հայաստանի ազգային արխիվը և Սևծովյան ու Կասպիական տարածաշրջանի սոցիալական և քաղաքական հետազոտությունների ինստիտուտը համատեղ հրատարակել են Առաջին աշխարհամարտին հայերի մասնակցության մասին փաստաթղթերի ժողովածու: Նրանում ներառված են Հայաստանի ազգային և ռուսաստանյան պետական ռազմապատմական արխիվներում պահվող նյութեր: Ժողովածուի վերջին բաժինը նվիրված է Արևելյան լեզեոնին: Բերված են լեզեոնի կազմավորման շուրջ լոնդոնյան

համաձայնության և Ֆրանսիայի արտաքին գործերի ու ռազմական նախարարությունների ընդունած լեգեոնին անդամագրվելու պայմանները և կանոնադրությունը¹:

Պատերազմի տարիներին Թուրքիայի բաժանման, դիվանագիտական պայքարի, համաձայնագրերի, Կիլիկիայի նկատմամբ տերությունների ձգտումների մասին չափազանց արժեքավոր է ռուս պատմաբան **Եվգենի Ադամովի** խմբագրությամբ լույս տեսած փաստաթղթերի ժողովածուն, որում ընդգրկված են նաև ցարական կառավարության՝ Հայկական հարցին նվիրված պաշտոնական և գաղտնի գրեթե բոլոր փաստաթղթերը²:

Կիլիկիայում իրականացված տեղահանության, կոտորածների մասին փաստական հարուստ նյութ են պարունակում Կիլիկիայի կաթողիկոսական դիվանի վավերագրերը³:

Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի միավորմամբ հայկական ինքնավարություն ստեղծելու 1914 թ. հայ գործիչների ձգտումներին, ցարի պատասխանին, 1915-1916 թթ. Ջեմալ փաշայի հետ բանակցությունների խնդրին իր երկհատոր աշխատության առաջին հատորում որոշ չափով անդրադարձել է **Բագրատ Բորյանը**⁴:

Անտանտի երկրների բանակցությունները, նրանց պետական գործիչների ու դիվանագետների տեսակետները ռաումանսիրելու տեսանկյունից չափազանց արժեքավոր են **Աշոտ Հովհաննիսյանի**⁵ և **Ջոն Կիրակոսյանի**⁶ խմբագրությամբ հրատարակված փաստաթղթերի ժողովածուները: Դրանցում ընդգրկված են տարբեր արխիվներում պահվող կարևոր նյութեր:

Կիլիկիահայերի տեղահանության հետ կապված փաստաթղթեր կան **Մկրտիչ Ներսիսյանի** խմբագրությամբ հայերի ցեղասպանությանը նվիրված ժողովածուի մեջ⁷:

¹ Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.), Москва, 2014.

² Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е. Адамова, Москва, 1924.

³ Կիլիկեան կսկիծներ: Վավերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903-1915, Պէյրութ, 1927:

⁴ Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., 1928, с. 352, 371-374.

⁵ «Հայաստանի ավտոնոմիան» յեվ Անտանտան: Վավերագրեր ինպերիալիստական պատերազմի շրջանից, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, 1926:

⁶ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Ջ. Կիրակոսյան, Երևան, 1972:

⁷ Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна, Ереван, 1983.

Կարևոր սկզբնաղբյուր է սփյուռքահայ պատմաբան **Վաչե Ղազարյանի** անգլերենով հրատարակած փաստաթղթերի ժողովածուն, որը նվիրված է Պողոս Նուբարի քաղաքական գործունեությանն ու Հայկական հարցին, և որտեղ ընդգրկված են ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, հայկական տարբեր արխիվներում պահվող փաստաթղթեր¹: Նրանում ներառված են Հայկական հարցի շուրջ 1915-1918 թթ. տեղի ունեցած բանակցությունների, քննարկումների, առաջ քաշված նախագծերի ու դրանց ընթացքի վերաբերյալ 242 արխիվային փաստաթղթեր:

Սկզբնաղբյուրային կարևոր աշխատություն է ֆրանսահայ պատմաբան **Արթուր Պեյլերյանի** կազմած «Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918)» փաստաթղթերի ժողովածուն: Այստեղ ներկայացված են ֆրանսիական տարբեր արխիվներում պահվող Հայկական հարցին ու ցեղասպանությանը վերաբերող 757 փաստաթղթեր: Այն չափազանց կարևոր սկզբնաղբյուր է 1915-1916 թթ. հայկական գործառն կազմավորելու, Կիլիկիայում ափհանում կատարելու, մուսալեռցիների ռազմական կարողություններն օգտագործելու ֆրանս-բրիտանական քննարկումների մասին: Այստեղ Հայկական լեգեոնի կազմավորման և նախապատմության լուսաբանման, Կիլիկիայի նկատմամբ ֆրանսիական գործիչների հավակնությունների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր կան: Ներկայացված է հարցի շուրջ ֆրանսիացի պետական ու ռազմական գործիչների գրեթե ողջ պաշտոնական գրագրությունը: Ա. Պեյլերյանի կազմած ժողովածուն ֆրանսերենով լույս է տեսել 1983 թ. Փարիզում: Մենք օգտվել ենք երևանյան երկհատոր հրատարակությունից, որը լույս է տեսել 2005 թ.² պատմագիտության դոկտոր **Վարուժան Պողոսյանի** հայերեն թարգմանությամբ: Առաջին հատորում ներառված են 1914 թ. սեպտեմբերից մինչև 1917 թ. հունիս թվագրված 1-369 փաստաթղթերը³, իսկ երկրորդում՝ 370-757 փաստաթղթերը, որոնք ընդգրկում են 1917 թ. հունիսից մինչև 1919 թ. ապրիլն ընկած ժամանակահատվածը³:

¹ Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996.

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոգելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. Ա, Երևան, 2005:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոգելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, հ. Բ, Երևան, 2005:

Հուշագրություններ:

Սուրեն Պարթևյանը, ով Կահիրեի Ազգային միության ատենադպիրն է եղել, «Արարա: Հայկական լեզունը» հուշագրական գրքուկով առաջինն էր, որ անդրադարձավ Հայկական լեզունի գործունեությանը և Արարայի ճակատամարտին¹: Այն գրված է մեծ հուզականությամբ, որոշ հատվածներ ավելի շատ գեղարվեստական բնույթի են:

Միհրան Տամատյանի հուշերը սկզբնաղբյուրային կարևոր նշանակություն ունեն մեր թեմայի համար: Նա՝ որպես ականատես ու անմիջական մասնակից, ներկայացնում է Կիլիկիայում ավիանում կատարելու շուրջ որոշ նախագծեր և ամերիկահայերի կամավորագրության կազմակերպման գործընթացը²:

Մինչ այժմ Հայկական լեզունի մասին գրված գրքերից ամենահաջողվածն ամերիկահայ կամավորական **Տիգրան Պոյաճյանի** հուշագրությունն է³: Հեղինակ-ականատեսը ներկայացրել է ոչ միայն իր հուշերը, այլ նաև բազմաթիվ կամավորների հուշեր, նյութեր է քաղել գրքերից ու մամուլից: Տ. Պոյաճյանը փորձել է լուսաբանել Հայկական լեզունի կազմավորման ու գործունեության հետ կապված խնդիրները: Սակայն ամբողջական ու համակողմանի, գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ էր օգտագործել արխիվային փաստաթղթեր, պաշտոնական գրագրություններ, որոնք այս աշխատանքում բացակայում են:

Հետաքրքիր է նախկին լեզունական **Խորեն ավագ քահանա Աճեմյանի** հուշագրությունը⁴:

Լեզունի մասին հուշեր է թողել ամերիկահայ լեզունական **Մինաս Թաթարյանը**: Նրա՝ զենքի ընկերներից Լևոն Գույումճյանն այդ հուշերը հետագայում ուղարկել է Ներսես վարդապետ Բախտիկյանին, ով էլ 1960 թ. Անթիլիասում հրատարակել է «Կամավորի մը յուշերը» վերնագրով և գրել առաջաբանը: Հուշագրության մեջ նկարագրվում է ամերիկահայերի կամավորագրությունը լեզունին, նրանց մասնակցությունը Արարայի ճակատամարտին և Կիլիկիայի ազատագրումը: Վերջին էջերը վկայություններ են Մեծ եղեռնի թուրքական վայրագությունների մասին:

¹ Պարթևյան Ս., Արարա: Հայկական լեզունը, Իզմիր, 1919:

² Տամատյան Մ., Իմ յուշերես, Պէյրուս, 1985:

³ Պոյաճյան Տ., Հայկական լեզունը: Պատմական Յուշագրություն, Ութթրթաուն, 1965:

⁴ Աճեմյան Խ., Էջեր կամավորի օրագրես, Պէյրուս, 1967:

Մուսալեռացիների փրկության և ֆրանսիացի սպանների կողմից նրանց ռազմական մարզումների կազմակերպման, լեգեոնի կազմավորման մասին բավական հետաքրքիր տեղեկություններ է պարունակում ֆրանսիական բանակի ծովային սպա, այդ իրադարձությունների անմիջական մասնակից **Տիրան (Շառլ) Թեքեյանի** հուշագրությունը՝ «Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր»: Նա իր անբասիր ծառայության համար Ֆրանսիայի կառավարության կողմից արժանացել էր Պատվո լեգեոնի ասպետի աստիճանի և Պատվո լեգեոնի սպայի տիտղոսի: Հուշագրությունը ֆրանսերենով հրատարակվել է 1919 թ. Փարիզում: Այն առաջին անգամ ամբողջական հայերեն թարգմանությամբ լույս է տեսել Երևանում 2002 թ.:

Լեգեոնականների մասին կենսագրական հարուստ տեղեկություններ է հաղորդում ամերիկահայ կամավորական **Գրիգոր Մուրադյանը**: Նա գրում է. «Այս կամավոր Ուխտատուներուն յափտենապէս գնահատելի գործը մեր ապագայ սերունդին հայրենասիրական օրինակելի դասը և մեր նորագոյն պատմութեան ոսկետառ էջերը զարդարող նիւթն է՝ Յեղին ազատագրական անհաւասար պայքարին ընդմէջէն»¹:

Թեմայի ուսումնասիրությունն ամբողջացնելու, մեծ տերությունների քաղաքականությունը, ձգտումները հասկանալու, որոշ խնդիրներ ճշգրտելու հարցում արժեքավոր են օտարերկրյա պետական գործիչների՝ Ռուսաստանի ու Բրիտանիայի վարչապետներ **Ալեքսանդր Կերենսկու**², **Դեյվիդ Լլոյդ Ջորջի**³, արտգործնախարարներ **Սերգեյ Սազոնովի**⁴ ու **Էդուարդ Գրեյի**⁵, Բրիտանիայի և Թուրքիայի ռազմածովային նախարարներ **Ուինստոն Չերչիլի**⁶ և **Ջեմալ փաշայի**⁷, Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան **Հենրի Մորգենթաուի**⁸, Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան **Մորիս Պալեոլոգի**⁹ հուշերը:

Ուսումնասիրություններ:

1914 թ. գրված **Գաբրիել Մնացականյանի** «Հայկական հարցի լուծումը» ռուսերեն աշխատությունը նպատակ ունի ռուս ընթերցողին ներկայացնել ու լուսաբանել հայության պահանջները և հիմնավորել ռուսական շահերն

¹ Մուրադեան Գ., Հայրենիքին ուխտատուները վրեժին ճամբուն վրայ, Կ.Պոլիս, 1920, էջ 74:

² Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, 1993.

³ Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957.

⁴ Сазонов С.Д., Воспоминания, Москва., 2002.

⁵ Grey Ed., Twenty-Five Years, 1892-1916, vol. II, New York, 1925.

⁶ Churchill W., The World Crisis, v. 1, Toronto, 1923.

⁷ Memories of a Turkish statesman, 1913-1919: By Djemal Pasha, New York, 1922.

⁸ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990:

⁹ Палеолог М., Царская Россия во время мировой войны, Москва, 1991.

Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ Ռուսաստանի հովանու տակ կիսանկախ հայկական պետություն ստեղծելու դեպքում¹:

Ռուսաստանի հովանու ներքո Հայաստանի ինքնավարության գաղափարին է նվիրված 1915 թ. **Լեյզեր Օշերովսկու** գրած փոքր աշխատությունը²: Սակայն այստեղ չեն հստակեցված հայկական ինքնավարության սահմանները և թե արդյո՞ք Կիլիկիան պետք է մտներ նրա մեջ:

Պատերազմի տարիներին հայկական ինքնավարության գաղափարը բարձրացվել և քարոզվում էր հնչակյան գործիչների կողմից: Դրանք ներկայացված են **Ստեփան Սապահ-Գյուլյանի**³, **Անդրանիկ Կենճյանի**⁴, **Արսեն Կիտուրի**⁵ աշխատանքներում:

Զոն Կիրակոսյանը «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ.» աշխատության մեջ անդրադարձել է մեր ուսումնասիրության շրջանակներում բարձրացված որոշ հարցերի: Նա պաշտպանում է այն տեսակետը, ըստ որի, եթե Դարդանեյի փոխարեն Բրիտանիան և Ֆրանսիան ավիանում կատարեին Ալեքսանդրետի ծոցում, ապա «արևմտահայության հիմնական զանգվածը արևելյան վիլայեթներում գերծ կմնար տեղահանությունից և կոտորածներից»⁶:

Հայկական լեգեոնի կազմավորման, իրավական կարգավիճակի մասին գիտական հետազոտություն է իրականացրել սիրիական բանակի հայազգի զենեռալ-լեյտենանտ, իրավաբան **Արամ Գարամանուկյանը**⁷ 1972 թ. Փարիզում պաշտպանած իր «Օտարականները և զինվորական ծառայությունը» ատենախոսության մեջ, որի մի ենթաբաժինը նվիրված էր հայկական այդ զորամասին: Աշխատության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել Ֆրանսիայի արխիվներում պահվող բազմաթիվ փաստաթղթեր: Հայկական լեգեոնին նվիրված հատվածը հրատարակվել է «Հայկազեան Հայա-

¹ Мнацаканян Г., Разрешение Армянского Вопросы, Москва, 1914.

² Ошеровский Л., Идея автономного строя в Турецкой Армении под протекторатом России, Пятигорск, 1915.

³ Սապահ-Գյուլյան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե, 1915:

⁴ Կենճեան Ա., Հայաձականի յուշեր 1914-1918, Պէյրուք, 1964: Կենճեան Ա., Սօց. Դէմ. Հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան ինքնավարութեան աքթը (Կիլիկեան յուշեր՝ պատմութեան համար) 1919-1921, Պէյրուք, 1958:

⁵ Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր՝ Ա. Կիտուր, հ. Ա, Բ, Պէյրուք, 1962, 1963:

⁶ Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967:

գիտական Հանդէս»ում¹ և Հասմիկ Գարամանուկյանի՝ ամուսնուն նվիրված աշխատության մեջ²:

Երվանդ Գասպարյանն իր մեծարժեք ուսումնասիրության մեջ լուսաբանել է Կիլիկիայում ափհանում կատարելու որոշ նախագծեր և դրանց ծախողումը Ֆրանսիայի ընդդիմության պատճառով³:

Լիլիթ Հովհաննիսյանի մենագրության մեջ անդրադարձ կա 1914-1917 թթ. մեծ տերությունների հավակնություններին Կիլիկիայում⁴: Սակայն թույլ աղբյուրագիտական հենքի պատճառով հեղինակը չի կարողացել ճիշտ ներկայացնել խնդիրը:

Մեծ տերությունների քաղաքականությունն Առաջին աշխարհամարտի տարիներին լուսաբանվել է **Գալուստ Գալոյանի** աշխատություններում⁵:

1915 թ. Ալեքսանդրետի ուղղությամբ ռազմական գործողություններ ծավալելու որոշ նախագծերի, մուսալեռցիների փրկության և Հայկական լեզեոնի կազմավորման հետ կապված մի շարք հարցերի անդրադարձել է **Տիգրան Սարուխանյանը**⁶: Հեղինակը լայնորեն օգտագործել է բրիտանական աղբյուրներ և ուսումնասիրություններ:

Կիլիկիահայության տեղահանությանը և Հայկական լեզեոնի համառոտ պատմությանն անդրադարձել է **Ռուբեն Գասպարյանը**⁷: Լեզեոնի հարցում նրա աշխատություններում տեղ են գտել սփյուռքյան պատմագիտության մեջ տարածված ոչ ճիշտ տեսակետներ, հատկապես՝ Արարայի ճակատամարտի հետ կապված: Նա Հայաստանում առաջին պատմաբանն է, որ փորձել է գիտականորեն ներկայացնել լեզեոնի պատմությունը:

¹ Գարամանուկյան Ա., Հայկական Լեզեոնը պատմական, իրաական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե, Պէյրուք, 1974, էջ 39-90:

² Գարամանուկյան Յ., Զօրավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի, 1998, էջ 203-268:

³ Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, 2000:

⁴ Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թթ., Երևան, 2002:

⁵ Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004: Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

⁶ Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, 2005:

⁷ Գասպարյան Ռ., Հայկական լեզեոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թիվ 1, էջ 3-15: Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, 2005:

1917 թ. ռուսական հեղափոխության հետևանքով ստեղծված նոր իրավիճակի և Հայկական հարցի մասին հետաքրքիր և արժեքավոր ուսումնասիրություն է **Վահան Մելիքյանի** աշխատությունը¹:

1917-1918 թթ. իրադարձությունների, ինքնավար ու միասնական Հայաստան ստեղծելու հայկական ձգտումների, այդ հարցում մեծ տերությունների քաղաքականության մասին հետաքրքիր փաստեր է ներկայացրել **Հրանտ Ավետիսյանը**²:

Մուշեղ արք. Սերոբյանի աշխատությունում³ որոշ տեղեկություններ կան Հայաստանի ու Կիլիկիայի շուրջ Անտանտի երկրների միջև ընթացող դիվանագիտական քննարկումների, Հ. Զավրյանի բանակցությունների, Կիլիկիայում ափսհանում կատարելու նախագծերի մասին: Հեղինակը եղել է Կիլիկիայի թեմի առաջնորդ, հայկական կամավորագրության ջատագույներից ու կազմակերպիչներից:

Պատմագիտության դոկտոր **Կլիմենտ Հարությունյանը** հոդվածով ներկայացրել է լեգեոնի համառոտ պատմությունը: Հեղինակը լեգեոնի մասին գրում է. «Նրա պատմությունը ինչպես խորհրդահայ, այնպես էլ արդի հայ պատմագրության կողմից դեռևս հատուկ գիտական ուսումնասիրության թեմա չի դարձել, սակայն քիչ թե շատ ուսումնասիրվել է սփյուռքահայ հեղինակների կողմից, որոնք հիմնականում հուշագրություններ են, ականատեսների պատմություններ և կարևոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում Հայկական լեգեոնի պատմությունն ուսումնասիրողների համար»⁴: Այն նույնպես հիմնված է սփյուռքում լույս տեսած հուշագրությունների նյութի վրա:

Ամերիկահայության կամավորագրության հետ կապված խնդիրներ են լուսաբանված **Քնարիկ Ավագյանի** արժեքավոր ուսումնասիրություններում⁵:

¹ Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, 1997:

² Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

³ Սերոբյան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով: Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրե, 1948:

⁴ Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը 1916-1920 թվականներին, ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 101-102:

⁵ Ավագյան Ք., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, Նույնի, Ամերիկահայերի հասարակական-քաղաքական գործունեությունը Սևրի պայմանագրի նախորդող տարիներին, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում (Հոդվածների ժողովածու)», Երևան, 2011, էջ 50-63: Նույնի, Կիլիկիահայությանը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական Լեգեոնը», «Հասկ» Հայագիտական տարեգիրք, ԺԱ տարի, 2007-2008, Անթիլիաս, 2009, էջ 61-79: Նույնի, Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ սկզբնավորումից մինչև 1985թ., Հայ գաղթականությունը և Հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ., Միջազգային

Ստեփան Պողոսյանի եռահատոր «Հայոց ցեղասպանության պատմություն» աշխատության երրորդ հատորում անդրադարձ կա Կիլիկիահայության թվաքանակին, տեղահանությանը, կոտորածին և որոշ վայրերում տեղի ունեցած ինքնապաշտպանություններին Մեծ եղեռնի ժամանակ¹:

Մուսալեռացիների ինքնապաշտպանության, Հայկական լեզեռնի կազմավորման և կամավորագրության պատճառների, Կիլիկիայի ազատագրման մասին արժեքավոր տեղեկություններ կան **Մարտիրոս Գուշագճյանի և Պողոս Մատուռյանի** խմբագրությամբ հրատարակված ծավալուն աշխատության մեջ²:

Հովհաննես Թովուզյանն անդրադարձել է Հայկական լեզեռնի կազմավորմանը, Պաղեստինյան ճակատամարտում նրա զբաղեցրած դիրքերին³:

Ավետիս Յափուճյանը անդրադարձել է Հայկական լեզեռնի կազմավորման և գործունեության հետ կապված խնդիրների, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականությանը, Կիլիկիայում ափհանում կատարելու որոշ նախագծերի⁴:

Մեզիդոյի ճակատամարտի լուսաբանման հարցում օգտվել ենք Եգիպտական ռազմարշավային ուժերում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական ռազմական թղթակից **Վիլյամ Մեսիի**⁵, ավստրալիացի ռազմական լրագրող, պատմաբան **Ֆրեդերիկ Մորլի Քաթլոքի**⁶ և ավստրալիացի ռազմական լրագրող, պետական գործիչ **Հենրի Սոմեր Ջուլետի**⁷ մեծարժեք աշխատություններից: Դրանք թույլ են տվել ճշգրտել ու լուսաբանել ճակատամարտի ընթացքը, հայկական զինուժի դերակատարությունը նրանում: Վերջիններս եղել են դեպքերի ականատեսներ ու բավական իրազեկված անձինք, հետևաբար՝ նրանց տեղեկությունները, կարելի է ասել, ճշգրիտ են:

գիտաժողով 8-10 հոկտեմբեր 2011, Երևան-Ծաղկաձոր, զեկուցումներ, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2011:

¹ Պողոսյան Ա., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 3, Երևան, 2011, էջ 388-437:

² Յուշամատեան Մուսա լեբան, Խմբագրեցին Մարտիրոս Գուշագճեան եւ Պողոս Մատուռեան, Պէրոյթ, 1970:

³ Թովուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978: Նույնի, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986:

⁴ Եափուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, 1977:

⁵ Massey W. T., Allenby's final triumph, London, 1920.

⁶ Cutlack F. M., The Australian Flying Corps in the Western and Eastern theatres of War 1914-1918, Eleventh edition, Sydney, 1941.

⁷ Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, 1941.

Էդուարդ Ֆիցջերալդի¹ և Պաուլ Հելմրիխի² ուսումնասիրությունները կարևոր են Մերձավոր Արևելքում և Կիլիկիայում Անտանտի երկրների հավակնությունները և հակասությունները հասկանալու համար:

1914-1916 թթ. հայկական զորամասի կազմավորման, Կիլիկիայի շուրջ ֆրանս-բրիտանական հակասությունների մասին բավական հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել ավստրալիացի (ծագումով կիպրոսցի) պատմաբան **Անդրեկոս Վարնավան³**:

Մոսկվայի «Армянский Вестник» պարբերականը 1916-1918 թթ. ներկայացրել ու վերլուծել է Հայաստանի ինքնավարության կամ անկախության գաղափարը, այդ խնդիրների շուրջ հայ և օտարազգի գործիչների տեսակետները: Բուխարեստում Ստեփան Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ինքնավար Հայաստան» պարբերականը կարևոր դեր էր ստանձնել Հայաստանի ինքնավարության հնչական տեսակետները ներկայացնելու և քարոզելու գործում: Հայաստանի և Կիլիկիայի ապագայի հետ կապված խնդիրները աշխարհամարտի տարիներին քննարկվել են Ս. Էջմիածնի «Արարատ», Մարսելի «Արմենիա», Փարիզի «Վերածնունդ» պարբերականներում:

Սակայն պետք է արձանագրենք, որ Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական պարբերականներում Կիլիկիայի ճակատագրին առնչվող հոդվածները չափազանց քիչ, կարելի է ասել՝ հատուկեմտ են: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ դեռևս պարզ չէին մեծ տերությունների իրական հավակնություններն ու ախորժակները, անհայտ էր՝ ով էր հաղթելու պատերազմում: Հայ գործիչները ձգտում էին միասնական հայկական պետականության ստեղծմանը, սակայն, հաշվի առնելով իրադարձությունների զարգացման տրամաբանությունը և ուժերի հարաբերակցությունը, ստիպված էին համակերպվել տերությունների շահերին ու ձգտումներին,

¹ Fitzgerald Edward Peter, *France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918*, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 66, No. 4, Dec., 1994, pp. 697-725.

² Helmreich Paul C., *Italy and the Anglo-French Repudiation of the 1917 St. Jean de Maurienne Agreement*, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 48, No. 2, June, 1976, pp. 99-139.

³ Varnava A., *French and British Post-War imperial agendas and forging an Armenian Homeland after the Genocide: The formation of the Legion D'Orient in October 1916*, December 2014, *The Historical Journal*, vol. 57, p. 997-1025. Varnava A., *Imperialism first, the war second: the British, an Armenian legion, and deliberations on where to attack the Ottoman empire, November 1914-April 1915*, *The Historical Research*, vol. 87, no. 237 (August, 2014), p. 533-555.

փորձում էին հնարավորինս սիրաշահել վերջիններին: Հետևաբար՝ մամուլում շատ չէին բարձրաձայնում հայության ձգտումները և դրանց մասին բանակցում էին գաղտնիության պայմաններում: Նաև սրանով է պայմանավորված, որ Կիլիկիայի ապագայի վերաբերյալ մամուլում բավական քիչ են եղել հրապարակումները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1.1 ԿԻԼԻԿԻԱՅԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ գործիչների և մեծ տերությունների ուշադրության կենտրոնում էր հայտնվել օսմանյան տիրապետության տակ գտնվող Կիլիկիան: Հայերին այն հետաքրքրում էր որպես հայկական տարածք, ապագա հայոց պետության համար ելք դեպի Միջերկրական, հայոց վերջին թագավորության բնօրրան և պետականության խորհրդանիշ: Տերություններին հետաքրքրում էր այդ երկրամասի ռազմավարական կարևոր դիրքը, տնտեսական լայն հնարավորությունները: Օսմանյան ժառանգության բաժանման հարցում Կիլիկիան դարձել էր կռվախնձոր Անտանտի երկրների միջև:

Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին գտնվող Կիլիկիան հարավից շուրջ 500 կմ եզերվում է ծովով: Տավրոսի լեռնահամակարգով արևմուտքից ու հյուսիսից բաժանվում էր Փոքր Ասիայից, հյուսիս-արևելքից՝ Հայկական բարձրավանդակից, իսկ հարավ-արևելքում Ամանոսի լեռներով սահմանակցում էր Սիրիային: Ամանոսի լեռնազանգվածը հարավում ավարտվում է Ռաս էլ Խնզիր հրվանդանով, ուր գտնվում է նշանավոր Մուսսա լեռը¹: Փաստորեն՝ Կիլիկիան շրջակա երկրամասերից առանձնացած էր բարձր լեռներով և ծովով:

Կիլիկիան շուրջ 400 տարի գտնվում էր Օսմանյան կայսրության կազմում և այդ ընթացքում վարչական ամենատարբեր բաժանումների է ենթարկվել: Համաշխարհային պատերազմի նախօրյակին Կիլիկիայի տարածքը հիմնականում բաժանված էր երկու վարչական միավորների միջև: Մեծ մասն ընդգրկված էր Ադանայի նահանգի մեջ, որը բաժանված էր 5 գավառների՝ Ադանա, Մերսին, Ջերեզ Բերեքեթ, Խոզան, Իջիլ: Կիլիկիայի արևելյան շրջանները կազմում էին Հալեպի նահանգի մի մասը: Վերջինս բաժանված

¹ Պողոսեան Յ., Հաճընի ընդհանուր պատմությունը եւ շրջակայ Գօզան-տաղի հայ գիտերը, Lou Անճէլըս, 1942, էջ 1:

եր 3 գավառների (Հալեպի, Մարաշի, Ուրֆայի), 23 գավառակների, 72 գյուղախմբերի և 3.800 գյուղերի: Մարաշի գավառը, Հալեպի գավառի Այնթապի, Քիլիսի, Անտիոքի, Ալեքսանդրետի և Բեյլանի գավառակները Կիլիկիայի մասերն էին, իսկ Ուրֆան ընդգրկում էր Հայկական Միջագետքի տարածքը¹:

Անկարայի նահանգի Յոզղատի գավառի հարավային շրջանները, Սեբաստիայի նահանգի Մանջիլիկ, Կյուրին, Դարենդե, Աշոդի գավառակներ նույնպես աշխարհագրորեն կազմում էին Կիլիկիայի մասերը: Հետևաբար՝ Առաջին աշխարհամարտի նախօրյակին աշխարհագրական Կիլիկիա երկրամասը չէր կազմում վարչական մեկ ամբողջություն: Այն բաժանված էր Ադանայի, Հալեպի, Սեբաստիայի, Անկարայի նահանգների միջև:

Ադանայի նահանգի (39,000 կմ²), Մարաշի (18,400 կմ²), Այնթապի (7,000 կմ²) և Ուրֆայի (16,000 կմ²) գավառների, Անտիոքի, Ջիսր-ի Շուղուրի, Բեյլանի և Ալեքսանդրետի գավառակների (4,200 կմ²) ընդհանուր տարածքը կազմում էր 84,600 կմ² Առաջին աշխարհամարտի նախօրյակին²: Եթե պատմական Հայկական Միջագետքի տարածք համարվող Ուրֆայի գավառը դուրս բերենք, ապա Ադանայի ու Հալեպի նահանգների մեջ ընդգրկված Կիլիկիայի տարածքը կազմում էր 68,600 կմ²:

Հաշվի առնելով, որ Կիլիկիայի հիմնական մասն ընդգրկված էր Ադանայի նահանգի մեջ, շատ դեպքերում Կիլիկիան այդ շրջանում նույնացվում էր հենց այդ նահանգի հետ: Դրանով է պայմանավորված, որ որոշ ուսումնասիրողներ Կիլիկիայի տարածքը հաշվում են ընդամենը 40,000 կմ²: Սակայն դա աշխարհագրական և պատմական տեսանկյունից չէր համապատասխանում իրականությանը:

Այսպիսով՝ խոսելով մինչպատերազմյան Կիլիկիայի մասին, ճիշտ ենք համարում ոչ թե հասկանալ միայն Ադանայի նահանգը, այլ այն ամբողջ աշխարհագրական տարածքը, որը հնուց ի վեր հայտնի էր Կիլիկիա անունով: Իսկ թուրքական վարչական բաժանումները չպետք է հանդիսանան չափանիշ այդ երկրամասի տարածքը որոշելու համար:

Կիլիկիայի դաշտային շրջանները չափազանց բերրի են: Կլիման մեղմ է և բարենպաստ տարբեր թանկարժեք բույսերի մշակման համար: Մշակելի հողատարածքները 1914 թ. կազմում էին 2.600.000 հեկտար: Այստեղ բարձր բերքատվությամբ աճում էին գյուղատնտեսական բարձրարժեք մշա-

¹ Գալուստեան Գ., նշվ. աշխ., էջ 30:

² Թաթոյան Ռ., Կիլիկիահայության թիվը հայոց ցեղասպանության նախօրյակին, Երևան, 2021, էջ 22, 60:

կաբույսեր՝ բամբակ, ծիթապտուղ, ծխախոտ, քունջութ, ցորեն, տարբեր դեղաբույսեր և բուրումնավետ բույսեր: Մինչ պատերազմը այստեղ արտադրվում էին 150.000 տոննա հատիկավոր մշակաբույսեր, սակայն այն կարող էր հասցվել 1.800.000-ի¹:

Կիլիկիայի բամբակով առաջինը հետաքրքրվել էին գերմանացիները: 1903 թ. ստեղծվել էր Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը, որը կարճ ժամանակում իր ձեռքն էր վերցրել Կիլիկիայում արտադրվող ամբողջ բամբակի վերամշակման և արտահանման գործը: Նրանք Կիլիկիայում կառուցել էին մի քանի խոշոր բամբակագույիչ գործարաններ²: 1905 թ. Ադանայի նահանգում արտադրվում էր 45.000 հակ բամբակ: Ամերիկյան «Բլիվլենդ» տեսակի բամբակ ցանելուց և երկաթուղային ցանցի ընդլայնումից հետո արտադրությունը տարեցտարի մեծացել էր: 1911 թ. արտադրվել էր 85.000, 1914 թ.³ 150.000 հակ կամ 300.000 տոննա բամբակ³:

Կիլիկիայի տարածքը հարուստ է երկաթի, կապարի, արծաթի, կրաքարի հանքերով, արջասպի, ծծմբի, բորակի, սև ու սպիտակ ձյութի, խեժի, աղի, ապակեփողի պաշարներով, տարբեր բուժիչ ջերմուկներով, անտառանյութով և այլ հարստություններով⁴:

Կիլիկիայի հարստության մասին է վկայում նաև Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ Էդուարդ Բրենոնը, նշելով, որ 1919 թ. ֆրանսիական իշխանություններն այնտեղ ծախսել են 2.900.000 թուրքական լիրա, գանձել 3.000.000 լիրա⁵: Եվ դա այն ժամանակ, երբ պատերազմի հետևանքով տնտեսությունը զգալի հետընթաց էր ապրել, հայերի ցեղասպանությունից հետո աշխատող ձեռքերն ու մասնագետները պակասել էին, իսկ ֆրանսիացիները նոր էին մտել երկրամաս և բավական մեծ ծախսեր էին կատարում այնտեղ հաստատվելու համար:

Կիլիկիայով էր անցնում ռազմավարական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող Բեռլին-Բաղդադ երկաթուղին: Կիլիկիայի նավահանգիստները, հատկապես՝ Ալեքսանդրետը և Մերսինը, մեծ կարևորություն ունեին Միջերկրականի արևելքում առևտրի զարգացման ու ռազմական նավատորմի տեղակայման համար: Նման հարմար աշխարհագրական դիրքով, բնա-

¹ Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, 1986, с. 42-43.

² Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел. Под редакцией Е.Адамова, Москва, 1924, с. 20.

³ Ատանայի Հայոց պատմություն, Խմբագրեց՝ Բիզանդ Եղիայեան, Անթիլիաս, 1970, էջ 155:

⁴ Գալուստեան Գ., Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն, Նիւ Եօրք, 1934, էջ 7:

⁵ Ատանայի Հայոց պատմություն, էջ 155:

կան հարուստ պաշարներով և արգավանդ դաշտերով երկրամասը միշտ էլ հետաքրքրություն է առաջացրել իր նկատմամբ:

Մերսին-Տարսոն-Ադանա երկաթուղագիծը կառուցվել է 1886 թ. բրիտանա-ֆրանսիական ընկերության կողմից: 1908 թ. գերմանական ընկերությունը գնել էր այդ երկաթուղագիծը, ընդլայնել և դարձրել Բեռլին - Կ. Պոլիս - Բաղդադ մեծ երկաթուղագծի կարևոր հանգույցներից: 1915 թ. Կիլիկիայում կար 511 կմ երկարությամբ երկաթուղագիծ՝ Մերսին-Տարսոն-Ենիճե-Ադանա (68 կմ), Պոզանտ-Ենիճե (88 կմ), Ադանա-Թուփրակ Կալե-Իսլահիե-Մեյդանեքպեզ (295 կմ), Թուփրակ Կալե-Ալեքսանդրետ (60 կմ)¹: Այդ զարգացած երկաթուղային համակարգը նպաստում էր տնտեսության առաջընթացին՝ միաժամանակ ունենալով ռազմավարական հսկայական նշանակություն:

Պետք է արձանագրենք, որ Կիլիկիայում բնակչության ճշգրիտ վիճակագրություն մինչև պատերազմը չէր արվել: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայերը կազմում էին մեծամասնություն այդ հայկական երկրամասում, իսկ թուրքերն ամեն կերպ փորձում էին թաքցնել այդ փաստը, ինչպես վարվում էին նաև կայսրության մյուս շրջանների հայ ազգաբնակչության դեպքում: Հետևաբար՝ բավական բարդ խնդիր է վերջնական ու ճշգրիտ վիճակագրական տվյալներ հաղորդելը: Ուսումնասիրության մեջ փորձել ենք հենվել հայկական այն տվյալների վրա, որոնք ընդունելի են եղել նաև օսմանյան և ֆրանսիական իշխանությունների համար: Կարծում ենք՝ այդ դեպքում գործ ունենք քիչ թե շատ ճշգրիտ վիճակագրության հետ:

1919 թ. Փարիզի հաշտության կոնֆերանսին հայկական պատվիրակությունների կողմից ներկայացված վիճակագրության համաձայն Ադանայի նահանգում և Մարաշի գավառում մինչև պատերազմը բնակվում էր 490.000 մարդ, որից՝ 205.000 հայ, 81.000 հույն, ասորի և այլ քրիստոնյաներ, 78.000 թուրք, 58.000 քուրդ, 20.000 այլ մահմեդականներ, 48.000 եզդի և ալևի: Այսինքն՝ 286.000 քրիստոնյաների դիմաց կային 156.000 մահմեդականներ²: Այս վիճակագրությունից դուրս են թողնվել Այնթապի և Անտիոքի գավառների հայերը:

Պատմաբան Կարապետ Բասմաճյանի 1919 թ. հրատարակած ուսումնասիրության համաձայն՝ 1914 թ. Կիլիկիայի բնակչությունը թիվը 875.604 էր, որից հայ՝ 380.000-ը՝ 43,4%-ը³:

¹ Նույն տեղում, էջ 153:

² Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919, էջ 32:

³ Саакян Р., Франко-турецкие отношения, с. 82.

Ըստ 1920 թ. հունվարի 14-ին Պ. Նուբարի մեծ տերություններին հանձնած հուշագրի՝ Կիլիկիայի նախապատերազմյան բնակչության թիվը ներկայացված էր՝ 508.273 քրիստոնյա, 294.762 մահմեդական, 54.756 այլ դավանանքների հետևորդներ: Ըստ դրա՝ Ադանայի, Խոզանի, Ջեբել-Բերեքեթի, Մարաշի և Այնթապի գավառներում բնակվել են 857.791 մարդ, որից՝ 407.000-ը հայ և 131.534-ը թուրք¹:

Վերոնշյալ երկու աղբյուրներն էլ, ինչպես տեսնում ենք, չնչին տարբերությամբ, գրեթե միանման թվեր են բերում:

1914 թ. Կիլիկիայում 407.000 հայ բնակչության գոյության մասին է վկայում նաև Մայր Աթոռի «Արարատ» ամսագիրը²: Կարծում ենք՝ Պ. Նուբարը հենվել է նաև այս տեղեկության վրա:

Կարելի է բավական ճշգրիտ համարել 1912 թ. Կ. Պոլսի «Արևելյան տարեցույցի» հրատարակած վիճակագրությունը, որը տպագրվել էր սուլթանական կառավարության թույլտվությամբ: Ըստ դրա՝ Ադանայի նահանգում բնակվում էին 215.000 քրիստոնյա և 185.000 մահմեդական³: Այստեղ խոսքը միայն Ադանայի նահանգին է վերաբերում: Հաշվի առնելով, որ այս վիճակագրությունը հրատարակվել է նախապատերազմյան շրջանում և թուրքական վերահսկողության տակ, ապա հասկանալի է, որ քրիստոնյա բնակչության թիվը ուռճացնել կամ մահմեդականների թիվը նվազեցված ցույց տալ հնարավոր չէր: Ի դեպ, այդ թիվը բերում է նաև Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ Էդուարդ Բրեմոնը⁴:

Մաղաքիա արք. Օրմանյանը Կիլիկիայի կաթողիկոսությանը ենթակա գավառների հայ բնակչության թիվ ներկայացնում է 312.000⁵:

Մեր ուսումնասիրության ընթացքում հանդիպած ամենաուշագրավ և, մեր կարծիքով, քիչ թե շատ ամբողջական ու ճշգրիտ վիճակագրությունը տալիս է Հայաստանի ազգային արխիվում պահվող, 1910 թ. թվագրվող ֆրանսերեն մի փաստաթուղթ, ըստ որի՝ Կիլիկիայում բնակվում էր 404.350 հայ: Դրանում ընդգրկված են ոչ միայն Ադանայի ու Հալեպի, այլև՝ Սեբաստիայի ու Անկարայի նահանգների մեջ ընդգրկված Կիլիկիայի տարածքների հայերի թիվը: Կարելի է փաստել, որ սա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը ենթակա թեմերի հայ բնակչության թիվն է: Ըստ դրա՝ Ադանայի գա-

¹ Nubar Boghos, The Pre-War Population of Cilicia, London, 1920, p. 3.

² «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, թիւ 9, էջ 810:

³ Ատանայի Հայոց պատմություն, էջ 148: Саакян Р., Франко-турецкие отношения, с. 83.

⁴ Պրեմոն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, Պոստոն, 1921, էջ 6:

⁵ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմությունը, վարչությունը, բարեկարգությունը, արարողությունը, գրականությունը, ու ներկայ կացությունը, Կոստանդնուպոլիս, 1911, էջ 263-264:

վառում բնակվում էր 25.000, Սսի (Կոզան) գավառում (Հաճնի, Կարս Բազարի, Վահկայի (Ֆիկե) գավառակներ)՝ 47.600, Մարաշի գավառում (Ձեյթունի, Կոկիսունի, Ալբիստանի գավառակներ)՝ 86.800, Օսմանիեի գավառում (Բախչեի, Համիդիեի (Ջիհան), Չոք Մարզվանի (Դյորթ Յոյ) գավառակներ)՝ 44.750, Մերսինի գավառ (Տարսոնի գավառակ)՝ 7.400, Հալեպի գավառում (Այնթապի, Քիլիսի, Անտիոքի, Ալեքսանդրետի, Սունտիա-Քեսաբի գավառակներ)՝ 84.900, Ուրֆայի գավառում՝ 36.000, Յոզղաթի գավառում՝ 28.500, Սեբաստիայի նահանգի Մանջիլիկ, Կյուրին, Դարենդե, Աշոդի գավառակներում՝ 43.400 հայ¹:

Ինչպես տեսնում ենք, այստեղ հայ բնակչության թվաքանակը տրված է ոչ թե միայն ըստ նահանգների կամ գավառների, այլ նաև՝ գավառակների: Դա թույլ է տալիս համեմատել թվերը մյուս վիճակագրությունների հետ՝ դուրս բերելով այն գավառների ու գավառակների հայերի թիվը, որոնք նախորդներում չեն հաշվարկվել: Վերոնշյալ փաստաթղթի թվերը գրեթե ամբողջությամբ համապատասխանում են մյուս վիճակագրություններում բերված թվերին: Եթե դուրս բերենք Սեբաստիայի և Յոզղաթի հայերի թիվը, կտեսնենք, որ այն համապատասխանում է Կ. Բասմաճյանի առաջարկած թվաքանակին: Միայն Ադանայի և Մարաշի հայերի թվաքանակը առանձնացնելու դեպքում կհանգենք գրեթե նույն թվերին, որոնք բերված են 1912 թ. և 1919 թ. վիճակագրություններում:

Այսպիսով՝ որպես նախապատերազմյան Կիլիկիայի և շրջակա գավառների հայ բնակչության թվաքանակի ճշգրտման հիմք կարող ենք ընդունել Հայաստանի ազգային արխիվում պահվող վերոնշյալ փաստաթղթում ներկայացված վիճակագրությունը: Հետևաբար՝ Ադանայի, Հալեպի, Սեբաստիայի, Անկարայի վիլայեթների միջև բաժանված Կիլիկիայում բնակվում էր ավելի քան 400.000 հայ բնակչություն:

Այսպիսով՝ չնայած Օսմանյան կայսրության հայահալած ու ջարդարարական քաղաքականությանը, հատկապես՝ 1909 թ. կիլիկյան կոտորածները, որոնց գոհ էին գնացել շուրջ 30.000 հայեր, նախապատերազմյան շրջանում Կիլիկիայի բնակչության գրեթե կեսը դեռևս հայերն էին, իսկ թուրքերը կազմում էին միայն 15 տոկոսը:

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 57, թ. 11-12:

1.2 ԿԻԼԻԿԻԱՆ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմը հայ գործիչներին լուրջ մտահոգություն պատճառեց, քանի որ արևմտահայությանը սպասվում էին նոր կոտորածներ: Իհարկե, նրանք չէին պատկերացնում, թե ինչ լայնամասշտաբ տեղահանություններ ու կոտորածներ էին նախապատրաստում երիտթուրքական կառավարության հանցագործ ղեկավարները: Միաժամանակ պատերազմը հայերի մեջ հույսեր արթնացրեց, որ Օսմանյան կայսրության պարտությունը թույլ կտար Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում ինքնավարություն ձեռք բերել: Չմոռանանք, որ 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով Արևմտյան Հայաստանում նախատեսվում էին իրականացվել բարենորոգումներ¹: Սակայն պատերազմի սկսվելուց անմիջապես հետո թուրքական կառավարությունը դրանք չեղյալ հայտարարեց:

Արդեն 1914 թ. օգոստոսի 5-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը նամակով դիմեց Կովկասի փոխարքա Իվարիոն Վորոնցով-Դաշկովին, որպեսզի Ռուսաստանը հովանավորի ու պաշտպանի արևմտահայերին: Փոխարքան սեպտեմբերի 2-ի գաղտնի հեռագրով պատասխանեց, որ դիմումը փոխանցել է կառավարությանը, և վարչապետ Իվան Գորեմիկինը վստահեցրել է, որ ռուսական կառավարությունը ոչ մի դեպքում չի գնա զիջումների Հայկական հարցում, և Թուրքիան հայկական նահանգներում կիրականացնի բարենորոգումներ՝ ռուսական նախնական ծրագրի համաձայն՝ Ռուսաստանի հովանու ներքո: Փոխարքան միաժամանակ զգուշացնում էր, որ արևմտահայերն ապստամբություն չբարձրացնեն, քանի որ անհրաժեշտ էր սպասել, մինչև որ Թուրքիան առաջինը սկսի պատերազմը: Նաև խնդրում էր, որ կաթողիկոսն իր հեղինակությունն օգտագործի, որպեսզի հայերը և՛ տվյալ պահին, և՛ պատերազմի դեպքում աջակցեն ռուսներին²:

Ինչպես տեսնում ենք, ռուսական իշխանությունները խոստանում էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնել այն նախնական ծրագրի համաձայն, ըստ որի՝ հայկական յոթ նահանգները միավորվելու էին մեկ միասնական երկրամասի մեջ, ուր հայերին տրվելու էին ավելի մեծ իրավունքներ, քան 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով էր նախատեսված:

¹ Պողոսեան Ս., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 77-78:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 86, թ. 1-2:

Սեպտեմբերի 5-ին Էջմիածնի դիվանական խորհրդի արտակարգ նիստում քննարկվեց պատերազմին Թուրքիայի մասնակցության դեպքում առաջ եկող մարտահրավերներին դիմագրավելու, Արևմտյան Հայաստանի համար ավելի լայն բարենորոգումների կամ ինքնավարության նախագիծ մշակելու խնդիրը¹:

Ի վերջո հայ գործիչներն ընտրեցին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու տեսլականը: Թվում էր՝ միջազգային իրադրությունը նպաստավոր պայմաններ է ստեղծել հայության երազանքներն իրականացնելու՝ թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական բոլոր տարածքները մեկ ինքնավար երկրամասի մեջ միավորելու, որն ապագայում պայմաններ կստեղծեր անկախության վերականգնման համար:

Եվրոպական մամուլում հրապարակվել էր սեպտեմբերի 15-ին արևմտահայերին ուղղված Նիկոլայ Բ-ի մանիֆեստը, ուր կայսրը կոչ էր անում աջակցել Ռուսաստանին՝ հիշեցնելով Լազարևների ու Մելիքովների սխրանքները, հայերի տառապանքները թուրքական լծի տակ: Այն ավարտվում էր հետևյալ պարբերությամբ. «Հայե՛ր, ձեր արինակից եղբայրների հետ միանալով Ցարերի իշխանութեան տակ, դուք պիտի ճանձնաք վերջապէս ազատութեան և արդարութեան բարիքները»²: Ինչպես տեսնում ենք, այստեղ ինքնավարության մասին խոսք չկա, այլ միայն՝ միացում Ռուսաստանին:

Նույն թվականի նոյեմբերին ռուսական կայսեր առաջ Հայկական հարցի մասին ելույթ էր ունեցել Սաթունյանը, որին Նիկոլայ Բ կայսրը պատասխանել էր. «Ես հայ ազգին հաւատում եմ, շնորհակալ եմ հայ համայնքներին»³:

Դա բնականաբար չէր կարող բավարարել հայկական շրջանակների մեծ մասի ձգտումները: Հետևաբար Ամենայն հայոց վեհափառը որոշեց ցարական իշխանություններին ներկայացնել հայության իրական ձգտումները, ինչպես նաև երաշխիքներ պահանջել արևմտահայերին տրվելիք ինքնավարության մասին: Նա իհարկե հասկանում էր, որ քանի դեռ Ռուսաստանը ծանր վիճակում էր և հայերի աջակցության կարիքն ուներ, պետք է հստակ պահանջներ առաջադրել և խոստումներ ստանալ: Հայերը լավ էին հիշում

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 72, թ. 3-4:

² «Արմենիա», Մարտի. 1914, սեպտեմբեր 23, թիւ 8: Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, հ. Ա, Ե. Չորրորեանի նախաբանով, Կ. Պոլիս, 1920, էջ 7:

³ ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 2, թ. 7:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կատարած զոհողությունները, Ռուսաստանից ինքնավարության երաշխիքներ չպահանջելը և դրանից հետո ապրած հիասթափությունը:

Նոյեմբերի 8-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին ուղարկած նամակում Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսը հստակորեն ներկայացրեց հայության ձգտումները: Նա հույս էր հայտնում, որ Ռուսաստանն ինքնավարություն կշնորհի Հայաստանին՝ վեց վիլայեթների և Կիլիկիայի սահմաններում. «Ներկայ ժամանակում, երբ ամբողջ Ռուսաստանի և յաղթական Ռուս զորքի հետ հայերը պետք է լարեն չափազանց մեծ ճիգ ընդհանուր թշնամիների հետ ունեցած կռուի մեջ, ես գտնում եմ միանգամայն համապատասխան ներկայ պատմական թուլեին, մեր սիրեցեալ թագաւոր կայսեր անունից տաճկահայերին ուղղած կոչի հրատարակումը՝ ներշնչել հայ ժողովրդին, որ այժմ Տաճկաստանի հայերի վերջնական ու անդառնալի վճռի ժամը հասել է և որ Տաճկա-Հայաստանի միացեալ մի օրգանական ամբողջութեամբ վեց վիլայեթների (Վանի, Էրզրումի, Բաղէշի, Սեբաստիայի, Դիարբեքիի և Խարբերդի) հայ ժողովրդին Հայաստանի անբաժան մաս Կիլիկիայի հետ, պիտի շնորհի Մեծ Ռուսաստանը ինքնավարութիւն, որով կամբողջանայ Տաճկաստանի լծի տակ դարերով տանջուող քրիստոնեայ ազգութիւնների ազատելու նորա պատմական միսսիան»¹:

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոսը ինքնավարություն էր պահանջում Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի համար: Բարենորոգումների՝ նախկինում առաջ քաշված նախագծերն անբավարար էին հայության ապագան կառուցելու համար, հետևաբար, օգտվելով համաշխարհային պատերազմի ընձեռած հնարավորությունից, հայ հոգևոր ու քաղաքական ղեկավարությունը ցանկություն ուներ իրականություն դարձնելու հայկական ինքնավարության գաղափարը: Թվում էր՝ հայկական պետականության վերականգնման դարավոր երազանքը մոտ էր իրականություն դառնալուն:

Լեոյի վկայությամբ՝ միացյալ և ինքնավար Հայաստանի գաղափարը այնքան էլ չի ոգևորել փոխարքային: Վերջինս, ակնարկելով Ի. Գորեմիկինի վերոհիշյալ գրությունը, ուր խոսվում էր միայն լայն բարենորոգումների մասին, հանդիմանական ձևով հարցրել էր. «Մի՞թե բավական չէր խոստացածը»²: Ռուս գործիչների համար միասնական ու լայն ինքնավարություն ունեցող «թուրքական» Հայաստանը կարող էր վատ նախադեպ դառնալ «ռուսա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 76, թ. 2-3:

² Լեո, Անցյալից (Հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, 1925, էջ 312:

կան» Հայաստանի համար: Սակայն հայ գործիչները չէին կարող հրաժարվել ազգային իղձերի իրականացման հնարավորությունից:

Նույն խնդրանքով կաթողիկոսը դիմել էր նաև Նիկոլայ Բ կայսրին, երբ 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում արժանացել էր նրա ընդունելությանը: Ցարը դիվանագիտորեն պատասխանել էր, որ «չափազանց պայծառ ապագա է սպասվում հայերին և հավատում է, որ Հայաստանը ապագայում չի հետևի Բուլղարիայի օրինակին»¹: Այստեղ Նիկոլայն ակնարկում էր այն փաստը, որ Բուլղարիան ազատագրվել էր Ռուսաստանի ջանքերով, սակայն հետագայում որդեգրել էր հակառուսական կողմնորոշում: Զգալի թվով ռուս գործիչներ հետևում էին այդ տեսակետին և հայկական ձգտումները նոր բուլղարական վտանգ էին համարում Ռուսաստանի համար²: Մոտ քառորդ ժամ տևած ընդունելության վերջում կայսրը հայտնել էր, որ «հայկական հարցը կլուծվի հայերի ցանկությունների համաձայն պատերազմի ավարտից հետո, խաղաղության բանակցությունների ժամանակ»³: Քանի դեռ ռուսները ծանր մարտեր էին մղում թվական առավելություն ունեցող թուրքական բանակի դեմ, նրանք պետք է սիրաշահեին հայերին, սակայն նույնիսկ նման պայմաններում խուսափում էին ինքնավարություն խոստանալուց և բավարարվում էին միայն ոչինչ չասող բարեմաղթանքներով:

Ցարի անորոշ պատասխանը մեծ ոգևորությամբ ընդունվեց հայ ազգային-քաղաքական շրջանակների կողմից՝ հասկացվելով, իբր ցարական կառավարությունն իրապես մտադիր է լուծել Հայկական հարցը: Նաև դրանով էր պայմանավորված այն մեծ խանդավառությունը, որով կազմակերպվեցին հայկական կամավորական գնդերը Կովկասում: Ինչպես ապագան ցույց տվեց, Նիկոլայ Բ-ն, հարցի արդարացի լուծում ասելով, հասկանում էր միանգամայն այլ բան: Սակայն արդարության համար պետք է նշենք, որ այդ ժամանակաշրջանում ռուսական իշխանություններն իրենք դեռ քննարկում էին Արևմտյան Հայաստանի ապագայի հարցը և վերջնական որոշման չէին եկել:

¹ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, էջ 22:

² Марукян А., Армянский вопрос и политика России (1915-1917 гг.), Ереван, 2003, с. 24.

³ Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. Серия III, 1914-1917 гг., М.-Л., 1935 т. VII, с. 456.

Սիմոն Վրացյանը գրում է, որ այդ շրջանում կոմկասահայության կարգախոսն էր դարձել. «Ավտոնոմիա վեց վիլայեթների և Կիլիկիայի. ռուսական պրոտեկտորատի ներքև»¹:

Ճանաչված հասարակական, մշակութային գործիչ Ալեքսեյ Զիվլեբգյանը հայկական տարածքային պահանջների մասին հողված տպագրեց «Արարատ», «Հորիզոն» պարբերականներում: Նա առաջարկում էր ինքնավար Հայաստանի մեջ միավորել Վանի, Բիթլիսի, Խարբերդի, Դիարբեքի, Էրզրումի, Սեբաստիայի, Տրապիզոնի, Ադանայի վիլայեթները և Հալեպի վիլայեթի հյուսիսային մասը՝ Այնթապը, Մարաշը, Քիլիսը, Ուրֆան: Հայաստանի նավահանգիստը Սև ծովի ափին կլիներ Տրապիզոնը, Միջերկրականի վրա՝ Ալեքսանդրետը և Մերսինը²: Նա վստահեցնում էր, որ եթե Կիլիկիան անցնի բրիտանացիներին, ապա Բաղդադի երկաթուղու միջոցով պարսկական առևտուրը կհայտնվեր նրանց ձեռքում, իսկ Ռուսաստանը կկորցնեի ազդեցության գոտին Պարսկաստանում: Հետևաբար՝ ռուս գործիչների ուշադրությունն էր հրավիրում այդ խնդրի վրա և որպես լուծում առաջարկում էր Կիլիկիան միացնել ինքնավար Հայաստանին³: Ինչպես տեսնում ենք, հայ գործիչները փորձում էին միացյալ Հայաստանի ստեղծման մեջ ցույց տալ ռուսական շահերը, շահագրգռել ռուս պետական գործիչներին:

Այս շրջանում մի շարք ռուս գործիչներ, այդ թվում Կոմկասի փոխարքայի շրջապատից, դեմ էին կաթողիկոսի կողմից միացյալ Հայաստան ստեղծելու հարցի բարձրացմանը: Սակայն որոշ ռուս դիվանագետներ իրադարձությունների որոշակի զարգացման դեպքում հնարավոր էին համարում Կիլիկիայի և Արևմտյան Հայաստանի միավորմամբ հայկական ինքնավարության ստեղծումը՝ ռուսական վերահսկողության տակ: Այդպիսիներից էր Ռուսաստանի ԱԳՆ արևելյան բաժնի վարիչ Կոստանդին Գուլկևիչը⁴, ով 1914 թ. դեկտեմբերի 2 (15)-ին Կոմկասի փոխարքայության հայատյաց պաշտոնյաներից Սերգեյ Ստոլիցային ուղարկած գաղտնի նամակում գտնում էր,

¹ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 624:

² Զիվլեբգեան Ա., Ինքնավար Հայաստանի տերրիտորիան, «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, թիվ 12, էջ 1088:

³ Զիվլեբգեան Ա., Կիլիկիայի հարցը, «Արարատ», Ս. Էջմիածին, 1915, թիվ 1, էջ 25-29:

⁴ 1914 թ. հունվարի 26-ին Կ. Գուլկևիչը, որպես Օսմանյան կայսրությունում ռուսական դեսպանի հավատարմատար, օսմանյան վարչապետ Սայիդ Հալիմի հետ ստորագրել էր Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու շուրջ ռուս-թուրքական համաձայնագիրը: Տե՛ս Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912 Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914 թ., թարգմ. Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915, էջ 102-104:

որ Կիլիկիան անհրաժեշտ է Հայաստանի կենսունակության համար, իսկ Ռուսաստանն այդ ուղիով ելք կունենա դեպի Միջերկրական: Նա անթույլատրելի էր համարում հայկական տարածքների բաժանումը երկու մասի, քանի որ Կիլիկիայում այլ տերության հայտնվելը վտանգավոր կլիներ իրենց՝ ռուսների համար: Ի տարբերություն Ստոլիցայի՝ Գուլկևիչը գտնում էր, որ ռուսական կողմը պետք է ընդառաջի կաթողիկոսի խնդրանքին և հայտարարի Հայաստանին ու Կիլիկիային ինքնավարություն շնորհելու մասին¹: Փաստորեն՝ հայկական ջանքերն անօգուտ չէին և որոշակի դրական ազդեցություն էին ունենում ռուսական վերնախավի տրամադրությունները հայանպաստ ուղղությամբ փոխելու ուղղությամբ:

Կաթողիկոսը Եվրոպայի հայոց թեմի առաջնորդ Գևորգ արք. Ութուճյանին նոյեմբերի 17-ին ուղարկած նամակում տեղեկացնում էր, որ ռուսական կառավարությունը, մամուլը, հասարակական կարծիքը դրական են տրամադրված Հայկական հարցի լուծմանը, և պատերազմի հաղթական ավարտից հետո «Կտրուի Տաճկա-Հայաստանին Կիլիկիայի հետ ինքնավարութիւն, հաւանաբար Ռուսաց հովանաւորութեան ներքոյ»²: Նա առաջարկում էր բրիտանահայ գործիչներին՝ աշխատել այդ երկրի մամուլի, հասարակական կարծիքի հետ այս տրամաբանությամբ³:

Գևորգ արք. Ութուճյանի և բրիտանահայ գործիչների համար անակնկալ էր, որ ինքնավար Հայաստանի մեջ մտնելու էր նաև Կիլիկիան⁴: Այս շրջանում բավական հետաքրքիր է բրիտանահայ գործիչների տեսակետները, որոնց մեծամասնությունն առաջարկում էր հույս չդնել Մեծ Բրիտանիայի վրա և ապավինել բացառապես Ռուսաստանին: Գործարար աշխարհի կարկառուն ներկայացուցիչներից Գալուստ Գյուլբենկյանը գտնում էր, որ հայերի համար լավագույն տարբերակն ամբողջ Հայաստանի ռուսական հովանավորության տակ անցնելն էր: Նա նույնիսկ առաջարկել էր ազգովի դիմել ցարին, իսկ ինքնավարության գաղափարը չբարձրացնել, որպեսզի այդ քայլով ռուսներին ավելորդ չգրգռեին: Լոնդոնաբնակ Սեդրակ Սարգսյանցը (Տևկանց), ով նախկինում քննադատում էր Ռուսաստանին, այդժամ վերջինի ենթակայության տակ անցնելու կողմնակից էր: Նա համոզված էր, որ ռուսներն այդ տարածքները պահելու համար հայերի կարիքը

¹ Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917 гг., серия III (1914-1917 гг.), т. VI, ч. 2, М.-Л., 1935, ст. 215.

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, թ. 4:

³ Նույն տեղում, թ. 5:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, թ. 31, թ. 98:

կունենան, իսկ հայերը շրջակա մահմեդականներից պաշտպանվելու համար՝ Ռուսաստանի: Եվրոպայի թեմի առաջնորդ Գևորգ սրբազանը նույնպես համակարծիք էր այդ գաղափարներին¹:

Փարիզաբնակ հասարակական գործիչ, հրապարակախոս Արշակ Չոպանյանը համոզված էր, որ եթե ինքնավարություն չտրվի, ապա ռուսական գրավումը նույնպես նպաստավոր կարող է լինել հայության համար: «Նույնիսկ եթե էրզրումեն մինչև Սիս ռուսը գրավե և պարզապես կցե, նորեն հայուն համար շատ լավ է,- գրում էր նա վերակազմյալ հնչակյան Վահե Արզույանին,- ... Ամեն բանի մեջ հայը, ու նույնիսկ Կիլիկիո շարժման մեջ, նախ ռուսին դիմելու է»²:

Ֆրանսիայի վարչապետ Գաստոն Դումերգը պատերազմի սկզբում իր մոտ է հրավիրում Վիկտոր Բերարին, ով սերտ կապեր ուներ հայ գործիչների հետ, և հետաքրքրվում է, թե ինչ դիրք են բռնելու հայերը պատերազմի ժամանակ: Գ. Դումերգն առաջարկում է, որ հայերն ավելի ակտիվ մասնակցություն ունենան պատերազմին դաշնակիցների կողմից և ապահովեն իրենց ապագան՝ «նուազագույնը դքսութիւն մը» Արևմտյան Հայաստանում: Այդ մասին Վ. Բերարը իրազեկեց ՀՅԴ ճանաչված գործիչներից Միքայել Վարանդյանին³: Ֆրանսիացի ակադեմիկոս և պատգամավոր Դենի Կոշենը 1914 թ. նոյեմբերի 6-ին Փարիզի «Le Gaulois» օրաթերթում հրատարակած հոդվածում կոչ էր անում ստեղծել ինքնավար Հայաստան, որը ձգվելու էր Տրապիզոնից մինչև Ադանա ու Ալեքսանդրետ⁴: Նմանատիպ հոդվածները, ելույթները բնականաբար ոգևորում էին հայերին:

Հայ գործիչները ծանոթ չէին մեծ տերությունների իրական նկրտումներին և միամտաբար հույսեր էին տածում, որ Անտանտի երկրները պատրաստ են ստեղծել հայկական պետություն, որը կծգվեր Ռուսաստանի կովկասյան սահմաններից մինչև Միջերկրական ծով: Հայերին իրենց կողմը գրավելու նպատակով Անտանտի երկրների բարձրաստիճան պաշտոնյաներն ու դիվանագետները բանավոր տարբեր խոստումներ էին տալիս, սակայն երբ հարցը հասնում էր Հայաստանին ինքնավարություն տալու մասին հրապարակային հայտարարություններ անելուն կամ այդ նպատակով որևէ

¹ Նույն տեղում, թ. 104-105:

² Դավլաքյան Կ., Արշակ Չոպանյան, Երևան, 1987, էջ 327-328:

³ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը: Հայկոտա յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 175-176: Նաև՝ Ամուրեան Ա., Հայ Դատը: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, 1977, էջ 146-147:

⁴ Կոշեն Դընի, Հայաստան, «Արարատ», Ս. Էջմիածին, 1915, թիւ 1, էջ 33: Գոշեն Տընի, Հայաստան, «Հնչակ», 1914, թիւ 2, էջ 28-29:

փաստաթուղթ ստորագրելուն, ապա մեծ պետությունների ներկայացուցիչներն ամեն կերպ խուսափում էին դրանից:

Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելուց հետո Կ. Պոլսի թուրքական մամուլը սկսեց լուրեր տարածել, որ իբր՝ Ռուսաստանը հայերին ինքնավարություն է խոստացել: Դրա նպատակն էր մահմեդականներին գրգռել հայերի դեմ, հող նախապատրաստել ցեղասպանության համար: Օսմանյան բանակ զորակոչված բժիշկ Յաղուբ Թուզճյանը հետագայում վկայում է, որ այդ հայտարարություններից թուրք զինվորները բավական գրգռվել են և անընդհատ բարձրաձայնում էին, որ «հայերը մեր գլխուն մեծ փորձանք դարձան, ասոնցմէ միանգամ ընդ միշտ ազատուիլ պէտք է»¹:

Ռուսական պետական դումայի պատգամավոր Մովսես Աճեմովը և Ա. Զիվելեգյանը ռուսական մամուլին տված հոդվածներում և հարցազրույցներում բարձրացնում էին թուրքական անվանական գերիշխանության և ռուսական հովանավորության ներքո յոթ վիլայեթների ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարը: Ա. Զիվելեգյանն առաջարկում էր Թուրքիայի կազմում ստեղծել երեք ինքնավար մարզեր՝ Հայաստանը՝ ռուսական, Արաբիան՝ Միջագետքով՝ բրիտանական, Սիրիան՝ ֆրանսիական հովանու տակ²: Ա. Զիվելեգյանի կարծիքով՝ ինքնավար Հայաստանը կառավարելու էր ոչ թուրքահայատակ գեներալ-նահանգապետը, որին առաջարկելու էր Ռուսաստանը և հաստատելու էր Թուրքիան: Նահանգապետը հաշվետու էր լինելու խորհրդին, որը կազմվելու էր հավասար թվով հայերից ու մահմեդականներից: Այդ գաղափարը պաշտպանում էին նաև Մոսկվայի հայոց կոմիտեի նախագահ Ստեփան Մամիկոնյանը և քարտուղար Կ. Կուսիկյանը³:

Լեոն գրում է, որ Շիրվանզադեն (Ալեքսանդր Մովսիսյան) և Գաբրիել Մնացականյանը անկախություն էին պահանջում Հայաստանի համար⁴: Սակայն իրականում Գ. Մնացականյանն առաջարկում էր ստեղծել կիսանկախ հայկական պետություն Ռուսաստանի հովանու ներքո: Նա առաջարկում էր Օսմանյան կայսրությունը բաժանել 7 մասերի՝ 1. Եվրոպական Թուրքիա և Կ. Պոլիս, 2. Անատոլիա, 3. Հայաստանը՝ Կիլիկիայով, 4. Քրդստանը՝ Զուլամերիկով, 5. Միջագետք, 6. Սիրիա, 7. Արաբիա⁵: Նա համոզված էր, որ Ան-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 129, թ. 3:

² «Հայաստանի ավտոնոմիան», էջ 83:

³ Նույն տեղում, էջ 84:

⁴ Լեո, Անցյալից, էջ 306:

⁵ Мнацаканян Г., Разрешение Армянского Вспроса, Москва, 1914, с. 6.

տանտի երկրները պետք է իրենց հովանու տակ ստեղծեին կիսանկախ պետություններ արաբների, հայերի, լիբանանցիների համար, քանի որ այդ ազգերն ունեին զարգացման բարձր մակարդակ և պայքարում էին ազատության համար: Նա արդարացի էր համարում, որ Ֆրանսիան գրավեր Սիրիան և Պաղեստինը, Բրիտանիան՝ Միջագետքը, ինչպես նաև ստանձներ կիսանկախ Արաբիայի վերահսկողությունը, Ռուսաստանը գրավեր Կ. Պոլիսը, Քրդստանը, վերջներ կիսանկախ Հայաստանի հովանավորությունը¹: Այսպիսով, Գ. Մնացականյանը փորձում էր սիրաշահել ու շահագրգռել Անտանտի երեք տերություններին Օսմանյան կայսրության բաժանման և ինքնավար Հայաստան ստեղծելու հարցում՝ հաշվի առնելով նրանց հիմնական հավակնությունները:

Ըստ Գ. Մնացականյանի՝ հայկական պետության սահմանը Սև ծովի ափին արևմուտքում հասնելու էր Ունիե նավահանգստին, այնտեղից Թոքաթի, Սեբաստիայի, Կեսարիայի վրայով իջնելու էր դեպի Միջերկրական՝ մինչև Ադալիայի ծովածոցի հարավը, Ալեքսանդրետից Ուրֆայի վրայով ձգվելու էր Դիարբեքիր, ապա, դուրս թողնելով Ջուլամերիկը (Հաքքիարի), հասնելու էր պարսկական սահմանին՝ Կոտուրի մոտ²: Ռուսական կողմին սիրաշահելու և ապագայում Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունները երաշխավորելու նպատակով՝ Հայաստանի կառավարումն առաջարկում էր հանձնել Ռոմանովների տոհմից որևէ մեծ իշխանի³: Նա սխալ էր համարում Կիլիկիան Հայաստանից անջատելու Ֆրանսիայի ձգտումը: Փորձում էր ապացուցել, որ Ռուսաստանի տնտեսական, ռազմավարական շահերից էր բխում միասնական հայկական պետության կազմավորումը: Հաշվի առնելով, որ Կիլիկիան ի վերջո կարող էր անցնել ֆրանսիական տիրապետության տակ, նա հույս էր հայտնում, որ Կիլիկիային նույնպես կտրվեր ինքնավարություն, միաժամանակ այդ երկրամասի կենսունակությունն ապահովելու համար նրան կմիացվեին Խարբերդի ու Դիարբեքիրի նահանգները⁴:

Պետք է խոստովանել, որ անկախության գաղափարի համար հայ քաղաքական միտքը դեռևս չէր հասունացել: Մի քանի հարյուրամյակ առանց պետականության մնացած, երեք հզոր պետությունների միջև մասնատված ազգի համար անկախության տեսլականը տվյալ պատմական պահին թվում էր անիրական երազանք:

¹ Նույն տեղում, էջ 7:

² Նույն տեղում, էջ 15, 45:

³ Նույն տեղում, էջ 35-36:

⁴ Նույն տեղում, էջ 45, 47:

1915 թ. հունվարի 17-ին Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային բյուրոն քննարկում է Հայաստանի ապագայի հարցը: «Տաճկահայաստանի ապագա քաղաքական կազմակերպության մասին» թեմայով զեկուցում է կարդում Լեոն, ներկայացվել է ժամանակին Ներսես պատրիարքի կազմած «Սահմանադրությունը»: Քննարկումից հետո ընդունվում է հետևյալ բանաձևը. «Ինքնավար Հայաստան (Ատոնումիա) օրենսդրական օրենքներով ռուսաց հովանաւորութեան ներքոյ»¹:

Հնչակյան կուսակցության ղեկավարներից Ստեփան Սապահ-Գյուլյանը, արտահայտելով իր կուսակցության տեսակետը, գրում էր. «Հայ ազգը պիտի ունենայ իր քաղաքական ինքնավարությունը. դա պատմութեան արգասիքը, նրա հրամայականն է: Ասիայում գալիք փոփոխութիւնների մէջ՝ բուն Հայաստանը, Հայկական Կիլիկիայով միասին, ինքնավար պիտի դառնայ: Արուեստական ինչ բաժանումներ, ոյժի, բռնադատութեան վրայ հիմնուած քաղաքական ինչ բաղկացութիւններ էլ որ մէջտեղ գալու լինին,- այնու ամենայնիւ Հայաստանի քաղաքական ինքնավարութիւնը, իր պատմական, ժողովրդագրական սահմանների մէջ, կը մնայ որպէս մնայուն պահանջ Պատմութեան, մարդկային քաղաքակրթութեան»²:

Հրապարակախոս Արշակ Չոպանյանը Ռուսաստանին կաղեւտական կուսակցության ղեկավարներից Պավել Միլյուկովին ուղարկած նամակներում փորձում էր ներկայացնել Կիլիկիայի կարևորությունը Հայաստանի համար: «Հարցի ամենալրիվ և հիմնական լուծումը Հայաստանի ավտոնոմիան է, վեց վիլայեթների և Կիլիկիայի՝ Ռուսաստանի հովանավորության տակ... Դուրս գցելով Կիլիկիան ավտոնոմ Հայաստանից, կամ Հայաստանի ավտոնոմիան անկարելի համարելով հայերի թվի պակասության շնորհիվ, Եվրոպան սանկցիա տված կը լինի թուրքերի ոճրագործություններին և կը դառնա նրա գործակիցը»: Այդ ինքնավարությունը, ըստ Ա. Չոպանյանի, բնավ «չի նշանակում մյուս ազգերի ճնշում, այլ, ընդհակառակն, աջակցություն նրանց մտավոր կուլտուրական բարձրացմանը»³:

Այսպիսով՝ հայության գրեթե բոլոր շերտերը հրապուրված էին ինքնավար հայկական պետության կազմավորման հնարավորությամբ: Հայկական հարցի չորս տասնամյակ տևած ծախող ընթացքից հետո թվում էր՝ մոտ էր քաղձալի երազանքի իրականացումը:

¹ ՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 3, թ. 12:

² Սապահ-Գիլեան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե, 1915, էջ 31:

³ Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան, էջ 322:

1915 թ. հունվարի վերջին Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Սազոնովը ռուսական դումայի հայ պատգամավոր Միքայել Պապաջանյանին տեղեկացրել էր, որ հայերի համար լավագույն լուծումը կլինի հայկական տարածքների գրավումը Ռուսաստանի կողմից, ուր հայերին կտրվի լեզվական ազատություն¹: Դա բավական լուրջ դժգոհություններ էր առաջացրել հայ գործիչների մոտ: Իսկ Կիլիկիայից ռուսները հրաժարվում էին, քանի որ Ֆրանսիան էր հավակնում:

Սակայն հանգամանքների փոփոխության հետևանքով ռուսական իշխանությունները 1915 թ. փետրվարի կեսերին հայ գործիչներին առաջարկեցին ներկայացնել Հայաստանի ապագայի վերաբերյալ ազգային ձգտումները, ինչպես նաև Հայաստանի ու Կիլիկիայի միացյալ քարտեզը՝ այն սահմաններով, որին հայերը հավակնում էին:

Այդ առաջարկն արվել էր Ռուսաստանի ԱԳՆ արևելյան բաժնի վարիչ Կ. Գուլկևիչի կողմից: Հայ գործիչները կազմեցին միացյալ Հայաստանի քարտեզը, որը ներառելու էր արևմտահայկական 6 վիլայեթներն ամբողջությամբ, Տրապիզոնի վիլայեթը մինչև Տիրեբոլու բնակավայրը՝ Տրապիզոն քաղաքից արևմուտք, Կիլիկիան՝ Ալեքսանդրետով և առանց վերջինի, եթե դաշնակիցները պահանջեին²:

Ազգային բյուրոյի ներկայացուցիչ, նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Հակոբ Զավրյանը և մենչևիկ Ալեքսանդր Ասրիբեկյանը հայկական պահանջները քննարկեցին Ռուսաստանի ԱԳՆ-ում թուրքական խնդիրներով զբաղվող երկու դիվանագետների՝ Կ. Պոլսի ռուսական դեսպանատան նախկին թարգման և հայկական բարենորոգումների 1913 թ. ռուսական նախագծի հեղինակ Անդրեյ Մանդելշտամի, ապա՝ Կ. Գուլկևիչի հետ:

1915 թ. փետրվարի 18-ի հանդիպման ժամանակ Ա. Մանդելշտամը նշել էր, որ նեղուցները ստանալու դեպքում Ռուսաստանին չի հետաքրքրի Հայաստանը, որտեղ կարող են որևէ բան ստեղծել՝ պահպանելով ռուսական շահերը: Առաջարկել էր ներկայացնել պահանջները Կ. Գուլկևիչին, միաժամանակ գզուշացրել էր, որ դրանք կարող են իրականանալ այնքանով, որքանով չեն հակասի ռուսական շահերին: Նաև առաջարկել էր պարզաբանել, թե ինչու են հայերը դեմ Հայաստանի՝ ռուսական գրավմանը³:

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 1-2:

² Նույն տեղում, թ. 2:

³ Նույն տեղում, թ. 2-3:

Փետրվարի 19-ին Հ. Զավրյանը և Ա. Ասրիբեկյանը հանդիպեցին Կ. Գուլկևիչի հետ: Վերջինս շատ սիրավոր ընդունեց հայ գործիչներին, մանրամասն ուսումնասիրեց հայկական կողմի ներկայացրած քարտեզը, առաջարկեց այդ սահմաններից դուրս թողնել Թոքաթը և Հաքքիարին: Նա հնարավոր էր համարում այն, որ կարող էին Հայաստանը թուրքական անվանական գերիշխանության տակ թողնել, այնտեղ որոշ ժամանակով մնար ռուսական սահմանափակ թվով զորք, մինչև հայերը կկազմավորեին սեփական բանակը: Նա նշում էր, որ Ռուսաստանը նեղուցները ստանալուց հետո Հայաստանով շահագրգռված չէ, մանավանդ, որ պատերազմից հետո ֆինանսական ծանր պայմանների հետևանքով նոր ծախսեր իրեն չի կարողանա թույլ տալ: Կ. Գուլկևիչն առաջարկում էր Հայաստանից դուրս թողնել Ալեքսանդրետը, որպեսզի դաշնակիցների կողմից ընդդիմություն չլիներ: Հ. Զավրյանը նշում էր, որ այդ հարցում պատրաստ են զիջումների, անհրաժեշտության դեպքում կարող են հրաժարվել նաև Այնթապից ու Բիրեջիկից: Կ. Գուլկևիչը առաջ քաշեց այն գաղափարը, որ Հայաստանի հովանավորությունը դրվի ոչ թե միայն Ռուսաստանի, այլ նաև Բրիտանիայի և Ֆրանսիայի վրա: Այդ տեսակետին Հ. Զավրյանը բացասաբար վերաբերվեց, քանի որ երեք երկրների միջև հետագայում առաջ կգային տարբեր շահեր, որոնց հակադիր գործողություններից կտուժեր Հայաստանը¹:

Այսպիսով՝ ռուսական կողմը փորձում էր հասկանալ հայկական ձգտումները, սիրաշահել հայերին, միաժամանակ՝ լուծումներ գտնել Կիլիկիայի վրայով դեպի Միջերկրական դուրս գալու Ռուսաստանի հնարավորության շուրջ:

Փետրվարի 25-ին Հ. Զավրյանին հրավիրեցին ԱԳՆ, ուր կրկին հանդիպեց Կ. Գուլկևիչի և Ա. Մանդելշտամի հետ: Կ. Գուլկևիչը տեղեկացրեց, որ Հայաստանի քարտեզը ներկայացրել է փոխնախարար Անատոլի Ներատովին, միաժամանակ կրկին հարցրեց Հ. Զավրյանի կարծիքը երեք տերությունների կողմից Հայաստանի համատեղ հովանավորության խնդրի շուրջ: Հ. Զավրյանը մտավախություն հայտնեց, որ այդ երկրներից յուրաքանչյուրը կարող էր իր հովանավորության տակ վերցնել տեղի ժողովուրդներից (հայեր, թուրքեր, քրդեր) որևէ մեկին, ինչի հետևանքով մշտական անկայունություն կստեղծվեր: Կ. Գուլկևիչը, համաձայնելով այդ կարծիքին, միաժամանակ մատնանշում էր, որ ծովից ծով Հայաստանը կանհանգստացնի դաշնակիցներին, և դրա ստեղծումը նրանց կողմից լուրջ խոչընդոտների կհան-

¹ Նույն տեղում, թ. 3-5:

դիպի: Հ. Զավյանն առաջարկեց գեներալ-նահանգապետի ընտրությունը թողնել երեք պետություններին, Ռուսաստանին հանձնել հովանավորությունը, սակայն վերջինս ամեն տարի Հայաստանի մասին հաշվետվություն պետք է ներկայացնեի Բրիտանիային և Ֆրանսիային: Հայ գործիչն առաջ քաշեց նաև այն գաղափարը, որ հայերը սեփական ուժերով դաշնակիցներին ներկայացնեին Կիլիկիան ներառող Հայաստանի ինքնավարության հարցը: Դա հետաքրքրեց ռուս դիվանագետին, և նա ժամանակ խնդրեց այդ հարցի շուրջ մտածելու համար¹:

Մինչև մարտի 2-ը Հ. Զավյանը ևս երկու անգամ հանդիպեց Ա. Մանդելշտամի և մեկ անգամ Պ. Միլյուկովի հետ: Հ. Զավյանը փորձեց վերջինին համոզել Կիլիկիան Հայաստանին միավորելու անհրաժեշտության հարցում, սակայն չհաջողեց: Պ. Միլյուկովը համոզված էր, որ Միջերկրականում հայկական նավահանգիստը շատ բեռներ կհեռացնեի ռուսական ճանապարհներից, արևմտահայերը ապագայում լիարժեք անկախության կհասնեին, և արևելահայերը կձգտեին միանալ նրանց, որը աղետալի կլիներ հայերի համար, քանի որ Ռուսաստանը երբեք դա թույլ չէր տա: Նա ցանկանում էր Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները և Տրապիզոնը միացնել Ռուսաստանին և տալ որոշակի ներքին ինքնավարություն: Նրան համոզելու Հ. Զավյանի ջանքերն անցան ապարդյուն: Պ. Միլյուկովը տեղեկացրեց, որ ինքը Ս. Սազոնովին նույնպես հարցրել է Կիլիկիայի մասին, և նախարարը պատասխանել է, որ այդ երկրամասի հարցում հայերին որևէ խոստում չի տրվել: Իսկ ահա Ա. Մանդելշտամը Հ. Զավյանին վստահեցրեց, որ ինքը և Կ. Գուկկեիչը կողմ են, որպեսզի ստեղծվի ինքնավար Հայաստան՝ Կիլիկիայով հանդերձ, և խորհուրդ տվեց հանդիպել Ս. Սազոնովի հետ և փորձել համոզել պաշտպանելու այդ գաղափարը²: Ինչպես տեսնում ենք, ռուսական տարբեր գործիչների ու գերատեսչությունների միջև տարակարծություններ կային Հայաստանի ապագայի վերաբերյալ:

Մարտի 4-ին Հ. Զավյանը Թուրքիայում նախկին ռուսական դեսպան Մաքսիմ Գիրսին ուղարկեց Վ. Բերարի տեսակետը՝ հայ-թրդական միացյալ պետություն ստեղծելու վերաբերյալ: Ֆրանսիացի գործիչը 1915 թ. հունվարին այդ նախագիծը ներկայացրել էր Ֆրանսիայի ԱԳ նախարար Թեոֆիլ Դելկասեին և Փարիզում բրիտանական դեսպան Ֆրենսիս Բերտինին: Ըստ

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 7-9:

² Նույն տեղում, թ. 10:

Վ. Բերարի՝ Թ. Դելկասեն այն ընդունելի էր համարել: Վ. Բերարը հունվարի 23-ին Փարիզում այդ նախագծի և բանակցությունների մասին հայտնել էր ՀՅԴ ղեկավարներից Ռոստոմին (Ստեփան Ջորյան), որն էլ Պետրոգրադում փետրվարի 23-ին այն փոխանցել էր Հ. Ջավոյանին:

Ըստ այդ նախագծի՝

1. Օսմանյան կայսրության բոլոր այն տարածքները, որոնք բնակեցված են գլխավորապես հայերով ու քրդերով, միավորվելու էին մեկ երկրամասի մեջ, որը կոչվելու էր Արևելյան Անատոլիա: Այն հյուսիսում ընդգրկվելու էր Սև ծովի ափերը՝ Սինոպից մինչև Խոփա, հարավում՝ Միջերկրականի ափին՝ որպես նավահանգիստներ, ունենալու էր Մերսինը, Այասը, հնարավորության դեպքում՝ Ալեքսանդրետը: Երկրամասը Կիլիկիայից Մոսուլի վրայով ձգվելու էր մինչև Պարսկաստան:

2. Արևելյան Անատոլիան կազմակերպվելու էր եվրոպական ձևով, ունենալու էր կառավարման կենտրոնական մարմին: Եվրոպացի խորհրդականների միջոցով բարեփոխվելու էր ժանդարմերիան, արդարադատությունը, ավատատիրական հողատիրությունը, ֆինանսները և հասարակական աշխատանքները: Դրանց շնորհիվ՝ երկրում կարգ ու կանոն կհաստատվեր, երկու ժողովուրդներն ու կրոնները համերաշխությամբ կաշխատեին, կբարգավաճեին, զերծ կմնային թուրքական բարբարոսություններից:

3. Թուրքական կառավարությանը պետք է հեռու պահեին Արևելյան Անատոլիայի ներքին կյանքին միջամտելուց: Միայն Անտանտի երկրների հովանավորությամբ ու միջամտությամբ պետք է իրականացվեին բարեփոխումները: Անտանտի ներկայացուցիչներն ամեն տարի պետք է հաշվետվություն ներկայացնեին կատարված աշխատանքների մասին¹:

Վերոնշյալ նախագիծը հավանություն չգտավ ո՛չ հայ, ո՛չ էլ ռուս գործիչների կողմից: Հայերին վանում էր այն գաղափարը, որ Հայաստան անվան փոխարեն օգտագործվում էր Արևելյան Անատոլիա արհեստական տերմինը և Հայաստանի տարածքի վրա փորձ էր արվում ստեղծել հայ-քրդական պետություն:

Մարտի 5-ին Հ. Ջավոյանը հանդիպեց Մ. Գիրսի հետ: Վերջինս նշեց, որ Հայաստանի ապագայի համար կա երեք տարբերակ՝ ա) միացում Ռուսաստանին, բ) որոշակի վարչական ինքնուրույնություն Ռուսաստանի կազմում, գ) ինքնավարություն Թուրքիայի կազմում: Ամենահավանական տար-

¹ Նույն տեղում, թ. 11-12:

բերակը, նրա կարծիքով, վերջինն էր: Մ. Գիրսը համոզված էր, որ հայերը պետք է հրաժարվեն Ալեքսանդրեոսից, քանի որ տերությունները տնտեսական ու քաղաքական մեծ շահեր ունեին այնտեղ, սակայն Մերսինով ելքը Միջերկրական համարում էր անհրաժեշտություն, չնայած այդտեղ նույնպես հայերը, նրա կարծիքով, կհանդիպեին որոշ տերությունների ընդդիմությանը¹:

Պետրոգրադյան բանակցություններից Հ. Զավոյանը եզրակացրեց, որ ռուսական իշխանությունները դեռ չեն կողմնորոշվել Հայաստանի ապագայի հարցում, գոյություն ունեն տարբեր նախագծեր, սակայն ռուսական կողմը սպասում է դաշնակիցների տեսակետները նույնպես հասկանալու համար, իսկ հասարակության որոշ շերտերում տարածված կարծիքը, որ Հայաստանը պետք է գրավել ու միացնել Ռուսաստանին, արտգործնախարարությունում չէին պաշտպանում: Պարզ դարձավ, որ վեց վիլայեթների ինքնավարության գաղափարին ռուսները դեմ չեն, սակայն Կիլիկիայի հարցում ընդդիմություն կլինե՞ր մյուս տերությունների կողմից: Հ. Զավոյանը գիտակցում էր, որ անհրաժեշտ է հայկական նախագծերի պաշտպանության հարցում համոզել Ֆրանսիային և Բրիտանիային: Նա հատկապես վախենում էր վերջինի ընդդիմությունից, քանի որ բրիտանացիները կարող էին ոտնահարել հայության շահերը և պաշտպանել մահմեդականներին՝ ռուսների դեմ պատենշ ստեղծելու համար²: Նա տեղյակ չէր, որ Կիլիկիայի նկատմամբ Ֆրանսիայի հավակնությունները չափազանց մեծ են և հետագայում այդ տերությունն էր ամեն կերպ խոչընդոտելու հայկական հարցում առաջ քաշվող նախագծերին ու լուծումներին:

Մարտի 5-ին Կ. Գուլկևիչը Հ. Զավոյանին առաջարկեց հնարավորինս շտապ մեկնել Փարիզ ու Լոնդոն, ներկայացնել հայկական պահանջները: Հ. Զավոյանն անակնկալի եկավ, քանի որ հայկական պահանջները դեռ հստակեցված չէին նաև ռուսների հետ: Կ. Գուլկևիչն առաջարկում էր պահանջել ինչ ուզում են, հնարավորիս ընդարձակ պահանջներ դնել, Բրիտանիային ու Ֆրանսիային համոզել, որպեսզի աջակցեն հայկական ձգտումներին, խոստանում էր հեռագրել Փարիզի ու Լոնդոնի ռուսական դեսպաններին, որպեսզի օգնեին Հ. Զավոյանին: Վերջինիս ոչինչ չէր մնում, քան պատրաստվել մեկնելու: Հաջորդ օրը նա հանդիպում է Ա. Մանդելշտամին, որը խորհուրդ է տալիս ունենալ կաթողիկոսի կողմից գրություն, որպեսզի Եվրո-

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 13-15:

² Նույն տեղում, թ. 16:

պայում հանդես գար իբրև ազգի ներկայացուցիչ: Հ. Զավոյանը անհրաժեշտ էր համարում Փարիզ հրավիրել օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գարեգին Փաստրմաճյանին (Արմեն Գարո), ով բացահայտորեն միացել էր Կովկասի հայ կամավորական ջոկատներին և Ազգային պատմիրակության նախագահ Պողոս Նուբարին, որպեսզի միասին գործեին¹:

Ինչպես տեսնում ենք, որոշ ռուս դիվանագետներ հակված էին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմանը և ինքնավարությանը, քանի որ դրանով ճանապարհ կբացվեր Ռուսաստանի համար դեպի Միջերկրական: Դրա համար անհրաժեշտ էր համարվում խրախուսել հայկական ձգտումները և հայկական գործունե օգտագործել, որպեսզի դաշնակիցներին համոզեն մինչև Միջերկրական ձգվող ինքնավար Հայաստանի անհրաժեշտությունը:

Ռուս գործիչների այդ դիրքորոշումը հիմնականում պայմանավորված էր բրիտանա-ֆրանսիական ուժերի կողմից սկսված Դարդանելի օպերացիայով: Ռուսաստանը բավական հստակ գիտակցում էր, որ իր դաշնակիցները Կ.Պոլսի գրավումից հետո այն չեն հանձնի իրեն: Հետևաբար, Ռուսաստանին ավելի ձեռնառու էր պահպանել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, թույլ չտալ մյուս տերություններին հաստատվելու սևծովյան նեղուցներում: Իսկ միասնական ու ինքնավար Հայաստանի վրայով Ռուսաստանը կարող էր ելք ապահովել դեպի Միջերկրական:

Մարտի 15-ին Հ. Զավոյանը հանդիպում է ռուսական ռազմական բարձրաստիճան պաշտոնյայի հետ, ով հաստատում է, որ ԱԳՆ պաշտոնյաների ներկայացրած տեսակետները համապատասխանում էին այն ընդհանուր մտածելակերպին, որ կար ռուսական վերնախավում և Ռուսաստանը չէր պատրաստվում Հայաստանը գրավել: Նա պարզաբանեց, որ պատերազմից Ռուսաստանը դուրս կգար հսկայական պարտքով և գումարներ չէր ունենա հետամնաց ու ավերակ Հայաստանը վերակառուցելու համար, դրա համար էլ ավելի ճիշտ կլիներ ինքնավարություն տալ վերջինիս: Ռուսական իշխանությունները մտածում էին, որ դաշնակիցների կողմից Կ. Պոլսի գրավումից հետո Թուրքիան ստիպված կլինի դուրս գալ պատերազմից, և Անտանտի երկրները կպահպանեն Թուրքիայի ամբողջականությունը, իսկ Հայաստանի համար ինքնավարություն կպահանջեն: Ռուսաստանը հույս ուներ թուրքերի հետ շուտափույթ խաղաղություն հաստատել և զորքերը նետել արևմտյան ճակատ: Ռուս գործիչը նշեց, որ Հայաստանը չի կարող դուրս գալ ռուսա-

¹ Նույն տեղում, թ. 17-18:

կան ազդեցությունից, հետևաբար իրենց ձեռնադրումը է ինքնավարությունը, որով Հայաստանը կզարգանա և ավելի նպաստավոր կլինի ռուսական տնտեսության համար: Նա հույս ուներ, որ Կիլիկիան ևս կմիացվեր Հայաստանին, որով ավելի կոյուրացվեր Ռուսաստանի ելքը դեպի Միջերկրական: Նաև զգուշացնում էր, որ Հայաստանը, եթե մի օր փորձի դուրս գալ ռուսական ազդեցությունից, ապա իրենք դա թույլ չեն տա և դաժանորեն կպատժեն հայերին: Ռուս գործիչը տեղեկացնում է, որ որոշ գեներալների հանձնարարվել է առաջարկել Կովկասյան սահմաններն ուղղելու տարբերակներ, սակայն նրանք առաջարկել են սահմանները թողնել անփոփոխ: Սակայն, եթե թուրքերը պատերազմից դուրս չգան, ապա ռուսները կգրավեն Էրզրումը, և Ռուսաստանը կարող էր այլ բան պահանջել: Հ. Զավրյանն առաջարկում էր հայկական դրոժինաների կամավորների թիվը հասցնել 10.000-15.000-ի, որպեսզի, եթե ռուսական բանակն ուղարկվեր գերմանական ճակատ, ապա հայերն ինքնավար Հայաստանում սեփական ուժերով կարողանային պահպանել կարգը: Ռուս պաշտոնյան պատասխանեց, որ իրենք գենքի ավելցուկ չունեն, սակայն Կովկասի փոխարքան կարող էր գլխավոր հրամանատարին խնդրել, որպեսզի տրամադրեին ավստրիացիներից գրաված 10.000 հրացան և 10 մլն փամփուշտ¹:

Ինչպես տեսնում ենք, Հ. Զավրյանը փորձում էր ռուսներին համոզել մեծացնելու հայ կամավորների թիվը, ովքեր ապագայում կդառնային ինքնավար Հայաստանի բանակի հիմքը:

Ապրիլի սկզբին Հ. Զավրյանը մեկնեց Եվրոպա՝ միացյալ Հայաստանի հարցը Ֆրանսիայի և Բրիտանիայի առաջ պաշտպանելու նպատակով: Ապրիլի 4 (17)-ին Ռուսաստանի ԱԳ նախարարի տեղակալ Ա. Ներատովը հեռագրեց Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին, որպեսզի աջակցեն Հ. Զավրյանին՝ դաշնակից կառավարություններին և հասարակական կարծիքը կողմնորոշելու հայկական բաղձանքների իրականացմանը²:

Ստանալով զանգվածային տեղահանությունների ու կոտորածների լուրերը՝ Գևորգ Ե կաթողիկոսը որոշեց Պողոս Նուբարին կրկին ուղարկել Եվրոպա, որպեսզի նա քայլեր ձեռնարկի կոտորածները դադարեցնելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը բարձրացնելու համար: Դեռևս 1912 թ. կաթողիկոսը Պ. Նուբարին լիազորել էր կազմավորելու Ազ-

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 29-31:

² Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 371:

գային պատվիրակություն և Արևմտյան Հայաստանում բարենորոգումների հարցը բարձրացնելու Եվրոպայում, և վերջինիս գործունեության արդյունքում էր, որ 1914 թ. հունվարի 26-ին ստորագրվել էր հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը: 1915 թ. ապրիլի 18-ի կոնդակով վեհափառը վերահաստատում է Պ. Նուբարի լիազորությունները՝ որպես իր ներկայացուցիչ մեծ տերությունների մոտ¹:

Պ. Նուբարը, ստանալով վեհափառի հանձնարարությունը, անմիջապես մեկնեց Կահիրեից և մայիսի 6-ին հասավ Փարիզ: Նույն օրը Լոնդոնից Ժամանեց և նրան դիմավորեց Հ. Զավրյանը: Նա Պ. Նուբարին ներկայացրեց Հայաստանի ինքնավարության մի ծրագիր, որը հիմնված էր կաթողիկոսի՝ Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին և կայսր Նիկոլայ Բ-ին կատարած դիմումների, ինչպես նաև այն բանակցությունների վրա, որ տեղի էին ունեցել հայ քաղաքական գործիչների և Ռուսաստանի արտգործնախարարության միջև²:

Այդ ծրագրով ստեղծվելու էր ինքնավար Հայաստան՝ սուլթանի անվանական գերիշխանության տակ ու եվրոպացի գեներալ-նահանգապետի գլխավորությամբ: Սուլթանը Հայաստանի ներքին գործերին միջամտելու իրավունք չէր ունենալու, երկրում թուրքական զորք չէր լինելու: Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միացյալ խնամակալության ներքո: Ինքնավար Հայաստանն ընդգրկվելու էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգները և Կիլիկիան՝ Մերսին նավահանգստով, իսկ Ալեքսանդրետը դուրս էր մնալու, որպեսզի խուսափեին Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի դժգոհությունից ու ընդդիմությունից³:

Այդ ծրագրի վերաբերյալ, ինչպես տեսանք, Պետրոգրադում նախնական համաձայնություն էր կայացվել: Սակայն Ռուսաստանը իրականում որևէ պարտավորություն չէր ստանձնել, հատկապես՝ Կիլիկիայի մասով, քանի որ այդ երկրամասը Ֆրանսիայի ազդեցության գոտում էր, և հայերը պետք է սեփական ուժերով պաշտպանեին իրենց շահերը Բրիտանիայի ու Ֆրանսիայի կառավարությունների մոտ: Հ. Զավրյանը Պ. Նուբարին տեղեկացրեց, որ Ֆրանսիան ու Ռուսաստանը գաղտնի համաձայնություն են կնքել, որով հաղթանակից հետո Ֆրանսիային էր անցնելու Կիլիկիան, իսկ

¹ ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 27, թթ. 30-31:

² ՀԱԱ, ֆ. 57, գ. 5, զ. 28, թ. 187:

³ Boghos Nubar's Papers, p. 80-84. Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 371-374:

Ռուսաստանին՝ Կ. Պոլիսը, Էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: Սակայն վերջինս զոջացել էր այդ համաձայնության համար և ինքը, մնալով ստվերում, հայերին դրդում էր պահանջել Կիլիկիան՝ խոստանալով ինքնավարություն տալ Հայաստանին՝ վեց վիլայեթների և Կիլիկիայի սահմաններում¹:

1915 թ. ապրիլի 28-ին «Մանչեստր Գարդիան» թերթում հրապարակվեց Արշակ Սաֆրասոյանի բաց նամակը խմբագրին: Հայ մտավորականը ներկայացնում էր հայկական ինքնավարության պահանջները, Հայաստանի ժողովրդագրական վիճակը, ինչպես նաև հիմնավորում էր Կիլիկիան հայկական պետությանը միավորված տեսնելու ձգտումը. «Սակայն իբրև արդիւնք ներկայ պատերազմին, Հայերու մէջ սկսած է գոյանալ համոզում մը որ կարելի չէ կազմել Հայաստանի աշխարհագրական և ազգախօսական ամբողջութիւնը առանց Կիլիկիայի, որ հայկական քաղաքական անկախութեան վերջին հայրենիքը եղած է»²: Այսպիսով՝ հայ գործիչները փորձում էին եվրոպական մամուլում նույնպես բարձրացնել հայկական ընդարձակ ինքնավարության խնդիրը:

Ռուսական պետական գործիչներն, իհարկե, առաջին հերթին Միջերկրական էին փորձում դուրս գալ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով, իսկ Կ. Պոլսի գրավումը դարեր շարունակ ռուս դիվանագետների ու ռազմական գործիչների երազանքն էր, սակայն մինչև 1916 թ. Սայքս-Պիկո-Սազունով համաձայնագիրը նրանք վստահ չէին, որ իրենց դաշնակիցներ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան թույլ կտային, որ ռազմավարական հսկայական նշանակություն ունեցող այդ ուղին անցնի ռուսական վերահսկողության տակ: Դա էր պատճառը, որ Ռուսաստանը ցանկանում էր իր ազդեցության տակ վերցնել Կիլիկիան, որի դիմաց պատրաստ էր միացյալ Հայաստանի վերահսկողությունը կիսել Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի հետ:

Ռուս դիվանագետները գաղտնի հանդիպումների ժամանակ հայ գործիչներին դրդում էին բրիտանական ու ֆրանսիական կառավարություններից պահանջել՝ Կիլիկիան միացնել Հայաստանին, սակայն նշում էին, որ դա պետք է արվի առանց ռուսական կողմի միջամտության, որպեսզի դաշնակիցները չկասկածեն, որ այդ նախագծի թիկունքում կանգնած է Ռուսաստանը³:

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:

² «Արմենիա», Մարտի. 1915, մայիս 12 (ապրիլ 29), Լ տարի, թիւ 41:

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 373:

Դրանից ելնելով էլ՝ Ազգային պատվիրակությունը Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի քաղաքական շրջաններին ներկայացրեց միացյալ և ինքնավար Հայաստանի նախագիծը: Տերությունների ներկայացուցիչները, չնայած հայ գործիչների հետ հանդիպումների ժամանակ դրական էին արտահայտվում Հայաստանի ինքնավարության ծրագրի կապակցությամբ, սակայն խնդրի լուծումը կապում էին պատերազմի ավարտի հետ և խուսափում էին այդ հարցի շուրջ որևէ պաշտոնական հայտարարություն անելուց: Նրանց շահերի բախումը թույլ չէր տալիս որոշակի խոստումներ տալ, մանավանդ՝ Հայաստանի ապագայի վերաբերյալ իրենք այլ հեռահար ծրագրեր ունեին:

1915 թ. մայիսի 4 (17)-ին Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկին Ս. Սազոնովին ուղարկած հեռագրում, մատնանշելով Հ. Զավրյանի հուշագիրը, նշում էր, որ Կիլիկիայի հարցը առանձնապես նուրբ բնույթ է կրում, քանի որ Ֆրանսիան իրենց արդեն տեղեկացրել է այդ երկրամասի նկատմամբ իր հավակնությունների մասին, միաժամանակ ցանկանում էր տեղեկանալ, թե որքանով պետք է աջակցեն հայ գործիչներին¹: Հաջորդ օրը Ս. Սազոնովը դեսպանին տեղեկացրեց, որ հայերի հետ բանակցությունները սկսադեմիական բնույթ են կրել, և իրենք ոչ մի խոստում չեն տվել, իսկ Կիլիկիան Հայաստանին միացնելու հարցում տեղեկացրել են, որ իրենք չեն կարող ընդառաջել, քանի որ այն Ֆրանսիայի շահերի գոտում է²:

Փաստորեն՝ ռուս գործիչները բանակցությունները վարում էին այնպես, որ խոստումներ չտալին, սակայն հայերին հավատացնեին, որ համաձայն են հայկական բաղձանքներին, իսկ հայ գործիչները ցանկալին ընդունում էին իրականի տեղ:

Այսպիսով՝ Ռուսաստանը ձգտում էր Արևմտյան Հայաստանի գրավումից հետո ելք ապահովել դեպի Միջերկրական, և գլխավոր դաշնակցի հետ սուր հակասություններից խուսափելու համար ռուսական իշխանությունները հայ գործիչներին խրախուսում էին պահանջել միացյալ Հայաստանի կազմի մեջ մտնել նաև Կիլիկիան: Նրանց համար պարզ էր, որ Հայաստանը միշտ կունենա ռուսական դիրքորոշում, իսկ իրենց ազատ ելքը դեպի Միջերկրական որևէ խոչընդոտի չի հանդիպի:

1915 թ. հունիսի 1 (14)-ին Ա. Իզվոլսկին Ս. Սազոնովին տեղեկացրեց, որ Հ. Զավրյանն ու Պ. Նուբարը բանակցում են ֆրանսիական քաղաքական

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 33, թ. 1-2: Раздел Азиатской Турции, с. 135-136.

² ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 33, թ. 3: Раздел Азиатской Турции, с. 136. Ռուսաստանը և Հայոց ցեղապանությունը 1915-1917 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 2004, էջ 56:

գործիչների ու լրագրողների հետ և նույնիսկ որոշակի հաջողությունների են հասել: Պ. Նուբարը ֆրանսիացիների ինքնասիրությանը չվնասելու համար Թ. Դելկասեին առաջարկել էր, որպեսզի Ֆրանսիան ստանա Կիլիկիան և սեփական կամքով զիջի հայերին: Ա. Իզվոլսկին ցանկանում էր նաև իմանալ ռուսական կառավարության տեսակետը, եթե հայկական ծրագիրն ընդունվեր դաշնակիցների կողմից¹:

Հունիսի 3 (16)-ին Ս. Սազոնովը հարցը մեկնաբանեց հետևյալ կերպ. «Եթե հայ պատվիրակներին կհաջողվի Փարիզի կաբինետը հակել Կիլիկիան ապագա հայկական մարզի կազմի մեջ մտցնելու կողմը, ապա կայսերական կառավարությունը կարող է համակրություն տաձել տաճկահայերի ցանկությունների իրագործման նկատմամբ, որոնց նա ի վաղուց անտի հովանավորել է»²:

Միացյալ՝ «ծովից ծով» ինքնավար Հայաստան ստեղծելու ծրագիրը ներառող հուշագրեր Պ. Նուբարը հունիսի 6-ին հանձնեց Ֆրանսիայի ԱԳ նախարար Թ. Դելկասեին, որը սկզբունքորեն ընդունելի համարեց այն³, իսկ հուլիսի 15-ին՝ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ⁴: Դրանցում նա փորձում էր հիմնավորել այդ երկրների շահերը միացյալ Հայաստան ստեղծելու պարագայում: Նա ամեն ինչ անում էր, որպեսզի Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում ազդեցություն ունեցող գրեթե բոլոր պետական ու քաղաքական գործիչներին, մամուլի ներկայացուցիչներին շահագրգռեր ինքնավար Հայաստան ստեղծելու հարցում: Դրա հետ կապված՝ անընդհատ հանդիպում էր նրանց և փորձում հիմնավորել իր տեսակետները: Պետք է նշել, որ Պ. Նուբարի հանդիպումները հիմնականում դրական արդյունքներ էին ունենում, քանի որ նա տիրապետում էր դիվանագիտական և հռետորական բարձր ունակությունների:

1915 թ. հունիսի 17-ի նամակով Պ. Նուբարը տեղյակ պահեց կաթողիկոսին, որ ֆրանսիական իշխանություններին ներկայացրել է պատերազմից հետո Արևմտյան Հայաստանի վեց նահանգների և Կիլիկիայի միավորմամբ միասնական ինքնավար երկրամաս կազմավորելու հայկական ձգտումները: Հայաստանը պետք է դրվեր Ֆրանսիայի, Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի վերահսկողության տակ: Նշում էր, որ Ֆրանսիան ձգտում է գրավել Կիլիկիան և միացնել Սիրիային, սակայն ինքը կարողացել էր համոզել

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 40, թ. 1-2: Раздел Азиатской Турции, с. 137-138.

² Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917 гг., серия III (1914-1917 гг.), т. VIII, ч. 1, М.-Л., 1935, ст. 158. Раздел Азиатской Турции, с. 138. «Հայաստանի ավտոնոմիան», էջ 12:

³ Boghos Nubar's Papers, pp. 80-84. Международные отношения, т. VIII, ч. 1, ст. 254.

⁴ Boghos Nubar's Papers, pp. 170-177.

Ֆրանսիացի բազմաթիվ պետական գործիչների և խմբագիրների, որ Ֆրանսիային ձեռնադրել էր միայն Ալեքսանդրեյովը միացնել Սիրիային, իսկ միասնական ինքնավար Հայաստանի ստեղծումը այդ տերությանը տնտեսական մեծ հնարավորություններ կընձեռեր¹:

Պ. Նուբարը Լոնդոնում հանդիպել էր նաև ռուսական դեսպան Ալեքսանդր Բենկենդորֆին, ներկայացրել հայկական ձգտումները և հայ գործիչների բանակցությունները Փարիզում և Լոնդոնում: Հուլիսի 2 (15)-ին դեսպանը Ս. Սազոնովին տեղեկացրեց այդ մասին և խնդրեց կառավարության կարծիքը²:

Ս. Սազոնովը հուլիսի 7 (20)-ին Լոնդոնում ռուսական դեսպանին ուղարկած հեռագրում հետևյալ տեսակետն էր հայտնում Հայկական հարցի մասին. «Սուլթանի գերիշխանության ներքո և Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Անգլիայի եռակի հովանավորության տակ ինքնավար հայկական մարզ ստեղծելը բնական զարգացում կլինի այն հնուց եկող բարյացակամ վերաբերմունքի, որ տաճկահայերի նկատմամբ ունեն ոչ միայն Ռուսաստանը, այլև նրա դաշնակիցները: Սակայն կայսերական կառավարությունն այս խնդրի նկատմամբ վերջնական վճիռ դեռ չի կայացրել, և հայ լիազորների հետ ունեցած բոլոր զրույցները զուտ ակադեմիական բնույթ են կրել»³:

Հուլիսի 27-ին կաթողիկոսին ուղարկած նամակում Պ. Նուբարը ներկայացրեց այդ ամիս Լոնդոնում իր ունեցած հանդիպումները բրիտանացի պետական գործիչների և մամուլի ներկայացուցիչների հետ⁴: Նա այն տպավորությունն էր ստացել, որ Մեծ Բրիտանիան կօժանդակի պատերազմից հետո միացյալ Հայաստանի ստեղծման ծրագրին: Նա հայտնում էր, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ին համձնած հուշագրում, ի տարբերություն Թ. Դելկասեին ներկայացրածի, որոշ դրույթներ մեկնաբանել էր բրիտանական շահերին համահունչ: Նշում էր, որ երկու հուշագրերն էլ տվել է նաև Փարիզի ու Լոնդոնի ռուսական դեսպաններին: Ազգային պատվիրակության նախագահը վստահեցնում էր, որ հայկական պահանջները համակրության էին արժանացել Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից: Սակայն մատնանշում էր, որ հարցի լուծման ուղղությամբ քայլեր կարող էին կատար-

¹ Նույն տեղում, էջ 108-110:

² Раздел Азиатской Турции, с. 138-139.

³ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 39, թ. 1: Раздел Азиатской Турции, с. 139.

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թթ. 67-69:

վել միայն այն դեպքում, երբ պատերազմն ավարտվեր դաշնակիցների հաղթանակով:

Դեռևս 1915 թ. ապրիլին Մեծ Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Հենրի Ասքոլիթի հանձնարարականով տարբեր գերատեսչությունների փորձագետներից ստեղծվել էր հատուկ հանձնախումբ Մորիս դե Բանսենի նախագահությամբ, որը պետք է քննարկեր և կազմեր Օսմանյան կայսրության մասնատման բրիտանական նախագիծը: Հունիսի 30-ին հանձնախումբը ներկայացրեց իր հաշվետվությունը: Այն լավագույն տարբերակ էր համարում Օսմանյան կայսրությունը բաժանել 5 ինքնավար շրջանների՝ Անատոլիա, Հայաստան, Սիրիա, Իրաք և Պաղեստին: Հայաստանը ներառելու էր Արևմտյան Հայաստանը, ելք Սև ծով և Կիլիկիան¹:

Ինչպես տեսնում ենք, բրիտանական իշխանությունները իսկապես դրական էին տրամադրված հայկական տարածքային պահանջներին և ինքնավարության գաղափարին և այդ շրջանում հակված էին պատերազմից հետո կազմավորելու հայկական ինքնավարություն Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ:

Հուլիսի 29-ի նամակում Պ. Նուբարը կաթողիկոսին գրում էր. «Թէեւ մեր նպատակին հասնելու համար տակաւին մէկէ աւելի դժուարութիւններ կան, այսու ամենայնիւ ոեւէ լուրջ ընդդիմութիւն չեմ նախատեսեր վերոյիշեալ երկու երկիրներուն (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա- Ս.Պ.) մէջ, բացի Կիլիկիոյ մասին ֆրանսական յաւակնութենէն որու տեսակետով սիրտս հանգիստ է այժմ»²:

Հաշվի առնելով Կիլիկիայի հարցում Ֆրանսիայի կողմից եղած հավակնությունները՝ Պ. Նուբարը բացի պատմական ու վիճակագրական տվյալներից, ներկայացնում էր այն տնտեսական ու քաղաքական առավելությունները, որ դաշնակիցները կունենային, եթե Կիլիկիան միացվեր վեց նահանգներին և ինքնավար Հայաստան ստեղծվեր՝ Ռուսաստանի ու դաշնակիցների հովանավորության տակ³:

Ի վերջո եվրոպական բանակցությունների ժամանակ պարզ դարձավ, որ տերությունները Հայկական հարցի լուծումը կապում են պատերազմի հաղթական ավարտի հետ և չեն ցանկանում նախապես խոստումներ տալ:

¹ Фомин А., Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918—1923, Москва, 2010, ст. 48-49.

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 77:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 27, թ. 41:

Բրիտանացի և ֆրանսիացի գործիչներն ընդհանուր առմամբ դրական տրամադրվածություն էին ցույց տալիս հայկական պահանջներին, սակայն նշում էին, որ հարցը կարող է քննարկվել միայն պատերազմի ավարտական փուլում: Այս շրջանում արդեն պարզ էր, որ պատերազմը ձգվելու է, և պատերազմող կողմերն այլևս արագ հաղթանակի հասնելու հույսեր չունեին:

Շուտով սկսեցին լուրեր հասնել Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային տեղահանությունների ու կոտորածների մասին: Հայ գործիչների համար առաջնահերթ խնդիր դարձավ արևմտահայերի ոչնչացումը կանխելու հնարավորություններ փնտրելը: Նման պայմաններում երկրորդական դարձան ինքնավարության նախագծերը, և բոլոր ջանքերն ուղղվեցին ցեղասպանության ենթարկվող ժողովրդի փրկությանը¹:

Ցարական իշխանությունները նույնպես վերջնականապես հետ կանգնեցին Հայաստանի ինքնավարության գաղափարից, քանի որ արևմտահայությունը հիմնականում ոչնչացվել էր, և Հայաստանը մնացել էր առանց հայերի: Եվ Ռուսաստանը որոշեց գրավել Արևմտյան Հայաստանի մի մասը և այն բնակեցնել կազակներով:

Փաստորեն՝ հայկական ինքնավարության նախագծերը ձախողվեցին ցեղասպանության հետևանքով: Հայաթափված Հայաստանն ու Կիլիկիան այլևս չէին դիտվում որպես հայերի պետական ինքնակազմակերպման տարածք: Չնայած Անտանտի տերությունները դեռևս 1915 թ. մայիսի 24-ին հայերի զանգվածային ոչնչացումը հայտարարեցին մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն², սակայն դա չխանգարեց, որ ցեղասպանության հետևանքներից փորձեին օգտվել ոչ միայն թուրքերը, այլ նաև մեծ տերությունները: Հետագա բոլոր բանակցություններում շեշտադրում էր արվում, որ Հայաստանում այլևս հայեր չկան, կամ չնչին տոկոս են կազմում:

Ինչպես տեսնում ենք, մինչև 1915 թ. կեսերը ռուսական իշխանությունները չէին բացառում, որոշ դեպքերում նույնիսկ իրենց շահերին համահունչ էին համարում հայկական ինքնավարության ստեղծումը՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ: Սակայն տերությունների միջև գաղտնի համաձայնություններն ու հակասությունները և հատկապես հայոց ցեղասպանության իրականացման հետևանքով արևմտահայկական տարածքնե-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 108:

² William A. Schabas, *Genocide in International Law: The Crimes of Crimes*, Cambridge, 2000, p. 16.

րի գրեթե ամբողջական հայազրկումը օրակարգից դուրս բերեցին ինքնավար Հայաստանի գաղափարը: Նման պայմաններում Ռուսաստանը որդեգրեց Արևմտյան Հայաստանը գրավելու ուղեգիծ, իսկ հայկական ձգտումներն ու շահերը դրվեցին մի կողմ:

Իհարկե, կային ռուս գործիչներ, ովքեր խրախուսում էին հայկական ձգտումները: Իշխան Պավել Դոլգորուկովը 1916 թ. հունվարին իր աջակցությունն ու համակրանքը հայտնեց Հայկական հարցի նկատմամբ: Նա գտնում էր, որ «Թուրքական Հայաստանը պետք է դառնա ինքնավար միավոր»¹: Ափսոս, նման մտածողության տեր գործիչները փոքր թիվ էին կազմում:

Առանց տեղյակ լինելու Անտանտի երկրների գաղտնի բանակցություններին և Սայքս-Պիկո-Սազոնով համաձայնագրին՝ Միացյալ Հայաստանի կազմավորման շուրջ բանակցությունները հայ գործիչները շարունակեցին նաև հաջորդ տարի: Այդ ուղղությամբ Պ. Նուբարի շարունակվող բանակցությունների և քարոզչության մասին 1916 թ. ապրիլի 18 (մայիսի 1)-ին Ա. Իզվոլսկին տեղեկացրեց Ս. Սազոնովին: Չնայած արդեն պարզ էր, որ Հայաստանը բաժանվելու էր երկու մասի, սակայն վերջինս զգուշացրեց դեսպանին, որ համաձայնագիրը խիստ գաղտնի է և պետք չէ այդ մասին բարձրաձայնել²:

“Кавказское слово” թերթը 1916 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հոդվածներ հրապարակեց, ուր շեշտում էին, որ Հայաստանի համար միայն երկու տարբերակ կար՝ միանալ Ռուսաստանին կամ մնալ թուրքերի տիրապետության տակ: Իսկ ծովից ծով ինքնավար Հայաստան ստեղծելու ձգտումների վրա պետք է վերջնականապես խաչ քաշել: Հոդվածագիրներից մեկը սարկազմով նշում էր, որ եթե նույնիսկ Ալեքսանդր Կերենսկին կանգնի կառավարության գլուխ՝ Ռուսաստանը թույլ չի տա, որ ռուսական սվիններով գրավված Հայաստանը ստանա ինքնավարություն³:

Բոլոր հայկական պարբերականները հարկ համարեցին պատասխանել, որ հայության գլխավոր նպատակը թուրքական տիրապետության տակ գտնվող հայկական տարածքների ինքնավարությանը հասնելն է: Այդ տեսակետը պաշտպանեցին նույնիսկ այն պարբերականները, որոնք նախկինում

¹ “Армянский вестник”, 1916, N 1, с. 4.

² Раздел Азиатской Турции, с. 188.

³ Дживелегов А., О “Дживелеговской Армении” и о “негодование патриотически настроенных русских людей”, “Армянский вестник”, 1916, N 32, с. 2-3.

ինքնավարության հարցը չէին բարձրացրել: “Армянский вестник”-ի խմբագրականում շեշտվում էր, որ դեռևս գուցե ժամանակը չի քննարկելու Հայաստանի ապագան, որը որոշվելու էր հաշտության վեհաժողովում: Նշվում էր, որ հաղթող դաշնակիցները կարող են ինքնավարություն տալ Հայաստանին, կամ այն բաժանել իրենց միջև: Հայերը կընդունեին ցանկացած որոշում, նույնիսկ չէին բողոքի դրա դեմ: «Սակայն ոչ մի դեպքում Հայաստանի ապագայի շուրջ հայ ժողովուրդը չի դադարի ինքնավարությունը համարել միակ ճիշտ, իր շահերին միակ համապատասխանող, Ռուսաստանին ու Եվրոպային միակ արժանի հարցի լուծումը»¹:

Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ միացյալ արևմտահայկական պետություն ստեղծելու ճանապարհին հայտնվեցին երկու լուրջ խոչընդոտ՝ Հայոց մեծ եղեռնը և Անտանտի երկրների ծավալապաշտական ձգտումները: Հայերի զանգվածայի տեղահանությունների ու կոտորածների լուրերի ահագնանալը երկրորդական պլան մղեցին ինքնավարության նախագծերը և ստիպեցին հայ գործիչներին առաջնահերթորեն զբաղվելու այդ ողբերգությունը կասեցնելու, կոտորածներից փրկվածներին աջակցելու խնդիրներով: Արևմտահայության ոչնչացումը նաև Անտանտի երկրներին ստիպեց հայերին չդիտել որպես ազդեցիկ գործոն տարածաշրջանում, հետևաբար՝ հրաժարվեցին հայկական ինքնավարության նախագծերի քննարկումից:

¹ “Армянский вестник”, 1916, N 34, с. 1.

1.3 ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

1914 թ. օգոստոսի 1-ին որոտաց Առաջին համաշխարհային պատերազմը: Մեծ և փոքր տասնյակ պետություններ խառնվեցին գրեթե ամբողջ աշխարհին ընդգրկած պատերազմական իրարանցումին՝ նպատակ ունենալով իրականացնել իրենց ազգային ու պետական ձգտումները:

Անտանտի երկրները (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան) մեծ ջանքեր գործադրեցին, որպեսզի ապահովեին Թուրքիայի չեզոքությունը: Դրա դիմաց խոստանում էին պահպանել վերջինիս տարածքային ամբողջականությունն ու անկախությունը¹:

Մեծ Բրիտանիան ամեն կերպ փորձում էր թուրքերին հետ պահել Գերմանիայի հետ դաշնակցելուց, քանի որ վախենում էր Հնդկաստանի ու Եգիպտոսի մահմեդականների խռովություններից, և հատկապես Սուեզի ջրանցքի անվտանգության համար: Բացի դրանից, սևծովյան նեղուցների փակումը Բրիտանիային ու Ֆրանսիային կգրկեր ռուսական ցորենից, իսկ Ռուսաստանին՝ դաշնակիցների զենքից²: 1914 թ. օգոստոսի 15-ին բրիտանական ծովային նախարար Ուինստոն Չերչիլը գաղտնի նամակ ուղարկեց օսմանյան ռազմական նախարար Էնվերին՝ առաջարկելով դաշինք ձևափոխել Գերմանիայի հետ և չեզոքության դիմաց խոստանում էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը³:

Սակայն պանթուրքիզմի ծավալապաշտական, շովինիստական գաղափարախոսությամբ տարված թուրքական իշխանությունները որոշեցին հանդես գալ Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի կողքին՝ հուսալով, որ կարող են ստեղծել իրենց երազանքների Մեծ Թուրանը:

1914 թ. օգոստոսի 2-ին Բեռլինում Գերմանիայի և Թուրքիայի միջև գաղտնի համաձայնագիր ստորագրվեց, որն ուղղված էր Ռուսաստանի դեմ⁴: Կ. Պոլսում գերմանական դեսպան Հանս Վանգենհայմը օգոստոսի 6-ին Թուրքիայի վարչապետ Սայիդ Հալիմ փաշային ներկայացրեց հուշագիր, ուր նշվում էր, որ Գերմանիան պարտավորվում է «այնպես ուղղել Օս-

¹ Раздел Азиатской Турции, с. 266.

² Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, Պեյրուֆ, 1994, էջ 71:

³ Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1999, էջ 402:

⁴ Hubatsch Walther, Germany and the Central Powers in the World War, 1914-1918, Lawrence, 1963, p. 52.

մանյան կայսրության արևելյան սահմանները, որպեսզի ապահովվի Թուրքիայի անմիջական սահմանակցումը Ռուսաստանում ապրող մահմեդական բնակչության հետ»¹:

Այսպիսով՝ թուրքական իշխանությունները որոշեցին պատերազմին մասնակցել գերմանական դաշինքի կազմում: Այդ որոշումը, ի վերջո, հանգեցրեց ինչպես Օսմանյան կայսրության փլուզմանը, այնպես էլ՝ Հայոց մեծ եղեռնի իրականացմանը: Երիտթուրքական կառավարությունը, օգտվելով առիթից, հրաժարվեց հայկական բարենորոգումների վերաբերյալ 1914 թ. հունվարի 26 (փետրվարի 8)-ին Կ. Պոլսում ստորագրված ռուս-թուրքական համաձայնագիրը² գործադրելուց, իսկ դեկտեմբերի 3-ին այն պաշտոնապես չեղյալ հայտարարեց³: Երիտթուրքերը սկսեցին նախապատրաստվել՝ լուծելու Հայկական հարցը թուրքական եղանակով՝ բնաջնջելով հայ ժողովրդին իր իսկ բնօրրանում: Դա պանթուրքիզմի իրագործման գլխավոր փուլերից մեկն էր:

Օսմանյան կայսրության մասնակցությունը պատերազմին գերմանավատրիական դաշինքի կազմում, բնականաբար, օրակարգից դուրս բերեց նրա ամբողջականությունը պահպանելու Անտանտի երկրների ծրագրերը և վերջիններս ակտիվորեն սկսեցին քննարկել նրա բաժանման հարցը:

Արդեն 1914 թ. սեպտեմբերի 1-ին բրիտանական ԱԳՆ-ը հայտարարեց, որ Թուրքիային այլևս չի դիտում «սևծովյան նեղուցների պահապան»⁴, իսկ սեպտեմբերի կեսերին Մեծ Բրիտանիան բարձրացրեց Օսմանյան պետության բաժանման հարցը⁵:

Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Ասկվիտը 1914 թ. նոյեմբերի 9-ին հայտարարում է, որ «սուրը պատյան չի դրվի մինչև որ չջախջախվի Օսմանյան կայսրությունը, որ օսմանյան տիրապետության վերացմամբ «կվերանա այն վարակը, որը շատ սերունդների ընթացքում չորացրել է երկրագնդի գեղեցկագույն անկյունները»⁶:

Բրիտանացիներին առավելապես հետաքրքրում էին արաբական տիրույթները, և պատրաստ էին ճանաչել Ռուսաստանի կողմից Արևմտյան Հա-

¹ Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները, էջ 47:

² Ժողովածու դիպլոմատիցական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914թ., թարգմ. Ս. Աւագեան, Թիֆլիս, 1915, էջ 102-104:

³ Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 48:

⁴ Գալդյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 670:

⁵ Международные отношения в эпоху империализма, т. 6, с. 328.

⁶ Գալդյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 58:

յաստանի գրավումը, բայց դեմ էին, որ ռուսները շարժվեն Դիարբեքիից հարավ՝ դա համարելով սպառնալիք Պարսից ծոցում իրենց դիրքերի ամրապնդմանը¹:

1914 թ. նոյեմբերի 21-ին Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մորիս Պալեոլոգը Նիկոլայ Բ կայսրին տեղեկացրեց Սիրիան ու Պաղեստինը գրավելու Ֆրանսիայի ցանկության մասին²: Ֆրանսիան բավական երկար ժամանակ փորձում էր իր ազդեցությունը մեծացնել Սիրիայում: Դա պայմանավորված էր Միջերկրականի արևելքում Սիրիայի (Լիբանանով և Պաղեստինով հանդերձ) ռազմավարական կարևոր դիրքով և երկաթուղային առևտրի հնարավորություններով³:

Դեռևս 1914 թ. փետրվարի 15-ին ստորագրվել էր ֆրանս-գերմանական գաղտնի համաձայնագիր, որով Ֆրանսիան որոշակի արտոնություններ էր ստանում Բեռլին-Բաղդադ երկաթուղագծից օգտվելու համար, իսկ Սիրիան ճանաչվում էր ֆրանսիական ազդեցության գոտի, ուր ֆրանսիացիները իրավունք ունեին Տրիպոլիից մինչև Դեր Զոր երկաթուղագիծ կառուցել և միանալ Բաղդադի երկաթուղուն⁴:

Ֆրանսիան հետաքրքրված էր նաև Կիլիկիայով, քանի որ այն կարող էր բավարարել ֆրանսիական թեթև արդյունաբերության բամբակի պահանջարկը, բացի այդ, նա կարող էր վերահսկողության տակ վերցնել այնտեղով անցնող Բեռլին-Բաղդադ երկաթուղին:

Ֆրանսիական թեթև արդյունաբերությունն ամբողջությամբ կախված էր ամերիկյան և բրիտանական բամբակից, իսկ Կիլիկիան կարող էր վերացնել այդ կախվածությունը: Սակայն Կիլիկիայի տնտեսության մեջ մինչև պատերազմը Ֆրանսիան չնչին ներկայություն ուներ: Այդ երկրամասի նկատմամբ իր հավակնությունները հիմնավորելու նպատակով՝ Ֆրանսիան սկսեց Կիլիկիան հայտարարել որպես Սիրիայի հյուսիսային մաս⁵:

Ռուսաստանը ձգտում էր գրավել Կ. Պոլիսը՝ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով, որի շնորհիվ իր համար Սև ծովից ազատ մուտք կբացվեր դեպի Միջերկրական ծով: Ռուսական նկրտումների մեջ էր Արևմտյան Հայաստանը և հնարավորության դեպքում, ինչու ոչ, նաև Կիլիկիան, որով նույն-

¹ Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 82:

² Палеолог М., Царская Россия во время мировой войны, Москва, 1991, с. 128.

³ Раздел Азиатской Турции, с. 19-20.

⁴ Earle Edward Mead, Turkey, the Great Powers and the Bagdad Railway: a study in imperialism, New York, 1966, p. 248. Եափունեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը, էջ 1088:

⁵ Раздел Азиатской Турции, с. 21.

պես ելք կապահովվեր դեպի Միջերկրական: Սակայն Կիլիկիայի հարցում ռուս դիվանագետները չէին բարձրաձայնում, քանի որ ծանոթ էին այդ երկրամասի նկատմամբ դաշնակից Ֆրանսիայի հավակնություններին:

Պատմագիտության մեջ հաճախ հակադիր տեսակետներ են առաջ բերվել Առաջին աշխարհամարտի տարիներին Հայկական հարցում Ռուսաստանի որդեգրած դիրքորոշումների վերաբերյալ: Պատճառը ոչ միայն տարբեր հետազոտողների քաղաքական նախապատվությունների բախումն էր, այլ նաև այդ տարիների Ռուսաստանի քաղաքականության խիստ դինամիկ բնույթին չհամապատասխանող գնահատականների պարզունակ միակողմանիությունը: Իրականում, այդ տերության դիվանագիտությունը ձևավորվում էր տարբեր դիրքորոշումներ ունեցող պետական ու ռազմական գործիչների, մի շարք գերատեսչությունների միջև ընթացող քննարկումների, բախումների, ինչու ոչ, հասարակական կարծիքի ճնշման ներքո: Ուստի հաճախ ղեկավար գործիչների փոփոխությամբ պայմանավորված՝ այդ քաղաքականությունը նույնպես փոխվում էր: Մյուս կողմից, Հայկական հարցի լուծման հեռանկարները ստորադասվում էին առաջին հերթին դեպի սևծովյան նեղուցներ և Կ. Պոլիս ուղղված ռուսական նվաճողականության առաջադրանքներին: Այդ պատճառով, հաշվի առնելով արտաքին գերակայությունները, նրանում կատարվում էին լուրջ փոփոխություններ:

Ռուսական քաղաքական ու ռազմական վերնախավում աշխարհամարտի տարիներին հետաքրքիր քննարկումներ են ծավալվել Հայկական հարցի շուրջ, որոնք արտաքննապես դրսևորվել են նախ՝ իբրև հայ քաղաքական շրջանակներին տրված հուսադրող, բայց խիստ ընդհանուր հավաստիացումների, իսկ ապա՝ հայաթափված Արևմտյան Հայաստանի ռազմակալման անհրաժեշտության մասին հորդորների տեսքով:

Այսպիսով՝ պատերազմի սկզբին ռուս պետական ու քաղաքական գործիչներն ամենատարբեր տեսակետներ ունեին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ապագայի վերաբերյալ: Չունենալով միասնական ու վերջնական դիրքորոշում՝ ակտիվորեն քննարկում էին, թե ինչ կարող էին ձեռք բերել օսմանյան տարածքների բաժանման դեպքում, ինչպես նաև փորձում էին հասկանալ դաշնակիցների ձգտումները:

Ռուս որոշ գործիչներ անհրաժեշտ էին համարում Արևմտյան Հայաստանի գրավումը և միացումը Ռուսաստանին, իսկ Կիլիկիան՝ ավելորդ գլխացավանք դաշնակիցների հետ հարաբերություններում: «Ռեչ» պարբերականի 1914 թ. դեկտեմբերի 5-ի համարում Հայկական հարցին նվիրված

հողվածով հանդես եկավ կադետական կուսակցության ղեկավարներից, Պետական դումայի պատգամավոր Պավել Միլյուկովը: Նա առաջ էր քաշում այն տեսակետը, որ Ռուսաստանին այնքան էլ ձեռնտու չէ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավար Հայաստանի ստեղծումը թուրքական անվանական գերիշխանության և Ռուսաստանի հովանավորության տակ, քանի որ Կիլիկիայում բախվում էին այլ տերությունների շահեր, իսկ ռուսական կողմը տնտեսական, քաղաքական, ռազմական տեսանկյունից պատրաստ չէր տիրելու Ալեքսանդրեաթի նավահանգստին: Նա առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանը՝ Տրապիզոնի նահանգով հանդերձ, Ռուսաստանին միացնելու գաղափարը և համոզմունք էր հայտնում, որ դա հայերի համար լավագույն լուծումը կլինի, քանի որ հայության երկու հատվածները կմիավորվեին մեկ պետության մեջ¹:

1914 թ. դեկտեմբերից մի կարճ ժամանակահատված ռուսական վերնախավի մոտ սկսեց գերիշխել հենց այդ տեսակետը, որը պայմանավորված էր նաև Կիլիկիայի նկատմամբ Ֆրանսիայի հավակնություններով:

1915 թ. հունվարի 16 (29)-ին Փարիզում ռուսական դեսպան Ալեքսանդր Իզվոլսկին տեղեկացրեց Ս. Սազոնովին, որ Թ. Դելկասեն հիշեցրել է, որ սիրիական ափից բացի Ֆրանսիան ցանկանում է գրավել նաև Ալեքսանդրեաթը, ինչպես նաև Փարիզում մեծ հետաքրքրություն է առաջացրել Պ. Միլյուկովի հողվածը²:

Ֆրանսիական կողմը, բնականաբար, կարող էր բավարարություն զգալ, որ ռուս պետական գործիչները հրաժարվում էին Կիլիկիայի հանդեպ նկրտումներ դրսևորելուց: Սակայն այդ հողվածը բավական տհաճ էր հայ ազգային գործիչների համար:

Սակայն պետք է նշել, որ ռուսական վերնախավում զգալի թիվ էին կազմում նաև Հայաստանի ու Կիլիկիայի վրայով դեպի Միջերկրական դուրս գալու կողմնակիցները: Ռուսական բազմաթիվ գործիչների ուշադրությունը սևեռված էր Հայաստանի ու Կիլիկիայի վրայով Միջերկրական դուրս գալու գաղափարի վրա: Դա ոչ միայն «տաք ջրեր» դուրս գալու նպատակ ուներ, այլ ավելի հեռագնա նախագիծ էր:

Գերմանացի հրապարակախոս և քաղաքական գործիչ Պաուլ Ռորբախը համոզված էր, որ ամբողջ Հայաստանի և Կիլիկիայի գրավման դեպքում Ռուսաստանը ռազմավարական գերիշխող դիրք կգրավեր Փոքր Ասիայի,

¹ «Հայաստանի ավտոնոմիան», էջ 82-90:

² «Հայաստանի ավտոնոմիան», էջ 3:

Սիրիայի և Միջագետքի նկատմամբ, հետևաբար այդ գաղափարը լրջորեն անհանգստացնում էր Բրիտանիային, Ֆրանսիային, Գերմանիային¹:

Իսկապես, տիրելով Հայաստանին ու Կիլիկիային, Ռուսաստանը գերիշխող դիրք կունենար Մերձավոր Արևելքում, և նրա հետագա առաջխաղացումը տարածաշրջանում կասեցնելը կլիներ չափազանց բարդ: Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան դեմ էին իրենց դաշնակցի այդչափ առաջխաղացմանը Մերձավոր Արևելքում, քանի որ իրենց սեփական նկրտումներն ունեին Կիլիկիայում, Սիրիայում, Միջագետքում, Պարսից ծոցի ավազանում: Այդ ամենը ենթադրում էր, որ նրանք պետք է փորձեին Ռուսաստանին հնարավորինս հեռու պահել Սիրիայից ու Միջագետքից: Այսպիսով՝ Օսմանյան կայսրության բաժանման հարցը քննարկելիս Անտանտի երկրների միջև որոշ անհամաձայնություններ առաջ եկան Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի պատկանելության խնդրում:

Ռուսաստանը, գիտակցելով, որ դաշնակիցները դեմ կլինեն իր առաջխաղացմանը դեպի Միջերկրական նաև Կիլիկիայի վրայով, որոշեց հրաժարվել այդ երկրամասի նկատմամբ իր հավակնություններից՝ հոգուտ Ֆրանսիայի: Ռուս պետական գործիչների համար գերադասելի էր Միջերկրական դուրս գալ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով: Ֆրանսիան, իր հերթին, հետզհետե ավելի ընդարձակ տարածքներ էր ցանկանում գրավել Մերձավոր Արևելքում: Բացի Կիլիկիայից, Ֆրանսիան սկսեց հավակնել հարավային Հայաստանին և Հաքքիարի մարզին, որով դուրս կգար պարսկական սահման:

1914 թ. նոյեմբերի 16-21-ը Պետրոգրադում տեղի ունեցած բանակցություններում Ռուսաստանը Սիրիան, Պաղեստինը և Հռենոսի մարզն առաջարկեց Ֆրանսիային, որի դիմաց վերջինս ճանաչելու էր Ռուսաստանի իրավունքները Կ. Պոլսում, նեղուցներում և Արևմտյան Հայաստանում²:

Ըստ ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգի՝ Նիկոլայ Բ-ն ասել է. «Փոքր Ասիայում ես, բնականաբար, պետք է զբաղվեմ հայերով: Իհարկե, անհնար կլինի նրանց թողնել թուրքական լծի տակ: Արդյո՞ք ես պետք է միացնեմ Հայաստանը,- հարցրել է կայսրը և ինքն էլ պատասխանել,- ես կմիացնեմ

¹ Порбахъ П., Война и германская политика. Съ предисловіемъ проф. С. А. Котляревскаго, Москва, 1915, с. 66-67.

² Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia: The British Promise of November 1914, "The American Historical Review", Vol. 70, No. 4, Jul., 1965, p. 1032.

այն միայն հայերի հատուկ խնդրանքով: Եթե ոչ,- ես նրանց համար կստեղծեմ ինքնուրույն կառավարություն»¹:

Ինչպես տեսանք, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին արևելահայ գործիչներն այն թյուր տպավորությունն էին ստացել, որ Ռուսաստանը պատրաստ է ինքնավարություն ապահովել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի համար: Հետևաբար՝ դեկտեմբեր-հունվար ամիսներին լուրջ դժգոհություններ առաջացան, երբ Պ. Միլյուկովի և Ս. Սազոնովի կողմից առաջ քաշվեցին Արևմտյան Հայաստանի ռուսական գրավման և Կիլիկիայից հրաժարվելու գաղափարները:

Սակայն, պետք է փաստել, որ միջազգային դիվանագիտությունն Առաջին աշխարհամարտի տարիներին չափազանց արագ էր փոխում իր ծրագրերը՝ կապված ռազմադաշտերում տարած հաղթանակների ու պարտությունների հետ:

1915 թ. փետրվարին բրիտանա-ֆրանսիական նավատորմը հարձակում ձեռնարկեց Դարդանեյի ուղղությամբ, որպեսզի գրավի Կ. Պոլիսը: Այս ռազմագործողությունը դաշնակիցներն իրականացնում էին առանց Ռուսաստանի: Նման իրողությունը բավական բարկացրեց ու անհանգստացրեց ռուս պետական գործիչներին, քանի որ դրանում Կ. Պոլիսը գրավելու ռուսական ձգտումների դեմ ուղղված իրական ու բավական հիմնավոր վտանգ էին տեսնում:

1915 թ. փետրվարի 19 (մարտի 4)-ին՝ Դարդանեյի օպերացիայի հենց առաջին օրը, Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Սազոնովը դաշնակիցներից պահանջեց, որ հաջողության հասնելու դեպքում Կ. Պոլիսն ու նեղուցներն անպայման հանձնեն Ռուսաստանին: Փետրվարի վերջին Մեծ Բրիտանիան նեղուցները Ռուսաստանին հանձնելու համաձայնություն տվեց, բայց միայն պատերազմից հետո, եթե վերջինս խոստանար բրիտանա-ֆրանսիական կողմին բաժին հանել ասիական Թուրքիայի հետպատերազմյան ժառանգությունից²:

Ու քանի դեռ անհայտ էին դաշնակիցների իրական նպատակները, ռուս գործիչները սկսեցին մշակել Միջերկրականին մոտենալու նաև այլ տարբե-

¹ Գալոյան Գ., Հայաստանը մեծ տեղությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 654:

² Արզումանյան Մ., Միջազգային դիվանագիտությունը և Հայկական հարցն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1969, թիվ 1, էջ 114: Раздел Азиатской Турции, с. 118-119.

րակներ: Այդ համատեքստում կրկին կարևորվեց Հայաստանի ու Կիլիկիայի վրայով ծովին հասնելու նախագիծը: Եվ ահա այդ հանգամանքների փոփոխության հետևանքով՝ 1915 թ. փետրվարից, ինչպես տեսանք, ռուսական կողմը բանակցություններ սկսեց հայ գործիչների հետ՝ միացյալ և ինքնավար Հայաստան ստեղծելու վերաբերյալ:

Փետրվարի 22 (մարտի 7)-ին Ա. Բենկենդորֆը Ս. Սազունովին ուղարկած հեռագրում կարծիք էր հայտնում, «որ մենք այլևս չպետք է դանդաղենք Հայաստանի նկատմամբ ավտոնոմիայի իմաստով արտահայտություններ անելու: Այս կարևոր է: Միջերկրական ծովի ավազանում Տաճկաստանի ասիական տիրապետությունների ապագա բախտի նկատմամբ, ես կարծում եմ, անգլիական ու ֆրանսիական տեսակետների միջև հակադրություն կա»¹:

Փետրվարի 27 (մարտի 12)-ին բրիտանական կառավարությունը պատասխանեց, որ պատրաստ է ընդունել Կ. Պոլսի և նեղուցների անցումը Ռուսաստանին՝ պայմանով, որ Կ. Պոլսը լիներ բաց քաղաք, նեղուցներն ազատ լինեին նավարկության համար, իսկ Ռուսաստանը Բրիտանիային զիջեր 1907 թ. համաձայնությամբ Պարսկաստանում ստեղծված չեզոք գոտին, արաբական տարածքներում կազմավորվելու էր մուսուլմանական պետություն և այլն²:

Մարտի 1 (14)-ին Մ. Պալեոլոգը Ս. Սազունովին տեղեկացրեց, որ Ֆրանսիան ցանկանում է գրավել Սիրիան՝ ներառյալ Ալեքսանդրետի ծոցը և Կիլիկիան՝ մինչև Տավրոսի լեռնաշղթան³: Ռուսաստանի ԱԳ նախարարի տեղակալ Ա. Ներատովն այդ առթիվ մարտի 2 (15)-ին Ս. Սազունովին առաջարկում էր ֆրանսիացիներին տեղեկացնել, որ հայերը, որոնցից կազմված է Կիլիկիայի բնակչությունը, նույնպես հավակնություններ ունեն այդ երկրամասի նկատմամբ, որի մտցնելը ֆրանսիական գոտու մեջ կարող է նրանց մեջ հիասթափություն առաջացնել: Միաժամանակ, անհրաժեշտ էր համարում նշել, որ եթե Ֆրանսիան անպայման ցանկանում է տիրել այդ երկրամասին, ապա իրենք արգելք չեն լինի⁴: Իսկ մարտի 3-ին Մ. Պալեոլոգը ռուսական կայսերը պարզաբանեց, որ Սիրիա ասելով՝ իրենք հասկանում են նաև Պաղեստինը⁵:

¹ «Հայաստանի ավտոնոմիան», էջ 6-7:

² Раздел Азиатской Турции, с. 125-127.

³ Раздел Азиатской Турции, с. 127: «Հայաստանի ավտոնոմիան», էջ 8:

⁴ «Հայաստանի ավտոնոմիան», էջ 8-9: Раздел Азиатской Турции, с. 128.

⁵ Раздел Азиатской Турции, с. 129.

Մարտի 15-ին Ս. Սազոնովը Թուրքիայից պահանջվող տարածքների հարցը քննարկեց գեներալ Պ.Դ-ի հետ, որին հանձնարարված էր ուսումնասիրել խնդիրը։ Գեներալը տեղեկացրեց, որ ռազմավարական առումով Ռուսաստանի շահերը պահանջում էին սահմանները հարավում հասցնել Տավրոսի ու Անտիտավրոսի լեռներին, Միջերկրական ծովին, սակայն քանի որ միջազգային իրադրությունը թույլ չի տալիս դա իրականություն դարձնել, նա առաջարկում էր տիրել Էրզրումին, որով ամբողջ Հայաստանի վրա վերահսկողություն կսահմանեին, Տրապիզոնն անհրաժեշտ էր գրավել, որպեսզի Էրզրումից դեպի ծով ելք ապահովվեր։ Ռուսաստանին էր առաջարկում պահել Բերկրին, Մանազկերտը, Խնուսը, Էրզրումը, Բաբերդը, Գյումուշխանեն և Տրապիզոնի վիլայեթը՝ մինչև Տիրեբոլու։ Ս. Սազոնովը պատասխանեց, որ չի բացառում սահմանները Տավրոսին ու Անտիտավրոսին հասցնելը, և դա կախված էր ռազմական գործողությունների ընթացքից։ Նրանք այդ ոգով կազմված զեկուցագիր պատրաստեցին՝ կայսրին ներկայացնելու համար¹։

Այսպիսով՝ Ռուսաստանի արտգործնախարարը նույնպես մտածում էր Կիլիկիան գրավելու անհրաժեշտության մասին, սակայն նա ծանոթ էր այդ երկրամասի նկատմամբ ֆրանսիական նկրտումներին, հանգամանք, որ զսպում էր ռուսների ախորժակը։

Մարտի 17-ին Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ-ը պատրաստականություն հայտնեց ճանաչել բրիտանացիների հավակնությունները Մերձավոր Արևելքում և Ֆրանսիայի իրավունքները Սիրիայում, Կիլիկիայում, Պաղեստինում²։

Դրանով ռուսական կողմը փորձում էր բավարարել դաշնակիցների ձգտումները և լուծել իր համար մեծ կարևորություն ունեցող Կ. Պոլսին տիրելու հարցը։ Այդպիսով՝ Ռուսաստանը հրաժարվում էր հայկական տարածքների վրայով Միջերկրական դուրս գալու հնարավորությունից՝ դաշնակից Ֆրանսիայի շահերը չոտնահարելու մտահոգությամբ։

Լեյզեր Օշերովսկին 1915 թ. հրատարակած գրքովկում առաջարկում էր լիարժեք ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանին՝ ռուսական հովանու ներքո։ Գրքում խոսք չկար հայկական ինքնավարության սահմանների ու Կիլիկիայի մասին³։ Նման մոտեցմամբ ռուսական կողմը փորձում էր

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 32-33։

² Палеолог М., Царская Россия во время мировой войны, с. 171. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում, հ. 1, էջ 246։

³ Ошеровский Л., Идея автономного строя в Турецкой Армении под протекторатомъ Россіи, Пятигорскъ, 1915, с. 1, 7, 12, 14.

ինքնավարության գաղափարով սիրաշահել հայերին, իսկ մյուս կողմից չանհանգստացնել դաշնակից Ֆրանսիային:

Միևնույն ժամանակ ֆրանսիական կողմը Մերձավոր Արևելքում հետզհետե ավելի մեծ տարածքների էր սկսում հավակնել: Մարտի 20-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Թ. Դելկասեն Լոնդոնի ու Հոմի ֆրանսիական դեսպանատներին ուղարկած հուշագրում տեղեկացնում էր, որ Օսմանյան կայսրության բաժանման դեպքում իրենց պետք է անցնեն Հալեպի, Ադանայի, Խարբերդի և Դիարբեքի նահանգները, որով իրենց վերահսկողության տակ կանցնեն Կոնիայից դեպի Միջագետք գնացող Բաղդադի երկաթուղին¹:

Ֆրանսիացիների մոտ տարածքային ձեռքբերումների ախորժակը ժամանակի ընթացքում ավելի էր մեծանում, և նրանց ձգտումների մեջ էին արդեն ոչ միայն Կիլիկիան, այլև՝ Հայաստանի հարավային շրջանները:

Մարտի 28 (ապրիլի 10)-ին Ֆրանսիան, հաշվի առնելով, որ Ռուսաստանը ճանաչել է իր իրավունքները Սիրիայում և Կիլիկիայում, համաձայնություն տվեց նեղուցներում ռուսական ձգտումներին²:

Անտանտի երկրները որոշակի ջանքեր գործադրեցին ու խոստումներ տվեցին, որպեսզի Իտալիան միանա իրենց: Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի և Իտալիայի մերձավորարևելյան ձգտումներին բավարարություն տալու նպատակով նրանց միջև 1915 թ. ապրիլի 13 (26)-ին ստորագրվեց Լոնդոնի գաղտնի համաձայնագիրը³: Դրա արդյունքում, մայիսի 23-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Ավստրո-Հունգարիային: Լոնդոնի համաձայնագիրը որոշ չափով հստակեցնում էր այդ չորս տերությունների հավակնությունները օսմանյան ժառանգության բաժանման հարցում:

- Ռուսաստանին էին անցնելու Կ. Պոլիսը, նեղուցները և շրջակա որոշ տարածքներ, Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վան, Բիթլիս, Էրզրում, Տրապիզոն:
- Ֆրանսիան ստանալու էր Սիրիան և Կիլիկիան:

¹ Fitzgerald Edward Peter, France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 66, No. 4, Dec., 1994, p. 703.

² Сборник договоров России с другими государствами (1856-1917), Москва, 1952, с. 435. Kerner R. J., Russia, the Straits, and Constantinople, 1914-1915, "The Journal of Modern History", The University of Chicago Press, Vol. 1, No. 3, Sept., 1929, p. 414.

³ Раздел Азиатской Турции, с. 356-360. Wilcox V. The Italian Empire and the Great War, Oxford University Press, 2021, p. 51-52.

- Մեծ Բրիտանիայի ազդեցության տակ էին անցնում արաբական տարածքները:
- Գաղտնի համաձայնագրի 9-րդ հոդվածով Իտալիան Փոքր Ասիայում ստանալու էր Ադալիա նահանգը՝ հարակից տարածքներով:

Ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա զարգացումը, այս համաձայնագիրն ամբողջությամբ չհագեցրեց այդ տերությունների հետզհետե մեծացող ախորժակը: Շուտով Կիլիկիայի նկատմամբ որոշակի նկրտումներ ցուցաբերեց նաև Իտալիան, որը ձգտում էր ավելի մեծացնել Փոքր Ասիայի Միջերկրականին հարող իր տիրույթները: Ֆրանսիան նույնպես, շատ չանցած, ավելի ընդարձակ տարածքների սկսեց հավակնել: Այդ ամենը հանգեցրեց նոր համաձայնագրերի ստորագրմանը 1916-1917 թթ.:

Պետք է նշել, որ Մեծ Բրիտանիան նույնպես որոշակի հավակնություններ ուներ Կիլիկիայում: Նա ամբողջ Կիլիկիային տիրելու համար չէր պատրաստվում հակամարտության մեջ մտնել Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի հետ, սակայն հնարավորության դեպքում ցանկանում էր տիրել ռազմավարական և տնտեսական մեծ կարևորություն ունեցող Ալեքսանդրետի նավահանգստին: Այն Բաղդադի երկաթուղագծին կապված ամենամոտ և հարմարավետ նավահանգիստն էր Միջերկրականի արևելքում:

Սևծովյան նեղուցների վրա ռուսական տիրապետության հաստատման դեպքում բրիտանական կողմը Սուեզի ջրանցքի և Կիպրոսի պաշտպանության համար Միջերկրականի արևելքում կարիք կունենար ավելի մեծ քանակությամբ ռազմանավեր տեղակայելու: Բրիտանիայի ԱԳ նախարար Էդուարդ Գրեյը, ռազմական նախարար Հորացիո Քիթչեները, քաղաքական ու ռազմական գործիչների զգալի մասը ռազմաբազայի համար լավագույն նավահանգիստ էին համարում Ալեքսանդրետը¹:

Դա չէր կարող աննկատ մնալ ֆրանսիական կողմի ուշադրությունից: Հետևաբար՝ Ֆրանսիան ամեն կերպ փորձում էր բրիտանացիներին հեռու պահել Ալեքսանդրետից: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիացիները, ինչպես կտեսնենք, մերժում էին պատերազմի ընթացքում Կիլիկիայում բրիտանական կամ հայկական ուժերով ափհանում կատարելու բոլոր նախագծերը:

Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Պիեռ Դարիոն 1915 թ. հոկտեմբերի 2-ին

¹ Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia, p. 1028.

Ֆրանսիայի ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած գեկուցագրում մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի ու Սիրիայի վրա և անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեն Սիրիան ֆրանսիական ազդեցության գոտի ճանաչելու հարցում, իսկ այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունների հրամանատարությունն իրականացնեն ֆրանսիացիները: Նաև առաջարկում էր այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ¹:

Ռուսաստանը նույնպես ամբողջությամբ չէր հրաժարվել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի վրայով Միջերկրական դուրս գալու գաղափարից: Ռուսաստանը պատրաստակամություն էր հայտնել հրաժարվել իրեն անցնելիք հայկական տարածքներից, եթե Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան համաձայնեին միացյալ Հայաստանի ստեղծմանը՝ այդ երեք տերությունների միացյալ վերահսկողության տակ: Ռուսները վստահ էին, որ այդ դեպքում հաջողությամբ կկարողանային իրենց ազդեցությանը ենթարկել Հայաստանը և կապվել Միջերկրականին: Այդ հարցում դաշնակիցների տրամադրությունները պարզելու և նրանց համոզելու գործը ռուսական դիվանագիտությունը, ինչպես տեսանք, դրել էր հայ գործիչների վրա²:

Եվգենի Ադամովը գրում է, որ այդ ժամանակ պետրոգրադյան կառավարության համար միակ միջոցը տարածելու իր ազդեցությունը Միջերկրականում մնում էր «անկախ» Հայաստանը, սակայն Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կասկածներից խուսափելու համար այդ ծրագիրը պետք է պաշտպանեին հայ պատմիրականներն առանց ռուս դիվանագետների միջամտության³:

Պետք է արձանագրել, որ Կիլիկիայի նկատմամբ հավակնություններ ունեին նաև արաբները: Մեքքայի շերիֆ Հոսեինը 1915 թ. հուլիսին բրիտանացիների հետ գաղտնի բանակցություններում, նրանց աջակցելու և թուրքերի դեմ ապստամբելու դիմաց, պահանջեց պատերազմից հետո ստեղծել Արաբական թագավորություն, որը ներառելու էր Արաբական թերակղզին, Միջագետքը, Պաղեստինը, Սիրիան և Կիլիկիան՝ Մերսինով ու Ադանայով⁴:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 199-203:

² ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 9:

³ Раздел Азиатской Турции, с. 90-91.

⁴ Memories of a Turkish statesman, 1913-1919: By Djemal Pasha, New York, 1922, p. 209.

Շերիֆ Հուսեյնի որդու՝ էմիր Ֆեյսալի հետ արաբական կազմակերպությունների ներկայացուցիչների գաղտնի բանակցությունների արդյունքում Դամասկոսում 1915 թ. մայիսի 23-ին կազմվել էր արաբական պահանջների վերաբերյալ արձանագրություն, որը ներկայացվելու էր բրիտանացիներին: Ըստ դրա՝ Ադանան, Մերսինը, Բիրեջիկը, Ուրֆան, Մերդինը, այսինքն՝ Կիլիկիան և Հայկական Միջագետքը, նույնպես մտնելու էին արաբական թագավորության կազմի մեջ¹: Այդ պայմանները Բրիտանիայի կողմից ընդունվելու դեպքում արաբները պատրաստ էին ապստամբել Օսմանյան կայսրության դեմ:

Հոկտեմբերի 24-ին եզիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար Հենրի Մակ-Մահոնը Հուսեյնին տեղեկացրեց, որ Մերսինը, Ադանան և Սիրիայի արևմտյան որոշ շրջաններ չեն կարող համարվել արաբական, իսկ մյուս տարածքների նկատմամբ բրիտանական կառավարությունն ընդունում է արաբների պահանջները և իր ազդեցության գոտում գտնվող տարածքներում պատրաստ է տրամադրել անկախություն: Նոյեմբերի 5-ին Հուսեյնը պատասխանեց, որ պատրաստ է հրաժարվել Ադանայից ու Մերսինից, բայց դրա փոխարեն այլ տարածքներ պետք է տրվեն, հատկապես՝ Բեյրութը: Սակայն 1916 թ. հունվարի 1-ին Հուսեյնը հրաժարվեց Լիբանանի հարցը բարձրացնել մինչև պատերազմի ավարտը, որպեսզի Ֆրանս-բրիտանական հարաբերությունները չխաթարվեն²:

Այսպիսով՝ Կիլիկիայի կամ նրա առանձին մասերին տիրելու ձգտումներ ունեին հայերը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Բրիտանիան, Իտալիան, արաբները: Հետագա անախորժություններից խուսափելու, հավակնությունները ճշգրտելու համար անհրաժեշտություն էր առաջացել կնքելու գաղտնի համաձայնագիր Անտանտի գլխավոր տերությունների միջև: Ինչ վերաբերում է հայերի կամ արաբների նման փոքր ազգերի հավակնություններին, ապա դրանք երկրորդական էին մեծ տերությունների ծրագրերում:

Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև Օսմանյան կայսրության անդամատման հարցում վերջնական համաձայնություն կայացնելու բարդ խնդիրը հանձնարարվեց Բեյրութի նախկին ֆրանսիական հյուպատոս Ֆրենսիս Ժորժ Պիկոյին և Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի կաթոլիկ խմբակցության ղեկավար Մարկ Սայքսին: Վերջինս բազմիցս ճանա-

¹ Karol Sorby Jr., The Arab national movement in World War I, Asian and African Studies, Vol. 75, 2006, No. 1, pp. 43.

² Memories of a Turkish statesman, p. 210.

պարհորդել էր Օսմանյան կայսրությունում, այդ թվում՝ Հայաստանում և Կիլիկիայում, համարվում էր մերձավորարևելյան հարցերի լավագույն գիտականերից մեկը, իսկ նրա կարծիքը հաշվի էին առնում բրիտանական և նույնիսկ ֆրանսիական իշխանությունները: 1915 թ. նոյեմբերին նրանք բանակցությունները սկսեցին Լոնդոնում: Ի վերջո այս գործիչները համատեղ գծեցին այն սահմանները, ըստ որի՝ բաժանվելու էին արաբական, հայկական, ասորական և քրդական տարածքները:

1915 թ. նոյեմբերի 2-ին Ժ. Պիկոյին փոխանցված հրահանգներում Ֆրանսիայի վարչապետ և ԱԳ նախարար Արիստիդ Բրիանը պահանջում էր բանակցությունների միջոցով ապահովել Ֆրանսիայի վերահսկողության տակ Մեծ Սիրիայի ստեղծումը: Ըստ դրա՝ հարավում Սիրիային միացվելու էր Պաղեստինը, իսկ հյուսիսում՝ Կիլիկիան, Խարբերդը, Դիրարբեքիրը, Վանը, Մոսուլը¹:

Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայի տարածքային հավակնությունները Հայաստանում բավական ընդարձակվել էին: Արդեն խոսքը գնում էր ոչ միայն Կիլիկիայի, այլ նաև՝ հարավային Հայաստանի մասին:

Մ. Սայքսը մինչև պատերազմը հետևում էր Պաղեստինյան կուսակցության այն հինավուրց մտայնությանը, թե պետք է Օսմանյան կայսրությունը պահպանել որպես պատնեշ՝ դեպի Միջերկրական ծով ռուսական առաջխաղացման դեմ²: Պաղեստինյանները մտածում էին, որ Ռուսաստանն աչք ունի բրիտանական գլխավոր գաղութի՝ Հնդկաստանի վրա, և ռուսական նավատորմի հայտնվելը Միջերկրականում կարող էր կտրել Բրիտանիայի հաղորդակցությունն այդ գաղութի հետ: Սակայն Լիբերալ կուսակցության ղեկավարները, այդ թվում՝ Դեյվիդ Լլոյդ Ջորջը, չէին կիսում այդ տեսակետը և կողմնակից էին Օսմանյան կայսրության տրոհմանը³: Սակայն Համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո կայսրության բաժանումը դարձավ անխուսափելի, քանի որ տարբեր պատճառներով դրան էին ձգտում Ռուսաստանը, Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, հայերը, արաբները:

Մ. Սայքսի առջև խնդիր էր դրված օսմանյան կործանվող կայսրության փոխարեն նոր պատնեշ ստեղծել դեպի հարավ՝ ռուսական առաջխաղաց-

¹ Fitzgerald Edward Peter, France's Middle Eastern Ambitions, p. 709.

² Եսփունեան Ա., նշվ. աշխ., էջ 1172:

³ http://en.wikipedia.org/wiki/Mark_Sykes, 09.05.2011:

ման դեմ: Հետագայում պիտի տեսնենք, որ բրիտանացի գործիչը կարողացավ գտնել իր առջև դրված խնդրի լուծումը:

Բանակցությունները սկսվեցին 1915 թ. նոյեմբերի 23-ին: Նախնական համաձայնությունը կայացվեց 1916 թ. հունվարի 3-ին¹: Հունվարի 4-ին Ֆրանսիայի խորհրդարանում վարչապետ Ա. Բրիանը հայտարարեց, որ Բրիտանիան ճանաչել է իրենց իրավունքներն Ալեքսանդրետում, Կիլիկիայում, Մոսուլում²:

Մ. Սայքսը և Ժ. Պիկոն մի քանի ամիս տևած բանակցությունների արդյունքում կազմեցին Օսմանյան կայսրության բաժանման նախագիծ: Այն պետք է արժանանար նաև ռուսական իշխանությունների հավանությանը:

1916 թ. մարտի 9-ին Պետրոգրադում Մ. Սայքսին և Ժ. Պիկոյին բրիտանական և ֆրանսիական դեսպաններ Ջորջ Բյուքենենը և Մորիս Պալեոլոգը ներկայացրին Ռուսաստանի արտգործնախարար Ա. Սազոնովին, որպեսզի քննարկեն Օսմանյան կայսրության տարածքների բաժանման հարցը: Երկու բանաձևացներին ներկայացնելուց հետո դեսպանները հեռացան: Մ. Սայքսը և Ժ. Պիկոն Ա. Սազոնովին ներկայացրին իրենց լոնդոնյան բանակցությունների արդյունքները և դրանց արդյունքում կազմած նոր սահմանների քարտեզը³: Ըստ դրա՝

- Ռուսաստանին էր անցնելու «Դեղին» գոտին՝ Կ. Պոլիսը, նեղուցները, Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգները:
- Ֆրանսիան ստանալու էր «Կապույտ» գոտին՝ Լիբանանը, Սիրիայի արևմտյան շրջանները, Կիլիկիան, Այնթապը, Ուրֆան, Խարբեբդի ու Դիարբեքիի նահանգները, Հաքքիարի մարզը: Ֆրանսիական ազդեցության գոտի էր ճանաչվում «Ա» գոտին՝ Սիրիայի արևելքը և Մոսուլի շրջանը: Ալեքսանդրետը ստանալու էր ազատ նավահանգստի կարգավիճակ, որպեսզի բրիտանացիներն ազատորեն օգտվեին դրանից:
- Բրիտանիան ստանալու էր «Կարմիր» գոտին՝ Միջագետքը, Պարսից ծոցի առափնյա շրջանը, Հայֆա և Աքրա նավահանգիստները: Բրիտանական ազդեցության գոտի էր ճանաչվելու «Բ» գոտին՝ Բաղդադի նահանգի հյուսիսը և Անդրիորդանանը: Հայֆան ստանալու էր ազատ նավահանգստի կարգավիճակ, որպեսզի ֆրանսիացիներն ազատորեն օգտվեին դրանից:

¹ Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 93:

² Գանգրոմի Հ., Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէրյոթ, 1998, էջ 11-12:

³ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 381-384:

- «Շագանակագույն» գոտու մեջ ընդգրկված Պաղեստինում նախատեսվում էր միջազգային կառավարում մտցնել:

Նրանց սահմանագծումը չափազանց զարմացրեց Ս. Սազոնովին, քանի որ դրանով ֆրանսիական ազդեցության գոտին հասնում էր մինչև Պարսկաստան: Նախարարը նշեց, որ այդ ձևաչափով համաձայնագիրն անհնար է ընդունել, և ինքը դեռ պետք է հարցը քննարկի համապատասխան մարմինների հետ¹:

Նախկին բանակցություններում և զրույցներում Ֆրանսիան ցանկություն էր հայտնել ստանալու Կիլիկիան և Սիրիան: Հետևաբար՝ Ս. Սազոնովի համար նորություն էր, որ ֆրանսիացիներն աչք էին դրել նաև հարավային Հայաստանի և Հաքքիարիի վրա:

Արևմտյան Հայաստանը, փաստորեն, բաժանվելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև: Հավանաբար, բրիտանական դիվանագիտության առաջարկած ծոլակներից էր այն, որ հարավային Հայաստանը և Հաքքիարին առաջարկվում էին Ֆրանսիային, որի սահմանները պետք է հասնեին մինչև ռուս-պարսկական սահման: Փաստորեն՝ ռուսների առաջխաղացումը դեպի ավելի հարավ բրիտանական կողմը փորձում էր այս անգամ կանխել Ֆրանսիայի միջոցով, որը պետք է փոխարիներ կործանված օսմանյան պատները: Կիլիկիան, Խարբերդը, Դիարբեքիրը և Հաքքիարին հյուսիսում Տավրոսի լեռնաշղթայով սահմանակից էին դառնալու ռուսական տարածքներին, իսկ հարավում, ունենալով Սիրիան, Ֆրանսիան կարող էր ամուր պատնեշ ստեղծել ռուսների հետագա առաջխաղացման դեմ դեպի Մերձավոր Արևելք, Եգիպտոս և Միջերկրականի արևելյան ափը: Իսկ բրիտանական տիրույթները ձգվում էին ֆրանսիականից հարավ՝ թիկունքում:

Այսպիսով՝ բրիտանական կողմը գտել էր այն խնդրի լուծումը, թե ինչպես պատնեշի ռուսական առաջխաղացմանը դեպի Միջերկրական և Սուեզի անցուղի: Հետևաբար՝ այլևս կարիք չկար պահպանելու Օսմանյան կայսրությունը, որի համար հսկայական ջանքեր էր գործադրել բրիտանական դիվանագիտությունը: Այդ փլուզվող պետության գոյության միակ իմաստը վերջին հարյուրամյակում հանդիսացել էր ռուսներին հարավ չթողնելը:

Ինչպես արդեն նշել ենք, դեռևս 1915 թ. հունիսի 30-ին Մորիս դե Բանսենի հանձնախումբը ներկայացրել էր Բրիտանիայի համար օսմանյան ժառանգության բաժանման լավագույն տարբերակը, ուր նախատեսվում էր այն

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 265-268:

բաժանել այնպես, որ բրիտանական ու ռուսական տիրույթների միջև հայտնվեր Ֆրանսիան, որպես պատնեշ: Այդ հանձնախմբի անդամներից էր նաև Մ. Սայքսը¹: Այսպիսով, բրիտանացի դիվանագետը հասել էր այն ցանկալի նախագծի առաջադրմանը, որի շուրջ որոշում էր կայացվել արդեն 10 ամիս առաջ:

Մարտի 11-ին Մ. Սայքսը ռուսական կողմին ներկայացրեց նոր սահմանագծում, որը կարող էր բավարարել Ս. Սազոնովի ցանկությունները: Դրանով Բիթլիսի անցուղիները և նեստորական մարզը՝ Հաքքիարին թողնվում էին Ռուսաստանին, իսկ Ֆրանսիայի ազդեցության գոտում ընդգրկվում էր նաև Փոքր Հայքը՝ Սեբաստիայի նահանգը²:

Փաստորեն՝ հիմնականում քրդերով ու ասորիներով բնակեցված Հաքքիարին հանձնում էին Ռուսաստանին, իսկ դրա փոխարեն Ֆրանսիան ստանալու էր Սեբաստիայի նահանգը: Այդ քայլով փակում էին Ռուսաստանի հետագա առաջխաղացման ճանապարհը դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա:

Մարտի 12-ին Զ. Բյուքենենին ուղղված նամակում Մ. Սայքսը հետևյալ կերպ է պարզաբանում Ս. Սազոնովին առաջարկած նոր սահմանագծման վերաբերյալ իր հիմնավորումները:

«Լավ կշռադատելով նոր առաջարկությունը, այսինքն՝ Հեքքիարիի փոխարեն Սըվասը կապույտ գոտու մեջ մտցնելու առաջարկությունը, ես հանգեցի այն եզրակացության, որ հետևյալ կետերը կարող են պ-րն Սազոնովի համար հետաքրքրություն ներկայացնել:

I. Ինձ թվում է, որ մենք պետք է ընդունենք, որ, հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանության ու անգթության հետևանքով, չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանյան իշխանության տակ թողնելու հնարավորությունը: Այդ նախագիծը, եթե անգամ ուղեկցվեր բարենորոգումներով, Անգլիայում և Միացյալ Նահանգներում կհարուցի զայրույթի պոռթկում և զենք կդառնա հաշտությունից բոլոր դժգոհների համար:

II. Ուստի հայկական հարցը կարող է լուծվել՝ Ա) եթե հիմնվի հայկական պետություն թուրքական սյուլեթենության ներքո, մի բան, որը ենթադրում է կամ Կովկասում ինտրիգներ սարքող երկրորդ Բուլղարիայի ստեղծում, կամ ոչ կենսունակ ծրագիր, քանի որ հայերն ի վիճակի չեն մրցակցելու քրդերի հետ: Բ) եթե ստեղծվի միջազգային վերահսկողության տակ գտնվող և չե-

¹ Фомин А., Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918—1923. Москва, 2010, ст. 48-50.

² Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 384-385:

գործ (°) կառավարիչներ ունեցող հայկական կառավարություն, մի բան, որը մշտական բանասարկությունների և «հարցերի» համար լայն հնարավորություններ կստեղծի, որոնցից Գերմանիան վաղ թե ուշ կքաղի իր օգուտը: Գ) Եթե Հայաստանը՝ առանց նախապատրաստության և լիովին հանձնվի Ռուսաստանին, ապա ռուսական քաղաքական սիստեմի մեջ կներառվի մի երկիր, որը լեփ-լեցուն է Կովկասում և Պարսկաստանում գոյություն ունեցող հեղափոխական կազմակերպությունների հետ մշտական կապերի մեջ գտնվող հեղափոխական ընկերություններով: Մի հայ հեղափոխական (դաշնակցական) մի անգամ ինձ ասել է, որ դա հիմնալի կլիներ, քանի որ այն պահից, երբ ամբողջ հայ բնակչությունն անցնի ռուսական հպատակության տակ, հեղափոխական ընկերությունները Կովկասում, Ադրբեջանում՝ և Թուրքիայում անմիջապես կամրապնդվեն, և բավական կլինի լոկ ընդհանուր դժգոհություն, որպեսզի պահպանվի նրանց կենսունակությունը: Դ) Եթե հարցը լուծվի այնպես, որ նախկին Հոմեական կամ Փոքր Հայքը հանձնվի Ֆրանսիային և առդիր քարտեզի դեղին գուտին անքսիայի ենթարկվի Ռուսաստանի կողմից: Ես այս եղանակը համարում եմ ամենագոհացուցիչը և վաղուց այն նկատի ունեի, բայց երբեք առաջ չէի քաշում, որովհետև միշտ կարծում էի, թե ռուսական կառավարությունը ձգտում է գրավել Սըվասի նահանգը:

Նրա առավելությունները հետևյալն են՝

1. Ռուսաստանը ստանում է Էրզրումը, Բիթլիսը և Վանը՝ աննշան քանակությամբ հայկական բնակչությամբ, որովհետև «A» գուտին բացառապես նեստորական և քրդական է, «B» գուտին զուտ քրդական է, «C» գուտին բնակեցված է բացառապես լազերով:

2. Ֆրանսիան ստանում է Հայաստանը, որպես Հայաստան, և ֆրանսիական գուտին կլինի հայկական ազգային զգացմունքի կենտրոն: Դա չափազանց ձեռնտու է Ռուսաստանին, որովհետև Փոքր Հայքի հայերն ունեն կղերական և պահպանողական տրամադրություններ ի տարբերություն կովկասյան հայերի և արևելյան հայերի, որոնք անարխո-սոցիալիստներ են: Եթե հայկական ազգային զգացմունքի կիզակետը լիներ Էրզրումը, անարխո-սոցիալիստներն իրենց ձեռքը կվերցնեն հայկական քաղաքական ամբողջ մեխանիզմը և կամրացնեին այն. իսկ այս դրության պայմաններում չա-

¹ Խոսքը իրանական Ադրբեջանի՝ Ատրպատականի մասին է:

փավոր տարրերը իրենց կենթարկեն հայկական ազգային ձգտումները ֆրանսիական խնամակալության ներքո, որը կտարածվի Փոքր Հայքից:

Հայկական չափավոր շրջանների նպատակը կլինի զարգացումը սեփական սահմաններում և սահմանազատումը Կովկասի և Ադրբեջանի անարխո-սոցիալիստներից, որոնց հետ նրանք երբեք չեն ցանկացել ընթանալ միասին:

Այնուհետև, ֆրանսիական գոտին իր մեջ է առնում Ձեյթուն, Հաճըն, Դիարբեքիր, Մուֆարդին, Սըվաս պատմական հայկական քաղաքները և այն մարզը, որտեղ իշխել է վերջին հայ թագավորը, որին վիճակված էր մահանալ Փարիզում, ինչպես նաև ընդգրկում է խաչակրաց արշավանքների դարաշրջանի Եդեսիական կոմսությունը, որտեղ թագավորել է Գյուի Լուզինյանը: Դա որպես մեկնակետ նշանակություն ունի հայկական պատմական նացիոնալիզմի համար, որը մոռացել է Վանի և Էրզրումի ժողովրդական երգերն ու ավանդույթները, որոնք հայկական անարխո-սոցիալիստական պրոպագանդայի գաղափարական հիմքն են:

Այնուհետև, Փոքր Հայքի հայերը կապված չեն Կովկասի հայ արդյունաբերողների հետ և, իսկապես, ընդհանուր քիչ բան ունեն նրանց հետ:

Ես անձամբ կասեի, որ լավ կլիներ, եթե դա միայն հնարավոր է, Մուշի դաշտավայրը մտցնել ֆրանսիական գոտու մեջ, որովհետև դա Ռուսաստանին կազատեր հեղափոխական գործունեության օրրանից և կովկասյան հեղափոխականների պրոպագանդայի համար ամենապիտանի մարզերից մեկը կկտրեր նրանց գործունեության ոլորտից:

Այս վերջինը, անշուշտ, աննշան մանրամասնություն է և նրա արժանիքներն ու թերությունները ենթակա են քաղաքական և ստրատեգիական գործի գիտականների ուսումնասիրությանը. քաղաքականապես, ռուսական շահերից ելնելով լավ կլիներ, որ այդ մարզը ռուսական չլիներ, սակայն գտնվեր ռուսական հսկողության տակ: Ես կարծում եմ, որ սրանք են այն գլխավոր հարցերը, որոնք բարձրացվել են մեր երեկվա զրույցի ժամանակ¹:

Ինչպես տեսնում ենք, իր հիմնավորումների մեջ Մ. Սալքսը բացառում է Հայաստանը թուրքական լծի տակ թողնելը՝ «հայկական վերջին կոտորածների ծայրահեղ դաժանության ու անզթության հետևանքով» և առաջ է քաշում Հայկական հարցի լուծման մի քանի տարբերակներ: Նա բացասաբար է վերաբերվում հայկական պետականության վերականգնմանը, թեկուզ

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 385-388:

թուրքական գերիշխանության ներքո: Նախկինում ևս նա խուսափում էր Հայաստան անունով երկրի ստեղծումից, դա համարելով անհնար¹: Ըստ նրա՝ Հայաստանը կդառնա «Կովկասում ինտրիգներ սարքող երկրորդ Բուլղարիա», կամ էլ այդ պետությունը կենսունակ չի լինի, քանի որ հայերը չեն կարողանա մրցակցել քրդերի հետ:

«Երկրորդ Բուլղարիայի» գաղափարը բազմիցս արծարծվել է որոշ ռուս գործիչների կողմից, բայց այստեղ հետաքրքիր է այն, որ նման հարց է բարձրացվում բրիտանացի դիվանագետի կողմից: Այդ երբևանի՞ց են բրիտանացիները սկսել մտածել Ռուսաստանի ներքին անդորրը պահելու և, հատկապես, Կովկասի մասին: Փաստորեն՝ Մ. Սայքսը փորձում էր որոշ ռուս գործիչների մոտ եղած թյուր կարծիքը պաշտպանել ու բարձրաձայնել, որպեսզի Ս. Սազոնովին ապացուցի իր տեսակետների արդարացիությունը: Այստեղ խնդիրն անկախ հայկական պետություն կազմավորելուց խուսափելու և Մ. Սայքսին ցանկալի ծրագիրն իրականացնելու մեջ էր, որն իսկապես լուրջ հնարավորություններ կստեղծեր հայությանը հուզող խնդիրների լուծումն օգտագործել ռուս-ֆրանսիական հարաբերությունները բրիտանական շահերին համապատասխան խճճելու համար:

Նույն կերպ նա անընդունելի է համարում միջազգային վերահսկողության տակ հայկական իշխանության ստեղծումը, որն իբրև թե կդառնա մշտական բանսարկությունների ու խնդիրների պատճառ, որից հետագայում կարող էր օգտվել Գերմանիան: Իրականում նա վստահ էր, որ միջազգային, այսինքն՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի վերահսկողության դեպքում, Հայաստանը կարող էր հայտնվել ռուսական ազդեցության տակ, քանի որ այդ տերությունը սահմանակից էր, իսկ հայերի զգալի մասն ուներ ռուսական կողմնորոշում:

Ավելի հետաքրքիր է այն մտավախությունը, որ եթե հայկական բոլոր տարածքներն անցնեն Ռուսաստանին, որը, ինչպես գիտենք, Մեծ Բրիտանիայի համար բացարձակ անընդունելի էր, այդ դեպքում, Մ. Սայքսի կարծիքով, իբրև թե Ռուսաստանում, Պարսկաստանում և Թուրքիայում գործող հայկական հեղափոխական կազմակերպությունները կմիավորվեին և վտանգավոր կդառնային:

Հայկական հեղափոխական կազմակերպությունների գլխավոր նպատակը Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր թուրքական դաժան տի-

¹ Sykes M., The Caliphs' Last Heritage. A short History of the Turkish Empire, London, 1915, p. 418.

րապետությունից, իսկ ինչ վերաբերում է նրանց սոցիալիստական գաղափարներին, ապա դրանք երկրորդ տեղում էին: Միաժամանակ, Հայաստանի միավորումը չէր կարող պատճառ դառնալ, որ հայկական կուսակցությունները միավորվեին, իսկ նրանց տարբեր երկրներում գործող կառույցներն առանց այդ էլ գործում էին միասնաբար:

Մ. Սայքսի վերոնշյալ բոլոր բացատրությունների գլխավոր նպատակն այն էր, որ ցույց տա հայկական հարցի լուծման «միակ ճշմարիտ ճանապարհը», որը հայտնի էր միայն իրեն և ձեռնտու էր բրիտանական շահերին: Նա, որպես խնդրի լուծման միակ տարբերակ, առաջարկում էր Հայաստանը բաժանել երկու մասի: Այստեղ, բնականաբար, նա չէր ներկայացնում այն բացասական հետևանքները, որը կբերեր Հայաստանի և հայ ազգի հերթական բաժանումը: Ինչպես հայտնի է, երբևէ չի կարող երկրի ու ժողովրդի բաժանումը լինել խնդրի վերջնական լուծում, քանի որ այն ավելի մեծ բարդություններ կարող է առաջացնել, որովհետև մշտապես կլինեն միավորման բնական ձգտումը:

Նա համոզմունք էր հայտնում, որ Ռուսաստանին ձեռնտու կլինի միացնել Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգներն՝ «աննշան քանակությամբ հայ բնակչությամբ»: Իբր այդ շրջաններում հայերը փոքրամասնություն էին, քանի որ որոշ շրջաններ ամբողջությամբ բնակեցված էին քրդերով, ասորիներով և լազերով: Ինչպես տեսնում ենք, ամենահայաշատ նահանգները նա համարում է «աննշան քանակությամբ հայեր պարունակող»: Այստեղ նա զարգացնում է թուրքական այն տեսակետը, որ իբր Հայաստանում հայերը փոքրամասնություն են, կամ փորձում է արդարացնել պատերազմի ընթացքում թուրքերի իրականացրած ցեղասպանության հետևանքները:

Ֆրանսիային անցնելիք Կիլիկիայի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի հիմքի վրա պետք է կազմավորվեր բուն Հայաստանը: Նրա կարծիքով, այդ դեպքում հայերի համար Հայաստան կհամարվի ֆրանսիական գոտին: Դա իբրև թե ձեռնտու է Ռուսաստանին, քանի որ Փոքր Հայքի հայերն ունեն «կղերական և պահպանողական տրամադրություններ»՝ ի տարբերություն արևելահայերի, որոնք «անարխո-սոցիալիստներ» են: Նա նշում էր, որ հայկական չափավոր հոսանքերի նպատակն է զարգանալ սեփական սահմաններում, անջատվել Կովկասի և Ատրպատականի անարխո-սոցիալիստներից, «որոնց հետ նրանք երբեք չեն ցանկացել ընթանալ միասին»:

Ինչպես տեսնում ենք, նա ռուսական կողմին անընդհատ վախեցնում է հայկական սոցիալիստներով ու հեղափոխականներով: Ինչով էր դա պայմանավորված: Մեկնելով Պետրոգրադ, ապա՝ ռուսական Կովկասյան ճա-

կատ՝ Մ. Սայքսը ուշադրություն էր դարձրել Ռուսաստանում տիրող ներքին խմորումներին, որոնք ցանկացած պահի կարող էին վերաճել հեղափոխության¹: Այդ ներքին ծանր իրադրությունը, երբ ցարական իշխանությունների աչքին ամեն տեղ հեղափոխության վտանգ էր երևում, բրիտանացի գործիչը փորձում էր օգտագործել և հայերին ներկայացնում էր որպես անարխիստներ ու սոցիալիստներ:

Միաժամանակ նա Կովկասի հայ արդյունաբերողների խնդիրն է առաջ քաշում, լավ իմանալով, որ նրանք լուրջ մրցակից էին ռուս արդյունաբերողների համար: Ռուսական, վրացական մամուլում բազմիցս բարձրացվել էր Կովկասում հայկական կապիտալի հետ մրցակցության հարցը, և ռուս մեծապետական շատ գործիչներ չափազանց դժգոհ էին Անդրկովկասում հայ արդյունաբերողների, առևտրականների ու արհեստավորների զբաղեցրած գերիշխող դիրքերից:

Այսպիսով՝ Մ. Սայքսը իր ծրագրի արդարացիությունը ցույց տալու և Ս. Սազոնովին համոզելու համար փորձում էր ամեն կերպ վարկաբեկել հայերին:

Մարտի 15-ին Ս. Սազոնովը Ժ. Պիկոյին ներկայացրեց իր տեսակետը, ըստ որի, բացի Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի և Վանի նահանգներից, Ռուսաստանին պետք է անցնեն նաև Հաքքիարին: Դրանով արգելափակվում էր Ֆրանսիայի ազդեցության գոտու սահմանակցումը Պարսկաստանին: Դրա փոխարեն Ֆրանսիային առաջարկվում էին Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան և Ազիզիեն: Ժ. Պիկոն անակնկալի եկավ, երբ ռուսական քարտեզի վրա տեսավ սահմանագծման հարցերի վերաբերյալ Մ. Սայքսի թողած ձեռագիր ծանոթագրությունները²:

Այդ լուծումը, ինչպես տեսանք, ռուսներին առաջարկել էր Մ. Սայքսը և, փաստորեն, մոռանալով գործընկերության մասին, Ֆրանսիային առաջարկներ էր անում ռուսների միջոցով՝ թիկունքից:

Մարտի 17-ին Ս. Սազոնովը Զ. Բյուքենենին և Մ. Պալեոլոգին ուղարկած հուշագրերով տեղեկացրեց, որ ռուսական կառավարությունը համաձայն է առաջարկված սահմանագծմանը, բայց պայմանով, որ Ռուսաստանին անցնեն Բիթլիսի անցուղիները, Ուրմիա լճի շրջակայքը, իսկ Պաղեստինի սրբավայրերում ապահովվեն ուղղափառ եկեղեցու իրավունքները: Դրա

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 294:

² Նույն տեղում, էջ 273-274:

դիմաց առաջարկում էր Ֆրանսիային հանձնել Փոքր Հայքի՝ Սեբաստիա-հարբերդ-Կեսարիա եռանկյունու միջև ընկած տարածքը¹:

Ֆրանսիական կառավարությունը իր համաձայնությունը տվեց ռուսական առաջարկներին²: Ռուսաստանն իր հերթին ստիպված էր զիջումների գնալ, քանի որ դաշնակից երկրների հասարակական կարծիքի և որոշ պետական գործիչների մոտ հետզհետե արմատանում էր այն գաղափարը, որ պատերազմը մղվում է «ժողովուրդների ազատագրության համար»:

Փարիզում կայացած դաշնակցային խորհրդաժողովում ֆրանսիացի գործիչ Լեոն Բուրժուան առաջարկել էր պաշտոնապես հայտարարել պատերազմի ազատագրական խնդիրների մասին, և միայն ռուսական դեսպանի ջանքերով էր այն հետաձգվել³:

Ապրիլի 13 (26)-ին Ս. Սազոնովի և Մ. Պալեոլոգի միջև փոխանակված հուշագրերով ստորագրվեց ռուս-ֆրանսիական համաձայնագիր, որով Ռուսաստանը իր համաձայնությունը հայտնեց Օսմանյան կայսրության բաժանման ֆրանս-բրիտանական նախագծին⁴: Մայիսի 9-ին և 16-ին Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար Էդուարդ Գրեյի և Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնի միջև փոխանակված հուշագրերով ստորագրվեց Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագիրը⁵:

Հայաստանը բաժանվելու էր երկու մասի. Ռուսաստանին պետք է անցնեին Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգները, Ֆրանսիային՝ Կիլիկիան, Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան, Այնթապը, Ուրֆան:

Դրանով բրիտանական դիվանագիտությունը արձանագրեց հերթական հաղթանակը. Ռուսաստանի՝ դեպի հարավ առաջխաղացման դեմ ստեղծեց պատնեշ Ֆրանսիայի միջոցով, իսկ Հայաստանի բաժանումով առիթ ստեղծեց, որ հետագայում Հայկական հարցն օգտագործի ռուս-ֆրանսիական հարաբերությունները խճճելու համար:

Փաստորեն՝ Սայքս-Պիկոյի համաձայնագրով Ֆրանսիային էին անցնելու Լիբանանը, Սիրիայի ծովափնյա շրջանը, Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի զգալի մասը՝ Դիարբեքիրի, Խարբերդի և Սեբաստիայի նահանգները: Ֆրանսիական ազդեցության գոտի էին ճանաչվելու Հալեպի, Մոսուլի,

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 390-391:

² «Հայաստանի ավտոնոմիան», էջ 38-39:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 112, թ. 1-3:

⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 391-395: Раздел Азиатской Турции, с. 185-188.

⁵ Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., էջ 97:

Դեիրի և Դամասկոսի նահանգները: «Ափի այս հատվածի և ցամաքային մասի կառավարումը ֆրանսիական իմպերիալիստներին կարող էր տալ այն, ինչին նրանք ամենից շատ էին ձգտում Մերձավոր Արևելքում՝ փաստական տիրապետություն մի երկրի նկատմամբ, ուր Ֆրանսիան ուներ բազմաթիվ կրոնական և մշակութային հետաքրքրություններ, վերահսկողություն Սիրիայում մետաքսի և Կիլիկիայում բամբակի պոտենցիալ արտադրության նկատմամբ, Արդանայի պղնձի հանքերի սեփականության իրավունքը և Բաղդադի երկաթուղու այն հատվածի ձեռքբերումը, որը ձգվում էր Մոսուլից մինչև Տավրոսի Կիլիկյան դարպասները»,- գրում է Կոլումբիայի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Էդուարդ Էրլը¹:

«Ֆրանսիական տարածությունն արհամարհեց աշխարհագրական, ազգագրական, լեզվագրական միասնության օրենքը, որը կարող էին վկայակոչել այն արդարացնել ցանկացողները»²,- գրում է Վ. Սուեստերմանը «Հայկական հարցը և Թուրքիայի պառակտումը» աշխատության մեջ:

Իսկապես, ֆրանսիական նկրտումները Մերձավոր Արևելքում աննախադեպ էին: Մինչ այդ երբևէ Ֆրանսիան հավակնություններ չէր դրսևորել Արևմտյան Հայաստանի նկատմամբ: Փաստորեն՝ Անտանտի երեք տերությունները բաժանում էին ոչ միայն տարածաշրջանը, այլ նաև ազգերին, կրոնական ու էթնիկ խմբերին:

Մշակութային գործիչ, իրավաբան Կարապետ Իզմիրլեանը Սայքս-Պիկոյի համաձայնագրի մասին գրում է. «Ուրեմն, մեր Հայրենիքը բաժանողներու մտքին մեջ, ՀԱՅԱՍՏԱՆ անուն երկիր մը չկար, ոչ ալ այդ երկրի վրայ հայ ժողովուրդի ազգային-քաղաքական իրաւունքի հարց: Անոնք պարզապէս իրարու մէջ կը բաժանէին օսմանեան կայսրութեան պատկանող արեւելեան եւ հարաւ-արեւելեան Փոքր-Ասիան, որուն հիւսիսային մասը Ռուսաստանի եւ հարաւային մասն ալ Ֆրանսայի ՍԵՊԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ պիտի դառնար, որպէս ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊՏՈՒՂ»³:

Ժ. Պիշոնը «Մերձավոր Արևելքի բաժանումը» գրքում նշում է. «Անգղոֆրանքո-ռուս համաձայնութիւնը ակնարկութիւն մը չէր պարունակեր փոքրամասնութիւններու խնդրոյն: Հայաստան կը գտնուէր բաժնուած Ֆրանսայի եւ Ռուսիոյ միջեւ: Բայց կարելի չէր քննադատել այս լուծումը, որովհե-

¹ Earle E. M., Turkey, the Great Powers and the Bagdad Railway, p. 294.

² Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, էջ 145:

³ Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (Քննական տեսութիւն), Պէրոպ, 1964, էջ 172:

տեւ ջարդերը, որոնք արինոտաճ էին Փոքր Ասիան, այնքան նուազեցուցած էին հայկական բնակչութիւնը, որ անոնք թուապէս անբաական էին իրենց կերտել երազած «Մեծ Հայաստանը» լեցնելու համար»¹:

Դ. Լլոյդ Ջորջը այս համաձայնագրի մասին հետագայում վկայում էր. «Արաբները տեղյակ չէին բանակցությունների մասին..., երբ արաբական առաջնորդներն իմացան համաձայնության մասին, նրանք, բնականաբար վիրավորվեցին... բայց Հուսեյնը սահմանափակվեց նրանով, որ ձևականորեն հրաժարվեց համաձայնագիրն ընդունելուց: Իտալացիները ևս շատ զայրացել էին, քանի որ համաձայնագիրը կնքվել էր առանց իրենց հետ խորհրդակցելու և առանց իրենց գիտության... իտալացիների համաձայնությունը ստիպված եղան գնել՝ Անատոլիայում նրանց տարածքային զիջումներ խոստանալով, ինչը նոր դժվարություններ հարուցեց: Իսկ երբ եկավ համաձայնագիրն իրագործելու ժամանակը, բոլորը խոստովանեցին, որ այն բոլորովին անիրագործելի է»²:

Այսպիսով՝ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը միայն նոր խառնաշփոթի պատճառ կարող էր դառնալ հետպատերազմյան Մերձավոր Արևելքում: Տարբեր պետությունների միջև բաժանվում ու մասնատվում էին հայկական, արաբական, քրդական, ասորական տարածքները: Այդ քաղաքականությունը, որն իր շարունակությունն ունեցավ հետագայում, մինչև այսօր անլուծելի խնդիրներ են առաջացնում այդ տարածաշրջանում:

Հետաքրքիր է նշել, որ ռուսական որոշ գործիչներ անհրաժեշտ էին համարում հայ տարրի ամրապնդումը Հայաստանում և հայերին նախկինում տրված խոստումների կատարումը:

Պ. Միլունովը, ով նախկինում առաջարկում էր Արևմտյան Հայաստանի միացում Ռուսաստանին, 1916 թ. մարտի 20-ին Դումայում հայտարարեց, որ ռուսական կառավարությունը, երբ հայկական տարածքները դեռևս գրավված չէին, խոստացել էր ինքնավարություն տալ Հայաստանին, իսկ այժմ հայկական նահանգների մեծ մասը ազատագրված են, հետևաբար՝ անհրաժեշտ է կատարել խոստումը³:

Ս. Սազոնովը 1916 թ. ամռանը կառավարությանը ներկայացրած ընդարձակ զեկուցագրում պաշտպանում էր հայերին աջակցելու գաղափարը՝ որպես Ռուսաստանին նվիրված ժողովրդի, ինչպես նաև պանթուրքիզմի և

¹ Մերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, էջ 296-297:

² Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, էջ 678-679: Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, с. 215.

³ Армянский вестник, 1916, N 8, с. 1.

պանիսլամիզմի ճանապարհը փակող գլխավոր խոչընդոտի: «Ամբողջ Փոքր Ասիան, Մարմարյան և Էգեյան ծովերից մինչև Կասպից ծովի կովկասյան ափը՝ 24-րդից մինչև 46-րդ միջօրեականները, այսինքն մոտավորապես երկու հազար վերստ տարածության վրա բնակվում է թուրք-թաթարական ցեղը, որը դավանում է մահմեդականություն (արևմուտքում՝ սուննիներ, արևելքում՝ շիաներ), որոնք խոսում են մեկ լեզվով և վառ զգում են իրենց ազգակցությունը: Ահա հենց այդ հսկայական տարածքի մեջտեղում 34-րդ և 42-րդ միջօրեականների միջև, այսինքն մոտավորապես 600 վերստի տարածության վրա, գոյություն ունի ճեղքվածք, որը կոչվում է Հայաստան, որտեղ թուրքական ցեղը համարյա վերանում է և փոխարինվում է իրեն խորթ արիական ծագման քրիստոնյա ցեղով՝ հայերով: Հայաստանի արևելյան մասում հայերին խիտ խառնվում են քրդերը: Վերջիններս սկսեցին լցվել Հայաստան, նեղել տեղաբնիկ բնակչությանը ընդամենը վերջին 35-40 տարիների ընթացքում, շնորհիվ Աբդուլ Համիդի մտցրած հայերի բնաջնջման քաղաքականության...,- մատնանշում էր Ս. Սազոնովը և մեկնաբանում,- Հայերը և քրդերը, այսպիսով, թուրքերին բաժանում են երկու հատվածի՝ արևմտյան (հայտնի թուրք-օսմաններ անվան տակ) և արևելյան՝ հայտնի Ռուսաստանում թաթարների անվան տակ, որոնք բնակեցնում են ամբողջ արևելյան Անդրկովկասը և ընդարձակ Պարսկական Ադրբեջանը»¹: Նախարարը եզրակացնում էր, որ «Եթե գերմանացիներին և թուրքերին հարկավոր է Հայաստանն առանց հայերի, եթե նրանց հարկավոր է հայկական սեպի ոչնչացումը, եթե նրանց հարկավոր է ոչնչացնել մեր մահմեդականների և քրդերի ու թուրքերի միջև առկա արգելքը, ապա Ռուսաստանի խնդիրն է ինչ գնով էլ որ լինի վերականգնել այդ հայկական սեպը, այդ արգելքը թուրքերի ու քրդերի և մեր թաթարների միջև»²:

Սակայն, հայերին սատարել ասելով, ռուս պաշտոնյան արդեն նկատի չունեն հայկական ինքնավարության ստեղծումը, ինչը քննարկվում էր մեկ տարի առաջ:

1916 թ. հուլիսին Կովկասի փոխարքա Նիկոլայ Ռոմանովին ուղարկած նամակում Ս. Սազոնովը անհնար էր համարում հայերին տալ ինքնավարություն, քանի որ ցեղասպանության հետևանքով փոքրամասնություն էին

¹ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916թթ. ցեղասպանության մասին, էջ 67-68:

² Նոյն տեղում, էջ 71:

դարձել: Փոխարքան պատասխանում շեշտում էր, որ հայկական հարցի մասին նույնիսկ հիշեցում չպետք է թույլ տալ ռուսական սահմանների ներսում¹:

Այսպիսով՝ ռուսական կողմի համար Հայկական հարց այլևս գոյություն չուներ, նրանց խնդիրն էր դարձել միայն Արևմտյան Հայաստանի մի մասի նվաճումը և տեղում հայ բնակչության պաշտպանությունը՝ որպես պանթուրքիզմի ճանապարհը փակող գործոնի:

Ռուս գործիչները միաժամանակ փորձում էին հայերին համոզել, որ միասնական ինքնավար Հայաստանի ստեղծման միակ խոչընդոտը Բրիտանիան և Ֆրանսիան են²:

Մյուս կողմից բրիտանացի որոշ գործիչներ ոչ միայն հնարավոր, այլև նույնիսկ անհրաժեշտ էին համարում ինքնավարություն կամ անկախություն տալ միավորված Հայաստանին: Բրիտանա-հայկական կոմիտեի քարտուղար, Բրիտանիայի նախկին վարչապետ Վիլիամ Գլադսթոնի մերձավորներից Արթուր Սայմոնդսը անհրաժեշտ էր համարում Հայաստանին լիարժեք ինքնավարություն ու անկախություն շնորհելը: Նա հույս էր հայտնում, որ կոտեսնի «ինքնավար հայկական պետություն, որը կծգվեր Սինոպից մինչև Ադանա, Ադանայից մինչև Պարսկաստանի սահման և այնտեղից դեպի Սև ծով, Հայաստան, որը կդառնա խաղաղության և բարգավաճման կենտրոն ամբողջ Փոքր Ասիայի համար»³:

Վերոշարադրյալը կարող էր բրիտանական կողմի հերթական հնարքներից լինել: Առաջարկվում էր ստեղծել միասնական և անկախ հայկական պետություն, որը ցույց էր տալիս բրիտանացիների մարդասիրական ու արդար վերաբերմունքը փոքր ազգերի նկատմամբ: Մյուս կողմից այդ առաջարկն արվում էր ոչ թե իրենց ազդեցության գոտում գտնվող տարածքի համար, այլ՝ Ռուսաստանի ու Ֆրանսիայի: Դրանով հակասություններ էր առաջացնում հայերի, ռուսների ու ֆրանսիացիների միջև: Ինչպես տեսնում ենք, դա բրիտանական դիվանագիտության մարտավարությանը բնորոշ գործելաոճ էր:

Փաստորեն՝ 1916 թ. գարնանը Անտանտի երեք տերությունների միջև ստորագրված գաղտնի համաձայնագրով միացյալ և ինքնավար Հայաստանի գաղափարը ծանր հարված ստացավ: Հայկական տարածքները բաժանվելու էին երկու տերությունների միջև: Դրանցից Ռուսաստանը բացարձա-

¹ Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, էջ 158: Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 398-400:

² Сюникъ, Автономія Арменіи и интересы Россіи, "Армянскій Вѣстникъ", 1916, N 36, с. 2-3.

³ Саймондсъ А., Будущее Арменіи, "Армянскій Вѣстникъ", 1916, N 39, с. 2-3.

կապես մտադրություն չունեի որևէ ինքնավարություն տալու արևմտահայությանը, քանի որ դա կարող էր արևելահայության մեջ նմանատիպ ձգտումներ առաջացնել: Ֆրանսիան, չնայած 1916 թ. աշնանը հայերին խոստացավ ինքնավարություն տալ իրեն անցնող հայկական տարածքներին, սակայն դրժեց խոստումը պատերազմից հետո:

Թուրքիայի բաժանման մասին ռուս-ֆրանս-բրիտանական գաղտնի համաձայնագրի մասին իտալական կողմը դեռևս 1916 թ. մայիսին կասկածներ ուներ և հարցում էր կատարել բրիտանացիներին: Դրա համար առիթ էր հանդիսացել այն հանգամանքը, որ Բրիտանիայի վարչապետ Հերբերտ Ասքուիթը ապրիլի 26 (մայիսի 9)-ին հայտարարել էր, որ առաջին անգամ Ռուսաստանի և Բրիտանիայի միջև լիակատար համաձայնություն է տիրում: Սակայն Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ԱԳ նախարարները և նրանց Լոնդոնում, Փարիզում, Պետրոգրադում և Հռոմում դեսպանները երկարատև քննարկումներից հետո որոշեցին գաղտնի պահել Սայքս-Պիկոյի համաձայնագրի գոյությունը և իտալական կողմին համոզեցին, որ թուրքական տարածքների բաժանման հարցում մնում են Լոնդոնի համաձայնագրի շրջանակներում¹:

Այսպիսով՝ դաշնակիցները իտալացիների թիկունքում գաղտնի համաձայնություն էին կնքել, իսկ այժմ նույնիսկ չէին ցանկանում տեղյակ պահել նրան այդ մասին: Դա ցույց է տալիս այդ տերությունների սերը դիվանագիտական խարդավանքների նկատմամբ:

Հուլիսի 4 (17)-ին Փարիզում իտալական դեսպան Տոմազո Տիտտոնին Արիստիդ Բրիանի հետ հանդիպման ժամանակ մատնանշել էր, որ Իտալիան հետաքրքրված է ոչ միայն Ադալիայով, այլ նաև՝ Սիրիայով և Կիլիկիայով: Վարչապետը պատասխանել էր, որ Ադալիան արդեն դաշնակիցների կողմից տրվել է Իտալիային, իսկ Սիրիան և Կիլիկիան ամբողջությամբ մտնում են Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ²:

Այստեղ երևում է, որ իտալական հավակնությունները նույնպես աճում էին: Միաժամանակ կարելի է փաստել, որ դրանով վերջիններս փորձում էին շոշափել Ֆրանսիայի նկրտումների լրջությունն այդ տարածաշրջանում:

Իտալական զավթողական ձգտումները պայմանավորված էին ոչ միայն հռոմեական նախկին կայսրության տարածքներին տիրելու ազգայնական նկրտումներով, այլ նաև իտալացի գյուղացիներին հողով ապահովելու ցան-

¹ Раздел Азиатской Турции, с. 189-197.

² Նույն տեղում, էջ 213:

կոչւթամբ: Հողագուրկ գյուղացիների մեծ արտագաղթ կար Իտալիայից: Փոքր Ասիայի տարածքներին տիրելու դեպքում իտալական իշխանությունները հույս ունեին այդ իտալացիներին բնակեցնել բերրի տարածքներում և պահել իտալական պետության սահմաններում¹: Այդպիսով կլուծեին ժողովրդագրական, հողային ու տնտեսական, ինչպես նաև կայսրապաշտական մի շարք խնդիրներ:

1916 թ. սեպտեմբերին Իտալիայի ԱԳ նախարար Սիդնի Սոննինոն ի վերջո տեղեկացավ Սայքս-Պիկոյի համաձայնագրի գոյության մասին: Դա նրան խիստ բարկացրեց, քանի որ դաշնակիցները Իտալիայի թիկունքում գաղտնի համաձայնագիր էին կնքել: Իտալիայում բրիտանական դեսպան Ռոնել Ռոդից նա պահանջեց բացատրություններ տալ հարցի շուրջ²:

Բնական է, որ Իտալիայի հակազդեցությունը և դժգոհությունը պետք է լիներ բավական կոշտ: Նրա համար չափազանց վիրավորական էր Անտանտի դաշնակիցների պահվածքը:

Բրիտանիայի ԱԳ նախարար Էդուարդ Գրեյը ստիպված էր հոկտեմբերի 5-ին Լոնդոնում իտալական դեսպան մարկիզ Գուլիելմո Իմպերիալին տրամադրել համաձայնագրի պայմանները³: Հոկտեմբերին Ս. Սոննինոն Անտանտի մյուս երեք տերություններից պահանջում էր Լոնդոնում հրավիրել քառակողմ կոնֆերանս և նոր համաձայնագիր կնքել, ուր ներկայացված կլինեին նաև Իտալիայի պահանջներն ու ձգտումները⁴:

Նոյեմբերի 6 (19)-ին Ս. Սոննինոն Անտանտի ԱԳ նախարարներին հուշագրեր ներկայացրեց, ուր ներկայացվում էին իտալական պահանջները Միջերկրականի ավազանում⁵: Իտալիան պահանջում էր, Ադալիայից բացի, իրեն հանձնել այդ երկրամասին սահմանակից Ադանայի, Կոնիայի, Ալդինի նահանգները և Ջմյուռնիան: Դա բացատրում էին տնտեսական, քաղաքական, մշակութային, աշխարհագրական տարբեր գործոններով: Իտալացիները ցանկանում էին վերահսկել Կոնիայից Կիլիկիայով անցնող երկաթուղագիծը, անհրաժեշտ էին համարում ստանալ Մերսինը, քանի որ այն միակ հարմար նավահանգիստն էր, որից կարող էին օգտվել: Այդ ամենը բացատրում էին Միջերկրականի արևելքում Անտանտի դաշնակից երկրներին հավասար իրավունքներ ապահովելու ցանկությամբ: Հուշագրում նշվում էր, որ

¹ Bosworth R.J.B., Italy and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire edited by Marian Kent, London, 2005, p. 65.

² Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation, p. 104.

³ Раздел Азиатской Турции, с. 257.

⁴ Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation, p. 105.

⁵ Раздел Азиатской Турции, с. 253-260.

Աղանայի ու Մերսինի շրջանները Սիրիայի հետ կապված չեն «ոչ աշխարհագրական, ոչ էլ պատմական, էթնիկական, մշակութային և ռազմավարական տեսանկյունից»¹:

Այդ ընդարձակ պահանջները հակասում էին Սայքս-Պիկոյի համաձայնագրի մի շարք կետերին, հատկապես՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի շահերին և լուրջ դժգոհություն առաջացրին վերջինների մոտ²:

Իտալական ծավալապաշտական այդ ընդարձակ նկրտումները պայմանավորված էին մի կողմից Միջերկրականի արևելքում ամրապնդվելու ձգտումով, մյուս կողմից՝ նպատակ ունենալ պատժել դաշնակիցներին՝ իրենց խաբելու համար:

Իտալացի ազգայնականները համոզված էին, որ Փոքր Ասիայի ամբողջ հարավը՝ Իզմիրից (Չմյուռնիա) մինչև Ալեքսանդրետ, պետք է ոչ միայն միացվեին Իտալիային, այլ նաև վերաբնակեցվեին իտալացիներով: Իտալական ծավալապաշտության գլխավոր ջատագովներից էր Իտալիայի գաղութների նախարար (1916-1919 թթ.) Գասպար Կոլոսիմոն³:

1917 թ. հունվարի 16 (29)-ին Մեծ Բրիտանիայի նոր ԱԳ նախարար Արթուր Բալֆորը Իտալիայի, Ֆրանսիայի դեսպաններ՝ Գ. Իմպերիալիի, Պ. Կամբոնի և Ռուսաստանի հավատարմատար Կոստանդին Նաբոկովի հետ Լոնդոնում քննարկեց իտալական պահանջները⁴: Գ. Իմպերիալին հայտարարեց, որ պետք է բավարարվեն հուշագրերով Իտալիայի ներկայացրած ձգտումները: Պ. Կամբոնը հակադարձում էր, որ Աղանան ու Մերսինը կապված են Սիրիայի հետ, և մինչև Անամուռ ընկած տարածքը պետք է անցնի Ֆրանսիային, իսկ Կոնիայից դեպի ծով ամենահարմար ելքը Ադալիան է: Ա. Բալֆորն առաջարկում էր իտալական ձգտումները բավարարել Փոքր Ասիայի մյուս հատվածներում: Կ. Նաբոկովը պահանջում էր ապագա թուրքական պետությանը բավարար տարածք թողնել կենսունակությունը պահելու համար և դեմ էր Իզմիրը Իտալիային հանձնելուն: Որոշվում է Կ. Պոլսում բրիտանական նախկին դեսպան Լուի Մալլետին հանձնարարել կազմել մի նոր, բոլորի համար ընդունելի նախագիծ:

Ինչպես տեսանք, Կիլիկիան Լոնդոնի և Սայքս-Պիկոյի համաձայնագրերով պետք է անցնեի Ֆրանսիային, հետևաբար՝ իտալական ձգտումները

¹ Նույն տեղում, էջ 255:

² Նույն տեղում, էջ 260-262:

³ Bosworth R.J.B., Italy and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire edited by Marian Kent, London, 2005, p. 67.

⁴ Նույն տեղում, էջ 285-286:

հակասության մեջ էին մտնում նախորդ պայմանագրերի հետ: Փաստորեն՝ Կիլիկիան կռվախնձոր էր դարձել ֆրանս-իտալական հարաբերություններում:

Հունվարի 30 (փետրվարի 12)-ին գումարվեց երկրորդ նիստը: Ա. Բալֆորը իտալական դեսպանին հիշեցրեց, որ Իտալիան Լոնդոնի համաձայնագրով պարտավորվել է հարգել դաշնակիցների պայմանավորվածությունները և առաջարկեց ստանալ Այդինը, իսկ Կիլիկիայում ճանաչել Ֆրանսիայի իրավունքները: Սակայն դեսպանը կտրականապես առարկեց ցանկացած որոշման դեմ, որը Ադանան և Մերսինի նավահանգիստը չէր ներառի իտալական ազդեցության գոտու մեջ: Դրանով բանակցությունները ձախողվեցին¹:

Բնականաբար, պատերազմի ամենաթեժ փուլում, երբ մի կողմից անհրաժեշտ էր կենտրոնացնել բոլոր ուժերը, մյուս կողմից հասունանում էին հեղափոխական շարժումները, Անտանտի տերությունները չէին կարող չգտնել փոխգիշումնային տարբերակ: Քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ Ֆրանսիան չէին պատրաստվում հրաժարվել Սայքս-Պիկոյի համաձայնագրով իրենց անցնելիք որևէ տարածքից, ապա իտալական ձգտումները պետք է բավարարում գտնեին Փոքր Ասիայի այլ հատվածներում:

Փետրվարի 3 (16)-ին բրիտանական ԱԳՆ կողմից Գ. Իմպերիալին տրամադրվեց հուշագիր, ուր համեմատության մեջ մանրամասն ներկայացվում էին Իտալիային առաջարկվող Կոնիայի, Ադալիայի, Այդինի, Բրուսայի տարածքների և ֆրանսիական ազդեցության տակ անցնող երկրամասերի բնակչությունը, բարեբերությունը, բնական ռեսուրսները, տեղական հարստությունները, երկաթուղիները, ճանապարհները, նավահանգիստները, առևտուրը և ցույց էր տրվում, որ դրանք հավասարազոր են իրար²:

Այս ընթացքում Ռուսաստանում տապալվեց ցարական իշխանությունը, և մարտի 2 (15)-ին ձևավորվեց Ժամանակավոր կառավարությունը, իսկ Ֆրանսիայում մարտի 6 (19)-ին նոր կառավարություն ձևավորեց Ալեքսանդր Ռիբոն:

Ռուսական նոր ԱԳ նախարար Պավել Միլյուկովը մարտի 8 (21)-ին տեղեկացրեց Լոնդոնում, Փարիզում, Հռոմում և Տոկիոյում ռուսական դեսպաններին, որ Ժամանակավոր կառավարությունը հավատարիմ է դաշնակիցներ

¹ Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation, p. 107. Раздел Азиатской Турции, с. 289-291.

² Раздел Азиатской Турции, с. 293-296.

րի հետ նախկինում կնքված բոլոր համաձայնագրերին և պահանջեց, որ Անտանտի երկրները նույնպես հավաստեն իրենց պատրաստակամությունը պահպանելու Ռուսաստանի հետ կնքած պայմանագրերը¹:

1917 թ. ապրիլի 6 (19)-ին Սեն ժան դե Մորիենում կայացած հանդիպման ժամանակ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի վարչապետներ Դ. Լյոյդ Ջորջը և Ա. Ռիբոն համաձայնության եկան Ս. Սոննինոյի հետ, որով պատերազմից հետո Իտալիային պետք է անցնեին Փոքր Ասիայի հարավարևմտյան տարածքները՝ Իզմիրի, Այդինի և Ադալիայի նահանգները՝ մինչև Ադանայի նահանգի սահմանը: Վերջինս անցնելու էր Ֆրանսիային: Ա. Ռիբոն համաձայնեց՝ որպես բարի կամքի դրսևորում, Իտալիային թողնել Ադանայի նահանգի Մերսինից արևմուտք ընկած տարածքները՝ չնայած Սայքս-Պիկոյի համաձայնագրով դրանք անցնելու էին Ֆրանսիային²: Ալեքսանդրետում, Հայֆայում, Աքրայում Իտալիան ունենալու էր այն իրավունքներն ու արտոնությունները, որոնք Ֆրանսիան և Բրիտանիան փոխադարձաբար ապահովել էին իրենց համար: Մերսինը ճանաչվելու էր պորտո-ֆրանկո, իսկ այնտեղից իտալական ապրանքների համար ազատ երկաթուղային տրանզիտ էր ապահովվելու Ադանայի նահանգով դեպի Իտալիայի ազդեցության գոտի: Կիլիկիայի բոլոր նավահանգիստներում իտալական նավերի ու ապրանքների համար խոչընդոտներ չէին լինելու³:

Հետագա ամիսներին քննարկվեց Սեն ժան դե Մորիենի համաձայնագրի հաստատման հարցը: Բանակցությունները եռակողմ էին, քանի որ Ռուսաստանում հակապատերազմական տրամադրություններն էին իշխող դարձել, իսկ ժամանակավոր կառավարությունը հայտարարել էր առանց բռնազավթումների հաշտություն կնքելու պատրաստակամության մասին՝ չնայած մարտի 27-ին հայտարարել էր, որ հավատարիմ է ցարական կառավարության նախկինում կնքած միջազգային պայմանագրերին⁴:

Փաստորեն՝ եթե մեկ տարի առաջ Իտալիային էին դուրս թողել բանակցությունից և նրա թիկունքում գաղտնի համաձայնագիր էին կնքել, որը բավական լուրջ անախորժություններ ստեղծեց դաշնակիցների միջև, ապա այժմ նույնը կրկնում էին Ռուսաստանի հետ: Ռուսական կողմը երկար ժա-

¹ Նույն տեղում, էջ 308-309:

² Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation, p. 108.

³ Раздел Азиатской Турции, с. 348-349.

⁴ Ալեքսիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 11:

մանակ ապարդյուն փորձում էր տեղեկանալ առանց իրեն տեղի ունեցած բանակցությունների և համաձայնության մասին:

Բնականաբար, ռուսական կողմը չափազանց դժգոհ մնաց, քանի որ առանց իր կարծիքը հարցնելու դաշնակիցները նոր համաձայնություն էին կնքել¹:

Համաձայնագիրը երեք տերությունների կողմից հաստատվեց 1917 թ. օգոստոսի 18-սեպտեմբերի 26-ը փոխանակված նոտաներով²: Ըստ դրա՝ Իտալիային էր անցնելու «Կանաչ» գոտին՝ Իզմիրի և Կոնիայի նահանգների մեծագույն մասը: Իտալական ազդեցության տարածք էր ճանաչվում «C» գոտին՝ Իզմիրի հյուսիսային և Բուրսայի հարավային շրջանները:

Մ. Անդերսոնն այդ գործարքի մասին նշում է, որ «Ըստ էության սա մի փորձ էր Կիլիկիայից շեղելու իտալական ծավալապաշտությունը, որտեղ այն սուր կերպով բախվում էր Ֆրանսիայի շահերին և բավարարելու այն Արևմտյան Փոքր Ասիայում»³:

Այսպիսով՝ 1916-1917 թթ. Կիլիկիան լուրջ կռվախնձոր էր դարձել Իտալիայի ու Ֆրանսիայի միջև: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ դաշնակիցները Սայքս-Պիկոյի համաձայնագիրը կնքել էին Իտալիայից գաղտնի: Դա վիրավորել ու բարկացրել էր վերջինիս: Օգտվելով առիթից՝ Իտալիան որոշեց վրեժ լուծել և փորձեց ընդարձակել տիրույթները Միջերկրականի հյուսիսարևելյան ափին: Դա հնարավորություն կտար նրան վերահսկել Բեռլին-Բաղդադ երկաթուղին և Միջերկրականի արևելքի ծովային ուղիները: Սակայն Ֆրանսիան չիրաժարվեց Կիլիկիայի նման հարուստ և ռազմավարական առումով կարևոր երկրամասին տիրելու գաղափարից, որի արդյունքում իտալական նկրտումները բավարարում ստացան Փոքր Ասիայի արևմտյան և կենտրոնական շրջաններում:

¹ Раздел Азиатской Турции, с. 99-100, 322.

² Graham M. F., Goldstein E., Langhorne R., Guide to international relations and diplomacy, London, 2002, p. 184.

³ Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, էջ 146:

1.4 ԶԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

1915 թ. աշնանը ռուսական դիվանագիտությունն առաջ քաշեց Օսմանյան կայսրությանը՝ պատերազմից դուրս բերելու մի հետաքրքիր նախագիծ: Ռուսներին հայտնի էր դարձել, որ տարածայնություններ էին առաջացել երիտթուրքական ղեկավար եռյակի՝ Զեմալի, Էնվերի, Թալեաթի միջև: Քննարկվում էր օսմանյան ռազմածովային նախարար և 4-րդ բանակի հրամանատար Զեմալ փաշային համոզել միանալու Անտանտի երկրներին և ապստամբելու սեփական կառավարության դեմ:

Նախագիծը ռուսական դիվանագետներին առաջարկել էին հայ գործիչները, որոնք հույս ունեին փրկելու Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում ապաստանած հայ տարագիրներին: Այդ տարածքները գտնվում էին Զեմալի վերահսկողության տակ: Միաժամանակ այդ ծրագրով նախատեսվում էր Զեմալի իշխանության ներքո ստեղծել օսմանյան դաշնային պետություն, որի մեջ մտնելու էր նաև ինքնավար Հայաստանը՝ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի միավորմամբ:

Ռուսական նավահանգիստների ոմբակոծումը և Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելը կատարվել էր առանց Զեմալի իմացության: Դա թուրքական կառավարության 1914 թ. նոյեմբերի 29-ի գաղտնի նիստում լուրջ բախում էր առաջացրել նրա և Էնվերի միջև, նույնիսկ փորձել էին դիմել զենքի օգնությանը: Միայն Թալեաթի ու գերմանացիների միջամտությամբ էր կանխվել արյունահեղությունը: Այդ օրվանից երկու եռապետերը ռիսերիմ թշնամիների էին վերածվել:

Զեմալ փաշան դժգոհ էր Էնվերից ու Թալեաթից: Բացի այդ, Զեմալը չափազանց փառասեր էր, չէր սիրում գերմանացիներին և դա բացահայտորեն ցույց էր տալիս: Նա Սիրիայում իրեն պահում էր ինչպես սուլթան: Կ. Պոլսում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուն վկայում է, որ նա այնտեղ ուներ սեփական արքունիք, իրականացնում էր ուրբաթօրյա աղոթքի արարողություն, սեփական կարգադրություններ էր ազատորեն հրապարակում և շատ դեպքերում արհամարհում էր Կ. Պոլսից եկող հրահանգները, միաժամանակ ատում էր բոլոր հայատակ ժողովուրդներին: Դեսպանը նրան համեմատում է Մարկոս Անտոնիոսի հետ և նշում է, որ Զեմալը նպատակ

¹ Քէչեան Ա., Կարմիր դրոագներ հերոսներու կեանքէն, 1915-1918, հ. Ա, Պուրթշ, 1938, էջ 148, 188:

ուններ կայսրության մի հատվածում սեփական պետությունը հիմնել և հաստատել իր ժառանգական դինաստիան¹: Օգտագործելով այն, որ Ջեմալը դժգոհ էր մյուս երկու եռապետերից, ինչպես նաև նրա փառասիրությունը՝ հնարավոր էր համարվում նրան դրդել ապստամբության՝ որոշակի խոստումների դիմաց:

1915 թ. դեկտեմբերի 12 (25)-ին Փարիզում, Լոնդոնում, Հռոմում ռուսական դեսպաններ Ա. Իզվոլսկուն, Ա. Բեկենդորֆին, Մ. Գիրսին ուղարկած հեռագրերում Ս. Սազոնովը տեղեկացնում էր, որ Կ. Պոլսի հայկական շրջանակներից հաղորդել են, որ իբր հավանականություն կար Ջեմալին թեքելու երիտթուրքական կառավարության ու գերմանացիների դեմ բացահայտ ապստամբության, եթե Անտանտի պետությունները նրան առաջարկեին հետևյալ պայմանները.

1. Երաշխավորելու էին անկախությունն ու անձեռնմխելիությունը Ասիական Թուրքիայի, որը կազմված էր լինելու սուլթանի գերիշխանության ներքո գտնվող հետևյալ ինքնավար նահանգներից՝ Սիրիա, Պաղեստին, Միջագետք, Արաբիա, Քրդստան և Հայաստան՝ Կիլիկիայով:

2. Սուլթան էր հռչակվելու Ջեմալը՝ գահը ժառանգաբար փոխանցելու իրավունքով:

3. Ջեմալը պարտավորվում էր թուրքական կառավարությանն ու սուլթանին՝ որպես գերմանացիների ձեռքում հայտնված գերիների, գահընկեց հայտարարել և արշավել նրանց վրա:

4. Կ. Պոլսի վրա արշավելու ժամանակ Անտանտի տերությունները Ջեմալին մատակարարելու էին պարեն, զենք, հրետանի:

5. Պատերազմի ավարտից հետո տերությունները Ջեմալին ֆինանսական օժանդակություն էին տրամադրելու:

6. Ջեմալը հրաժարվելու էր Կ. Պոլսից ու նեղուցներից:

7. Ջեմալը պարտավորվում էր անմիջապես քայլեր ձեռնարկել՝ հայերին փրկելու և մինչև պատերազմի ավարտը կերակրելու համար:

Ս. Սազոնովը կարծում էր, որ անհրաժեշտ է հայերի միջոցով Ջեմալի հետ բանակցություններ սկսել, քանի որ ցանկացած տեսակի ներքին խնդիրները կարող էին Թուրքիայի ուժերը թուլացնել և ծառայել իրենց շահերին, եթե նույնիսկ Ջեմալին չհաջողվեր կառավարությանը տապալել և

¹ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, 1990, էջ 143-147:

գերմանացիներին վտարել, այնուամենայնիվ օսմանյան կայսրությունում խռովությունը օգտակար կլիներ: Նա դեսպաններին առաջարկում էր համապատասխան երկրների ԱԳ նախարարների հետ խորհրդակցել և պատասխաններն անմիջապես հեռագրել իրեն¹:

Այդ տեղեկությունը ստացվել էր դեկտեմբերի 12 (25)-ին Բուխարեստում ռուսական դեսպան Ստանիսլավ Պոկլևսկու միջոցով, որը հանդիպում էր ունեցել Հ. Ջավրյանի հետ: Վերջինս առաջարկել էր, որ հայերը փորձեն կապեր հաստատել Ջեմալի հետ, և հաջողության դեպքում Անտանտի երկրները շարունակեն բանակցությունները²:

Հաջորդ օրը Մ. Գիրսը Ս. Սազոնովին իրազեկեց, որ Ս. Սոննինոն լիովին համաձայն էր Ջեմալի հետ բանակցելու պայմաններին, եթե հաջողության որևէ հույս կար, քանի որ դրանով բրիտանացիներին կազատեին Եգիպտոսի վրա թուրքական հարձակման վտանգից, իսկ գերմանացիներին կզրկեին Փոքր Ասիայի մարդկային ներուժից, որի վրա նրանք հույս էին դնում³: Ա. Իզվոլսկին հեռագրեց (14/27.12.1915), որ Ֆրանսիայի վարչապետ և ԱԳ նախարար Ա. Բրիանը հետաքրքրությամբ է վերաբերվել Ջեմալի հետ բանակցելու մտքին, խոստացել է այն քննարկել կառավարության նիստում և կարծիք է հայտնել, որ առաջարկված պայմանները կարող են շոշափել Բրիտանիայի շահերը⁴:

Սակայն հաջորդող օրերին պարզ դարձավ, որ ֆրանսիական կողմին այնքան էլ չեն ոգևորել Ջեմալի հետ համաձայնություն կայացնելու պայմանները: Փաստորեն՝ այդ նախագիծը կարող էր բավարարել ռուսական կողմին, քանի որ վերջինս ստանում էր Կ. Պոլիսը: Հայերը ձեռք էին բերում բաղձալի ինքնավարությունը և լուծում էին Սիրիայի անապատներում հայտնված հարյուրհազարավոր տարագիրների անվտանգության խնդիրը: Սակայն Ֆրանսիան և Բրիտանիան ոչինչ չէին ստանում Օսմանյան կայսրության ժառանգությունից: Ինչպես տեսնում ենք, առաջարկող պայմանները դուրս էին եկել հայկական շրջանակներից և խնդիր ունեին բավարարելու հայկական ու ռուսական շահերը: Հետևաբար՝ այն հանդիպելու էր ֆրանս-բրիտանական լուրջ ընդդիմությանը:

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 1-2: Раздел Азиатской Турции, с. 142-143.

² Раздел Азиатской Турции, с. 143-144. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների, էջ 676:

³ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 2: Раздел Азиатской Турции, с. 144.

⁴ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 3: Раздел Азиатской Турции, с. 144.

Դեկտեմբերի 16 (29)-ին Ա. Բրիանը հայտնում էր Ա. Իզվոլսկուն, որ Ջեմալի հետ համաձայնության դեպքում ռուսները ստանալու են Կ. Պոլիսը, իսկ Ֆրանսիան չի ստանալու Սիրիան և Կիլիկիան, որոնք խոստացվել են իրեն: Վարչապետը նշեց, որ կարող են բանակցություններին համաձայնություն տալ այն պայմանով, որ Ֆրանսիայի տարածքային նկրտումները Ասիական Թուրքիայում պաշտպանվեն¹:

Բրիտանական կողմը նույնպես ոգևորությամբ չընդունեց Ջեմալի հետ համաձայնության գալու գաղափարը: ԱԳ նախարարի օգնական Արթուր Նիկոլսոնը ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆի հետ հանդիպման ժամանակ կասկած հայտնեց, որ Ջեմալի միջոցները բավարար են իշխանությունը գրավելու համար, իսկ ժառանգաբար գահը փոխանցելու գաղափարը դժվար իրականանալի էր համարում, միաժամանակ տեղեկացրեց, որ իրենք բանակցում են արաբների հետ և անհրաժեշտ է, որ Ջեմալի հետ բանակցությունների լուրերը չհասնեն Արևելք: Է. Գրեյը նույնպես ռուսական դեսպանին հայտնեց, որ արաբներին խոստացել են անկախ խալիֆայություն ստեղծել, իսկ Ջեմալը, հակառակորդ լինելով արաբներին, որևէ բան անել չի կարող²:

Դեկտեմբերի 17 (30)-ին Ս. Սազոնովը Ա. Իզվոլսկուն պարզաբանեց, որ Ջեմալի հետ բանակցությունները համարում է միջոց, որով կարող են Թուրքիայում խռովություն առաջ բերել և ձախողել Եգիպտոսի վրա արշավանքը, այդ պատճառով էլ հայերի ներկայացրած ծրագիրը բառացիորեն ներկայացրել է դաշնակիցների քննարկմանը՝ չմտնելով մանրամասնությունների մեջ և ամբողջությամբ չպաշտպանելով Ջեմալի ցանկությունները: Նշում էր, որ ինքը ենթադրում էր հարցը քննարկել, երբ դաշնակիցներն ընդունեին բանակցելու գաղափարը, քանի որ հայերի միջոցով ներկայացրած բոլոր կետերը չէ, որ պետք է ընդունեին, այլ կարող էին Ջեմալի պատվասիրությունն օգտագործել նաև այլ պայմաններով: Նախարարն առաջարկում էր վստահեցնել Ա. Բրիանին, որ իրենք ցանկություն չունեն վնասելու Ֆրանսիայի շահերը և միայն կարիք ունեն պարզելու նրա ցանկություններն ու պայմանները³:

Ա. Իզվոլսկին երկու օրից (19.12.1915/01.01.1916) պատասխանեց, որ Ս. Սազոնովի հեռագրի բովանդակության մասին տեղեկացրել է Ա. Բրիա-

¹ Раздел Азиатской Турции, с. 145.

² Նույն տեղում, էջ 147-148:

³ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 4: Раздел Азиатской Турции, с. 146.

նին, որը լավ տպավորություն էր ստացել դրանից, և նրա անհանգստությունը կարծես նահանջել էր: Վերջինս կրկին տեղեկացրել է, որ ֆրանսիական կառավարությունը թեև չի հավատում Ջեմալի ընդունակություններին՝ նշված դերի համար և նույնիսկ որոշակի մտավախություն ունի, որ դա նրա կողմից թակարդ է, այնուամենայնիվ, պատրաստ են նրա հետ բանակցություններ սկսել, սակայն պայմանով, որ ապահովվեն Ֆրանսիայի իրավունքները Պադեստինում և Սիրիայում՝ Կիլիկիայով հանդերձ, որոնք ճանաչված են Ռուսաստանի կողմից 4. Պոլսի ու նեղուցների մասին Ֆրանսիայի հետ կնքված համաձայնությամբ: Ա. Իզվոլսկին փորձել էր Ա. Բրիանից ճշտել, թե արդյոք ցանկանում են, որ նշված վայրերն անպայման Ֆրանսիային կցվեն, թե հնարավոր է այլ տարբերակ, օրինակ՝ պրոտեկտորատ սուլթանի անվանական գերիշխանության ներքո, որը կարող էր ավելի նպաստավոր ու գործնական լինել Ֆրանսիայի համար և հեշտացնել բանակցությունները Ջեմալի հետ, սակայն Ա. Բրիանը նշել էր, որ չի կարող անմիջապես պատասխանել այդ հարցադրմանը, սակայն եթե բանակցությունները հանգեն դրան, ապա դաշնակիցները պետք է հատուկ քննարկեն այդ խնդիրը¹:

Դեկտեմբերի 20 (հունվարի 2)-ին Ա. Սազոնովը Ա. Իզվոլսկուն և Ա. Բենկենդորֆին տեղեկացրեց, որ հայ միջնորդներն առաջարկում են բանակցությունները Ջեմալի հետ վարել Եգիպտոսից: Երկու օրից Ա. Իզվոլսկին տեղեկացրեց, որ ֆրանսիական կողմը բրիտանացիներին առաջարկել է բանակցությունները Ջեմալի հետ Եգիպտոսում վերցնել իրենց վրա՝ արաբների հետ վարվող բանակցություններին զուգահեռ²:

Դեկտեմբերի 28 (հունվարի 10)-ին Ա. Բենկենդորֆը տեղեկացնում է, որ բրիտանական կողմն առաջարկել է բանակցությունները թողնել Կահիրեի ֆրանսիական դեսպանի ուսերին և իսկ Հ. Չավրյանը մեկնի Եգիպտոս³: Փաստորեն՝ կրկին հայ գործիչների ուսերին էին տեղությունների ներկայացուցիչները ցանկանում թողնել կասկածելի ապագա ունեցող բանակցությունների խնդիրը:

Բրիտանացիները փորձում էին հեռու մնալ Ջեմալի հետ բանակցությունների պատասխանատվությունը ստանձնելուց: Դրանով կարող էին վիրավորել շերիֆ Հուսեյնին, որի միջոցով արաբական ապստամբություն էր նախապատրաստվում: Մյուս կողմից հասկանում էին, որ ֆրանսիացիները,

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 5: Раздел Азиатской Турции, с. 148-149.

² Раздел Азиатской Турции, с. 149.

³ Նույն տեղում, էջ 150:

ովքեր ցանկանում էին անպայման գրավել Սիրիան և Կիլիկիան, կարող էին դժգոհել, քանի որ Ջեմալի պայմաններից մեկը օսմանյան պետության ասիական տարածքների ամբողջականության պահպանումն էր:

Ի վերջո, դեկտեմբերի 30 (հունվարի 12)-ին Ս. Սազունովը Ա. Իզվոլսկուն տեղեկացրեց, որ Ջեմալի հետ բանակցությունները ճիշտ կլինի կենտրոնացնել ֆրանսիացիների ձեռքում: Այդ կարծիքին էր նաև Բրիտանիայի ԱԳ նախարար Է. Գրեյը: Ռուս նախարարն առաջարկում էր Ա. Բրիանին տեղեկացնել, որ պատրաստ են ֆրանսիացիներին թողնել ղեկավար դերը Ջեմալի հետ բանակցություններում, քանի որ Սիրիայի հետ կապված հարցը շոշափում էր նրանց շահերը: Ցանկալի էր համարում, որ իրենց տեղյակ պահեն բանակցությունների ընթացքի մասին և խոստանում էր ռուսական ներկայացուցիչների միջոցով ամեն կերպ աջակցել դաշնակից ֆրանսիացիներին¹:

1916 թ. հունվարի 27 (փետրվարի 9)-ին Պ. Կամբոնը Ա. Իզվոլսկուն տեղեկացրեց, որ բրիտանացիների հետ համաձայնության են եկել արաբական պետություն կազմավորելու հարցում, իսկ Ֆրանսիան պետք է ստանա Սիրիան և Կիլիկիան²: Դրանով ֆրանսիացիներն ակնարկում էին, որ դեմ են Ջեմալի հետ բանակցելու գաղափարին: Ինչպես նախապես տեսանք, այս շրջանում Մ. Սալքսը և Ժ. Պիկոն արդեն նախնական համաձայնության էին եկել վերոնշյալ հարցերի շուրջ: Հետևաբար՝ Ջեմալի հետ բանակցելն անիմաստ էր դարձել:

1916 թ. մարտի 9 (22)-ին Ա. Իզվոլսկին հեռագրեց Ս. Սազունովին, որ Հ. Ջավրյանը հանդիպում է ունեցել Ա. Բրիանի հետ, և վերջինս նշել է, որ «հարմար չի գտնում Ջեմալի հետ բանակցությունների մեջ մտնելը»³: Այսպիսով՝ Ջեմալի հետ հարաբերություններ հաստատելու և նրան թուրքերի դեմ ապստամբության դրդելու նախագիծը, որն առաջ էր քաշվել որոշ հայ գործիչների առաջարկով և խրախուսվում էր նաև ռուսական դիվանագիտության կողմից, ծախողվեց:

Հետաքրքիր է նշել, որ Ջեմալի հետ բանակցությունների գաղափարը առաջ քաշվեց անմիջապես այն բանից հետո, երբ 1915 թ. նոյեմբերին Ջեմալը մեկնեց Կ. Պոլիս, ուր մնաց երկու շաբաթ և Էնվերի հետ քննարկեց տիրող իրավիճակը⁴:

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 37, թ. 6:

² Раздел Азиатской Турции, с. 151-152.

³ Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների, էջ 676: Раздел Азиатской Турции, с. 167.

⁴ Memories of a Turkish statesman, p. 168.

Այդ բանակցությունների գաղափարը նրանց միջև քննարկված և Անտանտի համար նախատեսված ծուղակ կարող էր լինել, որով կանխվեց Ալեքսանդրեւոյի մոտ դաշնակիցների ավիանման նախագիծը, քանի որ թուրքերը հիմնական ուժերին ուղարկել էին Դարդանեւ և բավարար ուժեր չունեին դիմակայելու հակառակորդին: Հնարավոր է նաև այն տարբերակը, որ Ջեմալն ու Էնվերը չէին կարողացել լեզու գտնել: Այս վերջինը մեզ ավելի հավանական է թվում: Դրա օգտին են խոսում Ջեմալի հետ անմիջական շփման մեջ գտնվող որոշ գործիչների վկայությունները:

Հաուրանում հայ գաղթականների հարցերով զբաղվելու համար Ջեմալի կողմից տեսուչ նշանակված չերքեզ Հասան Ամջան վստահեցնում է, որ փաշան ամեն կերպ փորձում էր հայերին բնակեցնել Սիրիայի ու Լիբանանի տարածքներում, նրանց համար ստեղծել քիչ թե շատ տանելի պայմաններ, խրախուսում էր արհեստագործության զարգացումը, որպեսզի հայերի հնարավորություններն օգտագործեր բանակի կարիքները հոգալու համար: Միաժամանակ ցույց է տալիս տեղական մյուս թուրք պաշտոնյաների ընդգծված թշնամանքը հայերի նկատմամբ և նրանց, ինչպես նաև Թալեաթի ջանքերը խանգարելու հայերին փրկելու Ջեմալի ծրագրերին: Հ. Ամջայի վկայությամբ Ջեմալը հաճախ հաշվի չէր առնում Կ. Պոլսից եկող՝ հայերին ոչնչացնելու հրահանգները¹:

Վերոնշյալ վկայությունը հաստատվում է նաև հայ գործիչների հուշերով: Ըստ Առաքել Քեչյանի՝ Սիրիայում 1915 թ. ստեղծված «Սև թաթ» հայկական գաղտնի կազմակերպությունը բանակցությունների մեջ է մտել անձամբ Ջեմալի հետ, փորձել է նրան թեքել դեպի Անտանտը, հասել է նրան, որ փաշան ավելի նպաստավոր պայմաններ է ստեղծել հայ տարագիրների համար²: Հայերը Սիրիայի, Լիբանանի, Պաղեստինի տարածքում ազատ տեղաշարժի ու աշխատանքի իրավունք ստացան, փոխարքային ուղղված նրանց խնդրագրերը հիմնականում դրական լուծում էին ստանում³: Փաստորեն՝ Ա. Քեչյանի տեղեկություններից նաև պարզ է դառնում, որ վերոնշյալ «Սև թաթ» կազմակերպությունն է Ջեմալի մոտ բարձրացրել Անտանտին միանալու գաղափարը: Հենց այդ խմբի առաջարկների հիման վրա էր Հ. Զավրյանը բանակցություններ սկսել Անտանտի երկրների հետ:

¹ Ամջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը), Երևան, 2007, էջ 39-41:

² Քեչյան Ա., Կարմիր դրոագներ, էջ 179-195:

³ Քելեշեան Մ., Սիւ-Մաւտեան (Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ), Պէյրութ, 1949, էջ 588:

Ջեմալը, նույնիսկ, 1916 թ. մայիսին «Սև թաթին» առաջարկել էր մահափորձ կազմակերպել Էնվերի դեմ, երբ տեղեկացել էր, որ վերջինս նպատակ ունի իր ձեռքը վերցնելու 4-րդ բանակի հրամանատարությունը, սակայն հայերն առաջարկել էին մահափորձի փոխարեն կազմակերպել խայտառակ պարտություն, որի արդյունքում 1916 թ. օգոստոսին Էնվերի գլխավորությամբ Սուեզի վրա արշավող թուրքական բանակը ջախջախիչ հարված էր ստացել¹։ Այս վերջին փաստը հաշվի առնելով՝ ավելի հավանական է թվում այն տեսակետը, որ Ջեմալը, Էնվերի նկատմամբ ունեցած դիսակալությունից դրդված և միաժամանակ սեփական փառասիրական ձգտումներին հակում տալու նպատակով, իսկապես հակված էր Անտանտի հետ հարաբերություններ հաստատելուն։

Այնուամենայնիվ, Ջեմալի միջոցով ապստամբություն բարձրացնելու և Օսմանյան պետությունը պատերազմից դուրս բերելու կամ թուլացնելու նախագիծը այդպես էլ ընթացք չստացավ՝ Մերձավոր Արևելքում ֆրանս-բրիտանական գաղութային անզուսպ հավակնությունների պատճառով։

¹ Քէլեան Ա., Կարմիր դրոագներ, էջ 200-206։

1.5 ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1917 Թ. ԵՎ 1918 Թ. ՍԿԶԲԻՆ

1917 թ. միջազգային նոր իրավիճակ ստեղծվեց, երբ Ռուսաստանում փետրվարի 27-ին տեղի ունեցած հեղափոխության արդյունքում տապալվեց ցարական վարչակարգը, իսկ ապրիլի 6-ին պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ը:

Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմքի վրա հաշտություն կնքելու հայտարարությամբ, միաժամանակ իր խնդիրներից մեկը համարեց ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը¹: Ռուսական կառավարության այդ դիրքորոշումը կրկին ոգևորեց հայ գործիչներին և նոր հույսեր արթնացրեց, քանի որ ցարական իշխանությունների վարած ոչ հայանպաստ քաղաքականությունը բավական ծանր հիասթափության պատճառ էր դարձել:

1917 թ. մարտի 23-ին ժամանակավոր կառավարությանն ուղարկած նամակում, հայությանը հետաքրքրող մի շարք հարցերի շարքում, կաթողիկոսը բարձրացնում էր նաև Հայաստանի ինքնավարության հարցը. «Այժմեան, անօրինակ պատերազմի ժամանակ, որ մղում է յանուն մանր ազգութիւնների իրաւանց և արդարութեան սկզբունքի և որի շնորհիւ Տաճկական Հայաստանում գտնուած հայութիւնը անօրինակ զոհեր է տուել, նոցա ապագայի և հայկական վիլայեթների խնդիրը պէտք է, վերջապէս, իւր արդարացի, պատմական լուծումը գտնէ, տալով նոցա կատարեալ ազատագրութիւն և ինքնուրոյնութիւն: Ես մեծայոյս եմ, որ վերանորոգուած Ռուսաստանը, քաջարի Դաշնակիցների համաձայնութեամբ, կստեղծէ Տաճկական նախկին վիլայեթների վրայ ազատ Հայաստան»²:

Անտանտի կողմից ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելը՝ նույնպես բավական ոգևորեց հայ գործիչներին, քանի որ այդ երկրին դիտում էին որպես ճնշված ազգերի պաշտպան:

Կոլոմբուսի (Օհայո, ԱՄՆ) համալսարանի պրոֆեսոր Ուիլբուր Սայբերտը, ներկայացնելով հայերի կրած տառապանքները և անվերապահ համակրանքը Անտանտի նկատմամբ, 1917 թ. մարտի սկզբին գրում էր. «Այս բոլոր փաստերն աչքի առաջ ունենալով, Հայաստանին ինքնավարություն շնորհելը ոչ միայն որպես սոսկ արդարության գործ է ներկայանում, այլ նաև անվիճարկելի պարտականություն համաձայնության տերությունների հա-

¹ Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 11:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 144, թ. 15:

մար, եթե նրանք հաղթեն պատերազմում»¹: Նա նաև նշում էր, որ հայերը ավելի բարձր զարգացում ունեն, քան շրջապատող ազգերը և արժանի են լիարժեք անկախության:

Ապրիլի 27-ին Պ. Նուբարին ուղարկած նամակում Գևորգ Ե կաթողիկոսը հույս էր հայտնում, որ «Ամերիկայի Հանրապետության երեւան գալը Եւրոպական մեծ պատերազմին, ինչպէս նաեւ Ռուսաստանի ներքին, խաղաղ մեծ յեղափոխութիւնը նոր եւ, ինչպէս ենթադրելի է, նպաստաւոր հանգամանքներ է ստեղծում Հայկական Դատի եւ հարցի լուծման համար»²:

“Армянский вѣстникъ” պարբերականում ապրիլի 23-ին տպագրվեց ամերիկյան “Sunday Strand” ամսագրի նախկին խմբագիր Վ. Վիլյամսի հոդվածը: Վերջինս, զարգացնելով Հայաստանի ինքնավարության գաղափարը, գրում էր. «Կիլիկիայի միավորումը չափազանց կենսական հարց է: ... Արդյոք խելացի կամ քաղաքագիտորեն կլինի նոր պետությունը թողնել առանց ելքի Միջերկրական ծով: Կարող են հակառակել, թե Կիլիկիայի միացումը հայկական պետությանը կվնասի Ֆրանսիայի շահերին հյուսիսային Սիրիայում կամ Իտալիային՝ Ադալիայում: ... Բացարձակ անհասկանալի է, թե երկու տերությունների շահերը ինչու՞ պետք է գերադասվեն նոր պետության շահերին: Պետք է անել ամեն ինչ, որպեսզի համաձայնեցվեն բոլոր օրինական և խելամիտ պահանջները Փոքր Ասիայի այս հատվածի նկատմամբ: Պատմականորեն այս տարածքում է ձևավորվել Փոքր Հայքի թագավորությունը, որը գոյություն ունեցավ մինչև 1375 թ.: Աշխարհագրականորեն Կիլիկիան նոր պետության համար կղառնա առևտրական բնական ելք, եթե չեն ցանկանում, որ նա հայտնվի նույն վիճակում, ինչ Սերբիան՝ «կապված պարկի մեջ»՝ ի վնաս իր տնտեսության և առևտրի, Կիլիկիան պետք է միացվի նոր ինքնավար պետությանը, այլապես Հայաստանը կախման մեջ է լինելու հարևան որևէ պետությունից, որպեսզի ապահովված լինի արտաքին աշխարհի հետ կապով: Եվ բացի դրանից, չնայած նոր պետությունը սկզբում կհամակերպվի այդ վիճակի հետ, սակայն հետագայում դա պատճառ կղառնա անխուսափելի և անվերջ դժգոհությունների, հուզումների և պայքարի, որի օրինակն է Սերբիան»³:

¹ Сайберт Уилбур, Справедливость дарования независимости Армении, “Армянский вѣстникъ”, 1917, N 10-11, с. 6.

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 10:

³ Уильямс У., Армянскія чаянія, “Армянский вѣстникъ”, 1917, N 16, с. 3-4.

Այսպիսով՝ կրկին բարձրացվում էր միացյալ Հայաստանի հարցը ռուս-լեզու մամուլում: Կասկածի տակ էին դրվում Ֆրանսիայի կամ Իտալիայի հավակնությունները Կիլիկիայում: Դա համընկնում էր այն շրջանին, երբ ֆրանս-իտալական սուր բանավեճ էր սկսվել հայկական այդ երկրամասի համար: Դա ռուսական նոր վերնախավի մտածելակերպի արտահայտումն էր: Փաստորեն՝ ռուսական կողմը կրկին շրջանառության մեջ էր մտցնում Հայաստանի և Կիլիկիայի վրայով Միջերկրական դուրս գալու տեսլականը:

Գարեգին Փաստրմաճյանը (Արմեն Գարո), ով կաթողիկոսի կողմից ԱՄՆ-ում ներկայացուցիչ էր նշանակվել, մինչև ԱՄՆ մեկնելը, մայիսի վերջին Պետերբուրգում հանդիպումներ ունեցավ ռուսական բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում՝ ԱԳ նախարար Միխայիլ Տերեչենկոյի ու նրա օգնական Պետրախի հետ: Այդ հանդիպումներից նա հետևյալ եզրահանգմանն էր եկել. «Ներկայ Ռուսական կառավարության կարծիքով Հայկական հարցի նպատակայարմար եւ հնարատու լուծումը հետեւեալն է՝ «Բուն Հայաստանը (6 վիլայէթները) եւ Կիլիկիան միասին կազմելու են մի ատոնոմ քաղաքական միութիւն, որը կը տրուի բոլոր պետութեանց համաձայնութեամբ Ռուսական պաշտպանութեան տակ»: Հայկական հարցի այս ձեւի լուծումը հնարատրութիւն պիտի տայ Ռուսաստանին տնտեսական անմիջական կապ ստեղծել Միջերկրականին հետ, որով Պոլսոյ եւ նեղուցներու հարցը կը կորցնէ իւր հրամայողական նշանակութիւնը: Արտաքին գործոց նախարարութեան կարծիքով, միայն Ամերիկայի Միացեալ Նահանգներն են որ պիտի կարողանան չեզոքացնել ֆրանսական ծրագիրները Կիլիկիայի նկատմամբ»¹:

Արտաքննապետ հայանպաստ հայտարարություններով հանդես եկավ նաև ֆրանսիական կողմը: Մայիսի 22-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում վարչապետ Ալեքսանդր Ռիբոն հայտարարեց, որ իր երկիրը հրաժարվում է գաղութացման քաղաքականությունից²: Սակայն Ա. Ռիբոյի հայտարարությունը անկեղծ չէր, քանի որ հենց այս շրջանում էր, որ ինքը Սեն ժան դե Մորիենում համաձայնության էր եկել Բրիտանիայի ու Իտալիայի հետ Մերձավոր Արևելքի բաժանման հարցում:

Իրադարձությունները, կարծես թե, ընթանում էին հայ ժողովրդի շահերին ու ձգտումներին համընթաց: Փաստորեն՝ Ֆրանսիան արտաքննապետ

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 154, թ. 17-18:

² Boghos Nubar's Papers, p. 437.

հրաժարվում էր Կիլիկիայից, իսկ Ռուսաստանն արդեն իսկ հրաժարվել էր Արևմտյան Հայաստանը գրավելուց:

Միջազգային նոր իրադրության պայմաններում Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը կրկին վերադարձավ միացյալ և ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպված էր եղել հրաժարվել ցարիզմի վարած գաղութային քաղաքականության հետևանքով: Նա միացյալ Հայաստան արտահայտության տակ նկատի ուներ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան: Նա անհրաժեշտ էր համարում երկիրը դնել Անտանտի պետությունների ընդհանուր հովանու ներքո, իսկ նրանցից մեկը (գերադասելի էր համարում ԱՄՆ-ին) պետք է 10-15 տարով ստանձներ երկրի մանդատը՝ պաշտպանելու արտաքին հարձակումներից և աջակցելու քայքայված տնտեսության վերականգնմանը:

Այդ ոգով էր խմբագրված 1917 թ. մայիսի 24-ին Ազգային պատվիրակության կողմից դաշնակիցներին ուղղված հուշագիրը՝ վերնագրված «Հուշագիր Հայկական հարցի և Հայաստանի ազատագրության վերաբերյալ»¹:

Պ. Նուբարը ԱՄՆ Հայ ազգային միության ատենապետ Միհրան Սվազյանին 1917 թ. հունիսի 25-ին ուղարկած նամակում, ներկայացնելով Ֆրանսիայի հետ 1916 թ. վերջին ունեցած պայմանավորվածությունները Կիլիկիայի, արևմտահայկական երեք նահանգների ինքնավարության և Արևելյան լեզեոնի կազմավորման շուրջ, գրում է. «Ատկէ ի վեր երկու մեծ իրադարձութիւններ տեղի ունեցած են, որոնք բացարձակապէս կը փոխեն բոլոր այս պայմանները, ռուսական Յեղափոխութիւնը և Մ. Նահանգներուն մուտքը պատերազմին մէջ: Այս երկու իրադարձութիւնները անհրաժեշտօրէն վերա-տեսութեան ենթարկել կուտան Դաշնակից Պետութեանց միջեւ եղած համա-ձայնութիւնը Օսմանեան Կայսրութեան բաժանման մասին: Ռուսական նոր վարչակարգը յայտարարած ըլլալով, որ ինք ռեւէ կցում չ'ուզէր և նոյնիսկ կը հրաժարի Կոստանդնուպոլսէն, Ֆրանսան և Անգլիան, իրենց կողմէ, կը յայտարարէն, թէ կը հրաժարին ամէն կցումէ, այսպէսով պատերազմի իրենց նպատակները ներդաշնակեցնելով Մ. Նահանգներուն յայտարարութեանց: Որեմն, Կիլիկիան Ֆրանսայի վերապահելու հարց չկայ այլեւ, ոչ ալ հայկա-կան երեք վիլայէթները Ռուսիոյ կցելու հարց»²:

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 14-15:

² Եափուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ, էջ 134:

Փարիզի «Վերածնունդ» պարբերականի 1917 թ. հուլիսի 14-ի համարում Արշակ Չոպանյանը գրում էր. «Մենք Հայերս ուրիշ կերպ չենք կրնար ընել եթե ոչ անսփոփոխ պահել մեր ազգային ծրագիրը, վեց նահանգներու և Կիլիկիոյ՝ գէթ Կիլիկիոյ մէկ մասին՝ միացումով ազատ Հայաստանի մը կազմութիւնը ուզել՝ Դաշնակիցներուն հովանւոյն տակ»¹: Միաժամանակ նա հիշեցնում էր, որ ամենահայանպաստ հայտարարությունն արվել է Ռուս գյուղացիության համագումարում, ուր բարձրաձայնվել էր Հայաստանին լիակատար անկախություն տալու գաղափարը²: Հասկանալով, որ միասնական կամ անկախ Հայաստանի վերաբերյալ մեր ձգտումները կարող են իրականություն չդառնալ տերությունների տարբեր շահերի պատճառով, հողվածագիրը նշում է նաև այն հնարավորությունը, որ կարող են ստեղծվել երեք Հայաստաններ՝ ներքին ինքնավարություն Արևելյան Հայաստանում, կիսանկախ Արևմտյան Հայաստան Ռուսաստանի, ինքնավար Կիլիկիա Ֆրանսիայի հովանու ներքո³:

Ա. Չոպանյանը համոզված էր, որ հայերի համար լավագույն լուծումը ռուսական, թուրքական և պարսկական տիրապետության տակ գտնվող բոլոր հայկական տարածքների միավորումն է անկախ Հայաստանի մեջ: Սակայն հասկանում էր, որ այդ գաղափարն իրականություն դարձնել դեռևս անհնար էր: Հետևաբար նա կարծում էր, որ տվյալ պատմական պահին հայերը պետք է հնարավորության դեպքում ձգտեին անկախ պետության ստեղծման Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի հենքի վրա, իսկ Արևելյան Հայաստանը ներքին ինքնավարություն պետք է ստանար Ռուսաստանի կազմում: Հետագայում անկախ Հայաստանը կկարողանար իր շուրջը համախմբել մնացած հայկական տարածքները⁴:

Բրիտանահայ գործիչներից Ավետում Հակոբյանը բարձրացնում էր պատերազմից հետո ինքնավար Հայաստան ստեղծելու անհրաժեշտությունը, որը ներառելու էր Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիի նահանգները, Սեբաստիայի արևելքը և Կիլիկիան⁵:

Այսպիսով՝ տարբեր գործիչներ կրկին բարձրացնում էին միավորված ինքնավար հայկական պետության գաղափարը:

¹ «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 1, էջ 14:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 15:

⁴ «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 2, էջ 59:

⁵ «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 5-6, էջ 158:

Ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանը գրում է. «Ազգային շահը հրամայաբար պահանջում էր, որ տարաբախտ հայը ունենա մեկ միասնական հայրենիք, մեկ երկիր, երաշխավորված և ապահովված մեծ տերությունների «պատվո վստահությամբ»: Նա պետք է ունենար իր տարածքի, ժողովրդի պատվի և կյանքի ապահովման երաշխիք, օգտվեր ազգային ինքնորոշման և ինքնավարության իրավունքից»¹:

Այսպիսով՝ հայ գործիչները, օգտվելով միջազգային բարենպաստ թվացող նոր իրավիճակից, փորձում էին վերջնական լուծման հասնել Հայկական հարցում: Ոմանք նույնիսկ սկսեցին բարձրաձայնել անկախ հայկական պետության ստեղծման մասին: Մինչ այդ, եթե չհաջվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թ. թվում էր անիրականանալի երազանք: Անկախության գաղափարը հայության լայն շրջաններում դեռևս հասունացած չէր, և հետագա արագ զարգացող իրադարձությունների պայմաններում հայ գործիչները չկարողացան ժամանակին ճիշտ քայլեր ձեռնարկել անկախ պետականությունը վերականգնելու ուղղությամբ:

Ռուսաստանի ժամանակավոր կառավարության ազգային քաղաքականությունը բավական ոգևորող էր: Այն ճանաչել էր Լեհաստանի անկախությունը, Ֆինլանդիայի և Ուկրաինայի ինքնավարությունը²: Բնականաբար, այդ ամենը հայ քաղաքական մտքի գիտակցության մեջ սկսում էր սերմանել անկախության գաղափարը:

1917 թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի ժամանակավոր խորհրդի նիստում Ա. Զիվելեգյանը ներկայացրեց հայության ձգտումները՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ու Կիլիկիայի միավորմամբ անկախ պետություն ստեղծել, որը Շվեյցարիայի նման հավիտենական չեզոքություն պետք է ունենար: Նրա կարծիքով, պատերազմից հետո նորանկախ երկիրը տնտեսությունը վերականգնելու և թշնամիներից պաշտպանվելու կարիք կունենար, հետևաբար առաջարկում էր որոշ ժամանակով Հայաստանի մանդատը հանձնել Ռուսաստանին³:

Անկախության գաղափարի հասունացման և նույնիսկ գործադրման համար շուտով ավելի լուրջ կոպաններ ու հնարավորություններ են առաջ գալիս:

¹ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, էջ 16:

² Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, 1993, с. 158.

³ Ръчь А. К. Дживелегова въ советъ республики 20-го октября 1917 г., "Армянский вестник", 1917, N 43-44, с. 4.

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի խորհրդային իշխանությունը 1917 թ. նոյեմբերի 2-ին հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը¹: Այն ռուսական տիրապետության տակ ապրող ազգերին ազատ ինքնորոշման, ընդհուպ անջատման և ինքնուրույն պետություն կազմավորելու իրավունք էր տալիս: Իսկ 1917 թ. դեկտեմբերի 29-ին Ռուսաստանի ժողկոմխորհի ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետով արևմտահայերին իրավունք էր տրվում որոշել սեփական ապագան՝ նույնիսկ անկախանալ²: Այսպիսով՝ ռուսական նոր իշխանությունները պաշտոնապես հրաժարվում էին Արևմտյան Հայաստանից և ճանաչում էին վերջինիս անկախանալու իրավունքը: Այդ քայլով Ռուսաստանը հանդիսացավ առաջին պետությունը, ով ճանաչում էր անկախ հայկական պետականության կազմավորման իրավունքը:

Իրադարձությունները զարգանում էին բավական արագ և անսպասելի: Մի կողմից Հայաստանի առջև բացվում էր դարերով սպասված անկախության, մյուս կողմից՝ ռուսական զորքերի հեռացման հետևանքով թուրքերի դեմ միայնակ մնալու հեռանկարը, քանի որ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական բանակները սկսեցին հեռանալ թուրքական ճակատից:

Նոյեմբերի 9-ին Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարիատի խորհուրդը կազմավորեց պատվիրակություն (անդամներ՝ գեներալ Լ. Տիգրանյան, փոխգնդապետ Ն. Մելիք-Փարսադանյան, Հ. Զավրյան), որը հաջորդ երկու օրերին հանդիպումներ ունեցավ ֆրանսիական դեսպան ժոզեֆ Նուլանսի, Պետրոգրադում ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան զինվորական առաքելությունների ղեկավարներ, գեներալներ Անրի Նիսսելի, Ալֆրեդ Նոքսի, Վիլյամ Զյուլցստնի հետ³:

Պատվիրակության խնդիրն էր ստեղծված նոր իրադրության մեջ պարզել Հայաստանի և հայության ապագայի հարցը, դաշնակիցների նյութական ու ռազմական աջակցության հնարավորությունը:

Ֆրանսիական դեսպանը նշեց, որ հայերը Ռուսաստանի վրա հույս չեն կարող դնել և պետք է հենվեն սեփական ուժերի վրա: Վստահեցրեց, որ Ֆրանսիան պաշտպանում է անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը և

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 410-412:

² Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 156-157: Նաև՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 418-419:

³ Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 39:

պատրաստ է բարոյական ու նյութական օգնություն տրամադրել, եթե կազմավորվի հայերի վստահությունը վայելող և կառավարության պարտականություններ իրականացնող մարմին, որի հետ հնարավոր կլինի բանակցել¹: Բրիտանական ներկայացուցիչ Ա. Նոքսը նշեց, որ իր կառավարությունը դեռ որոշում չի կայացրել, իրենք չեն կարող հենց այնպես հսկայական գումարներ և ռազմամթերք տրամադրել, նախ անհրաժեշտ էր համարում որևէ լավ կազմակերպված գործ տեսնել²: Գեներալ Վ. Ջյուջսոնը պատասխանեց, որ պետք է սպասեն մինչև ռուսական կառավարության հարցը լուծվի, քանի որ հայերը միայնակ թուրքերին դիմագրավել չէին կարող, իսկ դաշնակիցները ճանապարհների բացակայության պատճառով չէին կարող օգնություն տրամադրել³:

Փաստորեն՝ Ֆրանսիան պաշտպանում էր անկախ Հայաստանի գաղափարը և պատրաստակամ էր օժանդակելու, եթե հայկական կառավարություն ձևավորվեր: Բրիտանական կողմը նույնպես ցանկանում էր կազմավորված կառավարություն տեսնել, որի հետ կկարողանային բանակցել և համագործակցել:

1917 թ. նոյեմբերի 22-ին Պ. Նուբարին և եգիպտահայերի ներկայացուցիչ, ռամկավար գործիչ, գրող Վահան Թեքեյանին ընդունեց Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկիանիայի վարչության պետ Ժան Գուին: Պ. Նուբարը կրկին պահանջեց, որ կառավարությունը հայտարարի պատերազմից հետո Հայաստանին ինքնավարություն շնորհելու մասին: Այդ քայլը որոշ դրական ազդեցություն ունեցավ: Նախարարին ուղղված զեկուցագրում Ժ. Գուին տեղեկացնում էր, որ ինքնավարության մասին հայտարարություն էր պահանջել նաև Սիրիական կոմիտեի նախագահ Շեքրի Գանեմը: Նա անհրաժեշտ էր համարում արագորեն հոչակագիր հրապարակել Հայաստանին և Սիրիային պատերազմից հետո ինքնավարություն տալու մասին, քանի որ մտավախություն ուներ, որ բրիտանական զորքերը Երուսաղեմից հյուսիս առաջանալուն համընթաց կարող են Սայքս-Պիկոյի համաձայնագիրն անվավեր հռչակելուն ուղղված քայլեր ձեռնարկել⁴:

1917 թ. նոյեմբերի 23-ին Պ. Նուբարը և Վ. Թեքեյանը հանդիպեցին նաև Ֆրանսիայի ԱԳՆ քաղաքական տնօրեն Ժյուլ Կամբոնին և բարձրաց-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 39-40:

³ Նույն տեղում, էջ 40:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 64-65:

րին նույն հարցերը: Նախարարին ուղարկած զեկուցագրում քաղաքական տնօրենը ևս նշեց նման հայտարարության անհրաժեշտությունը, որպեսզի խուսափեն Մեծ Բրիտանիայի դավերից, որն իր կարծիքով ձգտում էր չեզոքացնել 1916 թ. համաձայնագիրը¹:

1917 թ. նոյեմբերի 29-ին Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Ժ. Պիկոն ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնին Կահիրեից ուղարկած հեռագրով առաջարկում էր հայտարարել հայերին, արաբներին ու սիրիացիներին ինքնավարություն տալու մասին²:

Ինչպես տեսնում ենք, Մերձավոր Արևելքի հարցերով զբաղվող ֆրանսիական դիվանագետները 1917 թ. վերջին հակված էին հայերին ինքնավարություն տալու մասին Ֆրանսիայի կողմից պաշտոնական հայտարարություն հրապարակելուն:

Պաղեստինյան ռազմաճակատում բրիտանացիների՝ դեպի հյուսիս առաջխաղացմանը զուգահեռ, ֆրանսիական գործիչների մոտ մեծանում էր անհանգստությունը, որ իրենց դաշնակիցը հետագայում կարող էր հետ կանգնել Սայքս-Պիկոյի համաձայնագրից, և Սիրիայի ու հայկական տարածքների կառավարումը վերցնել իր ձեռքը: Ֆրանսիան այդ տարածաշրջանում իրեն ավելի ամուր զգալու համար պետք է զորքեր ունենար, որպիսիք չունեի: Նա փորձում էր հենվել հայ և սիրիացի կամավորներից կազմավորված Արևելյան լեգեոնի վրա, սակայն այդ ժողովուրդներին սիրաշահելու համար անհրաժեշտ էր խոստանալ ինքնավարություն: Սակայն ֆրանսիական կառավարությունն այդպես էլ պաշտոնապես չհայտարարեց Հայաստանին և Սիրիային ինքնավարություն տալու պատրաստակամության մասին՝ չնայած տարածաշրջանով զբաղվող ֆրանսիացի պաշտոնյաների առաջարկին:

1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուսական զորքերը սկսեցին տարերայնորեն լքել Կովկասյան ճակատը, և փաստորեն՝ ռուսթուրքական ռազմաճակատի պաշտպանությունը մնում էր հայկական փոքրաթիվ ուժերի հույսին:

Դեկտեմբերի 5 (18)-ին Փարիզից Պ. Նուբարը հեռագիր է ուղարկում Թիֆլիսի Ազգային բյուրոյին, Արևմտահայ գաղթականության կոմիտեին և կաթողիկոսին, ուր կոչ էր անում համախմբել հայկական բոլոր ուժերը և

¹ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 74-76:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 71:

պաշտպանել Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքները թուրքական ներխուժումից, առաջարկում էր կապ հաստատել և համագործակցել Միջագետքի բրիտանական ուժերի հետ: Տեղեկացնում էր, որ Ազգային պատվիրակությունը բանակցություններ է սկսել բրիտանական և ֆրանսիական կառավարությունների հետ, որպեսզի նրանցից ռազմական և ֆինանսական աջակցություն ձեռք բերի: Նա խորհուրդ էր տալիս դաշնակցել վրացիների հետ: Առաջարկում էր հեռագրել, թե ինչ միջոցներ են հարկավոր, որպեսզի ինքը դրանք ստանա դաշնակիցներից¹: Հեռագիրը Պ. Նուբարի հետ ստորագրել էր նաև Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնը: Այդ հեռագիրը դեկտեմբերի 15-ին քննարկվել է Արևմտահայ ազգային խորհրդում և մեծ խանդավառություն առաջացրել²:

Այն քննարկվել է նաև Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կողմից: Դեկտեմբերի 25-ին Պ. Նուբարին ուղարկած պատասխան հեռագրով տեղեկացրեցին, որ ռուսական բանակը գրեթե ամբողջությամբ լքում է Կովկասյան ճակատը և Հայոց ազգային խորհուրդը որոշել է սեփական սուղ միջոցներով պաշտպանել ազատագրված հայկական նահանգները և Կովկասը, այդ նպատակով կազմավորվում է Հայկական կորպուսը՝ գեներալ Թովմաս Նազարբեկյանի հրամանատարության տակ, ինչպես նաև առանձին զորամաս արևմտահայերից և հայկական միլիցիա՝ երկրի ներքին կարգը պահպանելու համար, իսկ վրացիների հետ արդեն բանակցություններ են սկսել համագործակցելու համար: Անտանտի պետությունների աջակցությունը խիստ անհրաժեշտ էր համարվում, քանի որ պատերազմից տուժած հայ ժողովուրդը միայնակ չէր կարողանա պաշտպանել ճակատը: Հաշվի առնելով անցյալի դառը փորձը՝ Թիֆլիսի Ազգային խորհուրդը անհրաժեշտ էր համարում, որ Անտանտի երկրներն անմիջապես ճանաչեն Հայաստանի լիակատար անկախությունը, քանի որ Ռուսաստանն արդեն պաշտոնապես ճանաչել էր Հայաստանի ազատ ինքնորոշման իրավունքը: «Մի այլ օժանդակութիւն բարոյական և ոչ սակաւ թանկարժէք կը լինէր անշուշտ, ջնջումը այն դիւանագիտական գաղտնի որոշման, որով Հայաստանը կցում էր ցարերի միապետական Ռուսիային: Այս անարդար և ըստ ամենայնի ձախորդ որոշումը թուլացրել է և թուլացնում է տակաւին շատ կամքեր այն ցաւագին յոսաբեկութեամբ, որ նա պատճառեց համայն նոյն ազգիդ այս անարդարութեան երե-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 157, թ. 3: Նաև՝ Ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 7:

² ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թ. 6-7: Նաև՝ Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, էջ 673:

սից: Ազգային խիստ ընկճած ոգին բարձրացնելու համար անհրաժեշտ է ճանաչել Հայաստանի լիակատար ինքնավարութիւնը դիւանագիտութեան զինուորական որոշումով, որ պիտի ստորագրեն և անմիջապէս հռչակէն Համաձայնութեան պետութիւնների կառավարութիւնները, քանի որ Ռուսիան արդէն պաշտօնապէս ճանաչել է ազգերի ինքնորոշման իրաւունքը»¹:

Ազգային խորհուրդը և հայ գործիչների մեծամասնությունն անակնկալի էին եկել՝ տեղեկանալով Անտանտի տերութիւնների գաղտնի համաձայնության մասին, որով Հայաստանը մասնատվելու էր Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև, իսկ ինքնավարության մասին խոսք չկար: 1916 թ. գաղտնի համաձայնագրերը «Մանչեստր գարդիան» թերթում հրապարակվել էին 1917 թ. դեկտեմբերի 17-ին²: Իհարկե, հայ գործիչները որոշ կասկածներ ունեին գաղտնի համաձայնագրի և հայկական տարածքների բաժանման մասին, սակայն հոյս ունեին, որ և՛ Արևմտյան Հայաստանում, և՛ Կիլիկիայում առանձին-առանձին ինքնավարություն էին ստանալու:

Նախկինում ճնշված ազգերի ազատագրման վեհ գաղափարի մասին ամպագոռգոռ հայտարարություններ արած Անտանտի տերութիւնները Սայքս-Պիկոյի համաձայնագրի գաղտնագերծումից հետո ստիպված էին հասարակական կարծիքը մեղմելու համար նոր մեթոդներ փնտրել:

Բրիտանական վարչապետ Դ. Լլոյդ Ջորջը 1917 թ. դեկտեմբերի 21-ին Համայնքների պալատում հայտարարեց, որ «Հայաստանը այլևս նորից չի դրվի Թուրքիայի նողկալի տիրապետության տակ»³, իսկ 1918 թ. հունվարի 5-ին հայտարարեց, որ պետք է ճանաչել Արաբիայի, Հայաստանի, Միջագետքի, Սիրիայի ազգային ձգտումները և Թուրքիան այլևս երբեք չի կարող հավակնել այդ տարածքներին⁴:

1917 թ. դեկտեմբերի 22-ին ԱՄՆ պետդեպարտամենտի կազմած հուշագրում առաջարկվում էր երաշխավորել հայերի ինքնավարությունը «ոչ միայն որպէս արդարության և հումանիզմի կենսականորեն կարևոր հարց, այլ որպէսզի Փոքր Ասիայում վերականգնվի մի ժողովուրդ, որը ընդունակ է կանխելու Գերմանիայի կողմից Թուրքիայի տնտեսական մոնոպոլիզացումը»⁵: ԱՄՆ-ի պաշտոնատարները համոզված էին, որ պետք է «դաշնակիցների

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 158, թ. 2: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 3-4:

² Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 74:

³ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերութիւնները, էջ 19:

⁴ Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, Москва, 1957, т. 2, ст. 388.

⁵ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերութիւնները, էջ 19:

ուժեղ վերահսկողություն սահմանել Թուրքիայի էական մասը կազմող Հայաստանի նկատմամբ¹:

1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը Կոնգրեսում հանդես եկավ «Համընդհանուր հաշտության մասին» ճառով, ուր շարադրեց նշանավոր «14 կետերը»: Դրանով առաջ քաշեց նախկին բոլոր գաղտնի պայմանագրերը չեղյալ համարելու և թուրքահպատակ ժողովուրդների ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխախտելի պայմաններ տալու գաղափարը²:

Պետրոգրադի հայկական կոմիտեն 1918 թ. հունվարի 14-ին հեռագրով Պ. Նուբարին իրազեկեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետի բովանդակությունը³:

Եթե մինչև 1917 թ. վերջը նույնիսկ հայ գործիչներն էին վարանում խոսել Հայաստանի անկախության մասին, ապա այժմ միջազգային իրադրությունը կտրուկ փոխվել էր, և Հայաստանին անկախություն տալու անհրաժեշտության մասին պաշտոնապես հայտարարում էին Ռուսաստանի, Բրիտանիայի, ԱՄՆ-ի կառավարությունները:

1918 թ. փետրվարի 7-ին ԱՄՆ Կոնգրեսում Հայկական հարցին նվիրված ընդարձակ զեկուցումով հանդես եկավ կոնգրեսական (Կանգասից) գնդապետ Էդուարդ Լիթլը, որը նախկինում դիվանագիտական ներկայացուցիչ էր եղել Եգիպտոսում: Նա հույս հայտնեց, որ հնարավոր կլինի տերությունների հովանու տակ ներկայացուցչական կառավարություն հաստատել Հայաստանում: Այն ձգվելու էր Միջերկրականից՝ Մերսինից ու Ալեքսանդրեից մինչև ռուսական սահմանները: Ռուսաստանի հնարավոր բաժանման դեպքում նա համոզված էր, որ հնարավորություն կստեղծվի միավորել նաև ռուսական Հայաստանը: Կոնգրեսականը վստահ էր, որ այդ դեպքում հնարավորություն կստեղծվեր երկաթուղի կառուցել Միջերկրականից Էրզրում, որտեղից այն կկապվեր Թիֆլիսի, Սև ու Կասպից ծովերի հետ: Նա վստահ էր, որ դա թույլ կտար մի քանի ամսում Հայաստանը դարձնել ժամանակակից աշխարհի մաս, կյանքը կլիներ ապահով, կրթությունն ու կրոնական ազատությունները՝ երաշխավորված⁴:

¹ Նույն տեղում:

² http://www.lib.byu.edu/index.php/President_Wilson's_Fourteen_Points 27.12.2015: Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 73-75:

³ ՀԱՍ, ֆ. 282, ց. 1, գ. 45, թ. 1:

⁴ ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 5: Little Edward, Armenia and Turkey, "Congressional Record", Washington, March 8, 1918, vol. 56, p. 8.

Ինչպես տեսնում ենք, կոնգրեսականը հարց է բարձրացնում կազմավորել միացյալ հայկական պետություն, որի մեջ մտնելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, այլ նաև՝ Արևելյան Հայաստանը:

Ազգային պատվիրակության նախագահը 1918 թ. փետրվարի 21-ին Լոնդոնից՝ բրիտանական գլխավոր շտաբի միջոցով, երկու գաղտնի հեռագիր ուղարկեց Թիֆլիս¹: Առաջինն ուղղված էր Անդրանիկին, Արևմտահայ խորհրդի նախագահ Վահան Փափագյանին (Կոմս) և արևմտահայ գաղթականական կոմիտեներին: Այդ հեռագրով նա արևմտահայության ներկայացուցիչներին խորհուրդ էր տալիս առանձին համագումար չհրավիրել, այլ միասնաբար գործել արևելահայերի հետ. «Հայաստանի քաղաքական ապագայի մասին որևէ որոշումներ կարող են ընդունուիլ միայն ամբողջ ազգի ազգային համագումարում»², - գրում էր Պ. Նուբարը: Ինչպես տեսնում ենք, նա ազգային միասնության կողմնակից էր և դեմ էր ժողովրդի պառակտմանը արևելահայ կամ արևմտահայ հատվածների:

Երկրորդ հեռագիրը ուղղված էր Թիֆլիսի Ազգային խորհրդին, կաթողիկոսին, Անդրանիկին և Հ. Զավրյանին: Պ. Նուբարը ուրախություն էր հայտնում բոլոր կուսակցությունների համաձայնությամբ Ազգային խորհուրդ ստեղծելու կապակցությամբ: Նա տեղեկացնում էր, որ դաշնակիցները պատրաստ են օգնել հայերին և առաջին իսկ հնարավորության դեպքում կուղարկեն դրամ և ռազմական առաքելություններ: Նա կրկին խորհուրդ էր տալիս համագործակցել վրացիների հետ և լավ հարաբերություններ պահել թաթարների հետ: Հատկապես կոչ էր անում հնարավորինս մեծացնել հայ զինվորների թիվը:

Պետք է նշենք, որ 1917 թ. ռուսական հեղափոխությունների ալիքի վրա բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու տեսլականը: Խորհրդային Ռուսաստանը, ապա նաև ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան կառավարությունները սկսեցին ճանաչել Հայաստանի անկախության հնարավորությունը: Սակայն 1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության գաղափարը: Դրանով էր պայմանավորված, որ հայ գործիչներն ինքնուրույն գործելու և անկախություն հռչակելու փոխարեն սկսեցին համագործակցության ուղիներ փնտրել վրացիների ու թաթարների հետ: Ինչպես ցույց տվեց պատմությունը, այդ

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 5, թ. 8-9:

² Նույն տեղում, թ. 8:

երեք ազգերը, ունենալով ապագայի հետ կապված իրար հակասող ծրագրեր, չկարողացան ստեղծել միասնական պետություն:

Անկախություն հռչակելու և սեփական խնդիրներն ինքնուրույն կամ Անտանտի պետությունների աջակցությամբ լուծելու անկարողությունն ի վերջո հանգեցրեց նոր ողբերգության: Նախ Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից՝ 1918 թ. մարտի 3-ին կնքելով Բրեստ-Լիտովսկի խայտառակ պայմանագիրը, ապա Հայաստանը ստիպված էր չափազանց ուշացումով՝ 1918 թ. մայիսի 28-ին հռչակել անկախությունը, իսկ հունիսի 4-ին կնքել ավելի խայտառակ Բաթումի պայմանագիրը:

Մեր կարծիքով, հայ քաղաքական ուժերը պետք է 1917 թ. դեկտեմբերին կամ 1918 թ. հունվարին հռչակեին Արևմտյան Հայաստանի անկախությունը, և որպես անկախ պետություն փորձեին ռազմական ու նյութական աջակցություն ստանալ Անտանտի տերություններից: Իսկ վրացիների ու կովկասյան թաթարների հետ պետք է միայն Անդրկովկասի սահմաններում համագործակցեին: Հնարավոր տարբերակներից էր նաև Ֆրանսիայի հետ սերտ համագործակցություն հաստատելը, վերջինիս խոստանալը Հայաստանի մանդատը, եթե Կիլիկիան միավորվեր հայկական պետությանը: Սակայն հայ քաղաքական միտքը պատերազմական ու հեղափոխական այդ թոհուփոհի մեջ չկարողացավ արագ և ճիշտ կողմնորոշվել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ ԱՓՀԱՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՍ
ԱՊՍԱՄԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԸ

2.1 ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Հայ գործիչների համար ինքնավարությունից ավելի կարևոր էր զանգվածային կոտորածների կանխումը պատերազմի ընթացքում: Եթե հնարավոր էր համարվում կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից, ապա Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից, և տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնել: Լավագույն տարբերակը Կիլիկիայում բրիտանական կամ ֆրանսիական զորքեր ափհանելը, նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատագրելն էր: Տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվել Անտանտի բանակների կողքին:

Դեռևս մինչև պատերազմը շատերի համար պարզ էր, որ թուրքական իշխանությունները պատրաստվում են իրականացնելու արևմտահայության ոչնչացումը: Դա բխում էր երիտթուրքերի որդեգրած պանթուրքիզմի ու պանիսլամիզմի քաղաքականությունից ու կայսրությունում ծավալած քարոզչությունից:

Գաբրիել Մնացականյանը 1914 թ. գրում էր, որ երիտթուրքերը նպատակ ունեին միավորել բոլոր մահմեդականներին, Ռուսաստանից խլել Կովկասը և Թուրքեստանը, բայց առաջին հերթին նրանց խնդիրն էր ոչնչացնել Թուրքիայի բոլոր հայերին: Նա նշում էր, որ դժվար է պատկերացնել վերոհիշյալն իրականություն դարձնելու հնարավորությանը, սակայն նման գաղափարների միայն գոյությունն ու քարոզչությունն արդեն իսկ անհանգստացնող էին¹: Այսպիսով՝ շատ գործիչների համար պարզ էր, որ երիտթուրքերը հայերին ոչնչացնելու նպատակ էին հետապնդում, սակայն նրանք չէին հավատում, որ դա հնարավոր էր իրականություն դարձնել:

Հայերի նկատմամբ նախատեսվող զանգվածային ջարդեր էր կանխատեսել նաև Մարկ Սալքսը, երբ 1913 թ. սեպտեմբերին եղել էր Կիլիկիայում: Նա գտնում էր, որ ցանկացած պահի թուրքական իշխանությունները պատ-

¹ Мнацаканян Г., Разрешение Армянского Вопросы, Москва, 1914, с. 5.

րաստ են կոտորածներ սկսել, իսկ տեղի մահմեդական բնակչությունը սպասում էր դրան¹:

Փաստորեն՝ դեռևս պատերազմի նախօրեին երևում էին հայերի զանգվածային կոտորածի նախանշաններն ու նախապատրաստությունները: Հետևաբար՝ հայ գործիչները ելքեր էին փնտրում՝ զանգվածային կոտորածներից հայ բնակչությանը փրկելու համար: Միակ հնարավորությունը ժողովրդին ինքնապաշտպանության նախապատրաստելը և հնարավորության դեպքում Անտանտի երկրների զորքերի մուտքն էր հայկական տարածքներ: Ավելի հավանական էր համարվում այդ երկուսի համատեղումը՝ հայերի ինքնապաշտպանություն և դաշնակիցների կողմից օգնություն ստանալը:

Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայագրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերն ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնել Հայոց մեծ եղեռնը:

Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ գործիչները, սկսած 1914 թ. վերջերից, բազմիցս դիմել էին Ռուսաստանի, Ֆրանսիայի և ԱՆԺ Բրիտանիայի ռազմական և քաղաքական շրջանակներին:

Ա. Չոպանյանը կողմ էր Կիլիկիայում ապստամբություն բարձրացնելուն: «Թըքահայ հարցին, ավելի ճիշտ՝ «հայ ազգային դատին» հնարավոր լավագույն լուծումը կիլիկյան ապստամբությամբ մը հայ պետության մը կորիզին մեջ միայն կը տեսնեի»², - գրում էր նա դեռևս դարասկզբի իր գործունեության մասին: 1914 թ. վերջից նա կրկին վերադառնում է այդ նախագծին՝ հույս դնելով Ռուսաստանի, Ֆրանսիայի և Բրիտանիայի աջակցության վրա: Սակայն Կիլիկիայում ապստամբություն բարձրացնելու և դաշնակիցների օգնությամբ ազատագրելու նրա ծրագրերը ֆրանսիական և բրիտանական իշխանությունների կողմից ժխտական պատասխանի արժանացան³:

Պատերազմի սկսվելուց հետո ԱՄՆ-ի ռամկավարները Եգիպտոս էին գործուղել Ջեյթունի 1895-1896 թթ. հերոսական ապստամբության կազմակերպիչներից Մլեհին (Ասատուր Տամկաճյան), որպեսզի անհրաժեշտության

¹ Sykes M., The Caliphs' Last Heritage. A short History of the Turkish Empire, London, Macmillan, 1915, p. 547.

² Դավաքյան Կ., Արշակ Չոպանյան, էջ 327:

³ Նույն տեղում, էջ 328:

ղեպքում անցնի Կիլիկիա՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու համար¹:

1914 թ. նոյեմբերին Ֆրանսիայի կառավարությանն էր դիմել նաև Վերակազմյալ հնչակյան կուսակցության ներկայացուցիչ Վահե Արզույանը: Նա առաջարկել էր Ֆրանսիայի օգնությամբ հավաքագրել ու Կիպրոսում մարզել հայ կամավորների: Ծախսերի մի մասը հոգալու էին ամերիկահայերը: Հայ կամավորները և որոշ քանակությամբ ֆրանսիացի զինվորներ ներխուժելու էին Կիլիկիա, ուր նրանց էին միանալու 10.000 տեղացի հայեր: Այդ ուժերը, ըստ հեղինակի, բավարար էին Կիլիկիան ազատագրելու համար: Սակայն Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն մերժել էր այդ նախագիծը²: Երբ հնչակյանները նույն հարցով դիմել էին Մեծ Բրիտանիայի կառավարությանը, Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան գործերի բաժնի տնօրեն Ժան Գուն անմիջապես զգուշացրել էր, որ իրենք դեմ են այլ պետության օգնությամբ Կիլիկիայում որևէ ապստամբություն ձեռնարկելուն³:

Ֆրանսիական իշխանությունները ոչ միայն պատրաստակամ չէին աջակցելու Կիլիկիայի ազատագրման հայկական նախագծերին, այլ նույնիսկ դեմ էին, որ այն իրագործվի բրիտանացիների օգնությամբ:

Լոնդոնի հայկական կոմիտեն 1915 թ. հունվարին նույնպես դիմեց բրիտանական իշխանություններին, որպեսզի հայ կամավորներ հավաքագրվեն, սակայն ռազմական նախարարը պատասխանել էր, որ դեռևս կարիք չկա և եթե անհրաժեշտություն լինի, ապա իրենք կդիմեն հայերին: Բրիտանահայերն այն համարեցին քաղաքավարի մերժում և որոշեցին նորից դիմել, սակայն խնդիրն ավելի լավ նախապատրաստելուց հետո, որպեսզի կրկին չմերժվեն⁴: Նախատեսվում էր հայ կամավորներին ընդգրկել Եգիպտոսի բրիտանական բանակի մեջ, մարզել, մասնակից դարձնել ռազմական գործողություններին: Նրանք կարող էին անփոխարինելի դեր ունենալ՝ որպես տեղական լեզուներին, սովորույթներին ծանոթ զինվորներ: Սակայն Փոքր Ասիայում ռազմական գործողություններ սկսելու դեպքում բրիտանացիները պարտավորվում էին հայ կամավորներին ուղարկել Կիլիկիա: Հույս ունեին, որ կարող են հավաքագրել 5.000 կամավորներ: Սակայն ՀՅԴ ղեկավարներից Ռոստոմը (Ստեփան Զորյան), ով փետրվարին Լոնդոնում էր

¹ Ճիզմեճեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Ֆրեզնո, 1930, էջ 208:

² ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, ք. 1, ց. 1, գ. 702:

³ Չոպանյան Ա., Նամականի, Երևան, 1980, էջ 120-121:

⁴ Ռոստոմ: Նամականի (Մահուան ուղեւորամանկին աղթիւ), Պէրյուք, 1999, էջ 623:

ու մասնակցում էր կամավորների հարցի քննարկումներին, համոզված էր, որ պետք չէ միանգամից մեծ թիվ հավաքագրել, այլ քիչ, բայց մարտունակ ուժերի, քանի որ կարող էին շատ անընդունակներ լինել: Նա բերում էր Անդրանիկի կամավորական գնդի օրինակը, երբ զորավարն իր փոքրաթիվ զորամասից միանգամից հեռացրել էր 150 հոգու, որպեսզի որակի վրա չազդեին: Բրիտանահայ գործիչները պատրաստական էին իրենց վրա վերցնել նաև կամավորների ծախսերի մի մասը¹: Սակայն այդ նախաձեռնությունը նույնպես հաջողություն չի ունենում:

Կիլիկիան ազատագրելու հարցով զբաղվող առաջին գործիչներից էր նաև Հայ ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը: Նա ողջունել էր կովկասահայերի կամավորական շարժումը. «Կամավորները, Դաշնակիցների հետ կողք կողքի կռվելով, ուժ կտան մեր դատին և կստեղծեն նոր իրավունքներ մեզ համար: Այսպիսով՝ մեր ծայնն ավելի ուժեղ կլինի, երբ ժամանակը գա ձևակերպելու մեր արդարացի և համեստ պահանջները»², գրում էր նա դաշնակցական նշանավոր գործիչ Միքայել Վարանդյանին: Ազգային գործիչը գիտակցում էր, որ աշխարհը հարգում է նրանց, ովքեր կարող են պայքարել սեփական իրավունքների համար և հույս ունեն, որ պատերազմից հետո Անտանտի երկրները հաշվի կառնեն ռազմի դաշտում հայերի թափած արյունն ու մատուցած ծառայությունները:

Պ. Նուբարին անհանգստացնում էր հատկապես Կիլիկիայի հայ բնակչության ճակատագիրը, որին սպառնում էր ջարդերի վտանգը: Կիլիկիահայությանը փրկելու մտահոգությամբ՝ նա 1914 թ. նոյեմբերի սկզբին դիմում է Եգիպտոսի բրիտանական հրամանատարությանը, որպեսզի զորք ուղարկեն գրավելու Կիլիկիայի ծովեզերքը՝ Մերսինի ու Ալեքսանդրետի նավահանգիստները, Ադանայի դաշտը: Խոստանում էր, որ լեռնագավառների հայերը ոտքի կկանգնեն և կօժանդակեն դաշնակիցներին, եթե նրանց զենք ու զինամթերք տրամադրվի: Բրիտանական ուժերի ավիանումը կապահովեր տեղի հայության անվտանգությունը, իսկ հայկական ապստամբական շարժումը «աւելի կշիռ կը բերէր Կիլիկիոյ մասին մեր ունեցած ազգային բաղձանքներուն»³, գրում էր նա կաթողիկոս Գևորգ Ե-ին:

Այդ առաջարկը բավական գործնական էր ու արդյունավետ հետևանքներ կարող էր ունենալ, որի շնորհիվ հավանության էր արժանացել բրիտա-

¹ Նույն տեղում, էջ 625:

² Boghos Nubar, s Papers, p. 9.

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68:

նացի որոշ ռազմական գործիչների կողմից: Եգիպտոսում բրիտանական ուժերի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Ջոն Մաքսվելը Պ. Նուբարի հետ քննարկում է զորքերի ավիանման և հայերի աջակցության հետ կապված հարցերը: Հայ գործիչը վստահեցնում էր, որ հայերը բրիտանացիներին կընդունեն որպես ազատարարների և ցույց կտան հնարավոր ամեն օգնություն:

1915 թ. փետրվարի 3-ին Պ. Նուբարը «Պատերազմը և Կիլիկիայի հայերը» վերնագրով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսի բրիտանական իշխանություններին: Դրանում ավելի մանրամասն էին ներկայացված Կիլիկիայում տեղի ունենալիք ռազմական գործողությունների հետ կապված հարցերը: Նշվում էր, որ Հայաստանի հետ պետք է ինքնավարություն ստանա նաև Կիլիկիան, կամ այն պետք է անցնի դաշնակից երկրներից որևէ մեկի հովանավորության տակ: Միաժամանակ վստահեցնում էր, որ եթե պատերազմից հետո Կիլիկիան նորից Թուրքիային թողնեն, ապա տեղի հայերը ստիպված կլինեն ապստամբության միջոցով ազատվել այդ դաժան լծից: Ցույց էր տալիս այն տնտեսական ու քաղաքական խոշոր շահերը, որ կունենային տերությունները, եթե Կիլիկիան դառնար ինքնավար Հայաստանի մաս կամ անցներ Անտանտի երկրներից որևէ մեկին: Հավանություն էր տրվում Ալեքսանդրետի ուղղությամբ բրիտանական ռազմարշավային կորպուս ուղարկելու գեներալ Ջ. Մաքսվելի ծրագրին և խոստանում էր, որ կիլիկիահայերը կաջակցեն նրանց և նույնիսկ ապստամբություն կբարձրացնեն լեռնագավառներում, եթե զենք ստանան: Նկարագրված էր 1895-1896 թթ. Չեյթունի ապստամբությունը, երբ մի քանի ամիս շարունակ հայերը հաջողությամբ դիմագրավել էին թուրքական 30.000-ոց բանակին և աչքի էին ընկել բարձր մարտունակությամբ: Սակայն հայերի անվերապահ աջակցության դիմաց Պ. Նուբարը բրիտանական կառավարությունից պահանջում էր երաշխիքներ, որ Կիլիկիայի գրավումը ժամանակավոր բնույթ չի կրի և հետագայում այն չեն հանձնի թուրքերին, որոնք վրեժ կլուծեին տեղի հայ բնակչությունից¹:

Փաստորեն՝ Ազգային պատվիրակության նախագահը խնդրում էր բրիտանական աջակցություն՝ ընդհանուր թշնամու դեմ կռվելու համար, խոստանում էր հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին, միաժամանակ բարձրացնում էր թուրքական լծից Կիլիկիայի վերջնական ազատագրման խնդիրը:

¹ Boghos Nubar's Papers, p. 3-5.

1915 թ. փետրվարի սկզբին զեյթունցի պատվիրակները ներկայացել էին Կովկասյան բանակի շտաբ և ինքնապաշտպանության համար զենք էին խնդրել, քանի որ Կիլիկիայում կոտորածների սպառնալիքը մեծացել էր: Փետրվարի 7-ին Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովը գաղտնի հեռագրով այդ մասին տեղյակ պահեց Փարիզում Ռուսաստանի դեսպանությանը: Փոխարքան կարևորում էր հարցի ռազմավարական նշանակությունը դաշնակիցների համար և անհրաժեշտ էր համարում անհապաղ պահանջված քանակությամբ հրացաններ և փամփուշտներ հասցնել Ալեքսանդրետի ծովաձոցում սպասող հայերին: Նկատի առնելով Ձեյթունի հայերի գործողությունների օգտակարությունը ֆրանսիացիների համար, ելնելով նաև խնդրի անհետաձգելիությունից և այն փաստից, որ ռուսները հնարավորություն չունեն անմիջապես հայերին տրամադրել պահանջվող հրացանները՝ նա անհրաժեշտ էր համարում կապվել ֆրանսիական կառավարության հետ և նշել, որ Ռուսաստանի համար ցանկալի է, որպեսզի ֆրանսիական ռազմանավերով Ալեքսանդրետ հասցվեր զենք ու զինամթերք¹:

Այդ դիմումը Փարիզում Ռուսաստանի դեսպան Ա. Իզվոլսկին անմիջապես փոխանցում է Ֆրանսիայի ԱԳՆ²: Սակայն փետրվարի 14-ին Ա. Իզվոլսկին փոխարքային իրազեկում է, որ Թ. Դելկասեն մերժել էր այն՝ նշելով, որ «ֆրանսիական կառավարությունը բացարձակապես զուրկ է Ձեյթունի հայերին որևէ քանակությամբ հրացաններ տրամադրելու հնարավորությունից, քանի որ Ֆրանսիան՝ ինքը դրանց խիստ կարիքն ունի»³: Այսպիսով՝ Ֆրանսիան, ով լուրջ հավակնություններ ուներ հաստատվելու Կիլիկիայում, զլացավ ինքնապաշտպանության համար որևէ օգնություն տրամադրել զեյթունցիներին՝ չնայած այդ հարցով միջնորդել էր դաշնակից ռուսական կառավարությունը:

1915 թ. փետրվար-մարտ ամիսներին Սոֆիայում Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի դեսպաններ՝ Ալեքսանդր Սավինսկու, Դը Պանաֆոյի և Հենրի Բաքս-Այրոնսայդի հետ ՀՅԴ Արևմտյան Բյուրոյի անունից բանակցություններ սկսեց Մ. Վարանդյանը: Նա նշում էր, որ եթե դաշնակիցները ցանկանան ավիանում կատարել Ալեքսանդրետի ձոցում կամ Ադանայում, ապա հայերը պատրաստ են օժանդակել նրանց: Նա առաջարկում էր Ամերիկայում, Բալկաններում ու եվրոպական այլ երկրներում հավա-

¹ Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 39:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 72:

³ Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 41:

քազրել մոտ 20.000 հայ կամավորների և կենտրոնացնել Կիպրոսում: Ֆրանս-բրիտանական կողմը պետք է զիներ ու մարզեր այդ ուժերին և նրանց օգտագործեր Կիլիկիայում ափհանում կատարելու համար: Չնայած դեսպանները հավանություն տվեցին այդ նախագծին ու ներկայացրին իրենց կառավարություններին, բայց Ֆրանսիան մերժեց նաև այդ ծրագիրը¹: Փետրվարի 21 (մարտի 6)-ին Ա. Սավինսկին Ս. Սազոնովին տեղեկացրեց Մ. Վարանդյանի հետ բանակցությունների մասին: Դեսպանն այդ նախագիծը համարում էր իրատեսական²:

Թ. Դելկասեն Դը Պանաֆիոյին ապրիլի 13-ին տեղեկացրեց, որ Մ. Վարանդյանի ծրագիրը քննարկվել է, սակայն գերադասելի կլինի, որ հայերի թիվն ավելի մեծ լինի, որպեսզի կազմավորեն առանձին զորամաս, իսկ մինչ այդ Ֆրանսիայի արևելյան ռազմարշավին մասնակցել ցանկացող հայերը կարող են անհատապես դիմել գեներալ դ'Ադամին³:

Ինչպես տեսնում ենք, չնայած Ֆրանսիան ձգտում էր պատերազմից հետո տիրել Կիլիկիային, սակայն նա ամեն կերպ խոչընդոտում էր այդ երկրամասի ուղղությամբ հայերի զինված գործողություններին: Դա պայմանավորված էր նրանով, որ ֆրանսիացիները հասկանում էին, որ եթե երկրամասը ազատագրվի հայկական կամ բրիտանական ուժերով, ապա պատերազմից հետո իրենց իրավունքների ճանաչումը Կիլիկիայում կլինի բավական բարդ:

Փետրվարի 25 (մարտի 10)-ին Կ. Գուլկևիչը Հ. Ջավրյանին ցույց տվեց Կովկասի փոխարքայի և Լոնդոնում ռուսական դեսպանի ուղարկած հեռագրերը: Փոխարքան տեղեկացնում էր, որ արտասահմանի հայերը դիմել են իրեն՝ առաջարկելով զենք տրամադրել, որպեսզի 15.000 կամավորներ հավաքագրեն և ուղարկեն Կիլիկիա: Ի. Վորոնցով-Դաշկովն առաջարկում էր այդ նախագիծը փոխանցել բրիտանացիներին: Դեսպան Ա. Բենկենդորֆը տեղեկացնում էր, որ բրիտանացիները ցանկացել են կապվել կամավորագրության կազմակերպիչների հետ և միաժամանակ ցանկացել են հասկանալ, թե արդյոք կարող են դա իրականացնել առանց բրիտանական դեսպանատանի զորքերի: Կ. Գուլկևիչը ցանկանում էր տեղեկանալ Հ. Ջավրյանի տեսակետին խնդրի շուրջ: Վերջինս պատասխանեց, որ տեղյակ չէր այդ նախագծին, քանի որ պատերազմի սկսվելուց հետո Մերձավոր Արևելքի հետ կապերը խզվել են, հետևաբար չի կարող կողմ կամ դեմ խոսել այդ ծրա-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 78-80:

² ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 42, թ. 1:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 33-34:

գրին, սակայն մտահոգություն հայտնեց, թե արդյոք Կիլիկիան ազատագրելու համար բավարար կլինեն միայն հայկական զինուժը, քանի որ պարտությունը կհանգեցնեք տեղի հայերի կոտորածին: Հ. Ջավրյանը ճիշտ էր համարում, որ հայկական զինուժին օժանդակել դաշնակիցների բանակը: Կ. Գուլկերիչն անմիջապես հեռագրեց փոխարքային, որպեսզի ուղարկի կամավորագրության կազմակերպիչների անունները, ճշտի, թե արդյոք առանց եվրոպական զորքերի հայերը կարող են հաջողության հասնել և արդյոք այդ գործողությունը չի հանգեցնի հայկական կոտորածների¹:

Ինչպես տեսնում ենք, ռուսական իշխանությունները բազմաթիվ առաջարկներ էին ստանում հայ գործիչներից՝ Կիլիկիայի ուղղությամբ ռազմական գործողություններին աջակցելու նպատակով: Ռուսական կողմն անմիջապես օժանդակել չէր կարող, քանի որ այդ ուղղությամբ զորք չուներ, իսկ Կիլիկիան շատ հեռու էր ռուսական սահմաններից, հետևաբար այդ նախագծերն ուղարկում էր դաշնակիցներին, որպեսզի ընթացք տրվեր դրանց: Սակայն Ֆրանսիան ամեն կերպ խոչընդոտում էր հայերի կամ բրիտանացիների միջոցով Կիլիկիան գրավելու բոլոր նախագծերը, իսկ ինքը բավարար զորք չուներ տարածաշրջանում, որպեսզի սեփական ուժերով լուծեր այդ խնդիրը:

1915 թ. մարտի 23-ին Ամերիկայի ազգային պաշտպանության հայկական կոմիտեի նախագահ Լ. Միհրանյանը նամակ ուղարկեց Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Է. Գրեյին, ուր տեղեկացնում էր, որ իրենք արդեն իսկ միջոցներ են ձեռնարկել հայերի կամավորագրություն կազմակերպելու և Կիլիկիա ուղարկելու համար: Նա մատնանշում էր, որ Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելով՝ կվերացվեր թուրքական արշավանքի սպառնալիքը դեպի Եգիպտոս: Դա այն շրջանն էր, երբ բրիտանական նավատորմը դեռ նոր էր ջախջախվել Դարդանեյի մոտ, և Մեծ Բրիտանիան սեփական հեղինակությունն Արևելքում վերականգնելու միջոցներ էր փնտրում: Սակայն այս նամակը ևս արժանացավ անուշադրության մատնված տասնյակ այլ դիմումների ճակատագրին²:

1915 թ. ապրիլին Մեծի Տանն Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսին ուղարկած նամակում Պ. Նուբարը նշում էր, որ ունենալով Կովկասի և ֆրանսիական բանակի հայ կամավորների օրինակը, ինքը մտածում է, որ հայերի

¹ ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 91, թ. 9:

² Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, էջ 60-61:

պարտականությունն է լինելու աջակցել դաշնակիցներին բոլոր հնարավոր միջոցներով, եթե նրանց ռազմարշավային ուժերն ափ իջնեն Կիլիկիայում¹:

Երբ բրիտանացիները որոշեցին հարձակվել Կ. Պոլսի ուղղությամբ, Պ. Նուբարից պահանջեցին, որպեսզի Եգիպտահայերի կամավորագրություն և այդ նպատակով հանգանակություն չկազմակերպեն, քանի որ դա կարող էր գրգռել տեղի մահմեդականներին և ապստամբության պատճառ դառնալ²: Ազգային գործիչը ստիպված էր բավարարվել միայն Կովկաս ուղարկվող օգնությամբ: Մինչև հունիս Եգիպտոսում, Ամերիկայում ու Եվրոպայում հանգանակվեց 7.000 ոսկի, որը գլխավորապես օգտագործվեց կամավորների և արևմտահայ գաղթականության կարիքների համար³:

Ամերիկահայերը փորձեցին հարցին լուծում տալու համար դիմել նաև Անտանտի մյուս երկրների դեսպանների աջակցությանը:

1915 թ. ապրիլին ԱՄՆ-ում բրիտանական արտակարգ և լիազոր դեսպան Սեսիլ Սփրինգ-Ռայսին տեղի ռուսական դեսպան Գեորգի Բախմետևը տեղեկացնում է, որ ամերիկահայերը պատրաստ են Կանադայի վրայով 1.000 կամավորներ ուղարկել Կիլիկիայում կռվելու համար: Հայերը նույնիսկ պատրաստակամություն էին հայտնել վճարել իրենց ռազմական հանդերձանքի և մինչև Կանադա տեղափոխության ծախսերը՝ հուսալով, որ Մեծ Բրիտանիան իր վրա կվերցնեն նրանց տեղափոխությունը մինչև Կիլիկիա: Ապրիլի 25-ին այս առաջարկն ուղարկվում է Մեծ Բրիտանիայի ԱԳՆ, սակայն հաջորդ օրը Բանակային խորհրդում մերժվում է⁴:

Այդ օրերին սկսվել էր Դարդանեյի վրա երկրորդ հարձակումը: Բրիտանացիներն ամբողջ ուշադրությունն ու ջանքերը կենտրոնացրել էին այդ գործողությունը հաջողությամբ ավարտելու վրա, և Կիլիկիայում նոր ճակատ բացելու մասին չէին կարող մտածել:

Սակայն օրեցօր ավելի սարսափելի լուրեր էին հասնում հայության տեղահանությունների ու կոտորածների մասին, որը չէր կարող անտարբեր թողնել արտասահմանի հայությանը:

Աշխարհամարտի սկսվելուց հետո 21-45 տարեկան տղամարդիկ զորակոչվել էին օսմանյան բանակ⁵: Կիլիկիայից տասնյակ հազարավոր հայ երի-

¹ Boghos Nubar's Papers, p. 14-16.

² Նույն տեղում, էջ 10:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 85:

⁴ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 59:

⁵ Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 101:

տասարդներ մեկնեցին բանակ, որի հետևանքով երկրամասը զրկվեց մարտնչելու, թուրքերին դիմագրավելու ընդունակ ուժերի զգալի մասից:

Երիտթուրքերը տարագրությունն ու կոտորածը Կիլիկիայում սկսել են ավելի վաղ, քան՝ Արևմտյան Հայաստանում: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ցանկացած պահի Անտանտի երկրները կարող էին զորք ավիհանել Կիլիկիայում, իսկ թուրքերը բավարար ուժեր չունեին այն պաշտպանելու: Հետևաբար՝ իրենց թիկունքն ավելի ապահով դարձնելու համար թուրքերը շտապում էին տեղահանել տեղի հայ բնակչությանը:

Առաջնահերթ կերպով տարագրվեցին զեյթունցիները: Բռնություններն ու տեղահանությունը Զեյթունում սկսվեցին 1914 թ. սեպտեմբերին, երբ Օսմանյան կայսրությունը դեռևս պատերազմի մեջ չէր մտել: Արդեն սեպտեմբերի 6-ին ձերբակալվեցին Զեյթունի քաղաքապետ, 1895-1896 թթ. փայլուն ապստամբության առաջնորդ Նազարեթ Չաուշը և այլ նշանավոր գործիչներ¹: Մինչև 1915 թ. մայիս գրեթե բոլոր զեյթունցիները տարագրվեցին՝ մոտ 6.000-ը Կոնիայի տարբեր շրջաններ, մյուսները՝ Դեր Զոր²: Զեյթունից 21.000 և Ֆոնուզից 7.000 տարագրված հայերից 8.000-ը սովից ու մալարիայից մահացավ Սուլթանիեում և Կարաբունարում, իսկ 19.000-ը նահատակվեց Դեր Զորում: Նրանցից միայն շուրջ 1.000-ը վերապրեց Մեծ եղեռնը³:

Զեյթունցի Էդուարդ Ոսկերիչյանն Ապահին (Պետրոս Գմգմյան) ուղարկած նամակում (12.04.1918) հետևյալ պատճառներով է մեկնաբանում անհավատալի թվացող այն փաստը, որ զեյթունցիները չկոչվեցին: Նա առանձնացնում է այն, որ դեռևս 1913 թ. հնչակյանները փորձել էին Եգիպտոսում գումարներ հայթայթել, զենք ու զինագործական գործիքներ գնել Զեյթունի համար, սակայն բոլորը մերժել են: Հետևաբար՝ առանց անհրաժեշտ զենքերի զեյթունցիները ստիպված էին եղել բռնելու գաղթի ճանապարհը⁴:

Բացի այդ, զեյթունցիները փորձել էին համաձայնություն կայացնել Հաճնի և Դյորթ Յոլի հայերի հետ՝ համատեղ ելույթի համար, սակայն ժխտական պատասխան էին ստացել: Իսկ Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսը Հաճնից նրանց զգուշացրել էր, որ ապստամբության համար զենք ու զին-

¹ Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921 թթ. (Հուշեր), Երևան, 1984, էջ 18:

² Կիլիկեան կսկիծներ, էջ 110-115, 144-156, 163-165:

³ Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովիաննէս Արք. Նազեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, հ. Ա, Պէյրոս, 1960, էջ 462:

⁴ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 158, թ. 2-3:

նամթերք էր պետք, առանց որի կռվելն անմտություն էր¹: Ինչպես տեսանք, զեյթունցիները զենք էին խնդրել նաև Անտանտի երկրներից, սակայն մերժում էին ստացել: Այդ ամենը կոտրել էր նրանց մարտական ոգին և ապստամբելու կամքը:

Ապրիլ-մայիս ամիսներին Կիլիկիայի բոլոր բնակավայրերում, դպրոցներում, վանքերում, Սսի կաթողիկոսարանում թուրքական ոստիկանությունը սկսեց հաճախակի խուզարկություններ իրականացնել, որոնց արդյունքում զենք և զինամթերք գրեթե չկարողացան հայտնաբերել: Չնայած դրան՝ տարբեր պատրվակներով, ձերբակալվեցին և կախաղան բարձրացվեցին բազմաթիվ անմեղ հայեր: Հետզհետե մեծ ծավալներ է ընդունել տեղահանությունը: Հայ բնակչությանը բռնագաղթեցնում էին Սիրիայի ու Միջագետքի անապատներ, իսկ նրանց տները հանձնում էին մահմեդական վերաբնակիչներին²: Հալեպի գերմանական հյուպատոս Վալտեր Ռյոսլերը մայիսի 10-ին տեղեկացնում է դեսպան Հանս Վանգենհայմին, որ Դյորթ Յոլի կամ Ջեյթունի հայերի խռովությունների, բրիտանացիների հետ կապված լինելու լուրերի ճշմարտացիությունն այնքան էլ չի հետաքրքրել թուրքերին, վերջիններիս նպատակն էր որևէ պատրվակ օգտագործելը և հայերին բնաջնջելը³:

Կիլիկիահայերի՝ առանց դիմադրության տեղահանության ենթարկվելու հարցում բացասական դեր է ունեցել Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսի դիրքորոշումը, որը ամենուրեք կոչեր էր ուղարկել, որպեսզի ինքնապաշտպանության չդիմեն:

Դեռևս 1915 թ. փետրվարին մի հայ վաճառական իր մտերիմ բարձրաստիճան թուրքից իմացել էր հայերի ոչնչացման ծրագրի մասին և տեղեկացրել էր Սահակ կաթողիկոսին: Վերջինս հանդիպել էր Ջեմալ փաշայի հետ և հարցրել տեղեկության ճշմարտացիության մասին: Ջեմալը հայտնել էր, որ ինքը կառավարության նիստում առաջարկել էր չտեղահանել ողջ բնակչությանը, այլ՝ մեկուսացնել միայն քաղաքական ու մտավորական որոշ գործիչների, սակայն իր առաջարկը մերժվել էր մեծամասնության կողմից: Կիլիկիայի կաթողիկոսը այդ լուրը մարտին հայտնել էր Կ. Պոլսի պատրիարք

¹ Աղասի, Ջեյթուն եւ իր շրջակաները (Նկարագրութիւն աշխարհագրական, պատմական եւ պատերազմական. Ռուբինեան թագաւորութեան անկումէն մինչեւ մեր օրերը), Պեյրուֆ, 1968, էջ 389:

² Կիլիկեան կսկիծներ, էջ 161-193:

³ Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից), Երևան, 2008, էջ 184-185:

Զավեն Եղիայանին, որն իր հերթին հանդիպել էր Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմի և Թալեաթի հետ: Վերջիններս ժխտել էին այդ տեղեկության հավաստիությունը, իսկ պատրիարքը հավատացել էր¹: Փաստորեն՝ զանգվածային տեղահանության մասին հայ բարձրաստիճան հոգևոր գործիչներին հայտնի էր դարձել բավական վաղ, նույնիսկ Ջեմալն էր հավաստիացրել այդ մասին: Սակայն նրանք ցանկալին ընդունել էին իրականի տեղ՝ հավատալով Թալեաթին ու գերմանական դեսպանին:

Վ. Ռյուսլերի հեռագրի համաձայն՝ արդեն հունիսի սկզբին Կիլիկիայից դեպի Սիրիա էր տարագրվել 30.000 հայ, որոնց փոքր խմբերով ցրել էին մահմեդական գյուղերի մեջ: Ըստ հյուպատոսի՝ դրա նպատակը հայերի ոչնչացումն էր²:

Հունիսի 14-ին Ադանայի նահանգից արքայովեց ևս 32.000 հայ: Հունիսի 20-ին սկսվեց Հաճնի, Սսի, Կարս Բազարի հայ բնակչության տեղահանությունը: ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուի համառ ջանքերը՝ կանխելու Ադանայի, Տարսուսի ու Մերսինի տեղահանությունը, մատնվել էին անհաջողության³:

Հունիսի 16-ին Սահակ Բ կաթողիկոսը փորձել էր Ջեմալ փաշայի օգնությանը դիմել՝ հուսալով, որ վերջինս դեմ էր ընդհանուր տարագրությանն ու կոտորածին: Սակայն երիտթուրք եռապետը պատասխանել էր. «Կառաարութիւնը հայը հայ կը ճանաչէ, էշխիյա, կուսակցական կամ կովկասցի ու կիլիկեցի՝ խտիր չի դներ. ամէնքն ալ թշնամի կը համարի, որքան թշնամի են ռուս, անգլիացի, ֆրանսացի...»⁴: Մայիսի 5 - հուլիսի 6-ը տարագրվեց Դյորք Յոլի 22.000 հայությունը⁵: Հունիսի 25-ին սկսվեց նաև Սսի հայության տեղահանությունը⁶: Հետզհետե ավելի մեծ ծավալներ էր ընդունում հայերի զանգվածային տեղահանությունը, ինչի հետևանքով Կիլիկիան արագորեն հայաթափվում էր:

¹ Պալաքեան Գ., Հայ գողգործան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն: Պեղինէն դէպի Զօր 1914-1920, հ. Ա, Վիեննա, 1922, էջ 71-74:

² Տաշեան Հ., Հայ ազգի տարագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, 1921, էջ 53-54:

³ Տրապիզոնի թեմին վիճակատու Յովհաննէս Արք. Նազլեանի յոշերը, էջ 430:

⁴ Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, էջ 50:

⁵ Գասպարյան Ռ., նշվ. աշխ., էջ 112-113:

⁶ Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (Յուշեր եւ նօթեր), Պոսթըն, 1979, էջ 87:

Գերմանիայի կանցլեր Թեոբալդ ֆոն Բերման Հոլվեգին ներկայացնելով կիլիկիահայերի տեղահանությունը՝ հունիսի 17-ին Հ. Վանզենհայմը բերում էր հայերին ոչնչացնելու մտադրության մասին գերմանացի դիվանագետ Մորդմանի ներկայությամբ ասված Թալեաթի խոսքերը. «Բարձր Դուռը կուզենար համաշխարհային պատերազմն օգտագործել այն նպատակով, որպեսզի հիմնավորապես ազատվի իր ներքին թշնամիներից՝ բնիկ քրիստոնյաներից, ընդ որում՝ առանց արտասահմանից դիվանագիտական միջամտության հանդիպելու, դա կբխի նաև Թուրքիայի դաշնակից գերմանացիների շահերից, քանի որ այդ կերպ Թուրքիան ավելի կուժեղանա»¹:

Կիլիկիայում, բացի Ջեյթունից, հայ նշանավոր գործիչներին, մտավորականներին տարագրությունից առաջ զանգվածաբար չեն ձերբակալել կամ սպանել, ի տարբերություն մյուս նահանգների: Ադանայի նահանգի Ժանդարմերիայի հրամանատար և ռազմական ատյանի նախագահ Ավնի բեյը թեև առաջարկել էր, մյուս վայրերի պես, աչքի ընկնող գործիչներին ոչնչացնել, ապա նոր գաղթեցնել բնակչությանը, սակայն Ադանայի ոստիկանապետ չերքեզ Ջեմալ բեյը, որը մասոն էր, կտրականապես դեմ էր արտահայտվել անմեղ մարդկանց սպանելուն և կարողացել էր համոզել նահանգապետ Իսմայիլ Հազգը բեյին, որ բավարարվեն աքսորով: Օգոստոսին Ադանայի նահանգի դեռևս չտարագրված հայերը, բացի զինվորների ընտանիքներից, հրահանգ ստացան սեփական միջոցներով հեռանալ դեպի Հալեպ²: Սեպտեմբերի սկզբին Ադանայի վիլայեթում այլևս հայեր գրեթե չկային³: Սահակ Բ կաթողիկոսին նույնպես հրամայվել է հեռանալ Կիլիկիայից: Հոկտեմբերի 21-ին նա հեռացավ Սսից և հոկտեմբերի 31-ին հասավ Երուսաղեմ⁴:

Հուլիսի 5-ին Հալեպից Ջավեն պատրիարքին ուղարկված նամակում Սահակ Բ կաթողիկոսը նկարագրում էր այնտեղ գտնվող գաղթականների ծայրահեղ ծանր վիճակը: Ներկայացնում էր տեղի հայերի, հույների ու ասորիների աջակցությունը, միաժամանակ իր հիացմունքն էր հայտնում՝ գաղթականների փոխօգնության պատրաստակամության հետ կապված. «Ամենէն արտառուչն է, երբ նոր գաղթականներ կը ժամանեն, հիները կը մոռնան

¹ Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից), Երևան, 2008, էջ 205:

² ՀԱԱ, ֆ. 450, ց. 3, գ. 71, թ. 27-28:

³ Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна., Ереван, 1983, с. 355.

⁴ Կիլիկեան կսկիծներ, էջ 206:

իրենց բոլոր ցանքերը եւ տառապանքը, թէեւ իրարու անծանօթ, իբրեւ հին ծանօթներ՝ կը վազեն, կը դիմաւորեն, կը գրկախառնուին, արտասուքնին իրարու կը խառնեն, կ'օգնեն, կ'առաջնորդեն եւ ահա Եկեղեցւոյ բակը կը լեցուի մարդով, անասունով, բեռներով: Եղբայրաբար կը քակեն, բեռները վար կ'առնեն, կը շալկեն, կը տեղափոխեն եւ կը տեղաւորեն. թուրքերն ալ կը զարմանան եւ կը նախանձին, թերեւս Կառավարութիւնը աւելի գէշ աչքով կը դիտէ»¹:

Այդ ամենին ականատես լինելով, Կիլիկիայի Կաթողիկոսը հանգել էր հետևյալ եզրահանգմանը. «Սուտ են ընկերվարականաց վարդապետութիւնք. միայն թշուառութիւնը, միայն հալածանքը դիրք, աստիճան, խելք եւ յիմարութիւն մէկ խմոր եւ մէկ զանգուած կ'ընէ»²:

Պետք է արձանագրել, որ Կիլիկիահայությունը բռնագաղթի ընթացքում ամենաքիչը տուժեց: Դա պայմանավորված էր նրանով, որ Սիրիան սահմանակից էր և երկար ճանապարհի ստիպված չեղան անցնել: Բացի այդ, համակենտրոնացման ճամբարներում, ըստ Թալէաթի հրահանգի, առաջնահերթ ոչնչացնում էին Արևմտյան Հայաստանից տեղահանվածներին³, քանի որ Հայկական հարցի նպատակը բուն Հայաստանի ինքնավարությունն ու հետագա անկախացումն էր նախատեսում:

Հայկական կոտորածների մասին լուրերի ահագնանալու հետ հայ գործիչներն ավելի էին հակվում Կիլիկիայում անհապաղ զինված գործողություններ ծավալելու մտքին:

1915 թ. մայիսի 20-ին Ալեքսանդրիայում հնչակյան և ռամկավար կուսակցությունների Եգիպտոսի կառույցները ստորագրեցին համատեղ և միասնական նպատակի համար գործելու համաձայնագիր՝ հետևյալ սկզբունքների շուրջ. 1) Ստեղծել ինքնավար Հայաստան և Կիլիկիա: 2) Ինքնավար երկրամասը պիտի դրվի Անտանտի կամ միայն ռուսական հովանավորության տակ: 3) Երկու կողմերը բացարձակապես դեմ են ինքնավար Հայաստանի (Կիլիկիայով հանդերձ) գաղափարի իրականացմանը՝ թուրքական գերիշխանության ներքո և այդ տեսակետից հանդիսանում են անջատականներ: 4) Եթե հանգամանքները ստիպեն, որ ինքնավար Հայաստանը միացվի Ռուսաստանին, ապա իրենք դրան դեմ չեն լինի: 5) Եթե անհնար

¹ Նույն տեղում, էջ 178:

² Նույն տեղում, էջ 176:

³ Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէաթ Փաշա, Պոսթըն, 1921, էջ 155-156:

լինի Հայաստանը և Կիլիկիան համատեղ ինքնավար դարձնել, բայց հնարավոր լինի միայն Կիլիկիան ինքնավար դարձնել, ապա այդ գաղափարի իրականացմանը պետք է աջակցեն: 6) Ինքնավար և միացյալ հայկական երկրամասը պիտի ունենա քաղաքական ինքնավարություն՝ խորհրդարանական և ժողովրդավարական վարչակարգով: 7) Ընդհանուր գործելաոճ են ընտրելու հեղափոխական-ապստամբական և դիվանագիտական ուղիները: 8) Հայ դատի լուծման համար նպատակահարմար և անհրաժեշտ է ոչ միայն պայքարել Արևմտյան Հայաստանի համար, որն ազատագրելու նպատակով սկսվել է կամավորական շարժում, այլ նաև ապստամբություն բարձրացնել Կիլիկիայում: 9) Երկու կուսակցությունների Եգիպտոսի մարմինները, իրենց աշխարհագրական դիրքի բերմամբ, գործունեության առաջին և գլխավոր թատերաբեմ են դարձնելու Կիլիկիան, և ամեն ջանք պիտի գործադրեն, որպեսզի Եվրոպայի և Ամերիկայի կառույցներին համախմբեն գլխավորապես կիլիկյան գործունեության ուղղությամբ: 10) Պետք է հետևեն և պաշտպանեն Պ. Նուբարի գործունեության ուղեգիծը, և նրան ճանաչում են ապագա խաղաղության վեհաժողովում՝ որպես Հայկական պատվիրակության ներկայացուցիչ: 11) Երկու կուսակցությունների տեղական ընդհանուր գործերը վարելու համար ընտրվելու է 6 անձից կազմված մարմին՝ Համագործակցող կուսակցությունների Եգիպտոսի վարիչ մարմին¹:

Մի քանի ամիս անց՝ 1915 թ. նոյեմբերի 2-ին, Կահիրեում ստեղծվեց Համագործակցող կուսակցությունների Եգիպտոսի վարիչ մարմինը, որի մեջ ընդգրկվեցին Փիլիպպոս Պալունին (ատենապետ), Երվանդ Միրիճանյանը (ատենադպիր), Մելքոն Պողոսյանը (գանձապետ), Գրիգոր Մկրտիչյանը (գանձապահ): Կահիրեի զինվորական գործերը վարելու համար ընտրվեց Զինվորական վարիչ մարմին, որում ընդգրկվեցին Ստեփան Սապահ-Գյուլյանը, Ապահ Պետրոսյանը, Արա Գալեմճյանը, Միհրան Աժտեթյանը, Հմայակ Ազատյանը, Մլեխ Տամկաճյանը, Թաթուլ Ներկիզյանը²:

Ինչպես տեսնում ենք, ժողովրդի համար վճռորոշ շրջանում ազգային երկու կուսակցությունները, մի կողմ դնելով տարաձայնությունները, որոշեցին միասնաբար հանդես գալ: Նրանց գլխավոր նպատակներից էր Կիլիկիայի ազատագրումը և այդ ուղղությամբ որոշեցին ակտիվ գործունեություն ձեռնարկել: Այս շրջանում արդեն սկսել էին կոտորածների լուրերն ահագնա-

¹ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը: Հայնոսա յարաբերութիւններու լոյսին տակ, էջ 198-202:

² ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 198, թ. 1:

նալ, և հայ գործիչներն ամենատարբեր միջոցների էին փորձում դիմել՝ թուրքերի ճիրաններում մնացած ազգակիցներին փրկելու համար:

1915 թ. մայիսի սկզբին եգիպտահայ գործիչները սկսեցին տեղեկություններ ստանալ Կիլիկիայում սկսված ջարդերի ու տարագրության մասին: Այդ լուրերը բերում էին բրիտանական նավերով փրկված կիլիկեցի փախստականները: Դրանց ճշմարտացիությունը ստուգելուց հետո Լևոն Մկրտիչյանը այդ մասին հեռագրում է Պ. Նուբարին՝ խնդրելով դիմել տերությունների աջակցությանը¹: Սակայն Լ. Մկրտիչյանը վստահ էր, որ Անտանտից որևէ օգնություն այդ պահին սպասել չէին կարող, քանի որ նրանք Դարդանեղի ռազմագործողության վրա էին կենտրոնացել: Ապահին ուղարկած նամակում (22.05.1915) եգիպտահայ գործիչն այն համոզմունքն էր հայտնում, որ «Տարտանելը մինչև որ չիյնայ, Դաշնակիցք զորք չէն հաներ Կիլիկիա, թէկուզ ամբողջ Քրիստոնեայ ազգաբնակչութիւնը բնաջինջ ըլլայ»²: Հայ գործիչը ճիշտ էր ընկալել ստեղծված միջազգային իրավիճակը և տերությունների մեծապետական, եսակենտրոն քաղաքականությունը: Աշխարհի ճակատագիրը որոշող տերությունների համար արժեք չունեին իրենց շահերի գոհասեղանին թափվող արյան քանակը, այն էլ՝ օտար:

1915 թ. հունիսի 17-ի նամակով Պ. Նուբարը տեղեկացրեց կաթողիկոսին, որ Անտանտի երկրները որևէ կերպ չէին կարող կանխել կոտորածները: Նշում էր, որ կաթողիկոսի դիմումների հիման վրա էր, որ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը մայիսի 24-ին հայտարարություն էին տարածել, որով թուրքական պետությանը և պաշտոնյաներին պատասխանատու էին համարում հայկական կոտորածների համար³:

Այդ հայտարարությունն արվել էր ռուսական կողմի նախաձեռնությամբ: Դրանում նշվում էր. «Ամբողջ վերջին ամսվա ընթացքում Հայաստանում քրդերի ու թուրքերի կողմից իրականացվում է հայերի կոտորած՝ օսմանյան իշխանությունների ակնհայտ թողտվության, իսկ երբեմն էլ բացահայտ աջակցությամբ: Այրիլի կեսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չեյթունում և ամբողջ Կիլիկիայում: Վանի շրջակայքում ամբողջությամբ կոտորել են հարյուրավոր գյուղերի բնակիչների, բուն Վանում հայկական թաղամասը պաշարված էր քրդերի կողմից: Միևնույն ժամանակ Կ. Պոլսում թուրքական կառա-

¹ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 87-88:

² Նույն տեղում, թ. 88:

³ Boghos Nubar's Papers, p. 108-110.

վարությունը ձերբակալում և չլաված ճնշումների է ենթարկում հայ խաղաղ բնակչությանը: Մարդկության և քաղաքակրթության դեմ Թուրքիայի կողմից գործարկող այս նոր հանցագործությունները աչքի առաջ ունենալով, դաշնակից կառավարությունները՝ Ռուսաստանը, Ֆրանսիան և Անգլիան սրանով հրապարակապ հայտարարում են Բ. Դռանը, որ այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա տեղական այն ներկայացուցիչների վրա, որոնք մասնակից կլինեն նման ջարդերին»¹:

Այս փաստաթուղթը Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին փաստաթուղթն է, որն արվել է երեք մեծ տերությունների կողմից այն ժամանակաշրջանում, երբ զանգվածային տարագրությունն ու կոտորածները դեռևս նոր էին սկսվել: Սակայն այն որևէ դրական ազդեցություն չունեցավ:

Ամերիկյան դիվանագետ Լյուիս Էյնշտեյնը, որն այդ ժամանակ Կ. Պոլսում էր, նույնպես վկայում է, որ Անտանտի երկրների հայտարարությունը մի փոքր բարկացրել և անհանգստացրել էր մեծ վեզիրին, սակայն մյուս թուրք պաշտոնյաները լիովին անտարբերությամբ են վերաբերվել դրան: Նշում է, որ Էնվերը մինչև վերջին ժամանակները շատ դրական էր խոսում հայերի մասին, իսկ այդ ժամ նրանց նկատմամբ հալածանքները փորձում էր արդարացնել ռազմական նկատառումներով²:

Կ. Պոլսում նորանշանակ գերմանական դեսպան Պաուլ Կոլֆ Մետերնիխը կանցլեր Թեոբալդ Բեթման-Հոլվեգին ուղարկած զեկուցագրում նշում էր. «Հայկական հարցը հայկական ցեղի ոչնչացմամբ վերացնելու իրենց ծրագրի իրականացման գործում թուրքական կառավարությունը չարձագանքեց ոչ մեր, ոչ ամերիկյան դեսպանատան և Վատիկանի ներկայացուցչի դիմումներին, ոչ էլ Անտանտի տերությունների սպառնալիքին, և ամենաքիչը հաշվի առավ Արևմտյան Եվրոպայի կարծիքը, այժմ այն պատրաստվում է մասնատել և ցրել առաջին տեղահանությունից հետո կենդանի մնացած հայերի վերջին խմբերը»³:

Այսպիսով՝ ոչ մի պետության բանավոր բողոքները չէին կարող կանգնեցնել երիտթուրքական իշխանություններին, որոնք պանթուրքիզմի գաղա-

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ., 54, թ. 1:

² Einstein L., Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles Expedition, April-September, 1915. New York, 1918, p. 126.

³ Геноцид армян в Османской империи, с. 418.

փարախոսությունն իրականացնելու նպատակով պատրաստ էին մարդկային քաղաքակրթության դեմ ուղղված ցանկացած հանցագործության: Արևմտահայությունը դարձավ թուրքական այդ մեծ ոճրագործության և տեղությունների, միայն բողոքներով ու հայտարարություններով բավարարվող, անտարբերության զոհը:

Եգիպտահայ գործիչներ Ժան Մուֆաֆովը և Կոստանդին Կամարականը 1915 թ. հունիսի 30-ին Ալեքսանդրիայից ուղարկած նամակով Պ. Նուբարին տեղեկացրին, որ Ձեյթունը, Դյորթ Յուլը, Հասանբեյին ավերված են, հայ բնակչությանը թուրքական իշխանությունները տեղահանել են դեպի Մոսուլ, Ջոր ու Կոնիա, իսկ նրանց տեղում բնակեցրել են Մակեդոնիայից փախած գաղթական մահմեդականներին: Ադանան, Այնթապը, Սիսը, Հաճնը նոր կոտորածների սարսափի մեջ են: Այդ ամենի նպատակը հայ տարրի ամբողջական ոչնչացումն էին համարում: Անհրաժեշտ էին համարում անհապաղ Անտանտի զորքերի ու հայ կամավորական խմբերի միջոցով ազատագրել Կիլիկիան¹:

Նման զարգացումներից խիստ անհանգստացած Ազգային պատվիրակության նախագահը դիմել է Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի կառավարող շրջաններին, սակայն այս անգամ ևս դրանք արդյունք չեն տվել: Հուլիսի 6-ին Լոնդոնում նա հանդիպում է ունեցել Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի օգնական Արթուր Նիկոլսոնի հետ և ներկայացրել է Կիլիկիայում ստեղծված ծանր վիճակը և նշել, որ «եթե Դաշնակիցները, հայ կամավորների հետ օգնության չհասնեն հայ բնակչությանը՝ զորքեր ավիանելով Ալեքսանդրետում, կոտորածները կընդունեն լայն ծավալներ»²: Սակայն բրիտանացի դիվանագետը պատասխանում է, որ Դարդանեղի օպերացիան կլանել է դաշնակիցների բոլոր ուժերը, և նրանք ի վիճակի չեն ռազմական գործողություններ ծավալելու Կիլիկիայում:

Արդեն հուլիսի 13-ին Ալեքսանդրիայից Ժ. Մուֆաֆովը ավելի մոայլ և հուսահատեցնող լուրերով նամակ ուղարկեց Պ. Նուբարին³: Նկարագրում էր Կիլիկիայում սկսված զանգվածային տեղահանություններն ու ջարդերը, խնդրում էր անհապաղ ու կտրուկ միջոցներ ձեռնարկել 250-300 հազար կիլիկահայերին փրկելու համար: Նշվում էր, որ եթե անհապաղ ռազմական

¹ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 197, թ. 1: Boghos Nubar's Papers, p. 128. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 115:

² Boghos Nubar's Papers, p. 142.

³ Նույն տեղում, էջ 161-162:

միջամտություն չկատարվի, ապա Կիլիկիայում այլևս հայեր չեն մնա: «Ինչպե՞ս կարող են դաշնակիցները,- գրում էր Ժ. Մուֆաֆուլը,- իրենց բոլոր մարդասիրական սկզբունքներով, մնալ անտարբեր և թույլ տալ մարդկության դեմ ուղղված նման վիթխարի ոճիր իրականացվի մեր դահիճների կողմից հենց իրենց աչքերի առաջ: Նրանք ովքեր պատասխանատու են, փաստորեն, իրենց թշնամիներն են և այս հրեշավոր չարչարանքին վերջ դնելու խնդիրը բավական աննշան ջանք կպահանջի համեմատած նրանց վերջին հսկայական ջանքերին ներդրված թշնամի երկրի այլ տարածքներում: Ճիշտն ասած, Դաշնակիցների այս անտարբեր վերաբերմունքը հենց այս պահին, երբ մեր ազգային գոյությունը Կիլիկիայում վտանգի տակ է, միշտ կմնա անհասկանալի, կարևոր չէ, թե ինչ ռազմական, քաղաքական կամ ստրատեգիական պատճառներ կարող էին լինել: Եվ այսպիսով, Ձերդ գերազանցություն, մենք չգիտենք էլ ինչպես խնդրենք ձեզնից Կիլիկիայի մեր եղբայրների անունից, որ Ձեր բոլոր ջանքերն ու եռանդն ուղղեք Դաշնակիցների անհապաղ զինված ներխուժման ուղղությամբ՝ ներխուժում, որն անհրաժեշտ է դադարեցնելու բնաջնջումը մի ամբողջ ժողովրդի, որի մեղքը քրիստոնյա լինելն է, քաղաքակրթություն գուրգուրելը և իրական համակրանք սնուցելը Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի հանդեպ»¹:

Յավոք, աշխարհի հզորներին այնքան էլ չէր հուզում իրենց համակրող մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը, և նրանց միակ մտահոգությունը սեփական շահախնդրական ձգտումների ապահովումն էր: Եվրոպայի «մարդասեր» ու «հայասեր» ղեկավարները, ինչպես հայտնի է, ոչ միայն օգնության ձեռք չէին մեկնելու ցեղասպանության ենթարկվող փոքր դաշնակից հայերին, այլև հետագայում հաճույքով սեղմելու էին թուրքերի արյունոտ ձեռքը՝ նորից անպաշտպան թողնելով՝ հույսը եվրոպական «քաղաքակիրթ» հորջորջվող աշխարհի վրա դրած, հայ ժողովրդին:

Այսպիսով՝ Կիլիկիայից եկող լուրերն օրեցօր ավելի գորշ գույներ էին ընդունում, իսկ Անտանտի երկրները որևէ մտադրություն չունեին օգնելու հայերին: Նման պայմաններում նորից հրատապ էր դառնում հայկական կամավորական զորամասի ստեղծման և սեփական ուժերով Կիլիկիան ազատագրելու գաղափարը:

Հուլիսի 18-ին Պ. Նուբարը կաթողիկոսին հեռագրում էր, որ իր տեղեկություններով թուրքերի գլխավոր նպատակն է Հայաստանի և Կիլիկիայի

¹ Նույն տեղում, էջ 162:

հայերին տեղահանել դեպի Կոնիա, Միջագետք և ոչնչացնել: Խորհուրդ էր տալիս, որ կաթողիկոսը նորից դիմի Անտանտի և չեզոք երկրներին՝ կանխելու այդ ծրագիրը¹: Փաստորեն՝ հայ գործիչների համար արդեն պարզ էր թուրքերի գլխավոր նպատակը, սակայն դա կանխելու հնարավորություն նրանք չունեին և միակ թույլ հույսը մնում էր չեզոք երկրների միջամտությունը:

Հուլիսի 27-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած նամակում² Պ. Նուբարը տեղեկացնում էր, որ հայկական կոտորածների մասին ինքը տեղեկացել է տարբեր աղբյուրներից, այդ թվում՝ իտալացի հյուպատոսներից ու ամերիկացի միսիոներներից: Կաթողիկոսի կողմից կոտորածները կանխելու մասին հեռագիրը ստանալուց անմիջապես հետո, ինքը Կահիրեում դիմել էր ԱՄՆ-ի ու Իտալիայի ներկայացուցիչներին, իսկ Փարիզ ժամանելուց հետո՝ նաև Անտանտի պետություններին: Սակայն ցավ էր հայտնում, որ դրանք, դժբախտաբար, որևէ գործնական արդյունքի չէին հանգեցրել. «Պետութիւնք, ցաւ յայտնելով հանդերձ պատահածներու մասին, կը խոստովանէին թէ ներկայիս ոեւէ գործնական միջոց չունին մեզի օգնութեան հասնելու»³:

Փրկության միակ հույսը Պ. Նուբարը համարում էր Կիլիկիայում դաշնակից ուժերի ավիհանում կազմակերպելը, կամ հայ կամավորական շարժմանը ուժ տալը և նրանց միջոցով հայ բնակչությանը ազատագրելը, զանգվածային տեղահանությունն ու կոտորածը կանխելը: Նա կաթողիկոսին գրում էր. «.... մեզ ուրիշ բան չի մնար ընել բայց եթէ մեր սեպհական ոյժերուն կրթնիլ: Եւ այս մասին միակ դարման մը կը խորհիմ, այսինքն Վանի շրջակայքին հայ կամաւորական գունդերը ի վիճակի դնել ըստ կարելոյն շուտով յառաջ խաղալու, մեր բոլոր ոյժերով աշխատելով անոնց թիւը բազմապատկել, այս մասին Կովկասի սպայակոյտին արտօնութիւնը ձեռք բերել եւ յիշեալին աջակցութեամբ պէտք եղած զէնքն ու ռազմամթերքը հայթայթել: Բաւական վստահելի աղբիւրներէ տեղեկացած եմ որ Թուրքերը այս րոպէիս շատ քիչ զօրք ունին Կիլիկիոյ մէջ, հետեաբար Կովկասեան ճակատին վրայ իրենց արութեան ապացոյցը արդէն տուած քանի մը հազար քաջամարտիկ հայ կամաւորներ կարող են յիշեալ զօրքերուն հետ ճակատիլ: Եթէ մեր կտրիճները յաջողին Զէյթունը եւ երկրին ուրիշ ռազմական դիրքերը

¹ Նույն տեղում, էջ 180:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 67-69:

³ Նույն տեղում, թ. 68:

գրաւել՝ կարող կը հանդիսանան այս կերպով խմբական աքսորանքներու եւ կոտորածներու սպառնալիքին առաջքն առնուլ»¹:

Ինչպես տեսնում ենք, Ազգային պատվիրակության նախագահը ամբողջությամբ հույսը կտրել էր, որ Անտանտի պետությունները կօժանդակեն Կիլիկիայի ազատագրմանը և կոտորածների կանխմանը: Նա հարցի լուծում էր համարում հայ կամավորների թիվն ավելացնելը և սեփական ուժերով Կիլիկիա հասնելը: Այդ գաղափարը նա կրկնում էր նաև Բուլղարիայի թեմի առաջնորդ Ղևոնդ եպ. Դուրյանին օգոստոսի 10-ին ուղարկած նամակում²: Սակայն դա իրատեսական չէր, քանի որ հայ կամավորները Վանից Կիլիկիա հասնել անկարող էին, նույնիսկ Կովկասյան ճակատի ռուսական բանակն այդ պահին ի վիճակի չէր նման ռազմական խնդիր լուծել: Այս շրջանում ռուսական զորքը նույնիսկ կարճ ժամանակով նահանջել էր Վանից՝ տեղի հայ բնակչությանը կանգնեցնելով գաղթելու պարտադրանքի առաջ:

1915 թ. հուլիսին եգիպտահայերը կրկին բարձրացրին հայկական կամավորական զորամաս կազմավորելու հարցը, որը հարմար առիթի դեպքում ներխուժելու էր Կիլիկիա: Նախատեսվում էր Եգիպտոսում կամավորագրել 1.000 հայերի, նրանց միացնել Ամերիկայից, Հունաստանից, Բուլղարիայից ու այլ վայրերից եկած կամավորներին, ֆրանսիական ճակատում կռվող հայ կամավորներին: Ձենք, զինամթերք և սպաներ պետք է տրամադրեն Անտանտի երկրները: Կամավորներին գաղտնի պահելու համար, նրանց գրանցելու էին Եգիպտոսում գործող մարզական ակումբներում: Նախատեսվում էր, որ եթե նույնիսկ ռազմական գործողություններին մասնակցելու հնարավորություն չլիներ, ապա այդ մարզված կամավորները ապագայում կարող էին դառնալ Հայաստանի ոստիկանական ուժերի կորիզը³:

Նախաձեռնությունը գործնական հողի վրա դնելու նպատակով անհրաժեշտ էր Անտանտի երկրների համաձայնությունն ու աջակցությունը: Դեպի Կիլիկիա հայկական ուժերով արշավանք կազմակերպելու առաջարկ 1915 թ. հուլիսի 19-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը փոխանցեց նաև Լոնդոնի ռուսական դեսպանությունը⁴: Ռուսաստանն ամեն կերպ խրախուսում էր Մեծ Բրիտանիային Կիլիկիայում ռազմական գործողություններ սկսելու հարցում, որպեսզի նրանց ուշադրությունը հնարավորինս շեղի

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 68-69:

² Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Պոլիս, 1920, էջ 112:

³ Boghos Nubar's Papers, p. 164-165.

⁴ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 60:

Կ. Պոլսից ու Նեղոսներից, միաժամանակ թուլացնի թուրքերի ճնշումը Կովկասյան ռազմաճակատում:

Հուլիսի 20-ին Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեն Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով հուշագիր ներկայացրեց Եգիպտոսում բրիտանական զինված ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Զ. Մաքսվելին: Հուշագրի հեղինակները տեղեկացնում էին, որ ամեն օր ավելի ու ավելի անհանգստացնող լուրեր են հասնում հայերի կոտորածների ու ճնշումների մասին, զանգվածային տեղահանությունները կարող են Կիլիկիայի հայ բնակչության ոչնչացման պատճառ դառնալ, եթե նրանց շուտափույթ գործնական աջակցություն ցույց չտրվեր: Միաժամանակ վստահ էին, որ Դարդանեյի ռազմագործողության պատճառով Կիլիկիայի առափնյա շրջանում էքսպեդիցիոն զորքեր ավիհանելու խնդրանքը հավանության չէր արժանանա, իսկ Սփյուռքի հայերը այլևս չէին կարող անտարբեր մնալ ու ոչինչ չանել հայրենակիցների համար: Հետևաբար՝ կոմիտեն խնդրում էր բրիտանական իշխանությունների թույլտվությունը, որպեսզի իրենք ընթացք տային և գլխավորեին Ամերիկայում, Բուլղարիայում, Ռումինիայում ու այլ հայկական համայնքներում սկսված կամավորական շարժանը: Խնդրում էին թույլ տալ կամավորներին հավաքելու Կիպրոսում, տրամադրելու ռազմամթերք և տրանսպորտային միջոցներ ավիհանման համար: Հույս ունեին, Կիլիկիայի քրիստոնյա բնակչության աջակցությամբ, գրավել ստրատեգիական նշանակության ռազմական դիրքեր: Պատրաստ էին բոլոր գործողություններն իրականացնել բրիտանական իշխանությունների ղեկավարության ու վերահսկողության ներքո¹:

Այդ առաջարկությունը հետաքրքրել էր բրիտանացիներին, քանի որ արդեն պարզ էր Դարդանեյի օպերացիայի ձախողումը, և իրենց հեղինակությունն Արևելքում պահպանելու համար նրանք նոր ուղիներ էին փնտրում:

Զ. Մաքսվելի պահանջով՝ Հայ ազգային պաշտպանության կոմիտեն հուլիսի 24-ին ավելի մանրամասն ծրագիր է ներկայացրել: Ըստ դրա՝ Կիպրոսում կազմավորվելու էր 10.000-ոց հայկական կամավորական զորամաս, որի ծախսերը հոգալու էին հայերը, իսկ բրիտանացիներն ապահովելու էին սպաներով, ռազմամթերքով, օժանդակելու էին փոքրաթիվ ցամաքային ու ծովային ուժերով: Հայերը, ապստամբություն կազմակերպելու նպատակով, նախապես զենք ու դրամ էին տեղափոխելու Կիլիկիայի ծովափնյա շրջան-

¹ Boghos Nubar's Papers, p. 194-195. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 188-190:

ները: Հայկական կամավորական բանակը գրավելու էր Ալեքսանդրետը, Ադանան, Մերսինը: Նախատեսվում էր, որ այնտեղ նրանց կմիանան 25.000 հայ ապստամբներ Կիլիկիայից և 15.000 էլ շրջակայքից: Այդ 50.000-ոց բանակը բավարար էր համարվում ոչ միայն Կիլիկիան ազատագրելու, այլև՝ շարժվելու նրա սահմաններից դուրս: Անհրաժեշտ էին համարում գործողությունն իրականացնել արագորեն՝ Կիլիկիահայությանը կոտորածներից ու տեղահանությունից փրկելու համար:

Եթե բրիտանացիներն անհրաժեշտ համարեին ավելի փոքրամասշտաբ գործողություն, ապա առաջարկվում էր հավաքագրել միայն 5.000 կամավորների: Այդ գործը կարող էր մի կողմից գրավել Սուեիի և Քեսաբը, ուր կար 25.000 հայ, մյուս կողմից՝ Դյորթ Յոլը Ալեքսանդրետի ծոցում, ուր կհավաքվեին և արդյունավետ դիմադրություն կկազմակերպեին շրջակայքի հայերը: Այդ երկու գործողությունների հաջողության դեպքում կարող էին գրավվել Ալեքսանդրետն ու Բեյլանի կիրճը: Անհաջողության դեպքում այդ ուժերը կարող էին կենտրոնացվել լեռներում և պարտիզանական պայքար մղել: Նրանք կխախտեին թշնամու հաղորդակցությունը՝ կտրելով հեռագրալարերը, քանդելով երկաթգծերը, այրելով կամուրջները ևն¹:

Կիլիկիայում ամփանում կատարելու համար շահագրգռված էին նաև արգենտինահայերը: Նրանք դիմեցին Բուենոս Այրեսում բրիտանական գլխավոր հյուպատոսին և պատրաստակամություն հայտնեցին տրամադրել 300 կամավորներ, որպեսզի նրանք կռվեին թուրքերի դեմ՝ բրիտանական կամ ֆրանսիական զորքերի կազմում²:

Մուսա լեռան ուղղությամբ փոքրաթիվ, բայց պարենի ու ռազմամթերքի բավարար պաշարով ուժեր ուղարկելու և Սուեիայի 6.000-7.000 հայերի հետ միասին թուրքերի թիկունքում ռազմական գործողություններ ծավալելու առաջարկով ռամկավար գործիչ Միհրան Տամատյանը 1915 թ. օգոստոսի 2-ին Կահիրեում դիմում է բրիտանացի նշանավոր դիվանագետ, գնդապետ Մարկ Սայքսին: Վերջինս Եգիպտոսի բրիտանական բարձրագույն կոմիսար Հ. Մակ-Մահոնից հանձնարարություն էր ստացել հանդիպելու եգիպտահայ գործիչներ Մ. Տամատյանի և Վահան Մալեգյանի հետ³: Մ. Սայքսը բողոքում էր հայերի անճարակությունից, նշելով, որ Ալեքսանդրետի նախկին

¹ Boghos Nubar's Papers, p. 203-204: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 190-192:

² Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 96:

³ Տամատեան Մ., Իմ յուզերէս, էջ 103-104: Varnava A., French and British Post-War imperial agendas and forging an Armenian Homeland after the Genocide: The formation of the Legion D'Orient in October 1916, December 2014, *The Historical Journal*, vol. 57, p. 1005.

քրիտանական հյուպատոս Կատոնին Եգիպտոսից լրտեսության համար Կիլիկիա էր ուղարկել մի քանի հայերի, որոնք անհաջողության են մատնվել՝ ձերբակալվել կամ տեղացի հայերի ձերբակալման ու մահապատժի պատճառ են դարձել: Մ. Տամատյանը բացատրում է, որ այդ արդյունքները բնական են, քանի որ ուղարկել են պատահական մարդկանց, իսկ եթե կուսակցություններին դիմեին, ապա ավելի մեծ արդյունքներ կունենային: Մ. Տամատյանը նաև ափսոսանք է հայտնում, որ Կիլիկիայի ուղղությամբ հայերի առաջարկած արշավանքը չէր իրականացվել և այդ երկրամասի հայաթափման պատճառ էր դարձել, քանի որ հայերին արդեն սկսել են տարագրել: Նա մատնանշում է, որ եթե դաշնակիցները ցանկանում են տեղեկանալ Թուրքիայի ներսում տեղի ունեցող անցուղարձին, լրտեսել թշնամու բանակի տեղաշարժերը, ապա պետք է ուշադրությունը սևեռեն Ալեքսանդրետից հարավ, բավարար ռազմամթերքով ու պարենով ապահովված փոքրաթիվ ուժեր ցամաք հանեն Ռասխնզիր հրվանդանի մոտ, Մուսա լեռան վրա, ուր նրանց կարող էր միանալ հայ հեղափոխականներից կազմված մի ջոկատ: Սուեիայի գյուղերի 6-7.000 հայերը կմիանային այդ ուժերին և օգտագործելով տեղի անառիկ դիրքը, Մուսա լեռը կվերածեն դաշնակիցների համար երկրորդ Զիբրաթարի թուրքական ծովեզերքում: Նա համոզված էր, որ տեղի ալևի աղանդին հետևող մահմեդականները թուրքերին թշնամի էին և լավ հարաբերությունների մեջ էին հայերի հետ: Նրանք ազատ երթևեկ ունեին Թուրքիայի ներսում և հեշտությամբ կարող էին լրտեսել թշնամու բոլոր շարժումները:

Մ. Սալքսը, որն ուսումնասիրել էր գրեթե ամբողջ Հայաստանը և Կիլիկիան, զարմացել էր լսելով, որ Ալեքսանդրետից հարավ հայ բնակչություն կար և պատասխանել. «Թուրքիոյ հայաբնակ մասերը Իսթենտերունի մօտ կը վերջանան: Իսթենտերունի հարաւը հայ բնակչութիւն չկայ»: Մ. Տամատյանը պարզաբանել էր, որ «Ո՛չ միայն Մուսա լեռան կողերուն վրայ հայ շէն գիւղեր կան, այլև Որոնդէսի գետաբերանին հարաւը Ճեպէլ Աքրա կոչուած հրուանդանին վրայ կան Քեսապի հայ գիւղերը, որոնց բնակիչները Սուէտիոյ հայերուն հետ միասին 10.000էն աւելի թիւ մը կը կազմեն: Այստեղին եւ Կիպրոսի միջեւ հազիւ 75 մղոն հեռաւորութիւն կայ, որով այդ կողմ կիպրական զօրք փոխադրելը մէկ գիշերուան գործ է»¹: Մ. Սալքսը այդ տեղեկությունները գրի էր առել և խոստացել հայտնել, ուր որ պետք է:

¹ Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 104:

Օգոստոսի 3-ին Մ. Սայքսը Ջ. Մաքսվելին տեղեկացնում էր հայկական պարտիզանական ուժերի կողմից Կիլիկիայում գործողություններ ծավալելու դեպքում սպասվելիք դրական հետևանքները, ինչպես նաև առաջարկում էր Ադանայի նահանգը գրավելու համար օգտագործել Դարդանեյի ֆրանսիական զորախումբը¹։ Վերջինիս կազմում կար 40.000 զինվոր² և լիովին բավարար կլինեին Կիլիկիան ազատագրելու համար։ Սակայն ինչպես կտեսնենք, Ֆրանսիայի իշխանությունները չօգտագործեցին այդ հնարավորությունը, չնայած ֆրանսիացի ռազմական որոշ գործիչների առաջարկին։

Փաստորեն, անտեղյակ լինելով Մուսա լեռան հայերի նոր սկսված ինքնապաշտպանությանը Մ. Տամառյանն առաջարկում էր այնտեղ կազմակերպել ավիանոս և ռազմական գործողություններ ծավալել թուրքերի դեմ։ 1915 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին մուսալեռցիների կազմակերպած փառավոր հերոսամարտը ցույց տվեց, որ այդ առաջարկներն ավելի քան իրատեսական էին։

Հավանաբար, հայ գործիչների հետ շփումներն էին պատճառ դարձել, որ Մ. Սայքսը 1915 թ. աշնանն առաջարկում էր դաշնակից զորքերի ավիանոս կատարել Ալեքսանդրետում³։

Մուսալեռցիների Պորտ Սայիդ տեղափոխվելուց հետո, սեպտեմբերի 29-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ժյուլ-Ալբերտ Դեֆրանսը, Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում, անդրադառնալով Եգիպտոսի Հայ ազգային պաշտպանության կոմիտեի նախագծերին, նշում էր, որ դրանք շատ արդյունավետ կլինեին, եթե գործադրվեին։ Դրա ապացույցն էր համարում այն, որ մուսալեռցիները փոքրաթիվ ուժերով և սակավաթիվ հրացաններով ու զինամթերքով կարողացել էին մոտ 40 օր հաջողությամբ դիմադրել թուրքերին։ «Հայկական պաշտպանության կոմիտեի ծրագիրը լավ էր մտահոգված և որ Կիլիկիայում ու Սիրիայի հյուսիսում թուրքերի համար ահռելի դժվարությունների հարուցումը դաշնակիցների համար կարող էր դառնալ լի-նել, եթե նրանք այդ նպատակահարմար գտնեին»⁴, - գրում էր դեսպանը։

Սակայն այդ ծրագրերն ուշացած էին և կիլիկիահայության տեղահանությունից հետո դրանք անիրագործելի դարձան։ Չնայած բրիտանական կող-

¹ Varnava A., French and British Post-War imperial agendas, p. 1006.

² Fulton L. Bruce, France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 156

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 287:

⁴ Նույն տեղում, էջ 188:

մը հիմնականում հավանություն էր տվել վերոնշյալ ծրագրերին, սակայն դա հանդիպել էր Ֆրանսիայի ընդդիմությանը: Վերջինս այլ ծրագրեր ուներ տարածաշրջանում, և հենց նրա ցույց տված դիմադրությունն էր պատճառը, որ Կիլիկիայում ափհանում չկատարվեց և երկրամասը չազատագրվեց թուրքերից՝ չնայած թե՛ բրիտանացիները, թե՛ ռուսները դա համարում էին հնարավոր և անհրաժեշտ քայլ:

Հավանաբար Ֆրանսիայի ընդդիմությունը հաշվի առնելով էր, որ օգոստոսի 24-ին Է. Գրեյը Եգիպտոսի բրիտանական իշխանություններին խստորեն հրահանգեց որևէ ընթացք չտալ հայերի կամավորական շարժմանը¹:

Հայկական կամավորական զորամաս կազմավորելու առաջարկով օգոստոսի վերջերին Պետրոգրադում բրիտանական դեսպան Զ. Բյուքենենին էր դիմել գնդապետ Թորգոմը (Արշակ Նազաշյան), ով բուլղարական բանակի սպա էր, իսկ 1914 թ.-ից՝ միացել էր ռուսական բանակին: Նա առաջարկել էր Ալեքսանդրիայում, Մարսելում, Լիվերպոլում և Նյու Յորքում ստեղծել կամավորագրության գրասենյակներ, հավաքագրել 8.000 հայերի և Եգիպտոսում ձևավորել 10 գումարտակներից կազմված Հայկական կորպուս, որը կռվելու էր թուրքերի դեմ: Առավել մեծաթիվ կամավորների դեպքում կարող էին 24.000-ոց բանակ ստեղծել: Այն դրվելու էր բրիտանացի կամ ֆրանսիացի սպաների ղեկավարության տակ: Սակայն Զ. Բյուքենենը վստահ չէր, որ կարող էին այդքան հայ կամավորներ հավաքագրել, իսկ Բանակային խորհրդի հաշվետվության մեջ Թորգոմի նախագիծը նախորդների համեմատ լավագույնն էր համարվում, բայց մտահոգված էին այն ֆինանսական ծախսերի արդյունավետությամբ, որոնք պետք է կատարվեին հայկական կորպուսի համար²:

Այսպիսով՝ ամենատարբեր պատճառաբանություններով բրիտանական կողմը մերժում էր հայերին զինելու և թշնամու դեմ ուղարկելու բազմաթիվ նախագծերը: Դրանցից շատերը մեկնաբանվում էին, իբր հայկական ջարդերի առիթ չտալու կեղծ հոմանիստական մոտեցմամբ: Սակայն հայկական կոտորածները առանց այդ էլ սկսվել էին և հայկական կողմի առաջարկների նպատակը հենց բնաջնջվող ազգին փրկելուն էին միտված: Բրիտանացիներին անգործության մղող ամենամեծ խոչընդոտը կարծում ենք Ֆրանսիան էր: Կիլիկիայի ուղղությամբ ռազմական որևէ նախաձեռնության նկատմամբ Ֆրանսիայի անգիջում դիրքորոշումը այն կարևոր գործոններից մեկն է հան-

¹ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 60:

² Varnava A., French and British Post-War imperial agendas, p. 1006-1007.

դիսացել, որն ի վերջո հանգեցրել է Դարդանելի արկածախնդիր օպերացիան գործողության մեջ դնելուն:

Այդ շրջանի ֆրանսիական քաղաքականությունն ուսումնասիրած պատմաբան Երվանդ Գասպարյանը գրում է. «Կիլիկիայում՝ Ալեքսանդրեսոի շրջանում լայնամասշտաբ և ինքնուրույն ռազմական գործողություններ մղելու և իր ծավալապաշտական խնդիրներն իր իսկ բանակների ուժերով լուծելու անընդունակ Ֆրանսիան ոչ միայն պարբերաբար և հետևողականորեն մերժեց արևմտահայությանն օգնելու բոլոր խնդրանքներն ու պատմության ընձեռնված հնարավորություններն, այլև, իր վրա վերցնելով հայոց ցեղասպանության մեջ մեղսակցության ու պատասխանատվության իր բաժին բեռը, այնքան ուժ, զորություն և կարողություն ունեցավ, որպեսզի հանուն իր ծավալապաշտական առաջնահերթ շահերի, շարունակ *խանգարի, արգելի և ծախողի* ինչպես իր դաշնակիցների՝ Անգլիայի և Ռուսաստանի, այնպես էլ հայ ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների կողմից արված ռազմական ու դիվանագիտական բնույթի այն բոլոր հրավերներն ու առաջարկները, որոնց իրականացումը կարող էր, նախ, շատ բանով կանխել հայոց ցեղասպանության գործադրումը, և ապա էականորեն նվազեցնել արևմտահայության ողբերգության չափերն ու ընդգրկումները»¹:

Յավոք, ճակատագիրն այս անգամ ևս չժպտաց հայությանը և Կիլիկիայի ազատագրման հարցը մնաց սոսկ թղթային նախագիծ, իսկ կիլիկիահայերը ստիպված էին անցնել Մեծ եղեռնի գողգոթայով:

¹ Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 81:

2.2 ԱՆՏԱՆՏԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Համաշխարհային պատերազմի տարիներին Կիլիկիայում գործերի ափ-հանում իրականացնելու և ռազմական գործողություններ ծավալելու նախա-ծեռնությամբ հանդես են եկել Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Այդ հարցը քննարկվել է նաև Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարու-թյուններում:

1914 թ. սեպտեմբերին, երբ Օսմանյան կայսրությունը դեռևս չէր մտել պատերազմի մեջ, և Անտանտի երկրները ջանքեր էին գործադրում նրա չեզոքությունը պահելու ուղղությամբ, բրիտանական կառավարությունը երկու անգամ քննարկում է թուրքերի պատերազմի մեջ մտնելու դեպքում Ալեքսանդրետից նրանց հարված հասցնելու հարցը¹:

1914 թ. սեպտեմբերի 9-ին Հոնաստանում բրիտանական ծովային առաքելության ղեկավար փոխծովակալ Մարկ Քերրը առաջարկում էր հու-նական ուժերի հետ միասին Ալեքսանդրետի վրա հարձակվել²: Նույնանման առաջարկ էր արել նաև Բրիտանիայի ռազմածովային նախարար Ուինստոն Չերչիլը նոյեմբերի 25-ին՝ Եգիպտոսի վրա հարձակումը կանխելու նպատա-կով: Սակայն դրանք մերժվել են Բրիտանիայի ռազմական նախարար Հո-րացիո Քիթսենների կողմից: Դա պայմանավորված էր Ֆրանսիայի դիրքորոշ-մամբ, որը կասկածում էր, որ Բրիտանիան աչք ունի Ալեքսանդրետի վրա և ֆրանսիական ծովային նախարար Վիկտոր Օգանյորը նույնիսկ մեկնել էր Լոնդոն՝ տեղեկանալով բրիտանական վերոնշյալ նախագծերի մասին³:

Թուրքական 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան իր հուշերում խոստովանում է, որ 1915 թ. սկզբին իր ուժերն անբավարար էին Սիրիան, Պաղեստինը, Կիլիկիան պաշտպանելու համար: Նրա հրամանով զգալի աշ-խատանքներ էին կատարվել Մերսինի, Թոփրակ Կալեի, Դյորթ Յոլի, Ալեքսանդրետի ափամերձ շրջաններն ամրապնդելու համար: Իսկ Դարդանեյի օպերացիայի ժամանակ առանց այդ էլ անբավարար ուժերի զգալի մասն ուղարկվել էին Կ. Պոլիս⁴:

¹ Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement, p. 1021, 1023.

² Churchill W., The World Crisis, Toronto, 1923, p. 534.

³ Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 302:

⁴ Memories of a Turkish statesman, p. 167.

ինչպես տեսանք, Ջենալ փաշայի հուշերից պարզ էր, որ Կիլիկիայում Անտանտի երկրների զորքերի ափհանեում կատարելը լուրջ դժվարությունների չէր հանդիպի: Սակայն այդ ուղղությունից թուրքերին հարված հասցնելու բազմաթիվ նախագծերն այդպես էլ իրականություն չդարձան Ֆրանսիայի կոշտ ընդդիմության հետևանքով: Վերջինս դեմ էր բրիտանական կամ հայկական ուժերով գործողություններ ծավալելուն այն տարածաշրջանում, որի նկատմամբ հավակնություններ ուներ:

1915 թ. հունվարին Մեծ Բրիտանիայի ռազմական նախարար Հ. Քիթչեները և Եգիպտոսում բրիտանական զորքերի հրամանատար, գեներալ Ջոն Մաքսվելը հակվել էին Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու գաղափարին: Նրանք կարծում էին, որ դա կարող էր կանխել թուրքական արշավանքը դեպի Սուեզի ջրանցք: Դրանով կարող էին կտրել Կիլիկիայով անցնող երկաթուղային հաղորդակցությունը մի կողմից Փոքր Ասիայի, մյուս կողմից Սիրիայի ու Միջագետքի միջև: Զ. Մաքսվելը համոզված էր, որ Ալեքսանդրետի ուղղությամբ արշավանքը «ամենադիպրին, ամենաապահով և ամենաարդիւնաւետ» միջոցն էր, և մեծաթիվ զորքի կարիք չկար¹:

Վերոնշյալ նախագծի արձարծումը համընկնում է այն ժամանակաշրջանին, երբ Զ. Մաքսվելի հետ հանդիպել էր Պ. Նուբարը և առաջարկել Կիլիկիայում ափհանում կատարել: Եգիպտական զորքերի հրամանատարն իր հերթին կարողացել էր այդ ծրագրի արդյունավետության մեջ համոզել Հ. Քիթչեներին, ով ընդամենը երկու ամիս առաջ, ինչպես տեսանք, մերժել էր նմանատիպ նախագծերը:

Նրանք փորձեցին այդ հարցում համաձայնության գալ ֆրանսիացիների հետ: Սակայն ֆրանսիական պետական գործիչները մտավախություն ունեին, որ Մեծ Բրիտանիան ձգտում էր Ալեքսանդրետը գրավել և պահել: Դրան հակազդելու համար անհրաժեշտ էին համարում, որ այդ տարածաշրջանում ռազմական գործողություններն առանց ֆրանսիական զորքերի մասնակցության չիրականացվեն: Իսկ ֆրանսիական զորքեր Արևելքում գրեթե չկային:

Ֆրանսիացիները խանդով ու անհանգստությամբ էին արձագանքում նույնիսկ, երբ բրիտանական ռազմանավերը մոտենում էին Ալեքսանդրե-

¹ Եափուճեան Ա., նշվ. աշխ., էջ 1110-1111:

տին: Դա էր պատճառը, որ ֆրանսիական ականակիր նալ ուղարկվեց Սիրիայի ասիերի մոտ¹:

1915 թ. հունվարի 2-ին Ռուսաստանի գերագույն գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովը դիմեց Մեծ Բրիտանիային՝ խնդրելով Մերձավոր Արևելքում ռազմական գործողություններ սկսել, որպեսզի թուլացնեն թուրքական բանակի ճնշումը Կովկասյան ճակատի ռուսական բանակների վրա²:

Բրիտանական կառավարությունը 1915 թ. հունվարին քննարկեց Թուրքիային հզոր հարված հասցնելու երկու ուղղություններ: Ռազմական նախարար Հ. Քիթչենը գտնում էր, որ անհրաժեշտ էր հարվածել Կիլիկիայի ուղղությամբ, իսկ ռազմածովային նախարար Ուինստոն Չերչիլը, որին աջակցում էր նաև ֆինանսների նախարար Դ. Լլոյդ Ջորջը առաջարկում էին հարձակվել Դարդանեյի վրա և գրավել մայրաքաղաք Կ. Պոլիսը:

Հ. Քիթչենը անհրաժեշտ էր համարում Կ. Պոլիսը գրավելու ծրագիրը և առաջարկում էր ավիանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, ներխուժել Անտիոքի դաշտ և շարժվելով հյուսիս-արևելք՝ Դիարբեքի կամ Վանի վիլայեթներում միանալ ռուսական բանակին³: Դրանով Թուրքիան կբաժանվեր երկու մասի և հեշտությամբ կգրավվեր դաշնակիցների կողմից:

Կ. Պոլիսը գրավելու նախաձեռնության հեղինակն էր Ու. Չերչիլը: Դրանով նա ցանկանում էր սևծովյան նեղուցների վրա հաստատել բրիտանական վերահսկողություն՝ լավ իմանալով, որ այդ տարածքներին հավակնում էր դաշնակից Ռուսաստանը: Ու. Չերչիլը դեռևս 1914 թ. սեպտեմբերի սկզբին առաջ էր քաշել Դարդանեյը հունական ուժերի միջոցով գրավելու գաղափարը⁴: 1914 թ. նոյեմբերի 25-ին ծովակալության կողմից կառավարությանն էր ներկայացվել Դարդանեյի ուղղությամբ ռազմական գործողությունների նախագիծ, որը երկար ժամանակ քննարկման չէր արժանացել⁵:

Թուրքիայի դեմ ռազմական խոշորածավալ գործողություն սկսելու Ռուսաստանի խնդրանքը բրիտանական կառավարությունը քննարկեց 1915 թ. հունվարի 13-ին: Ու. Չերչիլն առաջարկում էր նավատորմի ուժերով ճեղքել

¹ Boghos Nubar's Papers, p. 85.

² Տրուխանովսկի Վ., Ուինստոն Չերչիլ: Քաղաքական կենսագրություն, Երևան, 1972, էջ 191:

³ Սիարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ), Լոս Անճելես, 1986, էջ 61-62:

⁴ Churchill W., The World Crisis, p. 532.

⁵ Howard H.N., The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923, Norman, University of Oklahoma Press, 1931, p. 122.

Դարդանելի նեղուցը և մոտենալ Կ. Պոլսին: Այդ նախագծին դեմ էր ծովային առաջին լորդ, ծովակալ Ջոն Ֆիշերը, ով արկածախնդրություն էր համարում, առանց ցամաքային մեծաքանակ ուժերի աջակցության, սկսել այդ ռազմագործողությունը: Նա այդ խնդիրն ուսումնասիրել էր դեռ տարիներ առաջ, երբ մի քանի անգամ անցել էր Դարդանելի նեղուցով, կամ նրա նավատորմը կայանել էր մոտակայքում: Այդ նախաձեռնությանը դեմ էր նաև ռազմական նախարար Հ. Քիթչեները: Սակայն վարչապետ Հերբերտ Ասքուիթը որոշեց նախապատվություն տալ Ու. Չերչիլի նախագծին, որը պաշտպանում էր նաև Դ. Լլոյդ Ջորջը¹:

Հունվարի 27-ին բրիտանական իշխանությունները ֆրանսիացիներին տեղեկացրին, որ Ալեքսանդրետում չեն պատրաստվում գործողություններ կատարել առանց Ֆրանսիայի²: Ու. Չերչիլը ֆրանսիացիներին հավաստիացրել էր, որ եթե Սիրիայում կամ Կիլիկիայում երբևէ դաշնակցային նավատորմը ռազմական գործողություններ սկսի, ապա դա պետք է ղեկավարի ֆրանսիացի ծովակալ, իսկ եթե Ալեքսանդրետում ափհանում կատարվի, ապա միայն երկու կառավարությունների համաձայնությամբ³:

Այսպիսով՝ բրիտանական իշխանությունները որոշում են հարձակվել Կ. Պոլսի ուղղությամբ, որն իրագործելու համար անհրաժեշտ էր մեծ նավատորմ և հսկայական բանակ, իսկ Կիլիկիան մատնվեց անուշադրության, թեև այնտեղ հաջողության կարող էին հասնել վերոնշյալի համեմատ աննշան ուժերով:

Հունվարի 28-ին բրիտանական կառավարությունը վերջնականապես որոշում է հարձակվել Դարդանելի վրա, չնայած որոշ ծովակալներ անհնար էին համարում դա, և մտահոգություն էին հայտնել, որ պարտության դեպքում Մեծ Բրիտանիայի հեղինակությունն Արևելքում ծանր հարված կստանար⁴:

Ծովակալությունը պետք է փետրվարին կազմակերպեր հարձակումը Գալիպոլի թերակղզու վրա, որպեսզի այնտեղից գրավեին Կ. Պոլիսը⁵: Մայրաքաղաքի գրավումով ակնկալում էին, որ Թուրքիան դուրս կգար պատերազմից, անվտանգ կդառնար Եգիպտոսը և Բալկանյան թերակղզին, իսկ

¹ Fisher J., Memories and Records, vol. I, New York, Goerge H. Doran company, 1920, p. 71-72, 79, 81-82.

² Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 302:

³ Եափունեան Ա., նշվ. աշխ., էջ 1121:

⁴ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը, էջ 159:

⁵ Howard H., The Partition of Turkey, p. 122.

Դարդանելի ու Բոսֆորի ռազմավարական մեծ կարևորություն ունեցող նեղուցների վերահսկողությունը կանցնելու Մեծ Բրիտանիային:

Փաստորեն՝ Ռուսաստանին օգնելու պատրվակի տակ, բրիտանական կառավարությունը որոշեց ոտնահարել ռուսական շահերը՝ լավ իմանալով, որ դա կգայրացնի դաշնակցին:

Ս. Սազոնովն իր հուշերում գրում է. «Յուրաքանչյուր ռուսի համար նեղուցներին տիրելը ծառայել է և կծառայի ջերմ հույսերի ու ձգտումների առարկա»¹, ապա ավելացնում է. «Ռուսական պետության պատմական զարգացման գործընթացը չի կարող ավարտին հասնել այլ կերպ, քան մեր տիրապետության հաստատմամբ Բոսֆորի ու Դարդանելի վրա»²: Բնականաբար, նեղուցների հարցում բրիտանական հավակնությունները չափազանց բացասաբար ընդունվեցին ռուսական կողմից: Ս. Սազոնովն այդ մասին նշում է. «Որքան որ ես համակրում էի Թուրքիայի ու Բուլղարիայի միջև սեպ խրելու գաղափարին, այնքան էլ ինձ համար տհաճ էր նեղուցների ու Կ. Պոլսի գրավումը մեր դաշնակիցների և ոչ թե ռուսական զորքերի և Սևծովյան նավատորմի միջոցով»³:

1914 թ. նոյեմբերին Մեծ Բրիտանիայի ԱԳ նախարար դերկոմս Է. Գրեյը և Գեորգ Ե թագավորը Լոնդոնում ռուսական դեսպան Ա. Բենկենդորֆին խոստացել էին, որ նեղուցների և Կ. Պոլսի հարցը պատերազմից հետո լուծվելու էր Ռուսաստանի շահերին համապատասխան⁴: Սակայն ռուսական կողմի մտահոգությունն արդարացված էր, քանի որ բրիտանական գործիչների զգալի մասը դեմ էր նեղուցների վրա ռուսական տիրապետության հաստատմանը:

Դարդանելի ռազմագործողությունը ծրագրելու բրիտանական կառավարող շրջանների հեռահար, հակառուսական մտայնության մասին հետագայում խոստովանել է Է. Գրեյը. «Անգլիական քաղաքականությունը միշտ էլ նպատակ է հետապնդել Ռուսաստանին թույլ չտալ մոտենալու Կ. Պոլսին և նեղուցներին. մենք դրա համար պայքարել ենք Ղրիմի պատերազմում... և դա էր մեր քաղաքականության հիմնական ուղղությունը Բիքոնսֆիլդի դեկավարությամբ... Ներկայումս Անգլիան մտադիր է զավթել Կ. Պոլիսը, այն հաշվով, որ երբ Անգլիան և Ֆրանսիան կարողանան Ռուսաստանի օգնու-

¹ Сазонов С. Д., Воспоминания, Москва., 2002, с. 270.

² Նույն տեղում, էջ 275:

³ Նույն տեղում, էջ 288:

⁴ Kerner R., Russia, the Straits, and Constantinople, p. 407.

թյամբ շահել պատերազմը, խաղաղություն հաստատվելուց հետո Ռուսաստանը չստանա Կ. Պոլիսը»¹:

«Չերչիլի Դարդանելյան կամպանիան,- գրում է Գոթլիբը,- հիմնավորվում էր երկու գործոնով. անգլո-ռուսական հին մրցակցությամբ և Մերձավոր արևելքում Մեծ Բրիտանիայի նոր նկրտումներով»²:

Ինչպես տեսնում ենք, նեղուցների հարցում բրիտանական հավակնությունների նկատմամբ ռուսական կողմի բացասական դիրքորոշումը և մտավախությունները անհիմն չէին: Այդ քայլը արդարացիորեն դիտվում էր որպես Ռուսաստանի առաջ սևծովյան նեղուցները փակելուն ուղղված հեռագնա նպատակ:

1915 թ. հունվարի 19-ին, տեղեկանալով Դարդանելի ուղղությամբ բրիտանական հարձակում նախապատրաստելու մասին, Ռուսաստանի արտգործնախարար Ս. Սազոնովը պահանջեց դրանում ապահովել նաև ռուսական ռազմածովային ուժերի մասնակցությունը կամ հետաձգել արշավանքը: Սակայն Ռուսաստանի փոխարեն Ու. Չերչիլը գերադասեց Դարդանելի օպերացիային ապահովել Ֆրանսիայի մասնակցության երաշխիքը³:

Դարդանելի օպերացիան իրականացնելու համար բրիտանա-ֆրանսիական կողմը կենտրոնացրեց 11 գծանավ, 1 գծային և 4 թեթև հաճանավ, 16 էսկադրոնային ականակիր, 7 տրալցիկ, 1 հրետանավ: Նրանց դիմադրում էին թուրքական I և II բանակները (200.000 զինվոր), որոնք ունեին 200 հրանոթ՝ դաշնակիցների 280-ի դիմաց: 1915 թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 18-ը մի քանի անգամ տեղի ունեցած Անտանտի ռազմածովային ուժերի հուժկու գրոհներն ավարտվեցին անհաջողությամբ⁴:

Մարտի 18-ի հզոր գրոհից հետո դաշնակիցները հսկայական կորուստներ ունեցան և որոշեցին դադարեցնել հարձակումները: Սակայն թուրքերը ևս զգալի կորուստներ էին ունեցել, իսկ նրանց զինամթերքը գրեթե ամբողջությամբ սպառվել էր: Թուրքերն ու գերմանացիները դեռ մի քանի օր սպասում էին նոր հարձակման՝ չհավատալով, որ վերջնականապես հաղթել են բրիտանական նավատորմին⁵:

¹ Grey E., Twenty Five Years, 1892-1916, vol. II, London, 1925, p. 180.

² Կիրակոսյան Ջ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 431:

³ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 52:

⁴ Հարությունյան Ա., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմաղիվամագիտական պատմությունից (1914-1918), Երևան, 1983, էջ 191-192:

⁵ Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը, էջ 186-188:

Այսպիսով՝ Դարդանելում ավիանում կատարելու բրիտանական իշխանությունները որոշումից հետո Կիլիկիան անուշադրության է մատնվում: Ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով բրիտանացիները ծանր պարտություն կրեցին, մեծ զոհեր տվեցին, վերացավ բրիտանական նավատորմի անպարտելիության մասին հավատը, վարկաբեկվեց նրանց հեղինակությունն Արևելքում, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման:

Դարդանելի օպերացիայի ձախողումն ավելի ինքնավստահ դարձրեց թուրքերին և նրանք որոշեցին իրականացնել նախապես ծրագրած Հայոց ցեղասպանությունը: Ամերիկյան դիվանագետ Լ. Էյնշտեյնը վկայում է, որ Դարդանելից հետո թուրքերը պահը նպաստավոր համարեցին հակահայկական քաղաքականությունը գործադրելու համար¹:

Հերբերտ Գիբոնսը գրում է. «Դաշնակիցների կողմից Դարդանելի պաշարման սկզբին Կ. Պոլսում բոլորը գիտեին, որ հասել է ժամանակը, երբ հայ ազգի արդեն վաղուց հաստատված և միայն ժամանակավորապես Բ. Դռան և Սերասկերատի արխիվներում թաքցրած մահվան դատաժնիքը վերջապես ի կատար կածվի»²: Լորդ Քինրոսը ևս այն կարծիքն է պաշտպանում, որ Գալիպոլիում բրիտանական զորքերի կրած անհաջողությունը երիտթուրքական եռյակին հնարավորություն տվեց, չվախենալով արտաքին միջամտությունից, հետևելու նախապես մշակված քաղաքականությանը՝ հայ ազգի ոչնչացմանը³: Իր հուշերում Ու. Չերչիլը հետագայում նույնպես խոստովանել է Դարդանելի օպերացիայի խաղացած բացասական դերը ցեղասպանության կազմակերպման գործում. «Ոչ մի կասկած չկա, որ այդ հանցագործությունը մշակված է քաղաքական նկատառումներով: Թուրքերը ժամանակը գտան հարմար ... երկիրը մաքրելու քրիստոնեական ռասայից ... Լիովին հնարավոր է, որ Գալիպոլիի թերակղզու բրիտանական գրոհն էլ ավելի ուժեղացրեց թուրքական կառավարության կատաղությունը»⁴:

Կ. Պոլսի ուղղությամբ բրիտանացիների կազմակերպած արկածախնդրական արշավանքը և դրա պարտությունը ծանր հետևանքներ ունեցան ոչ միայն Մեծ Բրիտանիայի, այլ նաև արևմտահայության համար: Դրանով մի կողմ դրվեց Կիլիկիան ազատագրելու ավելի իրատեսական ծրագիրը,

¹ Einstein L., Inside Constantinople, p. VII.

² Гиббонс Г., Последние избиения в Армении, Петроград, 1916, ст. 26.

³ Lord Kinross, The Ottoman Centuries. The Rise and the Fall of the Turkish Empire, London, 1977, p. 607.

⁴ Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, 1969, էջ 305:

իսկ ձախողումը թուրքական իշխանությունների համար նպաստավոր պայմաններ ստեղծեց իրականացնելու վաղուց ծրագրված Հայոց մեծ եղեռնը:

1915 թ. ապրիլի 25-ից մինչև 1916 թ. հունվարի 9-ը բրիտանացիները երկրորդ արկածախնդիր գործողությունը կազմակերպեցին: Նրանք ափիսնում կատարեցին Գալիպոլի թերակղզում: Մի քանի ամիս տևած Դարդանեղի օպերացիայի ժամանակ բրիտանացիները կենտրոնացրին ավելի քան 400.000 զինվոր, կորցրին՝ 130.000-ը: Թուրքիան կորցրեց 218.000 զինվոր¹: Ֆրանսիացիները սկզբում Գալիպոլի ուղարկեցին երկու դիվիզիա՝ 40.000 զինվոր, սակայն հետագայում նրանց զորքի թիվը հասավ 120.000-ի: Այն հսկայական կորուստներ ունեցավ, կորցրեց իր անձնակազմի ավելի քան 20 տոկոսը՝ 26.500 զինվոր²:

Դարդանեղի ռազմագործողության ընթացքում շուրջ կես միլիոնանոց բրիտանա-ֆրանսիական ուժերն անհաջողության մատնվեցին և կորցրին մի քանի հարյուր հազար զինվոր: Իսկ Կիլիկիայում կարող էին հաջողության հասնել մի քանի անգամ ավելի փոքրաթիվ ուժեր ուղարկելով և, բնականաբար, աննշան կորուստներով:

Ինչպես տեսնում ենք, երկար քննարկումներից հետո, բրիտանական իշխանությունները որոշում են ափիսնում կատարել Դարդանեղում և Կիլիկիան անուշադրության է մատնվում: Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի ծանր հետևանքներ ունեցավ և՛ բրիտանացիների և՛ արևմտահայերի համար:

1915 թ. մայիսի 23-ին Իտալիան պատերազմ հայտարարեց Ավստրո-Հունգարիային: Կ. Պոլսում հավանական էին համարում, որ Թուրքիային պատերազմ հայտարարելու դեպքում իտալացիները կհարձակվեն Կիլիկիայի ուղղությամբ³: Սակայն իրականում Իտալիան չէր պատրաստվում Կիլիկիայի ուղղությամբ ռազմական գործողություններ իրականացնել և թուրքերի անհանգստությունն արդարացված չէր:

Ալեքսանդրետում ափիսնում կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ռազմագիտական հիմնավորումներով՝ 1915 թ. օգոստոսին Ֆրանսիայի կառավարությանն էր դիմել նաև ֆրանսիական բանակի Գլխավոր շտաբի պետ զորավար Մորիս Սարրան: Բայց այդ նախագծի դեմ հանդես էին եկել ֆրանսիական բանակի գլխավոր հրամանատար Ժոզեֆ Ժոֆրը, վարչապետ

¹ Готлиб В., Тайная дипломатия во время Первой войны, Москва, 1960, с. 182.

² Fulton L. Bruce, France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 156

³ Einstein L., Inside Constantinople, p. 117.

Ռենե Վիլիսոնը և ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը¹: Ժ. Ժոֆրը անձնական հատուկ հակակրանք ուներ Մ. Սարրայի նկատմամբ, որը նույնպես ազդեցություն էր ունեցել որոշման կայացման գործում²:

Ալեքսանդրետում 150.000-ոց բանակով ավիանոմ կատարելու, Տավրոսի ու Ամանոսի լեռնանցքերը, Մերսինը և Ադանայի դաշտը գրավելու առաջարկ էր արել նաև Միջերկրականի ֆրանսիական I ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Դարտրիժ դը Ֆուրնիեն, սակայն Թ. Դելկասեն մերժել էր, քանի որ ֆրանսիական զորքերը քիչ էին, իսկ բրիտանական զորքերին Կիլիկիայից հետագայում դուրս բերելը կարող էր դժվարությունների հանդիպել³:

Սեպտեմբերի 22-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Պիեռ Դարիոն ռազմածովային նախարար Վիկտոր Օգանյորին ուղարկած ընդարձակ զեկուցագրում նկարագրում էր Միջերկրականի արևելյան ափին իրենց համար ստեղծված չափազանց բարենպաստ իրավիճակը և առաջարկում էր դիմել վճռական գործողությունների⁴: Նա արդյունավետ էր համարում Ալեքսանդրետի ծոցի խորքում՝ Իսոսի դաշտում, ավիանոմ կատարելը, ուր կարող էին գրավել Թոփրակ Կալեի երկաթուղային հանգույցը և Տավրոսից Պոզանտ տանող ելքերը: Դրանից հետո ծովային ու ցամաքային զորքերը համատեղ գործողություններով կարող էին հեշտությամբ շարժվել դեպի հարավ և ազատագրել Սիրիան: Այդ պահին Սիրիայում թուրքական բանակն ուներ ընդամենը 20.000 զինվոր և հաջողության հասնելու համար իրենց բավարար կլինեին ընդամենը մեկ բանակային կորպուս: Ծովակալի կարծիքով, այդ գործողությունը կլինեին չափազանց արդյունավետ, իսկ թուրքերը ստիպված կլինեին Դարդանեյի ճակատից որոշ ուժեր տեղափոխել դեպի Սիրիա, միաժամանակ այդ գործողության ազդեցությամբ կմեծանար դասավորությունը թուրքական բանակում: Պ. Դարիոն գտնում էր, որ, եթե Ֆրանսիան ի վիճակի չլինի պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա կարող են զինել թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը: Նա՝ որպես առաջին քայլ, խնդրում էր իրեն տրամադրել 800 հրացան և զինամթերք՝ մուսալեռցիներին զինելու համար: «Այս ձևով զինված ու լավ մարզված մար-

¹ Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 48-49:

² http://en.wikipedia.org/wiki/Maurice_Sarraill

³ Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 302:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 170-176:

տունակ հայերը կարճ ժամանակում վեր կածվեն ահարկու ուժի, որը խիստ կարգապահության վարժվելուն պես, հնարավոր կլինի մոտ ապագայում կրկին վերադարձնել ցամաք, լավագույն ձևով օգտագործելով ի նպաստ մեր ռազմական գործողության»¹, - մատնանշում էր փոխծովակալը: Նա նախատեսում էր զինել ինչպես Անտիոքի շրջանի հայերին, այնպես էլ լիբանանցիներին: Պ. Դարիոն պահանջում էր տրամադրել 20.000 հրացան ու ռազմամթերք՝ համընդհանուր ապստամբություն սկսելու և հաղթական ավարտի հասցնելու համար:

Ինչպես երևում է, 1915 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մուսալեոցիների հաջողված հերոսամարտի անմիջական տպավորության տակ ֆրանսիացիները բավական ոգևորված էին: Նրանք գիտակցում էին, որ հայերը կարող են զգալի ռազմական աջակցություն ցուցաբերել Ֆրանսիային տարածաշրջանում: Սակայն որոշ ֆրանսիացի գործիչների այնքան էլ չէր ոգևորում հայերի կամ լիբանանցիների օգնությամբ Կիլիկիայում, Սիրիայում, Լիբանանում թուրքերին պարտության մատնելու հեռանկարը:

Հոկտեմբերի 1-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Ժյուլ Ալբերտ Դեֆրանսը Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում լիովին հավանություն էր տալիս Պ. Դարիոյի ծրագրին, հաստատում էր, որ Սիրիայում թուրքերը շատ փոքրաթիվ ուժեր ունեն, որոնք բարոյալքված վիճակում են: Սակայն նա դեմ էր տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին՝ չնայած դա համարում էր իրագործելի: Նա գտնում էր, որ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա իրենք հետագայում ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել, իբր այնտեղ անիշխանությունը վերացնելու և թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Իսկ մուսալեոցիներից կազմված զորամասը գտնում էր, որ պետք է օգտագործել միայն թուրքական ափերում դիվերսիաներ կազմակերպելու համար, որից հետո պետք է հետ վերադառնար: Նա լավագույն տարբերակ էր համարում ֆրանսիական ռազմարշավի կազմակերպումը և Սիրիայի գրավումը²:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի դիվանագետը դեմ էր առանց ֆրանսիական բանակի միջամտության Սիրիայի և Կիլիկիայի գրավմանը, քանի որ հետագայում կարող էին բարդություններ ծագել, երբ այդ տարածքները

¹ Նույն տեղում, էջ 176:

² Նույն տեղում, էջ 194-196:

փորձեին ֆրանսիական գաղութի վերածել: Նա նույնիսկ դեմ էր փոքրաթիվ հայկական ուժերին այդ տարածքներում մշտական ռազմական գործողությունների ուղարկելու մտքին՝ վախենալով, որ հայկական ապստամբական հաջող շարժումը հիմքեր կստեղծեր հայկական ինքնավարության համար:

Իր զեկուցագրի վերջում Ժ. Դեֆրանսը բերում էր այդ հարցի շուրջ Ջ. Մաքսվելի հայտնած կարծիքը: Վերջինս Եգիպտոսի դեմ հարձակման վտանգը վերացնելու համար գտնում էր, որ «հարկ է գործել Ալեքսանդրետի տարածաշրջանում: Բայց ֆրանսիացիներն ազատ ուժեր չունեն այդ վայրերում գործողություն իրականացնելու համար, իսկ մենք չենք համարձակվում գնալ այնտեղ՝ ֆրանսիացիներին տհաճություն չպատճառելու համար»¹:

1915 թ. նոյեմբերին Հ. Քիթչեները կրկին բարձրացրեց Կիլիկիայում դաշնակից զորքերի ափհանում իրականացնելու հարցը: Դա պայմանավորված էր Դարդանեյի օպերացիայի ձախողումով, և դաշնակիցներին անհրաժեշտ էր որևէ ձևով վերականգնել իրենց հեղինակությունն Արևելքում: Խնդիրը նրան ներկայացրել էր Ջ. Մաքսվելը, երբ նախարարն այցելել էր Եգիպտոս: Նախագծին կողմ արտահայտվեց նաև Եգիպտոսի բրիտանական գլխավոր կոմիսար Արթուր Հենրի Մակ-Մահոնը: Նրանք կարծում էին, որ Դարդանեյի ձախողումը կարող է բացասաբար անդրադառնալ Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ բանակցությունների վրա: Ջ. Մաքսվելը և Հ. Մակ-Մահոնը համոզված էին, որ Գալիպոլիից զորքերի դուրսբերումը պետք է իրականացվեր, միայն Այասի ծովածոցում ափհանում կատարելուց հետո, որպեսզի բրիտանական հեղինակությունը չխաթարվեր, արաբների հետ բանակցությունները չձախողվեին, իսկ թուրքերին Միջագետքում ազատ գործելու հնարավորությունից զրկեին: Սակայն բրիտանական գլխավոր շտաբում այնքան էլ հակված չէին այդ ծրագրին, քանի որ վստահ էին, որ թուրքերը Սուեզի վրա կրկին չեն հարձակվի՝ նախորդ փետրվարի դառը փորձից հետո, իսկ Ալեքսանդրետում անհրաժեշտ 100.000 զինվորները, կարծում էին, ավելի լավ է ուղարկել գերմանական ճակատ, քանի որ այնտեղ էր որոշվելու պատերազմի բախտը: Չնայած շտաբի ընդդիմությանը՝ Հ. Քիթչեները հակված էր իրականացնելու այդ նախագիծը՝ այն համարելով Եգիպտոսի և աֆրիկյան մյուս տիրույթների պաշտպանության լավագույն տարբերակ²:

¹ Նույն տեղում, էջ 196:

² Եափուճեան Ա., նշվ. աշխ., էջ 1118-1120:

Բրիտանական կառավարությունը դիմել էր նաև Ֆրանսիային՝ խնդրի շուրջ նրա կարծիքն իմանալու համար: Նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի կառավարությունը խորհրդակցություն է հրավիրում Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողությունների հարցը քննարկելու նպատակով: Սակայն քննարկման արդյունքում որոշվում է, որ տվյալ պահին ձեռնադրում չէ Կիլիկիայում ափհանում կատարելը և այդ մասին տեղեկացնում են բրիտանական կառավարությանը¹:

Նոյեմբերի 15-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը Ա. Բրիանին ուղարկած հեռագրով տեղեկացնում էր, որ Ալեքսանդրետում դեսանտ իջեցնելու լորդ Հ. Քիթչենների ծրագրի մասին զրուցել էր Է. Գրեյի հետ: Վերջինս այդ ռազմագործողությունը բավական դժվար իրականանալի էր համարել՝ հաշվի առնելով բրիտանական զորքերի ցրվածությունը տարբեր ճակատներում՝ Բալկաններում, Եգիպտոսում, Հնդկաստանում, Դարդանելում: Է. Գրեյը նշել էր, որ այդ հարցը քննարկելու են կառավարությունը և ռազմական իշխանությունները, սակայն նրա կարծիքով դրան դեմ կլինեին գլխավոր շտաբում ու ծովակալությունում²:

Ֆրանսիացիների կողմից Ալեքսանդրետի շրջանում ռազմական գործողություններ ծավալելու ծրագիրը չընդունելը Հ. Քիթչեններին բավական վրդովվեցրել էր: Նա այդ քայլը մեկնաբանում էր իբրև քաղաքական դիտավորություն: Այդ տպավորությունը մեղմելու համար Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Ժոզեֆ Գալիենին փորձել էր պատճառաբանել, որ իրենք միայն ռազմական նկատառումներով են հրաժարվում այդ նախագծից, նույնիսկ նշել էր, որ բրիտանացիներն ազատ են իրենց հայեցողությամբ գործելու Ալեքսանդրետի շրջանում³:

1915 թ. դեկտեմբերի 4-6-ը Ֆրանսիայի Շանտիյե քաղաքում տեղի է ունենում դաշնակից երկրների գլխավոր հրամանատարների և բանակների ներկայացուցիչների համաժողով: Այնտեղ քննարկվում էր դաշնակիցների կողմից հակառակորդին միաժամանակյա և համաձայնեցված հարվածներ հասցնելու հարցը, սակայն ընդհանուր եզրակացության չեն գալիս⁴: Բրիտանացիները ցանկանում էին Սալոնիկը հանձնել և զորքերը տեղափոխել Սիրիա, Եգիպտոս կամ Ֆրանսիա: Ռուսական կողմը գտնում էր, որ Սալոնի-

¹ Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 49:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 230:

³ Նույն տեղում, էջ 231:

⁴ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 7-10:

կը պետք է պահել և աջակցել սերբական բանակի մնացորդների ամրապնդմանն այնտեղ¹: Այստեղ, Ֆրանսիայի ճնշման տակ, վերջնականապես որոշվում է հրաժարվել Կիլիկիայում ափհանում կատարելու Հ. Քիթչենների ծրագրից²: Դրա փոխարեն 1916 թ. փետրվարի 15-ին Շանտիլյեում դաշնակիցների շտաբների խորհրդաժողովում որոշվում է Սալոնիկը պահել և ուժեղացնել այնտեղ գտնվող բանակը³:

Այդ շրջանում ֆրանսիացիները բավարար ուժեր չունեին Կիլիկիա ուղարկելու համար: Փաստորեն՝ Ալեքսանդրետի օպերացիայում հիմնական դերակատարությունը ստանձնելու էին բրիտանացիները, և Ֆրանսիան վախենում էր, որ կարող է կորցնել Կիլիկիան, եթե այն գրավվի ոչ իր զորքերի կողմից:

Ռուսական գլխավոր շտաբի պետ, գեներալ Միխայիլ Ալեքսեևը 1915 թ. նոյեմբերին Ս. Սազոնովին գրում էր, որ դաշնակիցների մոտ գերիշխում էր միայն սեփական շահի հասկացողությունը, բացակայում էր ընդհանուր ռազմավարական միտքը, յուրաքանչյուր շրջանի համար թատերաբեմի գնահատման, պայքարի ընդհանուր նպատակը տեսնելու պատրաստակամությունը⁴:

Այդ շրջանում բրիտանական վերնախավի մի մասը դեմ էր Արևելքում ֆրանսիական նկրտումներին: Հնդկաստանի բրիտանական կառավարությունը պահանջում էր չմասնատել Օսմանյան կայսրությունը, իսկ գնդապետ Լոուրենս Արաբացին առաջարկում էր ստեղծել արաբական պետություն և դեմ էր Սիրիան Ֆրանսիային զիջելուն⁵: Սիրիան, Կիլիկիան և Մոսուլը Ֆրանսիային հանձնելու հարցը լուծվում է միայն Սայքս-Պիկոյի համաձայնագրով:

Թե որքան արդյունավետ կլինե՞ր Կիլիկիայում կատարելիք ափհանումը, կարելի է եզրակացնել ծանոթանալով գերմանական մարշալ Պաուլ Հինդենբուրգի տեսակետին, որն իր զարմանքն էր հայտնում, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան չօգտվեցին այդ անպաշտպան օղակից և շարքից չհանեցին Գերմանիայի դաշնակից Թուրքիային: «Այսպես վարվելու դեպքում,- նշում է ֆելդմարշալը,- նրանք կկարողանային կտրել Թուրքիայի տրանստավրո-

¹ Նույն տեղում, թ. 1:

² Գասպարյան Ե., նշվ. աշխ., էջ 53:

³ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 4, գ. 11, թ. 39:

⁴ Նույն տեղում, թ. 1:

⁵ Leslie Shane, Mark Sykes: His Life and Letters, with an Introduction by the right hon. Winston Churchill, , London, New York, Toronto and Melbourne, 1923, p. 248-249.

սյան երակը, որի վրայով թուրքական ուժերը, հանդերձանքն ու սպառազինությունները ուղարկվում էին Սիրիա, Միջագետք և մասամբ Կովկասյան բանակներին»¹։ Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը ևս վախենում էր, որ հակառակորդները կարող էին բացահայտել թուրքերի «թուլությունն այդ կրիտիկական կետում»²։

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայում ավիանում կատարելու և այնտեղ հաջող ռազմական գործողություններ ծավալելու հնարավորությունը Անտանտի երկրները բաց են թողնում։ Դա պայմանավորված էր Մերձավոր Արևելքում բրիտանա-ֆրանսիական գաղտնի մրցակցությամբ։ Ֆրանսիական գործիչները ցանկանում էին պատերազմից հետո Կիլիկիան միացնել իրենց գաղութներին, սակայն այդ պահին Արևելքում բավարար զորքեր չունեին այդ երկրամասը գրավելու համար։ Ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում բրիտանական ու հայկական ուժերով Կիլիկիան ազատագրելու ծրագրերին՝ վախենալով, որ կարող են այն կորցնել։

Ամերիկյան կոնգրեսական, նախկինում եգիպտոսում ներկայացուցիչ, գնդապետ Է. Լիթլը 1918 թ. փետրվարի 7-ին Կոնգրեսում ելույթի ժամանակ սխալ համարեց Ու. Չերչիլի՝ Դարդանեյի՝ այլ ոչ թե Ալեքսանդրետի վրա հարձակվելու նախաձեռնությունը։ Կոնգրեսականը վստահ էր, որ Կիլիկիայում ավիանման դեպքում, որը երկաթուղային կարևոր հանգույց էր հանդիսանում, բրիտանական զորքերը կարող էին շարժվել Կ. Պոլիս, Երուսաղեմ կամ Արաբիա։ Նա զարմանք էր հայտնում, որ բրիտանացիները չգնացին այդ քայլին, ինչի շնորհիվ Սիրիայի թուրքական բանակը կարող էր ոչնչացվել³։

Երկրամասը գրավելու Ֆրանսիայի անկարողությունը և բրիտանական գրավման դեմ նրա հարուցած խոչընդոտները չափազանց ծանր հետևանքներ են ունենում հայերի համար։ Անտանտի զորքերի ավիանումը Կիլիկիայում կարող էր տեղահանությունից ու կոտորածից փրկել ոչ միայն տեղի հայությանը, այլ նույնիսկ՝ կանխել Մեծ եղեռնը։ Բրիտանա-ֆրանսիական զորքերը, Կիլիկիայից շարժվելով ռուսական բանակներին ընդառաջ, Թուրքիային կկանգնեցնեին երկու մասի բաժանվելու վտանգի առաջ և կստիպեին դուրս գալ պատերազմից։ Նման պայմաններում թուրքերն ի վիճակի չէին լինի կազմակերպել այնպիսի հրեշավոր ոճիր ինչպիսին Մեծ եղեռնն էր, իսկ

¹ Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 2, Երևան, 1983, էջ 68։

² Նույն տեղում։

³ ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 584, թ. 5։ Little E., Armenia and Turkey, p. 7.

երթ, այնուամենայնիվ, որոշեին հայկական կոտորածներ իրականացնել, դրանք երբեք այն չափերն ու ահավորությունը չէին ունենա, ինչ եղավ:

1916 թ. ապրիլի սկզբին ռուսական կառավարությունը բրիտանականին տեղեկացնում է, որ թուրքերը մեծ ուժեր են կուտակում Արևմտյան Հայաստանում և պահանջում է Ալեքսանդրետում կազմակերպել ուշադրությունը շեղող գործողություն, որպեսզի թուրքերն իրենց զորքերի մի մասն ուղարկեին այդ ուղղությամբ: Կովկասյան ռազմաճակատի հրամանատար Ն. Ռոմանովը երկյուղ ուներ, որ հակառակ դեպքում իր զորքերը չեն կարողանա պահել գրաված տարածքները¹:

Ապրիլի 6-ին Փարիզում ռուսական դեսպանատունը պաշտոնապես դիմում է նաև Ֆրանսիայի կառավարությանը: Նշվում էր, որ Ս. Սազոնովը հեռագրել էր Գլխավոր շտաբի պետ գեներալ Մ. Ալեքսեևի կարծիքի մասին, ըստ որի՝ Փոքր Ասիայում Ռուսաստանի ձեռք բերած հաջողությունները պահպանելու համար անհրաժեշտ էր թուրքերին թույլ չտալ այդ ուղղությամբ կուտակել խոշոր ուժեր: Ռուսական հրամանատարությունն առաջարկում էր Սալոնիկում կամ Եգիպտոսում գտնվող դաշնակիցների զորքերի մի մասով ամփոփել կատարել Ալեքսանդրետում կամ Յոմուրթալիքում (պատմ.՝ Այաս - Ս.Պ.): Ըստ ռուսական բանակի գլխավոր հրամանատարի շտաբի պետի՝ այդ գործողությունը վնաս չէր պատճառի վերոնշյալ ռազմաճակատներին, քանի որ սերբական բանակն արդեն տեղափոխվել էր բալկանյան թատերաբեմ, իսկ թուրքերը հրաժարվել էին եգիպտական ռազմարշավից: Ս. Սազոնովը Լոնդոնի ու Փարիզի ռուսական դեսպաններից պահանջում էր ամենայն լրջությամբ դաշնակից կառավարությունների ուշադրությունը հրավիրել այդ կարևորագույն նախագծի վրա, որը չափազանց շահավետ էր Անտանտի երկրների համար²:

Սակայն ապրիլի 7-ին Ֆրանսիայի ռազմական նախարար, գեներալ Պիեր Ռոբին ուղարկած հեռագրում Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ Դե Լա Պանուը հայտնում էր, որ Ալեքսանդրետում նոր ճակատ բացելու հարցի շուրջ գրուցել էր լորդ Հ. Քիթչեների հետ, որը տեղեկացրել էր, որ իրենց զորքերի փոքր քանակի պատճառով նման գործողություն իրականացնելն անհնար էր: Հ. Քիթչեների կարծիքով զորքերի ցրումը տվյալ պահին սխալ կլիներ, քանի որ արևմտյան ռազմաճակատում թեժ

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 281:

² Նույն տեղում, էջ 281-282:

մարտեր էին ընթանում և անհրաժեշտ էր դաշնակցային բոլոր բանակների առավելագույն համախմբում¹:

Այս հարցի շուրջ բրիտանական ու ֆրանսիական իշխանություններին իր տեսակետն էր ներկայացրել նաև բրիտանացի դիվանագետ Մարկ Սայքսը: Նա նոր էր վերադարձել Պետրոգրադից, ուր ֆրանսիական դիվանագետ Ժորժ Պիկոյի հետ ռուսական կառավարությանն էին ներկայացրել Մերձավոր Արևելքը ազդեցության գոտիների բաժանելու բրիտանական և ֆրանսիական կառավարությունների նախագիծը: Մ. Սայքսը երկար տարիներ անցկացրել էր Փոքր Ասիայում, լավ ծանոթ էր տեղի ժողովուրդներին ու խնդիրներին: Նա Պետրոգրադից մեկնել էր Կովկաս, 4-5 օր մնացել էր մեծ իշխան Ն. Ռոմանովի շտաբում: Նա համամիտ էր մեծ իշխանի ու Մ. Ալեքսեևի առաջարկներին, գտնում էր, որ Ալեքսանդրետում ափհանումը թուրքերին կստիպի գորքերի մի մասն ուղարկել այդ ուղղությամբ, և նրանք չեն կարողանա ռուսներին գերակշռող ուժեր կենտրոնացնել Հայաստանում: Մ. Սայքսը մտավախություն ուներ, որ թուրքերը կկարողանային արդեն մայիս կամ հունիս ամիսներին 350.000-400.000 զինվոր կենտրոնացնել Երզնկա-Դիարբեքիր շրջանում և հաջող հարձակում կազմակերպել, որոնց ռուսական փոքրաթիվ բանակները միայն թույլ դիմադրություն կարող էին ցույց տալ: Մեծ իշխանը Մ. Սայքսին հայտնել էր, որ եթե դաշնակիցների օգնությունը չլինի, ապա ամռանը ռուսները կկորցնեն ոչ միայն Թիֆլիսը, այլև՝ դուրս կմղվեն ամբողջ Կովկասից: Մ. Սայքսը, չնայած դեռևս 1915 թ. աշնանը Ալեքսանդրետում ափհանում կատարելու ջերմեռանդ կողմնակիցներից էր, սակայն այժմ գտնում էր, որ այդ գործողությունը տվյալ պահին կծախողվեր, քանի որ դաշնակիցները ծովային անհրաժեշտ փոխադրամիջոցներ չունեին, իսկ ամռանը դեսանտային կորպուսը նոսրացած կլիներ հիվանդությունների պատճառով: Նման գործողության ամենահարմար պահը նրա կարծիքով հոկտեմբերն էր: Նման պայմաններում Մ. Սայքսը հարցի լուծում էր համարում Սուեզի ջրանցքից դեպի Պաղեստին ռազմարշավի իրականացումը: Նա համոզված էր, որ պետք է Եգիպտոսում լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարել և հանկարծակի հարձակվել Պաղեստինի ուղղությամբ: Մ. Սայքսը համոզված էր, որ Կովկասում ռուսների պարտությունը չափազանց ծանր հետևանքներ կարող էր ունենալ Ռուսաստանի ներքին դրության համար, որը գտնվում էր վատթար վիճակում²: Մ. Սայքսը

¹ Նույն տեղում, էջ 283:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 287-288:

զգուշացնում էր, որ ռուսական բանակի պարտությունը կարող էր հանգեցնել խմորումների, «որոնք առանց դժվարության կվերաճեն հեղափոխության»¹:

Սակայն ֆրանսիական իշխանությունները գտնում էին, որ նոր ճակատի բացումը կթուլացնի արևմտյան ռազմաճակատը, որտեղ և վճռվելու էր պատերազմի ելքը: Իսկ բրիտանական իշխանությունները համոզված էին, որ 1916 թ. ամռանը թուրքերը Հայաստանում կկարողանային կենտրոնացնել ամենաշատը 200-250.000 զինվոր, որոնց դիմադրելու համար ռուսներն ունեին բավարար ուժեր, իսկ տեղի ռելիեֆը նպաստավոր էր պաշտպանություն կազմակերպելու համար²:

Ա. Բրիանը Մ. Սայքսի առաջարկները ներկայացրել էր նաև ֆրանսիական բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ժ. Ժոֆրի ուշադրությանը: Սակայն վերջինս համոզված էր, որ բրիտանացիներն ի վիճակի չեն լինի ամռանը ռազմական գործողություններ կազմակերպել Սինայի թերակղզում, քանի որ չունեն բավարար թվով փոխադրամիջոցներ: Գեներալի կարծիքով Պաղեստինի ուղղությամբ հաջողության հասնելու համար բրիտանացիները պետք է ամռանն անապատային տեղանքում կառուցեին 140 կմ երկարությամբ երկաթգիծ, որն անհնար էր իրականացնել: Իսկ ապրիլի սկզբին Կիլիկիայի երկաթուղիների վրա Պորտ Սայիդի հայերի ուժերով հարձակումներ կազմակերպելու ծրագրից գեներալը հիշեցնում էր, որ հրաժարվել էին Եգիպտահայ թեմի առաջնորդի պահանջով, որպեսզի խուսափեին հայկական նոր ջարդերից: Ժ. Ժոֆրը գտնում էր, որ Փոքր Ասիայի ափերի մոտ պետք է սահմանափակվեն միայն ծովային գործողություններով, իսկ եթե այնուամենայնիվ որոշվեր ափիանում կատարել, ապա դա պետք է արվեր ոչ թե անկանոն հայկական զորամասերով, այլ դաշնակիցների զորքերի միջոցով, որոնց միացվելու էին նաև հայկական ջոկատները³:

1916թ. հունիսի 10-ին թուրքերի դեմ ապստամբություն սկսեց Մեքքայի շերիֆ Հուսեյնը: Նա նույնպես Ալեքսանդրետում դաշնակցային զորքերի ափիանում էր սպասում, որպեսզի Սիրիայում ևս արաբները միաժամանակ կարողանային ապստամբել, իսկ թուրքերը չկարողանային իր դեմ մեծ ուժեր կենտրոնացնել⁴: Սակայն այդպես էլ Կիլիկիայում ափիանում չկատարվեց Ֆրանսիայի ընդդիմության պատճառով:

¹ Նույն տեղում, էջ 294:

² Նույն տեղում, էջ 288:

³ Նույն տեղում, էջ 294-295:

⁴ Karol Sorby Jr., The Arab national movement in World War I, Asian and African Studies, Vol. 75, 2006, No. 1, p. 48.

Կիլիկիայում ճապոնական զորքերով ափհանում իրականացնելու բավական հետաքրքիր նախագիծ էր առաջ քաշվել ֆրանսիական ռազմական իշխանությունների կողմից 1917 թ., սակայն այն նույնպես իրականություն չի դարձել:

1917 թ. մարտի 16-ին Տոկիոյում Ֆրանսիայի ռազմական կցորդ Բոնեֆոն դը Լապոմարեդի հետ զրույցում Ճապոնիայի գլխավոր շտաբի պետ, գեներալ Յուսակու Ուեհարան առաջ էր քաշել Թուրքիայի դեմ Եգիպտոսի, Միջագետքի և Կովկասի ճակատներից լայնածավալ հարձակում սկսելու առաջարկ: Նաև խոստացել էր ճապոնական զորքեր ուղարկել այդ գործողությունը հաջողությամբ ավարտելու համար: Հարցի շուրջ ֆրանսիական բանակի շտաբի 3-րդ բաժանմունքի հուլիսի 6-ի գաղտնի զեկուցագրում ճապոնական առաջարկն ուշադրության արժանի էր համարվում¹:

Սակայն զեկուցագրում անհնար էր համարվում հարձակումը Հայաստանում, քանի որ, հաղորդակցության դժվարությունները պատճառաբանելով, ռուսական զորքերը երկար ժամանակ է հարձակման եռանդ չէին դրսևորում: Միաժամանակ ռուսական երկաթուղին ծանրաբեռնվածության հետևանքով ի վիճակի չէր ճապոնական զորքեր տեղափոխել Հայաստան: Պաղեստինում նույնպես ճապոնական զորքերի աջակցությունն անարդյունավետ էր համարվում, քանի որ այնտեղ բրիտանական մեծաքանակ զորքեր կային, սակայն լավ ամրացված ռազմաճակատի գիծը հաղթահարել չէին կարողանում: Միջագետքում նույնպես ոչ արդյունավետ էր համարվում ճապոնական ներկայությունը, քանի որ անապատային տարածքները շատ էին, միաժամանակ, այդտեղ նույնիսկ հաջողության հասնելու դեպքում թուրքերին լուրջ հարված չէին հասցնի: Փաստորեն՝ ճապոնական զորքեր Հայաստան ուղարկելը անհնար էր, իսկ Պաղեստին ու Միջագետք՝ անարդյունավետ:

Լավագույն տարբերակ էր համարվում Ալեքսանդրետի նավահանգստի, դաշտային Կիլիկիայի, Տավրոսի ու Ամանոսի կիրճերի գրավումը: Դրանով դաշնակիցների ձեռքը կանցներ Բաղդադի երկաթուղու մի մասը, որով կարգելափակվեր Միջագետքի, Պաղեստինի, որոշ չափով նաև Հայաստանի թուրքական բանակների մատակարարումը: Թուրքիան ստիպված կլիներ անձնատուր լինել կամ պաշտպանության գծերը տեղափոխել Անատոլիա, քանի որ Սիրիան ու Միջագետքը դրանից հետո հեշտությամբ կգրավվեին:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 9-13:

Կիլիկիայում անհրաժեշտ էր համարվում ավի հանել ճապոնական 4-5 դիվիզիա՝ 80-100.000 զինվոր, որոնց կարող էին հետագայում միանալ 2-3 նոր դիվիզիաներ՝ 40-50.000 զինվորով: Առաջին զորախումբը կարող էին ճապոնիայից 4,5 ամսում տեղափոխել Եգիպտոս և այնտեղից արագորեն ավի հանում կատարել Կիլիկիայում: Երկրորդ զորախումբը տեղ կհասներ ավի հանումից հետո՝ 3 ամսվա ընթացքում: Թուրքերը Կիլիկիայում կարող էին ճապոնացիների դեմ դուրս բերել 4 դիվիզիա, որոնք բավական հյուծված էին: Օժանդակ 5 դիվիզիա կարող էին ստանալ Անատոլիայից միայն 2,5 ամիս հետո, եվրոպական ճակատից կարող էին լավագույն դեպքում փոխադրել 5 դիվիզիա՝ 5-5.5 ամիս հետո: Բանակի շտաբի եզրակացության մեջ ճապոնական ներխուժումը Կիլիկիա համարվում էր ցանկալի և օգտակար:

Սակայն ճապոնական զորքերով Կիլիկիան գրավելու այս նախագիծը նույնպես կյանքի չկոչվեց:

1917 թ. հունիսին Էնվերի առաջարկով Հալեպում ռազմական խորհուրդ գումարվեց: Թուրքական 4 բանակների հրամանատարները, Ջեմալն ու գերմանական գեներալ Էրիխ Ֆոն Ֆալկենհայնը քննարկեցին Սիրիայում հզոր բանակախումբ ստեղծելու խնդիրը: Դրանով հույս ունեին բրիտանացիներին հետ պահել Կիլիկիայում ավի հանում կատարելու մտքից, որը, Ջեմալի խոստովանությամբ, թուրքերին շատ էր անհանգստացնում¹: Խորհրդակցության արդյունքում կազմվեց «Յըլդըրըմ» բանակախումբը, որը 1917 թ. կազմված էր 45.000 հետևակից և 2.180 հեծելազորից²:

Սակայն թուրքական կողմի անհանգստություններն անիմաստ էին, քանի որ Անտանտի երկրները այդպես էլ Կիլիկիայի կամ Սիրիայի ուղղությամբ ռազմական գործողություններ չծավալեցին՝ չնայած առաջ քաշված բազմաթիվ նախագծերին: Այսպիսով՝ աշխարհամարտի տարիներին Կիլիկիան բրիտանական, ֆրանսիական, հայկական, նույնիսկ, ճապոնական զորքերով գրավելու բազմաթիվ նախագծեր են կազմվել, սակայն դրանք կյանքի չեն կոչվել ու մնացել են թղթի վրա, քանի որ դաշնակիցների միջև գոյություն ունեին տարաձայնություններ, կար անվստահություն միմյանց նկատմամբ, և այդ ամենը խոչընդոտեցին Կիլիկիայում ավի հանում կատարելուն:

¹ Memories of a Turkish statesman, p. 183.

² История Первой мировой войны 1914-1918 гг. (под редакцией И. И. Ростунова), 1975, т. 2., с. 366.

2.3 ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻՆ ՋԻՆՎՈՐԱԳՐԵԼՈՒ ՖՐԱՆՍ-ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Մուսա լեռան 1915 թ. նշանավոր հերոսամարտին պատմագիտության մեջ մեծ տեղ է հատկացվել, սակայն ուսումնասիրությունների շրջանակից դուրս է մնացել Եգիպտոս տեղափոխվելուց հետո մուսալեռցիների ձգտումները՝ վերադառնալ հայրենի եզերք և կռվել թուրքերի դեմ: Բավական երկար ժամանակ բրիտանական և ֆրանսիական իշխանությունները քննարկել են նրանց մարտական ունակություններն օգտագործելու հնարավորությունը, որն ի վերջո վճռորոշ դեր է ունեցել Հայկական լեգեոնի կազմավորման գործում:

Հալեպի նահանգի Անտիոքի գավառի արևմտյան մասում էր Սուետիա գավառակը: Այն արևմուտքից հարում էր Միջերկրականին, իսկ հարավային սահմանն էր Օրոնտես գետը: Տեղի հայկական գյուղերը՝ Բիթիասը, Հաջի Հաբիբլին, Յոդուն Օլուզը, Խըղըր Բեկը, Քեբուսին և Վազըֆը ունեին շուրջ 7.000 բնակիչ: Սուետիայում կային նաև թուրքական, թուրքմենական և ալավիական գյուղեր¹:

Տեղի հայկական գյուղերը 1915 թ. հուլիսի 30-ին գաղթելու հրաման էին ստացել: Նրանք որոշում են չենթարկվել հրամանին և, բարձրանալով մուտակա Մուսա լեռը, ապստամբել: Հուլիսի 26-ին գաղթի հրաման էին ստացել նաև հարևան Քեսապի հայերը: Սուետիացիներն առաջարկեցին քեսապցիներին միանալ իրենց և միացյալ ուժերով հակահարված տալ թուրք ջարդարարներին, սակայն Քեսապի հայերը որոշեցին գաղթել²: Ինչպես նախորդ ենթադիսում տեսանք, սուետիացիների ապստամբության հարցը քննարկվել էր դեռևս մի քանի ամիս առաջ:

Մուսա լեռ բարձրացան 4.331 հայեր, գաղթեցին՝ 2080-ը³: Նրանցից զենք վերցնելու ընդունակ էին 700-800-ը, բայց ռազմական գործողություններին մասնակցել են 400-500-ը, քանի որ բավարար քանակությամբ զենք չունեին: Նրանց տրամադրության տակ էր 130 հունական «Կրա» տիպի մարտական հրացաններ, 6 մաուզեր, 250-300 որսորդական կայծքարե հրացաններ: Յուրաքանչյուր Կրային 60-70 փամփուշտ էր հասնում, իսկ

¹ Իսկենտերեան Յ., Սուեիոյ բարքերը, Գահիրէ, 1917, էջ 5:

² Իսկենտերեան Յ., Սուեիոյ ապստամբութիւնը, Գահիրէ, 1915, էջ 12-13:

³ Գուշազճեան Մ., Մուսա լեռան հայկական գաղթածախը 1875-1939, Պէյրութ, 1988, էջ 109:

կայծքարե հրացանները մշտական անձրևների ու մառախուղի հետևանքով գրեթե անգործածելի էին¹:

Հաջի Հաբիբլիի քահանա Վարդան Վարդերեսյանի՝ հոկտեմբերի 27-ին Գևորգ Ե կաթողիկոսին ուղարկած, նամակից տեղեկանում ենք, որ Մուսա լեռ են բարձրացել Բիթիասից՝ 250, Հաջի Հաբիբլիից՝ 300, Յողուն Օլուզից՝ 280, Խըղըր Բեկից՝ 200, Քերուսիեից՝ 250, Վազըֆից՝ 130 ընտանիք, իսկ մարտերի ընթացքում զոհվել է 15 հայ, սպանվել՝ 200-300 թուրք²:

Թուրքերը սուեռիահայերի դիմադրությունը ճնշելու համար ուղարկել էին մոտ 4.000-ոց բանակ³: Չնայած թշնամու թվական գերակշռությանը՝ մուսալեռցիները հաջողությամբ հետ մղեցին բոլոր գրոհները:

1915 թ. սեպտեմբերի 5-ին ֆրանսիական «Գիշեն» հաժանավը մոտեցավ Ռաս Էլ Մինայի հրվանդանին և մուսալեռցիները օգնություն խնդրեցին նավապետից: Մուսալեռցիների հերոսական ինքնապաշտպանությունը նավից դիտող ֆրանսիացի նավապետ Բրիսոնը հիացմունքով նշել է. «Ես առանց տատանվելու կարող եմ ասել, որ այս շրջանի կռվի տեսակետից՝ մեկ սուեռացին հինգ ֆրանսիական զինվոր արժե»⁴: Եվ այս խոսքերի հեղինակը ֆրանսիական գաղութային կայսրության ներկայացուցիչն է: Հազվադեպ է պատահում, երբ հզոր ազգերի զինվորականները փոքր ազգի ռազմական կարողություններն ավելի բարձր գնահատեն, քան իրենցը: Դա վկայում է մուսալեռցիների չափազանց բարձր մարտական որակների մասին:

Սեպտեմբերի 8-ին Մուսա լեռանը մոտեցան «Գիշեն», «Դեսեքս» և «Ժաննա դ'Արկ» հաժանավերը: Վերջինը ֆրանսիական առաջին ռազմածովային բանակի հրամանատար, փոխծովակալ Լ. Դարտիժ դյու Ֆուրնեի հրամանատարական նավն էր: Մուսալեռցիների հետ բանակցություններում թարգմանչի դերը ստանձնել էր «Դեսեքս» նավի ծովային սպաներից Տիրան (Շառլ) Թեքեյանը: Ինքնապաշտպանության ղեկավարները ֆրանսիական հրամանատարությունից խնդրում են հեռացնել կանանց ու երեխաներին, իսկ իրենց զենք ու զինամթերք հատկացնել՝ պայքարը Մուսա լեռան վրա շարունակելու համար: Լ. Դարտիժ դյու Ֆուրնեն մինչև կառավարությունից

¹ Իսկենտերեան Յ., Ալեխոյ ապստամբությունը, էջ 48:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 108, թ. 4: Նաև՝ Վավերագրեր հայ եկեղեցու պատմության: Գիրք Դ. Տ. Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 1891-1940: Կազմող՝ Ս. Ա. Բեհրուդյան, Երևան, 1997, էջ 222-225:

³ Սելեկիոյ հայ հերոսապետը. Պետրոս Տեօփլեթեան, «Արմենիա», Մարտի. 1915, հոկտեմբեր 6, թիւ 10:

⁴ «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1918, 26 հոկտեմբերի:

ցուցումներ ստանալը «Դեսեքսի» հրամանատար Վերգոսին հանձնարարում է պարեկել այնտեղ և անհրաժեշտության դեպքում իրականացնել տարհանում¹։ Ի վերջո ֆրանսիացիները որոշեցին մուսալեոցիներին տեղափոխել ապահով վայր։ Սեպտեմբերի 12-ից հայերին սկսեցին նալ բարձրացնել։

Մուսալեոցի մարտիկները, կանանց, երեխաների, ծերունիների ու վիրավորների նալ բարձրանալուց հետո, առաջարկում են իրենց զենքով ու զինամթերքով ապահովել, որպեսզի շարունակեն պայքարը, սակայն նրանց զենք չեն տրամադրում և սեպտեմբերի 13-ին բոլորին նալերով տեղափոխում են Եգիպտոս²։ Դյու Ֆուրնեն նույնպես իր հուշերում վկայում է, որ մուսալեոցի տղամարդիկ իրեն խնդրել են կանանց, երեխաներին, ծերերին տեղափոխել, իսկ իրենց այլուր, աղ, վառոդ և կապար տրամադրել, որպեսզի պայքարը շարունակեին³։

Նալ բարձրանալուց առաջ ինքնապաշտպանության ղեկավարներից Եսայի Յաղուբյանը Տ. Թեքեյանին դառնությամբ ասում է. «Մենք չենք կարող ուրախ սրտով լքել մեր սիրելի հայրենիքը։ Այս վայրերը դարերով մերն են եղել, այստեղ մենք մինչև այժմ, հիսուն օր շարունակ հաղթական մարտեր ենք մղել մեզ գերազանցող թշնամական ուժերի դեմ։ Ախ, եթե թույլ տայիք շարունակել պայքարը...»⁴։

Մուսալեոցիները բարձրացան ֆրանսիական «Գիշեն», «Դեսեքս», «Դեստրե», «Ադմիրալ Շարնե» և «Ֆողր» ֆրանսիական ռազմանալերը։ Մի քանի կիլոմետր անցնելուց հետո «Ֆողրի» ուղևորները տեղափոխվեցին բրիտանական «Ռեյվն» նալ⁵։

Ամենամոտ տարածքը, ուր կարող էին տեղափոխել մուսալեոցիներին, Կիպրոսն էր։ Սակայն տեղի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնը դեմ արտահայտվեց։ Դա պատճառաբանում էր նրանով, որ գաղթականներին տեղավորելու հնարավորություն չունեն, միաժամանակ ճիշտ չէր համարում հայ ապստամբներին խառնել Կիպրոսի թուրք և քրիստոնյա բնակիչների հետ⁶։

Ֆրանսիական նալերը մուսալեոցիներին տեղափոխեցին Եգիպտոսի Պորտ Սայիդ քաղաք, ուր Սուեզի ջրանցքի ափին ստեղծվեց վրանաքաղաք։

¹ Թեքեյան Տ., նշվ. աշխ., էջ 17-22։

² Նույն տեղում, էջ 28։

³ Գուշագճեան Մ., նշվ. աշխ., էջ 129։

⁴ Թեքեյան Տ., նշվ. աշխ., էջ 31։

⁵ Անդրեասեան Տ., Ձեյթունի տարագրությունը եւ Սուեիոյ ապստամբութիւնը, Հալեպ, 1935, էջ 112։

⁶ Տիգրանեան Տ., Անգլիան եւ հայերը, Երեւան, 1994, էջ 97։

Հայերից կազմվեց ոստիկանություն, որը հսկում էր ճամբարի կարգ ու կանոնին: Ոստիկանապետ նշանակվեց Ավետիս Մարտիրյանը¹: Ճամբարի կառուցումը և վերահսկողությունը վստահվեց բրիտանացի մայոր Պիրսոնին²:

Քաջարի մուսալեոցիները չէին կարող հանգիստ նստել Պորտ Սայիդի ավազուտներում, նրանք ձգտում էին հնարավորինս շուտ վերադառնալ հայրենի լեռները և պայքարել թշնամու դեմ:

Մուսալեոցիները բրիտանական և ֆրանսիական իշխանություններից շարունակեցին պահանջել, որ իրենց զենք տան և ուղարկեն կռվելու թուրքերի դեմ³:

Գեներալ Ջ. Մաքսվելը մուսալեոցիների առաջնորդներից տեղեկանալով, որ նրանք կարող են տրամադրել 500 զինվոր, նախատեսում էր նույնքան հայ կամավորներ հավաքել նաև Եգիպտոսում, կազմավորել հայկական լեգեոն և այն օգտագործել Ալեքսանդրետի շրջանում հարձակումներ գործելու համար⁴: Նախատեսվում էր հայկական ուժերին ավի հանել Թուփրակ Կալեի և Օրոնտեսի գետաբերանի միջև, քանդել Հալեպի և Ադանայի նահանգներն իրար միացնող Բաղչեի թունելը, գրավել Բեյլանի կիրճը, կատարել մի շարք այլ գործողություններ⁵:

Սակայն ֆրանսիացիները խանդով էին վերաբերվում մուսալեոցիներին զինվորագրելու բրիտանական այդ նախագծին: Կիլիկիան և Սիրիան պատերազմից հետո ֆրանսիական ազդեցության գոտու մեջ էին մտնելու, և ֆրանսիացիները չէին ցանկանում թույլ տալ, որ հայերը որևէ կերպ ենթարկվեն բրիտանական ազդեցությանը:

Արդեն սեպտեմբերի 17-ին Ֆրանսիայի արտգործնախարար Թ. Դելկասեն Կահիրեում դեսպան Ժ. Դեֆրանսին հարցում արեց, թե արդյո՞ք կարող են մուսալեոցիներին զինվորագրել Արևելքի Արտասահմանյան գումարտակի համար⁶:

Այդ ժամանակ, ինչպես տեսանք, քննարկվում էր Կիլիկիայում ավիհանում կատարելու զորավար Մորիս Սարրայի ծրագիրը: Սեպտեմբերի 19-ին ֆրանսիական դեսպանը հեռագրով պատասխանեց, որ կարող են մուսալեո-

¹ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 199, թ. 1-2:

² Սալիի Մ., Ալեակներ եւ խլեակներ: Հայ վրանաքաղաքի տարեգիրքը, Ալեքսանդրիա, 1919, էջ 20:

³ Պարթևեան Ս., Արար, էջ 59-60: Սալիի Մ., Ալեակներ եւ խլեակներ, էջ 67-68:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 157-158:

⁵ Նույն տեղում, էջ 160, 182-183:

⁶ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 151:

ցիներից հավաքագրել 500 լավ զինվոր: Նա տեղեկացրեց նաև, որ գններալ Զ. Մաքսվելը նախատեսում էր հայկական լեգեոն կազմել, այն համարել ամերիկահայ կամավորներով և հարձակումներ կատարել Ալեքսանդրետի շրջանում¹:

Սեպտեմբերի 22-ին Ժ. Դեֆրանսը արագորձնախարարին տեղեկացրեց, որ հայերը զենք ու զինամթերք են պահանջել թուրքերի դեմ կռվելու համար: Հայերը հայտնել էին, որ գերադասում են գործակցել Ֆրանսիայի հետ, սակայն եթե Մեծ Բրիտանիան պահանջի իրենց համագործակցությունը՝ չեն մերժի: Դեսպանը կարծում էր, որ հայերը լավ պարտիզաններ կլինեն, սակայն կասկածում էր հայերից կանոնավոր զորք կազմելու հնարավորությանը²:

Հաջորդ օրը Ժ. Դեֆրանսը նոր զեկուցագիր ուղարկեց Թ. Դելկասեին, ուր նշում էր մուսալեոցիների կռվելու վճռականության մասին: Հայերը պատրաստակամություն էին հայտնել Ֆրանսիայից օժանդակություն ստանալու դեպքում մոտ մեկ ամսվա ընթացքում կազմավորել 4.000-ոց կամավորական բանակ, ափհանում կատարել Ալեքսանդրետի ծոցում, գրավել Բեյլանի ու Բաղճեի կիրճերը: Դրանք Ամանուսի լեռներով անցնող միակ ճանապարհներն էին, որոնցով կապվում էին Ադանայի ու Հալեպի նահանգները³:

Շուտով Զ. Մաքսվելը ևս ֆրանսիացիներին առաջարկեց հայերին զենք տալ և ուղարկել իրենց լեռները, որպեսզի ապստամբություն բարձրացնեն: Նա ցանկություն հայտնեց, որ Ֆրանսիան հայերի հարցը իր վրա վերցնի⁴: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կիլիկիան գտնվում էր ֆրանսիական շահերի գոտում, իսկ ֆրանսիացիները չէին ցանկանում, որ հայերն ընկնեին բրիտանական ազդեցության տակ:

Սակայն հայկական զորամասի միջոցով Կիլիկիայում ռազմական գործողություններ ծավալելը ոչ արդյունավետ էր համարում Ֆրանսիայի ռազմական նախարար Ալեքսանդր Միլերանը: Վերջինս Եգիպտոսի բրիտանական հրամանատարություն գործուղված ֆրանսիական լեյտենանտ Դոյնել դը Սեն-Քուենտինին սեպտեմբերի 22-ին ուղարկած հեռագրում հիշեցնում էր Դարդանելում հունական անկանոն բանակի ձախողման մասին և թերա-

¹ Գարամանուկեան Ա., Հայկական Լեգեոնը, էջ 63:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 161:

³ Նույն տեղում, էջ 179:

⁴ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 64:

հավատությամբ էր վերաբերվում հայկական նմանատիպ զորամասով թուրքական ափերի մոտ հաջող գործողություններ ծավալելու գաղափարին: Նա առաջարկում էր հայերին ամբողջ պատերազմի ընթացքի համար զինվորագրել Արտասահմանյան լեգեոնում և ուղարկել Դարդանեմ¹:

Մուսալեոցիներին կամավորագրելու և Կիլիկիան ազատագրելու գործողության ժամանակ օգտագործելու առաջարկով՝ սեպտեմբերի 29-ին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկանիայի բաժնի տնօրեն Ժ. Գուին դիմեց նաև Ա. Չոպանյանը²:

Ինչպես արդեն նշել ենք, սեպտեմբերի 22-ին Միջերկրականի Ֆրանսիական 3-րդ նավատորմի հրամանատարի պաշտոնակատար, փոխծովակալ Պ. Դարիոն առաջարկել էր Կիլիկիայում դիմել վճռական գործողությունների: Իսկ եթե Ֆրանսիան ի վիճակի չլիներ պահանջվող քանակի զորք ուղարկել, ապա անհրաժեշտ էր համարել զինել թուրքերի նկատմամբ ատելությամբ լցված տեղական բնակչությանը: Նա խնդրում էր՝ որպես առաջին քայլ, իրեն տրամադրել 800 հրացան և զինամթերք՝ մուսալեոցիներին զինելու համար³: Հոկտեմբերի 1-ին Թ. Դելկասեին ուղարկած զեկուցագրում Ժ. Դեֆրանսը դեմ արտահայտվեց տեղական ժողովուրդների ուժերով Սիրիան ազատագրելու ծրագրին՝ չնայած դա համարում էր իրագործելի: Նա մտահոգված էր, որ եթե առանց Ֆրանսիայի ղեկավարության ու գործուն մասնակցության թուրքերը վտարվեն Սիրիայից, ապա իրենք հետագայում ստիպված կլինեն այդ երկրամասը կրկին գրավել, իբր այնտեղ անիշխանությունը վերացնելու և թուրքերի վերադարձը կանխելու պատրվակով: Իսկ մուսալեոցիներից կազմված զորամասը գտնում էր, որ պետք է միայն օգտագործել թուրքական ափերում դիվերսիաներ կազմակերպելու համար, որից հետո պետք է հետ վերադառնար⁴:

Հոկտեմբերի 2-ին Պ. Դարիոն Վ. Օգանյորին ուղարկած նոր զեկուցագրում կրկին պնդում էր մուսալեոցիներից ու եգիպտահայերից զորամաս կազմավորելու առաջարկը: Նա գտնում էր, որ Սուեզի ջրանցքի գրոհի ժամանակ թուրքերից բռնագրավված մաուզեր հրացաններով և զինամթերքով կարող էին զինել ավելի քան 1.000 հայերի: Այդ զորամասը դրվելու էր

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 163:

² Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 64: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 186-187:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 170-176:

⁴ Նույն տեղում, էջ 194-196:

ֆրանսիացի 15 սպաների և 40 ենթասպաների հրամանատարության տակ, հնարավորության դեպքում տրամադրելու էին 4 լեռնային թնդանոթ: Այն պարտիզանական գործողություններ էր կատարելու Ալեքսանդրետի ու Անտիոքի շրջանում: Փոխծովակալը միաժամանակ մտավախություն էր հայտնում, որ բրիտանացիներն աչք ունեն Ալեքսանդրետի և Սիրիայի վրա և անհրաժեշտ էր համարում, որ Փարիզն ու Լոնդոնը վերջնական համաձայնություն կայացնեին Սիրիան ֆրանսիական ազդեցության գոտի ճանաչելու հարցում, և այնտեղ ծավալվելիք ռազմական գործողությունների հրամանատարությունն իրականացնեին ֆրանսիացիները: Նաև առաջարկում էր այնպես անել, որ հայերը չընկնեն բրիտանացիների ազդեցության տակ¹:

Հոկտեմբերի 3-ին Ժ. Դեֆրանսը, Պ. Դարիոյին ուղարկած նամակում, հավանություն էր տալիս դեպի Սիրիա ռազմարշավ կազմակերպելու նախագծին, սակայն դա իրատեսական չէր համարում ֆրանսիական զորքերի պակասի պատճառով: Միաժամանակ դեմ էր արտահայտվում հայ և սիրիացի բնակչությանը զինելուն և ապստամբության մղելուն: Դա բացատրում էր նրանով, որ իրենք չեն կարող ապստամբներին արդյունավետ օգնություն տրամադրել, կանոնավոր զորքերով աջակցել, իսկ անհաջողության դեպքում նրանց պաշտպանել սպասվող սարսափելի բռնություններից ու ճնշումներից²:

Կարծում ենք՝ այս թվացյալ մարդասիրական կեցվածքը բխում է ոչ թե հայերի ու սիրիացիների նկատմամբ դեսպանի ունեցած դրական վերաբերմունքից, այլ՝ ապստամբության հաջողության դեպքում այդ տարածաշրջանում Ֆրանսիայի ունեցած հավակնությունները կորցնելու մտավախությունից:

Ինչպես տեսանք, ռազմական նախարար Ա. Միլերանը, հենվելով հույների ունեցած անհաջողության վրա, թերահավատությամբ էր վերաբերում հայկական զորամասի արդյունավետությանը: Այդ պատճառով նա առաջարկեց մուսալեռցիներին՝ որպես բանվորներ, Մուդրոսում օգտագործելու գաղափարը: Սակայն հոկտեմբերի 15-ին ուղարկած զեկուցագրով Պ. Դարիոն ռազմածովային նախարարին նախազգուշացնում էր, որ չի կարելի ընթացք տալ մուսալեռցիներին Մուդրոսում որպես բանվորներ օգտագործելու ռազմական նախարարի առաջարկին: Դա բացատրում էր նրանով, որ մուսալեռ-

¹ Նույն տեղում, էջ 199-203:

² Նույն տեղում, էջ 203-204:

ցիները մարտունակ և հպարտ մարդիկ են, դա կարող էր վիրավորել նրանց արժանապատվությունը և հետզհետե անբարյացակամ վերաբերմունք սերմանել Ֆրանսիայի հանդեպ: Նա կրկին առաջարկում էր զինել հայերին և պարտիզանական պայքարի ուղարկել իրենց լեռներում կամ ծայրահեղ դեպքում ընդգրկել Արտասահմանյան լեգեոնի մեջ¹:

Հոկտեմբերի 28-ին հայկական ուժերն օգտագործելու հարցի շուրջ Պ. Դարիոն կրկին զեկուցագիր ուղարկեց ռազմածովային նախարար Վ. Օգանյորին, իսկ պատճենը՝ I ռազմածովային բանակի գլխավոր հրամանատար, փոխծովակալ Լ. Դարտիժ դյու Ֆուրնեին: Նա տեղեկացնում էր, որ գերմանո-թուրքական կողմը նոր հարձակում է նախապատրաստում Սուեզի ուղղությամբ, և այն կանխելու համար անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել Սիրիայում: Նշում էր, որ Ֆրանսիան ներկա դրությամբ ռազմարշավի համար մարդկային ու նյութական միջոցներ չունի, հետևաբար՝ լավագույն միջոցը պարտիզանական պատերազմն է: Պարզաբանում էր, որ մուսալեոցիներից ու եգիպտահայերից բացի, կարող էին զինել մեծ թվով կամավորների Ամերիկայից, որոնք, լսելով հայկական զանգվածային ջարդերի մասին, ցանկանում էին վրեժ լուծել թուրքերից: Նրանց կարող են ուղարկել Ալեքսանդրետի շրջանը, ուր թուրքական զորքերի դեմ արդյունավետ պայքար կարող են ծավալել: Նա վստահ էր, որ հայերի զինումը բարդություններ չի առաջացնի իրենց համար: Փոխծովակալը հավաստիացնում էր հայերի ֆրանսամետությունը, միաժամանակ նշում էր, որ Պորտ Սայիդում են գտնվում այդ հայերի ընտանիքները, որոնք նրանց նվիրվածության ամենաանառարկելի երաշխիքներն են: Հայերն առաջին հերթին պետք է ավերեն Բաղչեի թունելը և Ռաջուի կամուրջը: Դրանով կխզվեր Թուրքիայի և Սիրիայի միջև եղած արագ հաղորդակցության ճանապարհը, որով կխոչընդոտվեր Սուեզի դեմ հարձակվելու ծրագիրը: Հայերին մարզելու գործը Պ. Դարիոն պատրաստ էր իրականացնել իր ղեկավարած 3-րդ նավատորմի անձնակազմի միջոցով: Վերջում նա ավելացնում էր, որ բրիտանացիներն արդեն նախապատրաստական աշխատանքներ են ձեռնարկել հայերին մարզելու և հնարավորինս շուտ մարտական գործողությունների ուղարկելու նպատակով²:

Նոյեմբերի 2-ին Միջերկրականի ֆրանսիական 3-րդ նավատորմի նոր հրամանատար, փոխծովակալ Ֆրեդերիկ Մորոն նույնպես ռազմածովային

¹ Նույն տեղում, էջ 211-212:

² Նույն տեղում, էջ 223-225:

նախարարին ուղարկած տեղեկագրում հավաստիացնում էր, որ մուսալեռցիները քաջ ու կռվող ժողովուրդ են, առաջարկում էր նրանց զինել և ուղարկել փոքր դիվերսիոն արշավանքների թուրքական երկաթուղիների ուղղությամբ¹:

Հայերի ռազմական ուժն օգտագործելու գաղափարն ավելի գործնական հողի վրա դնելու նպատակով՝ ֆրանսիացի նավաստիները սկսեցին մարզել 250 մուսալեռցի կամավորների: Այդ գործը ստանձնեց ռազմածովային կապիտան, «ժորեգիբերի» նավի հրամանատար Բենուա դ'Ազին, որի տեղական էր Ս. Թեքեյանը²: Բենուա դ'Ազին աշխատել էր Վաշինգտոնում ֆրանսիական ծովային կցորդ, եղել էր Հայաստանում:

Ս. Թեքեյանը մուսալեռցիների մասին վկայում է հետևյալը. «Մուսա Լեռան հայերը, որոնց մենք փրկեցինք, չկարողացան համակերպվել իրենց լեռները ինքնական թողնելու, անիծյալ թուրքերի դեմ պայքարը դադարեցնելու իրողության հետ: Բոլորն էլ համակված էին ատելությամբ ու վրիժառությամբ: Ամեն օր ես ընդունում էի նրանց պատվիրակներին, որոնք ինձ էին ներկայացնում ռազմավարական այս կամ այն ծրագիրը: Իմ հրամանատարները շատ շուտ հասկացան՝ նման հանդուգն երիտասարդությանը չէր կարելի թույլ տալ, որ Պորտ Սաիդի ավազների վրա երկար տեղում դուփի: Ծովային սպայակազմը ավելի մոտիկից հետաքրքրվեց հայերով, ու քիչ անց նրանք, ովքեր ցանկանում էին, հենց վրանավանում սկսեցին զինվորական հատուկ կրթություն ստանալ»³:

«ժորեգիբերի» մարտանավը Դարդանելի ճակատամարտում վնասվել էր և վերանորոգման ենթարկվելու համար ստիպված էր բավական երկար ժամանակ մնալ Պորտ Սաիդում: Դա էր պատճառը, որ ծովակալ Ֆ. Մորոն Բենուա դ'Ազին հանձնարարեց մարզել հայ մարտիկներին: Եգիպտոսում բրիտանական գաղտնի ծառայության ղեկավար և Պորտ Սաիդի զորքերի հրամանատար, գնդապետ Էլզուրը սկզբնական շրջանում 25 մարտիկ տիպի հրացան տրամադրեց ուսուցանելու համար: Հայերին սովորեցնում էին հրաձգություն, տեղանքը ճիշտ օգտագործել, նախատեսվում էր նրանցից ոչ թե կանոնավոր բանակի միավոր կազմավորել, այլ՝ պարտիզանական ջոկատ⁴: Կարճ ժամանակում այդ վաշտը պատրաստ էր ռազմական գործողությունների:

¹ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 65-66:

² Թեքեյան Ս., նշվ. աշխ., էջ 51:

³ Նույն տեղում:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 234-236:

Սակայն իրավիճակը փոխվեց, երբ 1915 թ. հոկտեմբերի 29-ին Ֆրանսիայում վարչապետի և ԱԳ նախարարի պաշտոնը ստանձնեց Արիստիդ Բրիանը: Նոր կառավարությունը փոխեց իր վերաբերմունքը Կիլիկիայում կամ Սիրիայում ափիանում կատարելու, ինչպես նաև հայկական զինուժ օգտագործելու հարցերի շուրջ:

Նոյեմբերի 9-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնին ուղարկած Ա. Բրիանի նամակից տեղեկանում ենք, որ նա համամիտ էր Ժ. Դեֆրանսի զգուշավոր գործունեությանը Եգիպտոսում և դեմ էր Կիլիկիայում հայերի ապստամբություն սկսելուն: Նա կոչվ էր մուսալեոցի մարտունակ տղամարդկանց՝ որպես բանվորներ Մուդրոս ուղարկելուն՝ առաջարկելով նրանց մի փոքր ավելի բարձր աշխատավարձ տալ, քան այնտեղ աշխատող սոմալները կամ թուրք գերիներն էին ստանում: Դրանով հույս ունեւ աշխատանքով ապահովել մուսալեոցիներին և նրանց հեռացնել Եգիպտոսից, ուր կարող էին «ոգևորել արկածախնդիրներին»¹:

Նոյեմբերի 10-ին Ա. Բրիանը ռազմաճովային նախարար, դերժովակալ Լուաիեն Լակազին ուղարկած հեռագրում հավանություն չէր տալիս Կիլիկիայում հայկական ապստամբության և Սիրիայում գործողություններ ծավալելու Հայկական պաշտպանության կոմիտեի և Պ. Դարիոյի առաջարկներին: Նա նշում էր, որ դրանք միայն կհանգեցնեն համընդհանուր կոտորածների, որի պատասխանատվությունը կբարդվի դաշնակից տերությունների վրա²:

Նոյեմբերի 13-ին Ֆրանսիայի ռազմական նախարար Ժոզեֆ Գալիենին Ա. Բրիանին տեղեկացնում է, որ հրաժարվել է մուսալեոցիներին որպես բանվորներ օգտագործելու ծրագրից՝ հաշվի առնելով այդ աշխատանքին նրանց նվազ պիտանելիությունը և իբրև մարտիկներ ծառայելու նրանց ցանկությունը: Միաժամանակ տեղեկացնում էր, որ ռազմաճովային նախարարը չի պատրաստվում հայերից անկանոն զորքերի կորպուս կազմավորել³:

Այսպիսով՝ Ա. Բրիանի կառավարության իշխանության գալով, մուսալեոցիների կարողությունները ռազմական նպատակներով օգտագործելու, Կիլիկիայի ուղղությամբ կովող հայկական զորամաս ստեղծելու կամ այնտեղ ֆրանսիական զորքերի միջոցով ափիանում կատարելու նախագծերը որոշ ժամանակով կողքի դրվեցին:

¹ Նույն տեղում, էջ 226-227:

² Նույն տեղում, էջ 228:

³ Նույն տեղում, էջ 229:

Փաստորեն՝ 1915 թ. աշնանը մուսալեոցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագործելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ էր դարձել ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեոցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր: Սակայն, 1915 թ. հոկտեմբերի վերջին իշխանության եկած ֆրանսիական նոր կառավարությունը հրաժարվեց հայերի ռազմական ունակություններն օգտագործելու, Կիլիկիան ազատագրելու նախկինում առաջ քաշված ծրագրերից: Այսպիսով՝ 1915 թ. ամռանը և աշնանը քննարկման առարկա դարձած մի շարք ռազմական նախագծեր, որոնք առնչվում էին Մուսա լեռան մոտ դաշնակիցների կամ հայ կամավորների ափիանում կատարելուն, ժամանակավորապես սառեցվեցին:

Հայերի հարցում ֆրանսիական կողմի տատանումներից ու ձգձգումներից փորձում էր օգտվել բրիտանական կողմը, որն իր վրա էր վերցրել Պորտ Սայիդի գաղթականական ճամբարը պահելու գործը: Սակայն դա չէր բխում Ֆրանսիայի շահերից: 1916 թ. հունվարից ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը կրկին որոշում է իր վրա վերցնել մուսալեոցիներին զինվորական ծառայության վերցնելու նախաձեռնությունը, սակայն այս անգամ բազմիցս բախվում է բրիտանացիների դժգոհությանն ու հարուցած խոչընդոտներին:

1916 թ. հունվարի 11-ին Միջերկրականի ֆրանսիական երրորդ էսկադրայի հրամանատար, փոխծովակալ Ֆ. Մորոյի՝ Պորտ Սայիդի բրիտանական զորքերի հրամանատար, փոխգնդապետ Էլզուդին ուղարկած գրությոնից տեղեկանում ենք, որ մուսալեոցիների մոտ կատարված զինվորագրումները գնահատելի արդյունքներ էին ունեցել, սպասվում էր մոտ 500 կամավորների ժամանում նաև Ալեքսանդրիայից: Նման պայմաններում Ֆ. Մորոն անհրաժեշտ էր համարում այդ ուժերին անհապաղ զենք տալ և իր տրամադրության տակ դնել¹:

Հունվարի 20-ին հայ կամավորների առավել արդյունավետ օգտագործելու հնարավորության մասին Ֆ. Մորոն նամակով հարցում արեց նաև Ջ. Մաքսվելին, սակայն այդպես էլ պատասխան չստացավ²:

¹ Նույն տեղում, էջ 249:

² Նույն տեղում, էջ 257:

Փետրվարի սկզբին Դոդեկանեզյան կղզիախմբի մեջ մտնող Կաստելորիգո կղզում տեղակայված ֆրանսիական ծովային ուժերը և տեղացի մոտ 50 հույն կամավորներ գրավեցին մոտ 2 կմ հեռավորության վրա գտնվող Անտիպիլոս (թուրք.՝ Կաշ – Ս.Պ.) փոքր նավահանգիստը։ Դրա նպատակն էր ավերել այնտեղ գտնվող հեռագրակայանը, որի միջոցով թուրքերը հետևում էին ֆրանսիացիների տեղաշարժերին Կաստելորիգոյում։ Թուրքական կայազորի մեծ մասը գերի ընկավ (35 զինվոր և 1 կապիտան), սպանվեց 3, վիրավորվեց ևս 3 թուրք զինվոր։ Ֆրանսիացիները որևէ կորուստ չունեցան։ Դա ֆրանսիացի ծովայինների առաջին ցամաքային գործողությունն էր թուրքական ափին։ Նույն երեկոյան ֆրանսիացիները հեռացան Անտիպիլոսից՝ իրենց հետ տանելով հեռանալ ցանկացող մի քանի հույների և տեղափոխելով այդ նավահանգստի տների հիմնական սեփականատերեր հանդիսացող կաստելորիգոցիներին պատկանող շարժական գույքը¹։

Հաշվի առնելով, որ այդ գործողության ընթացքում հույն կամավորներն արդարացրել էին իրենց, փոխծովակալ Ֆ. Մորոն գտնում էր, որ ժամանակն է օգտագործել իրենց կողմից մարզված, արդեն զենքով ու զինամթերքով ապահովված հայ կամավորներին։ Սակայն նրան անհանգստացնում էր այն, որ հայկական զինուժի օգտագործման դեմ հանդես էր եկել Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը, երբ Ֆ. Մորոն դեռևս Փարիզում էր եղել։ Միաժամանակ նույնանման տեսակետ արտահայտող նամակ էր փոխծովակալին ուղարկել լորդ Զեյմս Բրայսը։ Պ. Նուբարի որդին՝ Առաքել Բեյը, նույն կարծիքն էր հայտնել Ժ. Դեֆրանսին։ Դրան դեմ էր արտահայտվել նաև փետրվարի սկզբին Կահիրե ժամանած «Նյու Յորք Հերալդի» խմբագիր դոկտոր Ադամ Գիբոնսը։ Նրանց կարծիքով դա կարող էր թուրքերին առիթ տալ կոտորելու դեռևս կենդանի մնացած արևմտահայերի մնացորդներին։

Մյուս կողմից Ֆ. Մորոյին էին դիմել հնչակյան գործիչներ Ստեփան Սալահ-Գյուլյանը և Ապահը, որոնք նշում էին, որ հայերի բնաջնջումն արդեն հասել է իր վերջնակետին և առաջարկում էին կազմավորել հայ կամավորական կորպուս։ Նրանք նախ ներկայացել էին բրիտանական հատուկ ծառայություններին և տեղեկացրել էին, որ իբր հանդես են գալիս Եգիպտոսի հայերի շահերի պաշտպանության կոմիտեի անունից, իսկ Պ. Նուբարը համաձայն է իրենց հետ։ Նրանք առաջարկել էին հոգալ ծախսերի մի մասը, եթե ֆրանսիացիների կողմից մարզվող հայերից կազմավորվի կորպուս և

¹ Նույն տեղում, էջ 252։

օգտագործվի թուրքերի դեմ: Փետրվարի 2-ին այդ գործիչները փորձել էին Պորտ Սայիդում հանդիպել Ֆ. Մորոյի հետ: Վերջինիս հրամանով նրանց ընդունել էր երրորդ նավատորմի շտաբի պետ, նավի կապիտան Շամոնարը:

Հնչակյանների առաջարկները Ֆ. Մորոյին թվացել էին տարօրինակ, քանի որ ծանոթ էր այդ առթիվ Պ. Նուբարի բացասական տեսակետին: Ֆ. Մորոն հրահանգեց կապի սպա, բրիտանացի լեյտենանտ Վուլեյին, որպեսզի այդ հայ գործիչներից պահանջի գրավոր ներկայացնել իրենց առաջարկները: Սակայն Վուլեյը, սխալ հասկանալով հրամանը, նամակով պահանջել էր ավելի հիմնավոր ձևով ներկայացնել այդ առաջարկները: Նման խճճված իրավիճակում Ֆ. Մորոն որոշում է սպասել այդ հարցի շուրջ Զ. Մաքսվելի տեսակետին, անձամբ հանդիպել հայկական քաղաքական ուժերին և Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին¹:

Պ. Նուբարը, ինչպես տեսանք, դեռևս 1914-1915 թթ. էր առաջարկում հայ կամավորների մասնակցությունը պատերազմին Անտանտի զորքերի կազմում, սակայն դեմ էր հայկական կամավորական առանձին զորամիավորման ստեղծմանը, որը, նրա կարծիքով, թուրքերին վրեժխնդրության նոր առիթ կընձեռեր: Արդեն 1915 թ. վերջերին Պ. Նուբարը գտնում էր, որ հայ կամավորները պատերազմում որևէ էական դերակատարություն ունենալ չէին կարող և միայն ավելի կվատթարացնեին Թուրքիայում մնացած հայերի վիճակը:

1915 թ. դեկտեմբերի 20-ին կաթողիկոսին ուղարկած նամակում նա հետևյալ ձևով էր ներկայացնում կամավորների վերաբերյալ իր տեսակետները. «Սկիզբէն իվեր, եւ նոյն իսկ այն ժամանակ երբ հասարակաց կարծիքը նպաստաւոր էր կամաւորներու կազմութեան, եւ միշտ վախճած էի անոր առաջ բերելիք հետեանքներուն վրայ. մինչեւ անգամ նախընտրած էի որ այն Հայերը որ կուգէին զինուիլ հայրենիքը պաշտպանելու կամ ազատելու համար, զինուորագրուին Դաշնակիցներու բանակներուն մէջ: ... Ընդհանուր հոսանքէն մղուած եւ Կովկասի կամաւորներուն ձեռք բերած առաջին նպաստաւոր յաջողութիւններէն շլացած՝ ստիպուեցայ տեղի տալ եւ աջակցիլ կամաւորներու ջոկատներու կազմութեան խնդրոյն, վասն զի եւ ալ սկսայ, այլոց նման, յուսալ որ կամաւորները պիտի կրնային, իրենց օրինակով, ընդհանուր գործակցութիւն մը յառաջ բերել իրենց հայրենակցաց մէջ, ինչ որ

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 252-253, 256-261:

մեզ իրաւունք պիտի տար ինքնավարութեան մը պահանջումին: Դժբաղդաբար բոլոր մեր յոյսերը վիժեցին. կամաւորները՝ միայն Թուրքերուն քստմնելի պատրուակ մը հայթայթեցին իրենց ահռելի ռիսկալութեան եւ սարսափելի ջարդերուն համար: ... Բայց ասոնք պէտք են մեզի իբր դաս ծառայել, եւ համամիտ եմ, որ այս պարագաներուն մէջ, ծանր սխալ մը պիտի ըլլայ շարունակել միեւնոյն ընթացքը՝ որուն հետեանքը պիտի ըլլայ տաճկական գաւառներու մէջ ողջ մնացած հայութեան բեկորներէն նոր զոհեր տալու: Փորձը մեզի շատ դառն եղաւ: ... Ամէն կողմէ, Ամերիկայ, Անգլիա, Եգիպտոս եւ ուրիշ երկրներ գտնուող մեր հայրենակիցներէն եւ մեր ամենաջերմ եւ ամենահաւատարիմ օտար պաշտպաններէն, ի միջի այլոց Լորտ Պրայսէ, նամակներ կստանամ՝ որոնցմով ինձ յստակօրէն հակառակ գաղափար մը կը յայտնեն կամաւորներու մասին, որոնք այլեւս դրական ոեւէ արդիւնք մը չի տալէ զատ, Թուրքիոյ մէջ ողջ մնացած հայ ժողովուրդը ամենամեծ վտանգներու պիտի ենթարկեն: Զէնք կրելու ատակ Հայերը, եթէ կուզեն կռուիլ իրենց եղբայրներուն վրէժը լուծելու համար, կրնան Դաշնակիցներու բանակներուն մէջ զինուորագրուիլ: Այդ մասին ինծի դիմողներուն միշտ այս կերպով կը պատասխանեմ»¹:

Ինչպես տեսնում ենք, Ազգային պատվիրակութեան նախագահը կտրականապես դեմ էր հայկական կամավորական առանձին զորամասի ստեղծմանը, որը, նրա կարծիքով, նոր ջարդերի պատճառ կդառնար: Այսպիսով՝ նրա անունն օգտագործելով, Եգիպտոսի հնչակյանները փորձում էին Ֆ. Մորոյին կեղծ տեղեկություններով կողմնորոշել դեպի Պ. Նուբարի որդեգրած ուղուն հակառակ գործելակերպի:

Փետրվարի 5-ին Զ. Մաքսվելը Ֆ. Մորոյին տեղեկացնում էր, որ եգիպտահայերը դեմ են հայկական կորպուսի ստեղծմանը՝ մտահոգվելով, որ դա Թուրքիայում մնացած հայրենակիցների նկատմամբ նոր բռնությունների առիթ կդառնա: Գեներալը ևս համամիտ էր այդ կարծիքին և նշում էր, որ ինքը երբեք նպատակ չի ունեցել հայերից ստեղծելու ցուցադրական կորպուս կամ նրանց օգտագործել որպես «հայերի»: Գեներալ Զ. Մաքսվելը նշում էր հայերին զինելու, մարզելու անհրաժեշտությունը, քանի որ նրանք կարող էին դառնալ արժեքավոր օժանդակ ուժեր, որոնց կարելի էր օգտագործել Թուրքիայի տարածքում գաղտնի դիվերսիաներ կատարելու համար: Զ. Մաքսվելը պատրաստակամություն հայտնեց շարունակելու հայերի ռազ-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 107:

մական ուսուցումը, իսկ Եգիպտոսի հայկական կոմիտեին պետք է տեղեկացնեին, որ հայկական կորպուս կազմավորելու գաղափարից հրաժարվում են¹:

1916 թ. փետրվարի սկզբին բրիտանացիները մուսալեոցիներից ու եգիպտահայերից հավաքագրում են նոնակի և պայթուցիկների հետ աշխատելու փորձ ունեցող կամավորների, որպեսզի օգտագործեին թուրքական երկաթուղիների ու կամուրջների պայթեցման համար²: Մեծ թվով մուսալեոցիներ արձագանքեցին բրիտանացիների կամավորագրվելու կոչին: Մլեհը փետրվարի 7-ի նամակով Ապահին տեղեկացնում էր, որ եթե մի փոքր ջանք գործադրվի Պորտ Սայդի ճամբարի նույնիսկ «բոլոր ժողովուրդ պիտի զինուորագրուի»³:

Հայ կամավորների հարցը խիստ գաղտնիության մեջ պահելու նպատակով Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների հրահանգով տեղի թերթերում նույնիսկ արգելվեց որևէ հղում կատարել կամավորների մասին⁴:

Հնչակյանների կեղծիքը բացահայտելուց հետո Ֆ. Մորոն չափազանց բարկացել էր և նույնիսկ մտածում էր Ջ. Մաքսվելին առաջարկել, որպեսզի ընդհանրապես հրաժարվեն հայերին ռազմական գործ սովորեցնելուց, քանի որ դա միայն անախորժություններ էր ստեղծում իրենց համար⁵:

Փոխծովակալ Լուի Դարտրիժ դյու Ֆուրնեն ռազմածովային նախարար, դերծովակալ Լ. Լակազին ուղարկած զեկուցագրում արդարացված էր համարում այն մտավախությունը, որ հայ կամավորների օգտագործումը նոր ջարդերի տեղիք կտար Թուրքիայում, միաժամանակ անօգուտ էր համարում հայերի օգտագործումը այլ երկրների դեմ, քանի որ հայերը կարող էին մերժել, իսկ նրանց լեզվի ու տեղանքի իմացության առավելությունը, որ կարող էր լինել Թուրքիայում, այլ վայրերում չէր լինի: «Հարցն ակնհայտորեն բավական բարդ է և պահանջում է մանրազնին քննություն, որպեսզի տուրք չտանք մի արկածախնդրության, որը կարող է թանկ նստել մեր կողմնակիցների վրա և շրջվել նրանց դեմ,- նշում էր Ֆուրնեն և ավելացնում,- բայց օրերից մի օր հայերը մեզ կցուցաբերեն մեծ աջակցություն»⁶:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 254:

² ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 70, թ. 91:

³ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 51, թ. 4:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 255:

⁵ Նույն տեղում, էջ 257:

⁶ Նույն տեղում, էջ 264-265:

1916 թ. մարտի 15-ին Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանը ևս Լ. Լակազին խորհուրդ էր տալիս լավագույնս օգտագործել Պորտ Սալիդում գտնվող մարտունակ հայերի արիությունն ու ընդունակությունները¹:

Մարտի 8-ին հայ կամավորների խնդրի շուրջ Պ. Նուբարը նամակ է ուղարկում Ֆ. Մորոյին, որը մարտի 17-ին փոխծովակալին է փոխանցում Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը: Սրբազանը մինչ այդ կամավորների խնդիրը քննարկել էր Ֆ. Մորոյի հետ և վերջինս ցանկություն էր հայտնել իմանալ Պ. Նուբարի կարծիքը: Ազգային պատվիրակության նախագահը գտնում էր, որ ցանկալի չէ հայերից առանձին զորամաս կազմելը, քանի որ Թուրքիայում մնացած հայ տարագիրների մնացորդները պատանդի կարգավիճակում էին և կարող էին ենթարկվել թուրքական վայրագություններին: Նա առաջարկում էր հայերին ընդգրկել դաշնակիցների ռազմարշավային զորքերի կազմում, քանի որ, երբ որոշվի ավիանում կատարել Փոքր Ասիայում, նրանք կարող են չափազանց օգտակար լինել երկրի և լեզվի իմացության շնորհիվ²: Ֆ. Մորոն այն փոխանցեց Միջերկրականի ֆրանսիական երրորդ նավատորմի հրամանատարի պաշտոնում իրեն փոխարինած դերծովակալ Հենրի դը Սալիտզին:

Նույն գաղափարները Պ. Նուբարը զարգացրեց մարտի 22-ին ծովակալ Ֆ. Մորոյին ուղարկած հաջորդ նամակում³: Այն ապրիլի 9-ին Ա. Նուբարը հանձնեց Ժ. Դեֆրանսին, որն էլ փոխանցեց Հ. դը Սալիտզին⁴:

Մարտի 14-ին Պ. Նուբարը Փարիզում կամավորների թեման քննարկեց հայ դիվանագետ, նախկինում Նեապոլում թուրքական հյուպատոս Միհրան Երամ բեյի հետ: Վերջինս երկիցս հանդիպել էր Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանին և երկու օրից նորից պետք է նրա հետ քննարկեր հայ կամավորական զորամաս ստեղծելու հարցը: Մ. Երամը տեղեկացրեց, որ ֆրանսիացիները հավանական են համարում հարձակումը Փոքր Ասիայի վրա, որտեղ նախատեսում էին նաև հայ կամավորների մասնակցությունը: Պ. Նուբարը կտրականապես ընդդիմացավ հայկական կամավորական առանձին զորամաս կազմելու գաղափարին և նշեց, որ դրա փոխարեն հայերը պետք է մտնեն դաշնակից զորքերի կազմի մեջ, որպեսզի թուրքերին նոր կոտորած-

¹ Նույն տեղում, էջ 273:

² Նույն տեղում, էջ 276-277:

³ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 67: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 285-286:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 284:

ների առիթ չտան: Մ. Երամը խոստացավ իր ջանքերն ուղղել հենց այդ ուղղությամբ¹:

Դեռևս փետրվարի 23-ին Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Արչիբալդ Մուրրեյը Ֆ. Մորոյին հարցում էր արել մուսալեոցիների մարտական պատրաստվածության մասին և խնդրում էր թույլ տալ նրանց օգտագործելու հակառակորդի սուզանավերի կայանները հետախուզելու, ինչպես նաև Ռաջուի ուղեկամուրջը ավերելու և այլ վայրերում թուրքերի երկաթուղային հաղորդակցությունը խափանելու նպատակով²:

Մարտի 22-ին Ա. Մուրրեյի Հ. դը Սպիտգին ուղարկած գաղտնի հեռագրից տեղեկանում ենք, որ բրիտանացի և ֆրանսիացի սպաները ծրագիր են մշակել Սիրիայում հայերից կազմված մի ջոկատ ափ հանելու համար, սակայն դեռևս չէին համաձայնեցրել հայ կամավորների ղեկավարների հետ³: Այս հեռագիրը ցույց է տալիս, որ օրակարգում էր հայերից կազմված դիվերսիոն ջոկատը Ալեքսանդրետի շրջան ուղարկելու հարցը:

Մարտին Եգիպտոսի բրիտանական զինվորական իշխանությունները զինում ու մարզում են մոտ 100 մուսալեոցիների, նրանց սովորեցնում օգտագործել պայթուցիկ նյութեր: Նախատեսվում էր, որ նրանք ափ են դուրս գալու Ալեքսանդրետի շրջանում և պայթեցնելու էին Բեռլին-Բաղդադ երկաթուղու մի շարք կամուրջներ⁴:

Տեղեկանալով այդ նախապատրաստության մասին՝ Թորգոմ սրբազանը մարտի 25-ին դերժովակալ դը Սպիտգին ուղարկած նամակում հույս հայտնեց, որ հայ կամավորները «կօգտագործվեն միայն այնպես, ինչպես այդ ներկայացվել է Ազգային պատվիրակության նախագահի նամակում, այն է՝ կընդգրկվեն դաշնակիցների զորքերում և ոչ թե կամավորական առանձին ջոկատներում, մի բան, որը կհանգեցնի ծանր և սարսափելի հետևանքների՝ դեռևս Թուրքիայում գտնվող կենդանի մնացած դժբախտ հայերի համար, որոնք թուրքերի ձեռքում իսկական պատանդներ են»⁵:

Այդ նամակից և բրիտանացի ու ֆրանսիացի գործիչների հետ Թորգոմ սրբազանի անձնական մի շարք հանդիպումներից հետո հայերին թուրքական երկաթգծի ուղղությամբ օգտագործելու նախագիծը կողքի դրվեց:

¹ Boghos Nubar's Papers, p. 318.

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 264:

³ Նույն տեղում, էջ 277-278:

⁴ Նույն տեղում, էջ 284-285:

⁵ Նույն տեղում, էջ 279:

Փոխգնդապետ Էլզուրը բավական դժգոհ մնաց, որ իրենց կողմից մարզված ու զինված հայերին չէին կարող մարտական առաջադրանքների ուղարկել: Ապրիլի 10-ին նա իր դժգոհությունը հայտնեց ֆրանսիական երրորդ նավատորմի շտաբի պետ Շամոնարին և նույնիսկ հարց բարձրացրեց հայերի ծախսերը փոխհատուցելու կամ դրա դիմաց նրանց ռազմական գործողությունների ուղարկելու խնդրով:

Ապրիլի 8-ին Ֆրանսիայի ռազմական նախարար գեներալ Պիեռ Ռոքին Եգիպտոսից ուղարկված տեղեկագրում առաջարկվում էր նավաստիների կողմից մարզվող 250 մուսալեոցիներին ընդունել Արտասահմանյան լեզեոնի մեջ¹: Նույն հարցի շուրջ մայիսին գեներալ Պ. Ռոքի կարծիքն է հարցնում նաև Ա. Բրիանը և միաժամանակ ուղարկում է Պ. Նուբարի նամակի պատճենը, ուր վերջինս առաջարկում էր գերծ մնալ մուսալեոցիներից առանձին զորամաս կազմելու և Կիլիկիայում ափհանում կատարելու մտքից, իսկ դաշնակիցների դրոշի ներքո կռվել ցանկացող հայերին ընդգրկել կանոնավոր բանակի կազմի մեջ²:

Սակայն օսմանահպատակ հայերին ֆրանսիական բանակ չէին կարող ընդունել, քանի որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքն արգելում էր Ֆրանսիայի կամ նրա դաշնակիցների դեմ պատերազմի մեջ գտնվող պետությունների հպատակներին ընդունել Արտասահմանյան լեզեոնի մեջ³:

1916 թ. մայիսի 21-ին վարչապետ Ա. Բրիանին ուղարկած պատասխանում Պ. Ռոքը տեղեկացնում էր, որ իրենք հրաժարվել են Պորտ Սայդի հայերին ռազմական նկատառումներով օգտագործելու ծրագրերից, իսկ հայերին ֆրանսիական բանակի շարքերն ընդգրկել թույլ չի տալիս 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքը⁴:

Սակայն Ֆրանսիան չէր կարող վերջնականապես հրաժարվել հայկական զինուժն օգտագործելու հնարավորությունից, քանի որ այդ ժամանակաշրջանում արևելքում միայն աննշան ուժեր ուներ, իսկ հայ կամավորները կարող էին լրացնել այդ բացը:

1916 թ. հուլիսին Տ. Թեքեյանը երկու տասնյակ մուսալեոցիների հետ, որոնց ընտրել էր հերոսամարտի ղեկավարներից Եսայի Յաղուբյանը, Կիլիկիայի ափամերձ շրջանում հաստատվեցին Սելևկիայի դիմաց գտնվող Դա-

¹ Նույն տեղում, էջ 286:

² Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 67:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 303:

⁴ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 45:

⁵ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 303:

նա Ադասի անմարդաբնակ կղզում: Այն գտնվում էր ավից 2.5 կմ հեռավորության վրա: Այդտեղ պահպանվել էին Լևոն Բ թագավորի կողմից ֆրանսիացի խաչակիրներին նվիրված ամրոցի ավերակները: Կղզին ֆրանսիական հրամանատարությունը անվանակոչել էր Լիլ Պրովանսալ: Այստեղ նրանք առանձին էին, ռազմակայանի հետ հաղորդակցություն չունեին և պետք է թշնամու հարձակման դեպքում ինքնուրույն պաշտպանվեին: Նրանց սնունդ էր բերում հունական «Ագիատիկ» առագաստանավը, որը գալիս էր 15 օրը մեկ, երբեմն էլ ավելի ուշ: Ջրի պակասը լրացնելու համար հայ մարտիկները ստիպված էին, իրենց կյանքը վտանգելով, գիշերով նավել հանդիպակաց ափը և այնտեղ գտնվող ծորակի աղբյուրից ջուր վերցնել: Նրանք ապրում էին կղզու քարայրներում, իսկ գիշերները դիոլի նվազակցությամբ կատարում էին ազգային երգեր, որը միշտ բարձր էր պահում նրանց մարտական ոգին ու եռանդը: Հայ մարտիկները կղզուց հետևում էին թշնամու քայլերին, նրանց նավերի ու սուզանավերի տեղաշարժերին, գաղտնի անցնում էին թուրքական ափը և թարմ տեղեկություններ հավաքում հակառակորդի մասին, կատարում դիվերսիոն գործողություններ թշնամու թիկունքում: Օգոստոսին կղզուն է մոտենում բրիտանական մի ռազմանավ: Տ. Թեքեյանը բրիտանացի ծովային սպաների հետ կազմակերպեց դիվերսիոն գործողություն: Նրանք ոչնչացրին մի քանի ժամվա հեռավորության վրա գտնվող Մերսինի նավահանգստի թուրքական նավթամբարը, որտեղ գերմանական սուզանավերն էին լիցքավորվում: Իսկ մուսալեոցի Ղազարոս Ուրֆայանն այնտեղից բրտանական նավով ափ է դուրս գալիս Մուսա լեռան վրա և մի քանի ամիս տևած հետախուզական-դիվերսիոն գործունեությունից հետո հաջողությամբ վերադառնում է: Ի վերջո, հունական առագաստանավով հայ մարտիկները հեռանում են Լիլ Պրովանսալից¹:

Այսպիսով՝ մուսալեոցիներին զինվորագրելու, նրանց մարտական ունակություններն ու տարածաշրջանին ծանոթ լինելու հանգամանքը ի շահ իրենց օգտագործելու հարցը 1915 թ. սեպտեմբերից մի քանի ամիս շարունակ քննարկում էին ֆրանսիական և բրիտանական իշխանությունները: Մուսալեոցիները ոչ միայն պատրաստակամ էին կռվելու ատելի թուրքերի դեմ, այլ նույնիսկ իրենք էին բազմաթիվ դիմումներ կատարում հնարավորինս շուտ մարտական գործողությունների մասնակցելու համար:

¹ Թեքեյան Տ., նշվ. աշխ., էջ 43-49: Յուշամատեան Մուսա լեռան, էջ 130-131:

Եգիպտոսի ֆրանսիական և բրիտանական ռազմական իշխանությունները նույնիսկ սկսեցին ռազմական մարզումներ մուսալեոցիների հետ: Սակայն հայկական զորամաս կազմավորելուն դեմ արտահայտվեցին հայ ազգային գործիչների զգալի մասը, հատկապես՝ Ազգային պատվիրակության նախագահ Պ. Նուբարը: Դա պայմանավորված էր այն մտավախությամբ, որ թուրքերը հայ կամավորական բանակի գոյությունը կարող էին օգտագործել եղեռնից մազապուրծ մի քանի հարյուր հազար արևմտահայերին կոտորելու համար: Ի վերջո, որոշ ժամանակով հետաձգվեց հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը: Չնայած դրան՝ մուսալեոցի մի քանի տասնյակ մարտիկներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից, պարեկային ծառայություն էին կատարում Կիլիկիայի ափամերձ կղզիներում, իրականացնում դիվերսիոն-հետախուզական մի շարք գործողություններ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

3.1. ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ 1916 Թ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Կիլիկիան ազատագրելու և այնտեղ հայկական ինքնավարություն ստեղծելու նպատակով հայերն արձագանքեցին կամավորագրության Ֆրանսիայի կոչին, և 1916 թ. վերջին Կիպրոսում ձևավորվեց Արևելյան կամ Հայկական լեգեոնը:

Պատմագիտության մեջ լեգեոնի կազմավորման հանգամանքների վերաբերյալ տարբեր տեսակետներ են ներկայացվել, սակայն դրանք ոչ ամբողջությամբ կամ թյուրիմացաբար ոչ ճիշտ են լուսաբանում ֆրանսիական բանակի հայկական այդ զորամասի ստեղծման պատմությունը: Մի շարք հեղինակներ այն տեսակետն են հայտնել, որ լեգեոնի կազմավորման գաղափարը տվել է Պ. Նուբարը¹: Սակայն դա չի համապատասխանում իրականությանը: Ինչպես տեսանք, Պ. Նուբարը չնայած դեռևս 1914 թ. նոյեմբերին էր առաջարկում հայ կամավորներին ընդգրկել անգլո-ֆրանսիական զորքերի կազմում, եթե Կիլիկիայում ափիանում կատարվեր, սակայն 1915 թ. աշնանից դեմ էր հայ կամավորական առանձին զորամիավորման ստեղծմանը, որը, նրա կարծիքով, թուրքերին հայկական նոր կոտորածների իրականացման առիթ կտար²:

Մեկ այլ տեսակետի համաձայն լեգեոնի ստեղծման գաղափարը 1916 թ. հուլիսին հղացել էր Կահիրեի բրիտանական գաղտնի ծառայության պետ գեներալ Գիլբերթ Բլեյթոնը և այդ միտքը փոխանցել էր Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնին³: Սա նույնպես ամբողջությամբ չի արտացոլում իրականությունը, քանի որ Կիլիկիայի ուղղությամբ գործելու նպատա-

¹ Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970, էջ 113-114: Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը, էջ 102: Պոլ Դյու Վեու, Հայկական լեգեոնի առթիւ, «Այսօր» լրագիր, Փարիզ, 1951, դեկտեմբեր 17: Hovannisian R., The Republic of Armenia, vol. 1, Los Angeles, 1971, p. 258.

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 19, թ. 107:

³ Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Երևան, 1987, էջ 61: Զորմիսյան Լ., Համապատկեր Արևմտահայոց մեկ դարու պատմության, հ. Դ, Բեյրութ, 1975, էջ 50:

կով հայկական զորամաս ստեղծելու հարցը քննարկման առարկա էր դեռևս 1915 թ.-ից:

Մեր աշխատության մեջ փորձել ենք հանգամանորեն լուսաբանել ու ներկայացնել լեգեոնի կազմավորման ողջ գործընթացը:

Ինչպես տեսանք, 1916 թ. մայիսի 16-ին ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով նախատեսվում էր օսմանյան տիրույթները բաժանել Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Արևմտյան Հայաստանի մի մասը՝ Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ Խարբերդը, Դիարբեքիրը, Սեբաստիան և Կիլիկիան՝ Ֆրանսիային¹:

Փաստորեն՝ պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգներն անցնելու էին Ֆրանսիային: Վերջինիս էին անցնելու նաև Սիրիան և Լիբանանը: Հետևաբար՝ ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի և ռազմական նախարարությունները սկսեցին ամենայն լրջությամբ քննարկել Կիպրոսում 5.000-ոց հայկական զորամաս կազմավորելու հարցը:

Բրիտանացիները Միջազգետքում ու Պաղեստինում թուրքերի դեմ մղած կռիվների ընթացքում գերել էին թուրքական բանակում ծառայող 179 հայերի, որոնց արգելափակել էին Հնդկաստանի Սոմերսեթ քաղաքում: Հայ ռազմագերիները խնդրել էին, որպեսզի իրենց ընդգրկեն Միջազգետքի բրիտանական բանակի մեջ, կամ թույլ տան միանալու Կովկասի հայ կամավորական գնդերին: Ամերիկահայերը ևս 1916 թ. հունիսի 8-ին դիմել էին բրիտանական իշխանություններին, որ հայ ռազմագերիները միացվեն դաշնակիցների ուժերին: Սակայն բրիտանական ռազմական իշխանությունները դա համարել էին անցանկալի քայլ²:

Հունիսի 28-ին Լոնդոնի ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը վարչապետ Ա. Բրիանին հեռագրեց, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ում իրեն տեղեկացրել են Միջազգետքում գերված և Հնդկաստան տեղափոխված հայ ռազ-

¹ http://en.wikipedia.org/wiki/Sykes%E2%80%93Picot_Agreement

² Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 65-66:

մագերիններին դաշնակիցների բանակների մեջ ընդգրկելու ամերիկահայերի խնդրանքի մասին: Քանի որ Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի մի մասը և Կիլիկիան անցնելու էին Ֆրանսիային, այդ պատճառով բրիտանական կառավարությունը ցանկացել էր իմանալ, թե արդյոք Ֆրանսիան կցանկանար օգտվել այդ հայերի ծառայություններից¹:

Դեսպանի հեռագիրը վարչապետն ուղարկում է գեներալ Ժ. Ժոֆրին: Սակայն գեներալը հուլիսի 3-ին պատասխանում է, որ այդ պահին թուրքերի դեմ ռազմական գործողություններ չեն նախատեսվում, ինչպես նաև հայ ռազմագերիներին ֆրանսիական բանակ չեն կարող վերցնել օրենսդրական արգելքի պատճառով: Ժ. Ժոֆրը կարծում էր, որ հայերին Ֆրանսիայում կարող են օգտագործել որպես բանվորական ուժ²:

Ֆրանսիական ռազմական շրջանակները դեռևս անհնար էին համարում հայկական զորամասի կազմավորումը:

Հուլիսի 4-ին Պ. Կամբոնը հայ կամավորների հարցի շուրջ Ա. Բրիանին ուղարկում է նոր հեռագիր: Նա տեղեկացնում էր, որ հայերի խնդրի շուրջ զրուցել էր նաև Կահիրեի բրիտանական գաղտնի ծառայության պետ գեներալ Գ. Քլեյթոնի հետ: Նրանք հանգել էին այն եզրակացությանը, որ շահավետ կլիներ Կիպրոսում համախմբել զինվորագրվելու պիտանի հայերին: Այդ զորաբանակի սոսկ ներկայությունն անհանգստություն կպատճառեր թուրքերին: Դեսպանը նշում էր, որ անհրաժեշտ էր հրահանգիչներ նշանակել ֆրանսիացի սպաների, իսկ ծախսերը հոգալու էր Ֆրանսիան, քանի որ համաձայնագրով Հայաստանի մեծ մասը պատերազմից հետո անցնելու էր նրանց³:

Ինչպես երևում է, Գ. Քլեյթոնն իսկապես առաջարկել էր հայերից զորամիավորում ստեղծել, սակայն դրանից առաջ հարցը արդեն իսկ քննարկման փուլում էր: Պետք է նշել, որ բրիտանացի գեներալի կողմից բարձրաձայնված առաջարկը որոշակի դեր ունեցել էր ֆրանսիացի և բրիտանացի շատ գործիչների տեսակետները փոխելու գործում:

Հուլիսի 17-ին Հնդկաստանի կառավարությունն իր հերթին պատրաստականություն հայտնեց ազատել հայ ռազմագերիներին, որպեսզի նրանք

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 308:

² Նույն տեղում, էջ 309:

³ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 67: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 309:

միանային Կիպրոսում կազմավորվող հայկական զորախմբին¹: Չնայած դեռևս որոշում չէր կայացվել՝ սակայն արդեն շրջանառության մեջ էր դրվել այն գաղափարը, որ Կիպրոսում կազմավորվելու էր հայկական զորաբանակ:

Հուլիսի 19-ին Ա. Բրիանը ռազմական նախարար գեներալ Պ. Ռոքին իրազեկեց Գ. Քլեյթոնի առաջարկի և Պ. Կամբոնի հեռագրի մասին: Ա. Բրիանը համոզված էր, որ նմանատիպ կորպուսի միայն ներկայությունը թուրքերին անհանգստություն կպատճառի ու կհարկադրի չամայացնել Արևմտյան Սիրիան: Նշում էր, որ արաբական ապստամբությունը թուրքերին սպառնում էր ոչ միայն թերակղզում, այլև՝ Պաղեստինում ու Սիրիայում, հետևաբար՝ Ադանայի ու Ալեքսանդրետի մոտակայքում պարտիզանական կորպուսի կազմավորումն ու մարզումը կխոչընդոտեր թուրքերին բոլոր ուժերը կենտրոնացնել հարավում՝ Մեքքայի շերիֆին ջախջախելու համար: Վարչապետը տեղեկացնում էր, որ բրիտանացիները հայերին մարզելու և զինելու գործը վստահել են ֆրանսիացիներին: Մատնանշում էր, որ տվյալ պահին իրենք նոր ռազմաճակատ բացելու նպատակ չունեն, սակայն անհրաժեշտ էր մոտ լինել այդ տարածքին և ընդգծել իրենց իրավունքները նրա նկատմամբ: Վարչապետը նշում էր, որ եթե արաբների ապստամբությունը հաջողությամբ ընթանա, ապա անհրաժեշտ կլինի թույլ չտալ նրանց գիտակցելու իրենց ուժը և ստեղծելու անկախ իշխանություններ, և պետք կլինի ֆրանսիացի սպաներից բաղկացած հրամանատարական կազմ ունեցող կարգապահ մի կորպուսի անհապաղ միջամտությունը՝ Հյուսիսային Սիրիայի վարչական կազմակերպումը իր ձեռքում կենտրոնացնելու համար: Նամակի վերջում Ա. Բրիանը գեներալին հարցնում էր Կիպրոսում 5.000-ոց հայկական կորպուսը ֆրանսիական հրամանատարական կազմով ու զենքով ապահովելու հնարավորության մասին, ինչպես նաև տեղեկացնում էր որպես բանվորներ հայերին օգտագործելու գեներալ Ժ. Ժոֆրի առաջարկի անհրազործելիության մասին, քանի որ հայերը միշտ խուսափել էին դրանից²:

Հուլիսի 27-ին Պ. Ռոքը Ժ. Ժոֆրին տեղեկացրեց թուրքերի դեմ մարտնչելու ցանկություն ունեցող օսմանահպատակ հայերից ֆրանսիացի սպաների հրամանատարությամբ Կիպրոսում զորամաս կազմելու նախագծին իր դրական տրամադրվածության մասին: Նշում էր, որ նախկինում

¹ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 66:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 313-314:

հայերից զորամաս կազմավորելու խնդիրը նպատակահարմար չէր, քանի որ առանց ֆրանսիական ուժերի աջակցության նրանք կարող էին ձախողվել, իսկ Ֆրանսիայի համար դժվար կլիներ ապաստան տալ ապստամբած շրջանների հայերին, միաժամանակ այդ գործողությունները հայկական կոտորածների պատճառ կարող էին դառնալ: Սակայն Պ. Ռոքի կարծիքով ժամանակները փոխվել էին և հայկական կորպուսի կենտրոնացումը Ալեքսանդրետի ծոցի մոտերքում, որտեղից անցնում էին դեպի Կովկաս, Միջագետք, Սիրիա և Հեջազ գնացող հաղորդակցության ուղիները, թուրքերին կստիպեին զգալի ուժեր պահել այդ շրջանում: Պ. Ռոքը վստահեցնում էր, որ Կիպրոսում հայկական կազմակերպված ուժի առկայությունը օգտակար կլիներ արաբների հակաթուրքական ապստամբության ընթացքում Սիրիայի գործերին միջամտելու և այդ երկրում իրենց ձեռնտու վարչակարգ հաստատելու համար: Վերջում նա գեներալ Ժ. Ժոֆրի կարծիքն էր հարցնում խնդրի առնչությամբ¹:

1916 թ. օգոստոսի 1-ին Ժ. Ժոֆրը ռազմական նախարարին իր հավանությունը հայտնեց Կիպրոսում 5.000-ոց հայկական կորպուս ստեղծելու գաղափարի մասին: Նա առաջարկում էր այն կազմել 4 գումարտակներից, պահեստի գնդից, ղեկավարել 30 ֆրանսիացի սպաների միջոցով: Կորպուսի հրամանատար էր առաջարկում նշանակել Հունաստանում գտնվող կապի սպա կապիտան Շամպտորին: Գեներալը նշում էր, որ Ասիայում ռազմական հնարավոր գործողությունների ժամանակ հայկական կորպուսին աջակցելու համար ֆրանսիական զորամասեր չեն կարողանա տրամադրել, քանի որ արևմտյան ռազմաճակատում վիճակը ծանր էր, սակայն կարող են ուղարկել Հյուսիսային Աֆրիկայի գումարտակներից մեկը: Ժ. Ժոֆրը գտնում էր, որ հայկական կորպուսը ստեղծվելու էր առաջին իսկ անհրաժեշտության դեպքում ասիական ափերում գործելու կամ այնտեղ ծագած խռովություններին աջակցելու համար, ուստի աննպատակահարմար էր համարում այն Արևելքի բանակի հրամանատարի տրամադրության տակ դնելը և առաջարկում էր ենթարկել Սիրիայի մոտ գործող ռազմածովային դիվիզիայի հրամանատարին, քանի որ նա մոտիկից էր հետևում իրադարձություններին այդ տարածաշրջանում և արագությամբ կարձագանքեր դեպքերի հնարավոր զարգացումներին²:

¹ Նույն տեղում, էջ 314-316:

² Նույն տեղում, էջ 317-318:

Այսպիսով՝ գեներալ ժ. Ժոֆրը ևս տվեց իր համաձայնությունը, և նույնիսկ առաջարկում էր հնարավորինս արագ կազմավորել ֆրանսիացի սպաների ենթակայության ներքո գտնվող հայկական 5.000-ոց կորպուս և դնել Սիրիայի ռազմածովային դիվիզիան ղեկավարող դերժովակալի հրամանատարության տակ:

Գլխավոր հրամանատարի համաձայնությունը ստացվելուց հետո, Լոնդոնի ֆրանսիական դեսպանություն գործուղված ժ. Պիկոն օգոստոսի 8-ին տեղեկացնում է մայոր Լուի Ռոմիոյին, որ Լոնդոնում ֆրանսիական ռազմական կցորդը հանձնարարություն էր ստացել հնարավորինս արագ բրիտանական կառավարության համաձայնությունը ձեռք բերել Կիպրոսում հայկական կորպուսի և զենքի պահեստի տեղակայման համար: Ժ. Պիկոն գտնում էր, որ հնարավորինս արագ պետք էր զենք և հրամանատարական կադրեր տեղափոխել Կիպրոս: Նա միաժամանակ գրուցել էր Ֆրանսիայի ռազմածովային ուժերի շտաբի պետ ծովակալ Ֆերդինանդ դը Բոնի հետ, որը խոստացել էր գլխավոր հրամանատարի համաձայնության դեպքում Դյունկերկից մինչև 2.500 ծովային հետևակայինների ուղարկել Կիպրոս՝ հայկական կորպուսի հետ համատեղ գործելու համար¹:

Ժ. Պիկոյի քայլից պարզ էր դառնում, որ արդեն հայկական զորամասի հրամանատարի գլխավոր թեկնածու էր դիտվում Լ. Ռոմիոն:

Օգոստոսի 10-ին Ա. Բրիանին ուղարկած հեռագրում գեներալ Պ. Ռոքը կրկին հավաստում էր իր համաձայնությունը Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու հարցում և պատրաստակամություն էր հայտնում այն սպայական կադրերով, զենքով ու պաշարներով ապահովել: Նա գտնում էր, որ կարող են կազմավորել փոքրաթիվ ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող պարտիզանական զորամաս, բայց ավելի ճիշտ էր համարում այն ստեղծել բոսնիական գոմարտակի օրինակով, որը բաղկացած էր զինվորական կանոնավոր ստորաբաժանումներից, իսկ անդամներն օգտվում էին նույն նպաստներից, ինչ ֆրանսիացի զինվորները: Նա վստահ էր, որ երկրորդ դեպքում կորպուսը կլինի չափազանց մարտունակ, որն ավելի շահավետ էր: Գեներալ ժ. Ժոֆրը ևս նման կառուցվածքի կողմնակից էր: Պ. Ռոքը կարևորում էր Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության հետ շուտափույթ համաձայնության կայացումը, քանի որ այդ առաջարկն անելիս գեներալ Գ. Բլեյքոնը միայն իր կարծիքն էր հայտնել: Պ. Ռոքը տե-

¹ Նույն տեղում, էջ 318-319:

ղեկացնում էր, որ մայիսի 1-ի դրությամբ Պորտ Սայիդում կային միայն 250 կամավորներ, որոնց մարտունակությունն այնքան էլ բարձր չէր, հետևաբար առաջարկում էր հայկական զորամասի մեջ ընդգրկել Եգիպտոսի ու Հնդկաստանի հայերին, ինչպես նաև Փոքր Ասիայում հավաքագրել՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով: Այդ հարցերը տեղում պարզելու նպատակով Պ. Ռոքն անհրաժեշտ էր համարում զինվորական առաքելություն ուղարկել, որը կղեկավարեր հայկական կորպուսի ապագա հրամանատարը: Նա հետազոտելու էր այն պայմանները, որոնցում կազմավորվելու էր կորպուսը, հայ կամավորների քանակն ու բնավորությունը, իր բոլոր քայլերը համաձայնեցնելու էր տեղի բրիտանական իշխանությունների և Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատարի հետ: Այդ ուսումնասիրությունից հետո առաքելության ղեկավարն իր առաջարկներն էր ներկայացնելու կորպուսի կառուցվածքի և կարգավիճակի մասին¹:

Օգոստոսի 12-ին Պ. Ռոքը հայկական կորպուսի հարցի շուրջ գաղտնի հեռագիր ուղարկեց ռազմածովային նախարար Լուսիեն Լակազին: Նա ծովակալին ներկայացնում էր ռազմական և քաղաքական այն հանգամանքները, եղած առաջարկները, որոնք հանգեցրել էին այդ զորամասի կազմավորման գաղափարին: Իրազեկում էր, որ Ժ. Ժոֆրի հետ համաձայնության են եկել, որպեսզի այդ զորամասը դրվի Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատարի ղեկավարության տակ: Պ. Ռոքը պատրաստակամություն էր հայտնում զորամասի հրամանատարական կազմի համար ֆրանսիացի սպաների ուղարկել Կիպրոս, երբ Մեծ Բրիտանիայի համաձայնությունը ձեռք բերվեր: Նշում էր, որ այդ զորամասի հրամանատարն անձամբ պետք է ուսումնասիրեր և առաջարկեր այն պայմանները, որոնք ավելի շահեկան էին: Վերջում Պ. Ռոքը հարցնում էր Լ. Լակազի կարծիքը հարցի շուրջ և դրական պատասխանի դեպքում առաջարկում էր նշել, թե ինչպես և որտեղ պետք է ափ դուրս բերեին երեք սպաներից ու մի քանի զինվորներից բաղկացած առաքելությունը, որը Կիպրոսում ընտրելու էր հայկական զորամասի տեղակայման վայրը: Ռազմական նախարարը խոստանում էր զորամասի նյութական ու պարենային հատկացումները վերցնել իր նախարարության վրա²:

Ժ. Պիկոն օգոստոսի 12-ին մայոր Լ. Ռոմիոյին ուղարկած նամակում անհանգստություն էր հայտնում, որ բրիտանական արտաքին գերատեսչու-

¹ Նույն տեղում, էջ 319-320:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 320-322:

թյան հետ դեռևս համաձայնություն չէր կայացվել հայկական կորպուսի հարցում: Նա առաջարկել էր, որ գործընթացն արագացնելու համար անմիջապես Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության հետ բանակցությունների մեջ մտնել Դը Լա Պանուաը: Ժ. Պիկոն համոզված էր, որ պետք է արագացնել այդ գործընթացը, որպեսզի Միջերկրականի արևելյան ափին հետագայում գործելն ավելի դյուրին դառնար¹:

1916 թ. օգոստոսի 14-ին Ա. Բրիանը Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պ. Կամբոնին ուղարկած հեռագրով տեղեկացրեց, որ ռազմական նախարարությունը պատրաստ է Կիպրոս ուղարկել առաքելություն, որը կկազմավորի հայկական կորպուս: Տեղեկացնում էր, որ ռազմական նախարարի կարծիքով կարող էին ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող մեկ կամ մի քանի հայկական գումարտակներ կազմել: Առաջարկում էր, որպեսզի Պ. Կամբոնը անհապաղ այդ հարցի շուրջ բրիտանական կառավարության համաձայնությունը ձեռք բերեր, ինչպես նաև ճշտեր Եգիպտոսում և Հնդկաստանում կամավորագրության ենթական հայերի մոտավոր թվաքանակը²:

Օգոստոսի 15-ին գեներալ Պ. Ռոքը Դը Լա Պանուսին իրազեկեց Կիպրոսում հայկական զորամաս կազմավորելու որոշման մասին: Նշում էր, որ կարող են կազմավորվել մի քանի գումարտակներ այն վայրում, որը կմատնանշեն Կիպրոսի բրիտանական իշխանությունները, որոնց հետ համաձայնություն կայացնելու նպատակով նախապես այնտեղ էր մեկնելու մի ռազմական առաքելություն: Պ. Ռոքը Դը Լա Պանուսին շտապեցնում էր ճշտել այդ հարցի շուրջ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կարծիքը, առանց սպասելու վերջինիս և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության միջև ընթացող բանակցությունների ավարտին³:

Օգոստոսի 16-ին Դը Լա Պանուաը նամակով դիմեց Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության զինվորական հետախուզության տնօրեն, գեներալ Ջորջ Մակ Դոնոգին: Նա տեղեկացրեց, որ ֆրանսիական հրամանատարական կազմ ունեցող հայկական կորպուս կազմավորելու որոշում է ընդունվել ֆրանսիական կառավարության կողմից: Նա ցանկանում էր իմանալ Եգիպտոսում ու Հնդկաստանում կամավորագրվելու ենթակա հայերի թիվը, ինչպես նաև բրիտանական կառավարության դիրքորոշումը այդ կորպուսը

¹ Նույն տեղում, էջ 322:

² Նույն տեղում, էջ 322-323:

³ Նույն տեղում, էջ 324:

Կիպրոսում տեղակայելու մասին, քանի որ այնտեղից հարմար կլիներ անհրաժեշտության դեպքում Սիրիա ուղարկելը: Դը Լա Պանուը շեշտում էր, որ նախագիծը կարող էր իրագործվել միայն երկու կառավարությունների համաձայնության դեպքում, և ցանկանում էր իմանալ Կիպրոս ֆրանսիական առաքելությունն ուղարկելու և տեղակայման վայրը որոշելու հնարավորության մասին¹:

Մինչ երկու կառավարությունների միջև վերջնական համաձայնություն կայացնելը՝ ֆրանսիական կողմը բավական գործնական քայլեր էր կատարում հայկական լեգեոնի ձևավորման շուրջ եղած խնդիրները արագորեն լուծելու համար:

1916 թ. օգոստոսի 16-ին Լ. Ռոմիոն նշանակվել էր կազմավորվելիք զորամասի հրամանատար²:

Օգոստոսի 25-ին Ժ. Պիկոն Ֆրանսիայի ԱԳՆ գլխավոր քարտուղար Պիեր դը Մարթերիին ուղարկած նամակում տեղեկացնում էր, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ում կրկին բարձրացրել է հայկական կորպուսի հարցը, սակայն նրանք հապաղում են պատասխան տալ, դա պատճառաբանելով գաղութային վարչության դանդաղաշարժությամբ: Սակայն Ժ. Պիկոն համոզված էր, որ դա պայմանավորված էր որոշ պաշտոնյաների չկամությամբ: Վերջում Ժ. Պիկոն նշում էր, որ կարող են նաև լիբանանցիների հավաքագրել. «Բայց ես գերադասելի եմ համարում սկսել հայերից ելնող եռանդով, որոնց մենք կարիք ունենք համախմբելու մեր գույների շուրջ»³:

Սեպտեմբերի 4-ին Ֆրանսիայի ռազմական նախարարը Դը Լա Պանուսին ուղարկած հեռագրում շտապեցնում էր Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարության կարծիքն իմանալ Կիպրոսում զորամասի կազմավորման և դրան կամավորագրվելու ընդունակ հայերի թվաքանակի վերաբերյալ⁴: Այսպիսով՝ Ֆրանսիան բավական վճռական էր տրամադրված և ամեն կերպ փորձում էր հաղթահարել բրիտանական կողմից ենթադրվող խոչընդոտները:

Սեպտեմբերի 7-ին Եգիպտոսում բրիտանական ռազմարշավային ուժերի գլխավոր հրամանատար գեներալ Արչիբալդ Մուրրեյը դերժովակալ Հենրի դը Սպիտգին տեղեկացրեց, որ մուսալեռցի մարտունակ հայերին ֆրանսիացիներն այլևս չեն կարող օգտագործել, քանի որ իրենք արդեն հայերին

¹ Նույն տեղում, էջ 324:

² Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, էջ 24:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 327-328:

⁴ Նույն տեղում, էջ 328:

կազմակերպել են և պատրաստվում են ծառայության ուղարկել Սալոնիկի դաշնակցային բանակում: Գեներալը վերջում նշում էր, որ հայերը 12 ամսից ավելի անգործության մեջ են եղել և իրենք նրանց վրա դրամական միջոցներ են վատնել, այդ է պատճառը, որ որոշել են օգտվել նրանց ծառայություններից¹:

Ինչպես տեսնում ենք, բրիտանացիներն ակնարկում են, որ նյութական միջոցներ են ծախսել հայերի վրա և հասկացնում էին ֆրանսիացիներին, որ եթե նրանք ցանկանում են օգտագործել հայ մարտիկների ռազմական կարողությունները, ապա պետք է փոխհատուցեն իրենց ծախսերը: Միաժամանակ նրանք գիտակցաբար ֆրանսիական կողմի առաջ խոչընդոտներ էին ստեղծում՝ իմանալով, որ հայկական կորպուսը ձևավորվելու էր առաջին հերթին մուսալեոցիների հիմքի վրա:

Մեքքա մեկնող ֆրանսիական առաքելությունը, որը ղեկավարում էր փոխգնդապետ Էդուարդ Բրեմոնը, որոշ ժամանակ կանգ առավ Եգիպտոսում: Նա սեպտեմբերի 1-ին հանդիպում է Միհրան Տամատյանի, Լևոն Մկրտիչյանի և Եգիպտահայ այլ գործիչների հետ, որոնց տեղեկացրեց հայկական զորամաս կազմավորելու Ֆրանսիայի մտադրության մասին, ակնարկելով, որ այն կարող էր լինել ապագա հայկական բանակի կորիզը, և խնդրեց նրանց աջակցությունը: Հայ գործիչները մի քանի օրից պատասխանեցին, որ նման խնդրին լուծում տալու իրավասություն ունի միայն Ազգային պատվիրակությունը²:

Է. Բրեմոնը մանրամասն ուսումնասիրում է Պորտ Սալիդում գտնվող մուսալեոցիներին: Նա պարզեց, որ Պորտ Սալիդի հայկական ճամբարն ընդգրկում էր մոտավորապես 4.500 անձանց, որոնցից 400-ը մարտնչելու պատրաստ տղամարդիկ են: Նրանցից զինծառայության համար պիտանի էին 300-350-ը: Ճամբարի հիմնադրման համար ծախսվել էր 16.000 ֆրանկ, պահելու ամսական ծախսը հասնում էր մոտավորապես 30.000 ֆրանկի: Ծախսերն արվել էին բացառապես եգիպտական բյուջեից: Ֆրանսիայի ռազմածովային նախարարությունը լեյտենանտ Պիկարին էր հանձնել հայերին ուսուցանելու գործը, և մոտ 200-ի հետ նա հասել էր բարձր արդյունքների: Է. Բրեմոնի կարծիքով հայերը «խելացի են, հրաշալի հրաձիգներ են, ուշիմ են, նրանց խորթ է դյուրաբորբոքությունը: Բայց, բնականաբար, շատ են հեռու մեր մտածելակերպից»³:

¹ Նույն տեղում, էջ 329:

² Եսփումեան Ա., նշվ. աշխ., էջ 114-117:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 331:

Է. Բրեմոնն առաջարկում էր, որ Ֆրանսիան Կիպրոսում հիմնադրի ուսումնական կենտրոն, որը բաղկացած կլինի գումարտակի հրամանատարից, երեք սպաներից, հինգ ենթասպաներից: Հրահանգիչների թվում պետք է լինեին բազմաթիվ ուսուցիչներ, որպեսզի արդյունավետորեն դասավանդեին ֆրանսերեն, «որն անելը դժվարին չէ այս ժողովրդի շրջանում»: Նշում էր, որ աշխատանքները պետք է սկսել 200 հայերի հետ, որոնց թիվը արագորեն կկրկնապատկվեր: Գտնում էր, որ հայերից շատերն արդեն իսկ ունեին ռազմական բավարար կրթություն դասակ ղեկավարելու համար¹:

Է. Բրեմոնը, տեղեկանալով, որ Սալոնիկից պահանջել են ուղարկել ջոքերեպանների և Եգիպտոսի գերագույն կոմիսար Հենրի Մակ-Մահոնը հավանություն էր տվել հայ կամավորներին այնտեղ ուղարկելուն, իսկ գնդապետ Էլզուրը, մեծ ճնշում գործադրելով, հավաքագրել էր մոտ 180 հայերի, խնդրեց Էլզուրին ու գեներալ Ալթամին, որպեսզի ժամանակավորապես հետաձգեն հայերին Սալոնիկ ուղարկելը: Նա իրազեկեց, որ ֆրանսիական կառավարությունը ինքն էր պատրաստվում հայերի ուժերն օգտագործել, քանի որ բրիտանա-ֆրանսիական համաձայնությունը վերջիններին դրել էր Ֆրանսիայի տրամադրության ներքո: Իր ուսումնասիրությունների ու քայլերի վերաբերյալ Է. Բրեմոնը սեպտեմբերի 7-ին զեկուցագիր ներկայացրեց Եգիպտոսում ֆրանսիայի դեսպան Ժ. Դեֆրանսին: Նա խնդրեց, որպեսզի վերջինս միջամտի և այդ հարցի շուրջ բանակցի Հ. Մակ-Մահոնի հետ: Է. Բրեմոնը եկել էր այն եզրակացությանը, որ բրիտանացիները ցանկանում են ազատվել հայերի համար կատարվող ծախսերից և ճամբարում ոստիկանական ուժեր պահելու հոգսից:

Սեպտեմբերի 9-ին Ժ. Դեֆրանսը Ա. Բրիանին ուղարկեց Է. Բրեմոնի մանրամասն զեկուցագիրը՝ մուսալեռցիների զինվորագրման վերաբերյալ²: Է. Բրեմոնը խնդրել էր շուտափույթ պատասխանել, թե արդյո՞ք պատրաստվում են օգտագործել հայերին, իսկ եթե ոչ, ապա չհետաձգի նրանց տեղափոխումը Սալոնիկ: Վերջում նա կրկին շեշտում էր, որ իր կարծիքով անպայման անհրաժեշտ էր օգտագործել հայերի ուժը: Իր հերթին Ժ. Դեֆրանսը մատնանշում էր, որ ֆրանսիական ռազմական ու ռազմածովային իշխանություններն անուշադրության են մատնել հայերին դեռ ապրիլից: Նշում էր, որ բրիտանացիների գլխավոր նպատակը հայերից ձերբազատվելն է, և եթե

¹ Նույն տեղում, էջ 332:

² Նույն տեղում, էջ 329-330:

իրենք օգտագործեն հայերին, ապա պետք է փոխհատուցեն դաշնակցին, որը մեկ տարուց ավել էր ամսական 30.000 ֆրանկ էր ծախսում Պորտ Սայիդի հայկական ճամբարի վրա:

Է. Բրեմոնի նամակը վճռորոշ նշանակություն ունեցավ, և մեծամասամբ դրա շնորհիվ էր, որ ռազմական նախարար Պ. Բոքը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հայկական զորամաս կազմավորելու հարցին¹:

Սեպտեմբերի 10-ին Ժ. Գուի կազմած զեկուցագրից տեղեկանում ենք, որ բրիտանացի որոշ գործիչներ Դը Լա Պանուսին հասկացրել են, որ դեմ են Կիպրոսում հայկական զորամասի տեղակայմանը: «Այս պայմաններում, հարկ կլինի հրաժարվել հայերին օգտագործելու նախագծից, որոնք արժանի չեն այն 360.000 ֆրանկին, որը պետք է վճարել անգլիացիներին», - նշում է Ժ. Գուին²:

Վերոնշյալ պաշտոնյայի համար հայերին աջակցելը միայն ֆինանսական մանր հաշվարկներ էին, նա մոռանում էր, որ պատերազմից հետո Ֆրանսիան նպատակ ուներ տիրելու հայկական տարածքներին, և տվյալ պահին ցուցաբերած ժլատությունը իրենց համար քաղաքական ու տնտեսական բացասական լուրջ հետևանքներ կարող էր ունենալ:

Բրիտանացիների նպատակը, մեր կարծիքով, Մերձավոր արևելքում սեփական հեղինակությունը բարձրացնելը և ֆրանսիացիներին հեղինակագրելն էր, միաժամանակ ֆրանսիական դրոշի ներքո հայկական զորամասի կազմավորմանը խոչընդոտելը, որպեսզի հայերը չընկնեին ֆրանսիական ազդեցության տակ:

Սեպտեմբերի 11-ին Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունները Պորտ Սայիդի հայերին ներկայացրին կամավորագրության պայմանագրերը, որոնք ստորագրելուց հետո նրանց ուղարկելու էին Սալոնիկ³: Այն պարտավորեցնում էր բրիտանական բանակում ծառայել մինչև պատերազմի ավարտը, կրել զինվորական կարգապահությունից բխող բոլոր զրկանքները, իսկ անհնազանդության պարագայում ենթարկվել ռազմական ատյանի դատին:

Սակայն հայերը հրաժարվեցին այդ պայմանագրերը ստորագրելուց ու Սալոնիկ մեկնելուց: Մուսալեռցիները, որոնք մի քանի ամիս բրիտանացիների կողմից օգտագործվում էին որպես բանակային բանվորներ, կտրակա-

¹ Նույն տեղում, էջ 345:

² Նույն տեղում, էջ 330:

³ Նույն տեղում, էջ 332-333:

նապես դեմ էին ջորեպանի կարգավիճակով Սալոնիկ մեկնելուն: Նրանք պատրաստ էին զինվորական ծառայություն կատարել միայն Կիլիկիան ազատագրելու համար: Հակառակ այն բանի, որ Պորտ Սայիդի պարետ գնդապետ Էլզուդը սպառնացել էր, որ պայմանագրերը չստորագրելու դեպքում կուղարկեն Եգիպտոսի խորքերը՝ ճանապարհներ կառուցելու, հայերը մնացին անդդվելի: Մուսալեռցիները դիմեցին Եգիպտոսի ֆրանսիական իշխանություններին, որպեսզի վերսկսեն իրենց ռազմական մարզումները և հարմար պահին պատրաստ լինեն ֆրանսիական հովանավորության ներքո ազատագրելու հայրենի Կիլիկիան¹:

Ֆրանսիական ռազմածովային ուժերի հրամանատարությունը, չունենալով կառավարության կողմից հստակ հրահանգներ հայերի ապագայի մասին, գաղտնաբար խորհուրդ տվեց մուսալեռցիներին մտածելու համար ժամանակ պահանջել մինչև ֆրանսիական կառավարությունը բրիտանացիների հետ համաձայնություն կկայացնեն²: Երբ սեպտեմբերի 12-ին բրիտանական կապիտան Ջ. Հայը ժամանեց Պորտ Սայիդ, որպեսզի հայերին նավ բարձրացնեն, վերջիններս կտրականապես հրաժարվեցին Սալոնիկ մեկնել: Ջ. Հայը կարծում էր, որ դա տեղական՝ արաբական և հայկական մեքենայությունների արդյունք էր³: Դրանով վերջնականապես ձախողվեց մուսալեռցիներին Սալոնիկ ուղարկելու նախագիծը: Վերջիններս չէին ցանկանում հեռանալ ընտանիքներից, աշխատանք Եգիպտոսում էլ ունեին, և պատրաստ էին զինվորագրվել միայն այն պարագայում, եթե կովելու էին Կիլիկիայի ազատագրման համար:

Սեպտեմբերի 13-ին Դը Լա Պանուաը Պ. Ռոքին տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիայի ռազմական նախարարությունն իր հավանությունն էր տվել Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու նախագծին և պատրաստ էր այդ նպատակով տրամադրել կղզու հյուսիսային կամ արևելյան մասում գտնվող որևէ վայր: Նույն օրը Պ. Կամբոնը այդ համաձայնության մասին հեռագրեց Ա. Բրիանին: Նա նաև պարզաբանում էր, որ Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնի առաջարկությամբ էր որոշվել տրամադրել կղզու հյուսիսային կամ արևելյան մասը, ուր ավելի դժվար կլինեին ապահովել զորամասի մատակարարումը: Դա պայմանավորված էր նրանով, որ այնտեղ մահմեդական բնակչություն քիչ կար, և դա առիթ չէր

¹ Նույն տեղում, էջ 362-363:

² Նույն տեղում, էջ 365-366:

³ Նույն տեղում, էջ 336:

տա հուզումների: Դեսպանը նաև տեղեկացնում էր, որ Եգիպտոսում զինվորագրվելու ենթակա հայերի թիվը 400-500 էր, իսկ Հնդկաստանում՝ 175¹:

Սեպտեմբերի 14-ին Ժ. Գուն նոր տեղեկագիր պատրաստեց, ուր վերանայել էր 4 օր առաջ իր ներկայացրած տեսակետները: Նա համոզված էր, որ պատերազմի ավարտից հետո իրենք միևնույնն է պետք է վճարեն բրիտանացիներին Պորտ Սայիդի ճամբարի համար ծախսած ամսական 30.000 ֆրանկը: Նշում էր, որ դա նշանակում էր թույլատրել հայերին Ֆրանսիայի ծախսերով տրվելու անգլիամոլության, ամերիկամոլության, հայամոլության: Գտնում էր, որ այդ ուղուց պետք էր հետ կանգնել և հայերին պահել Փարիզից անմիջական կախման մեջ: Նշում էր, որ պետք է կամ ամբողջությամբ հրաժարվել հայերից կամ ամբողջությամբ նրանց հոգաժողությունը վերցնել: Սակայն կարծում էր, որ առաջին լուծումը ցավալի կլինի Ֆրանսիայի համար, որովհետև «այս մարդիկ խաղաղ կյանքի կվերադառնան իրենց տարածքում, որը մերը կլինի,- մատնանշում էր Ժ. Գուն և պարզաբանում: - Նրանք այնտեղ կվերադառնան մեր կողմից լքված լինելու հետևանքով խոցված, անգլերեն սովորած, հայկական կենտրոնական կոմիտեների հետ սերտորեն դաշնակցած, յուրաքանչյուր բնույթի դիմադրության պատրաստ: Իսկ եթե այժմվանից մենք նրանց ղեկավարենք, նրանք կդառնան մեր հրաշալի գործիքը: Ամենահետաքրքրականն այն է, որ մենք այնուամենայնիվ ստիպված կլինենք հատուցել անգլիացիներին: Եվ դա արդեն կազմում է 360.000 ֆրանկ»²: Ինչպես տեսնում ենք, այդ գործչին հետաքրքրում էին միայն հետագա ճղճիմ շահերն ու հաշվարկները, որոնք վերջին հաշվով հանգում էին այն գումարների հաշվառմանը, որոնք Ֆրանսիան ծախսելու և ստանալու էր հայերին զինական կարողություններն օգտագործելու արդյունքում:

Սեպտեմբերի 15-ին Ժ. Դեֆրանսն Ա. Բրիանին ուղարկած զեկուցագրում կրկին ներկայացնում էր մուսալեռցիների հարցի շուրջ իր և է. Բրենոնի տեսակետները: Վերջինս նոր զեկուցագիր էր կազմել, որն Ժ. Դեֆրանսն ուղարկեց Ա. Բրիանին ու Պ. Ռոքին: Դեսպանը պարզաբանում էր, որ ֆրանսիական նավատորմի միջոցով փրկված մուսալեռցիներին մինչ այդ նախատեսել են օգտագործել միայն ռազմական որոշակի նպատակներից ելնելով, իսկ ապրիլից այդ խնդրի շուրջ ռազմածովային ու ռազմական իշ-

¹ Նույն տեղում, էջ 337:

² Նույն տեղում, էջ 337-338:

խանութիւնները գրեթէ դադարել են հետաքրքրութիւն դրսևորել: Նշում էր, որ Է. Բրեմոնը, Եգիպտոս ժամանելուց ի վեր, աշխուժորեն հետաքրքրվել էր հայերով, և այդ հարցը դիտում էր ավելի լայն մտահորիզոնով: Վերջինս գտնում էր, որ չպետք է մտածել միայն Սիրիայի ավերի մոտ Պորտ Սայիդի 300-400 մարտունակ հայերին արդյունավետ օգտագործելու մասին, այլ բոլոր վայրերից հավաքագրված հայկական զորամաս կազմավորել, որը մեծ աջակցություն ցույց կտար ֆրանսիական ռազմարշավային կորպուսին, որը վաղ թե ուշ ասի էր դուրս բերվելու Սիրիայում: Նա գտնում էր, որ տղամարդկանցից բացի, պետք էր ուշադրություն դարձնել կանանց ու երեխաներին, նրանց ուսուցանել այնպես, որ նրանց միջոցով հնարավոր լինի վարչակաւորեն կազմակերպել ֆրանսիական պրոտեկտորատը Սիրիայում:

Այդ ամենը բավական հեռահար ու ընդարձակ ծրագիր էր, և Ժ. Դեֆրանսը ցանկանում էր ստանալ վարչապետի հրահանգները: Դեսպանի կարծիքով, այդ նախագիծն անհնար կլիներ իրականացնել Եգիպտոսում կամ Կիպրոսում, ինչպես առաջարկում էր Է. Բրեմոնը: Դեսպանը կարծում էր, որ բրիտանացիների հետ վեճերից ու բարդություններից խուսափելու համար իրենք պարտավոր են հայերին տեղափոխել ֆրանսիական վերահսկողության տակ գտնվող որևէ վայր՝ չնայած դա կապված էր մեծ դժվարությունների հետ: Նա վստահ էր, որ այդ ծանր խնդիրը կարելի էր հանձն առնել միայն այն դեպքում, եթե իրենք կամենում են ձևավորել մի բնակչություն, որը նվիրված կլիներ Ֆրանսիայի կողմից Սիրիայի գրավման ու վարչական կազմակերպման գաղափարին: Նա մատնանշում էր այն հակասությունները, որ գոյություն ունեին իրենց և բրիտանացիների միջև: Եթե ֆրանսիացիները գտնում էին, որ իրենք ավելի մեծ իրավունքներ ունեն մուսալեոցիների վրա, քանի որ փրկել էին նրանց և միաժամանակ նրանք այն երկրամասից էին, որը պատերազմից հետո անցնելու էր Ֆրանսիային, ապա բրիտանացիները կարծում էին, որ ֆրանսիացիները հայերին փրկելուց հետո լքել են նրանց և իրենք են հայ գաղթականներին տեղավորել, կերակրել, հովանավորել, կատարել են մեծ ծախսեր, հետևաբար ավելի մեծ իրավունքներ են ձեռք բերել հայերի վրա: Հ. Մակ-Մահոնը Ժ. Դեֆրանսին հայտնել էր, որ եթե Ֆրանսիան ցանկանում էր օգտագործել հայերի մարտական ուժը, ապա պետք է իր վրա վերցնէր բոլոր գաղթականների հոգսը: Դեսպանը կարծում էր, որ իրենք պետք է վճարեն կատարած ծախսերը և հայերին տեղափոխեն այլ վայր, իսկ դանդաղելու դեպքում վստահ էր, որ

բրիտանացիներն առանց Ֆրանսիայի կարծիքը հաշվի առնելու իրենց իրավունք կվերապահեն օգտագործել հայերին¹:

Սեպտեմբերի 22-ին ժ. Դեֆրանսը հեռագրեց Ա. Բրիանին, որ Պորտ Սայիդի հայերին օգտագործելու հարցը ֆրանսիական ռազմածովային և Եգիպտոսի բրիտանական ռազմական իշխանությունների միջև տարածայնությունների պատճառ է դարձել: Դեսպանը անհրաժեշտ էր համարում հարցի շուրջ արագ, հստակ և վերջնական որոշում կայացնելը²:

Նույնիսկ դաշնակից կառավարությունների միջև համաձայնության կայացումից և հայերի կողմից մերժում ստանալուց հետո, Եգիպտոսի բրիտանական իշխանությունները փորձում էին խանգարել մուսալեոցիներին զինվորագրելու ֆրանսիացիների հեռագնա ծրագրերին:

Սեպտեմբերի 23-ին Ֆրանսիայի ռազմական նախարար Պ. Ռոքը ռազմածովային նախարար դերծովակալ Լ. Լակազին տեղեկացրեց Դը Լա Պանուսի հեռագրի մասին, որով բրիտանական կառավարությունը համաձայնություն էր տվել Կիպրոսի հյուսիսում կամ արևելքում կազմավորել հայկական կորպուս: Ռազմական նախարարը հայտնում էր, որ Պորտ Սայիդում հավաքագրել են միայն 200 հայերի, որոնք արդեն մարզվել են Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջոցով: Նրան անհանգստացնում էր այն փաստը, որ Լ. Դարտրիժ դյու Ֆուրնեն արդեն համաձայնություն էր տվել բրիտանացիներին, որպեսզի օգտագործեն հայերին: Այդ ամենը հաշվի առնելով՝ Պ. Ռոքը որոշել էր Եգիպտոս ու Կիպրոս ուղարկել հետևակային գումարտակի հրամանատար Լ. Ռոմիոյին, որը տեղում պարզելու էր հայկական զորամասի ստեղծման նպատակահարմարությունն ու պայմանները, համաձայնության էր գալու բրիտանացիների հետ: Լ. Ռոմիոն ուսումնասիրելու էր զինվորագրման ենթակա հայերի թիվը, տեղեկանալու էր Սիրիայում գործող ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատար Հ. դը Սպիտզի տեսակետին, Կիպրոսում հարմար վայր էր գտնելու զորամասի տեղակայման համար, ապա իր վերջնական առաջարկներն էր ներկայացնելու ռազմական նախարարին: Պ. Ռոքը Լ. Լակազին խնդրում էր հրահանգել դը Սպիտզին, որպեսզի, մինչև վերջնական որոշում կայացնելը, բրիտանացիներին հետ պահեր զինվորագրման ենթակա Պորտ Սայիդի հայերին օգտագործելուց: Պ. Ռոքը նաև հարցնում էր, թե արդյո՞ք Սիրիայի ռազմածովային

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 339-341:

² Նույն տեղում, էջ 341:

դիվիզիան ի վիճակի էր ռազմական նախարարության միջոցների հաշվին դրամով ու մթերքով ապահովել Կիպրոս մեկնող առաքելությունը և հաջողության դեպքում նաև հայկական կորպուսին¹:

Սեպտեմբերի 23-ին Պ. Ռոքը գաղտնի հեռագիր ուղարկեց Դոյնել Դը Սեն-Քուենտինին: Տեղեկացնում էր Կիպրոսում հայկական կորպուս կազմավորելու, այդ հարցում բրիտանական կառավարության համաձայնության, Լ. Ռոմիոյի գործողման մասին: Նախարարը կարևոր էր համարում թույլ չտալ բրիտանացիներին Սալոնիկում կամ Եգիպտոսում օգտագործելու Պորտ Սայիդի հայ կամավորներին, քանի որ նրանք պետք է դառնային նախատեսվող կորպուսի միջուկը, հետևաբար՝ անհրաժեշտ էր համարում ժ. Դեֆրանսի և ֆրանսիական ռազմածովային դիվիզիայի հրամանատարության հետ միասին բրիտանական հրամանատարին համոզել հետաձգելու հայերին օգտագործելու ծրագիրը²: Նույն օրը Պ. Ռոքը վերոշարադրյալ հարցերի ու հեռագրերի մասին իրազեկեց նաև Ա. Բրիանին³:

Սեպտեմբերի 24-ին Ա. Բրիանը հեռագրով ժ. Դեֆրանսին տեղեկացրեց, որ Պ. Ռոքը հայերի մասին հրահանգներ է ուղարկել Դը Սեն-Քուենտինին, իսկ Լ. Ռոմիոն մեկնում է Կիպրոս՝ հայերին այնտեղ համախմբելու հարցը ուսումնասիրելու համար: Վարչապետը միաժամանակ հետաքրքրվում էր սիրիացի և լիբանանցի կամավորների հավաքագրելու հնարավորության մասին⁴: Նույն օրը ժ. Դեֆրանսին նամակ ուղարկեց Դը Սեն-Քուենտինը և մանրամասն տեղեկացրեց ռազմական նախարարից ստացած հեռագրի բովանդակությանը: Միաժամանակ նշում էր, որ նախարարին ուղարկած պատասխանում տեղյակ էր պահել, որ բրիտանացիները հայերին հավաքագրել են առանց ֆրանսիական ծովակալի իմացության, և հենց իրենց համառ ջանքերի շնորհիվ էր, որ հետաձգվել էր հայերին նավ տեղափոխելը, իսկ հարցի կարգավորումն իրենց առաջարկով որոշվել էր թողնել Փարիզին ու Լոնդոնին: Լեյտենանտի կարծիքով հայ մարտիկներին օգտագործելու իրավունքը բրիտանացիներն իրենց կզիջեն, եթե ճամբարում մնացող կանանց, երեխաների ու ծերունիների ծախսը Ֆրանսիան վերցնել իր վրա: Նրա կարծիքով ամեն ինչ կարող էր դեռ որոշ ժամանակ նախկին ձևով մնալ, եթե ժ. Դեֆրանսն անձամբ դիմեր գեներալ Ա. Մուրբեյին⁵:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 342-343:

² Նույն տեղում, էջ 345:

³ Նույն տեղում, էջ 344:

⁴ Նույն տեղում, էջ 345-346:

⁵ Նույն տեղում, էջ 346:

Սեպտեմբերի 25-ին Ժ. Դեֆրանսը Իսմայիլիայում հանդիպեց գեներալ Ա. Մուրրեյի հետ: Վերջինս հավաստիացրեց, որ այլևս չի քննարկվում Պորտ Սայիդի հայերին՝ որպես ջորեպաններ Սալոնիկ ուղարկելու հարցը, քանի որ հայերը մերժել են: Բրիտանացիները փորձել են հայերին որպես մշակներ օգտագործել Եգիպտոսում, սակայն հպարտ մուսալեոցիները դժգոհել են նաև այդ առաջարկից: Ժ. Դեֆրանսը գեներալին տեղյակ պահեց Լ. Ռոմիոյի առաքելության մասին, որին Ա. Մուրրեյը դրական վերաբերվեց, սակայն հույս հայտնեց, որ տղամարդկանցից բացի՝ ֆրանսիացիները կվերցնեն նաև կանանց ու երեխաների հոգսը¹:

Այսպիսով՝ 1916 թ. սեպտեմբերին, երկարատև բանակցություններից հետո, Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորական զորամաս կազմավորելու վերաբերյալ: Մի քանի հարյուր մուսալեոցիներ արդեն ռազմական մարզումների էին մասնակցել ֆրանսիացի ծովայինների ու բրիտանացիների մոտ և պատրաստ էին լուրջ մարտական գործողությունների: Իզուր չէ, որ հայկական զորամասի առաջին գումարտակը նախատեսվում էր կազմել մուսալեոցիներից ու եգիպտահայերից:

¹ Նույն տեղում, էջ 347:

3.2 ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ

Բրիտանացիների հետ համաձայնության գալուց բացի, ֆրանսիական կողմը պետք է ապահովեր նաև հայկական ղեկավար շրջանակների աջակցությունը: Մանավանդ, որ անցյալում վերջինների դիմադրության պատճառով չէին կարողացել ըստ արժանվույն օգտագործել մոաալեոցիների մարտական կարողությունները: Սակայն այս անգամ խոսքը ոչ թե միայն սուե-տիահայերի մասին էր, որոնցից կարող էին ձևավորել մեկ վաշտ, այլ՝ կորպուսի կազմավորման խնդիր էր դրված: Հետևաբար՝ անհրաժեշտ էր արևմտահայ ազգային ղեկավարության համաձայնությունն ու սերտ համագործակցությունը: Հակառակ դեպքում՝ նախագիծը կարող էր ձախողվել:

Զորամասի հարցը տեղում պարզելու և գործնական հողի վրա դնելու նպատակով է. Բրեմոնը 1916 թ. սեպտեմբերին Ալեքսանդրիայում բանակցությունների մեջ մտավ եգիպտահայ ազգային գործիչներ Միհրան Տամատյանի և Լևոն Մկրտիչյանի հետ: Նա տեղեկացրեց, որ Ֆրանսիան որոշել էր հայկական զորամաս ստեղծել, որպեսզի ազատագրի Կիլիկիան: Հայ գործիչները պատասխանեցին, որ հայերն ուրախությամբ կարձագանքեն կամավորագրությանը, եթե նրանց դիմի Պ. Նուբարը և խորհուրդ տվեցին, որ ֆրանսիական կառավարությունը բանակցի անմիջականորեն նրա հետ¹: Լ. Մկրտիչյանն այդ մասին նամակով տեղեկացրեց Ազգային պատվիրակության նախագահին, ինչպես նաև հայտնեց իրենց մտավախությունը Սիրիայի և Միջագետքի անապատներում մնացած հայ գաղթականների ճակատագրի մասին, որոնք կարող էին թուրքական վրեժխնդրության զոհ դառնալ:

Արդեն սեպտեմբերի 30-ին մայոր Լուի Ռոմիոն Փարիզից ուղևորվեց եգիպտոս՝ առաջադրանք ունենալով կազմավորել հայկական զորամաս: Նրա խորհրդական նշանակվեց հայազգի սպա Տ. Թեքեյանը²: Լ. Ռոմիոն հոկտեմբերի 4-ին Մարսելից փոստային նավով մեկնեց Ալեքսանդրիա³:

Այս շրջանում Պորտ Սայիդում կային ֆրանսիացի ծովայինների կողմից ռազմական ուսուցում ստացած 208 մոաալեոցիներ, որոնցից 172-ը պատրաստ էին ցանկացած տեսակի առաջադրանք կատարելուն: Նրանց թիվը

¹ Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 105-106:

² Թեքեյան Տ., նշվ. աշխ., էջ 52:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 358:

կարող էր հասնել շուրջ 350-400: Սակայն շատերը խուսափում էին կամավորագրվելուց, քանի որ ընտանիքները պահելու համար աշխատում էին ճամբարից դուրս: Է. Բրեմոնը հարցի լուծում էր համարում կամավորներին աշխատավարձ տալը: Պ. Ռոքը նույնպես համամիտ էր այդ մտքին, բացի դրանից՝ համոզված էր, որ տղամարդկանց զինվորագրելուց հետո իրենք պետք է բրիտանացիներին վճարեն Պորտ Սայիդի ճամբարում կատարած ծախսերը, և իրենց վրա վերցնեն մոտ 4.000 կանանց, ծերերին ու երեխաներին պահելու հոգսը: Գեներալ Ա. Մուրրեյը վերջնականապես հրաժարվել էր զենք կրելու ընդունակ հայերից, սակայն ցանկություն էր հայտնել ծերբազատվել նաև ճամբարը պահելու հոգսից: Պ. Ռոքն արդարացի էր համարում վերցնել ողջ գաղթականական ճամբարի ծախսը, քանի որ հայ զինվորները ծառայելու էին իրենց համար, և խնդրեց Ա. Բրիանի համաձայնությունն այդ հարցում¹:

Ֆրանսիական գործիչները հետզհետե հակվում էին Պորտ Սայիդի ճամբարի հոգսն իրենց վրա վերցնելու գաղափարին, քանի որ բավական անբնական վիճակ էր ստեղծվել: Մուսալեռցիներին փրկել էին ֆրանսիական նավերը, պատերազմից հետո Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, հայ մարտիկները պարտավորվել էին կռվել ֆրանսիական դրոշի ներքո, սակայն նրանց ընտանիքները պահելու հոգսը մնացել էր բրիտանացիների ուսերին: Նման պայմաններում շատ բնական էր վերջիններիս դժգոհությունը:

Հոկտեմբերի 2-ին Ֆրանսիայի ԱԳՆ-ում Պ. Նուբարին ընդունեց Ժ. Գուն: Վերջինս տեղեկացրեց, որ որոշվել էր կազմավորել հայկական լեգեոն, և այն լինելու էր ֆրանսիական ռազմարշավային զորքերի կորիզը, երբ որոշվեր ներխուժել Փոքր Ասիա: Ժ. Գուն հայտնեց, որ կամավորները մարզվելու են Կիպրոսում, ղեկավարվելու են ֆրանսիացի սպաների կողմից և կղզում մնալու են մինչև ռազմական գործողության պատեհ ժամանակը գար: Նա բացատրեց, որ ռազմական գործողությունները կարող էին տեղի ունենալ երկու դեպքում. եթե Մեքքայի շերիֆի ապստամբությունը տարածվեր դեպի հյուսիս և ընդգրկեր ամբողջ Սիրիան, կամ՝ եթե դաշնակիցները հաղթեին Բալկաններում, որով կկտրվեին Գերմանիային ու Թուրքիային միացնող հաղորդակցության ուղիները: Դա կհանգեցներ վերջինի մեկուսացմանը և հետևաբար նրա բանակի պարտությանը, որը կստեղծափոխվեր Փոքր Ասիա: Նման զարգացումների դեպքում նախատեսվում էր զորքեր ափհանել Կիլի-

¹ Նույն տեղում, էջ 358-359:

կիայում կամ Սիրիայում: Այդ պայմաններում դաշնակիցները տեղանքին ու լեզվին ծանոթ կամավորների կարիքը կունենային: Ժ. Գուն խոստանում էր, որ Կիլիկիան գրավելուց հետո տեղի ոստիկանական և վարչական պաշտոնները տրվելու են այդ կամավորներին: Նա Պ. Նուբարի աջակցությունը խնդրեց Եգիպտոսում մոտ 1.000 կամավորներ հավաքագրելու համար, քանի որ կամավորագրվելու պատրաստակամություն հայտնած Պորտ Սայիդի մի քանի հարյուր մուսալեոցիները բավարար չէին:

Պ. Նուբարը տեղեկացրեց, որ իրեն հայտնի են Է. Բրեմոնի բանակցությունները եգիպտահայերի հետ և խոստացավ, որ հայերը կաջակցեն Ֆրանսիային Փոքր Ասիա կատարվելիք արշավանքի ընթացքում: Նա տեղեկացրեց, որ ինքը դեռ 1914 թ. ձմռանն էր դիմել Կահիրեում Անտանտի երկրների երեք դեսպաններին Կիլիկիայում ավիանում կատարելու առաջարկությամբ և խոստացել հայերի օգնությունը: Սակայն Պ. Նուբարը մտավախություն հայտնեց, որ հայկական առանձին կամավորական զորամասի ստեղծումը թուրքերին նոր ջարդերի առիթ կտար, և առաջարկեց հայ կամավորներին չհամախմբել Եգիպտոսում, այլ՝ փոքր խմբերով ուղարկել Կիպրոս և մտցնել ֆրանսիական ռազմարշավային զորքերի կազմի մեջ: Նա միաժամանակ պահանջեց Արևմտյան ճակատում կռվող Արտասահմանյան լեգեոնի հայ կամավորներին նույնպես տեղափոխել Կիպրոս: Ժ. Գուն համաձայնեց, որ ջարդերի վտանգ կար և հավանություն տվեց այդ առաջարկներին: Վերջում Պ. Նուբարը նշեց, որ կամավորագրությունը խրախուսելու համար կարևոր պայման էր, որ Ֆրանսիան խոստանար ինքնավարություն շնորհել Կիլիկիային: Նա տեղեկացրեց, որ հայերը խոր հիասթափության մեջ էին՝ կապված Ռուսաստանի վարած Արևմտյան Հայաստանը բռնակցելու ու ռուսֆիկացման քաղաքականության հետ: Նա հույս հայտնեց, որ Ֆրանսիան հնարավորինս ընդարձակ տարածքներ կվերցնի իր հովանու տակ և, հավատարիմ մնալով իր ժողովրդավարական ավանդույթներին, Կիլիկիայում կստեղծի այնպիսի վարչաձև, որը կհամապատասխանի հայերի ազգային ձգտումներին: Սակայն, երբ Պ. Նուբարը հույս հայտնեց, որ Կիլիկիան չի միացվի Սիրիային և կլինի առանձին վարչական միավոր, Ժ. Գուն խուսափողաբար պատասխանեց, որ դեռևս վաղ էր որոշել ապագա վարչական բաժանումների սահմանները և վստահեցրեց, որ Ֆրանսիան լիբերալ (ազատական) վարչաձև կպարզևի Կիլիկիային¹:

¹ Boghos Nubar's Papers, p. 368-370. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 357-358:

Այդ հանդիպման մասին Ժ. Գուն հանգամանալից զեկուցագիր ներկայացրեց Ա. Բրիանին: Նա արդեն հակված էր հնարավորինս արագ հայկական զորամաս կազմավորելուն և առաջարկում էր այդ ոգով պատասխանել ռազմական նախարարության հարցմանը, որպեսզի Լ. Ռոմինոն եզրկատահայերից, մուսալեոցիներից ու Հնդկաստանի հայ ռազմագերիներից սկսի կազմավորել զորամաս: «Թվում է, հարկ է ներկա պահին առանց տատանումների ստանձնել Մուսա լեռան հայերի հոգաձությունը և նրանց նախապատրաստել մեր ազդեցության ռահվիրաները լինելու համար,- նշում էր Ժ. Գուն և շարունակում,- Հայերն աշխատասեր են, վաստակին հետամուտ, խելացի: Եթե մենք կարողանանք նրանց մեր կողմը գրավել, լավ մտածված հրահանգով և կայուն ղեկավարությամբ ձերբագատել ճորտության օրոք ձեռք բերած արատներից, նրանք Փոքր Ասիայում կստեղծեն մեր տիրապետության համար լավագույն միջավայր: Այն քայլը, որը մենք կանենք այս պահին, հաջողությամբ կնախապատրաստի մեր ապագա գործունեությունը նրանց շրջանում»¹:

Հոկտեմբերի 2-ին Պ. Նուբարի հետ հանդիպեց նաև Ռենե Պինոն: Նա ևս տեղեկացրեց, որ Ֆրանսիան պատրաստվում էր զորքեր կենտրոնացնել Կիպրոսում, և Լ. Ռոմինոյի գլխավորությամբ նախատեսվում էր ստեղծել հայկական լեգեոն: Սակայն, ի տարբերություն Ժ. Գուի, Ռ. Պինոն քիչ հավանական էր համարում մոտ ժամանակներում Կիլիկիայում ափհանում կատարելը²:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիացի գործիչները սկսեցին Պ. Նուբարին համոզել, որպեսզի աջակցի հայկական լեգեոնի ստեղծման աշխատանքներին: Սակայն առանց սպասելու հայ գործչի պատասխանին, կամ նրան կանխապես դրական պատասխանի տրամադրելու նպատակով, արդեն Լ. Ռոմինոյին ուղարկել էին Եգիպտոս: Դրանով ֆրանսիացիները փորձում էին հասկացնել, որ իրենք հայկական կամավորական զորամաս ստեղծելու են առանց հաշվի առնելու Ազգային պատվիրակության կամ այլ հայկական քաղաքական ու հասարակական կառույցների կարծիքը: Այսպիսով՝ հայ գործիչներին մնում էր համակերպվել և հայկական զորամաս կազմավորելու դիմաց առավելագույն պահանջներ առաջ քաշել:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 358:

² Boghos Nubar's Papers, p. 371.

Պ. Նուբարը հայ կամավորների հարցով հանդիպեց ֆրանսիացի քաղաքական-պետական բազմաթիվ գործիչների հետ և փորձում էր նրանց համոզել ապագա ինքնավար Կիլիկիային Ալեքսանդրետի նավահանգիստը միացնելու անհրաժեշտությունը¹:

Հոկտեմբերի 6-ին Պ. Նուբարը կամավորների խնդրի վերաբերյալ նամակ ուղարկեց Կահիրեի իր մերձավորներից Լ. Մկրտիչյանին, իսկ պատճենը՝ որդուն՝ Առաքել բեյ Նուբարին: Նա հայտնում էր, որ զգույշ լինեն կամավորագրության մեջ, որպեսզի թուրքերին չգրգռեն, ցանկություն էր հայտնում, որ հնարավորության դեպքում հայ կամավորներից առանձին զորամաս չկազմավորվի, այլ՝ նրանք ներառվեն դաշնակից զորքերի կազմի մեջ, ինչպես նաև զգուշացնում էր, որ կամավորների հավաքագրումը Եգիպտոսում չկատարվի, այլ՝ Կիպրոսում: Պահանջում էր, որ Եգիպտոսի թերթերը գաղտնի պահեն այդ հարցը և որևէ լուր չտպագրեն: Վերջում Պ. Նուբարը հույս էր հայտնում, որ Ֆրանսիան, ի տարբերություն Ռուսաստանի, որը փոխել էր իր քաղաքականությունը հայերի հանդեպ², պատերազմից հետո իրեն անցած հայկական տարածքներին կշնորհի լիբերալ վարչաձև, որը հնարավորություն կտար իրագործելու հայերի ազգային իղձերը³:

Հոկտեմբերի 6-ին Ա. Բրիանը հայերի մասին իր տեսակետները ներկայացրեց Պ. Ռոբին: Նա համաձայն էր մուսալեոցի գաղթականների հոգսը Ֆրանսիայի վրա վերցնելուն և կարծում էր, որ տղամարդկանց հետ պետք է Կիպրոս տեղափոխելին նաև նրանց ընտանիքները: Տեղեկացնում էր, որ հայերի գիտակցության մեջ զգալի փոփոխություններ էին տեղի ունեցել, քանի որ դեռ մի քանի ամիս առաջ հայերը ձգտում էին Ռուսաստանի հովանու ներքո ինքնավար Հայաստան ստեղծել, որը ձգվելու էր Արարատից մինչև Ալեքսանդրետի ծոց, սակայն հայկական տարածքների նվաճելուց հետո ռուսներն անուշադրության են մատնել հայերին և ավելի մեծ ուշադրություն են դարձնում այդ տարածքներում բնակվող մյուս էթնիկ խմբերին, և դա հողմացրիվ է արել հայ ղեկավար գործիչների երազանքները: Վստահեցնում էր, որ հայ գործիչներն արդեն գիտակցել են, որ ինչքան մեծ թվով հայեր գտնվեն Ֆրանսիայի հովանու տակ, այնքան ավելի լավ վիճակում հայտնվե-

¹ Boghos Nubar's Papers, p. 376-377.

² Ինչպես հայտնի է, այդ շրջանում ցարական իշխանությունները որոշել էին Արևմտյան Հայաստանը բնակեցնել ռուս և կղզակ վերաբնակիչներով, չէին թույլատրում հայ գաղթականներին վերադառնալ իրենց բնակավայրերը: Դա խոր հիասթափություն էր առաջացրել հայերի մոտ, քանի որ մինչ այդ մեծ հույսեր էին կապել Ռուսաստանի հետ:

³ Boghos Nubar's Papers, p. 372-374.

լու հույս կարող են ունենալ: Նա գտնում էր, որ քաղաքական անհեռադատություն կլինի, եթե ձեռնպահ մնան հովանավորելուց և իրենց կողմը չգրավեն Արևելքում միակ աշխատասեր ժողովրդին, որից ապագայում միայն օգուտ կքաղեն: Նշում էր, որ Պ. Նուբարի և նրա բարեկամների ջանքերով Լ. Ռոմին կկարողանար մուսալեոցիներից, եգիպտահայերից ու Հնդկաստանի գերիներից կազմավորել բավական մեծաքանակ առաջին խմբավորումը: Թուրքերի կողմից նոր հակահայկական քայլերից խուսափելու համար, Ա. Բրիանը զգուշացնում էր, որ Եգիպտոսում խմբակային զինվորագրումներ չկատարվեն և ցույց տրվի, որ Կիպրոսում կազմավորվում էր ոչ թե հայկական, այլ՝ ֆրանսիական կորպուս: Վարչապետը համոզված էր, որ այդ միջուկի ձևավորումից հետո հնարավոր կլինի հայկական տարրեր գաղութներում կամավորագրություն կազմակերպել, քանի որ Արևելքի ժողովուրդները սովոր են ներփակված էթնիկ խմբերում համախմբվել և հաճույքով կմիանային միատարր խմբավորմանը: Նա գտնում էր, որ Արևելքի ժողովուրդներից կամավորական կորպուսներ կազմավորելու նախաձեռնությունը հաջողություն կունենա, եթե դրանք կազմվեն ըստ ազգությունների¹:

Կարծես թե, բոլոր հարցերում ֆրանսիական իշխանությունների ներսում համաձայնություն էր կայացվել, նրանք ձեռք էին բերել նաև բրիտանացիների ու հայերի համաձայնությունը, և լեգեոնի կազմավորման համար ստեղծվել էին լավագույն պայմաններ: Ֆրանսիան շտապում էր հնարավորինս արագ ձևավորել այդ զորամասը, որպեսզի առաջին իսկ հնարավորության դեպքում ուժեր ունենար Կիլիկիայում ափհանում կատարելու համար:

Հոկտեմբերի 18-ին Լ. Ռոմին հեռագրեց ռազմական նախարարին, որ Եգիպտոսի բրիտանական իշխանությունների հետ համաձայնության են եկել 500 մուսալեոցի հայերին զինվորագրելու և Կիպրոսում կենտրոնացնելու, իսկ կանանց ու երեխաներին Պորտ Սայիդում թողնելու շուրջ: Բրիտանացիները միայն սպասում էին այդ հարցի շուրջ կառավարության հրահանգներին²: Հոկտեմբերի 19-ին Լոնդոնում ֆրանսիական դեսպան Պ. Կամբոնը տեղեկացրեց Ա. Բրիանին, որ բրիտանական կառավարությունն արդեն նշված խնդրի շուրջ հրահանգներ էր ուղարկել Եգիպտոս³:

Հոկտեմբերի վերջին Պ. Նուբարը մեկնեց Լոնդոն, որտեղ պետք է վերջնական համաձայնություն կայացվեր Հայկական լեգեոնի կազմավոր-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 360:

² Նույն տեղում, էջ 366-367:

³ Նույն տեղում, էջ 367:

ման պայմանների շուրջ: Ֆրանսիական կառավարության կողմից պետք է բանակցեր Ժ. Պիկոն, որի առաջարկությամբ էլ բանակցություններն ընթանալու էին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում: Դրանով Ժ. Պիկոն նաև նպատակ ուներ բանակցությունների ընթացքում հեռու մնալ Ֆրանսիայի արտգործնախարարության միջամտությունից:

Մինչ Պ. Նուբարի ժամանումը Ժ. Պիկոն հանդիպեց լոնդոնաբնակ հայ հասարակական գործիչ Ջեյմս Մալբուլի հետ: Վերջինս ընդարձակ կապեր ուներ Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանակներում, Մ. Սայքսի մերձավորներից էր, աջակցում էր Պ. Նուբարին Լոնդոնում, իսկ 1917 թ. հունվարից դարձավ Ազգային պատվիրակության անդամ¹: Ժ. Պիկոն փորձեց Ջ. Մալբուլից ճշտել թե, որքան կամավորներ կարող են տրամադրել հայերը և հասկացրեց, որ անհրաժեշտ են մեծ թվով հայ զինվորներ: Ֆրանսիացի դիվանագետը տեղեկացրեց, որ ափհանման նախագիծ կար, սակայն այն հետաձգվում էր զորքերի պակասի պատճառով: Դաշնակիցները հնարավորություն չունեին այլ վայրերից զորք տեղափոխել, և այդ պատճառով էլ անհրաժեշտություն էր առաջացել կամավորներ հավաքել: Որոշվեց հարցն ավելի մանրամասնորեն քննարկել անձամբ Պ. Նուբարի հետ, երբ նա ժամաներ Լոնդոն²:

Նախքան Ժ. Պիկոյի հետ հանդիպելը Պ. Նուբարը որոշեց Լոնդոնում տեսակցել բրիտանական կառավարության ներկայացուցիչ Մ. Սայքսի հետ և ճշտել որոշ հարցեր: Հանդիպումը տեղի ունեցավ հոկտեմբերի 24-ին: Ներկա էր նաև Ազգային պատվիրակության անդամ, լոնդոնաբնակ Հարություն Մոստիչյանը: Մ. Սայքսը տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև համաձայնագիր էր կնքվել, որով Թուրքիայի ասիական տիրույթները բաժանվելու էին նրանց միջև: Նշեց, որ Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը համաձայնագրով անցնելու են Ռուսաստանին, իսկ Սիրիան, Կիլիկիան, Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը՝ Ֆրանսիային: Վերջինի հովանու ներքո կարող էր ստեղծվել ինքնավար Հայաստան, որը կներառեր նաև Ալեքսանդրետն ու Այնթապը և կղեկավարվեր որևէ իշխանի կողմից:

Մ. Սայքսը նշում էր, որ հայերը պետք է կազմավորեն բանակ, որպեսզի ավելի մեծ իրավունքներ ապահովեն: Նա բացատրեց, որ կարիք չկա Կիպ-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 144:

² Boghos Nubar's Papers, p. 380.

րոտում մեծ թվով կամավորներ կենտրոնացնել, այլ միայն՝ մեկ գումարտակ, իսկ Ֆրանսիայից և Ամերիկայից եկող կամավորները կարող են մարզվել Ֆրանսիայում, քանի որ մեկ տարուց շուտ ավիանում չի կատարվելու: Եթե նույնիսկ Կիլիկիայում ավիանում չկատարվեր, ապա նրա կարծիքով պատերազմից հետո, երբ բանակները զորացրվեին, հայ կամավորները կփոխարինեին օկուպացիոն ուժերին, և հայկական զինուժի ներկայությունը թուրքերին կստիպեր դառնալ ավելի հնազանդ: Նա նշեց, որ Ռուսաստանը ևս կողմ կլինի հայերի համախմբմանը Կիլիկիայում, քանի որ «այնտեղի հայերը պահպանողական են՝ ի տարբերություն հեղափոխականորեն տրամադրված կովկասահայերի»¹:

Բրիտանացի գործիչը թափանցիկ ակնարկում էր, որ Ֆրանսիայի կողմից ստեղծվող զորամասը պատերազմից հետո կարող էր դառնալ Կիլիկիայի հայկական ինքնավարության բանակի հիմքը: Ցանկացած ազգ, որ ձգտում էր ինքնավարության կամ անկախության, պետք է պատրաստ լիներ ձևավորելու բանակ և արյուն թափելու ազատության համար: Այսպիսով՝ Ֆրանսիացի և բրիտանացի գործիչները պահանջում էին ստեղծել հայկական զորամաս, որի դիմաց խոստանում էին Ֆրանսիայի հովանու ներքո տրամադրել ինքնավարություն Կիլիկիային և շրջակա հայկական նահանգներին: Նման պայմաններում հայ ազգային գործիչներին չէր մնում այլ ելք, քան ընդառաջել և սերտորեն համագործակցել Ֆրանսիայի հետ:

Հոկտեմբերի 24-ին Պ. Նուբարը հանդիպեց նաև Ժ. Պիկոյի հետ: Վերջինս հայտարարեց, որ պատերազմի գլխավոր նպատակը ճնշված ժողովուրդների ազատագրումն է, որոնց թվին են պատկանում նաև հայերը: Պ. Նուբարը նշեց, որ այդ մտայնության արդյունքում էր, որ նախապես ինքը ձգտում էր միացյալ Հայաստանի ստեղծմանը, սակայն հայերի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության փոփոխության հետևանքով այժմ ձգտում է ինքնավարություն ձեռք բերել Կիլիկիայի համար: Նա հույս հայտնեց, որ Ֆրանսիան պայմաններ կստեղծի հայերի իղձերն իրականություն դարձնելու հայկական վերջին թագավորության տարածքում, և վերջնականապես կլուծի Հայկական հարցը:

Ժ. Պիկոն տեղեկացնում էր, որ Կիլիկիային կմիացվեն Սեբաստիան, Դիարբեքիրը և այլ տարածքներ: Պ. Նուբարը հետաքրքրվեց Ալեքսանդրե-տի ճակատագրով՝ նշելով, որ այն մեծ նշանակություն ունի Հայաստանի

¹ Boghos Nubar's Papers, p. 382-383.

համար, քանի որ վերջինս դառնալու էր պատնեշ Օսմանյան կայսրության դեմ և կարիք ունի նման կարևոր նախահանգստի: Ժ. Պիկոն պատասխանեց, որ ինքը կողմ էր Ալեքսանդրետի միացմանը Կիլիկիային և կապաշտպանի այդ տեսակետը: Նաև խոստանում էր, որ Հայաստանում քաղաքացիական պաշտոնները Ֆրանսիան կհանձնի միայն հայերին, բացի նահանգապետից, որը կլինի եվրոպացի: Ապա Ժ. Պիկոն հարցրեց, թե հայերն ինչ զոհողությունների են պատրաստ ինքնավար Հայաստան ստեղծելու համար և ավելացրեց, որ մի քանի հազար կամավորները դրական հասարակական կարծիք կստեղծեն Ֆրանսիայում:

Պ. Նուբարը պարզաբանում է, որ ինքը միշտ կողմ է եղել հայ կամավորների մասնակցությանը պատերազմին, սակայն դա պետք է կատարել որոշ զգուշավորություն պահպանելով, որպեսզի թուրքերը նոր ջարդեր չկազմակերպեն: Ժ. Պիկոն համաձայնեց, որ ջարդերի վտանգն իրական էր և զգուշություններն անհրաժեշտ են: Նշեց, որ սկզբի համար բավարար էր Կիպրոսում կազմավորել մեկ գումարտակ, որի մեջ կընդգրկվեն Պորտ Սայիդի 400 կամավորները և բրիտանացիների կողմից Հնդկաստան տեղափոխված թուրքական բանակի 200 հայ ռազմագերիները: Ժ. Պիկոն հետաքրքրվեց, թե որքան հայ կամավորներ կարող են հավաքագրել Ֆրանսիայում ու Ամերիկայում:

Պ. Նուբարն ընդգծեց, որ Ֆրանսիայում հայ կամավորներ կռվում են արդեն երեք տարի, մասնակցել են Մառնի, Վերդենի, Սոմի ճակատամարտերին և արժանացել են բազմաթիվ մեդալների: Այդ մոտ հազար հայերը կամավորագրվել են առանց որևէ կոչի և նրանցից ողջ էին մնացել շուրջ 100-ը: Պ. Նուբարն առաջարկեց, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների գերազանց մասնակցության մասին և սկսի նոր կամավորագրություն: Նա խոստացավ դրանից հետո քայլեր ձեռնարկել կամավորագրությունը խրախուսելու համար, հատկապես, եթե կառավարությունը պատրաստակամություն հայտնի Ֆրանսիայի քաղաքացիություն տալ այդ նոր կամավորներին: Ժ. Պիկոն խոստացավ պաշտպանել վերոնշյալ առաջարկները:

Պ. Նուբարը խնդրեց, որպեսզի կամավորագրվեն նաև այն արևմտահայերը, ովքեր գաղթել են Կովկաս, ինչպես նաև այն 4 - 5.000 արևմտահայ ռազմագերիները, որոնք ռուսների կողմից գերվել և ուղարկվել են Սիբիր: Ժ. Պիկոն խոստացավ ուսումնասիրել այդ հարցը և պատասխանել հաջորդ

հանդիպման ժամանակ՝ խնդրելով իրեն տրամադրել Ֆրանսիայում կռվող հայ զինվորների ցուցակը¹:

Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը հանդիպեց լորդ Ջեյմս Բրայսին և խնդրեց աջակցել, որպեսզի Ալեքսանդրետը միացվի Կիլիկիային, այլ ոչ թե Սիրիային: Լորդը խոստացավ իր աջակցությունն այդ հարցում և նշեց, որ ինքնավար Հայաստանի ստեղծումը Ֆրանսիայի հովանու ներքո կբավարարի բոլոր կողմերին: Ջ. Բրայսը պարզաբանեց, որ եթե Ֆրանսիան պահանջում էր կամավորներ հավաքագրել, ապա հայերը չեն կարող մերժել և հնարավոր ամեն ինչ պետք է անեն խնդրին դրական լուծում տալու համար²:

Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի զգալի մասն անցնելու էր Ֆրանսիային, և հայ գործիչները ստիպված էին ընդառաջել հայկական կամավորական բանակ ստեղծելու ֆրանսիական իշխանությունների առաջարկին՝ հուսալով, որ պատերազմից հետո հայերին կտրվի ինքնավարություն: Օգտվելով առիթից՝ Պ. Նուբարը փորձեց ռուսական և բրիտանական համակենտրոնացման ճամբարներից ազատել թուրքական բանակի հայ ռազմագերիներին:

Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը Մ. Սայքսի ուղեկցությամբ հանդիպեց նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար, դերկոմս Է. Գրեյի հետ: Ազգային պատվիրակության նախագահը նրան ներկայացրեց Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը, որով ինքը համարվում է Գևորգ Ե-ի միակ ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայի կառավարության մոտ: Պ. Նուբարը հույս հայտնեց, որ Մեծ Բրիտանիան և նրա դաշնակիցները կազատագրեն հայերին թուրքական լծից և ինքնավարություն կշնորհեն Կիլիկիայում: Է. Գրեյը խուսափողաբար պատասխանեց, որ մինչև պատերազմի ավարտը որևէ որոշում ընդունելը վաղ էր, սակայն ավելացրեց, որ հայերը կարող են հուսալ, որ իր կառավարությունն ամեն ինչ կանի լուծելու Հայկական հարցը³:

Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարը բավական մեծ ջանքեր էր գործադրում համոզելու եվրոպական տերությունների կառավարողներին, որպեսզի հայտարարեն կամ խոստանան պատերազմից հետո ինքնավարություն տալ հայերին, բայց, ցավոք, այդ հարցում դրական տեղաշարժեր չկատարվեցին, քանի որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան իրենց հետագա ծրագրերում հայ ժողովրդի համար պատրաստում էին միայն նոր հուսախաբություններ:

¹ Boghos Nubar's Papers, p. 384-386.

² Նույն տեղում, էջ 387-388:

³ Նույն տեղում, էջ 389-390:

Հոկտեմբերի 27-ին Պ. Նուբարը և Ժ. Պիկոն պետք է վերջնականապես հստակեցնեին լեգեոնի կազմավորման պայմանները: Մինչև նրա մոտ գնալը Պ. Նուբարը Հ. Մոստիցյանի և Զ. Մալքոլմի ուղեկցությամբ կեսօրին հանդիպեց Մ. Սայքսին՝ վերջինիս առաջարկությամբ:

Բրիտանացի դիվանագետն առաջարկեց Ֆրանսիայից պահանջել հետևյալը. ա) կամավորներին վճարել, բ) երաշխիքներ ստանալ, որ հայ կամավորները չեն կռվի Ֆրանսիայում, այլ կուղարկվեն իրենց նախընտրած ճակատը, գ) պահանջել, որ հայ կամավորները բուժվեն Ամերիկյան Կարմիր խաչի կենտրոններում, քանի որ ֆրանսիացիները լավ չեն բուժում:

Մ. Սայքսը նշեց, որ եթե Ֆրանսիան կարողանա ապահովել հայ քաղաքական ուժերի համագործակցությունն, ապա հնարավոր կլինի մինչև 1917 թ. հունիս-հուլիս ամիսները հավաքագրել 30.000 հայ կամավորներ: Մ. Սայքսը պարզաբանեց, որ Ժ. Պիկոն չի մերժի այդ պայմանները, քանի որ Ֆրանսիան մարդուժի կարիք ունի:

Մ. Սայքսը պարզաբանեց, որ այդ պայմանները պետք է հաստատել տալ, քանի որ Ֆրանսիան շատ ծանր վիճակում էր և կարող էր հայ կամավորներին ուղարկել ֆրանսիական ռազմաճակատ: Նա ներկայացրեց մի շարք օրինակներ, երբ ֆրանսիացիները խախտել էին դաշնակիցներին տված խոստումները:

Պ. Նուբարը տեղեկացրեց, որ Ժ. Պիկոյից պահանջել էր, որպեսզի կառավարության պաշտոնաթերթում հայտարարվի Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների դրական մասնակցության և նոր կամավորագրության մասին: Մ. Սայքսն առաջարկեց դրա փոխարեն պահանջել, որպեսզի Ազգային ժողովում վարչապետ Ա. Բրիանը հայտարարի, որ պատերազմից հետո Ֆրանսիան բավարարելու էր հայկական պահանջները և դրականորեն արտահայտվի ֆրանսիական բանակի հայ կամավորների մասին¹:

Պ. Նուբարը, Հ. Մոստիցյանը, Զ. Մալքոլմը և Մ. Սայքսը միասին մեկնեցին Ժ. Պիկոյի մոտ: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ եզրկառուցում կարող են հավաքագրել ավելի քան 1.000 կամավորների և Կիպրոսում կազմավորել մեկ գումարտակ: Այդ լուրը Ժ. Պիկոյին ուրախացրեց: Զննարկվեց նաև Ամերիկայից ու Ռուսաստանից կամավորներ հավաքագրելու հարցը: Ժ. Պիկոն

¹ Boghos Nubar's Papers, p. 391-392. Նաև՝ Պեյերլյան Ա., Ֆրանսա և Հայկական հարցը Առաջին համաշխարհայինի տարիներուն (1914-1918), «Պատմա-Բանասիրական հանդես», 1990, թիվ 2, էջ 38:

և Մ. Սայքսը հույս ունեին, որ ռուսական կառավարությունը դրական կվերաբերվի Սիբիր աքսորված թուրքական բանակի հայ ռազմագերիներին և Կովկասի արևմտահայ գաղթականներին կամավորագրելուն: Նրանց Վլադիվոստոկի և Կանադայի վրայով պետք է տեղափոխեին Ֆրանսիայի հարավ՝ մարզելու համար: ԱՄՆ-ից եկող կամավորներին մարզելու էին Կանադայում, ուր տեղափոխելու էին ֆրանսիական կառավարության միջոցներով:

Պ. Նուբարը հարցրեց Ժ. Պիկոյին, թե արդյո՞ք կամավորագրությունը խրախուսելու համար կարող են հայտարարել, որ կամավորները վճարվելու են, որպեսզի կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները: Ժ. Պիկոն փորձեց հարցից խուսափել և նշեց, որ ֆրանսիացի զինվորներն օրական միայն 5 սու են ստանում և կովում են ոչ փողի համար:

Մ. Սայքսը պարզաբանեց, որ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ամերիկահայերն օրական վաստակում են 2 դոլարից ավելի, և գումարներն անհրաժեշտ են ոչ թե կամավորների անձնական կարիքների, այլ՝ նրանց ընտանիքների ապրուստի համար: Նա մատնանշեց, որ հայերը ֆրանսիացիների նման խնայող են և փողերը կուղարկեն ընտանիքներին: Բացի այդ, գումարները ուղղակիորեն կարող են տրվել նրանց կանանց կամ ընտանիքներին: Ժ. Պիկոն համաձայնեց, որ եթե հարցը դիտեն այդ տեսանկյունից, ապա այն բավական հիմնավոր էր, և խոստացավ ուսումնասիրել ու աջակցել այդ խնդրի լուծմանը, չնայած մտավախություն ունենալ, որ լուրջ դժվարությունների կհանդիպի Ֆրանսիայում:

Պ. Նուբարը բարձրացրեց կամավորագրության մասին ֆրանսիական կառավարության հայտարարության հարցը, որը նախորդ հանդիպման ժամանակ խոստացել էր պաշտպանել նաև Ժ. Պիկոն: Պ. Նուբարը նշեց, որ անհրաժեշտ էր կառավարության հայտարարությունը ֆրանսիական բանակում նոր հայ կամավորներ ներգրավելու մասին, այն պատճառաբանությամբ, որ ամբողջովին բավարարված էր հայ կամավորների գործունեությամբ Մառնում, Վերդենում և Սոմում:

Զ. Մալքոլմը հարցրեց վարչապետ Ա. Բրիանի կողմից Ազգային ժողովում Հայաստանի ապագայի մասին հայտարարություն անելու հնարավորության մասին: Մ. Սայքսը երկրորդեց ու պաշտպանեց այդ խնդիրը և առաջարկեց, որ Ա. Բրիանը հայտարարի, որ պատերազմի հաղթական ավարտից հետո արդարություն կհաստատվի հայերի համար: Սակայն Ժ. Պիկոն հայտնեց, որ նման հայտարարությունը անօգուտ քննարկումների առիթ կդառնա Ազգային ժողովում և ավելի ճիշտ համարեց, որ վարչապետը հայ-

տարարություն անի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովներից մեկում և մամուլում: Մ. Սայքսը տեղեկացրեց, որ շուտով ինքը նմանատիպ հայտարարությամբ հանդես էր գալու բրիտանական խորհրդարանում:

Անդրադառնալով ավիանման հնարավորությանը՝ Ժ. Պիկոն նշեց, որ ինքը դրան սպասում էր պատերազմի սկզբից ի վեր, և իր կառավարության կողմից հավաստիացում էր ստացել, որ ասիական Թուրքիայում ավիանման դեպքում ինքն էր գլխավորելու էքսպեդիցիան:

Մ. Սայքսը հայերի ռազմական կարողությունների վերաբերյալ նշեց, որ նրանք աշխարհի լավագույն զինվորներն են, բայց ինչ վերաբերում էր ներքին կազմակերպվածությանը, նրանք դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու: Այդ կարծիքը մեղմելու համար Պ. Նուբարը նրանց ուշադրությունը հրավիրեց Ֆրանսիայի հայ կամավորների քաջության վրա, իսկ Հ. Մոստիցյանը ներկայացրեց թուրք գեներալների և անձամբ էնվերի տեսակետները Բալկանյան պատերազմի ժամանակ հայ զինվորների քաջության մասին, ինչպես նաև նկարագրեց 1909 թ. Ադանայի կոտորածի ժամանակ հայերի ցույց տված համառ ու հաջող դիմադրությունը թուրք ջարդարարներին, երբ վերջիններս ստիպված եղան բրիտանական հյուպատոսի միջնորդությամբ համոզել հայերին զինաթափվել՝ խոստանալով ապահովել նրանց անվտանգությունը և միայն դրանից հետո, դրժելով խոստումը, կարողացան իրականացնել իրենց ոճրագործությունը:

Պ. Նուբարը Ժ. Պիկոյի ուշադրությունը հրավիրեց այն խնդրի վրա, թե որ ճակատում են կռվելու հայ կամավորները: Նշեց, որ փոքր թվով հայեր կկամավորագրվեն, եթե նրանք վստահ չլինեն, որ կռվելու են իրենց դարավոր թշնամու դեմ՝ հայրենի հողն ազատագրելու համար: Ժ. Պիկոն դա բնական համարեց և համաձայնեց, բայց հետագա անճշտություններից խուսափելու համար հարցրեց, թե արդյո՞ք այդ պայմաններին կհակասի, եթե թուրքերին հարվածեն Սիրիայում, Ջմյունիայում կամ Բալկաններում: Պ. Նուբարը նշեց, որ իրենց նպատակը Հայաստանի ազատագրումն էր, բայց ռազմավարական տեսանկյունից Սիրիայում կամ Փոքր Ասիայում ռազմական գործողություններին մասնակցելուն կողմ արտահայտվեց, իսկ հայ կամավորներին Բալկաններ ուղարկելու գաղափարը կտրականապես մերժեց: Ժ. Պիկոն ընդունելի համարեց Պ. Նուբարի տեսակետները:

Ապա Պ. Նուբարն անդրադարձավ ինքնավարության հարցին: Նշեց, որ կամավորագրությունը խրախուսելու լավագույն միջոցն այն էր, որ իրենք վստահ լինեն, որ պատերազմից հետո Ֆրանսիան իրեն անցած հայկական

տարածքներին ինքնավարություն կտա և հայ ժողովրդի համար զարգացման բավարար պայմաններ կստեղծի:

Ժ. Պիկոն ամբողջությամբ իր համաձայնությունը հայտնեց Պ. Նուբարի բարձրացրած խնդրին և թույլ տվեց իր անունից վստահեցնել կամավորներին, որ Կիլիկիային տրվելու էր ինքնավարություն: Պ. Նուբարն իր և հայության անունից շնորհակալություն հայտնեց, քանի որ ի վերջո կարողանալու էին տեսնել ազգային նպատակների իրականացումը՝ շնորհիվ Ֆրանսիայի և Նրա դաշնակից Մեծ Բրիտանիայի, նշելով, որ նրանք իսկապես կովում էին ճնշված ժողովուրդների ազատության համար:

Որոշվեց, որ Պ. Նուբարը հեռագիր կուղարկի Եգիպտոսում գտնվող որդուն՝ Ա. Նուբարին՝ շտապեցնելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խախտելու կամավորագրությունը: Նա պետք է տեղեկացներ այն հավաստիացման մասին, որ վերջնական հաղթանակից հետո դաշնակիցներն ամբողջությամբ բավարարելու էին հայկական ձգտումները: Հաջորդ օրը Պ. Նուբարը հեռագիրը տրամադրելու էր Ժ. Պիկոյին, որպեսզի ուղարկեր Կահիրեի ֆրանսիական դեսպան Ժ. Դեֆրանսի շիֆրով, իսկ պատճենը Մ. Սայքսին էր տրվելու, որպեսզի ուղարկեր Կահիրեի բրիտանական ներկայացուցչին:

Այսպիսով, երկար քննարկումից հետո նրանք համաձայնության եկան հետևյալ պայմանների շուրջ.

1. Կամավորագրության կոչը պետք է հրապարակեր Ֆրանսիայի կառավարությունը, իսկ Ժ. Պիկոն ապահովելու էր հայտարարություն Ա. Բրիանի կողմից:
2. Ժ. Պիկոն և Մ. Սայքսը անհրաժեշտ քայլեր էին ձեռնարկելու Ռուսաստանի կառավարության մոտ, որպեսզի ապահովեին Սիբիր աքսորված արևմտահայ ռազմագերիների և Կովկասի արևմտահայ գաղթականների կամավորագրությունն ու մեկնումը:
3. Ամերիկայում կամավորների հավաքագրումը կատարվելու էր Կանադայում և Ֆրանսիայի կառավարությունն ապահովելու էր նրանց տեղափոխության ծախսերը:
4. Ժ. Պիկոն պետք է փորձեր ապահովել, որպեսզի հայ կամավորները ստանային օրական մեկ դոլար իրենց ընտանիքների համար:
5. Կամավորները չէին կովելու Ֆրանսիայում կամ եվրոպական որևէ ճակատում, այլ միայն ասիական Թուրքիայում՝ կովելու իրենց դարավոր թշնամու դեմ և ազատագրելու իրենց հայրենիքը:
6. Ֆրանսիան երաշխավորելու էր, որ հաղթանակից հետո ինքնավարություն կշնորհի Կիլիկիային և երեք վիլայեթներին (Սեբաստիա, Խարբերդ,

Դիարբեքիր) իր հովանու ներքո: 7. Պ. Նուբարը հեռագիր էր ուղարկելու Եգիպտոս՝ խրախուսելու կամավորագրությունն ըստ որոշված պայմանների:

Ժ. Պիկոն և Մ. Սալքսը հաստատեցին իրենց համաձայնությունը բոլոր այդ կետերի վերաբերյալ: Ժ. Պիկոն Պ. Նուբարին զգուշացրեց, որ մինչ իր վերադառնալը Փարիզ, համաձայնությունը գաղտնի մնա՝ նույնիսկ Ֆրանսիայի ԱԳՆ-ից¹:

Հաջորդ օրը Պ. Նուբարը հետևյալ հեռագիրն ուղարկեց Կահիրե՝ Ա. Նուբարին. «Կը հաստատեմ կամաւորներու հարցին առնչութեամբ հոկտեմբեր 6 թուակիր նամակս, որմէ յետոյ ստացած եմ պաշտոնական երաշխատրութիւն թէ Դաշնակիցներու յաղթանակէն յետոյ մեր ազգային բաղձանքները գոհացում պիտի գտնեն, պարտականութիւն կը դնեմ վրադ ձեռք առնելու միջոցներ, քաջալերելու եւ դիւրացնելու համար արձանագրութիւնը առաւելագոյն թիւով կամաւորներու, վերոյիշեալ նամակիս մէջ թելադրուած զգուշաւոր կերպերով եւ անհրաժեշտ նկատուած ուրիշ նախազգուշութիւններով: Նուպար»²:

Այդ հեռագրից հետո Եգիպտոսում մեծ խանդավառությամբ սկսվեց կամավորագրությունը: Իսկ մայոր Լ. Ռոմիոն³ իր հերթին նույեմբերին եգիպտահայերին տեղեկացրեց Լոնդոնի համաձայնության մասին և կարդաց Ա. Բրիանի նամակը: Վարչապետը հայտնում էր, թե ամբողջովին համաձայն էր Պ. Նուբարի պայմաններին: Միաժամանակ Լ. Ռոմիոն հավաստիացրեց, որ լեգեոնի նպատակը Կիլիկիայի ազատագրումը և հայերի համար ազգային իրավունքներ ապահովելն էր, իսկ հայ կամավորները կռվելու են միայն Կիլիկիայում և դառնալու են հայկական բանակի հիմքը⁴: Դա առավել ոգևորեց հայերին:

Հոկտեմբերի 14-ին սենատոր Լուի Մարտենին ուղարկած նամակում Ֆրանսիայի վարչապետ Ա. Բրիանն ամենախիստ կերպով խարազանում էր երիտթուրքերի իրականացրած հայկական ջարդերը, իսկ վերջում նշում էր. «Երբ հնչի օրինական հատուցումների ժամը, նա (Ֆրանսիան - Ս. Պ.) մոռացության չի տա հայ ժողովրդի վշտալից փորձությունները և իր դաշնակիցների համաձայնությամբ անհրաժեշտ միջոցներ կձեռնարկի հանուն այն բա-

¹ Boghos Nubar's Papers, p. 393-397.

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 8-9: Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 71:

³ Լ. Ռոմիոն Հայկական լեգեոնի հրամանատարն էր կազմավորումից մինչև 1919 թ. մայիսը: Նրան փոխարինել է գնդապետ Ֆյո-Սեյրթ Մարին:

⁴ Յուշամատեան Մեծ եղեռնի, Պէյրուս, 1965, էջ 964-965:

նի, որ նրա համար երաշխավորի առաջադիմություն ապահովող խաղաղ կյանք»¹: Այդ նամակը նոյեմբերի 8-ին տպագրվել է Փարիզի «Թան» պարբերականում և մեծ խանդավառություն առաջ բերել հայերի շրջանում:

Հետագայում՝ 1920 թ. սեպտեմբերին, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Լեյգը հայտարարեց, որ իր երկիրը ոչ մի պարտավորություն չի ստանձնել հայերի հանդեպ և որևէ համաձայնագիր գոյություն չունի²: Երբ Պ. Նուբարը ներկայացրել էր Ժ. Պիկոյի հետ համաձայնությունը, Ֆրանսիայի ԱԳՆ-ը պատասխանել էր, որ վերջինս դուրս էր եկել իր իրավասությունների շրջանակից³: Այսպիսով՝ միայն նամակներում կատարված հավաստիացումներն իրականում բավարար չէին:

1916 թ. հոկտեմբերի 31-ին Լոնդոնում Պ. Նուբարը ճաշի էր հրավիրվել Մ. Սայքսի տանը: Ներկա էր Կ. Պոլսի բրիտանական դեսպանատան նախկին առաջին թարգման Զերալդ Ֆիցմորիսը: Զրույցի ժամանակ Մ. Սայքսը սխալ համարեց ռազմական գործողությունները Դարդանեղում և Սալոնիկում: «Որպեսզի պարտության մատնեն թուրքերին և ծանր հարված հասցնեն գերմանացիներին, անհրաժեշտ է զորքեր ավիանել Ալեքսանդրետում: Դա կկտրի նրանց երկաթուղային հաղորդակցության համակարգը, և նրանք շուտով պարտության կմատնվեն ռուսների օգնությամբ, որոնք գալիս են արևելքից»⁴, - գտնում էր Մ. Սայքսը: Ցավոք, Անտանտի երկրները պատերազմի ընթացքում, ինչպես տեսանք, բազմիցս քննարկել են Ալեքսանդրետում կամ Կիլիկիայի այլ շրջանում ավիանում կատարելու խնդիրը, սակայն դա այդպես էլ մնացել է միայն թղթե նախագիծ:

1916 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանագրով Կիպրոսում կազմավորվելու էր Արևելյան լեգեոնը⁵: Այն համալրվելու էր օսմանյան հպատակություն ունեցող կամավորներով: Վերջիններս պատերազմի ամբողջ ընթացքում ֆրանսիական դրոշների ներքո՝ իբրև օժանդակ ուժեր, ծառայելու էին ասիական Թուրքիայում: Լ. Ռոմիոն նշանակվում էր լեգեոնի առաջին հրամանատար: Հայկական և սիրիական կոմիտեների միջոցով Ամերիկայում զինվորագրվածները գրանց-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 364:

² Նուպարեան մատենադարան, ֆոնդ. Legion d'Orient-volontaires armenienne, թղթապանակ Legion d'Orient (Legion armenienne), թերթ 0058:

³ Եափուճեան Ա., նշվ. աշխ., էջ 144-145:

⁴ Boghos Nubar's Papers, p. 403.

⁵ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 42: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 381-382:

վելու էին Բորդոյում և Մարսելում: Ձինվորագրման կոմիտեներին վճարելու էին Ամերիկայից Ֆրանսիա եկած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց զինվորագրմանը հավանություն կտրվեր:

Արևելյան լեգեոնի կանոնադրությունը նախարար Պ. Ռոքը հաստատեց նոյեմբերի 26-ի թիվ 7966-9/11 հրամանագրով¹: Ըստ դրա՝ լեգեոնը գտնվելու է Ֆրանսիական կառավարության դրամական հոգածության ներքո: Այդուհանդերձ, քանի որ լեգեոնականները լինելու էին օժանդակ զինվորականներ՝ չէին ընդգրկվելու Ֆրանսիական բանակում, իրավունք չէին ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի, կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման: Արևելյան լեգեոնի հրամանատարական կազմը համալրվելու էր Ֆրանսիական սպաներով և ենթասպաներով կամ արտասահմանցու կարգավիճակ ունեցող ծառայողներով, որոնց տեղակալներ կարող էին նշանակվել լեգեոնականներից ներգրավված օժանդակ հրամանատարական կադրերը: Այն նախատեսված էր ասիական Թուրքիայում հնարավոր գործողությունների համար և դրվելու էր Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատարի ենթակայության տակ: Հայ, սիրիացի կամ արաբ ենթասպաները, որոնք ծառայում էին Արտասահմանյան լեգեոնում, կարող էին իբրև իրենց կորպուսից գործուղվածներ ընդունվել Արևելյան լեգեոն:

Լեգեոնի կազմավորման և կամավորագրության պայմանները Ֆրանսիայի արտգործնախարարության կողմից հրապարակվեցին դեկտեմբերի 5-ին²: Կամավորների արձանագրությունը կատարվելու էր հետևյալ պայմաններով.

1. Արևելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահպատակ հայերն ու սիրիացիները, որոնք առանձին խմբերի մեջ էին դասավորվելու՝ ըստ ցեղի և կրոնի:

2. Լեգեոնի ծախսերը հոգալու էր Ֆրանսիան, սակայն լեգեոնականներն օժանդակ զինվորներ էին լինելու և մաս չէին կազմելու Ֆրանսիական բանակին, իսկ վիրավորվելու դեպքում հատուցում կամ թոշակ չէին ստանալու:

¹ Գարամանուկեան Ա., նշվ. աշխ., էջ 46: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 383-389:

² Պոյաճյան Տ., նշվ. աշխ., էջ 9-15:

3. Լեգեոնը հաստատվելու էր Կիպրոսում և ղեկավարվելու էր ֆրանսիացի սպաների կողմից:

4. Լեգեոնը նախատեսված էր օգտագործել Ասիական Թուրքիայում և դրվում էր Սիրիայի Նավային գորաբաժնի ծովակալի հրամանատարության տակ:

5. Արձանագրության համար կամավորները պետք է ներկայանային Մարսելի կամ Բորդոյի գրասենյակները, իսկ Ֆրանսիայում բնակվողները՝ Փարիզի կենտրոնական գրասենյակ: Արևելքից եկողները պետք է արձանագրվեին Պորտ Սալիդի ֆրանսիական հյուպատոսարանում կամ Կիպրոսում՝ լեգեոնի հրամանատարի գրասենյակում:

6. Հայկական և սիրիական կոմիտեները ստանձնելու էին կամավորներ հավաքելու գործը՝ առանց ֆրանսիական դիվանագետների միջամտության: Անհրաժեշտ էր քարոզչությունը կատարել ամենաձայրահեղ զգուշությամբ և առանց հրապարակային որևէ արտահայտության, որպեսզի խուսափեին թուրքերի ուշադրությունից և վրեժխնդրական արարքներից՝ ընդդեմ հայերի ու սիրիացիների:

7. Կամավորների ճանապարհաձախսը հոգալու էին հայկական ու սիրիական կոմիտեները, իսկ Ֆրանսիան պարտավորվում էր, եթե կոմիտեները պահանջեին, վերադարձնել կամավորների երրորդ և չորրորդ կարգի ճանապարհաձախսերը:

8. Արձանագրության օրից կամավորի բոլոր ծախսերը հոգալու էր պետությունը:

9. Կամավորները ընդունվելու էին պատերազմի ողջ տևողության համար:

Պետք է նշել, որ լեգեոնի կազմավորման պայմաններից Լ. Ռոմիոն և Ժ. Դեֆրանսը դժգոհ մնացին: Առաջինը դիմեց ռազմական նախարարին, իսկ ղեսպանը՝ Ա. Բրիանին, որպեսզի լեգեոնականների աշխատավարձերը բարձրացվեին, քանի որ 2 ֆրանկը հաշվարկված էր խաղաղ ժամանակների համար, իսկ դրամի կուրսի անկումից հետո դա անբավարար էր: Սխալ էին համարում, որ լեգեոնականներն «իրավունք չեն ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման», իսկ նրանց կարիքավոր ընտանիքները չեն ունենա նպաստ ստանալու իրավունք: Նշում էին, որ բրիտանացիները կամավորներ կամ նույնիսկ բանվորներ հավաքագրե-

լիս ավելի լավ պայմաններ էին առաջարկում¹։ Սակայն այդ առաջարկները հաշվի չառնվեցին։

Դեկտեմբերի 5-ին Ժ. Գուն այդ պայմանները ներկայացրեց Պ. Նուբարին, որոնք լուրջ անակնկալ էին Ազգային պատվիրակության նախագահի համար։

Այդ պայմանների դեմ Պ. Նուբարը բողոքեց, քանի որ դրանով ոտնահարվում էին այն հիմնական սկզբունքները, որոնք ձեռք էին բերվել Ժ. Պիկոյի հետ բանակցությունների ժամանակ։ Ըստ Լոնդոնի պայմանավորվածության՝ կամավորագրության կոչը լինելու էր Ֆրանսիայի կողմից, իսկ հայկական կոմիտեները աջակցելու էին ոչ բացահայտ։ Սակայն արտգործնախարարության պայմաններով կամավորագրությունը իրականացնելու էին հայկական կոմիտեները՝ առանց ֆրանսիական դիվանագետների աջակցության։ Պ. Նուբարը նշեց, որ հայերի կողմից կամավորների հավաքագրումը վտանգի տակ կոչի Միջագետքի հայ գաղթականների կյանքը։

Ժ. Գուն պատճառաբանեց, որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքով ֆրանսիական կառավարությունը չի կարող ֆրանսիական բանակ զինվորագրել Ֆրանսիայի դեմ կռիվ կամ նրանց դաշնակից երկրների քաղաքացիների, և դա էր միակ պատճառը, որ կամավորագրությունը խրախուսելու էին հայկական կոմիտեները։ Պ. Նուբարը նշեց, որ դրանով փոխվում էր Լոնդոնում ձեռք բերված պայմանների հիմքը։ Նա մտավախություն հայտնեց Թուրքիայում մնացած հայերի ճակատագրի վերաբերյալ և առաջարկեց այլ լուծում գտնել։

Պ. Նուբարը հիշեցրեց, որ ինքը պահանջել էր, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի պատերազմից հետո հայերին ինքնավարություն տալու մասին։ Ֆրանսիացի պաշտոնյան պատասխանեց, որ հայերը կարող են հուսալ հանրապետական կառավարության բացարձակ բարի կամքի վրա և ամենաքիչը, որ կարող են հուսալ՝ Ֆրանսիայի քաղաքացիներ դառնալն էր։ Պ. Նուբարը պատասխանեց, որ դա այլ բան էր, քան իրեն խոստացել են Լոնդոնում։ Այդ պահին Ժ. Գուին կանչեցին Ա. Բրիանի մոտ և խոսակցությունը կիսատ մնաց։ Ժ. Գուն նշեց, որ այդ հարցերը կքննարկեն հաջորդ հանդիպման ընթացքում և սպառնաց, որ համաձայնության չգալու դեպքում Ֆրանսիան կգործի առանց հայերի կարծիքը հարցնելու²։ Այսպի-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 401։

² Boghos Nubar's Papers, p. 411-414.

սով՝ Ֆրանսիան, դեռ լեգեոնը չկազմավորած, սկսել էր խախտել իր պայմանավորվածությունները, ինչպես նաև փորձում էր սպառնալիքների միջոցով առաջ տանել իր քաղաքականությունը՝ լավ հասկանալով, որ հայ գործիչներն այլընտրանք չունեն:

Դեկտեմբերի 12-ին Պ. Նուբարը Հովհաննես խան Մասեհյանի ընկերակցությամբ կրկին հանդիպեց Ժ. Գուին: Պ. Նուբարը տեղեկացրեց հայ կամավորների վերաբերյալ եղած բանակցությունների ընթացքի մասին՝ սկսած փոխգնդապետ Է. Բրեմոնին եգիպտահայերի տված պատասխանից: Հայտնեց, որ Ժ. Պիկոն և Մ. Սայքսը իրեն երաշխավորել են, որ հաղթանակից հետո հայերի ազգային բաղձանքները կիրագործվեն և Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն կստանան: Ժ. Գուն վստահեցրեց, որ Հայաստանի այն հատվածը, որն անցնելու էր Ֆրանսիային, կստանա ինքնավարություն: Պ. Նուբարը շնորհակալություն հայտնեց այդ վստահեցումների առթիվ և նշեց, որ այլ բան չէր սպասում Ֆրանսիայի պես տերությունից, որը պայքարում էր ազատագրելու թույլ և ճնշված ժողովուրդներին: Նաև որոշվեց Պ. Նուբարի կողմից նամակ ուղարկել ռուսական դումայի հայ պատգամավոր Միքայել Պապաջանյանին, որպեսզի քայլեր ձեռնարկեն Կովկասի հայ կամավորներին Ֆրանսիա ուղարկելու համար¹:

Ֆրանսիացի պաշտոնյաներն անձնական հանդիպումներում ինքնավարության մասին խոստումներ էին շռայլում, և դրանով սիրաշահում էին հայ ազգային գործիչներին, որոնք ստիպված էին բավարարվել եղածով: Հայ գործիչները միամիտ հույսեր էին տածում, որ մեծ տերությունները պատրաստ են հետևել այն խոստումներին, որոնք տրվել են բանավոր: Այդ տերությունները, նույնիսկ պատերազմի ամենաթեժ տարիներին, միմյանց միջև ստորագրած գաղտնի պայմանագրերը հաճախ փորձում էին ի չիք դարձնել: Բնականաբար, փոքր ազգերին տրված խոստումներից, որոնք կարող էին նույնիսկ ստորագրված համաձայնագրի տեսք ունենալ, հեշտությամբ կարող էին հրաժարվել:

Դեկտեմբերի 14-ին Պ. Նուբարը Ժ. Գուին ցույց տվեց Մ. Պապաջանյանին ուղարկվելիք նամակը: Ֆրանսիացին սկզբից մինչև վերջ ընթերցեց այն և իր համաձայնությունը հայտնեց բոլոր կետերի վերաբերյալ²:

Մ. Պապաջանյանին ուղարկված նամակում Պ. Նուբարը տեղեկացնում էր, որ Ֆրանսիան որոշել էր կազմել Արևելյան լեգեոն հայ և սիրիացի կա-

¹ Նույն տեղում, էջ 415-418:

² Նույն տեղում, էջ 419:

մավորներից, իսկ ինքը որոշել էր խրախուսել այդ քայլերը, առանց մոռացության մատնելու զգուշությունները, որպեսզի չվտանգվի Թուրքիայում մնացած հայերի ճակատագիրը: Նա խնդրում էր Մ. Պապաջանյանի և Հայոց ազգային բյուրոյի աջակցությունը, որպեսզի ռուսական կառավարության կողմից լուծարված հայ կամավորական զնդերի զինվորները մեկնեն Ֆրանսիա և անդամակցեն Արևելյան լեգեոնին: Նա զգուշացնում էր, որ դա խիստ գաղտնի պահվի և լուրը մամուլում չհայտնվի: Պ. Նուբարը գրում էր, որ Ֆրանսիայի կառավարությունից պաշտոնական հավաստիացումներ էր ստացել, որ հաղթանակից հետո հայերի ազգային ձգտումները լիակատար բավարարություն կստանան Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքներում¹: «Մենք կարող ենք հուսալ,- գրում էր Պ. Նուբարը,- որ Ֆրանսիայի հովանավորության տակ տրված տեղական լայն ինքնավարության շնորհիմով այնտեղ կիրագործվեն մեր բաղձանքները: Որոշված է, որ Ֆրանսիան, մնալով հավատարիմ ազատության սկզբունքներին և մեծահոգի ավանդություններին, ճնշված հայերին ազատելուց հետո հնարավորություն կը տա նրանց վերականգնելու իրանց ազգային դեմքը և գրավելու այն դիրքը, որ պատկանում է նրանց քաղաքակիրթ աշխարհում շնորհիվ իրանց անցյալի և ունակությունների»²:

Դեկտեմբերի 17-ին Ա. Բրիանը Պետրոգրադում ֆրանսիական դեսպան Մ. Պալեոլոգին ուղարկած գաղտնի նամակով, որին կից ուղարկել էր նաև Պ. Նուբարի նամակը, որպեսզի փոխանցվեր Մ. Պապաջանյանին, տեղեկացնում էր Արևելյան լեգեոնի կազմավորման մասին: Դեսպանից պահանջվում էր այդ մասին տեղյակ պահել ռուսական կառավարությանը և ստանալ թույլտվություն Ռուսաստանի տարածքում նույնպես կամավորագրություն անցկացնելու, ինչպես նաև ռուսների կողմից գերված թուրքական բանակի հայ ռազմագերիներին լեգեոնում ընդգրկելու հնարավորություն տալու մասին³:

Չնայած Ազգային պատվիրակության տվյալներով արևմտահայ ռազմագերիների թիվը Ռուսաստանում հասնում էր շուրջ 5.000-ի, սակայն իրականում այդ թիվն ավելի փոքր էր:

Արևմտահայ փախստականների հանձնաժողովի հաշվարկներով 1916 թ. դեկտեմբերին Սիբիրում կային 2.000 հայ ռազմագերիներ⁴: Չնայած

¹ Լեո, Անցյալից, էջ 347-350:

² Նույն տեղում, էջ 350:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 406-407:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 47:

դեռևս 1914 թ. նոյեմբերից կաթողիկոսը, Մ. Պապաջանյանը և այլ գործիչներ բազմիցս դիմել էին կայսերը ու ռուսական իշխանություններին՝ հայ ռազմագերիներին ազատ արձակելու կամ բարելավելու նրանց վիճակը, սակայն դրանք արդյունք չէին տվել։ Նրանց մեծագույն մասը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում¹։

Մ. Պապաջանյանին ուղարկած Պ. Նուբարի նամակը 1917 թ. սկզբներին քննարկվել է Ազգային բյուրոյում և գրեթե միաձայն մերժվել՝ հաշվի առնելով Կովկասի հայ կամավորական գնդերի դառը փորձը, որոնք նոր էին ցրվել։ «Այնուամենայնիվ, ֆրանսիական կառավարությունը խաբեց Պողոս Նուբարին ավելի խայտառակ կերպով, քան մեզ խաբել էր Նիկոլա Բ-ի կառավարությունը...», - գրում է Լեոն²։

Ընդամենը մի քանի ամիս առաջ էին ցրվել ռուսական բանակին միացած կամավորական գնդերը։ Պատերազմի սկզբում, երբ ռուսների համար բավական ծանր վիճակ էր ստեղծվել Կովկասում, փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի նախաձեռնությամբ կազմավորվել էին այդ գնդերը։ Հայերը հույս ունեին, որ թափած արյան դիմաց ձեռք էին բերելու ինքնավարություն։ Սակայն 1915 թ. առաջին կեսին թուրքերի դեմ տարած հաղթանակներից ու Արևմտյան Հայաստանի մի մասին գրավումից հետո Ռուսաստանն ինքնավարության հովերով տարված հայ կամավորների կարիքն այլևս չունեւ։

Ռուսական բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան Նիկոլայ Նիկոլանիչ Ռոմանովը դեռևս 1915 թ. մայիսին Ի. Վորոնցով-Դաշկովին առաջարկել էր ցրել հայկական զորաջոկատները, սակայն մայիսի 24-ին փոխարքան պատասխանել էր, որ մի քանի հազար կամավորները վնաս չեն կարող տալ Ռուսաստանին և արդարացված է նրանց զբաղեցնել թուրքական գործերով, իսկ զորացրվելուց հետո, թիկունքում կարող էին ավելի վտանգավոր լինել։ Ի վերջո, 1915 թ. դեկտեմբերին ռուսական հրամանատարությունը որոշում էր ընդունել ցրել հայ կամավորական գնդերը³։

Այսպիսով՝ հաշվի առնելով դառը փորձը՝ արևելահայ գործիչները դեմ էին Ֆրանսիայի խոստումներին հավատալու և նրա դրոշի ներքո կռվող հայկական նոր կամավորական բանակ կազմավորելու գաղափարին։

¹ Նույն տեղում, թ. 1-53։

² Լեո, Անցյալից, էջ 351։

³ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 552-554։

Հ. Թովուզյանը գրում է. «Այսպիսով, գաղութարարները, ցանկանալով թուրքերի դեմ օգտագործել ցեղասպանությունից ճողոպրած արևմտահայ բեկորներին, «ասպետական» խոստում տվեցին Կիլիկիայում վերականգնել հայկական պետությունը Ֆրանսիական մանդատի ներքո»¹:

Լեգեոնի կազմավորման շուրջ համաձայնության կայացմանը քննադատաբար է մոտեցել Ռ. Գասպարյանը. «Այս իրադարձությունը ժամանակի անհեռատես մի շարք հայ քաղաքական գործիչների կողմից ընկալվեց որպես Ֆրանսիայի հովանավորության ներքո Կիլիկիայի ազատագրության և անկախության սկիզբ, չնկատելով կամ չուզենալով նկատել Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը: Հայության շրջաններում թևածում էին Սիրիայի և Հայաստանի կոմիսար նշանակված Ժ. Պիկոյի խոսքերը. «Դաշնակիցների հաղթանակից հետո Ֆրանսիան իր հովանավորության ներքո ինքնավարություն է տալու Կիլիկիային»: Այս սին և կեղծ խոսքերը անպատմելի ոգևորություն առաջացրին ջարդերից մազապուրծ հայերի, ինչպես նաև՝ արտասահմանյան հայերի շրջանում: Թվում էր, թե երկնքում պայծառ շողաց հայոց արևը, թվում էր, թե մոտ է դարավոր ստորացումների, բռնությունների, կոտորածների հատուցման ժամը, թվում էր՝ հայը վերստին կշենացնի իր հայրենիքը՝ ամոքելով, դարմանելով արյունածոր վերքերը, թվում էր...»²:

Չնայած որոշ հայ հեղինակների կողմից եղած քննադատությանը՝ պետք է արձանագրել, որ հայկական զորաբանակ ստեղծելուն աջակցելն արդարացված և ճիշտ քայլ էր: Դա հնարավորություն էր տալու պատերազմից հետո ճանաչվել Անտանտին դաշնակից պատերազմող կողմ, ինքնավարություն պահանջել Կիլիկիայում: Լեգեոնն անուրանալի դերակատարություն ունեցավ Լիբանանում, Սիրիայում ծանր պայմաններում հայտնված հայ տարագիրներին աջակցելու հարցում, իսկ ավելի ուշ՝ Կիլիկիայում քեմալականների դեմ ինքնապաշտպանություններում: Հետագայում հայության ձգտումների իրականություն չդառնալը պայմանավորված էր առաջ եկած նոր իրողություններով և տարբեր հանգամանքներով:

1916 թ. դեկտեմբերի 28-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց Ժ. Պիկոյին: Վերջինս նշեց, որ տվյալ պահին Հայկական հարցի համար ավելին անել հնարավոր չէ, իսկ հայ կամավորների կարիքն ավելի էր զգացվում, քան Լոնդոնի բանակցությունների ընթացքում: Ժ. Պիկոն նշեց, որ Եգիպ-

¹ Թովուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 140:

² Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում, էջ 147:

տոսում կամավորագրությունը մեծ արդյունքներ չէր տվել և միայն 300 կամավորներ կային: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ այդ թվի մեջ չեն հաշվել Պորտ Սայիդի 600 մուավեռցի կամավորներին: Ժ. Պիկոն խնդրեց, որ Պ. Նուբարը տրամադրի Արտասահմանյան լեգեոնի այն հայ զինվորների անունները, ում մտադիր էին ուղարկել Կիպրոս՝ միանալու Արևելյան լեգեոնին:

Պ. Նուբարն իր դժգոհությունը հայտնեց, որ Ժ. Գուն հանդիպումների ընթացքում միայն հայերի հանդեպ Ֆրանսիայի դրական տրամադրվածությունն էր հայտնում և խուսափում ինքնավարության հարցից: Պ. Նուբարը շեշտեց, որ հայերն անկայուն խոստումներով չեն բավարարվի, և կամավորագրությունը խրախուսելու համար անհրաժեշտ էր ինքնավարություն խոստանալ: Պ. Նուբարը հիշեցրեց նաև, որ Ժ. Պիկոն խոստացել էր պաշտպանել Ալեքսանդրետի միացումը Հայաստանին և ոչ թե Սիրիային: Ինչպես նաև տեղեկացրեց, որ այդ հարցով զրուցել էր որոշ սենատորների հետ և ստացել դրական պատասխան:

Ֆրանսիացի դիվանագետը վստահեցրեց, որ Ալեքսանդրետն անպատճառ կմիացվի Հայաստանին և առաջարկեց, որ Պ. Նուբարը հնարավորության սահմաններում պահանջի միասնական Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքո, այդ թվում՝ Ռուսաստանին անցնելիք հայկական նահանգների միացումով: Պ. Նուբարը պատասխանեց, որ ֆրանս-հայկական կոմիտեի վերջին ժողովում ինքը քննարկման էր դրել միացյալ Հայաստանի հարցը և կոմիտեն խոստացել էր հարմար պահին օժանդակել այդ խնդրի իրականացմանը¹:

Այսպիսով՝ դերերը փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Իսկ Ազգային պատվիրակության նախագահը ստիպված էր համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

¹ Boghos Nubar's Papers, p. 422-424.

3.3 ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՔ ԳՈՒՄԱՐՏԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Մեծ Բրիտանիայի և Պ. Նուբարի հետ քաղաքական բանավոր համաձայնություն կայացնելուց անմիջապես հետո Ֆրանսիան ակտիվորեն ձեռնամուխ եղավ լեզեոնի կազմավորման աշխատանքներին:

Գումարտակի հրամանատար Լ. Ռոմիոյի խորհրդական նշանակվեց հայազգի ծովային սպա Տ. Թեքեյանը¹: Վերջինս մասնակցել էր մուսալեռցիների տարհանմանը, ռազմական մարզումներին և Միջերկրականի կղզիներում կամավորների պարեկային ու դիվերսիոն գործողություններին:

Լ. Ռոմիոն բավական կշռադատված ու ակտիվ գործունեություն ծավալեց: Նա կարողացավ ոչ միայն հայերին համախմբել իր շուրջը, այլ նաև բրիտանացիների հետ սերտ համագործակցություն հաստատել, համաձայնություն կայացնել Կիպրոսում հայկական զորամասի տեղակայման վայրի ու պայմանների շուրջ:

Տ. Թեքեյանը հետևյալ կերպ էր բնութագրում լեզեոնի հրամանատարին. «Մշտապես զգոն, խիստ պերճախոս, իր նվիրական առաքելությամբ խանդավառ, նա, չնայած սկզբնական շրջանի դժվարություններին, կարողացավ Լեզեոնը արհեստավարժ դարձնել»²:

1916 թ. նոյեմբերի 7-ին Կիպրոսի բրիտանական գերագույն կոմիսար Ջոն Քլոսոնը տեղեկացրեց Սիրիայի ռազմածովային դիվիզիոնի հրամանատար Հենրի դը Սպիտգին, որ Լ. Ռոմիոյի հետ Ֆամագուստայի ծոցից հյուսիս, Մոնարկա նավահանգստի մոտ ընտրել են հայկական կորպուսի տեղակայման վայրը³:

Այսպիսով՝ Հայկական լեզեոնը տեղակայվելու էր Կիպրոսի արևելյան հատվածում, Ֆամագուստայից 24 կմ հյուսիս: Այդ վայրը բավական մոտ էր Կիլիկիայի ծովեզերքին, և անհրաժեշտության դեպքում հնարավոր կլիներ արագորեն զորամասը տեղափոխել այդ հայկական երկրամաս:

Կիպրոսից Լ. Ռոմիոն վերադարձավ Եգիպտոս, ուր մեծ աջակցության հանդիպեց հայկական հասարակական-քաղաքական բոլոր հոսանքների կողմից: Մուսալեռցիներից զինվորագրության պատրաստ էին 450-500 կամավորներ: Ի տարբերություն հայերի՝ կամավորագրվել ցանկացող սիրիացիների թիվը փոքր էր⁴:

¹ Թեքեյան Շ., նշվ. աշխ., էջ 52:

² Նույն տեղում, էջ 59:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 369:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 369:

Նոյեմբերի 10-ին ռազմական նախարար Պ. Ռոբին ուղարկած զեկուցագրում՝ Լ. Ռոմիոն մանրամասն ներկայացնում է իր կատարած աշխատանքները և սպասելիքները: Նա Եգիպտոսում հանդիպել էր Առաքել Նուբարին և Լևոն Մկրտիչյանին, որոնք ներկայացնում էին Հայկական բարեգործական ընդհանուր միության և Սահմանադիր ռամկավար կուսակցության տեսակետները: Նրանք խոստացել էին ամեն կերպ աջակցել կամավորագրությանը, սակայն կրկին մտավախություն էին հայտնել, որ Միջագետքում մնացած հայ գաղթականները կարող էին թուրքական նոր բռնությունների զոհ դառնալ, և այդ պատճառով առաջարկել էին, որ ամեն ինչ կատարվի զգուշորեն և խիստ գաղտնի: Նույն կարծիքին էր նաև Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը:

Լ. Ռոմիոն ավելի շատ հավանել էր դաշնակցականների տեսակետը: ՀՅԴ Եգիպտոսի կոմիտեի ղեկավար Հակոբ Նևրուզը, առանց տեղյակ լինելու Լ. Ռոմիոյի առաքելության մասին, գնացել էր Ժ. Դեֆրանսի մոտ և առաջարկել հայ կամավորներ հավաքագրել, որոնք պետք է կռվեին ֆրանսիացիների հետ կողք կողքի: Դեսպանը նրան ուղարկել էր Լ. Ռոմիոյի մոտ: Հ. Նևրուզը կանխատեսում էր, որ միայն Ամերիկայում կարող են կամավորագրել 10.000 հայերի, իսկ Եգիպտոսում՝ 1.000: Նա վստահ էր, որ թուրքերը, պատերազմում հաղթանակի հասնելով, կկոտորեին հայ տարագիրների մնացորդներին և իրենց ոճիրն ավարտին չէին հասցնում միայն վախենալով, որ կարող են պարտվել պատերազմում և պատասխանատվության ենթարկվել: Լ. Ռոմիոն հավատում էր, որ Ամերիկայում ընդամենը երկու ամսում ամենաքիչը 1.500 հայեր կարող են կամավորագրել: Ֆրանսիացի սպային զարմացրել ու ոգևորել էր բոլոր հոսանքներին պատկանող հայերի՝ վճռականությամբ, համախմբվածությամբ ու միասնաբար գործելու ցանկությունը:

Նոյեմբերի 29-ին Մարսելից Պորտ Սայիդ ուղարկվեց երկու վաշտ կազմավորելու համար անհրաժեշտ հրամանատարական կազմ, զինամթերք, հանդերձանք և անհրաժեշտ այլ պարագաներ: Լ. Ռոմիոյի Կիպրոս մեկնելուց հետո Եգիպտոսում զինծառայության ժամանող հայերին Պորտ Սայիդում ընդունելու էր ֆրանսիական հյուպատոսը: Լ. Ռոմիոն նախատեսում էր մուսալեոցիներից կազմավորել 2 վաշտ, եգիպտահայերից ու ռազմագերի

¹ Նույն տեղում, էջ 372-376:

հայերից՝ 1 վաշտ, ևս 1 վաշտ՝ Եգիպտոսում կամավորագրված լիբանանցիներից՝

Պետք է նշել, որ լեգեոնի հրամանատարը բավական մեծ եռանդով լծվեց հայերից ու սիրիացիներից զորամաս կազմավորելու բարդ և պատասխանատու գործին:

Նոյեմբերի 30-ին, ժամը 16-ին «Մարոկկո» նավով երրորդ կարգի թարգմանիչ սպա Ժերպիանիոնի գլխավորությամբ լեգեոնի առաջին ստորաբաժանումը՝ 54 մուսավեոցիներ մեկնեցին Կիպրոս: Այս խմբում ընդգրկված էին որմնադիրներ, ատաղձագործներ, հյուաններ, որպեսզի կառուցեին ճամբարը: Մեկ ամսվա համար անհրաժեշտ սնունդ, գույք և գործիքներ տրամադրեցին Պորտ Սայիդի և Իսմայիլիայի բրիտանական ապրանքային պահեստները: Լ. Ռոմիոյի սերտ համագործակցությունը բրիտանական իշխանությունների հետ օգտակար եղավ լեգեոնի և Պորտ Սայիդի ճամբարի հետ կապված բազմաթիվ հարցեր լուծելու համար: Նրա ջանքերով բրիտանական ռազմական իշխանություններն ուշադրություն դարձրին Պորտ Սայիդի ճամբարի կառավարման մեջ թերացումներ ու հայերի նկատմամբ ոչ բարեհաճ վերաբերմունք ցույց տված բրիտանական պաշտոնյաներին, որոնք գլխավորապես Սիրիայի հրեաներ էին²:

Դեկտեմբերի 2-ին, ժամը 9-ին «Մարոկկո» նավը փոթորկի պատճառով դժվարությամբ մոտեցավ Մոնարկայի կառամատույցին: Կարողացան ափ դուրս բերել միայն անձնակազմը և գույքի մեծ մասը, իսկ մթերային ապրանքները որոշվեց բեռնաթափել Ֆամագուստայի նավահանգստում, որին նավերը կարող էին մոտենալ ցանկացած եղանակի: Հաշվի առնելով նման հանգամանքները՝ Լ. Ռոմիոն որոշեց ապահով ցամաքային կապ հաստատել Ֆամագուստայի և Մոնարկայի միջև: Դեկտեմբերի 5-ին նա Պորտ Սայիդից Կիպրոս ուղարկեց Իսմայիլիայի բրիտանական գլխավոր շտաբից ստացած մոտոցիկլետն ու հեծանիվը³:

Յուրաքանչյուր շաբաթ Պորտ Սայիդից մեկ նավ էր մեկնում Մոնարկա: Ճանապարհը տևում էր 30-40 ժամ: Կաստելորիզոյից Պորտ Սայիդ մեկնող նավն ամիսը 2 անգամ կանգ էր առնում Մոնարկայում: Այդպիսով՝ լեգեոնականների ճամբարն ամսական 6 անգամ հաղորդակցվում էր Պորտ Սայիդի հետ: Հեռագրական կապը պահպանվում էր 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք

¹ Նույն տեղում, էջ 378-379, 382, 411-412:

² Նույն տեղում, էջ 408, 412:

³ Նույն տեղում, էջ 408:

գտնվող Տրիկոմոյի գրասենյակից, որը միացած էր Ֆամագուստայի հեռագրագծին, իսկ նրա միջոցով՝ Պորտ Սայիդին¹:

Մինչև զորանոցների կառուցումը կամավորների առաջին խումբը տեղավորվեց բրիտանացիների տրամադրած 6 կոնաձև վրաններում: Մոնարկայում գտնվող միակ կացարանը այգեպանի տնակ էր, որը Կիպրոսի անտառների վարչությունը հատկացրեց լեգեոնի հրամանատարական կազմին: Առաջին խմբի ղեկավարությունն իրականացնում էր Ժերպիանիոնը: Առաջին խումբը Կիպրոս ժամանելու պահին իր տրամադրության տակ ուներ միայն 3 հրացան, որը նրանց էր հատկացրել «Ժյուլ Ֆերրի» նավը: Դեկտեմբերի 3-ին Լ. Ռոմիոն Պորտ Սայիդից ուղարկեց 600 հրացան, որը ստացել էր «Սպահան» նավի ժամանումից հետո²:

Փաստորեն՝ երկու վաշտ կազմավորելու համար անհրաժեշտ զենք ու զինամթերք Կիպրոս տեղափոխվեց կամավորների առաջին խմբի մեկնելուց արդեն երեք օր անց: Բրիտանացիների կողմից այլևս ոչ միայն խոչընդոտներ չէին հարուցվում, այլ նույնիսկ բավական լուրջ աջակցություն էր տրամադրվում: Դա պայմանավորված էր և՛ Լ. Ռոմիոյի համագործակցություն հաստատելու կարողության, և՛ այն հանգամանքի հետ, որ նրանք արդեն վերջնականապես հրաժարվել էին հայերին ծառայության վերցնելու մտքից:

Լ. Ռոմիոն հիացած էր հայերի կարգապահությունից ու վստահելիությունից: Չնայած միայն մեկ սպա էր գտնվում մուսալեոցիների առաջին խմբի մոտ, սակայն նա մեծ հեղինակություն էր վայելում և տիրում էր կատարյալ կարգապահության: Լ. Ռոմիոն համոզված էր, որ իրեն անհրաժեշտ են Ժերպիանիոնի նման ջանասեր ու հաստատակամ սպաներ, իսկ կոպիտ և գրգռված պահվածքով սպաները չէին կարող հաջողության հասնել հայերի մոտ: Հայ զինվորներին ֆրանսերեն սովորեցնելու գործը հանձնարարվեց Վանի նախկին միսիոներ, զինվոր Նասսին, որը «Սպահան» նավով դեկտեմբերի 3-ին ժամանել էր Պորտ Սայիդ³:

Տ. Թեքեյանը գրում էր. «Հայ կամավորականներին մարզելը, ինչ խոսք, չափազանց դժվար էր, մեր սպաներն ու ենթասպաները հաճախ մեծ զգուշավորություն, նրբանկատություն ի հայտ բերեցին, որպեսզի հաղթահարեն անխուսափելի թյուրիմացությունները, կարգ ու կանոն ապահովեն: Հարկ եմ համարում ավելացնել, որ այդ առումով նրանց օգնում էին նաև ազգային

¹ Նույն տեղում, էջ 408-409:

² Նույն տեղում, էջ 409:

³ Նույն տեղում:

հանձնախմբերն ու հայ կամավորականների ընտրախավը, որոնք ոչ մի ջանք չխնայեցին, որպեսզի Հայկական Լեգեոնը միասնական ու կարգապահ միավորում դառնա: Թե՛ առաջինները, թե՛ վերջինները համապատասխանաբար արժանի են իրենց հայրենիքի երախտագիտությանը, նրանց սկսած գործը Պատմությունն անպայման ավարտին կհասցնի»¹:

Լ. Ռոմիոն տեսնելով, որ մուսալեոցիները փայլուն հրաձիգներ են, որոշեց նրանցից կազմել գնդացրորդների ջոկատներ: Փոխգնդապետ Է. Բրեմոնը խոստացավ սկզբի համար Սուեզից մեկ գնդացիր և ուսուցանող անձնակազմ ուղարկել: Լ. Ռոմիոն դիմեց գեներալ Պ. Ռոքին, որպեսզի Սուեզի գնդացիրների մի մասը տրամադրեն լեգեոնին²:

Սուեզի ջրանցքի ընկերությունը և ֆրանսիական հյուպատոսարանը Պորտ Սայիդում շենք հատկացրին, որտեղ սկզբնական շրջանում տեղաբաշխվեց լեգեոնի հաշվապահական և զինվորագրման գրասենյակները: Պորտ Սայիդի պահեստային վաշտի հրամանատար նշանակվեց կապիտան Բուֆֆեն: Այդ վաշտը գնդապետ Էլգուդի թույլտվությամբ տեղակայվեց բերդում³:

Մուսալեոցիների կամավորագրությունը

Լ. Ռոմիոյի պահանջով ֆրանսիական սպա Ժերպիանիոնը մանրամասն վիճակագրություն անցկացրեց Պորտ Սայիդում և առաձնագրույց ունեցավ բոլոր մուսալեոցի տղամարդկանց հետ: Ըստ այդմ՝ զինծառայության պիտանի ճանաչվեցին 450 մարդ: Այդ ցուցակագրվածներին կարող էին միանալ նաև այն մուսալեոցիները, որոնք աշխատելու համար ճամբարից հեռացել էին Եգիպտոսի այլ քաղաքներ: Հայրենի հողի համար կռվելու գաղափարը չափազանց բարձր բարոյական մթնոլորտ էր առաջացրել հայերի մոտ: Լ. Ռոմիոն վստահ էր, որ չպետք է հայերին երկար ժամանակ անգործության մատնեն, որպեսզի նրանք չվհատվեն: Նա գտնում էր, որ միայն մուսալեոցիները բավարար կլինեն, եթե իրենք ցանկանան անկանոն զորամաս ստեղծել Ալեքսանդրետում դիվերսիոն գործողություններ իրականացնելու համար: Իսկ եթե Ֆրանսիան ավելի մեծ ու հեռահար նպատակ ունի՝ համագործակցության հաստատում հայ և սիրիացի ղեկավարների հետ, ազդեցության տարածում այդ ժողովուրդների վրա, ապա՝ նա գտնում էր, որ

¹ Թեքեյան Շ., նշվ. աշխ., էջ 56:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 412:

³ Նույն տեղում, էջ 412-413:

պետք է հայերից ու սիրիացիներից ստեղծեն լուրջ ռազմական կառույց, որի համար անհրաժեշտ էր երկարատև և շարունակական աշխատանք¹:

Ինչպես տեսնում ենք, մայոր Լ. Ռոմիոն վճռական էր տրամադրված և իրեն վստահված գործին վերաբերվում էր ամենայն պատասխանատվությամբ: Փաստորեն՝ միայն մուսալեոցիները պատրաստ էին տրամադրելու շուրջ 600 կամավոր՝ առանց խտրականության մուսալեոցի բոլոր այրերը ցանկություն հայտնեցին կռվելու ընդդեմ ատելի թուրքերի:

1917 թ. մայիսի 20-ին Ֆրանսիայի նոր վարչապետ և ԱԳ նախարար Ալեքսանդր Ռիբոյին ուղարկած զեկուցագրում Ժ. Դեֆրանսը ներկայացրեց իր և Լ. Ռոմիոյի տեսակետները Պորտ Սայիդի հայկական ճամբարի վերաբերյալ: Նշում էր, որ մուսալեոցիները լեզեոնի ամենակարգապահ և մարտունակ տարրն են: Հետևաբար իրենց խնդիրն է անուշադրության չմատնել նրանց ընտանիքները: Իր գոհունակությունն էր հայտնում, որ, ի տարբերություն սիրիացիների, հայերի կամավորագրությունը եզրիպտոսում, Հնդկաստանում, Ամերիկայում հաջողությամբ էր ընթանում, որ բոլոր հայ առաջնորդները խրախուսում են կամավորագրությունը, հանգանակություններ են անում կամավորների ու նրանց ընտանիքների համար, հայկական բոլոր հոսանքները միասնաբար էին հանդես գալիս: Ճիշտ չէր համարում, որ հայ գաղթականների հոգաձությունը մնար բրիտանացիների ձեռքում, մանավանդ որ պատերազմից հետո իրենք պարտավոր կլինեին փոխհատուցել այդ ծախսերը: Անհրաժեշտ էր համարում այդ գործը վերցնել իրենց ձեռքը, հայ երեխաներին ապահովել ֆրանսիացի ուսուցիչներով, հայերի մեջ դաստիարակել ֆրանսիական ոգի: Տղամարդկանց զինվորագրումից հետո ճամբարում մնացել էին մոտ 3.400 հոգի, որից մոտ 1.000-ը՝ երեխաներ: Ժ. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն իրենց հիացմունքն էին հայտնում, որ հայերը կազմակերպել էին գերազանց գործող արհեստանոցներ, որոնցում ընդգրկված էին բոլորը՝ բացի երեխաներից: Ճամբարի ծախսերը, եթե հոկտեմբերին օրական 1.000 ֆրանկ էր, արդեն տղամարդկանց հեռանալուց ու արհեստանոցների բացվելուց հետո զգալիորեն նվազել էին: Ժ. Դեֆրանսը և Լ. Ռոմիոն խնդրում էին անհրաժեշտ քայլեր ձեռնարկել հայ գաղթականներին հնարավորինս արագ ֆրանսիական խնամատարության տակ վերցնելու համար²:

¹ Նույն տեղում, էջ 377:

² Նույն տեղում, էջ 472-474:

Եգիպտահայերի կամավորագրությունը

Եգիպտոսում կամավորագրությանն աջակցելու նպատակով տեղի հայկական բոլոր կուսակցությունները, հասարակական ու կրոնական կազմակերպությունները միավորվեցին Եգիպտոսի հայ ազգային միության մեջ՝ ցուցաբերելով միասնության և համերաշխության գեղեցիկ օրինակ: Այդ մարմնի մեջ մտան դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները, ինչպես նաև Հայ առաքելական, կաթոլիկ, բողոքական եկեղեցիների և ՀԲԸՄ ներկայացուցիչները:

Լ. Ռոմիոն գեներալ Պ. Ռոքին ուղարկած զեկուցագրում իր զարմանքն էր հայտնում Եգիպտահայերի արագ համախմբման ու միասնականության մասին: Մատնանշում էր, որ ռամկավարների ղեկավարներից Վահան Թեքեյանը և հնչակյան Ստեփան Սապահ-Գյուլյանը նախկինում ռիսերիմ թշնամիներ էին, քանի որ մի ընդհարման ժամանակ հնչակյանները հանել էին Վ. Թեքեյանի աչքը, սակայն համազգային գործը գլուխ բերելու համար նրանք հաշտվել էին և պատրաստվում էին միասին մեկնել Ամերիկա: Իսկ իրար ընդդիմադիր «Արև» ու «Հուսաբեր» թերթերը պարտավորվել էին կամավորագրության մասին նույնաբնույթ հոդվածներ գրել¹:

Լեգեոնը կազմավորելու համար հայկական կազմակերպությունները հնարավորինս գաղտնի և արագ պետք է խրախուսեին կամավորագրությունը: Եգիպտահայերի կամավորագրության համար անհրաժեշտ էր համայնքում գործող հասարակական-քաղաքական կառույցների միջև եղած հակասությունները հաղթահարել, բոլոր ուժերին համախմբել: Ֆրանսիացիները բավական լուրջ կասկածով էին վերաբերում եգիպտահայերին համախմբելու հնարավորությանը: Սակայն հայրենիքը ազատագրված տեսնելու գաղափարը կարողացավ համախմբել Եգիպտոսի հայկական կազմակերպություններին:

Որոշ հայ գործիչներ դիմեցին Տ. Թեքեյանին, որպեսզի նա ստանձնի հայկական կուսակցությունների համախմբման գործը: Հայազգի սպան Լ. Ռոմիոյին առաջարկեց անձամբ դիմել հայկական կազմակերպություններին: Դա պայմանավորված էր լեգեոնի հրամանատարի օրեցօր աճող հեղինակությունն ու ազդեցությունն ամրապնդելու ձգտումով: Մինչ այդ Տ. Թեքեյանը և Լ. Ռոմիոն լայն կապեր էին հաստատել բոլոր կազմակերպությունների հետ: Լ. Ռոմիոն նամակով դիմեց հայկական կառույցներին, որպեսզի

¹ Նույն տեղում, էջ 410-411:

միավորվեին և նպաստեին կամավորական շարժմանը: Մի քանի օր անց բոլոր կազմակերպությունները միավորվեցին, Կահիրեում և Ալեքսանդրիայում ստեղծեցին հանձնախմբեր և աջակցեցին կամավորագրությանը: Այդ արագ համախմբումն ու սերտ համագործակցությունը զարմացրեց ֆրանսիացիներին¹:

Տիգրան Պոյաճյանը գրում է. «Ներքին երկպառակությունները Եգիպտոսի մէջ նուազ չարիք չէին: Հնչակ-Դաշնակ-Ռամկավար պայքարները դրական ծրագիրներու որդեգրումը անկարելի կը դարձնէին: Արտաքին ազդեցութիւններ ի գործ դրուեցան: Զինուորական հրամանատարութիւնը կուսակցական պետերը ժողովի մը հրաւիրեց եւ յաջողեցաւ զուտ ազգային ծրագրի մը շուրջ համաձայնութիւն գոյացնել անոնց միջեւ ու կազմուեցաւ «Ազգային Միութիւն» անունով մարմին մը: Հրաշքը կատարուած էր: Ազգային համերաշխ գործակցութեան մը երազը մարմին ստացած էր եւ կը յուսադրէր յուսակտուր սրտերը»²:

Շուտով քաղաքական կուսակցություններին միացան Եգիպտոսի հայ համայնքի ղեկավար մարմինները, Նպաստամատույցը, Զինվորական ֆոնդի մարմինը, Կարմիր խաչը, ՀԲԸՄ-ը: Արդյունքում ստեղծվեց Եգիպտոսի հայ ազգային միությունը, որը պատրաստակամություն հայտնեց համագործակցել և համերաշխ գործել Հայ ազգային պատվիրակության հետ³:

Փաստորեն՝ Լ. Ռոմիոյի պահանջը՝ ստեղծելու միասնական մարմին, որի հետ ֆրանսիական իշխանությունները կկարողանային համագործակցել հայերի կամավորագրության հարցով, ունեցավ վճռորոշ նշանակություն: Զորս կուսակցությունների ներկայացուցիչները քննարկեցին հարցը և որոշեցին մի կողմ դնել տարաձայնությունները, համագործակցել ազգի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերում:

Կարճ ժամանակամիջոցում Արևելյան լեգեոնին կամավորագրվեցին 300 եգիպտահայեր:

Ամերիկահայերի կամավորագրությունը

Ամենամեծ թվով կամավորներ սպասվում էին ԱՄՆ-ից, քանի որ Եվրոպան ամբողջությամբ ընդգրկված էր Համաշխարհային պատերազմի մեջ, և տեղի համայնքները կամավորներ չէին կարող տրամադրել:

¹ Թեքեյան Շ., նշվ. աշխ., էջ 53-54:

² Պոյաճյան Տ., նշվ. աշխ., էջ 21:

³ Նույն տեղում, էջ 34:

Առաջին աշխարհամարտի տարիներին ԱՄՆ-ում ապրում էր 78.000 հայ¹: Գործում էին համահայկական մի շարք կառույցների մասնաճյուղերը՝ ՀՅԴ, Ս.Դ.Հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Սահմանադիր ռամկավար կուսակցությունները, Հայ առաքելական ու ավետարանական եկեղեցիները, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը:

Դեռևս 1914-1915 թթ. ամերիկահայերը փորձել էին միասնական մարմին ստեղծել, սակայն կուսակցությունների միջև եղած տարաձայնությունների հետևանքով այդ փորձը շուտով տապալվել էր:

1914 թ. նոյեմբերի 12-ին Բոստոնում հայկական չորս կուսակցությունների ներկայացուցիչները համագործակցություն հաստատելու նպատակով խորհրդակցություն էին գումարել: Հանդիպման արդյունքում նրանք կազմավորել էին համագործակցություն ապահովող մարմին՝ Միջկուսակցական խորհրդաժողով, որի նպատակն էր. «ա. Օգնել այժմ իսկ երկրի մէջ կռուող խումբերուն. բ. Զինեալ շարժում առաջ բերել, երբ կարելի ըլլայ դաշնակից պետութեանց հաւանութիւնն ու օժանդակութիւնը ստանալ, եւ գ. Դիւանագիտական հետապնդումներ կատարել»²:

Սկզբնական շրջանի համերաշխությունն ու համագործակցությունը, ցավոք, երկար չտևեց: Շուտով միջկուսակցական տարաձայնություններն ու անհատական նկրտումներն այդ կառույցի լուծարման պատճառ հանդիսացան: ՀՅԴ կուսակցությունը գերադասեց գործել առանձին:

1914 թ. դեկտեմբերի 16-ին Միջկուսակցական խորհրդաժողովը վերանվանվեց Ազգային պաշտպանության ամերիկահայ հանձնախումբ³: Նրանում ընդգրկված էին Հայ առաքելական եկեղեցին, Ս. Դ. Հնչակյան, Վերակազմյալ Հնչակյան, Սահմանադիր Ռամկավար կուսակցությունները: Նախագահն էր Ամերիկայի առաքելական եկեղեցու թեմական առաջնորդ Արսեն ծ.վ. Վեհունին, ատենապետը՝ Միհրան Սվազյանը⁴:

1915 թ. Նյու Յորքում կազմավորվում է մեկ այլ մարմին՝ Ազգային շահերի պաշտպանության միությունը⁵: Դրանում իրենց ուժերն էին միավորել Հայ ավետարանական եկեղեցին և ՀԲԸՄ-ը:

¹ Ավագյան Բ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, 2000, էջ 35:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 27-28:

³ Ճիգմեճեան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց, էջ 199:

⁴ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 21, թ. 17-21:

⁵ Ավագյան Բ., նշվ. աշխ., էջ 29:

Վերոնշյալ երկու կազմակերպությունների միավորմամբ՝ 1915 թ. հուլիսին ստեղծվեց Ամերիկայի հայ ազգային պաշտպանության միությունը¹: Այս կառույցի խնդիրն էր պաշտպանել Հայ դատը, հետևել կաթողիկոսի և Պ. Նուբարի որդեգրած քաղաքական ուղղությանը: Նախագահին էր Արսեն ծ.վ. Վեհունին²:

Ամերիկահայ տարբեր կազմակերպությունների գործունեության արդյունքում 1914-1915 թթ. Կովկասի կամավորական շարժման համար ամերիկահայերը հանգանակեցին 342.000 դոլար³ և ուղարկեցին 800 կամավորներ⁴:

Սակայն 1916 թ. աշնանը Ամերիկայի հայ ազգային պաշտպանության միությունը ներքին տարածայնությունների արդյունքում կանգնեց փլուզման եզրին⁵:

ԱՄՆ-ում լեգեոնի համար կամավորագրությունը խրախուսելու, տեղի համայնքի և կառույցների միջև համագործակցություն հաստատելու նպատակով՝ Եգիպտոսի ազգային միությունը որոշում է ԱՄՆ ուղարկել պատվիրակություն: Պ. Նուբարի անունից Եգիպտոսից ԱՄՆ մեկնեցին հնչակյան Ստեփան Սապահ-Գյուլյանը, դաշնակցական Արտաշես Հանմյանը և ռամկավար Միհրան Տամատյանը:

1916 թ. դեկտեմբերի 13-ին Ա. Բրիանը Վաշինգտոնի, Ռիո դե ժանեյրոյի, Մոնտեվիդեոյի, Բուենոս Այրեսի, Կարակասի ֆրանսիական դիվանագիտական ներկայացուցիչներին տեղեկացրեց Արևելյան լեգեոնի կազմավորման պայմանների մասին և առաջարկեց Ամերիկայում կամավորագրությունն անցկացնել խիստ գաղտնիության պայմաններում, որպեսզի այն չեզոք երկրների դժգոհությունը չառաջացնեին, ինչպես նաև Թուրքիայում հայերի ու սիրիացիների նոր ջարդերի տեղիք չտալին: Նաև տեղակ պահեց, որ կամավորագրությունը խրախուսելու նպատակով Եգիպտոսից հայկական պատվիրակություն էր մեկնելու Ամերիկա⁶:

1917 թ. հունվարին Մ. Տամատյանը, Ա. Հանմյանը և Ս. Սապահ-Գյուլյանը հասան Փարիզ: Պ. Նուբարը նրանց ներկայացրեց Ֆրանսիայի ԱԳՆ Արևելյան գործերի գրասենյակի պետ Ժ. Գուին, որը խոստացավ հանձնա-

¹ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 21, թ. 78:

² Նույն տեղում, թ. 61-64:

³ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, 1946, էջ 187-188:

⁴ Ավագյան Բ., նշվ. աշխ., էջ 29:

⁵ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 21, թ. 78-85:

⁶ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 405:

րարագրեր ուղարկել ԱՄՆ-ի ֆրանսիական դեսպանին ու հյուպատոսներին՝ աջակցելու հայ պատվիրակներին¹:

1917 թ. հունվարի 15-ին պատվիրակները Փարիզից մեկնեցին դեպի իսպանական Վիկո նավահանգիստը, որտեղից «Ալֆոնս XII» շոգենավով մեկնեցին Նյու Յորք: Ուղևորությունը տևեց մոտ մեկ ամիս: Այնտեղ նրանց դիմավորեցին հայկական չորս կուսակցությունների ներկայացուցիչները: Նրանք անմիջապես հանդիպման գնացին Նյու Յորքի ֆրանսիական գլխավոր հյուպատոս Գաստոն Լիեբերի մոտ: Վերջինս տեղեկացրեց, որ պատգամավորներին ցանկանում էր տեսնել Վաշինգտոնում ֆրանսիական դեսպան Ժյուլ Ժյուսերանը: Նույն օրը նրանք մեկնեցին Վաշինգտոն, ուր հաջորդ օրը հանդիպեցին ֆրանսիական դեսպանին: Վերջինս պատգամավորներին հայտնեց, որ տեղյակ էր Ֆրանսիայի ԱԳՆ-ի հետ հայերի պայմանավորվածությանը, ըստ որի՝ պետք է ԱՄՆ-ում կամավորներ հավաքագրեին: Բայց դեսպանը նշեց, որ ֆրանսիական բանակի համար կամավորներ հավաքագրելը տվյալ պահին սխալ քայլ էր, քանի որ կարող էր գրգռել ամերիկացիներին: Նա խորհուրդ տվեց դա անել խիստ գաղտնիության պայմաններում, մինչև որ ԱՄՆ-ը պատերազմ կհայտարարեր Գերմանիային, որից հետո ազատորեն կկարողանային կամավորներ հավաքել: Դեսպանը խորհուրդ տվեց որոշ ժամանակ սպասել և այդ ընթացքում մեկ մարմնի շուրջ համախմբել բոլոր հայերին: Հայ պատվիրակները թեև բավական հիասթափվեցին այդ հրահանգներից, բայց խոստացան հետևել դրանց²:

Եգիպտահայ պատվիրակները մեկնեցին Բոստոն, ուր հանդիպեցին ՀՅԴ, Ս.Դ. Հնչակյան, Վերակազմյալ հնչակյան, Սահմանադիր ռամկավար կուսակցությունների ԱՄՆ-ի կենտրոնական մարմինների, Հայ առաքելական ու ավետարանական հոգևոր իշխանությունների, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչների հետ և առաջարկեցին եգիպտահայերի օրինակով ստեղծել Ազգային միություն³:

Այս անգամ ամերիկահայ բոլոր կազմակերպությունները խանդավառությամբ ընդունեցին Ազգային միություն կազմելու և Հայկական լեգեոնի կազմավորմանն օժանդակելու առաջարկը:

1917 թ. մարտի 16-26-ը Բոստոնում տեղի ունեցավ խորհրդաժողով, ուր որոշվեցին այն սկզբունքները, որոնց շուրջ համագործակցելու էին հայկա-

¹ Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 107-108:

² Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 108-110:

³ Նույն տեղում, էջ 110:

կան կազմակերպությունները: Այսպիսով՝ ստեղծվեց Ամերիկայի հայ ազգային միությունը: Մարտի 26-ին կազմակերպությունները ստորագրեցին համաձայնագիր, ուր նշված էր. «Ամերիկայի Հայ Ազգ. Միությունը յարաբերություն պիտի պահէ եգիպտոսի Հայ Ազգ. Միութեան հետ եւ իր գործունէութիւնը պիտի համաձայնեցնէ Ազգ. Պատուիրակութեան ընդհանուր ուղղութեան, կանոնաւոր յարաբերութիւն պահելով անոր հետ. միա կողմէ՝ Միութիւնը պիտի նկատուի Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչ մարմինը Ամերիկայի մէջ»¹: Ազգային միության գործադիր մարմնի ատենապետ դարձավ Միհրան Սվազյանը²:

ԱՄՆ-ում ստեղծվեցին Ազգային միության 187 մասնաճյուղեր: Ազգային միության գլխավոր նպատակներ հռչակվեցին. «ա. Հայկական ազատագրութիւն, կիլիկեան կամաւորական ծեռնարկ, բ. Հայաստանի վերաշինութիւն եւ երկրի կարօտելոց անմիջական օգնութիւն, գ. Դիւանագիտական ծեռնարկ եւ հայանպաստ պրոպականդ»³:

Այդ իրադարձությունների մասնակից Մանուկ Ճիգմեճյանը գրում է. «Արդարեւ Ամերիկահայ գաղութին մէջ առաջին անգամն էր որ անկեղծ ու ընդհանուր միութեան մը հիմը կը դրուէր, բոլոր կուսակցականները, չէզոք ազգայինները եւ Բողոքականները առաջի օրէն միահամուռ կերպով կը լծուին գործի»⁴:

Ամերիկահայերը մեծ խանդավառությամբ լծվեցին Հայկական լեգեոնի կամավորագրությանը, քանի որ հայոց ցեղասպանության լուրերը վրեժի զգացումով էին լցրել տեղի երիտասարդությանը: Միավորման գործում վճռորոշ դեր ունեւր Պ. Նուբարի գործոնը, որի նկատմամբ մեծ վստահություն կար բոլոր հոսանքների մոտ, որոնք հավանություն էին տվել նրա որդեգրած քաղաքական ուղեգծին: Փաստորեն՝ Ազգային պատվիրակության և նրա նախագահի շուրջ էին միավորվում սփյուռքի կառույցները: Նրանց ոգևորում էր Կիլիկիայի ինքնավարության գաղափարը, քանի որ հույսը կորցրել էին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մտքից՝ Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով:

1917 թ. ապրիլի 10-ին Ֆրանսիայի վարչապետ Ա. Ռիբոն Նյու Յորքի հյուպատոս Գ. Լիեբերին ուղարկած հեռագրով խնդրում էր տեղեկացնել

¹ Նույն տեղում, էջ 113:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 29:

³ Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 114:

⁴ Ճիգմեճեան Մ., նշվ. աշխ., էջ 353:

Ա. Հանմյանին, որ «Եգիպտոսի կամավորները կազմակերպվել են: Շտապ ուղարկեք ամերիկյան օժանդակ ուժեր»¹:

Ազգային միությունը սկսեց հանգանակություն, իսկ 1917 թ. ապրիլին ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո կամավորագրության կոչով դիմեց ամերիկահայությանը: Կամավորագրությունը դարձավ համազգային գործ և կովելու մեկնել ցանկացողների թիվը սպասվածից ավելին էր:

Պետք է նշել, որ ԱՄՆ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածն արգելում էր արտասահմանյան զինձառայության համար ԱՄՆ-ում զինվորագրում անցկացնել: 1917 թ. մայիսի 7-ին օրենքի մեջ լրացում կատարվեց, որը բացառություն էր անում այն արտասահմանցիների համար, ովքեր չէին դիմել ԱՄՆ քաղաքացի դառնալու համար²:

Կամավորներ հավաքագրելու և հանգանակություն կազմակերպելու նպատակով՝ եգիպտահայ պատվիրակները մինչև հուլիս շրջեցին ԱՄՆ-ի քաղաքներում և մեծ արդյունքներ արձանագրեցին: Մի քանի օրում ցուցակագրվեցին 5.000 երիտասարդներ³: Իր հուշերում ամերիկահայ կամավորներից Մինաս Թաթարյանը այսպես է բնութագրում ամերիկահայ երիտասարդության ոգևորությունն ու դրա պատճառները. «Համաշխարհային պատերազմի ընթացքին թուրք կառավարության կողմէ գործադրուած հայկական ջարդի ու տեղահանութեան սահմոկեցուցիչ լուրը կը ցնցէր, կ'ալեկոծէր արտասահմանի հայութեան սրտերը: Ամէն հայու կրծքին տակ՝ վրէժի արդար ցասումը իր գագաթնակէտին կը հասնէր:

Հայրենի տուն, տեղ, հող ձգած, հայրենակարօտ ու հայրենի տան կարօտ պանդուխտ տղաք կային Ատլանտեանի հեռաւոր ափերուն վրայ, Նոր Աշխարհի ազատ երկնակամարին տակ: Անոնք ապահով կ'ապրէին, և սակայն երբ հարազատներու խողխողումի, աքսորի ու ջարդի առաջին լուրերը հասան Ամերիկա, այդ տղաքը, մէկ կողմ դրին Ամերիկայի ապահով կեանքը, արհամարհեցին պատերազմի օրերուն բերելիք նիւթական շահերը, մէկ տեղուեցան, ուզեցին օր առաջ հասնիլ հայրենի բնագաւառի սահմաններուն վիժեցնելու մտօք թրքական մեծ ծրագիրը հայութեան ամբողջական բնաջնջման շուրջ»⁴:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 465:

² Նույն տեղում, հ. II, էջ 350:

³ Գարամանուկեան Ա., Հայկական Լեզեոնը, էջ 74:

⁴ Թաթարեան Մ., Կամավորի մը յուշերը, Անթիլիաս, 1960, էջ 7:

Գ. Մուրադյանը գրում է. «Անոնք, այդ բոլոր մը քաջերը, կեանքի բոլոր երանութիւնները արհամարհեցին և վտանգաւոր ճամբուն հետեւեցան՝ Հայրենիքի սիրոյն անոր դառնութիւնները ճաշակելու համար, որովհետեւ անոնք, գիտակից իրենց կոչումին, չի հանդուրժեցին անտարբեր մնալ Հայրենիքի ցաւերուն»¹:

1917 թ. մայիսի 14-ին Մ. Տամատյանը Պ. Նուբարին ուղղված իր հեռագրում տեղեկացնում էր, որ կամավորագրվել ցանկացողների թիվը արդեն 5.000 է, որոնցից 1.000-ը արդեն իսկ պատրաստ են մեկնելու, նշում էր, որ ֆրանսիական ներկայացուցիչների կողմից աջակցությունը քիչ էր և խնդրում էր միջոցներ ձեռնարկել, որպեսզի հայ կամավորներին 500 կամ 1.000 հոգանոց խմբերով անվտանգ ուղարկելին²: Այդ հեռագիրը Պ. Նուբարը նույն օրը տարավ Ֆրանսիայի ԱԳՆ: Այստեղ նրան համոզեցին, որ փոքր խմբերով կամավորներին ուղարկելն ավելի ապահով էր, քանի որ ռազմական նավերը կարող էին ենթարկվել գերմանական սուզանավերի հարձակումներին:

Մայիսի 16-ին ԱԳՆ-ի միջոցով Գ. Լիբերերին ուղարկվեց Պ. Նուբարի պատասխան հեռագիրը, որը հանձնվելու էր Մ. Սվազյանին: «Շատ երջանիկ եմ տեղեկանալու համար ձեր փայլուն հաջողությանը,- գրում էր Ազգային պատվիրակության նախագահը,- բայց պատվիրակությունը միահամուռ ձևով հակադրվում է մեծաքանակ զորքեր ուղարկելուն, որոնց անցումը չի կարող աննկատ մնալ: Անհրաժեշտ է նրանց ուղարկել փոքր խմբերով՝ իբրև ճանապարհորդների: Համաձայն վերջին լուրերի, վտանգն ավելի մեծ է, քան երբևէ: Խորհուրդ ենք տալիս լինել միանգամայն զուսպ և ձեռնպահ մնալ որևէ ցույցից: Այս անհրաժեշտությունը հասկացնել տվեք հենց իրենց՝ կամավորներին: Ես համամիտ եմ նախարարության հետ՝ նավ բարձրանալուն վերաբերող միջոցների հարցում»³:

Մայիսի 19-ին Ա. Ռիբոյին ուղարկված հեռագրում Ժ. Դեֆրանսը տեղեկացնում էր, որ Բոստոնից ստացել են Ա. Հանմյանի հեռագիրը 5.000 կամավորների մասին և իր, Լ. Ռոմիոյի և Եգիպտոսի հայկական միության նախագահ Հակոբ Նևրուզի անունից խնդրում էր օգնել կամավորների արագ և անվտանգ տեղափոխմանը, ինչպես նաև ապահովել ԱՄՆ-ի ֆրանսիական

¹ Մուրատեան Գ., Հայրենիքին ուխտաւորները վրեժին ճամբուն վրայ, էջ 74:

² Մեծ տերութիւնները, Օսմանյան կայսրութիւնը և հայերը, հ. I, էջ 469:

³ Նույն տեղում, էջ 470-471:

ներկայացուցիչների աջակցությունը: Մայիսի 20-ին Ա. Ռիբոն պատասխանեց, որ արագ տեղափոխման համար հրահանգներ արդեն տրվել են¹:

Ֆրանսիայում կամավորագրության, Ամերիկայից եկողների ընդունման և այլ խնդիրների հետ կապված հարցերով զբաղվելու էր Ֆրանսիայի հայ ազգային միությունը, որի նախագահ դարձավ Ս. Սվաճյանը: Վերջինս մինչ այդ ղեկավարում էր դեռևս պատերազմի սկզբին ստեղծված Հայ կամավորների կոմիտեն²:

Ազգային միությունը փաստաթղթերը պատրաստելուց, Նյու Յորքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներքնասրահում կամավորներին անհրաժեշտ ծանոթություններ ու խրատներ տալուց հետո ճանապարհում էր նավարկության: Կազմակերպական հարցերում կարևոր դերակատարություն ունեցավ հատկապես Ռուբեն Հերյանը:

Կամավորները Նյու Յորքից փոխադրվում էին ապրանքատար նավերով, յուրաքանչյուրում՝ մոտ 70 մարդ: Ուղարկվեցին նման 17 նավերով, որոնցով ճամբորդելը հոգնեցուցիչ էր և վտանգավոր առողջության համար³: Ֆրանսիայի Բորդո նավահանգստից կամավորներին գնացքով տեղափոխում էին Մարսել, այնտեղից էլ՝ նավերով Պորտ Սայիդ, ապա՝ Կիպրոս: Այդ նավարկությունը վտանգներով լեցուն էր, քանի որ գերմանական սուզանավերը Ատլանտյան օվկիանոսում ու Միջերկրական ծովում հարվածում ու խորտակում էին հակառակորդ երկրների նավերը:

Հայ կամավորներին տեղափոխող նավերից «Ադմիրալ Օրլին» 1917 թ. օգոստոսի 29-ին հունական Միլա կղզու մոտ ենթարկվեց գերմանական սուզանավի հարձակմանը և խորտակվեց: Բարեբախտաբար օգնության հասած բրիտանական նավին հաջողվեց կամավորներին անկորուստ հասցնել Միլա կղզի: Այնտեղից ամերիկահայերը մեծ զրկանքներով, տասնօրյա նավարկությունից հետո հասան Պորտ Սայիդ: Նրանց տեղափոխեց ֆրանսիական «Դեսեքս» ռազմանավը, որը մասնակցել էր մուսալեռցիների փրկությանը⁴:

Մ. Թաթարյանը գրում է. «Ազատութեան երկրէն կ'երթայինք բռնակալին երկիրը, կ'երթայինք որպէս կամաւոր, կ'երթայինք մեր արեան գնով մեր ցեղին ճակտին քսուած արատը մաքրելու, մեր վրէժը լուծելու»⁵, ապա բերում

¹ Նույն տեղում, էջ 471:

² Նույն տեղում, էջ 418:

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 38:

⁴ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 10-12:

⁵ Նույն տեղում, էջ 8:

է նաւի վրա Մանուկ Զալայանի խոսքերը կամավորներին Նյու Յորքից հեռանալուց հետո. «Տղա՛ք, գիտէ՞ք որ դժուար և ծանր պարտականութիւն մը վիճակուած է մեզ բոլորիս, մեր բոլորին անվհատ կամքն է որ պիտի յաղթ այն խոր համոզումով որ արդարութիւնը մեզ հետ է: Մենք կ'երթանք մեր անմեղ մանուկներուն վրէժը լուծելու, որոնք անգութօրէն խողխողուեցան անարգ ու դարատր թշնամիի մը կողմէն, - ճէլալեան տակաւին խօսքը չյրացուցած, բոլորս մէկ, առանց ազդարարութեան, ուղքի ելանք ու միաբերան երգեցինք. Մեր հայրենիք, թշուառ անտեր... Դժուար է նկարագրել այն հոգեկան խոր ապրումը որ իրաքանչիւրին դէմքին վրայ կը կարդացուէր: Երգ չէր, այլ՝ պոռթկում, պոռթկում չէր այլ հեղեղ մը զգացումի և հարազատ ապրումի որմէ անկասկած ազդուեցան նաեւ օտարներ, որոնք հաաքուեր էին մեր շուրջը...»¹:

Պ. Նուբարը այնքան էլ խաղավառված չէր մեծաթիվ կամավորների հավաքագրմամբ, քանի որ վախենում էր, որ դա թուրքերի ուշադրությունը կգրավի ու նոր կոտորածների առիթ կդառնա: Միաժամանակ միջազգային նոր իրավիճակում, երբ Անտանտի երկրները հայտարարել էին, որ հրաժարվում են բռնակցումներից, նորից հույս էր առաջացել միացյալ և անկախ հայկական պետություն ստեղծելու վերաբերյալ:

«Այս պայմաններուն տակ,- հունիսի 25-ին գրում էր Պ. Նուբարը Մ. Սվազյանին,- մեր յանձնառութիւնները Ֆրանսայի հանդէպ, կը ջնջուին, և այս պատճառները, որոնք մեզ առաջնորդեցին իրեն կամատրներ հայթայթելու, այլեւս գոյութիւն չունին: Աւելին, Մ. Նահանգները այսօր պատերազմի մէջ մտած ըլլալով, շատ բնական է, որ Մ. Նահանգներուն մէջ բնակող հայերը, փոխանակ զինուորագրուելու ֆրանսական զօրամասի մը՝ Արեւելեան Լեզէոնին մէջ, զօրագրուին ամերիկեան բանակներուն մէջ, եթէ կ'ուզեն մասնակցիլ կռիւին: ... Հետեաբար, լրջօրէն խորհրդածելէ ետք, Պատուիրակութիւնը որոշեց այլեւս չշարունակել քաջալերել հաաքագրումները: Անշուշտ, ոեւէ հարց չկայ բացայայտ միջոցառումներու դիմելու և ոչ ալ հրապարակային յայտարարութիւն մը ընելու,- մանաւանդ որ ցարդ հրապարակաւ ոեւէ ծանուցում չէ եղած, թէ հաաքագրումներ տեղի ունեցած են. - ուրեմն, նախ և առաջ, պէտք է դադրեցնել նոր կամատրներու առաքումը Ֆրանսա և ապա, դադրեցնել այս մասին ամէն փրփականտ: Լռելեայն հասկանալի է, որ այսպէս շարժելով, մենք բոլորովին մեր իրաւունքին մէջն ենք, քանի որ

¹ Նոյն տեղում, էջ 8-9:

մենք կամատրներ պետք էր հայթայթեինք փոխարենը Ֆրանսայի այն յանձնառութեան, թէ իրեն բաժին ինկող հայկական նահանգներուն ինքնավարութիւն պիտի շնորհէր՝ իր հովանաւորութեան տակ: Տրուած ըլլալով որ իր նոր քաղաքականութիւնը կը հրաժարի այս ծրագրէն, մեր համաձայնութիւնը ինքնին կը ջնջուի այս իրողութեամբն իսկ: Բնականաբար, մենք պետք չէ մեր որոշումը հաղորդէք Ամերիկայի ֆրանսական հիպատոսական մարմիններուն, բայց և պետք չունինք վախնալու, որ ֆրանսական կառավարութիւնը պիտի զարմանայ, երբ նոր կամատրներ չստանայ, որովհետեւ ես համոզուած եմ, որ ան կը սպասէ ատոր այն օրէն որ Մ. Նահանգները պատերազմի մէջ մտան, շատ բնական գտնելով, որ Ամերիկահայերը իրենց պարտականութիւնը կատարեն իրենց որդեգրած, կամ իրենց ասպնջականութիւն շնորհած երկրին հանդէպ, և զինուորագրուին անոր բանակներուն, քան որեւէ այլ դաշնակիցի բանակին մէջ: Ամէն պարագայի տակ, ասիկա պիտի ըլլայ միակ այն բացատրութիւնը, որ պետք է տրուի Ամերիկայի ֆրանսական մարմիններուն, այն պարագային երբ անոնք այս առնչութեամբ ձեզի ուեւ հարցում ուղղեն: Ուրեմն կը խնդրեմ ձեզմէ, անմիջապէս որ ստանաք այս նամակս, տեսնուիք երեք պատուիրակներուն հետ, որոնց և ուղղուած է ան, և անոնց հետ համաձայնաբար, միջոցներ ձեռք առնէք դադրեցնելու կամատրներու ամէն նոր առաքում և վերջ տալու Արեւելեան Լեզգոնի համար հաւաքագրումներուն»¹:

Այսպիսով՝ Պ. Նուբարն այնքան էլ խանդավառուած չէր կամավորագրութիւնը խրախուսելու գաղափարով: Դա ունէր մի շարք պատճառներ. Ֆրանսիան այդպես էլ պաշտոնապէս չէր հայտարարել Կիլիկիային ինքնավարութիւն տալու պատրաստակամության մասին՝ չնայած նախապէս արված խոստումներին, բացի այդ՝ 1917 թ. առաջ եկած միջազգային նոր իրողութիւնները հոյսեր էին առաջացրել, որ հնարավոր կլինի միացյալ հայկական պետություն կազմավորել, որի հովանավորությունը կարող էին ստանձնել Ռուսաստանը կամ ԱՄՆ-ը: Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ Ազգային պատվիրակության նախագահը ոչ բացահայտորեն փորձում էր կանխել մեծաթիվ հայ կամավորների համախմբումը ֆրանսիական դրոշի տակ:

1917 թ. օգոստոսի 21-ին Պ. Նուբարը Ֆրանսիայի ԱԳՆ քաղաքական գործերի տնօրեն Պիեռ դը Մարթերիին հայտնեց իր մտահոգությունը կա-

¹ Եսփիւմեան Ա., նշվ. աշխ., էջ 134-136:

մավորներին մեծ խմբերով ուղարկելու խնդրում, քանի որ դա աննկատ չէր մնա: Դը Մարթերին անմիջապես հեռագրեց Գ. Լիեբերին, որպեսզի քայլեր ձեռնարկի հնարավոր բոլոր շոգենավերով, բեռնանավերով և այլ նավերով ԱՄՆ-ի 4.000 կամավորներին մի քանի շաբաթվա ընթացքում տեղափոխելու Ֆրանսիա¹:

Սակայն այդ հրահանգներն այդպես էլ իրականություն չդարձան, և փոխադրամիջոցների պակասի պատճառով 1917 թ. հունիս 9-ից մինչև նոյեմբերի 3-ը Ամերիկայից կարողացան փոխադրել միայն 1.172 կամավորներ²: Ամերիկահայ կամավորները մեկնում էին եռագույն դրոշներով՝ կարմիր, կապույտ և սպիտակ³:

Սեպտեմբերի կեսերին Մ. Սվազյանը խնդրեց Պ. Նուբարին Ֆրանսիական իշխանությունների հետ կարգավորել ամերիկահայ կամավորներին տեղափոխելու հարցը: Երկու շաբաթ Ազգային պատվիրակության նախագահը փորձում էր պատասխան ստանալ Ֆրանսիայի ԱԳՆ-ից, իսկ հոկտեմբերի 6-ին հանդիպում խնդրեց Ա. Ռիբոյից⁴:

Հոկտեմբերի 2-ին Գ. Լիեբերը ԱԳ նախարար Ա. Ռիբոյին տեղեկացրեց, որ համաձայնության էր եկել Անդրատլանտյան ընկերության հետ, որպեսզի վերջինս իր նավերում եղած բոլոր ազատ տեղերը տրամադրի հայ կամավորներին: Դրանով Պ. Նուբարի ցանկությունը կկատարվեր՝ կամավորները կմեկնեին փոքր խմբերով: Սակայն ընկերությունը հրաժարվել էր բեռնատար նավերով փոխադրումներ կատարելու առաջարկից, քանի որ դա արգելված էր⁵:

Հոկտեմբերի 11-ի հեռագրով Գ. Լիեբերը Ա. Ռիբոյին տեղեկացրեց, որ միայն Նյու Յորքում այդ պահին մեկնելու պատրաստ 150 կամավոր կար: Անդրատլանտյան ընկերությունը հնարավորություն ուներ 100-ին տեղավորել «Չիկագո» նավի վրա, որը մեկնելու էր հոկտեմբերի 13-ին, իսկ 50-ին՝ «Ռոշամբո» նավում, որը շարժվելու էր ամսի 20-ին: Նշում էր, որ ուղևորների ահռելի կուտակումներ կան, տեղերի մեծ մասը նախապես զբաղեցված է և իրենք հետագայում ավելի մեծ դժվարություններ կունենան կամավորներին տեղափոխելու գործում: Հյուպատոսը հարցի լուծում էր համարում պետության կողմից բավարար տարողությամբ մեկ-երկու շոգենավի տրամադրու-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 29:

² Ճիզմեհեան Մ., նշվ. աշխ., էջ 353:

³ Աճեմեան Խ., էջեր կամաւորի օրագրէս, Պէյրոս, 1967, էջ 23:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 38:

⁵ Նույն տեղում, էջ 36:

մը: Նշում էր, որ ամերիկյան գորքերում կամավոր կամ որպես զինակոչիկ ընդգրկված էին 5-6.000 հայեր, որոնցից 4.000-ին Հայ ազգային միությունը դեռևս կարող էր տրամադրել լեգեոնին¹:

Ֆրանսիական կառավարությունը որոշեց նոյեմբերի վերջին շոգենավ տրամադրել, եթե մինչ այդ տեղափոխման պատրաստ լինեին նվազագույնը 1.200 կամավորներ: Սակայն Մ. Սվազյանը Պ. Նուբարին տեղյակ պահեց, որ որոշ հանգամանքներից ելնելով դա անհնար էր: Պ. Նուբարը ֆրանսիական իշխանություններին տեղյակ պահեց, որ շոգենավի անհրաժեշտությունը չկա, իսկ ամերիկահայերին հրահանգեց կամավորներին ուղարկել նախկինի պես²: Ինչպես տեսնում ենք, իրականում հայ ղեկավար գործիչներն արդեն ոգևորություն չէին ցուցաբերում մեծ թվով կամավորների ֆրանսիական դրոշի ներքո համախմբելու գործում, որը պայմանավորված էր մի կողմից միջազգային նոր իրադրությամբ, մյուս կողմից՝ ինքնավարություն տալու մասին հայտարարությունից Ֆրանսիայի խուսափելու պատճառով:

Կամավորների հետ կապված խնդիրներ էին առաջանում նաև Մարսելում: Այդտեղից Պորտ Սայիդ մեկնող շոգենավերում տեղերի սղության պատճառով Ամերիկայից ժամանող կամավորները երկար ժամանակ անմխիթար պայմաններում ստիպված էին լինում սպասել հավաքակայանում: Հոկտեմբերի 19-ին Պ. Նուբարը դիմեց ֆրանսիական իշխանություններին, որպեսզի կարգավորեն հարցը: Նա առաջարկեց կամավորներին Եգիպտոս կամ Կիպրոս տեղափոխել ռազմամթերք փոխադրող նավերով³: Այսպիսով՝ կամավորների տեղափոխության հարցը դժվարությունների էր հանդիպում ոչ միայն ԱՄՆ-ում, այլ նաև Ֆրանսիայում: Իհարկե, դա պայմանավորված էր ոչ միայն պաշտոնյաների անփութությամբ, այլև՝ պատերազմի առաջ բերած դժվարություններով ու խառնաշփոթով:

1917 թ. հոկտեմբերի վերջին Ֆրանսիայի ռազմական նախարարին ներկայացրած զեկուցագրում գեներալ Մորիս Բայուն ուշադրություն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ ամերիկահայերը հակված էին նախապատվություն տալ ոչ թե Ֆրանսիայի, այլ՝ ԱՄՆ-ի հովանավորությանը: Նա մտավախություն ուներ, որ մուսալեոցիները կարող են ընկնել նրանց գաղափարների ազդեցության տակ: Նա խորհուրդ էր տվել Լ. Ռոմիոյին, որպեսզի զինվի համբերությամբ և հմուտ աշխատանքով չեզոքացնի այդ վտանգը: Իր

¹ Նույն տեղում, էջ 41:

² Նույն տեղում, էջ 56:

³ Նույն տեղում, էջ 47:

հերթին վարչապետ և ռազմական նախարար Պոլ Պենլեն հոկտեմբերի 31-ին գաղտնի ճեպագրով ամերիկահայերի անջատողական ձգտումների վրա հրավիրեց ԱԳ նախարար Լուի Բարտոուի ուշադրությունը¹: Փաստորեն՝ ֆրանսիացի պաշտոնյաները այնքան էլ ոգևորված չէին լեգեոնում մեծաթիվ ամերիկահայերի ներգրավմամբ՝ վախենալով նրանց կողմնորոշումից և հետպատերազմյան ձգտումներից:

Լեգեոնական Խորեն քահանա Աճեմյանը վկայում է, որ Ազգային միությունում գրանցվեցին 6.000 կամավորներ, սակայն միայն 1.172-ը հնարավորություն ունեցան ԱՄՆ-ից մեկնելու: Նա դա բացատրում է ֆրանսիական հրամանատարության չկամությամբ, քանի որ իբր զգուշանում էին ամերիկյան ազդեցության մեծացումից²: Սակայն, ինչպես նշեցինք, դա պայմանավորված էր նաև հայ ղեկավար գործիչների զգուշավորությամբ և Ֆրանսիայի նկատմամբ եղած անվստահությամբ, որը լիովին արդարացված էր: Անշուշտ, կային նաև ֆրանսիացի պաշտոնյաներ, որոնք զգուշանում էին ամերիկահայերի կողմնորոշումից, սակայն մեր կարծիքով, այս դեպքում նրանք այնքան էլ մեծ ազդեցություն չեն ունեցել:

Խնդիրներ կային նաև որոշ կամավորների առողջական վիճակի հետ կապված: Մեծ թվով երիտասարդներ ցանկանում էին օր առաջ մեկնել ռազմաճակատ և վրեժ լուծել ցեղասպանված հարազատների ու ազգակիցների համար: Շատ դեպքերում նրանք թաքցնում էին իրենց առողջական խնդիրները:

Դեռևս 1917 թ. հուլիսի 26-ին ռազմական նախարար Պ. Պենլենին ուղարկված հեռագրում գեներալ Մ. Բայուն առաջարկում էր, որ Նյու Յորքից մեկնելուց առաջ կամավորները մանրազնին ստուգում անցնեն, որովհետև գրանցվել էին դեպքեր, երբ Կիպրոս հասնելուց հետո պարզվել էր, որ որոշ կամավորներ պիտանի չէին ծառայության և մնացել էին առանց միջոցների: Նա Ժ. Դեֆրանսի հետ մտահոգված էր ծանր կացության մեջ հայտնված այդ կամավորների խնդրի լուծմամբ³: Ժ. Դեֆրանսը օգոստոսի 18-ին հեռագրով Ա. Ռիբոյին տեղեկացրեց, որ Եգիպտոսի հայ ազգային միությունը Մ. Բայուի և Լ. Ռոմիոյի համաձայնությամբ Փարիզ է գործուղել Վ. Թեքեյանին, որպեսզի կարգավորի Ամերիկայից ժամանող կամավորների հետ

¹ Նույն տեղում, էջ 56-57:

² Ատանայի Հայոց պատմություն, էջ 424:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 19:

կապված որոշ հարցեր, ինչպես նաև ծառայության համար ոչ պիտանի ճանաչված կամավորներին հետ ուղարկելու խնդիրը¹:

Սեպտեմբերի 13-ից Ա. Ռիբոյին վարչապետի պաշտոնում փոխարինեց Պ. Պենլեն: Վերջինս տեղակ չէր Վ. Թեքեյանի գալստյան նպատակների և լիազորությունների մասին: Վերջինս որևէ նամակ կամ փաստաթուղթ իր հետ չէր տարել: Հետևաբար՝ Պ. Պենլենն Եգիպտոսում ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ Մ. Բայուին սեպտեմբերի 23-ին հարցում ուղարկեց Վ. Թեքեյանի լիազորությունների մասին²:

Սեպտեմբերի 26-ին Մ. Բայուն պատասխանեց, որ Վ. Թեքեյանը Եգիպտոսի հայ ազգային միության կողմից Փարիզ էր ուղարկվել ծառայության համար ոչ պիտանի ճանաչված կամավորների վերադարձի հարցը լուծելու, ինչպես նաև քննարկելու հայ լեգեոնականներին Կիլիկիայից բացի այլ տարածքներում օգտագործելու խնդիրը³:

Վ. Թեքեյանը, իր հերթին, սեպտեմբերի 24-ին հեռագրեց Հ. Ներուզին՝ տեղեկացնելով ստեղծված իրավիճակի մասին և խորհուրդ հարցրեց: Հ. Ներուզը պատասխանեց, որ գններալ Մ. Բայուն արդեն տեղեկացրել է ռազմական նախարարությանը նրա առաքելության մասին, սակայն գններալը խնդրել էր, որ մինչև իր ժամանումը Փարիզ՝ հոկտեմբերի 15-ը, հայ գործիչները քայլեր չձեռնարկեն և սպասեն իրեն⁴:

Հոկտեմբերի 8-ին ռազմական նախարար Պ. Պենլենն փոփոխություն մտցրեց Արևելյան լեգեոնի կազմավորման թիվ 7549-9/11 հրամանի 8-րդ հոդված մեջ: Ըստ դրա՝ Ամերիկայում զինվորագրված կամավորները Ֆրանսիա մեկնող շոգենավեր կբարձրանան նավահանգստի հյուպատոսական գործակալության կողմից տրված ծանուցումներով: Նրանք պետք է բժշկական խիստ զննում անցնեն ֆրանսիական հյուպատոսությունում՝ ֆրանսիացի բժիշկների կողմից և պիտանի ճանաչվեն զինծառայության համար: Փարիզի հայկական և սիրիական կոմիտեները պետք է վճարեն Ֆրանսիա ժամանելուց հետո զինծառայության համար ոչ պիտանի ճանաչվածների համար, որպեսզի նրանց վերադարձի հնարավորություն տրվեր⁵:

1917 թ. հոկտեմբերի 6-ին Մ. Սվազյանը խնդրեց Ա. Ռիբոյին, որպեսզի Բորդոյի ռազմական և քաղաքացիական իշխանությունների մոտ երաշխա-

¹ Նույն տեղում, էջ 26:

² Նույն տեղում, էջ 32:

³ Նույն տեղում, էջ 35:

⁴ Նույն տեղում, էջ 40:

⁵ Նույն տեղում, էջ 42, 48-49:

վորի այնտեղ ամերիկահայերին դիմավորող Քերթիդյանին և Ժ. Դիրատսին¹: Այդ հարցով ԱԳ նախարարը հոկտեմբերի 20-ին դիմեց ռազմական նախարարին: Պ. Պեննլենն հոկտեմբերի 27-ին 18-րդ օկրուգի հրամանատար գեներալ Քուինքրուանդոնի մոտ հավատարմագրեց Քերթիդյանին և Ժ. Դիրատսին, որպեսզի Բորդոյում ընդունեն կամավորներին²:

Սակայն նոյեմբերի 16-ին գեներալ Քուինքրուանդոնը վարչապետ և ռազմական նախարար Ժորժ Կլեմանսոյին տեղեկացրեց, որ Ժ. Դիրատսին աննպատակահարմար է նման պաշտոն ու լիազորություններ տալը, քանի որ նրա նկատմամբ կասկածներ կային, որ համագործակցում է թուրքերի հետ, բացի այդ՝ նրա և կամավորների միջև լուրջ ընդհարումներ էին եղել: Բորդոյի կոմիսարը հաստատել էր այդ բոլոր տեղեկությունները: Գեներալը գտնում էր, որ Բորդոյում Քերթիդյանը կարող է նաև միայնակ գործել, իսկ անհրաժեշտության դեպքում կհամագործակցեր Սիրիական կոմիտեի ներկայացուցիչ Դյուպիսի հետ³:

Հոկտեմբերի 9-ին Պ. Նուբարը Ժ. Գուին ուղարկած նամակով տեղեկացրեց, որ մի քանի ամիս առաջ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն ռազմական նախարարությանն է ներկայացրել ուղարկած կամավորների ճանապարհաձևիսի հաշիվը՝ 20.798,50 դոլար, որը պետք է մարվեր ըստ կայացած համաձայնության: Սակայն երկար ժամանակ է որևէ պատասխան չէին ստացել: Նա խնդրում էր Ժ. Գուի միջնորդությունը՝ գումարը հնարավորիս արագ փոխանցելու, քանի որ հայկական կոմիտեի միջոցները սահմանափակ էին և նոր կամավորներ նավ բարձրացնելու համար գումարների պակաս կար⁴:

Դեկտեմբերի 27-ին ԱԳ նախարար Ս. Պիշոնը վարչապետ Ժ. Կլեմանսոյին տեղեկացրեց, որ Պ. Նուբարի ղեկավարած Ազգային պատվիրակությունը հայկական կոմիտեների, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կողմից ճանաչված կազմակերպություն է, և Պ. Նուբարի անունով են ձևակերպել հանձնարարագիրը, որով նա կարող էր ստանալ 1917 թ. հունիսի 9-ից մինչև օգոստոսի 2-ը ընկած ժամանակաշրջանում Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի կողմից կամավորների տեղափոխման համար որպես կանխավճար մուծված գումարների փոխհատուցումը⁵:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 38-39:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 55:

³ Նույն տեղում, էջ 67-68:

⁴ Նույն տեղում, էջ 39:

⁵ Նույն տեղում, էջ 113-114:

1918 թ. փետրվարի 12-ին Պ. Նուբարը նամակով Ժ. Գուին հիշեցրեց, որ ռազմական նախարարությունը դեռևս չի փոխհատուցել կամավորներին ուղարկելու համար Ամերիկայի ազգային միության ներդրած 118.000 ֆրանկը, չնայած խոստումներին¹:

Փետրվարի 25-ին ԱԳՆ Ս. Պիշոնը Պ. Նուբարին տեղեկացրեց, որ ռազմական նախարարությունը նույն օրը ուղարկել է 118.106,85 ֆրանկի վճարման հանձնարարագիր, որպեսզի փոխանցի նրան²:

Փաստորեն՝ Ֆրանսիան դժվարությամբ կամ դժկամությամբ էր կատարում նաև իր վերցրած ֆինանսական պարտավորությունները: Ի վերջո ֆրանսիական կողմը չկարողացավ լեգեոնին կամավորագրվել ցանկացող ամերիկահայերի մեծամասնությանը տեղափոխել Կիպրոս: Նրանց զգալի մասը միացավ ԱՄՆ բանակին:

1918 թ. մարտի 9-ին Կահիրեից ուղարկած հեռագրով Պաղեստինում և Սիրիայում Ֆրանսիայի գերագույն կոմիսար Ժ. Պիկոն արտգործնախարար Ս. Պիշոնին տեղեկացրեց, որ հոգնելով սպասելուց, մոտ 4.000 ամերիկահայեր զինվորագրվել են ԱՄՆ բանակին և խնդրում էր քայլեր ձեռնարկել հնարավորության դեպքում համաձայնության գալ ԱՄՆ կառավարության հետ՝ նրանց Արևելյան լեգեոնին միացնելու համար³:

Մարտի 14-ին Լ. Ռոմիոն ռազմական նախարարին տեղեկացրեց, որ կամավորների հավաքագրումները խիստ դանդաղել էր: Փետրվարին զինվորագրվել էին 80 սիրիացիներ՝ հիմնականում Հարավային Ամերիկայից, 20 հայ Պաղեստինից և 6 հայ Եգիպտոսից: Նշում էր, որ ԱՄՆ-ից կամավորների ժամանումը գրեթե 3 ամիս է դադարել էր: Որպես կամավոր ժամանած Ռ. Հերյանը, ով ԱՄՆ-ում կամավորագրության պատասխանատվություններից էր, Լ. Ռոմիոյին պարզաբանել էր, որ վերջին ամիսներին Անդրատլանտյան ընկերության նավերի ազատ տեղերը տրամադրվում էին լեհ և հրեա կամավորներին: ԱՄՆ-ում դեռևս կային զինվորագրվել ցանկացող 3.000 հայեր: Կամավորները եկել էին հիմնականում արևելյան նահանգներից, իսկ կենտրոնի և արևմուտքի, հատկապես՝ Կալիֆորնիայի հայերը դեռևս մեկնելու հնարավորություն չէին ստացել: Հայերից շատերը, սպասելուց հոգնելով, միանում էին ԱՄՆ բանակին: Լ. Ռոմիոն մտավախություն էր հայտնում, որ

¹ Նույն տեղում, էջ 167:

² Նույն տեղում, էջ 185:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 198: Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 77:

նման պայմաններում կարող էր ստեղծվել ամերիկյան Արևելյան լեգեոն: Հայերի համախմբումը ամերիկյան դրոշի ներքո նա համարում էր Ֆրանսիայի հեղինակությանը և շահերին հարվածող քայլ: Բացի դրանից, նա մտահոգված էր, որ փետրվարի 25-ին նախարարի կողմից առաջարկված 3-րդ գումարտակի կազմավորումը կապված կլինի դժվարությունների հետ, քանի որ պահեստային ուժեր չեն մնա: Նա խնդրում էր ամեն հնարավոր միջոց գործադրել ամերիկահայերին Արևելյան լեգեոնին միացնելու համար¹:

Մարտի 14-ին Ս. Պիշոնը հեռագրեց Ժ. Ժյուսերանին, որպեսզի ԱՄՆ կառավարությանը համոզի հայ զինվորներին փոխադրել Արևելյան լեգեոն, քանի որ Սիրիայում գործելու համար իրենք ավելի մեծաքանակ ուժերի կարիք ունեին²:

Մարտի 15-ին Պ. Նուբարը նույնպես նամակով խնդրեց Ֆրանսիայի արտգործնախարարի միջնորդությունը, որպեսզի ԱՄՆ բանակի հայ կամավորները միացվեն Արևելյան լեգեոնին³: Այդ հարցով մարտի 17-ին և ապրիլի 8-ին Ս. Պիշոնին դիմեց նաև ռազմական նախարար և վարչապետ Ժորժ Կլեմանսոն: Նա շատ կարևոր էր համարում ամերիկահայերին Արևելյան լեգեոնին միացնելը, պահանջում էր ամեն ջանք գործադրել ԱՄՆ կառավարությանը համոզելու համար և առաջարկում էր հայերին ԱՄՆ-ից տեղափոխել հնարավոր բոլոր տրանսպորտային միջոցներով⁴:

Ապրիլի 22-ին Ժ. Պիկոն կրկին Ս. Պիշոնին հիշեցրեց ամերիկահայերի հարցը, նշելով, որ եվրոպական ճակատից նոր ուժեր Պաղեստին տեղափոխել չեն կարող և միակ հույսը հայերն են⁵: Ապրիլի 26-ին Ս. Պիշոնը պատասխանեց, որ ԱՄՆ պետդեսպարտամենտը պատրաստ էր ընդառաջել, սակայն ԱՄՆ ռազմական նախարարությունը դեմ էր, և Ժ. Ժյուսերանը ջանքեր էր գործադրում վերջինին համոզելու ուղղությամբ⁶:

1918 թ. հունիսի 6-ին Ժ. Կլեմանսոն կրկին Ս. Պիշոնին հրահանգեց արագացնելու ամերիկահայերի հարցի լուծումը: Նշում էր, որ իրենց հույսը ամերիկահայերն են, քանի որ բրիտանական հարձակումը Պաղեստինում բավարար արագ չէր ընթանում, որպեսզի ազատագրված տարածքների հայ

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 226-228:

² Նույն տեղում, էջ 200:

³ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 77: Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 202:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 204, 226:

⁵ Նույն տեղում, էջ 242:

⁶ Նույն տեղում, էջ 245-246:

գաղթականները և ռազմագերիները միանային լեզեոնին: Նաև պարզաբանում էր, որ նախատեսվում էր կազմավորել 3 գումարտակ և պահեստային 3 վաշտ, սակայն կամավորագրության այդ տեմպերի դեպքում պահեստային ուժերը ստիպված կլինեին փոքրացնել, իսկ հետո՝ կրճատել նաև գումարտակների թիվը: Բացի ռազմականից, կար նաև քաղաքական խնդիր: Հայերի մոտ կարող էր կարծիք ձևավորվել, որ ԱՄՆ-ը ևս հանդես է գալիս իրենց պաշտպանությամբ և զուցե ավելի շատ քան Ֆրանսիան: Վարչապետի կարծիքով, դա կարող էր հեղինակագրել Ֆրանսիային արևելքում: Ժ. Կլեմանսոն պնդում էր, որ ամեն ինչ արվի ԱՄՆ կառավարության մոտ, որպեսզի հայ կամավորներին և ԱՄՆ հայ զինվորներին Արևելյան լեզեոն ուղարկելու համաձայնություն տան և փոխադրամիջոցներ տրամադրեն¹:

Լուրջ խնդիրներ ու դժգոհությունների կային նաև հայ կամավորների ցածր աշխատավարձերի և վիրավորվելուց հետո փոխհատուցում կամ թոշակ չնախատեսվելու պատճառով:

1918 թ. հունիսի 21-ի նամակով Պ. Նուբարը Ժ. Գուին տեղեկացրեց, որ Մ. Սվազլյանը խնդրում էր կարգավորել կամավորների նպաստների հարցը: Վերջինս կանոնակարգում առաջարկում էր ներառել որոշ նոր դրույթներ. կամավորների ընտանիքներին ամսական նպաստներ, հիվանդ կամավորների համար բժշկական ծախսեր, տարիքի պատճառով ծառայությունից ազատվածներին փոխհատուցում, չնախատեսված ծախսեր, որոնք կարող են ծագել հիվանդության կամ ֆիզիկական անկարողության հետևանքով ծառայությունից ազատվածների համար: Մ. Սվազլյանը մատնանշում էր, որ դրանք անհրաժեշտ են նոր ոգևորություն առաջացնելու համար, քանի որ նախկինում սահմանված աննշան նպաստները շատերին թևաթափ են անում²:

1918 թ. օգոստոսի 8-ին Ժ. Ժյուսերանը հեռագրեց Ս. Պիշոնին, որ ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ֆրանկ Լ. Փոլքը տեղեկացրել էր, որ չեն կարող բավարարել Արևելյան լեզեոնի համար հայ կամավորներ տրամադրելու ֆրանսիական կառավարության խնդրանքը, քանի որ ԱՄՆ-ը Թուրքիային պատերազմ չէր հայտարարել և անհնար էր համարում ամերիկյան բանակի հայ զինվորներին ուղարկել կռվելու թուրքերի դեմ, չէր կարող նաև պաշտո-

¹ Նույն տեղում, էջ 311-312:

² Նույն տեղում, էջ 319-320:

նապես խրախուսել կամավորագրությունը, սակայն դեմ չէր, եթե ԱՄՆ-ում բնակվող հայերը կամավորագրվեին¹:

Օգոստոսի 10-ին Պ. Նուբարը ժ. Գուին հայտնեց, որ Մ. Սվազյանը տեղեկացրել է, որ ԱՄՆ բանակում կան 4.000-5.000 հայեր, որոնց ռազմական նախարարությունն արգելել էր տեղափոխվել Արևելյան լեզեոն, իսկ քաղաքացիություն չունեցող և դրա համար չդիմած հայերի թիվը խիստ սակավաթիվ էր²: Օգոստոսի 29-ին Ս. Պիշոնը տեղեկացրեց ժ. Կլեմանսոյին, որ հաշվի առնելով ժ. Ժյուսերանի և Պ. Նուբարի հետ փոխանակված նամակագրությունը, պարզ է դարձել, որ ԱՄՆ կառավարությունը հակված չէ դաշնային բանակի հայ զինվորներին թույլատրել ծառայելու Արևելյան լեզեոնում³:

Այսպիսով՝ պարզ էր դառնում, որ ԱՄՆ ռազմական իշխանություններն այնքան էլ հակված չէին հայ զինվորներին տրամադրել Ֆրանսիային: Դրան խանգարում էին մի կողմից օրենսդրությունը, մյուս կողմից՝ ԱՄՆ-ի ձգտումը՝ օգտագործելու հայ մարտիկների կարողությունները սեփական շահերի համար: Չի բացառվում նաև, որ ԱՄՆ իշխանությունները ավելի հեռահար նպատակներ կարող էին ունենալ: Ինչպես հայտնի է, պատերազմից հետո ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը ցանկություն ուներ վերցնելու Հայաստանի (Կիլիկիայով) մանդատը: Հետևաբար՝ բնական էր, որ ամերիկյան կողմը դեմ էր ֆրանսիական բանակի հայկական զինուժի մեծացմանը, որը միտված էր Կիլիկիայի ազատագրմանը և այնտեղ Ֆրանսիայի ազդեցության հաստատմանը:

Ամերիկահայ կամավորներից Կիպրոսում կազմավորվեց երկրորդ գումարտակը: Այն մասնակցեց 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինյան ռազմաճակատում տեղի ունեցած Արարայի ճակատամարտին: Այդտեղ փայլուն դրսևորվեցին հայերի մարտական որակները, որոնք վճռորոշ դերակատարում ունեցան թուրք-գերմանական զորքերի ջախջախման գործում:

Գերսամ Ահարոնյանն ամերիկահայ կամավորների մասին գրում է. «Անխարդախ հայրենասիրութեամբ եւ նուիրումով տոգորուած այդ պաշտելի քաջերը, որոնք ձգած ապահով կեանք ու հանգիստ, ովկիանոսներ անցան՝ որպէս զի իրենց քոյրերուն ու եղբայրներուն վրէժը առնէին անարգ ոսոխէն

¹ Նույն տեղում, էջ 350:

² Նույն տեղում, էջ 351-352:

³ Նույն տեղում, էջ 358:

եւ որպէս զի բերէին իրենց մասնակցութիւնը մեր ազգային դատի բարոյք լուծման»¹:

Ինչպես տեսանք, ամերիկահայ երիտասարդները մեծ խանդավառութեամբ ընդունեցին հայրենիքն ազատագրելու և ցեղասպան թուրքերից վրեժ լուծելու նպատակով մարտի դաշտ մեկնելու գաղափարը: Ցավոք, ֆրանսիական իշխանութիւնները չկարողացան բոլոր ցանկացողներին տեղափոխել Կիպրոս և նրանց միայն փոքր մասը համալրեց Հայկական լեգեոնի շարքերը:

Արգենտինահայերի կամավորագրությունը

1918 թ. մարտին Ազգային միություն կազմավորվեց նաև Բուենոս Այրեսում: Կամավորագրության կոչին արձագանքեցին նաև արգենտինահայերը, որոնք մոտ 150 կամավորներ ուղարկեցին Ֆրանսիա՝ լեգեոնին միանալու համար: Արգենտինահայերի առաջին խմբերը, Խոսրով Ռշտունու (28 կամավոր) և Երվանդ Մալխասյանի (23 կամավոր) գլխավորությամբ, ՀՅԴ կողմից հավաքագրվեցին և ուղարկվեցին արդեն 1916 թ. վերջին²:

1918 թ. ապրիլի 13-ին Ֆրանսիայի ԱԳ նախարարը հեռագրով տեղեկացրեց Բուենոս Այրեսում ֆրանսիական դեսպան Գոսսենին, որ տեղի Հայկական կոմիտեն պատրաստակամություն է հայտնել կամավորներ ուղարկել Արևելյան լեգեոնի համար: Նախարարը հրահանգեց հնարավորության սահմաններում դյուրին դարձնել զինծառայության համար պիտանի կամավորների մեկնումը³:

1918 թ. մայիսին «Տելյոն» շոգենավով Բուենոս Այրեսից 13 կամավորներ ժամանեցին Հավր, ապա՝ Մարսելի վրայով մեկնեցին Կիպրոս⁴: Նույն ամսում ևս մեկ 25 հոգանոց խումբ ուղարկվեց Ֆրանսիա⁵:

1918 թ. հուլիսի 2-ին Ժ. Կլեմանսոն Ս. Պիշոնին ներկայացրեց թարգմանիչ Դերոկլի տեսակետները, որ Արգենտինայում կարող էին հավաքագրել 2.000-3.000 հայ կամավորների: Վարչապետը հուսադրող էր համարում Արևելյան լեգեոնը արգենտինահայերով համալրելու միտքը, քանի որ ամերիկահայերից այլևս հույս չկար: Առաջարկում էր Դերոկլի և Հայ ազգային

¹ Սիարունեան Գ., նշվ. աշխ., էջ 83:

² Մատթէոսեան Վ., Պուենոս Այրէսի Հայ ազգային միութիւնը (1918-1920), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրոս, 1998, հ. 18, էջ 132:

³ Մեծ տերութիւնները, Օսմանյան կայսրութիւնը և հայերը, հ. II, էջ 229:

⁴ Նույն տեղում, էջ 323:

⁵ Մատթէոսեան Վ., նշվ. աշխ., էջ 133:

պատվիրակության հետ քննարկել Արգենտինայում քարոզչություն ծավալելու և հնարավորիս մեծ թվով կամավորներ հավաքագրելու հարցը¹:

Իրականում այդ թիվը չափազանցված էր: Արգենտինահայերի ընդհանուր քանակը գրեթե այդքան էր:

Ժ. Կլեմանտյի առաջարկի մասին հուլիսի 21-ին Ժ. Գուն տեղեկացրեց Պ. Նուբարին: Հայ գործիչը հուլիսի 25-ին նամակով այդ նախաձեռնության մասին տեղեկացրեց Բուենոս Այրեսի թեմի առաջնորդ Բաղդասար քահանա Պարասպայանին² և համայնքի ազդեցիկ գործիչներին՝ Հմայակ Հակոբյանին, Մեծատուր Մեծատուրյանին, Զեյթունյանին: Նա առաջարկեց հնարավորինս մեծ թվով կամավորներ ուղարկել: Ս. Պիշոնը հուլիսի 31-ին Գոսսենին տեղեկացրեց Պ. Նուբարի նամակի մասին և հրահանգեց կապեր հաստատել վերոնշյալ գործիչների հետ և ստեղծել զինվորագրման հայկական կոմիտե³:

1918 թ. հուլիսին մեկնեց հերթական խումբը, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում Հայկական բարեգործական ընդհանուր միության Արգենտինայի մասնաճյուղի անդամները: Այդ առթիվ ՀԲԸՄ-ը «կազմակերպած է ողջերթի հանդես մը ի պատիւ Բարեգործականի գործոն անդամներեն՝ օղաչու Միհրան Խայեանի, որ իր ընկերներով որպէս կամաւոր Ֆրանսա մեկնած է»⁴: Հետագայում Մ. Խայանը ծառայության անցավ ՀՀ ռազմաօդային ուժերում և 1919 թ. Կարսի մոտ ավիավթարի զոհ դարձավ⁵:

1918 թ. նոյեմբերի 7-ին Գոսսենը, Բուենոս Այրեսի հայ ազգային միության խնդրանքով, հարցում արեց Ս. Պիշոնին, թե արդյո՞ք Արևելյան լեզեոնի համար կամավորագրությունը դեռ շարունակվում է: Նոյեմբերի 10-ին նախարարը պատասխանեց, որ ռազմակալման համար անհրաժեշտ են զորքեր, իսկ հայերի շահերից բխում է, որ նրանց թվաքանակը մեծ լինի ֆրանսիական զորախմբում: Միաժամանակ առաջարկեց կամավորագրել ոչ թե պատերազմի ընթացքի համար, ինչպես նախկինում էր, այլ՝ երկու տարով⁶: 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. ապրիլը Հայկական լեզեոնին միանալու համար Արգենտինայից մեկնեցին ևս մոտ 120-150 կամավորներ⁷:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 331:

² Ա. Պելլերյանի ժողովածուի մեջ առաջնորդի ազգանունը գրված է Բաղդասարյան, որն ուղղել ենք:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 344-345, 346-347:

⁴ Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, 2005, էջ 506:

⁵ Մատթեոսեան Վ., նշվ. աշխ., էջ 135:

⁶ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 435:

⁷ Մատթեոսեան Վ., նշվ. աշխ., էջ 140:

Ռազմագերիների կամավորագրությունը

Լեզեոնի մեջ նախատեսվում էր ընդգրկել Անտանտի երկրների ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորներին: Բազմաթիվ հայեր, որոնք կռվել էին թուրքական, բուլղարական բանակներում, հայտնվել էին ռազմագերիների մեջ: Նրանց պահում էին Հնդկաստանում, Եգիպտոսում, Ռուսաստանում, Սերբիայում, Ալժիրում և այլ վայրերում գտնվող ճամբարներում: Նրանց վիճակը բավական ծանր էր, քանի որ թշնամի էին դիտվում և՛ Անտանտի երկրների կողմից, և՛ Քառյակ դաշինքի ռազմագերիների:

Մեծ Բրիտանիայի Հնդկաստանի գործերով նախարարությունը 1916 թ. հոկտեմբերի 24-ին տվել էր իր համաձայնությունը, որպեսզի Հնդկաստանում ներկայված հայ ռազմագերիները միանային Արևելյան լեզեոնին¹: Թորգոմ արք. Գուշակյանը մեկնեց Բոմբեյ, որպեսզի տեսակցի Հնդկաստանում բանտարկված թուրքական բանակի հայ ռազմագերիների հետ, որոնք հիմնականում կիլիկեցիներ էին, և նրանց համոզի անդամագրվելու լեզեոնին²: Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Սումերպուրի ճամբարում արգելափակված էին 165 հայ ռազմագերիներ: 1916 թ. դեկտեմբերի 26-ին Թորգոմ արք. Գուշակյանը հանդիպեց նրանց հետ³: Բոլորը ցանկություն հայտնեցին միանալու լեզեոնին: Ժ. Դեֆրանսն առաջարկեց Ա. Բրիանին, որպեսզի բոլոր հայ ռազմագերիներին ուղարկեն Եգիպտոս: Չինվորագրվելու ընդունակներին կընդգրկեին լեզեոնի մեջ, իսկ մյուսներին կարող էին պահել Եգիպտոսի ռազմագերիների ճամբարներում⁴:

1917 թ. հունվարի 20-ին Եգիպտոսում բրիտանական գերագույն կոմիսար գեներալ Ռեզինալդ Վինգեյթը Ժ. Դեֆրանսին տեղյակ պահեց, որ Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ը համաձայն էր՝ Հնդկաստանում գտնվող հայ ռազմագերիների լեզեոնին միանալուն, իսկ ինքն արդեն հեռագրել էր Հնդկաստանի փոխարքա Ֆրեդերիկ Շելմսֆորդին, որպեսզի տեղեկացնի հայերի ուղարկման ամսաթիվը⁵:

Միջազգային և Պաղեստինի ռազմաճակատներում բրիտանացիների կողմից գերված թուրքական բանակի բոլոր հայ զինվորները, որոնք պիտանի էին ծառայության համար, զինվորագրվեցին Հայկական լեզեոնին:

¹ Սարուխանյան Տ., նշվ. աշխ., էջ 67:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 411:

³ Գուշակեան Թորգոմ պատրիարք, Ամբողջ երկեր, հ. 2, Հնդկահայք, էջ 31:

⁴ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. 1, էջ 430:

⁵ Նոյն տեղում, էջ 429:

Լ. Ռոմինոն և գեներալ Մ. Բայուն միայն գովասանքով էին խոսում նրանց կարգապահության և մարտական որակների մասին¹:

Արևմտահայ փախստականների հանձնաժողովի հաշվարկներով 1916 թ. հեկտեմբերին Սիբիրում կային 2.000 հայ ռազմագերիներ: Չնայած դեռևս 1914 թ. նոյեմբերից կաթողիկոսը, Ռոմայի պատգամավոր Միքայել Պապաջանյանը և այլ գործիչներ բազմիցս դիմել էին կայսրին ու ռուսական իշխանություններին, որպեսզի հայ ռազմագերիներն ազատ արձակվեն, կամ բարելավվեր նրանց վիճակը, սակայն դրանք արդյունք չէին տվել: Նրանք գտնվում էին ծայրահեղ ծանր վիճակում²:

1917 թ. մարտի 23-ին Գևորգ Ե կաթողիկոսը դիմեց Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությանը, խնդրելով՝ «Կարգադրել անմիջապես ազատել այն բոլոր հայ գերիներին, որոնք տանջում են Սիբիրում և Ռուսական պետության գանազան վայրերում, իբրև այնպիսի անձանց, որոնք կամաւոր կերպով իրենք իրենց յանձնել են ռուս քրիստոսասէր զօրքին»³: Սակայն Ռուսաստանից հայ ռազմագերիներին այդպես էլ հնարավոր չեղավ միացնել լեգեոնին:

Ռուսաստանի գլխավոր շտաբը 1917 թ. հունիսի 26-ին որոշում ընդունեց թույլատրել տարբեր ազգությունների ռազմագերիներից հրաձգային վաշտեր կազմավորել և ուղարկել ռազմաճակատ⁴: Հայ ռազմագերիներից կազմավորված միայն փոքրաթիվ խմբեր կարողացան հասնել Կովկասյան ռազմաճակատ:

1917 թ. հոկտեմբերի 3-ին Դը Սեն-Զուենտինին ուղարկած նամակում Մ. Բայուն հույս էր հայտնում, որ Փարիզ հասնելուց հետո կկարողանա զբաղվել Մակեդոնիայի ռազմաճակատի հայ ռազմագերիներին ազատելու և Հայկական լեգեոն ուղարկելու խնդրով: Նա նաև մտավախություն էր հայտնում, որ ԱՄՆ-ի պատերազմի մեջ մտնելուց հետո Հայկական հարցը կարող է անակնկալներ մատուցել իրենց⁵:

1917 թ. հոկտեմբերի 10-ին Պ. Նուբարը նամակով Ժ. Գուին տեղեկացրեց, որ թուրքական ու բուլղարական բանակի հայ ռազմագերիներ կան ներկայված Ագուենում (Կրոզ), որոնք խնդրագիր էին ուղարկել բարելավելու

¹ Նույն տեղում, հ. II, էջ 47:

² ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 1-53:

³ ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 16:

⁴ Սիմոնյան Ռ., Անդրանիկ. Սիբիրական վաշտի ողիսականը, Երևան, 2006, էջ 14:

⁵ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 37:

իրենց վիճակը՝ առանձնացնելով թուրք ու բուլղար ռազմագերիներից, որոնք թշնամաբար էին վերաբերվում հայերին: Հայ ռազմագերիներից 6-ը խնդրում էին իրենց ընդգրկել Հայկական լեգեոնի շարքերը¹:

Դաշնակիցները դեռևս 1916 թ. վերջերին բուլղարական բանակի հարյուրավոր հայ զինվորների կոչ էին արել հանձնվել՝ խոստանալով առանձնահատուկ վերաբերմունք ցույց տալ և չդիտել որպես ռազմագերի: Հայերից շատերն անձնատուր էին եղել սերբերին, փոքր մասը՝ ֆրանսիացիներին: Չնայած տրված խոստումներին՝ նրանց՝ որպես ռազմագերիներ, ընդգրկել էին ծանր աշխատանքների մեջ: Պ. Նուբարը 1918 թ. հունվարի 26-ին խնդրեց ֆրանսիական իշխանություններին՝ թեթևացնել նրանց վիճակը և հնարավորության դեպքում միացնել Արևելյան լեգեոնին²: Փետրվարի 5-ին Ս. Պիշոնը ռազմական նախարարությանը հարցում արեց սերբերի մոտ գտնվող հայ ռազմագերիների ճակատագրի մասին³:

1918 թ. մայիսի 4-ին ռազմական նախարարի հրամանագրով Մարսելի հայ ազգային միության նախագահ Հովհաննես Սահառճյանին հանձնարարվեց զբաղվել հայ ռազմագերիներին հայտնաբերելու և Արևելյան լեգեոնին կամավորագրելու հարցերով⁴:

1918 թ. մայիսի 25-ին Ժ. Կլեմանսոն տեղեկացրեց Ս. Պիշոնին, որ Մակեդոնիայում դաշնակցային բանակների գլխավոր հրամանատար գեներալ Ա. Գիյոման հայտնել էր, որ սերբերը բոլոր դասալիքներին հանձնել են ֆրանսիացիներին: Սերբերի մոտ ռազմագերու կարգավիճակով հայտնվել էին 39 հայեր, որոնցից 4-ը դեռևս 1916 թ. օգոստոսին իրենց իսկ խնդրանքով ընդգրկվել էին սերբական բանակի մեջ: Մյուս հայ ռազմագերիներին ուղարկել էին տարբեր ճամբարներ, ուր ներգրավվել էին տարբեր ոչ շատ ծանր աշխատանքների մեջ: Գեներալը տեղեկացրել էր, որ այդ հայերից ոչ մեկը Արևելյան լեգեոնում ընդգրկվելու համար չէր դիմել, միևնույն ժամանակ սերբական իշխանությունները հակված էին նրանց պահել բանակում՝ աշխատուժի պակասի պատճառով⁵:

Մարսելի հայ ազգային միության ներկայացուցիչները, որոնք բուլղարական ու թուրքական բանակներից գերված հայերին կամավորագրելու նպա-

¹ Նույն տեղում, էջ 40:

² Նույն տեղում, էջ 156:

³ Նույն տեղում, էջ 290:

⁴ Նույն տեղում, էջ 285:

⁵ Նույն տեղում, էջ 290-291:

տակով մեկնել էին Կորսիկայի, Ալժիրի և Ֆրանսիայի ռազմագերիների ճամբարներ, լուրջ արդյունքներ չարձանագրեցին: Սակայն այդ ուղևորությունների արդյունքում պարզ դարձավ, որ սերբական և չեխոսլովակյան ծագման գերիները օգտվում էին աշխատանքային բարվոք պայմաններից, իսկ հայերը ներգրավված էին ծանր աշխատանքներում: Ազգային պատվիրակության նախագահը 1918 թ. սեպտեմբերի 23-ին Ժ. Գուից պահանջեց հայ ռազմագերիների համար ևս ապահովել բարենպաստ պայմաններ¹:

Կամավորագրության անհատական դիմումներ

Լեգեոնում ծառայելու ցանկություն հայտնեցին նաև բրիտանական և ռուսական ծառայության մեջ գտնվող որոշ հայ սպաներ: Սակայն Ֆրանսիական իշխանությունները մերժեցին նրանց, պատճառաբանելով, որ լեգեոնում կարող էին ընդգրկվել միայն Ֆրանսիացի սպաներ և օսմանահայատակներ²:

1917 թ. փետրվարի 26-ին և ապրիլի 7-ին Պ. Նուբարը Ֆրանսիայի ԱԳՆ պաշտոնյա Վիետի հետ հանդիպումներում պահանջեց Արտասահմանյան լեգեոնի բոլոր հայ զինվորներին տեղափոխել Արևելյան լեգեոն: Սակայն Ֆրանսիայի ԱԳՆ-ում համոզված էին, որ պետք է Արտասահմանյան լեգեոնի հայ զինվորները անհատական դիմումներով տեղափոխվեն³: Այնուամենայնիվ, մայիսի 27-ի հրամանագրով Ֆրանսիայի ռազմական նախարարը Արտասահմանյան լեգեոնի բոլոր հայ և սիրիացի զինվորներին թույլատրեց տեղափոխվել Արևելյան լեգեոն⁴:

1917 թ. սեպտեմբերի 17-ին ԱԳ նախարար Ա. Ռիբոյին ուղարկած նամակով Ս. Սվաճյանը խնդրում էր միջնորդել ռազմական նախարարությանը, որպեսզի ԱՄՆ-ից նոր ժամանած կամավորական, Ջեյթունի նախկին քահանա Վաղարշակ վարդապետ Արշակունուն նշանակեն հայկական լեգեոնի խոստովանահայր⁵:

ԱԳ նախարար Ս. Պիշոնը 1918 թ. հունվարի 4-ին Ժ. Կլեմանսոյին տեղեկացրեց, որ Երուսաղեմի նախկին պատրիարքական տեղապահ (1909-1913 թթ.) Դանիել արքեպիսկոպոս Հակոբյանը, ով պատերազմի տարիներին աքսորված էր Երուսաղեմ, ցանկություն է հայտնել ընդգրկվել Արևելյան

¹ Նույն տեղում, էջ 371:

² Նույն տեղում, հ. I, էջ 461, 466, 468:

³ Նույն տեղում, էջ 463-464:

⁴ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 81:

⁵ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 32:

լեգեոնում որպես քահանա: Խնդրի շուրջ վարչապետը հարցրեց Լ. Ռոմիոյի կարծիքը: Լեգեոնի հրամանատարը հունվարի 15-ին պատասխանեց, որ դա շատ լավ տպավորություն կգործի հայերի վրա, միայն ցանկանում էր իմանալ՝ արդյոք կաթողիկոսը դեմ չի լինի դրան: Ժ. Կլեմանսոն հունվարի 19-ին Ս. Պիշոնին պատասխանեց, որ հակված է բավարարելու արքեպիսկոպոսի խնդրանքը և նրան կտրամադրի օժանդակ լեգեոնականի աստիճան՝ 301.50 ֆրանկ աշխատավարձով՝ բացառելով այլ փոխհատուցում: Նա բնակվելու էր Կիպրոսում՝ լեգեոնի հրամանատարի տրամադրած վայրում: Վարչապետը առաջարկեց Ս. Պիշոնին ստանալ Հայոց կաթողիկոսի համաձայնությունը¹: Հունվարի 22-ին Ժ. Գուն նամակով Պ. Նուբարին տեղեկացրեց Դանիել արք. Հակոբյանի խնդրանքի, Լ. Ռոմիոյի ու վարչապետի վերաբերմունքի մասին և հարցրեց կաթողիկոսին դիմելու նպատակահարմարությունը: Ազգային պատվիրակության նախագահը հունվարի 24-ին պատասխանեց, որ կաթողիկոսին դիմելու կարիք չկա, քանի որ արքեպիսկոպոսը տվյալ պահին որևէ թեմ և հետևաբար, դրանից կախվածություն չուներ: Պ. Նուբարը շատ դրական գնահատեց այդ հայ հոգևորականին լեգեոնի քահանա նշանակելու Ժ. Կլեմանսոյի որոշումը²:

1918 թ. փետրվարի 9-ին Ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Լ. Ռոմիոյին, որպեսզի առանց իր թույլտվության լեգեոն չընդունի որևէ հայի կամ սիրիացու, որը քաղաքացիական կյանքում զբաղեցրել էր բարձր դիրք: Լ. Ռոմիոն այդ մասին տեղյակ պահեց Դ. Սեն-Քուենտինին: Նրան մտահոգում էր այն, որ հետագա անհանգստությունների պատճառ հանդիսացող նման մարդիկ գալիս էին հիմնականում Ամերիկայից: Տեղեկացնում էր, որ վերջերս ԱՄՆ-ից եկել էին խիստ ռազմատենչ մի երիտասարդ քահանա և «շատ հեղափոխական» երկու հրապարակախոս: Եզիպտոսի հայերին այդ առումով վտանգավոր չէր համարում, քանի որ տեղական բնավորության գծերից էր հանդարտությունը: Նրան մտահոգում էր նաև այն, որ եթե պարզվի, որ օժանդակ սպաների աստիճանների միջև տարբերություն կա, ապա դա կարող էր դժգոհությունների պատճառ դառնալ: Նա կարծում էր, որ հայերը լրջախոս ժողովուրդ են և արտաքին բացասական ազդեցությունները կշրջանցվեն³:

¹ Նույն տեղում, էջ 150:

² Նույն տեղում, էջ 152:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 164-165:

Փաստորեն՝ ֆրանսիական կողմը փորձում էր լեզեոնից հեռու պահել հեղինակություն ունեցող հայերին, որպեսզի հետագայում, ոչ հայանպաստ քաղաքականություն վարելու դեպքում, հայերը չունենային ղեկավար գործիչներ, ովքեր լեզեոնականներին դուրս կբերեին Ֆրանսիայի դեմ:

Պաղեստինում, Սիրիայում և Միջագետքում միացած կամավորներ

Միջագետքում Ֆրանսիայի հյուպատոս Ռուփն ցանկանում էր զինվորագրման կոմիտե ստեղծել նաև Բաղդադում: Սակայն տեղի բրիտանական իշխանությունները բավական կոշտ պատասխանեցին, որ այնտեղ Արևելյան լեզեոնին զինվորագրման ենթակա հայեր այլևս չկան, քանի որ ռազմագերիներին արդեն ուղարկել են, իսկ տեղաբնիկ հայերը ծառայության էին անցել իրենց մոտ¹:

1917թ. նոյեմբերի 17-ին Ռուփն ԱԳ նախարար Լ. Բարտուլին տեղեկացրեց, որ Բաղդադի հայկական կոմիտեն դժգոհ է զինվորագրման ընթացքից, քանի որ բրիտանացիների դրդմամբ կամ նրանց առաջացրած խոչընդոտների պատճառով հայերից շատերը հարժարվել են կամավորագրվելուց: Նաև տեղեկացնում էր, որ Սինջար լեռան վրա (այժմյան Իրաքի հյուսիս-արևմուտքում, բնակեցված է հիմնականում եզդիներով) կան ավելի քան 350 մարտունակ հայ տղամարդիկ: Հայկական կոմիտեն առաջարկել էր, որևէ բանազնաց ուղարկել նրանց մոտ, որը կկարողանար նրանց համոզել մեկնելու և ապահով անցկացնել արաբական ցեղերի միջով: Մոսուլի շրջանում ևս կային նման հայեր: Նշում էր, որ բրիտանական իշխանություններն ամենուրեք խոչընդոտում են կամավորագրության աշխատանքներին²:

Արդեն 1917 թ. հոկտեմբերի կեսերից բրիտանացիները փորձում էին դասալքող ռուսական բանակի փոխարեն Հայաստան և Իրան տեղափոխել Ռուսաստանի այլ ռազմաճակատներում գտնվող 100.000-ից ավելի հայ զինվորներին, նաև ԱՄՆ-ում և այլ վայրերում հայերի կամավորագրություն իրականացնել: Բրիտանացիների նպատակն էր թույլ չտալ, որ թուրքերը մեծ ուժեր կենտրոնացնեն Միջագետքի և Պաղեստինի ճակատներում³: Նման պայմաններում բրիտանացիներն իրենք էին ուզում կամավորագրել Միջագետքում գտնվող, կռվելու ընդունակ հայ երիտասարդներին: Հետևաբար՝ նրանք ամեն կերպ խոչընդոտում էին Արևելյան լեզեոնին միանալու նպատակով արվող կամավորագրությանը:

¹ Նույն տեղում, էջ 49-51:

² Նույն տեղում, էջ 63:

³ Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 99-101:

1918 թ. հունիսի 29-ին Ռուն հեռագրեց Ա. Պիշոնին, որ հայերը դժգոհ են, որ բրիտանացիները խոչընդոտում են կամավորագրությանը, առաջարկում էր հրամանատար Սկիարդի իրավասությունների մեջ մտցնել նաև կամավորագրության հարցը, նա հույս ուներ, որ Բաղդադի թեմի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբյանի ժամանումից հետո կամավորների հարցը կարող է ավելի շահեկան վիճակում հայտնվել¹: Սակայն հարցը այդպես էլ չլուծվեց: Հոկտեմբերի 3-ին Ռուն գաղտնի հեռագրով տեղեկացրեց Ա. Պիշոնին, որ մի քանի հարյուր գաղթական հայեր խնդրում են իրենց զինվորագրել Արևելյան լեգեոնին, սակայն բրիտանացիները ամեն կերպ խոչընդոտում են²:

Բրիտանացիները 1918 թ. սեպտեմբերին որոշում են Վանից Միջագետք հասած հայ գաղթականներին զորակոչել բրիտանական վերահսկողությամբ ստեղծվելիք զորամասեր: Նրանք ցանկանում էին ստեղծել Վանի հրաձիգների գումարտակ 1,500 զինվորներով և 3 աստրական գումարտակ: 300 վանեցիներից ստեղծվում է նաև հեծելավաշտ: Բրիտանացիները նշում էին, որ հայ զինվորները գործելու են Հայաստանն ազատագրելու համար: Հայ զինվորները թուրքերի դեմ կռվեցին Իրանի Սինա-Սաքզի շրջանում: Հայկական զորամասի հրամանատարն էր Լևոն Շադոյանը: Սակայն երբ բրիտանացիները նոր համաձայնագրեր պարտադրեցին հայերին, ուր նրանց ծառայությունը երկարաձգվելու էր անորոշ ժամանակով, վանեցիները մերժեցին: Բրիտանացիները գինաթափեցին վանեցիներին և ուղարկեցին գաղթականական ճամբարներ³:

1918 թ. հոկտեմբերին Միջագետքում 807 կամավորներ պատրաստ էին միանալու Արևելյան լեգեոնին: Մուշեղ եպ. Սերոբյանը դեկտեմբերի սկզբին կրկին խնդրեց բրիտանական իշխանությունների թույլտվությունը, որպեսզի նրանք միանային լեգեոնին⁴: Սակայն նոյեմբերի 6-ին Ժ. Կլեմանսոն տեղեկացնում է Սկիարդին, որ բրիտանական հրամանատարությունը պետք է Կովկասի հայկական բանակն ուժեղացնի: Հետևաբար՝ Պարսկաստանում և Միջագետքում կամավորագրված հայերին անհրաժեշտ էր միացնել այդ բանակին և չուղարկել Արևելյան լեգեոն⁵:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 327-328:

² Նույն տեղում, էջ 378:

³ Օհանեան Ս., 1918ի Վանի վերջին նահանջը. գաղթականներու անցած ուղին, Պաքուպայի և Նահր Օմարի գաղթականները (Ակնարկ), Իրաքի հայերը գիտաժողովի նիսեր (29-31 Մայիս 2017), Բեյրութ, Haigazian University Press, 2021, էջ 159-160:

⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. I, գ. 1044, թ. 2:

⁵ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 429:

Այսպիսով՝ ժամանակակից Իրաքի տարածքում կամավորագրված գրեթե 1.000 հայ կամավորներին բրիտանացիները չթույլատրեցին միանալ լեգեոնին:

1918 թ. մարտի 22-ին Երուսաղեմից 36 հայ կամավորներ, որոնց թվում նաև Ս. Հակոբ վանքի բազմաթիվ միաբաններ, մեկնում են Կիպրոս: Դա մեծ խանդավառություն էր առաջացրել Երուսաղեմի հայկական գաղութում: Ժ. Պիկոն հիացած էր այդտեղի ու Եգիպտոսի հայերի ոգևորությամբ, եռանդով, համերաշխությամբ ու մարտնչելու ձգտումով: Ժ. Պիկոն պատրաստվում էր մեկնել բրիտանացիների կողմից նոր ազատագրված Անդրհորդանան և այլ տարածքներ, որպեսզի տեղի հայ գաղթականներից Արևելյան լեգեոնի համար կամավորներ հավաքագրի¹: Ապրիլին Երուսաղեմի հայ գաղթականներից ևս 100 կամավորներ միացան լեգեոնին²:

Դամասկոս տարագրված շուրջ 60 հայ երիտասարդներ, մեծամասամբ ուրֆացիներ, 1918 թ. սկզբին որոշում են գաղտնի հեռանալ և միանալ Հայկական լեգեոնին կամ Կովկասի հայկական ուժերին: Նրանք զենք են հայթայթում և 1918 թ. մարտին գաղտնի հեռանում են Լիբանանի ուղղությամբ: Հաղթահարելով անապատի դժվարությունները՝ նրանք միանում են Էմիր Ֆեյսալին: Ապա՝ շուրջ մեկ ամսվա դժվարին ճամփորդությունից հետո նրանք հասնում են Ազապա, որտեղից Պորտ Սայդի վրայով հուլիսին մեկնում են Կիպրոս և կամավորագրվում Հայկական լեգեոնին³:

1918 թ. նոյեմբերի 25-ին Զահլեից Դամասկոս են հասնում թուրքական բանակի մոտ հարյուր հայ նախկին զինվորներ, որոնք ցանկություն են հայտնում կամավորագրվել Հայկական լեգեոնին: Նրանց ուղարկում են Ադանա և ընդգրկում ոստիկանական ուժերի մեջ⁴:

Գումարականների կազմավորումը և մարզումը

Եգիպտոսում ֆրանսիական ռազմական առաքելության ղեկավար Է. Բրեմոնը 1917 թ. փետրվարի 12-ին Ա. Բրիանին ուղարկած գաղտնի նամակում իր հիացմունքն էր հայտնում Հայկական լեգեոնի կազմավորման գործում Լ. Ռոմիոյի կատարած աշխատանքի մասին: Նշում էր, որ իր բոլոր սպասելիքները գերազանցված են: «Հրամանատար Ռոմիոն իր ջանադրության, խորաթափանցության և համառության շնորհիվ կարողացել է հայերի

¹ Նույն տեղում, էջ 213:

² Նույն տեղում, էջ 242:

³ Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Անթիլիաս, 2014, էջ 931-939:

⁴ Պօղոսեան Յ., Հաճընի ընդհանուր պատմությունը, էջ 599:

շրջանում միասնականություն հաստատել: Նորակոչիկները ժողովվում են ամեն օր՝ համակված, ինչպես ես կարողացա դրանում համոզվել, գերազանց տրամադրվածությամբ: Դա ամրակազմ, խելացի ժողովուրդ է, որից շատ լավ զորք կկազմավորվի մեր ղեկավարության ներքո: Հրամանատար Ռոմիոն շուտով կունենա մի լավ գումարտակ, որի ազդեցությունն ահռելի կլինի: Մարտի 1-ից նա կկարողանա իմ կողմից Կաստելորիգո ուղարկված փոքրաքանակ, հանպատրաստից կազմված ստորաբաժանումը փոխարինել Արևելյան լեգեոնի հիանալիորեն մարզված հետևակային դասակով: Եվ դա միայն սկիզբն է»¹, - գրում էր Է. Բրեմոնը:

Մարտի 1-ին Լ. Ռոմիոն կրկին ռազմական նախարարին առաջարկեց բարձրացնել լեգեոնականների աշխատավարձը՝ ամենօրյա 2 ֆրանկի փոխարեն 2,5 ֆրանկ: Ժ. Դեֆրանսը մարտի 14-ին խնդրեց Ա. Բրիանին, որպեսզի նա միջնորդի ռազմական նախարարի մոտ՝ ընդունելու Լ. Ռոմիոյի առաջարկը²: 1917 թ. հոկտեմբերի 11-ին ռազմական նախարար Պ. Պենլենն հրամանագիր ստորագրեց, որով սահմանվեցին Արևելյան լեգեոնի հայ և սիրիացի զինվորների, նրանց ընտանիքների նպաստները³: Դրանով աշխատավարձի չափը բարձրացվեց 2,5 ֆրանկի: Սակայն դա նույնպես բավական ցածր էր Ֆրանսիայում ընդունվածից: Նույնիսկ ալժիրցիները ստանում էին ավելի բարձր՝ 4 ֆրանկ⁴:

Պետք է նշել, որ մեծապետական հովերով տարված ֆրանսիացի հրամանատարներից շատերը վերևից էին նայում հայ լեգեոնականներին, վատ էին վերաբերվում նրանց, փորձում էին ազգային արժեքները մեղցնել կամավորների մոտ: Հայերի արժանապատվությունը վիրավորող ֆրանսիացիներին պատժելու փոխարեն պատժում էին բողոքողներին: Ձինվորական կերակուրը նույնպես բավական վատ էր, քանի որ պաշտոնյաները գրպանում էին գումարները, իսկ ուտելիքի որակից բողոքողներին պատժում էին: Լեգեոնականների աշխատավարձերը, չնայած որոշ չափով բարձրացվեց, սակայն դա բավական ցածր էր ֆրանսիացիների աշխատավարձից:

Սակայն լեգեոնականները դիմանում էին այդ փորձություններին, համբերում ու մարզվում էին, քանի որ ինչպես նշում է կամավորներից Ռուբեն

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. I, էջ 439:

² Նույն տեղում, էջ 456:

³ Նույն տեղում, հ. II, էջ 48:

⁴ ՀԱԱ, ֆ. 430, ց. I, գ. 784, թ. 2-4:

Հերյանը նրանք «միակ մէկ նպատակ կը հետապնդեն, այն է. հայու ազատագրութիւնը»¹:

Հայկական լեգեոնին անդամագրվելու հարցում եղած ոգևորության մասին պատմաբան Շ. Թորոսյանը գրում է. «Հայ ազգային պատվիրակության կոչով լեգեոնի դրոշի տակ էին համախմբվել հասարակական-քաղաքական տարբեր ուղղությունների և սոցիալական տարբեր խավերի պատկանող, բայց միևնույն ցանկությամբ ու նպատակով համակված հազարավոր երիտասարդներ: Աշխարհի զանազան կողմերից եկած ու հազարավոր կիլոմետրեր ճամփա կտրած հայ երիտասարդությանը միավորել էր թուրքական բռնակալության տակ հեծող հայրենիքի ու բազմատանջ ժողովրդի ազատագրության նվիրական նպատակը»²:

Մուսալեոցիներից, եգիպտահայերից և ռազմագերիների առաջին խմբից 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին կազմավորվեց առաջին գումարտակը: Ամերիկահայ կամավորներից 1917 թ. երկրորդ կեսին ձևավորվեց երկրորդ գումարտակը: Երրորդ գումարտակը ևս կազմավորվեց Կիպրոսում 1917 թ. վերջերին և 1918 թ. սկզբին՝ ամերիկահայերից, Պաղեստինում բրիտանացիներին անձնատուր եղած հայ ռազմագերիներից և տարագիրներից:

Ամերիկայի բարեկեցիկ կյանքին սովոր կամավորների համար բավական դժվար էր անմիջապես վարժվել զինվորական կյանքի դժվարություններին: Սակայն նրանք երկար ու դժվարին ճանապարհ էին կտրել հայրենակիցների վրեժը լուծելու և հայրենիքը թուրքական դժնդակ լծից ազատագրված տեսնելու նպատակով: Այդ վեհ գաղափարը նրանց ուժ էր տալիս համակերպվելու բոլոր գրկանքներին:

Տ. Պոյաճյանը, նկարագրելով Կիպրոսի ճամբարում գտնվելու առաջին օրը, գրում է. «Զինուոր էինք ու զինուորի պէս պիտի շարժէինք. հրամանի պիտի անսայինք, կարգապահ պիտի ըլլայինք եւ ուրիշներու ալ կարգապահութեան պիտի հսկէինք: Մեզի տուին հրացան, նիզակ, համազգեստ, կօշիկ, գուլպա եւ բուրդէ հիւսած վերմակներ,- պաթանիա: Երկինքն ունէինք մեր տան առաստաղը, իսկ երկիրը՝ մեր մահճակալը: Հոս պիտի մարզուէինք, թրծուէինք, կարծրանայինք, մարմնով ու սրտով, որպէս զի կարենայինք թշնամին դիմագրաւել առանց երկիւղի, առանց վարանումի: Վրէժը

¹ Նույն տեղում, թ. 5:

² Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 60:

բաարար չէր յաղթանակ ապահովելու համար: Անգուսպ եւ անսանձ քաջութիւնը վտանգաւոր փութկոտութիւն միայն պիտի հարկադրէր մեզի: Մեր բոլոր ուժերը,- հոգեկան, մտային ու ֆիզիքական, - համադրուելու էին արկածախնդրութիւնէ խուսափելու համար: Ու այդ պիտի սորվէինք զինուորական կարգապահ մարզանքով եւ ուսուցումով: Ընդունեցինք այդ բոլորը եւ պատրաստ էինք յանձնառու ըլլալու ամէն զրկանքի, տոկալու ամէն դժուարութեան, կը բաւէր որ այդ ուղիով առաջնորդէին մեզ մեր Ֆրանսացի պաշտօնեաները»¹:

Բ գումարտակի Բ վաշտի հրամանատար, հարյուրապետ Ազանին, նոր ժամանած ամերիկահայերին դիմելով, զգուշացրել էր, որ «զինուորական կեանքի մէջ դժուարութիւններ անխուսափելի էին, թէ ճշմարիտ զինուորական ծառայութեան նպատակն էր անհատին մէջ զօրացնել դիմադրական ուժ, տոկունութիւն, ինքնավստահութիւն, անակնկալներ դիմագրաւելու պատրաստութիւն, քաջութիւն, եւ ինչ որ կարեւորագոյնն էր, շեշտեց ան, հրամանատարներու հանդէպ վստահութիւն, յարգանք եւ անվերապահ հնազանդութիւն»²:

Կամավորներն առաջին հերթին պարտավոր էին կառուցել իրենց ճամբարը՝ վրանների համար քարե հիմք, ճաշարան, խոհանոց, մթերանոց և այլ վարչական շինություններ: Շատերի համար դա անհասկանալի էր, քանի որ նրանք եկել էին մարտնչելու, այլ ոչ թե շինարարություն անելու: Սակայն ստիպված էին համակերպվել: Անհնազանդություն ցուցաբերելու դեպքում աքսորում էին Թունիս՝ տաժանակիր աշխատանքի: Իհարկե, դա լուռ դժգոհություններ էր առաջացնում կամավորների մոտ, որոնք ձգտում էին օր առաջ մեկնել մարտադաշտ:

Զինվորական կյանքին ու կարգապահությանը ծանոթ էին Կովկասի կամավորական ջոկատներում, ֆրանսիական Արտասահմանյան լեգեոնում և թուրքական բանակում ծառայած կամավորները: Սակայն մեծամասնությանը անծանոթ էր դա, և սկզբնական շրջանում բավական դժգոհություններ եղան:

Կամավորներից Խորեն քահանա Աճեմյանը իր հուշերում գրում է. «Շատ պէտք ունիք սորվելու զինուորական օրէնք եւ կարգապահութիւն, որոնցմէ զուրկ էինք դարերէ ի վեր»³:

¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 62:

² Նույն տեղում, էջ 63:

³ Աճեմեան Խ., էջեր կամաւորի օրագրէս, էջ 54:

1917 թ. հոկտեմբերի 6-ին Ապահին ուղարկած նամակում լեգեոնի ոստիկաններից Հարություն Ներկիզյանը գոհունակություն էր հայտնում կամավորների կազմից, որոնց թիվը օր օրի ստվարանում էր ԱՄՆ-ից եկած նորեկներով: Նշում էր, որ վատ պահվածք ունեցողներ էլ կային, որոնց ինքնությունն ու վարքը անհրաժեշտ էր ուղարկելուց առաջ ճշտել¹:

Հետզհետե կամավորները սովորեցին զինվորական կարգապահությանն ու դժվարություններին, իսկ շինարարական աշխատանքներն ավարտելուց ու ռազմական ուսուցումը սկսելուց հետո նրանց մոտ դժգոհությունները գրեթե վերացան: Տողանցքի ու շարայինի ընթացքում հայ զինվորները երգում էին հայկական հայրենասիրական երգեր՝ «Դարձյալ փայլեց», «Հեռավոր երկիր», «Ձայն մը հնչեց էրզրումի հայոց լեռներեն», «Տավորիկի զավակ եմ քաջ», «Իգեն հայեր» և այլն²: Միակ բանը, որից դժգոհ էին, այն էր, որ ամիսներ տևող մարզումներից հետո հետաձգվում էր նրանց մարտադաշտ մեկնելը, և անհայտ էր այդ բաղձալի օրը:

Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչները տոներին այցելում էին լեգեոնականներին, նրանց նվերներ էին բաժանում, որը ոգևորում էր կամավորներին, քանի որ տեսնում էին, որ իրենց հիշում և հարգում են³: Լեգեոնականների առօրյան ավելի տանելի դարձնելուն ամեն կերպ աջակցում էին նաև եգիպտահայ կանայք և աղջիկները: Նրանք նամակագրական կապ էին հաստատել կամավորներից շատերի հետ, ժամանակ առ ժամանակ ուղարկում էին փոքրիկ նվերներ: Դա բարձրացնում էր ընտանիքներից հեռու գտնվող երիտասարդներին տրամադրությունն ու ոգին: Լեգեոնականները նրանց կոչում էին «Մարե»: Այդ կանանց մեջ մարտիկները տեսնում էին իրենց մայրերին ու քույրերին⁴:

Կուսակցականությունը լեգեոնում գրեթե դեր չէր խաղում: Զինվորների մեծամասնությունը որևէ կուսակցության անդամ էր, սակայն ծառայության ընթացքում բոլորը գիտակցում էին իրենց վեհ նպատակը և կուսակցական բանավեճեր գրեթե տեղի չէին ունենում: Ապակուսակցական մթնոլորտի ստեղծման գործում կարևոր դերակատարություն ունեցան քաղաքական ուժերի ղեկավարների և հայ հրամանատարների ճիշտ գործունեությունը:

¹ ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 157, թ. 1-2:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 71:

³ Աճէմեան Խ., նշվ. աշխ., էջ 64:

⁴ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 82:

Լեյտենանտ Ջոն Շիշմանյանը հետևյալ խոսքերով էր խրատում լեգեոնականներին. «Տղաք, նախ եւ առաջ պէտք է անհունօրէն հպարտ զգանք հայ ծնած ըլլալնու համար: Հոգ չէ թէ բարեկամներ կամ թշնամիներ ինչպիսի համարում ունին մեր ազգին վրայ: Կը բաւէ որ մենք, իբր զինուորներ, անթերիօրէն կատարենք մեր զինուորի մեծ ու դժուարին պարտականութիւնները: Բանակին մէջ դասակարգային խրամներ պէտք չէ որ բացուին:

Զինուորը որեւէ կուսակցութեան չի պատկանիր: Զինուորին կուսակցութիւնը զինք ծնող ազգն է: Զինուորը դասակարգային դրօշակ չունի եւ պէտք չէ որ ունենայ: Զինուորը առաջնորդող դրօշակը միայն եւ միայն բովանդակ ազգութեան խորհրդանիշը իր ծալքերուն մէջ խտացնող ազգային դրօշն է»¹:

Կիլիկիայում կամ Սիրիայի հյուսիսում նոր ռազմաճակատ բացել դաշնակիցներն այդպես էլ չհամարձակվեցին: Հետևաբար՝ Արևելյան լեգեոնը մարզումների համար բավական երկար ժամանակ ունեցավ: Թուրքերից հնարավորինս արագ վրեժխնդիր լինելու կամավորների ձգտումը իրականություն չէր դառնում: Ամիսներն անցնում էին, սակայն լեգեոնը ռազմաճակատ մեկնելու հրաման չէր ստանում: Անհասկանալի սպասումը, միօրինակ ու տաղտկալի կյանքն արդեն հոգնեցրել էր լեգեոնականներին: Սկզբնական շրջանի խանդավառությունը հետագա ամիսներին բավական պակասել էր: Դժգոհությունների տեղիք էին տալիս նաև ֆրանսիացի սպաների պահվածքը՝ կոպիտ վերաբերմունքը, տարբեր տոների առթիվ կամավորներին համայնքներից ուղարկված նվերների զգալի մասի գրպանումը:

Անդրադառնալով Հայկական լեգեոնի բնույթին, դերին ու նշանակությանը՝ լեգեոնի սպաներից Վահան Փորթուգալյանը գրում է. «Հայկական Լեգեոնը դարերէ ի վեր առաջին հայկական զինուորական ոյժը եղաւ որ կազմակերպուեցաւ իբր կանոնաւոր բանակ, *պետական* սկզբունքներու հիման վրայ: ... Հայ ժողովուրդի համայնական ոգիի (*esprit collectif*) զարգացման տեսակէտէն ինքն ըստ ինքեան արդիւնատու ըլլալու կոչուած նորութիւն մ'էր չորս հազար հայ երիտասարդներու հաւաքումը որպէս օրինաւոր և օրինապահ բանակ, անոնց զինուորական դաստիարակութիւնը ըստ կանոնաւոր բանակներու մեթոտներուն: Առանց դիտումի չէ որ կը գործածենք «դաստիարակութիւն» բառը: Զինուորական պատրաստութիւնը, հակառակ մեր մէջ տարածուած գաղափարին, չի կայանար այնչափ զինավարժական դիրքուսանելի դասերուն մէջ: Ամեն մարդ կրնայ անձնապէս սորվիլ և կատարեալ

¹ Նոյն տեղում, էջ 88:

կերպով իրացնել կարճ ատենի մէջ զանազան զէնքերու գործածութիւնը: Բայց այդ չի նշանակեր դեռ որ զինուոր մ'է այն. և նման մարդկանց պարզ համախմբումը բանակ մը չի կազմեր և բանակի մը տեղ չի կրնար բռնել: Աւելին կ'ըսենք, քանի որ փորձը քանիցս ապացուցած է այդ, այդ համախմբումը անպէտք և ուրեմն վնասակար ոյժ մը կը դառնայ յաճախ: Լաւագոյն պարագային անկարող ապահովել ժողովուրդի մը տնական պաշտպանութիւնը: ... Ճշմարիտն ըսելու համար, առանց դժուարութեան չէ որ մեր զինուորներէն ոմանք, որոնք վարժուած էին մեր միջավայրերու անիշխանական և անձնապաշտ մտածելակերպին, կ'ընդունէին կարգապահութեան արժէքն ու անհրաժեշտութիւնը: Հայդուկային գրականութեամբ ոգևորուած մարդիկ բնականաբար յուսախաբ կ'ըլլային տեսնելով թէ բանակի կեանքը չի համապատասխաներ իրենց երևակայածին և կազմուած է ամենօրեայ՝ կամք, աշխատանք պահանջող ծանր գործերով, ուրիշ խօսքով՝ թէ զինուորը կրնայ թերևս օր մը հերոս մը դառնալ բայց պէտք է ամեն օր քաղաքացի ըլլայ: Կամաց կամաց բոլորն ալ կ'ըմբռնէին թէ մտքի ու մարմնի իրենց հարկադրուած կրթութիւնը յաղթութեան գլխաւոր գրաւականը կը ներկայացնէր...»¹:

Իսկ Տ. Թեքեյանը հպարտութեամբ նշում է. «Հայկական Լեգեոնը տվեց կատարյալ զորամիավորում լինելու ապացույցը, հերոսաբար կռվեց թե՛ Սիրիայի և թե՛ նախնիների բնօրրանում»²:

1918 թ. փետրվարի 24-ին Մոնարկայում մեծ հանդիսավորությամբ նշվեց Վարդանանց տոնը: Ներկա էին երեք գումարտակները, ամբողջ հրամանատարական կազմը, կղզու բրիտանական հրամանատարությունը և հայ համայնքի ներկայացուցիչները: Պատարագիչն էր Վաղարշակ վարդապետ Արշակունին³: Շքեղ տոնակատարությունը բավական բարձրացրեց հայ մարտիկների ոգին և տրամադրությունը:

Ֆրանսիացի Գուստավ Գոթհուն «Ֆրանսիան Սիրիայում և Կիլիկիայում» աշխատության մեջ մեծ գովեստով է խոսում հայ զինվորների մասին. «Մտացի, կրթեալ և ընդհանրապէս քաղաքային կեանքին մէջ հաստատուն դիրք գրաւող անձերէ բաղկացած, և արագ հրահանգումի ընդունակ էր ան.

¹ Կամաւորը (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), Գահիրէ, էջ 36-37:

² Թեքեյան Շ., նշվ. աշխ., էջ 63:

³ Աճէմեան Խ., էջեր կամաւորի օրագրէս, էջ 70:

զենքերու գործածութեան և ռազմական արուեստին սիրահար՝ հպարտ էր ան իր համազգեստին համար»¹:

Լեզեոնի կայացման գործում անուրանալի դերակատարություն ունեցան հայազգի սպաները: Նրանցից շատերն ավարտել էին ամերիկյան, ֆրանսիական և թուրքական ռազմական հաստատություններ: Ֆրանսիացիները հիմնականում խուսափում էին նրանց տալ բարձր սպայական կոչումներ, նույնիսկ ԱՄՆ-ի և թուրքական բանակի նախկին սպաներին ավելի ցածր կոչումներ էին տալիս: Չնայած դրան՝ հայ սպաները պատրաստակամ էին ծառայելու Հայկական լեզեոնում, որպեսզի կայանար ապագա ինքնավար Կիլիկիայի բանակի միջուկը համարվող այդ զորամասը:

Լեզեոնի հայ սպաները և հոգևորականներ

Լեզեոնի հիմնական սպայակազմը ֆրանսիացիներ էին: Դրանով Ֆրանսիան ցանկանում էր վերահսկողության տակ պահել հայերին ու սիրիացիներին, վախենալով ապագայում նրանց ինքնավարության ձգտումներից: Սակայն, հետզհետե, լեզեոնում ծառայության վերցվեցին հայ սպաներ, քանի որ նրանք ավելի լավ էին հասկանում հայ զինվորին, կարողանում էին ամրապնդել կարգապահությունը: Լեզեոնին կամավորագրվեցին նաև հայ հոգևորականներ, որոնք ծառայության վերցվեցին զինվորների հոգևոր պահանջմունքները բավարարելու համար:

Հայ սպաները լեզեոն մտան տարբեր ճանապարհներով: Ֆրանսիական բանակում ծառայող հայ զինվորների ու սպաների զգալի մասը ցանկություն հայտնեց միանալ հայկական զորամասին, և նրանց մի մասին ֆրանսիական իշխանությունները տեղափոխեցին լեզեոն: Ֆրանսիական բանակից եկած հայ սպաներն ունեին այն բոլոր իրավունքները ինչ՝ ֆրանսիացիները: Միջազգետքում, Պաղեստինում և այլ վայրերում անգլիացիների կողմից գերված թուրքական բանակի հայ սպաների ու զինվորների մեծամասնությունը նույնպես ուրախությամբ զինվորագրվեցին լեզեոնին: Բավական մեծ թվով ամերիկահայ սպաներ ցանկություն հայտնեցին կամավորագրվել Արևելյան լեզեոնին: Սակայն ԱՄՆ բանակի նախկին հայ սպաներին ֆրանսիական իշխանությունները տալիս էին ավելի ցածր զինվորական կոչումներ, չէին խրախուսում նրանց կամավորագրությունը, փորձում էին սահմանափակել նրանց թիվը: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ ֆրանսիացիները վախենում էին ԱՄՆ ազդեցության մեծացումից լեզեոնում, քանի որ

¹ Քելեշեան Մ., Սիւ-Մատեան, էջ 592:

մտավախություն ունեին, որ ԱՄՆ-ը նույնպես ցանկանում է տիրել Կիլիկիային:

Նաև բազմաթիվ հայ հոգևորականներ ցանկություն հայտնեցին զենք վերցնելու ցեղասպան թուրքական պետության դեմ: Ֆրանսիական իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին բարձրաստիճան հայ հոգևորականների կամավորագրությանը, քանի որ նրանց ներկայությունը, հեղինակությունը կարող էին կամավորների մոտ ամրապնդել ազգային ձգտումները: Դրանով էր պայմանավորված, որ լեզեոնում ծառայության վերցվեցին հատուկենտ հոգևորականներ:

Հայ սպաներին ու հոգևորականներին մասնակցեցին Արևելյան լեզեոնի կազմավորմանն ու կայացմանը, իրենց նպաստը բերեցին Կիլիկիայի ազատագրմանը, ինչպես նաև հետագայում զգալի ներդրում ունեցան քեմալականների դեմ կազմակերպված ինքնապաշտպանական կոիվներում:

Վաղարշակ վրդ. Արշակունին ծնունդով զեյթունցի էր: 1909 թ. Ձեյթունի հոգևոր առաջնորդն էր, և նրա ջանքերով էր, որ Մարաշը խուսափեց ջարդերից: Նույն թվականին մեկնել է ԱՄՆ, իսկ 1917 թ. տեղեկանալով, որ ֆրանսիացիները Կիպրոսում հայկական կամավորական բանակ են ստեղծում, կամավորագրվել էր Արևելյան լեզեոնին: Նա նշանակվեց լեզեոնի հոգևոր առաջնորդ, ստացավ լեյտենանտի աստիճան¹:

Աբրահամ Տեր-Գալուստյանը Մուսա լեռան ինքնապաշտպանության գործուն կազմակերպիչներից էր, նրա տանն էր հրավիրվել խորհրդակցություն, ուր որոշվեց դիմել ինքնապաշտպանության²: Ամրակազմ, եռանդուն մարդ էր, սիրված մուսալեռցիների կողմից: Արևելյան լեզեոնի հրամանատար Լուի Ռոմիոյի առաջարկով նշանակվել է լեզեոնի քահանա, ստացել է լեյտենանտի աստիճանի³:

Խորեն (Գրիգոր) ավագ քահանա Աճեմյանը ճանաչված հոգևորական, հրապարակախոս, մանկավարժ, հասարակական գործիչ էր: 1912 թ. մեկնել էր ԱՄՆ: 1917 թ. հոկտեմբերին կամավորագրվել է Հայկական լեզեոնին, մասնակցել Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: Ծառայել է մինչև լեզեոնի կազմալուծումը՝ 1920 թ.: Աշխատակցել է «Հայ-

¹ Պարթևեան Ա., Արարա: Հայկական լեզեոնը, Իզմիր, 1919, էջ 9:

² <http://www.mousaleranjar.com/arm/default.asp?menuID=73&parentID=45>:

³ Պեյլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Առաջաբանը Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմ. Վ. Պողոսյանը, Կ. Ա, Երևան, 2005, էջ 411-412:

րենիք» և «Ասպարեզ» պարբերականներին: Հետագայում գրել է հուշագրություն¹, որը հանդիսանում է Հայկական լեզեոնի մասին կարևոր սկզբնաղբյուրներից մեկը:

Հակոբ վարդապետ Թաճյանը (Կ. Պոլիս, 1877-13.02.1935, Երուսաղեմ) հոգևոր գործիչ էր, վարդապետ, մանկավարժ: Սովորել է Կ. Պոլսի Կետիկ փաշայի ազգային վարժարանում: Որոշ ժամանակ եղել է Գալաթիայի Կարմիր վանքի առաջնորդ Եղիշե վրդ. Գալֆայանի փոքրավորը: 1906 թ. դարձել է Երուսաղեմի միաբան, Հարություն պատրիարք Վեհապետյանի կողմից ձեռնադրվել սարկավագ, դաստիարակ է աշխատել քաղաքի աշխարհիկ դպրոցում: 1913 թ. Եղիշե եպ. Չիլինկիրյանի կողմից ստացել է քահանայության կարգ և արեղայության վեղար: Վարդապետական գավազան ստացել է պատրիարք Եղիշե Դուրյանից: Երուսաղեմում վարել է տեսչական և ժամարարական պաշտոններ: 1918 թ. կամավորագրվել է Հայկական լեզեոնին, դարձել տասնապետ, մասնակցել է Կիլիկիայի ազատագրմանը, 1920 թ. Մարաշի ինքնապաշտպանությանը: Թաղված է Երուսաղեմի Ս. Փրկիչ գերեզմանատանը²:

Տիրան (Շառլ) Թեքեյանը (Մարսել, 1887-1967, Մարսել) ծնվել է կեսառացի բարեկեցիկ վաճառականի ընտանիքում: Ճանաչված գրող Վահան Թեքեյանի զարմկն էր: Վենետիկում Խ. Արսեն Ղազիկյանի մոտ հայերեն է սովորել, ավարտել Մարսելի համալսարանը, ստացել գրականության և իրավաբանության դիպլոմներ: Բանակ զորակոչվելուց հետո դարձել է ծովային սպա: Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է Միջերկրականի արևելքում՝ «Դեսեքս» ռազմանավի վրա: Մասնակցել է մուսալեոցիների տեղափոխմանը Պորտ Սայդ, մուսալեոցի երիտասարդների ռազմական մարզումներին, հայ կամավորների հետ դիվերսիոն գործողություններ է իրականացնել Կիլիկիայի ծովափնյա շրջաններում: Հայկական լեզեոնի կազմավորման շրջանում աջակցել է հրամանատար Լ. Ռոմիոյին: Արժանացել է ֆրանսիական Պատվո լեզեոնի ասպետի աստիճանի և Պատվո լեզեոնի սպայի տիտղոսի: 1919 թ. Մարսելում ֆրանսերենով հրատարակել է «Մուսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր» հուշագրությունը (հայերեն թարգմանությամբ՝ Երևան, 2002), որը կարևոր և հավաստի սկզբնաղբյուր է մուսալեոցիների պայքարի, Պորտ Սայիդում նրանց ռազմա-

¹ Աճեմեան Խ., Էջեր կամարի օրագրես, Պէյրոյթ, 1967:

² «Սիոն», Մարտ, 1935, թիւ 3, էջ 100:

կան մարզումների, Արևելյան լեգեոնի կազմավորման մասին: Առաջին աշխարհամարտից հետո դարձել է Մարսելի Հայ լեգեոնական միության նախագահ, Ֆրանսիական բանակի հայ կամավորականների միության պատվավոր նախագահ: Մարսելում նրա անունով անվանակոչվել է հրապարակ¹:

Քիմիական ճարտարագետ, ֆրանսիական պետական գործիչ **Վահե Սահաթճյանը** (Ալբերտ Արթուր) նույնպես Արևելյան լեգեոնի սպաներից էր: Ծնվել է 1897 թ. Մարսելում, հայրը Մարսելի Հայ ազգային միության նախագահն էր²: Աշխարհամարտի սկսվելուց հետո կռվել է Ֆրանսիայում, ապա ենթասպայի կոչումով տեղափոխվել Արևելյան լեգեոն: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, վիրավորվել, բայց մարտադաշտից դուրս չի եկել, որի համար արժանացել է պատերազմական խաչի: Կիլիկիայի ազատագրումից հետո շարունակել է ծառայությունը Հայկական լեգեոնում, 1919 թ. ստացել է լեյտենանտի կոչում³: Արժանացել է նաև իտալական մեդալների: 1919 թ. ընդունվել է Լիոնի ճարտարաբանության դպրոցը: Աշխատել է որպես քիմիական ճարտարագետ: Պաշտոնավարել է Եթովպիայում, Ջիբութիում (Արևելյան Աֆրիկա), որտեղ հիմնել է ասֆալտի և քիմիական գործարաններ, մեծ դեր խաղացել Սոմալիի պատերազմի կարգավորման գործում: Արժանացել է «Պատվո լեգեոնի» շքանշանի⁴:

Վահեի եղբայրը՝ **Վահագն Սահաթճյանը** նույնպես կամավորագրվել է Արևելյան լեգեոնին և կապրալի աստիճանով մասնակցել մարտական գործողություններին:

Լեյտենանտ **Փափազյանը** Արևելյան լեգեոն էր տեղափոխվել Ֆրանսիայի Արտասահմանյան լեգեոնից:

Վահան Փորթուզալյանը նշանավոր հասարակական-քաղաքական, մշակութային գործիչ Մկրտիչ Փորթուզալյանի որդին էր: Ծնվել է Մարսելում, նախնական կրթությունը ստացել տեղում, ապա սովորել Էջմիածնի Գևորգյան ճեմարանում⁵, Սորբոնի համալսարանում ստացել իրավաբանի դիպլոմ: Աշխարհամարտի ժամանակ միացել է ֆրանսիական բանակին, ապա՝ Արևելյան լեգեոնին: Լեյտենանտ էր, երկար ժամանակ վարել է լեգեոնի սպայակոյտի քարտուղարությունը: Մասնակցել է Արարայի ճակատա-

¹ <http://www.aztagdaily.com/archives/195253>

² Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 77:

³ Արար: Նուիրում Արարայի հինգերորդ տարեդարձին: Հրատարակություն Հայ լեգեոնական միութեան, 1923, Պոսթոն, էջ 11:

⁴ Բախչինյան Ա., Հայագի գործիչներ, Երևան, 2002, էջ 393:

⁵ Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 41-42:

մարտին, արժանացել շքանշանի¹: Կիլիկիայում եղել է Զինվորական ատյանի փաստաբան, որոշ ժամանակ Սիրիայում վարել է անգլիական զորամասերի տնտեսական բաժնի ընդհանուր կառավարչությունը: 1930-ական թվականներին նշանակվել է Հալեպի Դատական բարձրագույն ատյանի նախագահ: 1947 թ. վերջնականապես վերադարձել է Ֆրանսիա: Զբաղվել է փաստաբանությամբ: Նշանավոր է դարձել հնդիկ «իշխանի» գողացած գոհարեղենի դատի ընթացքում²: Նշանակվել է Բուշ դը Ռոնի բարձրագույն ատյանի դատախազ, ապա՝ Էքս-Ան-Պրովանսի վճռաբեկ ատյանի նախագահ: Մահացել է 1974 թ.³:

Վահանի եղբայրը՝ **Լևոն Փորթուզալյանը**, նույնպես կամավորագրվել էր Արևելյան լեգեոնին, ենթասպայի կոչումով ծառայել է երրորդ գումարտակում:

Լեգեոնի լեյտենանտ **Հայկ Հրանտի Ազատյանը** միակ եգիպտահայ մտավորականն էր, որ միացավ լեգեոնին: Ուներ իրավաբանական կրթություն: Եգիպտոսի Խառը դատարաններում առևտրական գործերով փաստաբան էր աշխատել: Դարձավ լեգեոնում կարգապահական հարցերով պատերազմական ատյանի առաջ հայտնված հայ կամավորների շահերի գլխավոր պաշտպանը⁴: 1918 թ. վերջին սիրիական երկաթուղու բարձր կոմիսար է նշանակվել, որի շնորհիվ աջակցել է հայ գաղթականության վերադարձին Կիլիկիա⁵:

Ազգային-ազատագրական շարժման գործիչ, Մուսա լեռան հերոսամարտի ղեկավարներից **Պետրոս Տմլաքյանը** (գ. Խըղըրբեկ, Մուսա լեռ, 1887- 27.02.1920, Մարաշ): Հնչակյան, ապա Սահմանադիր ռամկավար կուսակցության անդամ էր: Կրթությունը ստացել էր ծննդավայրի Լատինաց վարժարանում: 1909 թ. աշխատելու էր մեկնել ԱՄՆ, անդամակցել Հնչակյան կուսակցությանը: Տիրապետում էր անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներին: 1912 թ. վերադարձել է հայրենիք, ձեռնամուխ եղել բնակչության զինման աշխատանքներին՝ ներդնելով նաև սեփական գումարները: Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից ու խմբապետներից էր:

¹ Ատանայի Հայոց պատմություն, Խմբագրեց՝ Բիզանդ. Եղիայեան, Անթիլիաս, Տպարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, էջ 430:

² Աւետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յոշամատեան եւ Զօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 502-503:

³ <http://www.aztagdaily.com/archives/195253>

⁴ Պարթեւեան Ս., նշվ. աշխ., էջ 53-55:

⁵ Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 501:

Որպես թարգմանիչ ուղեկցել է ֆրանսիական զրահանավի հրամանատարության հետ բանակցող Խաչեր Տումանյանին: Պորտ Սայիդում մասնակցել է ֆրանսիական սպաների կողմից կազմակերպված ռազմական մարզումներին: 1916 թ. զինվորագրվել է Արևելյան լեգեոնին: Ստացել է լեյտենանտի աստիճան, նշանակվել 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի հրամանատարի տեղակալ: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: 1920 թ. փետրվարի վերջին 150 կամավորներով կազմակերպել է Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցում ապաստանած հայերի պաշտպանությունը, ուր և 27 կամավորների հետ զոհվել է¹:

Մովսես Աբրահամի Տեր-Գալուստյանը (գ. Յողուն Օլուք, Մուսա լեռ, 14.10.1895-14.11.1984, Բեյրութ) գրող, մանկավարժ, ազգային-հասարակական գործիչ էր, ՀՅԴ անդամ: Կրթություն ստացել է ծննդավայրի Խրիմյան վարժարանում, ապա՝ Հալեպում: Վերադառնալով գյուղ՝ զբաղվել է ուսուցչությամբ: Անանիա Վիրավորյանի հետ հիմնել է Մուսա լեռան ՀՅԴ կառույցը: 1915 թ. Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչներից էր, ընտրվել է զինվորական մարմնի ղեկավար: Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի հերոս Բազրաստյանի նախատիպն է: Պորտ Սայիդում 1916 թ. վերջին կամավորագրվել է Արևելյան լեգեոնին, ստացել լեյտենանտի կոչում: Մասնակցել է Արարայի ճակատամարտին, Կիլիկիայի ազատագրմանը: Եգիպտոսում աշխատակցել է «Հուսարեր» թերթին՝ Ա. Լեյլանի ծածկանունով: 1928 թ. հրատարակել է առաջին գրքույկը, որը մեծ հետաքրքրություն է ստեղծել իր անձի շուրջը: Ֆրանսիական իշխանությունների կողմից նշանակվել է Մուսա լեռան շրջանի կառավարիչ՝ երկար տարիներ մեծապես օգտակար հանդիսանալով տեղի հայությանը: Ալեքսանդրետի գավառի հայության կողմից ընտրվել է Սիրիայի խորհրդարանի պատգամավոր: 1939 թ. Ալեքսանդրետի գավառը Թուրքիային բռնակցվելուց հետո մուսալեռցիները հարկադրաբար լքեցին իրենց հայրենի գյուղերը: Նա մեծ աշխատանք տարավ մուսալեռցիներին նոր ապաստան ապահովելու համար և դարձավ Լիբանանում Այն-ճար բնակավայրի հիմնադիրը: 1939 թ.-ից նրա գործունեության դաշտը հիմնականում Լիբանանն էր, ուր երկար տարիներ ընտրվել է խորհրդարանի պատգամավոր (1943-1972): Այդ տարիներին անդամակցել է ՀՅԴ գերագույն մարմիններին, Համազգայինի կենտրոնական վարչությանը: Մեծ դերակատարություն է ունեցել լիբանանահայ գաղութի կազմավորման և զար-

¹ <http://www.mousaleranjar.com/arm/default.asp?menuID=81&parentID=46>: Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 4, Երևան, 2003, էջ 756:

գացման մեջ: Մահացել է 1984 թ., Բեյրութում, թաղվել Բուրջ Համուդի ազգային գերեզմանատանը: 1998 թ. աճյունը տեղափոխվել է Այնճար և հողին հանձնվել Մուսա լեռան հերոսներին նվիրված հուշարձան-համալիրի կողքին՝ Արթուր Զաքմաքճյանի կերտած կիսանդրու տակ¹:

Ռուբեն Հերյանը (Թոքատ, 1869-07.07.1921, Կահիրե) ճանաչված հասարակական-քաղաքական գործիչ էր, հրապարակախոս, Հնչակյան, ապա՝ Ռամկավար կուսակցության անդամ: 1883 թ. ավարտել է Թոքատի ազգային վարժարանը: 1897 թ. մարտի 7-ին, երբ թուրքերը փորձել են ջարդ կազմակերպել Թոքատում, հանդիսացել է ինքնապաշտպանության գլխավոր կազմակերպիչներից: Իշխանությունների հետապնդումների պատճառով ստիպված է եղել հեռանալ Կ. Պոլիս, ապա՝ ԱՄՆ: Նյու Յորքում զբաղվել է ծխախոտի առևտրով: 1913 թ. դեկտեմբերի 7-ին Նյու Յորքում հիմնված «Կրթասիրաց միություն Թոքատի» կազմակերպության հիմնադիրներից էր և վարչական խորհրդի անդամ: Կարևոր դերակատարություն է ունեցել Հայկական լեգեոնի համար ամերիկահայերի կամավորագրության կազմակերպման գործում: 1917 թ. մեկնել է Եգիպտոս՝ նպատակ ունենալով գնալ Միջագետքի անապատները՝ հայ որբերին հավաքելու համար, սակայն հաջողություն չունեցավ և միացավ Հայկական լեգեոնին: Ստացել է կապրալի աստիճան: Եղել է լեգեոնի «Ձեյթուն» ռազմադաշտային հիվանդանոցի տնօրենը²: 1918 թ. վերջին Եգիպտոսից մեկնել է Սիրիա՝ որպես ՀԲԸՄ-ի, Նպաստամատուցի և Միացյալ Որբախնամի ներկայացուցիչ: 1918-1919 թթ. Միջագետքի և Սիրիայի անապատներում բազմաթիվ վտանգներ հաղթահարելով՝ փրկել է բազմաթիվ հայ որբերի ու տարագիրների՝ ստանալով «Որբախույզ» տիտղոսը: 1920 թ. հաստատվել է Ադանայում: Զբաղվել է Իգմիրից և Կ. Պոլսից Կիլիկիա զենք տեղափոխելու և քեմալականների դեմ ինքնապաշտպանությունները կազմակերպելու գործով: Դյորթ Յոլի ինքնապաշտպանության ընթացքում ստանձնել է պարենավորման գործը: 1921 թ. ուղևորվել է Եգիպտոս, Փարիզ, ԱՄՆ՝ որբերի ազատագրման համար հանգանակություն կազմակերպելու նպատակով: Մերսին վերադառնալու ճանապարհին, Կահիրեում մահացել է սրտի հիվանդությունից: Օգտագործել է Ռա-Հո ծածկանունը³:

¹ <http://www.mousaleranjar.com/arm/default.asp?menuID=81&parentID=46>: Հովակիմյան Բ., Հայոց ծածկանունների բառարան, Երևան, 2005, էջ 733:

² Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 73:

³ Ալպոյաճեան Ա., Պատմություն Եդրոկիոյ Հայոց, Գահիրե, 1952, էջ 1692, 1720, 1731-1735: Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 644:

Ամերիկահայ կամավորներից **Գևորգ Թագազյանը** ծնունդով Բալուից էր: Նա մարտական փորձ էր ձեռք բերել ԱՄՆ-ում, հասել ամերիկյան բանակի կապիտանի կոչման: 1917 թ. կամավորագրվեց Արևելյան լեգեոնին, սակայն ֆրանսիական իշխանությունները նրան տվեցին կապրալի կոչում: Հաշվի առնելով մարտական անցյալը՝ նշանակվել է լեգեոնի ռազմական ոստիկանության ղեկավար¹:

ԱՄՆ բանակի կապիտան **Գարագյոզյանը** նույնպես կամավորագրվել էր Արևելյան լեգեոնին, ստացել կապրալի աստիճան²:

Զոն Շիշմանյանը ծնվել է Կալիֆորնիայում: ԱՄՆ-ում ստացել է իրավաբանական կրթություն, դարձել փաստաբան: Որպես ամերիկյան կամավոր պատերազմի սկզբին մեկնել է ֆրանսիական ճակատ, ապա՝ լեգեոն: Ստացել է լեյտենանտի կոչում: Մեծ հեղինակություն ունեցող առաջնորդ էր կամավորների համար: Արարայի ճակատամարտում աչքի է ընկել, արժանացել շքանշանի³: Կիլիկիայի ազատագրումից հետո նշանակվել է Ադանայի հայկական միլիցիայի հրամանատար⁴:

Զիմ (Պետրոս) Չանգալյանը (Տիգրանակերտ, 26.05.1879-10.05.1947, Նյու Յորք) փոքր տարիքում ընտանիքով տեղափոխվել է ԱՄՆ, ստացել ամերիկյան կրթություն, ընդունվել է ռազմական ակադեմիա, դարձել սպա: Մասնակցել է 1897 թ. Կուբայի պատերազմին, ԱՄՆ բանակի կապիտանի աստիճան է ստացել 1898 թ.⁵ ամերիկա-իսպանական պատերազմում: Ռազմական ծառայությունից հեռանալուց հետո Նյու Յորքում բարձր պաշտոն է զբաղեցրել ամերիկյան մի խոշոր ֆիրմայում, ապրել է բարեկեցիկ կյանքով: Համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո չի կարողացել անտարբեր մնալ սեփական ժողովրդի տառապանքներին: 1915 թ., հնչակյանների և ռամկավարների հանձնարարությամբ, հատուկ առաքելությամբ մեկնել է Անդրկովկաս ու Վան: Կամավորների ջոկատով հասել է Վան, Արմենակ եկարյանի հետ կազմակերպել Երկրապահ ջոկատ՝ ներդնելով իր ռազմական փորձը, որոշ ժամանակ եղել է Վանի ընդհանուր ոստիկանապետը⁶: 1917 թ. վերադարձել է ԱՄՆ: Տեղեկանալով Հայկական լեգեոնի կազմության մասին, 1917 թ. հուլիսի 9-ին առաջնորդել է նավով Մարսել մեկնող ամերիկահայ կամավորների խումբը: Լեգեոնում ստացել է լեյտենանտի աստիճան:

¹ Պարթևեան Ա., նշվ. աշխ., էջ 80:

² Պարթևեան Ա., նշվ. աշխ., էջ 78:

³ Ատանայի Հայոց պատմություն, էջ 430: Պարթևեան Ա., նշվ. աշխ., էջ 91-92 :

⁴ Ալետեան Մ., նշվ. աշխ., էջ 501:

⁵ Ալետեան Մ., նշվ. աշխ., էջ 501:

Կիլիկիայի ազատագրումից հետո փորձել է քեմալականների հարձակումների հայերին պաշտպանելու համար ինքնապաշտպանություն կազմակերպել: Հաճին օգնելու փորձի համար Կիլիկիայի ֆրանսիական կառավարիչ, գնդապետ Էդուարդ Բրեմոնը նրան հեռացրել է երկրամասից: Փարիզում Անդրանիկի հետ հանդիպելուց հետո գաղտնի վերադարձել է Կիլիկիա, զգալի ներդրում ունեցել Սսի հայ բնակչությանը անվտանգ կերպով Ադանա տեղափոխելու գործում: Կիլիկիայի պարպումից հետո վերադարձել է ԱՄՆ, մասնակցել Հայաստանի Հանրապետության համար կատարվող հանգանակությանը: ԱՄՆ-ի ՀԲԸՄ կենտրոնական վարչության նախագահին էր:

Ամերիկահայ կամավորներից **Տիգրան Պոյաճյանը** (գ. Արմուճան, Բալու, 1895 – 02.05.1975, Ուոթերթաուն, ԱՄՆ) բանասեր, հասարակական գործիչ էր: Նախնական կրթություն ստացել էր ծննդավայրում, ապա տեղափոխվել էր ԱՄՆ: Եղել է ՀԲԸՄ-ի գործոն և ղեկավար անդամներից: Աշխատակցել է ամերիկահայ պարբերականներին, հատկապես՝ «Պայքար»-ին: Հայերենից անգլերեն է թարգմանել Եղիշեի «Վարդանանց պատերազմը», անգլերենից հայերեն՝ Մորիս լա Կլակի «Ոսկի եռանկյունը», գնդապետ Բրեմոնի «Կիլիկիան 1919-1920 թթ.», Արթուր Թրեյնի «Կույր արդարությունը» և այլ երկեր, որոնք տպագրվել են ամերիկահայ մամուլում: Հրատարակել է հուշեր¹, որոնք կարևոր սկզբնաղբյուր են լեզեոնի պատմության ուսումնասիրման համար, ինչպես նաև ցեղասպանությանը նվիրված աշխատություն («Armenia the case for a forgotten genocide», 1972)²:

Լեզեոնի ամերիկահայ սպաներից էր **Վահան Զուրկենցը**:

Մանուկ Տեր-Հակոբյանը (Ալբիստան, 1894-19.09.1918, Արարա) ծնվել էր հոգևորականի՝ քահանա Տեր Մարտիրոսի ընտանիքում, սովորել Կ. Պոլսի Սկյուտարի, Կարապետյան, ապա՝ պետական «Իհթիյաթ Զապիթան» վարժարաններում: Թուրքական բանակ էր մտել որպես «միլազըմ սանի»: Դարդանելի կռիվների ժամանակ գերվել էր: Եգիպտոսի ազգային առաջնորդարանի միջոցով ազատվել էր գերությունից և Թանթայում աշխատանքի անցել Մաթոսյան ծխախոտի ընկերությունում: Լեզեոնի կազմավորման մասին լսելով, Թանթայում հավաքել է 16 հայերի և մեկնել Պորտ Սայիդ: Ստացել է սերժանտի կոչում: Որպես մարտական փորձ ունեցող զինվորա-

¹ Պոյաճյան Տ., Հայկական լեզեոնը: Պատմական Ցուցագրություն, Ուոթերթաուն, 1965, 415 էջ:

² Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Գ, Երևան, 1990, էջ 296: Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 708:

կանի, նրան հանձնարարվել է մարզել նորեկներին՝ սկզբում Պորտ Սայիդում, ապա՝ Կիպրոսում¹:

Ամասիացի **Հարություն Բալանճյանը** (Փալանճյան) լեզեոնի Ա գումարտակի բժիշկն էր, լեյտենանտ: Ավարտել էր Բեյրութի բժշկական համալսարանը: Պատերազմի ժամանակ որպես բժշկական ծառայության սպա զորակոչվել էր թուրքական բանակ, Սուեզի մոտ գերվել անգլիացիների կողմից: 1916 թ. դեկտեմբերից կամավորագրվեց լեզեոնին, մասնակցեց Արարայի ճակատամարտին, որի ընթացքում ակտիվորեն զբաղված էր վիրավորներին բուժօգնություն տրամադրելով: Զգալի ներդրում ունեցավ, Սիրիայում և Լիբանանում ռազմարշավի ժամանակ, լեզեոնում տարածված խսպանական գրիպի համաճարակի դեմ պայքարելով, և բազմաթիվ կյանքեր փրկեց: Պատերազմից հետո նշանակվել է Դյորթ Յոլի բժիշկ²:

Հակոբ Արևյանը սեբաստացի էր, ավարտել էր թուրքական զինվորական վարժարան³: Պատերազմի ժամանակ զորակոչվել էր թուրքական բանակ, գերվել անգլիացիների կողմից, ապա կամավորագրվել լեզեոնին: Սկզբում ենթասպայի, ապա լեյտենանտի կոչում ստացավ: Արարայում խիզախության համար պարգևատրվել է պատերազմական խաչով⁴:

Լեզեոնի կապրալներից էր **Հովհաննես Գույումճյանը** (Պանտրմա, 1893-19.09.1918, Արարա): Սովորել է Պանտրմայի ազգային վարժարանում: 1912 թ. մեկնել էր Կահիրե, աշխատանքի անցել Մաթոսյան ծխախոտի ընկերությունում: 1913 թ.-ից «Արարատ» մարզական ակումբի անդամ էր, հաջողակ մարզիկ: Առաջին կամավորներից էր, ով 1916 թ. դեկտեմբերին մեկնեցին Կիպրոս: Արարայի ճակատամարտում երկու անգամ վիրավորվելուց հետո հրաժարվել է թողնել մարտադաշտը, սակայն երրորդ գնդակը մահացու է եղել⁵:

Հայ սպաններից **Հակոբ Գարասեֆերյանը**, **Հարություն Եսայանը** Արարայի ճակատամարտում աչքի ընկնելու համար արժանացել են շքանշանի⁶: Լեզեոնի սպաններից էին լեյտենանտ **Անհագունին**⁷, տերիկցի մայոր **Նազա-**

¹ Արարա, էջ 30-31:

² ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 80, թ. 30: Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 78-80:

³ Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 502:

⁴ Արարա, էջ 11

⁵ Պարթևեան Ս., նշվ. աշխ., էջ 94-95:

⁶ Ատանայի Հայոց պատմություն, էջ 430:

⁷ ՀԱԱ, ֆ. 450, ց. 2, գ. 80, թ. 31:

րեթ Գլըճյանը, Արտաշես Բամբուկյանը, Կ. Գարունին, Ալեք Միհրանյանը, ակնցի Մանուկ Ռեիսյանը, դեղագործ Հրանդ Հացունին:

Պոլսեցի Մ. Երեցյանը թուրքական զինվորական համալսարան էր ավարտել, պատերազմի ժամանակ գերվել էր, ապա՝ կամավորագրվել լեզգեոնին, ստացել սերժանտի կոչում, հետագայում կարևոր ծառայություններ մատուցել Կիլիկիայում¹:

Լեզգեոնի բժիշկներից էին սպաներ Գյուլպենկյանը, Հակոբյանը, Յ. Քյուրյուկյանը, Հովհաննես Դվեթյանը²:

Այսպիսով, բազմաթիվ հայեր, սպայական տարբեր կոչումներով, մասնակցեցին Արևելյան լեզգեոնի կազմավորմանը, իսկ Կիլիկիայի ազատագրումից հետո կարևոր դերակատարություն ստանձնեցին քեմալականների հարձակումների դեմ հայ բնակչության կազմակերպած ինքնապաշտպանական մարտերում: Հետագայում հայ սպաներից շատերը տարբեր պետական պաշտոններ զբաղեցրին Ֆրանսիայում, Սիրիայում, Լիբանանում և այլ երկրներում:

¹ Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 503:

² Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 411-412:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

4.1 ԼԵԳԵՈՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայկական լեգեոնը բավական երկար ժամանակ ունեցավ մարզումների համար, քանի որ թուրքերի դեմ ռազմական գործողություններ Կիլիկիայում կամ Սիրիայում տեղի չէին ունենում:

1917 թ. հուլիսին ֆրանսիական զենքերալ Մորիս Բայուն (Եգիպտոսում, Պաղեստինում և Կիպրոսում ֆրանսիական զորքերի գլխավոր տեսուչ՝ 1917 թ. ապրիլի 17-ից հոկտեմբերի 20-ը) տեսչական այց կատարեց Արևելյան լեգեոն, որն այդ պահին ուներ 6 հայկական վաշտ, յուրաքանչյուրը՝ 200 զինվորով և 1 սիրիական վաշտ՝ 160 զինվորով: Գեներալը ստուգեց լեգեոնի մարտունակությունն ու կարգապահությունը և գոհ մնաց հայ զինվորներից: Առաջին չորս վաշտերից, որոնք արդեն լավ մարզված ու զինված էին, կազմավորվել էր մեկ գումարտակ: Սպասում էին ամերիկահայերի ժամանմանը, որպեսզի կազմավորվեն նաև երկրորդ գումարտակը: Կազմավորման փուլում էր նաև գնդացրորդների մեկ վաշտ: Մ. Բայունի կարծիքով այդ պահին լավագույնները թուրքական բանակի նախկին զինվորներն էին, որոնք գերվել էին Միջագետքում կամ դասալքել էին, ապա՝ մուսալեոցիները, հետո՝ ամերիկահայերը, իսկ ամենավերջում սիրիացիներն էին: Գեներալն առաջարկեց կապրալներ նշանակել միայն հայերին ու սիրիացիներին, իսկ ենթասպաներ դարձնել յուրաքանչյուր վաշտում 2 հայի կամ սիրիացու և 6 ֆրանսիացու: Ապագայում նախատեսում էր սպայական կոչումներ տալ նաև հայերին ու սիրիացիներին, որպեսզի լեգեոնն ավելի ամուր կառուցվածք ունենա, իսկ այդ սպաները հետագայում կծառայեին Հայաստանի ու Սիրիայի ապագա զինված ուժերում: Մ. Բայուն շատ բարձր էր դասում հայերի մարտական որակները, սակայն նշում էր, որ եթե նրանց Ալեքսանդրետի փոխարեն օգտագործեն Պաղեստինյան ճակատում, ապա հայերի եռանդը կթուլանա: Մ. Բայուն նաև բարձր գնահատեց Լ. Ռոմիոյի ներդրած ջանքերը նման մարտունակ միավոր ստեղծելու համար: Գեներալը համոզված էր, որ մոտ ապագայում՝ ամերիկահայերի ժամանելուց հետո, կստեղծվեն 4 գումարտակներ, որոնք կընդգրկվեն մեկ գնդի մեջ: Առաջարկում էր գումարտակի

հրամանատարի աստիճան ունեցող Լ. Ռոմիոյին տալ փոխգնդապետի կոչում: Եթե հաջողվեր նաև երկրորդ գունդը ստեղծել, ապա առաջարկում էր կազմավորել բրիգադ և հրամանատար նշանակել գնդապետ Է. Բրեմոնին, որի վրա պետք է դրվեր նաև ազատագրված երկրամասերի ռազմական վարչության կազմակերպման խնդիրները և ժամանակավոր վարչությունը: Արևելքին վերաբերող Է. Բրեմոնի գիտելիքները, գեներալի կարծիքով, հնարավորություն կտային ճիշտ կողմնորոշվել շատ նուրբ հարցերում և դա օգտակար կլիներ և՛ տեղացիների, և՛ ֆրանսիացիների համար¹:

Մ. Բայուն ոչ արդյունավետ էր համարում միայն մուսալեոցիների ուժերով Ալեքսանդրետի մոտ պարտիզանական գործողություններ ծավալելու նախագիծը, քանի որ դա լուրջ վնաս չէր հասցնի թշնամուն և տեղական բնակչության նկատմամբ ջարդերի տեղիք կտար: Այդ ծրագիրն առաջարկել էր Ժ. Պիկոն: Մ. Բայուի կարծիքով, լեգեոնականները դեռևս քիչ էին և բավարար պատրաստվածություն չունեին, որպեսզի հասնեին Բեյլանի կիրճին: Նրանք արագորեն կշրջապատվեին ու կոչնչացվեին: Դրան դեմ էր արտահայտվել նաև Սիրիայի ռազմածովային դիվիզիայի հրամանատար, դերծովակալ Ժորժ Վարնեյը:

Մ. Բայուն անհրաժեշտ էր համարում լայնամասշտաբ գործողություն իրականացնել ամբողջ լեգեոնի ուժերով, երբ Թուրքիայի համար կստեղծվեր դժվարին իրավիճակ: Նման հնարավորություն կարող էր ստեղծել ապստամբությունը Լիբանանում: Գեներալը համոզված էր, որ ափհանում կարող էին կատարել Ալեքսանդրետում, Տրիպոլիում կամ Հայֆայում: Ալեքսանդրետում ափհանումը նա համարում էր ամենադժվարը, քանի որ թուրքերն այն աչալրջորեն հսկում էին, ունեին մեծաքանակ ուժեր և լավ ամրացված էր: Այդտեղ ափհանում կատարելու և ռազմական գործողությունները զարգացնելու համար անհրաժեշտ էին մեծ ուժեր: Հայֆայում ռազմական գործողությունները կարող էին դժվարություններ ստեղծել թուրքերի համար Գազայի ռազմաճակատի թիկունքում: Այդ գործողությանը կարող էին աջակցել նաև Պաղեստինի ֆրանսիական զորախմբի ուժերը: Սակայն այդ տարածքը հեռու էր Ֆրանսիային համակրող լիբանանցի և սիրիացի ուժերի գործունեության դաշտից: Այդ գործողությունը կարող էր մեծ օժանդակություն լինել բրիտանացիների համար, որոնք էլ առաջարկել էին այդ ծրագիրը: Նրա կարծիքով, մի քանի ամիս առաջ այդ գործողությունը հաջողություն կունե-

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 20-21:

նար, սակայն թուրքերն այնտեղ արդեն կառուցել էին պաշտպանական հզոր ամրություններ, որոնք տվյալ պահին հաղթահարելը շատ դժվար կլիներ: Արևելքում դաշնակից զորքերի նոր հրամանատար Էդմունդ Ալենքին նույնպես դեմ էր Հայֆայում ավիանմանը, քանի որ ծովակալությունը Հայֆայի նավահանգստում գրեթե անհնար էր համարում դեսանտային զորքերի ավիանումը և մատակարարումը՝ գերմանական սուզանավերի պատճառով: Մ. Բայուի կարծիքով՝ ավիանման լավագույն վայրը Տրիպոլին էր, ուր հույս ուներ, որ թուրքական կայազորի մի մասն իրենց կողմը կանցներ, կարող էին ստանալ լիբանանցի ապստամբների աջակցությունը, արագորեն օժանդակ զորքեր կգային Պաղեստինի ֆրանսիական զորախմբից: Դրանով կկտրեին Արաբիան և Պաղեստինը սնուցող երկաթգիծը: Այդ գործողության համար անհրաժեշտ էր ուժեր ներգրավել Սալոնիկից, Ալժիրից կամ Ֆրանսիայից: Տրիպոլիի հիմնական բազան թիկունքում կունենար Ռուադ կղզու հենակետը: Մ. Բայուն դերծովակալ Ժ. Վարնեյին առաջարկեց մեծացնել լեզեոնը սպասարկող նավերի թիվը, քանի որ եղածներն արդեն իսկ դժվարությամբ էին ապահովում մատակարարումը, իսկ ամերիկահայերի ժամանելուց հետո անբավարար կլինեին¹:

Այսպիսով՝ գեներալ Մ. Բայուի կարծիքով անհրաժեշտ էր լեզեոնը վերածել բրիգադի և օգտագործել ֆրանսիական զորքերի հետ լայնամասշտաբ ավիանում կատարելու համար՝ հաշվի առնելով փոքրաթիվ կամավորների օգտագործման անհնարինությունը լավ պաշտպանված Կիլիկիայի ու Սիրիայի ուղղությամբ: Լավագույն տարբերակ էր համարում օգտագործել Պաղեստինի ուղղությամբ հարձակման ընթացքում:

Ռազմական նախարար Պ. Պենլեին 1917 թ. հուլիսի 26-ին ուղարկած գաղտնի հեռագրում Մ. Բայուն տեղեկացնում էր, որ արդեն սպասում են 5.000 կամավորների ժամանելուն, որոնց թիվը հետագայում կհասնի 10.000-ի²: Ինչպես տեսնում ենք, գեներալը հույս ուներ երկու գունդ ձևավորել և դրանք միավորել մեկ բրիգադի մեջ:

Կիպրոսում մարզվելու ընթացքում հայ լեզեոներները 1917 թ. մարտից պարեկում էին Կաստելորիզո (հուն. Մեգիստի – Ս.Պ.) կղզում: Այն Դոդեկանեզյան կղզիախմբի մեջ մտնող 9 կմ² տարածությամբ կղզի էր, գտնվում էր թուրքական ափից մոտ 2 կմ, իսկ թուրքական Կաշ (հուն. Անտիպիլոս –

¹ Նույն տեղում, էջ 21-24:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 19:

Ս.Պ.) նավահանգստից՝ 7 կմ հեռավորության վրա: Այդտեղի ամրությունները պաշտպանում էին Հայկական լեգեոնի և ֆրանսիացի ծովայինների մեկական վաշտ:

Սկզբում թուրքերը փոքր ու միջին տրամաչափի հրանոթներով անընդ-հատ ռմբակոծում էին կղզին, սակայն, երբ այնտեղ տեղադրվեցին 120 միլի-մետրանոց հրանոթներ, թուրքական կրակակետերը լռեցին: Տեղի հույները, հայերն ու ֆրանսիացիները պահպանում էին համակեցության կանոնները և կատարյալ համերաշխության մեջ էին գտնվում¹:

Պատերազմի ժամանակ Կաստելորիզոյի նախկին 20-25.000 բնակչու-թյունից միայն 2.000 մարդ էր մնացել կղզում, մյուսները հեռացել էին: Ամի-սը մեկ անգամ կղզու հարավային կողմից մի շոգենավ էր մոտենում և սնունդ բերում հայկական վաշտի համար: Այն գալիս էր գիշերով, որպեսզի չնկատվի թուրքական կողմից, որոնք թնդանոթային կրակոցով նախկինում ընկղմել էին մի շոգենավ: Երբեմն նավը ուշանում էր և լեգեոնականները զրկվում էին խմելու ջրից, սնունդից ու նամակներից: Նրանք ստիպված էին լինում ծովի ջրով եփել բրինձը: Լեգեոնական Օննիկ Մալխազունին (Սինան-յան) խոստովանում է, որ նման օրերին ստիպված էին լինում գողանալ հույն խաշնարածների այծերից: Հույները բողոքում էին Կաստելորիզոյի զինվորա-կան հրամանատարին, իսկ վերջինս խոստանում էր խստորեն պատժել կարգազանցներին, սակայն այծերի անհետացումները շարունակվում էին²: Հայ մարտիկները կենտրոնացված էին կղզու տարբեր մասերում գտնվող վեց հենակետերում³:

Թուրքերը 1917 թ. փորձել են գրավել կղզին: Մի քանի տասնյակ նա-վակներով մոտեցել և ափ են դուրս եկել Կաստելորիզոյում: Սակայն հայ մարտիկները ամբողջությամբ ոչնչացրել են թուրք զինվորներին և նրանց նավերը: Թուրքական դեսանտից ոչ ոք չէր կարողացել փրկվել⁴:

Հայ զինվորները պարեկություն էին անում նաև Կաստելորիզոյից ոչ հե-ռու գտնվող մի ամալի ժայռոտ կղզում: Այնտեղ ստիպված էին գիշերել բաց երկնքի տակ, արգելված էր ծխելը և բարձր խոսելը⁵:

1918 թ. հունվարի 7-ին Ռուադ (այժմ՝ Արվադ) կղզում տեղակայված Արևելյան լեգեոնի սիրիական վաշտին փոխարինեց հայկականը: Մոտ 2 կմ²

¹ Թեքեյան Ս., նշվ. աշխ., էջ 65:

² Պոլաճեան Ս., նշվ. աշխ., էջ 96:

³ Աճեմեան Խ., էջեր կամաւորի օրագրէս, էջ 80:

⁴ Նույն տեղում, էջ 79-80:

⁵ Նույն տեղում, էջ 103-104:

տարածությամբ այդ փոքր կղզին գտնվում էր սիրիական Տարտուս նավահանգստից 3 կմ հեռավորության վրա: Այդտեղ խմելու ջուր չկար: Ռուադ ուղարկված հայ լեգեոնականները հիմնականում մոտ 1 ամսվա նորակոչիկներ էին: Նրանց վարժեցնելու գործը հանձնարարված էր «Ժաննա դ'Արկ» հաճանավի հրամանատար, ֆրեզատի կապիտան Տրաբոնին և լեյտենանտ Պապիին: Նրանք լուրջ դժվարությունների հանդիպեցին կամավորներին մարզելու և կարգապահության սովորեցնելու հարցերում: Մարտին լուրեր ստացվեցին Կովկասյան ճակատից ռուսների հեռանալու, թուրքական արշավանքի և նոր կոտորածների մասին: Դա բավական գրգռեց լեգեոնականներին, որոնք թեթև ընդհարումներ ունեցան կղզու մահմեդական բնակչության հետ՝ նրանց դիտելով որպես թուրքեր: Դա անհանգստացրեց Տրաբոնին, որը դերժովակալ Ժ. Վարնեյին մարտի 15-ին խնդրեց հայերին կրկին փոխարինել սիրիացիներով¹:

Լեգեոնի տեղափոխումը Պաղեստինյան ռազմաճակատ

Հայկական զինուժը Պաղեստինում օգտագործելու Մ. Բայուի նախագիծը բավական անհանգստացրեց հայ գործիչներին: 1917 թ. հուլիսի 29-ի Մ. Բայուն հեռագրեց ռազմական նախարար Պ. Պենլևեին, թե Եգիպտոսի հայերը իրեն զգուշացրել են, որ ամերիկահայերը գալիս են, որպեսզի մարտնչեն միայն Հայաստանում կամ Կիլիկիայում: Փաստորեն՝ հայերը դեմ էին գեներալի առաջարկած Պաղեստինյան ճակատում կռվելու նախագծին: Գեներալը նախարարին խնդրում էր՝ հայերի մոտ բացատրական աշխատանքներ տանել, որպեսզի անհրաժեշտության դեպքում կռվեն Փոքր Ասիայի կամ Սիրիայի որևէ վայրում, խոստանալով, որ չեն ուղարկի Սալոնիկ²:

Օգոստոսին բրիտանացիները հարցում կատարեցին Լ. Ռոմիոյին, թե արդյո՞ք լեգեոնականները կարող էին Պաղեստինում թուրքական բանակի հաղորդակցությունների դեմ սրընթաց և կարճատև գործողություն իրականացնել: Լ. Ռոմիոն բացասական պատասխան տվեց, պատճառաբանելով, որ հայկական կոմիտեները, որոնք նյութապես ու բարոյապես աջակցում էին լեգեոնի կազմավորմանը, դեմ էին այդ տարածաշրջանում ռազմական գործողությունների մասնակցելուն³:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 202-204:

² Նույն տեղում, էջ 24:

³ Նույն տեղում, էջ 30:

Հոկտեմբերի 18-ին Եգիպտոսից Լ. Մկրտիչյանը նամակով Պ. Նուբարին տեղեկացրեց, որ Մ. Բայուն մտադիր էր Հայկական լեգեոնն ուղարկել Պաղեստինյան ճակատ: Նշում էր, որ դա կարող էր լուրջ դժգոհությունների պատճառ դառնալ, քանի որ կամավորագրությունն իրականացնելիս իրենք քարոզել են, որ լեգեոնը կոմերի էր միայն հայկական տարածքներում, իսկ պայմանագրում նշված «Ասիական Թուրքիա» հասկացությունը կանխամտածված էր թուրքերի ուշադրությունը շեղելու համար: Եգիպտոսի հայկական միության նախագահ Հ. Ներուզը Մ. Բայուն տեղեկացրել էր, որ հարցի շուրջ պետք է համաձայնություն կայացվեր Պ. Նուբարի և Ամերիկայի կամավորագրող կոմիտեների հետ: Լ. Մկրտիչյանը կարծում էր, որ եթե ֆրանսիացիները, ի վերջո, որոշեն լեգեոնն օգտագործել ոչ Կիլիկիայում, ապա իրենք պետք է համակերպվեն, քանի որ լեգեոնի լուծարումը կլիներ սխալ քայլ: Մտավախություն էր հայտնում, որ Պաղեստինում և Սիրիայում ռազմական երկարատև գործողությունների արդյունքում լեգեոնը կարող էր մեծ կորուստներ ունենալ և հայկական հողերը ազատագրելու ժամանակ բավարար զինվորներ չունենալ: Պատերազմը կարող էր ավարտվել մինչև հայկական տարածքների ազատագրումը: Այդ պատճառով եգիպտահայ գործիչներն առաջարկում էին աշխատել, որ դաշնակիցները հայտարարեն՝ պատերազմից հետո Հայաստանին և Կիլիկիային ինքնավարություն տալու մասին, իսկ Ազգային պատվիրակությանը ճանաչեն հայկական ժամանակավոր կառավարություն՝ ինչպես Էլեֆթերիոս Վենիզելոսի հունական կառավարությունը Սալոնիկում: Դա կարող էր նոր ոգևորություն առաջացնել, և հայ կամավորները պատրաստ կլինեին կռվել նաև այլ ճակատներում¹:

Հայ գործիչների մտահոգությունը տեղին էր: Պաղեստինյան ճակատում հայկական զինուժը կարող էր զգալի կորուստներ ունենալ, և Կիլիկիան, եթե պատերազմի ավարտական փուլում դաշնակիցները գրաված չլինեին, ապա անհրաժեշտություն կարող էր առաջանալ, որ հայերը սեփական ուժերով ազատագրեն այն: Միաժամանակ Ֆրանսիան, չնայած բանավոր տրված խոստումներին, ամեն կերպ խուսափում ու ձգձգում էր Կիլիկիային ինքնավարություն տալու մասին հայտարարություն անելուց:

Միևնույն ժամանակ Առաքել բեյ Նուբարը և Հ. Ներուզը Կահիրեում հանդիպեցին դեսպան Ժ. Դեֆրանսին և հայտնեցին իրենց մտահոգությունը լեգեոնը Պաղեստին տեղափոխելու վերաբերյալ: Նրանք պահանջեցին

¹ Նույն տեղում, էջ 43-46:

դիմել Ֆրանսիայի ԱԳՆ, որպեսզի լեզեոնը այդ ուղղությամբ չօգտագործվի: Սակայն դեսպանը նշեց, որ տեղյակ չէ այդ ծրագրին¹: Հայ գործիչները բավական անհանգստացած էին և ակտիվ ջանքեր էին գործադրում հայկական զինուժը միայն հայկական տարածքների ազատագրման ուղղությամբ օգտագործելու նպատակով:

1917 թ. նոյեմբերի 22-ին Պ. Նուբարը և Վ. Թեքեյանին Ֆրանսիայի ԱԳՆ Ասիա-Օվկիանիայի վարչության պետ Ժ. Գուին դժգոհություն հայտնեցին լեզեոնը Պաղեստինյան ճակատ ուղարկելու գեներալ Մ. Բայուի առաջարկի կապակցությամբ և պահանջեցին լեզեոնն օգտագործել միայն Կիլիկիայում կամ Սիրիայի հյուսիսում: Ժ. Գուին պատասխանեց, որ դա գեներալի անձնական կարծիքն էր, և չի համապատասխանում ռազմական և ԱԳ նախարարությունների տեսակետներին, որոնք հակված են լեզեոնն օգտագործել Սիրիայում²: Պ. Նուբարի միջամտությունը և ֆրանսիացի դիվանագետի հավաստիացումները նույնպես որոշակի դրական ազդեցություն ունեցան: Հայ գործիչների նպատակն էր այլ ռազմաճակատներում հայկական արյուն չթափելը և Կիլիկիա մտնելու պահին ունենալ հայկական մարտունակ բանակ: Առանց այդ էլ ցեղասպանության հետևանքով հայ ազգը արյունաքամ էր եղել: Սակայն պետք է նշել, որ հայ լեզեոնականները այդ գաղափարին համամիտ չէին և ցանկանում էին հնարավորինս շուտ մեկնել ռազմաճակատ և ցեղասպան թուրքերից վրեժ լուծել:

1917 թ. նոյեմբերի 30-ին վարչապետ և ռազմական նախարար Ժ. Կլեմանսոն հեռագրեց փոխգնդապետ Լ. Ռոմիոյին Մ. Բայուի նախագծի և հայերի անհանգստության մասին, նշելով, որ կառավարությունը երբևէ չի քննարկել լեզեոնը Պաղեստին ուղարկելու հարցը: Առաջարկում էր հայերին հանգստացնել, քանի որ լեզեոնը նախատեսում են օգտագործել միայն իրենց հայրենակիցներով բնակեցված տարածքների ազատագրման համար, իսկ Պաղեստինը բացառվում էր³:

Ինչպես տեսնում ենք, 1917 թ. երկրորդ կեսին Ֆրանսիայի ռազմական և քաղաքական իշխանությունները դեռևս չէին մտածում Արևելյան լեզեոնը Պաղեստին ուղարկելու մասին: Հետևաբար՝ Մ. Բայուի նախագիծը, թվում է՝ անգործադրելի էր մնալու: Սակայն 1918 թ. գարնանը իրադրությունը փոխվեց: Չնայած Ֆրանսիայի քաղաքական իշխանությունների նախկին հա-

¹ Նույն տեղում, էջ 52:

² Նույն տեղում, էջ 64-65:

³ Նույն տեղում, էջ 72:

վաստիացումներին, որ լեգեոնը Պաղեստին չի տեղափոխվի՝ այնուամենայնիվ 1918 թ. մարտին բրիտանական և ֆրանսիական զվհավոր շտաբները, ստեղծված նոր հանգամանքների պարտադրմամբ, համաձայնություն կայացրին Արևելյան լեգեոնի երկու գումարտակները Պորտ Սայիդում տեղակայելու, ապա՝ երկաթուղով Պաղեստինյան ռազմաճակատ ուղարկելու վերաբերյալ:

Լեգեոնի տեղափոխումը Պաղեստինյան ռազմաճակատ պայմանավորված էր ստեղծված նոր իրավիճակով:

1918 թ. հունվարի 30-ին Վերսալում տեղի ունեցավ Անտանտի բարձրագույն ռազմական խորհրդի նիստը: Լ. Ջորջն առաջարկեց համալրումներ ուղարկել Միջագետք և Պաղեստին, գլխավին ջախջախել թուրքերին, և նրանց ստիպել դուրս գալ պատերազմից: Խորհրդի գրեթե բոլոր անդամները դեմ արտահայտվեցին այդ ծրագրին, քանի որ պատերազմի բախտը որոշվելու էր եվրոպական ճակատներում: Սակայն համաձայնեցին, որ բրիտանացիները հարձակում սկսեն Պաղեստինում՝ առանց Ֆրանսիայից զորքեր տեղափոխելու¹:

Եգիպտական ռազմարշավային զորքերի զվհավոր հրամանատար (1917 թ. հունիս-1919 թ.), գեներալ Էդմունդ Ալենբին 1918 թ. գարնան սկզբին Պաղեստինյան ճակատում բավական խոշոր, մարտունակ ուժեր էր կենտրոնացրել, և սկզբնական շրջանում կարիք չկար այնտեղ ուղարկելու Արևելյան լեգեոնը:

Է. Ալենբիի տրամադրության տակ էին տարբեր ճակատներում մարտական փորձ ձեռք բերած 52-րդ (Շոտլանդական), 74-րդ (Յոմենների), 60-րդ (Լոնդոնյան), 10-րդ (Իռլանդական), 53-րդ (Ուելսյան), 54-րդ (Արևելյան Անգլիայի), 3-րդ (Լահորյան), 7-րդ (Միրոսյան) հետևակային դիվիզիաները: Ընդհանուր առմամբ՝ նրա տրամադրության տակ էին 34 բրիտանական, 49 հնդկական և արևմտահնդկական գնդի 2 գումարտակ²:

1918 թ. մարտի երկրորդ կեսին Է. Ալենբին նախատեսում էր Պաղեստինյան ռազմաճակատի արևելքում խոշոր հարձակում իրականացնել՝ Ամմանի ուղղությամբ: Նպատակ ուներ անցնել Հորդանանի ձախ ափը, առաջանալ դեպի հյուսիս-արևելք, գրավել Էս Սալթը և Ամմանը: Դրանով բրիտանական զորքերը դուրս կգային Հեջազ տանող երկաթուղագիծ, որով կապ կհաս-

¹ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 336:

² Massey W., Allenby's final triumph, London, 1920, p. 23-24.

տառովեր թուրքերի դեմ ապստամբած Մեքքայի շերիֆ Հուսեյնի արաբական բանակի հետ:

Մարտի 8-12-ը բավական թեժ մարտեր ծավալվեցին Պաղեստինյան ռազմաճակատի հյուսիսարևելյան հատվածում՝ Ռամալլահից Նաբլուս գնացող ճանապարհի ուղղությամբ: Բրիտանական 10-րդ, 53-րդ և 74-րդ դիվիզիաները փորձեցին առաջանալ այդ ճանապարհով, որը շրջապատված էր լեռներով ու բլուրներով: Սակայն թուրքերը, ամրանալով բնականից անառիկ դիրքերում, համառ դիմադրություն ցույց տվեցին: 53-րդ դիվիզիան հաջողություն չունեցավ, իսկ մյուս դիվիզիաները կարողացան աննշան առաջխաղացում ունենալ և գրավել լեռնային որոշ դիրքեր¹: Այդ գործողությամբ է. Ալենբին ստուգում էր թուրքերի դիմադրողական կարողությունները և փորձում էր շեղել նրանց ուշադրությունը գլխավոր հարձակման ուղղությունից:

Գլխավոր հարձակումը սկսվեց մարտի 21-ին: Բրիտանական զորքերը հաջողությամբ գետնացեցին Հորդանանը և մարտերով շարժվեցին հյուսիսարևելք: Մարտի 26-ին հաջողվեց գրավել Էս Սալթը: Համառ մարտերով հաջողվեց մոտենալ Ամմանին: Մարտի 30-ին Ամմանի մատույցներում տեղի ունեցավ խոշոր և վճռորոշ ճակատամարտ: Թուրքական 4-րդ բանակի ուժերին հաջողվեց հետ մղել բրիտանացիների զրոհները: Շուտով թուրքերը Ամմանում համալրումներ ստացան երկաթուղով, իսկ Նաբլուսից դեպի Էլ Սալթ շարժվեցին թուրքական 7-րդ բանակի օգնական ուժերը: Բրիտանացիները ստիպված դադարեցրին հարձակումը, և ապրիլի 2-ին վերադարձան նախկին դիրքերը²: Փաստորեն՝ Ամմանի ուղղությամբ 12-օրյա հարձակումն ավարտվեց անարդյունք:

Այս անհաջող հարձակումը բացասաբար անդրադարձավ այդ տարածքներում ապաստանած հայ տարագիրների համար: Ապրիլի 5-ին Էս Սալթի մոտ գտնվող Այնի Սուվեյլան գյուղում գազազած չերքեզները՝ որպես վրեժ, սպանեցին 160 հայ տարագիրների: Նման ճակատագրի արժանացան նաև Ամմանի շրջակայքի բազմաթիվ հայեր³:

Բրիտանացիներին պարզ դարձավ, որ հաջողության համար անհրաժեշտ էր հարձակման անցնել նաև Պաղեստինյան ռազմաճակատի մյուս հատվածներում, որպեսզի հակառակորդին թույլ չտրվի ուժերը կենտրոնացնել Ամմանի ուղղությամբ: Չնայած է. Ալենբիի տրամադրության տակ կային

¹ Նույն տեղում, էջ 81-85:

² Նույն տեղում, էջ 34-56:

³ Պարթևեան Ս., Արարա, էջ 58:

բավարար ուժեր ամբողջ ճակատով հարձակվելու համար, սակայն նրա գործողությունները կասեցվեցին Եվրոպայից եկող անհանգստացնող լուրերով:

Ամմանի ուղղությամբ հարձակում սկսելու նույն օրը՝ մարտի 21-ին, գերմանական հրամանատարությունը ֆրանսիական ճակատում սկսեց լայնամասշտաբ հարձակում Սոմի ուղղությամբ: Մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրից հետո գերմանացիները հնարավորություն ստացան ռուսական ճակատից մեծաքանակ զորքեր տեղափոխել արևմուտք: Նրանք հույս ունեին հզոր հարվածով ջախջախել բրիտանական և ֆրանսիական ուժերին, բեկում մտցնել պատերազմում: Գերմանական հրամանատարությունն այն կոչեց Կայզերսշլախտ՝ Կայզերի ճակատամարտ: Չնայած սկզբնական հաջողություններին՝ մարտի 21-ից հուլիսի 4-ը տեղի ունեցած Սոմի ճակատամարտում գերմանացիները հաղթանակի հասնել չկարողացան: Գերմանացիները կորցրին 240.000 զինվոր, հակառակորդը՝ 212.000¹:

Սոմի ճակատամարտը ստիպեց բրիտանացիներին Պաղեստինյան ուժերի մի մասն ուղարկել Ֆրանսիա, որով է. Ալենբիի հարձակումը հետաձգվեց: Շտապ կարգով ապրիլի սկզբին Պաղեստինից Սոմ մեկնեցին 52-րդ և 74-րդ դիվիզիաները, իսկ մինչև հունիսի կեսերը՝ նաև այլ դիվիզիաներից 25 գումարտակներ: Դրանք ամենամարտունակ զորամասերն էին: Դրանց փոխարեն է. Ալենբին ստացավ դեռևս ամբողջությամբ չմարզված հնդկական նորակազմ զորամասեր²: Հետևաբար՝ Պաղեստինում լայնամասշտաբ հարձակումը հետաձգվեց մի քանի ամսով:

Է. Ալենբին նախատեսում էր Ամմանի ուղղությամբ հաջորդ հարձակումը սկսել մայիսի 20-ին: Սակայն արաբական Բենի Սախա ցեղը պատվիրակություն ուղարկեց նրա մոտ՝ տեղեկացնելու, որ իրենք 7.000 մարտիկ ունեն և պատրաստ են օգնել, եթե հարձակումը սկսվի մինչև մայիսի 4-ը³: Է. Ալենբին ստիպված էր հարձակումը սկսել ավելի վաղ, որպեսզի ապահովի արաբների համագործակցությունը: Թիկունքից արաբների հարձակումը կարող էր վճռել Ամմանի ճակատագիրը: Մեքքայի շերիֆ Հուսեյնի արաբական բանակում գործող բրիտանական գնդապետ Թովմաս Լոուրենսը (Լոուրենս Արաբացի), տեղեկանալով այդ մասին, նախազգուշացրեց, որ Բենի

¹ Հարությունյան Ա., նշվ. աշխ., էջ 339:

² Massey W., Allenby's final triumph, p. 60.

³ Նույն տեղում, էջ 64:

Սախայի ցեղապետ Ֆահադը նույնիսկ 400 զինվոր չունի, իսկ նրա ցեղախումբը տեղափոխվել էր հարավ: Նա գտնում էր, որ չպետք է հավատ ընծայել այդ «օղային խոստումներին»¹: Սակայն Լոուրենսի զգուշացումը հաշվի չառնվեց:

Ապրիլի 30-ին բրիտանական ուժերը կրկին անցան Հորդանանը և առաջացան դեպի Էս Սալթ, որը գրավվեց հաջորդ օրը՝ մայիսի 1-ին²: Թուրքերը Ամմանից և Նաբլուսից մեծաթիվ ուժեր նետեցին Էս Սալթի ուղղությամբ: Արաբներից այդպես էլ օգնություն չստանալով՝ բրիտանացիները մայիսի 3-ին թողեցին Էս Սալթը և նահանջեցին Հորդանանի արևմտյան ափ: Ռազմագործողության արդյունքում բրիտանացիները կորցրին 1.300 զինվոր: Թուրքերը նույնպես զգալի թվով սպանվածներ և վիրավորներ ունեցան: Գերվեցին թուրքական բանակի 46 սպաներ և 885 զինվորներ, որոնցից 47-ը՝ գերմանացի³: Փաստորեն՝ չճշտված և կեղծ տեղեկությունների հիման վրա բրիտանացիները գնացին արկածախնդրության, որն ավարտվեց հերթական հարձակողական ռազմագործողության ձախողմամբ:

Դրանից հետո Պաղեստինյան ռազմաճակատում հարաբերական անդորր հաստատվեց: Բրիտանացիներն ու թուրքերը միայն տեղային նշանակություն ունեցող մի քանի փոքր հարձակումներ կազմակերպեցին ամբողջ ամառվա ընթացքում՝ փորձելով բարելավել իրենց դիրքերը:

Հետզհետե թուրքերը Հորդանանի հովտի ուղղությամբ մեծացրին իրենց ուժերը, ավելացրին պաշտպանական ամրությունները՝ վստահ լինելով, որ հետագայում ևս հակառակորդի հարձակման գլխավոր ուղղությունն այդտեղ է լինելու:

Ինչպես տեսանք, Պաղեստինյան բանակի մարտունակ զորամասերի զգալի մասը մեկնել էին Եվրոպա և անհրաժեշտ էր նրանց փոխարեն նոր զորքեր ուղարկել՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիական իշխանությունները, չնայած նախապես արած հավաստիացումներին, ստիպված էին փոխել իրենց որոշումը և Արևելյան լեզեոնը տեղափոխել Պաղեստին:

Ֆրանսիայի ռազմական նախարարի 1918 թ. մարտի 23-ի թիվ 2177-9/11 հրամանով Արևելյան լեզեոնը դուրս բերվեց ծովային ուժերի կազմից և

¹ Lawrence T., Seven Pillars of Wisdom, Ware, Hertfordshire, 1997, p. 519-521.

² Massey W., Allenby's final triumph, p. 65-66.

³ Նույն տեղում, էջ 70:

դրվեց Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախմբի տրամադրության տակ¹։ Ժ. Պիկոն համոզված էր, որ քանի դեռ բրիտանական ուժերը Եվրոպայում ծանր վիճակում են, իրենք պետք է պաշտպանեն սեփական շահերն ու իրավունքները Սիրիայում²։ Դա հարմար առիթ էր մեծացնելու ֆրանսիական դրոշի ներքո կռվող զորախմբի թիվը Պաղեստինում։ Այլ պարագայում բրիտանացիները կարող էին դեմ արտահայտվել ֆրանսիական ներկայության մեծացմանը։

1918 թ. մարտի 23-ին՝ Ս. Զատիկի առավոտը, լեգեոնականները պաշտոնապես տեղեկացվեցին, որ մեկնելու են ռազմաճակատ։ Երկար ամիսներ սպասված այդ լուրը մեծ ոգևորություն առաջացրեց։ Տ. Պոյաճյանը նշում է. «Մեկ-երկու օրէն պիտի մեկնէինք, պիտի հեռանայինք մեզի զգուելի դարձած այդ կղզիէն որ մեզ շղթայած էր ամիսներով։ Բանակին մէջ ստեղծուած եռուզեռը աննկարագրելի էր։ Զիրար կը շնորհատրէինք այս բաղդատր պատեհութեան համար որ մեզ պիտի տանէր վերջապէս մեր թշնամիին դիմաց, մղելու համար կռիւը վրէժին ու արդարութեան, կռիւը՝ մեր դարերով կորսուած հայրենիքին, կռիւը՝ մեր խոշտանգուած հայրերուն ու եղբայրներուն, մեր բռնաբարուած մայրերուն ու քոյրերուն, մեր բզբտուած մանչերուն եւ աղջիկներուն»³։

Մարտի 25-ին լեգեոնի առաջին, իսկ մայիսի 8-ին երկրորդ գումարտակները Մոնարկայից մեկնեցին դեպի Պորտ Սայիդ։ Կիպրոսում մնաց երրորդ գումարտակը՝ մայրո Շենոյի հրամանատարությամբ⁴։

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ լեգեոնի երկու գումարտակները բանակեցին Պորտ Սայիդում՝ որոշ խնդիրներ առաջացան։ Մուսալեոցիների գաղթականական ճամբարը գտնվում էր Սուեզի ջրանցքի մյուս ափին։ Մուսալեոցի լեգեոնականները, որոնցից շատերը մեկ տարուց ավելի էր հարազատներին չէին տեսել, բնական էր, որ ձգտում էին անցնել ջրանցքի մյուս ափը։ Ի հեճուկս բազմաթիվ դիմումներին՝ հրամանատարության կողմից այդպես էլ օրինական թույլտվություն չտրվեց՝ հանդիպելու հարազատներին։ Դրա հետևանքով գիշերները տասնյակ մուսալեոցի լեգեոնականներ լողալով անցնում էին ջրանցքը և հանդիպում հարազատների հետ։ Որոշ լեգեոնականներ նույնիսկ որոշեցին այլևս չվերադառնալ ծառայության։ Լ. Ռո-

¹ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 77։

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 211։

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 93։

⁴ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 93-94։

մին փորձեց հարցը կարգավորել Հայ ազգային միության և համայնքի պատասխանատուների միջոցով, բայց նրանք հաջողության չհասան: Ստիպված էին որոշ դասալիքների ձերբակալել և ռազմական աստյանի առաջ կանգնեցնել: Լ. Ռոմիոյի ջանքերով նրանց չպատժեցին և թույլատրեցին կրկին միանալ լեզեոնին¹: Սակայն այդ միջադեպի արդյունքում եգիպտոսի հայ գործիչների և լեզեոնի ֆրանսիական հրամանատարության միջև հարաբերությունները որոշ ժամանակով խզվեցին: Այդ իրադարձություններում մեծ էր ֆրանսիական հրամանատարության բացթողումը: Նրանք կարող էին հարգել հարազատներին մի քանի ժամով տեսակցելու զինվորների ցանկությունը և ավելորդ խստություն ու կոպտություն ցույց չտալ, որը չէր հանգեցնի հետագա բարդություններին:

Մայիսի կեսերին լեզեոնը Պորտ Սայիդից գնացքով, ապա՝ հետիոտն հասավ Ալ Քանթարա, որի մի կողմում Սուեզի ջրանցքն էր, մյուս կողմում՝ անապատը: Այդտեղից 30 կմ հարավ գտնվող Իսմայիլիայի մոտ՝ Էլ Թիհ անապատում, հաստատվեց լեզեոնի բանակատեղին: Անապատում կարիճները բազմաթիվ լեզեոնականների խայթեցին: Բարեբախտաբար զոհեր չեղան: Անապատի կիզիչ արևի տակ մարզումների ծանրությանը, վատ սննդին գումարվում էր ֆրանսիացի սպաների կոշտ ու կոպիտ, որոշ դեպքերում վիրավորական վերաբերմունքը, սակայն լեզեոնականները համբերում և սպասում էին թուրքերից վրեժ լուծելու հնարավորությանը: Իսմայիլիայում մարզումները շարունակվեցին մայիսի 20-ից հուլիսի 12-ը²: Անապատային տարածքում գրեթե երկու ամիս տևած զորավարժությունները բավական բարձրացրին լեզեոնականների դիմադրողականությունն ու մարտական որակները Պաղեստինյան ռազմաճակատում գործելու համար:

Լ. Ռոմին հայ համայնքի հետ կապերի խզումը վնասակար էր համարում և, ցանկանալով բարելավել հարաբերությունները եգիպտահայերի հետ, լեզեոնի հայ սպաներից լեյտենանտ Վահան Փորթուգալյանին ուղարկեց Ազգային միության հետ բանակցությունների: Ազգային միության նախագահ Հակոբ Նևրուզը և մյուս անդամները համաձայնեցին վերականգնել համագործակցությունը: Համայնքի ներկայացուցիչները ժամանեցին Իսմայիլիա և հանդիպեցին լեզեոնականներին, նրանց բարի երթ մաղթեցին: Դա բավական բարձրացրեց հայ զինվորների տրամադրությունը: Դրան գու-

¹ Նույն տեղում, էջ 96-98:

² Նույն տեղում, էջ 100-103:

մարվեց նաև Ֆրանսիայի նախագահ Ռայմոն Պուանկարեի ուղարկած հեռագիրը, որով շնորհավորում էր լեզեոնին՝ ճակատ մեկնելու առթիվ¹:

Հուլիսի 14-ին լեզեոնը մասնակցեց Ֆրանսիայի ազգային տոնին նվիրված շքերթին: Նրանց երթը մեծ տպավորություն թողեց Պաղեստինում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի պաշտոնակատար, կապիտան Կուլոնդրի վրա, որն իր հիացմունքն ու բավարարվածությունը Ժ. Գուլի միջոցով փոխանցեց Պ. Նուբարին²: Կուլոնդրը շնորհավորական ուղերձ հղեց նաև Եգիպտոսի հայ ազգային միությանը³: Հայկական լեզեոնը այն ուժն էր, որով Ֆրանսիան իր ներկայությունն էր ցուցադրում Մերձավոր Արևելքում: Հետևաբար ֆրանսիացիներն ամեն կերպ փորձում էին սիրաշահել հայկական վերնախավին և տարածաշրջանի բնակչության մոտ բարձրացնել լեզեոնի հեղինակությունը:

Հուլիսի 14-ի տոնը լեզեոնականները նշեցին նաև Կաստելլորիզոյում: Տոնակատարությանը ներկա էին կղզու կառավարիչն ու քաղաքապետը, սպաները, հույն երևելիները: Եկեղեցու բակում պատրաստված բեմահարթակի վրա ֆրանսիացի ծովայինները ներկայացրին ֆրանսիական շանսոններ և հայրենասիրական երգեր: Հայ լեզեոնականները զուռնայի նվագակցությամբ ներկայացրին հայկական երգն ու պարը⁴:

Մեծտելում Արևելյան լեզեոնի զորավարությունները դիտեց Պաղեստինյան ռազմաճակատի հրամանատար Է. Ալենքին և գոհ մնաց: Հայկական զոմարտակներին այստեղ միացավ 250 սիրիացի լեզեոնականներից կազմված վաշտը: Լեզեոնի տրամադրության տակ դրվեցին 37 մմ-ոց թնդանոթներ⁵: Այդտեղից Արևելյան լեզեոնը գնացքով մեկնեց Լյուդ՝ Պաղեստինյան ռազմաճակատի առաջավոր գիծը: Հայ մարտիկներն անհամբեր սպասում էին թուրքերի հետ ճակատամարտին: Կիլիկիայի ազատագրման ճանապարհը կարող էր բացվել, եթե Պաղեստինում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները ջախջախվեին:

¹ Նույն տեղում, էջ 104-105:

² Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 341:

³ Նույն տեղում, էջ 355:

⁴ Թեքելյան Տ., նշվ. աշխ., էջ 65-68:

⁵ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 107:

Թուրքական բանակի ջախջախումը Մեզիդոյի (Արմազեդոնի) ճակատամարտում

Հայկական լեգեոնն իր ներդրումն ունեցավ դեպի Կիլիկիա դաշնակից ուժերի առաջխաղացման գործում՝ մասնակցելով Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտին: Այն հայտնի է Մեզիդոյի կամ Արմազեդոնի ճակատամարտ անունով: Է. Ալենքին վճռորոշ ռազմագործողությունը կոչեց Մեզիդո, քանի որ գլխավոր նպատակն էր դուրս գալ Նաբլուսի և Տիբերիական կամ Գալիլիա լճի միջև գտնվող Թիլ Մեզիդոյի դաշտը, որը աստվածաշնչյան Արմազեդոնն էր: Այդ շրջանում այն կոչվում էր Էսդրաելոնի դաշտ: Այդտեղով էր անցնում դեպի Նազարեթ գնացող ռազմավարական ճանապարհը, այդտեղ էր Աֆուլայի երկաթուղային հանգույցը:

Հայ պատմագիտության մեջ շրջանառության մեջ է դրվել Արարայի ճակատամարտ անվանումը: Իրականում գրեթե 100 կմ ձգվող ռազմաճակատի մոտ 5,3 կմ երկարությամբ տարածքում՝ Զավիյա բնակավայրից մինչև Ռաֆաթ-Արարայի բարձունքները կանգնած էր ֆրանսիական զորախումբը, որի կազմում էին հայկական երկու գումարտակները: Ինչպես կտեսնենք, իրականում հայկական զորամասը գրոհեց Ռաֆաթի բարձունքները՝ Արարայի հարևանությամբ: Սակայն Ս. Պարթեյանն իր «Արարա» հուշագրությունով՝ շրջանառության մեջ դրեց Արարայի ճակատամարտ հասկացությունը, որը մտավ հայ պատմագիտության մեջ: Լեգեոնականներից Տ. Պոյաճյանն իր հուշագրության մեջ առաջին անգամ փաստագրական նյութի հիման վրա ցույց է տվել, որ հայկական զորախումբը կռվել էր ոչ թե Արարայում, այլ՝ հարևանությամբ՝ Ռաֆաթում, իսկ Արարայում բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին²: Քանի որ Պաղեստինյան ռազմաճակատի գործողությունները և Հայկական լեգեոնի պատմությունը գիտական ուսումնասիրության գրեթե չեն ենթարկվել հայկական պատմագրության կողմից, դա է պատճառ դարձել, որ այդ իրադարձություններից մեկ դարանց, հայ իրականության մեջ դեռևս Մեզիդոյի ճակատամարտը և դրանում Հայկական լեգեոնի իրական դերը չի լուսաբանվել:

Ինչպես տեսանք, Հայկական լեգեոնը Պորտ Սալիդ-Քանթարա-Ռամե-Լյուդ գծով Եգիպտոսից տեղափոխվեց Պաղեստինյան ռազմաճակատ:

¹ Պարթեյան Ս., Արարա: Հայկական լեգեոնը, Իզմիր, 1919:

² Պոյաճյան Տ., նշվ. աշխ., էջ 142:

Համադրելով տարբեր աղբյուրներ՝ ներկայացնում ենք լեգեոնի գումարտակների առաջավոր գիծ տեղափոխելու ժամանակացույցը: Օգոստոսի 25-ին Լյուդից շարունակելով ռազմերթը, ամսի 30-ին լեգեոնը ճամբար է խփել ռազմաճակատի առաջավոր գծից մոտ 7 կմ հեռավորության վրա: Հաջորդ օրը Ա գումարտակը տեղափոխվել է առաջին գիծ, Բ գումարտակը սեպտեմբերի 1-ին կանգնել է երկրորդ գծում: Սեպտեմբերի 15-ին Բ գումարտակը գիշերով երեքժամյա անցումով տեղափոխվել է առաջին գիծ, իսկ Ա գումարտակը, որը երկու շաբաթ առաջավոր գծում էր, տեղափոխվել է երկրորդ գիծ¹:

Սեպտեմբերի առաջին երկու շաբաթներին հայ մարտիկներն իրենց լավ են դրսևորում դիրքային մարտերում ու հետախուզական գործողություններում²:

Ա. Գինոսյանը վկայում է, որ սեպտեմբերի 10-ին գերված թուրք մոլլան և զինվորը խոստովանել են, որ թուրքերի ու գերմանացիների միջև օրեցօր ատելությունն ու հակասությունները մեծանում էին³: Իսկապես՝ պատերազմի ավարտական փուլում երկու դաշնակիցների հարաբերությունները բավական սրվել էին: Գերմանացիները հասկացել էին, որ թուրքերը սեփական խաղն են խաղում և չեն պատրաստվում ամբողջությամբ հետևել իրենց քաղաքական ծրագրերին: Դա բավական ակնհայտ երևաց Բրեստ-Լիտովսկի համաձայնագրից հետո Անդրկովկասում թուրքերի գործողություններից: Մյուս կողմից թուրքերը հասկանում էին, որ պատերազմը տանուլ էր տրված, և մեղադրում էին գերմանացիներին իրենց պատերազմի մեջ ներքաշելու համար:

Այս շրջանում Պաղեստինյան ռազմաճակատի բրիտանա-ֆրանսիական և թուրք-գերմանական բանակների շփման գիծն անցնում էր Երուսաղեմ ու Նաբլուս քաղաքների միջև ընկած շրջանով և ձգվում էր Հորդանան գետից մինչև Միջերկրական ծով: Ինչպես տեսանք, դեռևս 1918 թ. գարնանը բրիտանական զորքերը երկու անգամ փորձել էին ճեղքել հակառակորդի պաշտպանությունը ռազմաճակատի արևելյան հատվածում, բայց անհաջողություն էին կրել: Դրանից հետո կողմերի միջև հարաբերական անդորր էր հաստատվել, և նրանք զբաղված էին ուժերը վերադասավորելով:

¹ Ատանայի Հայոց պատմություն, էջ 426: Գասպարյան Ռ., Հայկական լեգեոնը, էջ 8: Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192: Արարա: Նուիրում՝ Արարայի հինգերորդ տարեդարձին, 1923, Պոսթոն, էջ 8:

² Ներսիսեան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Երևան, 2015, էջ 108:

³ Արարա, էջ 8:

Թուրքերը հույս ունեին, որ կարող են հետ մղել հակառակորդին՝ կառչելով Սամարիայի լեռնային, բնականից անառիկ դիրքերին, որոնք էլ ավելի էին ամրացվել գերմանական մասնագետների կողմից: Թուրքիայի ռազմական նախարար Էնվերը պաշտպանական այդ հզոր գծի հետ մեծ հույսեր էր կապում և այն անվանում էր «երկրորդ Դարդանեբ»¹: Նա հույս ուներ, որ այդտեղ ևս կկարողանան կասեցնել հակառակորդի մեծաթիվ ուժերին, ինչպես՝ Դարդանեբի օպերացիայի ժամանակ:

Գնենրալ Է. Ալենքին որոշեց թշնամուն վճռորոշ հարված հասցնել սեպտեմբերին: Տեղանքը հիմնականում լեռնային էր, և հակառակորդի դիրքերը գրավելը մեծ դժվարությունների ու զոհերի հետ էր կապված: Սակայն նույնիսկ հաջողության դեպքում, թշնամին նահանջից հետո կգբաղեցներ նոր պաշտպանական գիծ: Է. Ալենքին որոշեց այնպիսի հարված հասցնել, որով ամբողջությամբ կջախջախեր թշնամուն և թույլ չէր տա պաշտպանության նոր գիծ ստեղծել:

Վճռական հարձակման հաջողությունը հիմնականում կախված էր թշնամու համար հարվածի ուղղության անսպասելիությունից, հանկարծակիությունից և ուժգնությունից: Պաղեստինի թուրք-գերմանական բանակների գլխավոր հրամանատար, գերմանացի գնենրալ Լիման ֆոն Սանդերսը գլխավոր հարձակումը սպասում էր ռազմաճակատի արևելքից՝ Ամմանի ուղղությամբ: Դրանով հնարավորություն կստեղծվեր միավորել բրիտանական և ապստամբած արաբական զորքերը: Նախկինում հենց այս թևից էին բրիտանական ուժերը հուժկու գրոհներ կազմակերպել: Սակայն այս անգամ Է. Ալենքին որոշեց հարվածն ուղղել արևմտյան հատվածից: Նա որոշեց Միջերկրականի առափնյա շրջանով՝ Սարոնի դաշտով, հեծելագործի սրընթաց գրոհով ճեղքել հակառակորդի պաշտպանական գիծը, դուրս գալ թշնամու թիկունք և գրավել Հայֆան ու Նաբլուսը, որով կկտրվեր Պաղեստինի թուրքական ուժերի նահանջի ճանապարհը: Իսկ Ամմանից Դամասկոս երկաթուղային ճանապարհով թուրքերի նահանջի ուղին փակելու էր Մեքքայի շերիֆ Հուսեյնի որդի Էմիր Ֆեյսալի արաբական բանակը: Փաստորեն՝ Է. Ալենքին որոշեց թուրքական պաղեստինյան բանակախումբը վերցնել շրջապատման մեջ և ամբողջությամբ ոչնչացնել, որի արդյունքում հակառակորդն այլևս որևէ լուրջ դիմադրություն չէր կարողանա ցույց տալ դեպի Լիբանան ու Սիրիա շարժվող բրիտանական բանակին:

¹ Կամարը, էջ 34:

Պաղեստինյան ռազմաճակատում սեպտեմբերյան խոշոր հաղթանակի գործում անուրանալի դեր էր ունեցել այն հանգամանքը, որ բրիտանական հրամանատարությունը կարողացել էր գաղտնի պահել հարվածի գլխավոր ուղղությունը և զորքերի բոլոր տեղաշարժերը:

Եգիպտական ռազմարշավային կորպուսում լոնդոնյան լրատվամիջոցների պաշտոնական թղթակից Վիլյամ Մեսին խոստովանում էր, որ զորքերի քողարկումն այնքան լավ էր կազմակերպված և հրամանատարությունն այնքան գաղտնի էր հարձակողական պլանները մշակել, որ ինքը գրեթե մշտապես գտնվելով գլխավոր շտաբում և բազմիցս այցելելով տարբեր զորամասեր, միայն հարձակումից մեկ օր առաջ էր տեղեկացել զորքերի տեղաշարժի և վճռական հարձակման մասին, այն էլ՝ հրամանատարությունից¹:

Ռազմաճակատի արևելքից զորքերի հիմնական մասը՝ Անապատային հեծյալ կորպուսի 4 դիվիզիաներից 3-ը, քողարկված և չափազանց գաղտնիության պայմաններում, է. Ալենբին նետեց արևմուտք: Հորդանանի հովտում թողնվեցին նրանց դատարկ վրանները, տեղադրվեցին կտորից պատրաստված ձիերի խրտվիլակներ: Քողարկումը այնքան հմտորեն էր արված, որ սեպտեմբերի 17-ին տարածքը վերևից հետախուզած գերմանական օդաչուն իր հրամանատարությանը տեղեկացնում էր, որ Հորդանանի հովտում կենտրոնացված են ավելի քան 23 հեծյալ էսկադրոններ²:

Անապատային հեծյալ կորպուսի հիմնական ուժերը խիստ գաղտնիության պայմաններում տեղափոխվեցին գրեթե 100 կմ ձգվող ռազմաճակատի մի ծայրից մյուսը և տեղակայվեցին 21-րդ կորպուսի թիկունքում: Ռազմաճակատի արևմտյան հատվածում ամեն ինչ արտաքնապես թողնվեց այնպես, ինչպես կար: Այնտեղ տեղափոխված զորքերին արգելված էր ցերեկով տեղաշարժվելը կամ գիշերով խարույկ վառելը: Բանակային վառարանները ճաշը պատրաստում էին չոր սպիրտով, որպեսզի ծուխը չնկատվեր: Ստեղծվեց հատուկ հեծյալ ոստիկանություն, որը հսկում էր, որպեսզի զինվորները խստորեն պահպանեին անվտանգության կանոնները և չնկատվեին թշնամու դիրքերից կամ օդանավերից: Ձիերին ջուր տալու և մարգելու համար թաքստոցներից հանում էին կեսօրից մինչև ժամը 2-ը: Այդ ժամերին բրիտանական օդանավերը մարտական հերթապահություն էին իրականացնում և թշնամու օդանավերը չէին կարող տեսնել ձիերին³: Հեռախոսով կամ հե-

¹ Massey W., Allenby's final triumph, p. 96.

² Նույն տեղում, էջ 97:

³ Նույն տեղում, էջ 98:

ռագրով զորքերի տեղաշարժի մասին ցանկացած տեղեկության փոխանցումը խստորեն արգելվեց¹:

Թշնամուն մոլորեցնելու համար 3-րդ և 7-րդ դիվիզիաները սեպտեմբերի սկզբներին ցուցադրաբար ռազմաճակատի արևմտյան հատվածից շարժվեցին դեպի արևելք: Այդ դիվիզիաների զորամասերը ցերեկով մեկնում էին Լյուտի երկաթուղային կայարան, իսկ գիշերվա քողի տակ վերադառնում էին հետ²:

Է. Ալենբիին հաջողվեց զորքերի տեղաշարժերն աննկատ իրականացնել և հարձակման հիմնական ուղղությունը գաղտնի պահել թշնամուց: Գերմանական ինքնաթիռը սեպտեմբերի 18-ին հետախուզական թռիչք իրականացրեց, սակայն օդաչուն որևէ տեղաշարժ և զորքերի նոր կենտրոնացում չկարողացավ հայտնաբերել: Միայն ֆրանսիական զորախմբի կազմում նկատել էր Հայկական լեզեոնի համալրումը, որը համարել էր իտալական զորամաս³:

1918 թ. սեպտեմբերի 19-ին սկսված Մեզիդոյի ճակատամարտի նախօրյակին Պաղեստինյան ռազմաճակատի գիծը Միջերկրականի ափից ձգվում էր մինչև Մեռյալ ծով՝ մոտ 95 կմ: Աղբյուրների համադրմամբ հստակեցրել ենք ռազմաճակատի գծում բրիտանական և թուրքական զորքերի, ինչպես նաև հայկական զորամասի, տեղաբաշխումը, նրանց առջև դրված խնդիրները⁴: Բացի Միջերկրական ծովին հարող նեղ հատվածից՝ Սարոնի դաշտից, որը Բիր Զեյթ բնակավայրից ձգվում էր մինչև Ռոշ Հաային, մնացած տարածքները լեռնային կտրատված տեղանք էին, ուր թուրք-գերմանական ուժերը հաջողությամբ կարող էին կասեցնել հակառակորդին: Եգիպտական ռազմարշավային զորքերը կազմված էին երեք՝ Անապատային հեծյալ, 20-րդ, 21-րդ կորպուսներից և գեներալ Է. Չայթրսի զորախմբից:

Գերմանացի գեներալ Լիման ֆոն Սանդերսի ղեկավարած թուրքական «Յըլդըրըմ» (Կայծակնային) զորամիավորումը կազմված էր 4-րդ, 7-րդ, 8-րդ բանակներից:

8-րդ բանակի կազմի մեջ էր մտնում գերմանական Ասիա կորպուսը (իրամ.՝ Գուստավ ֆոն Օպեն), որը աչքի էր ընկնում բարձր մարտունակու-

¹ Նույն տեղում, էջ 99:

² Նույն տեղում, էջ 102:

³ Պոլաճեան Տ., նշվ. աշխ., էջ 146:

⁴ Պոլաճեան Տ., Հայկական լեզեոնը, էջ 144-145: Massey W., Allenby's final triumph, 111-112, 126-129, 147.

թյամբ: Այդ գերմանական զորախումբը ուներ 5 գումարտակներ՝ 48 գնդացիներով, 3 հրետանային մարտկոց՝ յուրաքանչյուրը 4 հրանոթով, հեծյալ էսկադրոն, գնդացրային ջոկատ, հետախուզական ստորաբաժանում, ինքնաթիռներ և այլ ստորաբաժանումներ¹:

Բրիտանական 21-րդ կորպուսի հարձակման գիծը ձգվում էր 34 կմ՝ Բիր Ջեյթից մինչև Ռաֆաթ:

Միջերկրականին հարող 3 կմ-ոց հատվածում, որը սկսվում էր Յաֆայից (այժմ՝ Թել Ավիվ) հյուսիս ընկած Բիր Ջեյթ բնակավայրից և ձգվում էր արևելքում մինչև Ռոշ Հաային, տեղակայված էր 60-րդ Լոնդոնյան դիվիզան, որի մեջ էր նաև 5-րդ Ավստրալիական թեթև հեծելազորային բրիգադը: Սա փաստորեն գլխավոր ուղղությունն էր: Այդ զորախմբի առջև խնդիր էր դրված ծովափի երկայնքով գրավել հակառակորդի երեք շարք խորությամբ պաշտպանության գիծը, որպեսզի հեծելազորային դիվիզիաները Սարոնի դաշտավայրով սրընթաց ներխուժեին թշնամու թիկունք:

7-րդ Միրության դիվիզիան զբաղեցնում էր 5 կմ-ոց հատված: Այս դիվիզիայի առջև ընկած էր արևելքից արևմուտք ձգվող ձորակներով կտրատված տեղանք, որը հակառակորդը բավական լավ ամրացրել էր խրամատներով ու գնդացիներով: Միայն մի ձորակ կար, որը ձգվում էր հյուսիսից հարավ: Որոշվեց դրա երկայնքով հարձակվել 7.5 կմ հեռավորության վրա գտնվող Էթ Թիրեհի ուղղությամբ, ուր գտնվում էր թուրքական 22-րդ կորպուսի կենտրոնը: Հետևազորի միջոցով ճանապարհը բացելուց հետո պետք է 5-րդ Ավստրալիական հեծյալ բրիգադը հարձակման գնար դեպի Թուվկարմ, ուր տեղակայված էր թուրքական 8-րդ բանակի շտաբը:

75-րդ դիվիզիայի առջև 1.7 կմ լայնությամբ բավական նեղ, սակայն խրամատներով ու փշալարերով չափազանց լավ ամրացված տարածք էր: Նա նույնպես պետք է ճանապարհ բացեր դեպի Էթ Թիրեհ և փակեր թշնամու նահանջի ուղին: Իր խնդիրը կատարելուց հետո 75-րդ դիվիզիան մնալու էր պահեստազորում:

3-րդ Լահորյան դիվիզիային բաժին էր հասել 10.3 կմ լայնությամբ գիծ: Այն առաջ էր շարժվելու Հադրահ-Էթ Թիրեհ ճանապարհի երկայնքով: Նրա ուղին փակում էին երկու չափազանց լավ ամրացված կետեր:

¹<http://web.archive.org/web/20110605134841/http://www.sacktrick.com/igu/germancolonialuniforms/hist%20ottoman.htm>

Ռազմաճակատի մյուս տեղամասերը լեռնային շրջաններ էին: Քաֆր Քասիմից սկսվում էին այդ դժվարամատչելի շրջանները: Սակայն է. Ալեն-բին թշնամուն թյուրիմացության մեջ գցելու համար առաջին հարվածը հասցնելու էր այդ լեռնային տարածքներում:

54-րդ դիվիզիան զբաղեցնում էր Քաֆր Քասիմից մինչև Ջավիա ընկած 8.7 կմ տարածքը:

Միջերկրականի և Ջավիայի միջև կանգնած էին թուրքական 22-րդ կորպուսի 7-րդ և 20-րդ դիվիզիաները: Նրանց թիկունքում՝ որպես պահեստային ուժ, կանգնած էր 46-րդ դիվիզիան: Փաստորեն՝ թուրքական ընդամենը 3 դիվիզիաներ էին գտնվում 21-րդ կորպուսի 5 դիվիզիաների և նրանց թիկունքից հարձակման գնացող Անապատային հեծյալ կորպուսի 3 դիվիզիաների դիմաց:

54-րդ դիվիզիայի կազմում էր նաև Ջավիայից մինչև Ռաֆաթ-Արարա բարձունքները 5.3 կմ լայնությամբ տարածքը զբաղեցրած Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական զորախումբը (իրամ.՝ գնդապետ Ֆիլիպ դը Պիե-պապ): Այն կազմված էր Արևելյան լեզեոնի հայկական 1-ին և 2-րդ գումարտակներից, սիրիացիների մեկ վաշտից, Ալժիրյան հրացանակիրների 1-ին գնդի 7-րդ և 2-րդ գնդի 9-րդ գումարտակներից, հեծյալ էսկադրոնից:

Անապատային հեծյալ կորպուսը, որի մեջ էին 4-րդ, 5-րդ հեծելազորային և Ավստրալիական հեծյալ դիվիզիաները, կանգնած էր 21-րդ կորպուսի թիկունքում: Վերջինի խնդիրն էր ջախջախել թշնամու աջ թևը և հասնել Դեյր Շարաֆ-Սամարիա-Թուվկարմ գծին: Հետևակի ուժերով հակառակորդի պաշտպանությունը ճեղքելուց հետո, Անապատային հեծյալ կորպուսը պետք է ձախից շրջանցեր 21-րդ կորպուսին և սրընթաց գրոհեր Աֆուլայի և Բեյսանի վրա՝ կտրելով հակառակորդի երկաթուղային ուղին և փակելով նրա նահանգի ճանապարհը:

20-րդ կորպուսը պետք է գրոհեր Ռաֆաթից-Բեյթ Լաբան գծի վրա: Նրա գլխավոր խնդիրն էր Նաբլուսի ճանապարհով առաջանալ և այդ քաղաքից հարավ միանալ 21-րդ կորպուսի զորքերին: 20-րդ կորպուսի երկու դիվիզիաների առջև ընկած էր հիմնականում լեռնային, բավական երկար՝ մոտ 40 կմ ձգվող գիծ: Արարայից Քաֆր ալ Դիք հատվածը զբաղեցրեց 10-րդ դիվիզիան: Բերուքինից մինչև Բեյթ Լաբան կանգնած էր 53-րդ դիվիզիան:

Ջավիայից մինչև Բերուքին ձգվող լեռնային հատվածում ֆրանսիական զորախմբի և բրիտանական 10-րդ դիվիզիայի դիմաց կանգնած էին թուր-

քական Ձախակողմյան կորպուսի 19-րդ, 16-րդ հետևակային, 2-րդ հեծելազորային դիվիզիաները, Բերուքինից Բեյթ Լաբան՝ 3-րդ կորպուսի 1-ին, 11-րդ և 20-րդ կորպուսի 26-րդ դիվիզիաները:

Այսպիսով՝ Ֆրանսիական զորախմբի և բրիտանական 2 դիվիզիաների դիմաց կանգնած էին թուրք-գերմանական 6 դիվիզիաներ:

Ռազմաճակատի արևելյան՝ մոտ 21 կմ հատվածը հանձնված էր գեներալ-մայոր Էդուարդ Չայթորսի 11.000-ոց զորախմբին, որի մեջ էին Ավստրալիական և նորգվեանդական հեծյալ դիվիզիան և երկու հետևակային բրիգադներ: Չայթորսի զորախումբը պետք է Հորդանանի հովտում՝ Մեռյալ ծովից մինչև Էլ Մուդեյր ընկած տարածքում, լարվածության մեջ պահեր թուրքերին՝ նրանց ապակողմնորոշելով, թե իբր հարվածի գլխավոր ուղղությունն այդտեղից էր լինելու:

Ռազմաճակատի արևելքում՝ Չայթորսի զորախմբի դիմաց, որտեղից Լիման ֆոն Սանդերսը թյուրիմացաբար սպասում էր գլխավոր հարվածը, կանգնած էին թուրքական 7 դիվիզիաներ. 4-րդ բանակի 2-րդ, 8-րդ կորպուսները, Հորդանանյան զորախումբը՝ յուրաքանչյուրը 2 դիվիզիաներով, 7-րդ բանակի 20-րդ կորպուսի 53-րդ դիվիզիան:

Ըստ թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանի՝ Պաղեստինյան ռազմաճակատում, թուրքերն ունեին 120.000 զինվոր, բրիտանացիները՝ 150.000¹: Դա վերաբերում է նաև Սիրիայում ու Լիբանանում գտնվող ուժերին:

Առաջնագծում Լիման ֆոն Սանդերսի 50.000 զինվորների ու 300 թնդանոթների դեմ կանգնած էին բրիտանական 76.000 զինվոր՝ 540 թնդանոթներով, այդ թվում՝ Պաղեստինի և Սիրիայի ֆրանսիական 7.000-ոց զորախումբը, ինչպես նաև ինքնաթիռներ: Թուրք-գերմանական հրամանատարությունը հույս ուներ կառչել տեղի լեռնային բնական ու արհեստական ամրություններից և կասեցնել հակառակորդին²:

1918 թ. սեպտեմբերի 18-ի լույս 19-ի գիշերը սկսվեց Արմազեդոնի կամ Մեգիդոյի ճակատամարտը, որը վճռելու էր Պաղեստինյան ռազմաճակատի ճակատագիրը: Հիմնական հարձակման համար ընտրված էր 4.30 րոպեն, երբ լուսինը այլևս չէր լուսավորի և հնարավոր կլիներ հետևակը հնարավորինս մոտեցնել թշնամու դիրքերին՝ անսպասելի և սրընթաց գրոհի համար,

¹ Թորոսյան Ս., Դարդանեվից մինչև Պաղեստին, Թարգմանեց անգլերեն բնագրից Լիլիթ Թուֆխայանը, Երևան, 2012, էջ 154:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 114: Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 66-67:

որը թույլ կտար նվազեցնել զոհերի քանակը: Առաջինը պետք է գրոհեր 54-րդ դիվիզիան, որի մեջ էր նաև ֆրանսիական զորախումբը: Նրանք հարձակման էին գնալու 10 րոպե շուտ՝ 4.20: Նրանց դիմաց լեռնային լավ ամրացված դիրքեր էին և նրանք լեռների ստորոտներից պետք է առաջինը գնային հարձակման¹:

Հարձակումից առաջ՝ մեկն անց տասնհինգին, ավստրալիացի օդաչու, կապիտան Ռոս Սմիթին հաջողվեց ռմբակոծել և ամբողջությամբ ավերել Աֆուլայում գտնվող հեռագրական կայանը: Քաղաքի ռազմավարական կետերի վրա նետվեցին 16 հատ 50 կգ-ոց ռումբեր: Դրա շնորհիվ թուրքական գլխավոր շտաբի հեռագրական և հեռախոսային կապը ռազմաճակատի հետ կտրվեց: Նաբլուսի շտաբը և կապի կետերը նույնպես ռմբակոծվեցին: Արդյունքում, թուրքական գլխավոր հրամանատարությունը երկու օր տեղյակ չէր թե ինչ էր կատարվում առաջին գծում²:

Համընդհանուր հարձակման ազդանշան հանդիսացավ հրետանային կրակը, որը հիմնականում ուղղված էր թուրքերի գլխավոր կրակակետերին: Լավ հաշվարկված հրետանային համագործակցությունը թշնամու հրետանու զգալի մասը, որի արդյունքում թուրքական հրետանին չկարողացավ մեծ վնասներ հասցնել հարձակվող հետևազորին: Բրիտանական հրետանու անմիջական հարվածի տակ հայտնվեցին նաև թշնամու շտաբները և հեռախոսային կայանները³: Հարվածի անսպասելիությունն ու ուժգնությունն այնքան մեծ էր, որ հարձակման բոլոր ուղղություններում առաջին տասը րոպեների ընթացքում գրավվեցին հակառակորդի առաջին շարքի խրամատները⁴:

60-րդ դիվիզիան կարողացավ գրավել թուրքական երեք պաշտպանական գծերը, և 7.30-ին արդեն բաց էր հեծելազորի ճանապարհը դեպի թշնամու թիկունք: 7-րդ դիվիզիան ժամը 7-ին գրավեց Էթ Թիրեհը, և 4-րդ հեծյալ դիվիզիան ու 5-րդ Ավստրալիական թեթև հեծյալ բրիգադը արշավեցին դեպի Թուվկարմ: Միևնույն ժամանակ 75-րդ դիվիզիան գրավեց՝ Միսկեհը, 3-րդը՝ Հադրահի ճանապարհի բարձունքները, 54-րդը՝ Քաֆր Քասիմը և Ջևիս Թեյեն⁵:

¹ Massey W., Allenby's final triumph, p. 122.

² Cutlack F., The Australian Flying Corps in the western and eastern theatres of war 1914-1918, Sydney, 1941, p. 152.

³ Massey W., Allenby's final triumph, p. 123.

⁴ Նույն տեղում, էջ 125:

⁵ Նույն տեղում, էջ 132-134:

Ֆրանսիական զորախումբը հաջողությամբ գրավեց Ռաֆաթից արևմուտք ընկած լեռնաշղթան, ապա՝ համառորեն պաշտպանեց դեպի արևմուտք ընկած երեք թփուտներ բարձունքը¹:

Շուտով հակառակորդը որոշ չափով ուշքի եկավ և փորձեց հակագրոհ կազմակերպել: Մի քանի դիրքերից բրիտանացիները ստիպված էին նահանջել, սակայն ժամը 11-ի մոտ բոլոր ուղղություններում թշնամու հակագրոհները կասեցվեցին, և զորքերի առաջխաղացումը շարունակվեց: Թուրքական 8-րդ բանակի կենտրոն թուլկարմում բրիտանացիների ձեռքն անցան գնացքներ, մեծ քանակությամբ տեխնիկա, զենք, զինամթերք, գերիներ:

Մեկ օրում 21-րդ կորպուսի ձեռքն անցավ 7.000 գերի, 100 հրանոթ, 170 գնդացիր և հսկայական քանակությամբ այլ ռազմավար²:

Բրիտանական հեծելազորն անցավ Մեզիդոյի կիրճը, մտավ Արմագեդոնի դաշտ և սեպտեմբերի 20-ի գրավեց Աֆուլան, Նազարեթը, Ջենինը, Բեյսանը: Դրանով թուրքական բանակի թիկունքում գտնվող բոլոր երկաթուղային և ճանապարհային հանգույցները հայտնվեցին բրիտանացիների վերահսկողության տակ: Այդպիսով՝ Պաղեստինյան ռազմաճակատի թուրքական բանակախումբը հայտնվեց շրջապատման մեջ: Բրիտանական հեծելազորը, օդուժի աջակցությամբ և ուղեկցությամբ, 22 ժամում առաջացավ 80 կմ: Նրանց մուտքը Նազարեթ լուսաբացին անսպասելի էր թշնամու համար: Թուրքական շտաբի բազմաթիվ սպաներ գերվեցին գիշերազգեստներով, իսկ շտաբի փաստաթղթերն անվնաս վիճակում ընկան բրիտանացիների ձեռքը: Թուրքական Պաղեստինյան բանակի հրամանատար Լիման ֆոն Սանդերսը հապճեպ հեռացավ քաղաքից: Սակայն Նազարեթն ամբողջությամբ գրավելու համար ծավալվեցին համառ մարտեր³:

Սեպտեմբերի 21-ին բրիտանական հեծելազորը հաղթական երթով անցավ Նազարեթով: Փաստորեն՝ գրեթե առանց լուրջ դժվարության բրիտանացիներին անցավ Տիբերիայից Հայֆա և Աքրա տանող ճանապարհը:

Գնենրալ Չեթվուդի 20-րդ կորպուսը նույնպես հաջողությամբ կատարեց իր վրա դրված առաջադրանքը և լուրջ հարված հասցրեց թշնամուն:

Սեպտեմբերի 20-ի առավոտյան ժամը 5-ին 21-րդ կորպուսի զորքերը հարձակումը շարունակելու հրաման ստացան: Ֆրանսիական զորախումբը,

¹ Նույն տեղում, էջ 133:

² Նույն տեղում, էջ 138:

³ Նույն տեղում, էջ 151-152:

որը գրավել էր Արարան և Զավիան, 54-րդ դիվիզիայի 163-րդ բրիգադի աջ թևով առաջացավ: 54-րդ դիվիզիան 7-ժամյա մարտերից հետո մոտեցավ Ազունին, ուր թուրքական Ասիա կորպուսի շտաբն էր տեղակայված: Սեպտեմբերի 21-ի լուսաբացին 28-րդ բրիգադը աննշան կորուստներով գրավեց Սամարիան¹: Իսկ կեսօրին 5-րդ թեթև հեծյալ բրիգադը մոտեցավ Նաբլուսին, որը թուրքական 7-րդ բանակի կենտրոնն էր: Այդտեղ հեծյալ բրիգադը հանդիպեց 20-րդ կորպուսի ուժերին, որը առավուտից մարտեր էր մղում քաղաքը համառորեն պաշտպանող թշնամու դեմ: Ի վերջո, Նաբլուսը գրավվեց: Նահանջող թուրքական ուժերը ենթարկվեցին հրետանային և օդային ջախջախիչ ոմբակոծության:

Թուրքական 7-րդ և 8-րդ բանակներն ամբողջովին ոչնչացվեցին: Դա փայլուն հաջողություն էր դաշնակցային զորքերի համար:

Թուրքերի ջախջախման ու հետապնդման գործում որոշակի ներդրում ունեցավ թուրքական բանակի կապիտան Սարգիս Թորոսյանը: Նա աչքի էր ընկել Դարդանեյի ճակատամարտում, սակայն նրա ծնողները և քույրը դարձել էին Մեծ եղեռնի զոհ: Մեզիդոյի ճակատամարտի առաջին օրը Ս. Թորոսյանը նշանակվել էր 7-րդ և 8-րդ բանակների կապի համակարգող, սակայն կտրել էր հեռախոսի ու հեռագրի լարերը, նախապես ունեցած պայմանավորվածությամբ միացել արաբ ապստամբներին և 1.000 հոգանոց ջոկատով հարվածել թուրքերին թիկունքից, փակել փախուստի ճանապարհները: Մինչև Դամասկոս նա հետապնդել է թուրքերին, որի ընթացքում նրա ղեկավարած արաբական զորախմբի թիվը հասել է 6.000-ի²: Դրանով նա վրեժխնդիր եղավ ցեղասպան պետությունից իր զոհված ազգականների ու ազգակիցների համար:

Սեպտեմբերի 23-ին գրավվեցին Աքրան և Հայֆան, սեպտեմբերի 25-ին՝ համառ մարտերից հետո Տիբերիա լճի հարավային ափին գտնվող Սամախ քաղաքը, որտեղով անցնում էր Աֆուլա-Դերա երկաթուղին և Տիբերիա քաղաքը³:

Ռազմաճակատի արևելքում գեներալ Է. Զայթորսի զորքերը սեպտեմբերի 17-ից մեծ ակտիվություն սկսեցին ցուցաբերել իրենց հանձնված գծի արևելյան և հյուսիսային հատվածներում, որպեսզի այդ հատվածից գլխավոր հարձակման թյուր պատկերացում առաջացնեն հակառակորդի մոտ և

¹ Նույն տեղում, էջ 170, 173:

² Թորոսյան Ս., Դարդանեյից մինչև Պաղեստին, էջ 176-181:

³ Massey W., Allenby's final triumph, p. 190, 193, 198-200.

ստիպեն այստեղ կենտրոնացնել ուժերը: Է. Չայթորսի խնդիրն էր պաշտպանել Հորդանանի հովիտը և հարձակման գնացող 20-րդ կորպուսի աջ թևը: Թշնամու մոտ նահանջի առաջին նախանշանների դեպքում նա պետք է անմիջապես հարձակման գնար դեպի Էս Սալթ և Ամման, ուր օգնության էին գալու նաև Մեքքայի շերիֆի արաբական զորքերը: Սեպտեմբերի 19-21-ին թշնամին լուրջ ճնշում էր գործադրում Չայթորսի զորախմբի վրա: Սակայն շուտով թուրքերը տեղեկացան 7-րդ և 8-րդ բանակների ջախջախման, արաբների կողմից Դերայի գրավման մասին, որով փակվել էր նրանց նահանջի ճանապարհը: Դա խուճապ առաջացրեց 4-րդ բանակում և բարձրացրեց բրիտանական զորքերի մարտական ոգին¹:

Սեպտեմբերի 22-ին Է. Չայթորսին հաջողվեց հյուսիսային ուղղության վրա գրավել Դամիեի կամուրջը Հորդանանի վրա, որով ճանապարհը Նաբլուսից ու Բեյսանից գնում էր Էս Սալթ: Հաջորդ օրը վերջնականապես գրավվեց Էս Սալթը, ուր տեղակայված էր թուրքական 4-րդ բանակի շտաբը²: Բրիտանական ուժերը շարունակեցին հարձակումը և սեպտեմբերի 24-ին գրավեցին Ամմանի հյուսիսում գտնվող Այնի Սուվեյլան և արևմուտքում գտնվող Նիմրին բնակավայրերը: Սեպտեմբերի 25-ի արշավույսին սկսվեց Ամմանի գրոհը: Համառ մարտերից հետո այն վերջապես գրավվեց, և բրիտանացիների վերահսկողության տակ անցավ Հեջազի երկաթուղին³:

Հարձակման հաջողությանը նպաստեց նաև այն, որ էմիր Ֆեյսալի արաբական բանակը սեպտեմբերի 16-ից մոտեցավ Դերային, ուր բաժանվում էր Դամասկոսից դեպի Բեյսան և Ամման գնացող երկաթուղին: Սեպտեմբերի 17-ին արաբները գրավեցին Դերայից հյուսիս գտնվող Թել Արար կայարանը, պայթեցրին երկաթուղու մոտ 15 կմ-ոց հատված, փակեցին ճանապարհը: Սեպտեմբերի 23-ին արաբները գրավեցին Դերան⁴: Արդյունքում թուրքական 4-րդ, 7-րդ և 8-րդ բանակները չկարողացան երկաթուղով օգնական ուժեր ստանալ Դամասկոսից, իսկ պարտությունից հետո չկարողացան զորքերն ու տեխնիկան տեղափոխել թիկունք:

Հետագա օրերին բրիտանացիները շարունակեցին շրջապատման մեջ մնացած թուրքական բանակի մնացորդների վնասագերծումը: Թուրքական Պաղեստինյան բանակախումբն ամբողջությամբ ոչնչացվեց: Սպանվեցին ու

¹ Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, p. 714-717.

² Massey W. T., Allenby's final triumph, p. 208.

³ Նույն տեղում, էջ 211:

⁴ Cutlack F., The Australian Flying Corps, p. 162-163.

գերվեցին տասնյակ հազարավոր զինվորներ: Միայն 5-6.000 զինվորների հաջողվեց փախուստի դիմել:

Մեգիդոյի ճակատամարտում պատմության մեջ առաջին անգամ հեծելազորը և օդուժը համատեղ, արդյունավետ համագործակցությամբ վարեցին գրեթե ամբողջ հարձակումը: Օդուժը շարքից հանեց թշնամու կապի միջոցները, մեծ արդյունավետությամբ ոչնչացրեց թշնամու տեխնիկան և մարդուժը, հետախուզական անուրանալի ծառայություն մատուցեց հարձակվող բանակին:

1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած Մեգիդոյի հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը դադարեց գոյություն ունենալ:

Մեգիդոյի ճակատամարտը Առաջին աշխարհամարտի ամենափայլուն կազմակերպված ռազմագործողություններից էր, ուր փայլեց Է. Ալենքի ռազմագիտական տաղանդը: Դրա շնորհիվ Պաղեստինում և Հորդանանում տեղակայված թուրքական ամբողջ բանակախումբը դադարեց գոյություն ունենալուց: Այն անուրանալի դեր ունեցավ Օսմանյան կայսրությանը ջախջախելու և անձնատվության պարտադրելու գործում: Ճակատամարտի արդյունքում ֆրանս-բրիտանական ուժերի առջև բացվեց դեպի Լիբանան, Սիրիա և Կիլիկիա տանող ճանապարհ:

Հայկական լեգեոնի մասնակցությունը ճակատամարտին

Մեգիդոյի ճակատամարտում Հայկական լեգեոնի առաջ խնդիր էր դրված գրավել Արարայի ձախակողմյան բավական լավ ամրացված երկու դիրքերը², որոնք ընկած էին Ռաֆաթ գյուղից արևմուտք: Ռաֆաթ-Արարան 350 մետր բարձրությամբ և 3 կմ ձգվող լեռ էր: Հայկական զորախումբը կանգնած էր Ռաֆաթի դիմաց, իսկ Արարայի ուղղությամբ՝ բրիտանական 10-րդ դիվիզիայի հնդկական զորամասերն էին³: Ռաֆաթի բարձունքը ռազմաճակատի ամենադժվար ու գրեթե անառիկ հատվածներից էր համարվում: Մինչ այդ բրիտանական զորքերը երեք անգամ փորձել էին գրավել այդ դիրքերը, բայց թշնամին հետ էր շարտել նրանց⁴: Արարայից ձախ Ռա-

¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 153:

² Պատմություն Ա.Դ.Նչակեան կուսակցութեան 1887-1963, խմբ. Ա.Կիսուր, Կ. Բ., Պէյրուք, 1963, էջ 342:

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 142-143:

⁴ Աճեմեան Խ., Հայկական լեգեոնը, «Համազգային»-ի տարեգիրք, Պէյրուք, 1953, էջ 73:

Ֆաթ գյուղն էր, որի դիմաց սիրիական զորախումբը կանգնեց, իսկ այդտեղից ավելի ծախ հայկական դիրքերն էին, որոնք ձգվում էին ավելի քան 3 կմ: Դրանք երեք բլուրներ էին, որոնց վրա հակառակորդը իրար հաջորդող երեք պաշտպանական գիծ էր կառուցել: Հայկական զորախմբի 600 զինվորների դիմաց կանգնած էին 1000 թուրք և 600 գերմանացի զինվոր¹: Այդ լավ ամրացված բարձունքների գրավումը թվում էր անհնար, իսկ զորքերի եղած հարաբերակցության պայմաններում՝ նույնիսկ տեսականորեն անհավատալի: Ոչ միայն գերմանացի ինժեներներն էին հզոր պատնեշ ստեղծել, այլ նաև գերմանական զորքերն էին ստանձնել այդ դիրքերի պաշտպանությունը:

Ինչպես տեսանք, այս լեռնային, լավ ամրացված դժվարամատչելի հատվածում է. Ալեքսին թշնամուց երեք անգամ ավելի փոքր ուժեր էր թողել, որոնց խնդիրն էր լինելու առաջինը գնալ հարձակման և շեղել թշնամու ուշադրությունը գլխավոր ուղղությունից: Փաստորեն՝ հայկական զորախմբից պահանջվում էր շեղել թշնամու զորամասերի ուշադրությունը և պահպանել սեփական դիրքերը: Բրիտանացիները չէին հավատում, որ հայկական լեզգեռնն ի վիճակի կլինի ջախջախել թուրքերի պաշտպանությունը՝ ունենալով երեք անգամ քիչ զինվոր, մանավանդ որ նախկինում բրիտանացիները երեք անգամ փորձել էին այդ հատվածում առաջ շարժվել ավելի մեծ ուժերով և պարտություն էին կրել:

Փաստորեն՝ է. Ալեքսին ֆրանսիական զորախմբին կանգնեցրել էր մի վայրում, որտեղ նրանք լուրջ հաջողություն արձանագրել և հաղթանակի մեջ զգալի ներդրումը ունենալ չէին կարողանա: Բրիտանացիներն ամեն ինչ անում էին Ֆրանսիային տարածաշրջանում երկրորդական դերակատարման մղելու և նույնիսկ նվաստացելու համար: Բրիտանիան ծրագրում էր պատերազմից հետո Ֆրանսիային թույլ չտալ մտնելու Մերձավոր Արևելք և արաբական միացյալ թագավորություն ստեղծել իր հովանու ներքո: Այդ հակասությունները բավական ակնհայտ էին և հայկական զինուժը բազմիցս առերեսվեց այդ գաղութատիրական ու իմպերիալիստական պետությունների խարդավանքներին:

Հայկական գումարտակներից աջ կանգնած էր սիրիական վաշտը, ապա՝ այժիրյան գումարտակները: Հայերի ծախ թևում 54-րդ դիվիզիայի զորամասերն էին: 1918 թ. սեպտեմբերի 18-ի երեկոյան լեզգեռնի 2-րդ գումար-

¹ Արարա, էջ 6:

տակը հրաման ստացավ նախապատրաստվել հաջորդ օրվա գրոհին, որը առաջին լուրջ մարտական մկրտությունն էր լինելու հայ կամավորների համար: Իսկ լեգեոնի 1-ին գումարտակը ճակատամարտի ժամանակ պահեստային ուժերի մեջ էր մնալու¹:

Հայ լեգեոնականներից Շարամ Ստեփանյանը գրում է. «1918 Սեպտ. 18ի չորեքշաբթին էր՝ Արարայի նախօրեակը ... Յստակ էր երկինքը, արևը շռայլած էր իր սուր ճառագայթները չորս կողմ, զեփիտին շունչն ալ մերթ ընդ մերթ կուգար Պաղեստինի կիզիչ արևին ազդեցությունը մեղմացնելու: Ամեն կողմ արագ շարժում, մեղուաջան աշխատանք, եռ ու զեռ կար. գումարտակի սենեակէն պահեստի ուտելիք, փամփուշտ, ռումբ կը բաժնուէին, տեսնուած պատրաստութիւններէն կը հասկցուէր որ մեր կողմէն յարձակողականը մօտ էր. կէսօրէն վերջ յայտնուեցաւ որ յաջորդ օրը արշալոյսին պիտի յարձակէինք թրքական դիրքերուն վրայ»²: Երեկոն լեգեոնականներն անցկացրին երգ ու պարով: Վերջապես եկել էր վաղուց սպասված պահը, երբ պետք է վրեժ լուծեին թշնամուց:

Հայ մարտիկներին ավելի ոգևորելու համար նրանց դիմեց լեգեոնի հայազգի սպա Զոն Շիշմանյանը. «Տղա՛ք, գիտէք վաղը առտու մեր հարսանիքի օրն է, այն օրը, որուն բոլորս կը սպասենք: Ամէն զինուոր կազմ ու պատրաստ պէտք է ըլլայ առաւօտեան ժամը 4ին: Այս ժամը վրէժխնդրութեան և արդար հատուցման վսեմ ժամն է, հայրենիքի ազատութեան համար է որ պիտի մղենք նուիրական պատերազմը: Ատիկա միակ ծառայութիւնն է որ մենք պիտի կատարենք հանդէպ մեր դժբախտ ազգին ու զայն երջանկացնենք մեր արեան գնով: Չեմ գիտեր թէ վաղուան վարագոյրը երբ իջնէ, մեզմէ քանի՞ն պիտի իյնան ճակատամարտին մէջ, սակայն վստահ եմ, որ հայուն հպարտ ճակատը ամօթի մրուրը պիտի չտեսնէ, մեր անցեալը մեզի խթան և ապագան թող հաւատ ներշնչէ բոլորիս»³:

Լեգեոնականներից Մ. Թաթարյանը գրում է, որ թուրքերի վրա հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով հարձակման նախօրեին բրիտանական ինքնաթիռը թշնամու թիկունքում թռուցիկներ էր տարածել, ուր գրված էր, որ նրանց դեմ իբրև կանգնած էր 60.000-ոց հայկական բանակ⁴: Փաստորեն՝ աշխարհի հզորագույն կայսրության ներկայացուցիչները թուրքերին վախեցնում էին ոչ թե իրենց բանակով, այլ՝ հայկականով:

¹ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

² Կամաւորը, էջ 32:

³ Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, էջ 12-13:

⁴ Նոյն տեղում, էջ 15:

1918 թ. սեպտեմբերի 18-ին, երեկոյան ժամը 9-ից բրիտանա-ֆրանսիական ուժերը մոտ երկու ժամ հրետակոծեցին հակառակորդի դիրքերը¹: Սեպտեմբերի 19-ի արշալույսին սկսվեց ընդհանուր հարձակումը: Հայկական լեզեոնը մի քանի ժամ տևած համառ մարտերից հետո կարողացավ սվինամարտով թուրքերին դուրս շարտել առաջապահ դիրքերից:

«Թուրքը որ անպաշտպան և անզէն հայերը մորթելու մէջ այնքան ճարպիկութիւն և քաջութիւն ցոյց տուած էր,- հիշում է ճակատամարտի մասնակից Մ. Թաթարյանը,- հայ կամաւորին զէնքին դէմ ընկրկեցաւ և իր ամրակուռ դիրքերուն առաջին գիծը լքելով անցաւ երկրորդ դիրքերուն»²:

Ժամը 15-ին բրիտանական հրամանատարությունը հրահանգեց շարունակել առաջխաղացումը³: Շարունակելով հաջող հարձակումը՝ հայ զինվորները գրավեցին նաև պաշտպանական երկրորդ և երրորդ բնագծերը: Թուրքերը փորձեցին հակադրոհ կազմակերպել, բայց հայ զինվորները կասեցրին թշնամու համառ գրոհները:

Հայ մարտիկների կողմից Ռաֆաթի բարձունքների գրավումը նպաստեց Արարայի, Մեսհայի և Պետիեյի դիրքերի անձնատուր լինելուն⁴: Փաստորեն՝ հայ մարտիկների սխրանքը օգնեց շրջակա դիրքերի գրավմանը հարևան գորամասերի կողմից:

Սեպտեմբերի 19-ի երեկոյան մարտը դադարելուց հետո, հայկական 2-րդ գումարտակն աննկատ տեղափոխվեց թիկունք, իսկ 1-ին գումարտակը զբաղեցրեց նրա դիրքերը: Սեպտեմբերի 20-ի արևածագին լեզեոնը գրոհելու հրաման ստացավ: Սակայն պարզվեց, որ նրանց առաջ գտնվող դիրքերը դատարկ էին, քանի որ գիշերը թշնամին ճողոպրել էր⁵:

1918 թ. սեպտեմբերի 22-ին մորն ուղարկած նամակում Մուսա լեռան ինքնապաշտպանության ղեկավարներից Հաբեթ Իսկենդերյանը գրում է. «Ամսոյս 19ին շղթայազերծուեցաւ մեր յարձակողականը. մինչեւ հիմայ 5000է աւելի գերի և 100ի մօտ թնդանօթներ ձեռք բերուեցան: Զոհեր ունեցանք, որոնց մէջ նաեւ կային մեր ընկերներէն պաշտելի հոգիներ: Ես ոչ վերք ունիմ, ոչ բան. ողջ առողջ եմ, թէւ հրաշքով ազատուած: Առաջին իսկ օրը քսան մղոն յառաջխաղացում մը ունեցանք: Մեր պարտականութիւնը

¹ Կամաւորը, էջ 42:

² Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 15:

³ Պատմութիւն Ա. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, Խմբագիր՝ Ա. Կիւրոր, Կ. Ա., Պէյրուք, 1962, էջ 531:

⁴ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 142:

⁵ Նոյն տեղում, էջ 123:

լիովին պիտի կատարենք, ատոր վստահ եղէք: Մեր բանակի բարոյականը հիանալի՝ է»¹:

Լեգեոնականները գերեցին թշնամու 147 զինվոր, 1 մայոր և 3 կապիտան, որոնցից մեկը հույն էր²: Թուրք մայորը զարմացավ լեգեոնականների թվաքանակը տեսնելով. «Մեր զորքը բարոյալքուեցաւ այն օրէն, երբ անգլիական օդանաւերը թռուցիկներ թափեցին մեր վրայ, որոնցմէ ըմբռնեցինք թէ՛ այս անգամ իրենց վրայ յարձակողները ո՛չ հնդիկներ, ո՛չ ալ ալճերիացիներ և ո՛չ ալ եւրոպացիներ էին, այլ՝ վրիժառու հայ գունդեր, բայց չէինք կարծեր որ այդքան սակաւաթիւ էք»³: Ըստ մեկ այլ վկայության՝ թուրք մայորը նաև ասել է. «Մի՞թե դեռ հայ կա աշխարհի վրա: Մաշալլա՛հ, մաշալա՛հ, ձեր ազգը չի մեռնի ուրեմն»⁴:

Հայ լեգեոնականները ճակատամարտում տվեցին 23 սպանված և 76 վիրավոր: Ղոնվաճների աճյունները սեպտեմբերի 20-ին թաղվեցին թիվ 26 դիրքում՝ Ռաֆաթի բարձունքի հարավ-արևմտյան լանջին, գյուղից 300 մետր հեռավորության վրա՝ եղբայրական գերեզմանում⁵:

Թաղման արարողության ժամանակ լեգեոնի հրամանատար, փոխգնդապետ Լ. Ռոմիոն իր դամբանականում նշեց. «...Անոնք ամէնքը ինկան այս դիրքին վրայ, ուր քիչ առաջ եկան յուզիչ ուխտագնացութիւն մը կատարել, ուր ոգեցինք նաև յաղթանակին հրաշալի արդիւնքը, ազատագրուած անձայրածիր հորիզոնին առջև: Բ վաշտը այս դիրքին վրայ գրոհեց յանկարծական գեղեցիկ թափով մը, հոն կառչեցաւ մնաց տարալիներուն տակ Արարայի, զոր գերմանացիք թուրք դիմադրութեան զօրաւոր առանցքը դարձուցած էին այն հատուածի մէջ, ուր խորտակուեցաւ անիկա: Բ վաշտին գեղեցիկ կեցուածքը անելի քան երկու ժամ, հակառակ իր կորուստներուն, թոյլատրեց իրագործել թշնամին կեցնելու պաշտօնը, անօգուտ դարձնելով միւս վաշտին կռիւի մէջ մուտքը...»⁶: Ապա խոսք վերցրեց 6-րդ վաշտի հրամանատար կապիտան Ազանին, որը նույնպես մատնանշեց լեգեոնականների մարտունակությունը, ընդհանուր հաղթանակում ունեցած ներդրումը: «Ձեր

¹ Սապահ-Գիլեան Բ., Կենսագրութիւն Ստեփան Սապահ-Գիլեանի, Նիւ Յորք, 1936, էջ 141:

² Աւետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեն եւ Ջօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, 1954, էջ 477:

³ Պատմութիւն Ա.Դ.Հնչակեան կուսակցութեան 1887-1963, Խ. Բ, էջ 343:

⁴ Արզումանյան Մ., Արիավիրքից վերածունդ, Երևան, 1973, էջ 409:

⁵ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 147:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 37: Կամաւորը, էջ 46:

քաջութիւնը խորհրդանշանն է ձեր ցեղին քաջութեան. ձեր երէկուան վարմունքը վերջնականապէս կ'ապացուցանէ հայ ցեղին արիասրտութիւնը», - ավելացրեց նա¹:

1925 թ. հոկտեմբերի 19-ին Արարայում գոհված հերոսների աճյունները տեղափոխվել են Երուսաղեմ, ուր հոկտեմբերի 25-ին Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ջանքերով վերաթաղվել են Սիոն լեռան վրա՝ Ս. Փրկիչ եկեղեցու գերեզմանոցում²: Այնտեղ 1927 թ. ապրիլի 24-ին ՌԱԿ-ի Կահիրեի շրջանային վարչության նախաձեռնությամբ հուշարձան է կանգնեցվել հայ լեզեռնականների պատվին³:

Ճակատամարտում աչքի ընկնելու համար «Մարտական խաչ» շքանշանով պարգևատրվեցին 25 լեզեռնականներ⁴: Ցուցաբերած խիզախության համար շքանշաններ ստացան հայ սպաներ Վ. Փողթուգալյանը, Զ. Շիշմանյանը, Հ. Եսայանը, Հ. Արկյանը, Հ. Գարասեֆերյանը⁵:

Հայկական լեզեռնի հաջողությունը նպաստեց դաշնակից ուժերի ընդհանուր հաղթանակին: Հայ մարտիկների չափից դուրս բարձր մարտունակությունը և այդ անսպասելի հաղթանակը զարմացրել էր նաև բրիտանական հրամանատարությանը:

Գնդապետ Ֆիլիպ դը Պիեպպալը սեպտեմբերի 21-ին Կահիրեում ֆրանսիական դեսպան Պիեր Լեֆևր-Պոնտալիսին ուղարկած նամակում գրում էր. «Արևելյան լեզեռնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախության վկայություն, պահպանելով իր գրաված դիրքերը, չնայած Արարայից տեղացող սարսափելի կրակին. այն այդտեղ կրել է զգալի կորուստներ»⁶:

Իր հերթին Պ. Լեֆևր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին Ս. Պիշոնին ուղարկած նամակում մեծ գովեստով էր խոսում Հայկական լեզեռնի մասին: Նշում էր, որ լեզեռնն իր արդյունավետությամբ գերազանցել էր այն ջանքերը, որոնք գործադրվել էին այն կազմակերպելու համար: Դեսպանը հայտնում էր, որ բրիտանացիները մինչև ճակատամարտը անվստահությամբ են վերաբերվել այդ զորամիավորմանը: Դեսպանը գտնում էր, որ չնայած բրիտանացիների համեմատությամբ իրենք երկրորդական դեր ունեն Պաղեստինյան ճակատում, սակայն պետք էր մամուլով տեղեկացնել լեզեռնի և

¹ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 19:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 148, 151:

³ Կամաուրը, էջ 29-30:

⁴ Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեզեռնը, էջ 107:

⁵ Ատանայի Հայոց պատմություն, էջ 430:

⁶ Մեծ տերությունները. Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 374:

Ֆրանսիական մյուս զորամասերի սխրանքների մասին, քանի որ դա քաղաքական առումով կնպաստեր Ֆրանսիայի հեղինակության բարձրացմանը: Տեղեկացնում էր, որ Է. Ալենբին իրեն ուղարկած հեռագրով ընդունել էր Ֆրանսիական զորքերի ցուցաբերած քաջությունն ու անվեհերությունը¹:

Սեպտեմբերի 29-ին Եգիպտոսի Ֆրանսիական դիվանագիտական գործակալությունը հետևյալ պաշտոնական հաղորդագրությունը տարածեց. «Գեներալ Ալենբիի գերագույն հրամանատարության ներքո դրված Ֆրանսիական զորքերը Պաղեստինի հարձակման ժամանակ ցուցաբերել են ցանկացած գովեստից վեր կանգնած մեծ տոկունություն և խիզախություն, որոնց գլխավոր հրամանատարը բարեհաճել է մատուցել հարգանքի առանձնահատուկ տուրք:

Հրաձիգների գունդը գրավելով Երեք մացառուտների և Սուրի բլուրի դիրքերը, մեկ ժամից էլ պակաս ժամանակամիջոցում գերեվարել է 13 թուրք սպաների, այդ թվում՝ մեկ հրամանատարի, 200 զերու և գրավել է մեծ քանակությամբ գնդացիներ:

Մյուս կողմից, Արևելյան լեզեոնն ի հայտ է բերել ամենամեծ խիզախություն՝ պահպանելով իր դիրքերը, չնայած Արարայում տեղակայված թուրքական մարտկոցներից տեղացող ահարկու կրակին: Սիրիական վաշտն ի հայտ է բերել մեծ արժանիքներ՝ դիմանալով Ռաֆայթում մահ սփռող ուժեղացումը:

Եգիպտոսում Ֆրանսիայի դիվանագիտական գործակալությունը հպարտ է, քանի որ կարող է հիացմունքի տուրք մատուցել հայերին ու սիրիացիներին, որոնք Ֆրանսիական բանակի շարքերում հենց նոր դրսևորել են իրենց հայրենասիրությունն ու ռազմական անվեհերությունը»²:

Պաղեստինում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի ժամանակավոր պաշտոնակատար Կուլոնդրի և իր անունից Պ. Լեֆևր-Պոնտալիսը սեպտեմբերի 26-ին շնորհավորական ուղերձ է ուղարկել նաև Եգիպտոսի հայ ազգային միության նախագահ Լ. Մկրտիչյանին, ուր գովաբանում էր Հայկական լեզեոնի սխրանքը: Հոկտեմբերի 1-ին ուղարկած պատասխանում Լ. Մկրտիչյանը հայտնում էր, որ հայերը հպարտ և ուրախ են լեզեոնի ձեռքբերումների համար: Նշում էր, որ հաջողության համար պարտական են առաջին հերթին գնդապետ Լ. Ռոմիոյի ջանքերին, որը զորամասը հեռու պահեց կու-

¹ Նույն տեղում, էջ 374-375:

² Նույն տեղում, էջ 375:

սակցությունների միջամտություններից և դարձրեց կուռ կառույց: Նա շնորհակալություն էր հայտնում Ֆրանսիային, որ կազմավորեց ու մարզեց այդ զորամասը: Այդտեղ Լ. Մկրտիչյանը նաև ակնարկեց, որ Արևելյան լեզեոնը հիմնականում միայն հայերից էր կազմված և միայն բռնություններից խուսափելու համար էր, որ ժամանակին չեն կոչել Հայկական լեզեոն¹:

Հոկտեմբերի 4-ին «Թայմսը» հրատարակեց լորդ Ռոբերտ Սեսիլի հետևյալ խոսքերը. «Հայկական զորքերը ծառայելով բրիտանական, ֆրանսիական բանակներում, ինչպես նաև ամերիկյան բանակում, իրենց պատվավոր բաժինն ունեն գեներալ Ալենքի մեծ հաղթանակում, Պաղեստինում: Հայաստանի վերաբերյալ դաշնակիցների քաղաքականությունը չի փոխվել»²:

Հոկտեմբերի 9-10-ին ֆրանսիական մամուլը հրատարակեց հետևյալ հաղորդագրությունը. «Ֆրանսական հրամանատարության տակ կռվող զորքերի մեջ է Հայկական լեզեոնը, որը ակտիվորեն մասնակցում է Սիրիայի ազատագրմանը: Այդ զորամասը միացված է ֆրանսիականին և կռվում է ֆրանսիացի սպաների հրամանատարության տակ: Այս վերջին շաբաթների բոլոր գործողություններում հայկական զորքերը ցույց տվեցին իրենց զինվորական լավագույն հատկությունները և ամենամեծ արժանիքը: Սիրիայում դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Ալենքին հաստատեց այդ արժանիքը Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին ուղարկած հետևյալ հեռագրով. «Հպարտ եմ, որ Ձեր հայրենակիցները ակտիվ դեր խաղացին կռվում և մասնակցեցին մեր մեծ հաղթանակին»: Իր կողմից ֆրանսիական զորքերի հրամանատարը, որի հրամանատարության տակ կռվում են նրանք, լույս սփռեց այդ քաջարի զորքերի արժանիքների, տոկունության և եռանդի վրա, որոնց հավատարմությունը դաշնակիցներին անխախտ է մնացել և պատիվ է բերում ֆրանսիական դրոշմին, որի տակ են գտնվում նրանք»³:

Արևելքում դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար Է. Ալենքին բարձր գնահատեց հայ կամավորների սխրանքը: Հոկտեմբերի 12-ին Պ. Նուբարին ուղարկած հեռագրում ֆելդմարշալը նշում էր. «Անկեղծ շնորհակալություններ Ձեզ և հայերին Ձեր շնորհավորական հաճելի հեռագրի համար: Հպարտ եմ, որ իմ հրամանատարության տակ ունեմ հայկական

¹ Նույն տեղում, էջ 376-377:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 19-20:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 23: Պատմություն Ս. Դ. Հնչակեան կուսակցության, հ. Ա, էջ 532:

գունդ: Հայերը փայլուն կերպով կռվեցին և մեծ մասնակցություն ունեցան իմ հաղթանակում»¹: Իսկ Եգիպտոսի հայ ազգային միության ուղարկած շնորհավորանքներին է. Ալենքին պատասխանեց. «Ջերմապես շնորհակալ եմ ձեր շնորհատրություններուն համար, եւ հպարտ եմ այն իրողութեամբ, որ Արեւելեան Լեզունի ձեր հայրենակիցները գործօն բաժին մը վերցուցին կռուին մէջ, եւ մասնակից եղան մեր յաղթանակին»²:

Այսպիսով՝ նույնիսկ բրիտանական բարձրագույն հրամանատարությունը, ի դեմս է. Ալենքիի, ստիպված էր ընդունել հայ զինվորների բարձր մարտունակությունը և փայլուն դերակատարությունը Մեգիդոյի հաղթանակի գործում:

Պետք է նշել, որ այդ նույն ժամանակ Սիրիայի և Եգիպտոսի ոչ հայկական մամուլում որևէ հիշատակություն չարվեց հայ կամավորների մասին, իսկ Սիրիայում հրատարակվող մի ֆրանսալեզու պարբերական, Արևելյան լեզեոնի մասին գրեց, որ այն սիրիացի և լիբանանցի կամավորներից էր կազմված և կռվում էր Սիրիայի պատվի համար³: Դա բավական վիրավորական էր հայերի համար:

Այսպիսով՝ Արևելյան լեզեոնը, որը հիմնականում կազմված էր հայ կամավորներից, բավական երկար ռազմական մարզումներ ունեցավ Կիպրոսում: Առաջին մարտական մկրտությունը նրանք ստացան Միջերկրականի կղզիներում կատարած պարեկային ծառայության և թուրքական ափերում իրականացրած դիվերսիաների միջոցով: 1918 թ. գարնանը լեզեոնի երկու գումարտակները տեղափոխվեցին Եգիպտոս, իսկ օգոստոսի վերջին դիրքեր զբաղեցրին Պաղեստինյան ռազմաճակատի առաջնագծում: Թուրքական բանակը ջախջախիչ հարված ստացավ Մեգիդոյի ճակատամարտում, որից հետո այլևս ուշքի չեկավ: Այդ ճակատամարտին և հաղթանակի կերտման գործին մասնակցեց նաև լեզեոնը, և հայ մարտիկները ցույց տվեցին փայլուն մարտական ունակություններ: Ֆրանսիական կողմը, որպեսզի Արևելքում բրիտանացիների կողքին ցույց տար իր ներկայությունը, ստիպված էր մամուլով փառաբանել Արևելյան լեզեոնի փայլուն հաղթանակը: Սակայն հաճախ մամուլում «մոռանում» էին մատնանշել, որ այն կազմված էր գլխավորապես հայերից:

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1320, թ. 11: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 25:

² Տամատեան Մ., նշվ. աշխ., էջ 123:

³ Պարթևեան Ս., Արարա, էջ 20:

4.2 ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐՈՎ

Լեզոնը Լիբանանում և Սիրիայում

Դաշնակցային զորքերի փայլուն հաղթանակից և թուրք-գերմանական բանակային խմբավորման ամբողջական ոչնչացումից հետո բացվեց ճանապարհը դեպի Լիբանան և Սիրիա: 1918 թ. սեպտեմբերի 26-ին Է. Ալենբին վերադասավորեց ուժերը և շարժվեց դեպի հյուսիս: Թուրքերը Մեզիդոյի ճակատամարտից հետո ամբողջովին բարոյալքվել էին, անընդունակ էին որևէ լուրջ դիմադրության: Բրիտանացիների գլխավոր խնդիրն էր գրավել Հալեպը: Մեծ Բրիտանիայի ռազմական խորհուրդը համոզված էր, որ Հալեպի գրավումից հետո թուրքերը կդադարեցնեն պատերազմը: Դա էր պատճառը, որ ռազմական խորհուրդը Է. Ալենբին առաջարկեց հեծելազորի ուժերով հնարավորինս արագ հասնել 480 կմ հեռավորության վրա գտնվող Հալեպին: Սակայն գեներալը հրաժարվեց միայն հեծելազորի ուժերով այդքան հեռավոր ռազմարշավ իրականացնել, որի արդյունքում երկար ճանապարհից հոգնած հեծելազորը ստիպված կլիներ բախվել Հալեպի թուրքական 25.000-ոց բանակին, որն այդ ընթացքում Անատոլիայից կարող էր թարմ ուժեր ստանալ: Ռազմական խորհրդում քննարկվեց նաև Ալեքսանդրետում ավիանում կատարելու և այնտեղից դեպի Հալեպ շարժվելու նախագիծ, սակայն հաշվի առնելով Դարդանեյի ավիանման ձախողված փորձը, այն մերժվեց: Նման պայմաններում Է. Ալենբին որոշեց ամբողջ զորքով առաջանալ, որն ավելի դանդաղ, բայց ապահով կլինի¹: Նա՝ որպես հեծելազորի թիրախ ընտրեց Դամասկոսը, իսկ հետևակի հիմնական ուժերը որոշեց ծովափով շարժել դեպի Բեյրութ և Տրիպոլի:

Կատաղի մարտերից հետո սեպտեմբերի 30-ին Էմիր Ֆեյսալի արաբական, իսկ հոկտեմբերի 1-ին բրիտանական զորքերը մուտք գործեցին Դամասկոս²: Այնտեղ գերի հանձնվեց ավելի քան 20.000 թուրք զինվոր³:

Դամասկոսում կենտրոնացած շուրջ 30.000 հայ տարագիրներն ուրախությամբ ընդունեցին ազատարար բանակին⁴: Արդեն հոկտեմբերի 3-ին Անդրանիկ Կենճյանի ատենապետությամբ կազմվեց Ժամանակավոր ազ-

¹ Massey W., Allenby's final triumph, p. 222.

² ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 1:

³ Massey W., Allenby's final triumph, p. 223.

⁴ ՀԱԱ, Ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 13-14:

գային վարչություն¹: Այնտեղ կենտրոնացած էին հիմնականում կիլիկիահայեր²: Նրանք վերջնականապես փրկվեցին թուրքական յաթաղանից:

Բեյրութը գրավվեց առանց մարտերի: Դեռևս սեպտեմբերի 30-ին թուրքերն ու գերմանացիները հեռացան քաղաքից՝ նախապես ոչնչացնելով սննդի պաշարները: Քաղաքում առանց այդ էլ սով էր տիրում, և պատերազմի տարիներին տեղի բնակչության գրեթե կեսը սովամահ էր եղել: Փաստորեն՝ Բեյրութի բնակչությունը կանգնեց ամբողջական ոչնչացման եզրին³:

Արևելյան լեգեոնի 3-րդ գումարտակը սեպտեմբերի 29-ին Ֆամագուստայից բրիտանական «Պըրկըն» նավով շարժվեց ռազմաճակատ: Հաջորդ օրը նրանց տեղափոխող նավը կանգ առավ Հայֆայի նավահանգստի մոտ: Իսկ հոկտեմբերի 1-ին հայ և սիրիացի զինվորները ափ դուրս եկան Բեյրութի նավահանգստում: Տեղի բնակչությունը խանդավառությամբ ընդունեց ազատարար զինվորներին՝ նրանց ճանապարհը պատելով ծաղիկներով: Հայ զինվորները հաստատվեցին զորանոցի վերածված Ֆրանսիական համալսարանի տարածքում: Սպայակույտը տեղավորվեց շենքում, իսկ զինվորների համար վրաններ խփվեցին բակում: Նավի բեռնաթափումը ավարտվեց միայն հոկտեմբերի 3-ին⁴: Որոշ աղբյուրներում 3-րդ գումարտակի Բեյրութ հասնելու օր է նշվում հոկտեմբերի 6-ը⁵:

Հոկտեմբերի 7-ին, երբ բրիտանական հետախուզական ուժերը հասան Բեյրութ, պարզեցին, որ այն արդեն ազատագրված է⁶: Ինչպես տեսնում ենք, Կիպրոսից ժամանած հայկական լեգեոնի 3-րդ գումարտակը դաշնակցային առաջին զորախումբն էր, որը ուտք դրեց Բեյրութ: Դրանով ֆրանսիացիները փորձում էին ցույց տալ, որ իրենք են հանդիսանում Լիբանանի մայրաքաղաքի ազատարարները:

Հոկտեմբերի 10-ին Բեյրութ հասան նաև 1-ին և 2-րդ գումարտակները: Նրանք չափազանց հոգնած էին երկարատև ճանապարհից, զգալի մասը հիվանդ էր: Դա բավական տխուր տպավորություն թողեց նրանց՝ որպես հաղթողների, ոգևորությամբ դիմավորելու դուրս եկած երրորդ գումարտակի զինվորների վրա: Բեյրութի բոլոր գլխավոր կետերի վերահսկողությունն անցավ հայ զինվորներին⁷:

¹ Կենճեան Ա., Հալաճականի յուշեր 1914-1918, Պեյրութ, 1964, էջ 146:

² ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 3:

³ Massey W., Allenby's final triumph, p. 283.

⁴ Աճեմեան Խ., Էջեր կամառոյի օրագրէս, էջ 132-138:

⁵ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

⁶ Gullett H., The Australian Imperial Force, p. 776-777.

⁷ Աճեմեան Խ., Էջեր կամառոյի օրագրէս, էջ 140-141:

Ըստ Ս. Պողոսյանի և Վ. Մեսիի՝ լեգեոնի 1-ին և 2-րդ գումարտակները Բեյրութ են հասել հոկտեմբերի 20-ին¹:

Ծովափի երկայնքով շարժվող բրիտանական 7-րդ հետևակային դիվիզիան հոկտեմբերի 18-ին գրավեց Տրիպոլիս²: Է. Ալենբին որոշեց Հալեպին մոտենալ երեք փուլերով. գրավել լիբանանյան Ռայակ քաղաքը, հետո՝ Հոմսը, ապա՝ գրոհել Հալեպը³:

Ռայակը գտնվում էր Դամասկոսից մոտ 65 կմ հեռավորության վրա: Այն տրանսպորտային կարևոր հանգույց էր, ուներ խոշոր օդանավակայան, այդտեղ էին թուրքական հիմնական պահեստները, գերմանական ու թուրքական բավական մեծ ուժեր էին կենտրոնացված: Հոկտեմբերի 6-ին բրիտանական զորքերը մտան Ռայակ: Թուրքերն առանց դիմադրության նախորդ օրը հեռացել էին քաղաքից՝ այրելով իրենց 32 ինքնաթիռները⁴:

Հոկտեմբերի 15-ին բրիտանական զորքերը մտան Հոմս: Այդտեղ ևս թուրքերն առանց որևէ դիմադրության նահանջել էին⁵: Հոկտեմբերի 19-ին բրիտանական զորքերը շարունակեցին հաղթարշավը Հոմսից հյուսիս: Հոկտեմբերի 21-ին բրիտանական օդուժը ռմբակոծեց Համա քաղաքը, որտեղից հաջորդ օրը թուրքերը նահանջեցին⁶:

Է. Ալենբին որոշեց Հալեպը գրավել հոկտեմբերի 26-ին: Նույն օրը սպասվում էր, որ ֆրանսիական նավատորմը ափհանում կկատարեր Ալեքսանդրետում: Ֆրանսիացիները ցանկանում էին գրավել Ալեքսանդրետը, և Փարիզից հրահանգեցին Սիրիայի ֆրանսիական նավատորմի հրամանատար ծովակալ Ժ. Վարնեյին գրավելու այդ նավահանգիստը: Հոկտեմբերի 15-ին Բեյրութում Ժ. Վարնեյն այդ մասին տեղեկացրեց Է. Ալենբիին: Վերջինս համաձայնեց, որ Ալեքսանդրետը գրավվի ֆրանսիական և հայկական զորքերի միջոցով: Սակայն թուրքերը նոր համալրումներ ստացան, ականապատեցին Ալեքսանդրետի ծովածոցը և հրետանային կրակով հետ մղեցին ֆրանսիական նավատորմին⁷: Նման ելք բրիտանացիները սպասում էին: Դրանով էր պայմանավորված, որ իրենք մինչ այդ հրաժարվել էին Ալեք-

¹ Պողոսյան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը, 1916-1919, հ. Բ, Փարիզ, 1947, էջ 134: Massey W., Allenby's final triumph, p. 320.

² Massey W., Allenby's final triumph, p. 320.

³ Նույն տեղում, էջ 289:

⁴ Cutlack F., The Australian Flying Corps, p. 169.

⁵ Massey W., Allenby's final triumph, p. 299.

⁶ Նույն տեղում, էջ 302:

⁷ Նույն տեղում, էջ 302-303:

սանդղետի ավհանման գաղափարից և հաճույքով համաձայնեցին թույլ տալ ֆրանսիական նավատորմին փորձել մոտենալ այդ նավահանգստին:

Հոկտեմբերի 23-ին բրիտանական առաջապահ զորքերը մոտեցան Հալեպին: 5-րդ հեծելազորային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Հ. Մականդրյուն առավոտյան ժամը 10-ին պատվիրակ ուղարկեց քաղաք՝ պահանջելով հանձնվել առանց դիմադրության: Թուրքերը միայն ժամը 17-ին պատասխանեցին մերժումով: Հ. Մականդրյուն որոշեց դիրքավորվել և սպասել հիմնական ուժերի ժամանմանը, որոնք տեղ կհասնեին հոկտեմբերի 25-ին, որպեսզի դրա հաջորդ օրը սկսեն գրոհը: Արաբական զորքերը էմիր Նասիրի գլխավորությամբ հոկտեմբերի 25-ին մոտեցան քաղաքին, և նրանց մի մասը գիշերով մտավ Հալեպ, ուր ապստամբության պատրաստ մեծ թվով արաբներ կային: Հոկտեմբերի 26-ի առավոտյան ժամը 6-ին սկսվեց բրիտանական և արաբական զորքերի գրոհը: Թուրքերը որոշ դիմադրությունից հետո ստիպված էին հանձնել Հալեպը¹: Հալեպի թուրքական զորախմբի հրամանատարությունը հանձնվել էր Մուստաֆա Քեմալ փաշային, ով չկարողացավ կազմակերպել լուրջ պաշտպանություն, չնայած դեռևս ուներ ավելի մեծաքանակ զորքեր, քան քաղաքին մոտեցած բրիտանա-արաբական ուժերն էին: Նա փախուստի դիմեց՝ իր կովոդ զինվորներին թողնելով առանց ղեկավարության:

Հալեպի հայերը մեծ խանդավառությամբ ընդունեցին ազատարար բրիտանական և արաբական բանակների մուտքը քաղաք²: Այնտեղ կենտրոնացված շուրջ 50,000 հայ տարագիրները կարող էին հանգիստ շունչ քաշել:

Ինչպես և սպասվում էր, Հալեպի անկումից հետո թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել: Մինչ այդ բրիտանական ուժերին հաջողվեց գրեթե ամբողջությամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները: Թուրքերը տվեցին հսկայական թվով զոհեր ու գերիներ: Ըստ Վ. Մեսիի՝ գլխավոր հարձակումը սկսելուց հետո մինչև հոկտեմբերի կեսը գերվեցին 2417 սպա և 46409 զինվոր, որից գերմանացի էին 158 սպա և 1703 զինվոր³: Իսկ Հ. Գուլետը նշում է, որ սեպտեմբերի 19-ից մինչև զինադադարի կնքումը բրիտանացիների ձեռքն ընկավ 75.000 գերի, այդ թվում՝ 3.700 գերմանացի ու ավստրիացի, 360 հրա-

¹ Նույն տեղում, էջ 307-309:

² Կէօքճեան Վ., նշվ. աշխ., էջ 101-102:

³ Massey W., Allenby's final triumph, p. 269.

նոթ, 800 գնդացիր, 210 բեռնատար և 50 մարդատար մեքենա, 90 շոգեքարշ, 470 վագոն, 3.700 բեռնակիր անասուն և այլ ռազմավար¹:

Գերի ընկան նաև գերմանական ու թուրքական բանակներում ծառայող բազմաթիվ հայ զինվորներ: Ալեքսանդր Այնթապյանի վկայությամբ հայ գերիները հայտնվել էին ծանր վիճակում: Նա 1917 թ. հունիսին Մարաշի գերմանական միսիոներական դպրոցն ավարտելուց հետո 10 հայ այլ տղաների հետ զորակոչվել էր գերմանական բանակ, պարեկային ծառայություն էր կատարել Կիլիկիայով անցնող Բեռլին-Բաղդադ երկաթուղագծի մոտ, իսկ 1918 թ. օգոստոսին ուղարկվել էր Պաղեստինյան ճակատ: Սեպտեմբերի 21-ին նա գերվել էր Աֆուլայում: Նա վկայում է, որ հայերին, հույներին, հրեաներին բրիտանացիները միացնում էին թուրք ռազմագերիներին, իսկ եվրոպացիներին առանձին և ավելի լավ պայմաններում էին պահում: Նրան դժվարությամբ էր հաջողվել մնալ գերմանացիների մեջ, այն էլ մորեղբոր՝ բրիտանական գաղտնի ծառայության սպա, պրոֆեսոր Հարություն Մուրադյանի անունը տալուց հետո²:

Այսպիսով՝ Մեգիդոյի փայլուն հաղթանակից հետո, մեկ ամսվա ընթացքում դաշնակցային ուժերը թուրքերին վտարեցին Պաղեստինից, Հորդանանից, Լիբանանից և Սիրիայից: Այդ հսկայական տարածքի գրավումը կարճ ժամանակում աննախադեպ և անսպասելի էր: Թուրքական կողմին այլ բան չէր մնում, քան հաշտություն խնդրելը և անձնատվության ենթարկվելը: 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարով ռազմական գործողությունները դադարեցին:

Ռաֆաթ-Արարայի մարտերից հետո Արևելյան լեզգոնի երկու գումարտակները 5 օր հանգստացան, ապա սիրիական անապատներով շարժվեցին հյուսիս: Չնայած ճանապարհին թշնամու այդպես էլ չհանդիպեցին, սակայն կիզիչ արևի տակ իրականացվող այդ երթը բավական ծանր էր կամավորների համար:

Ըստ Մ. Թաթարյանի՝ նրանց նավերով կարող էին մեկ օրում Բեյրութ հասցնել, սակայն գնդապետ Լ. Ռոմիոն այդ դժվարին ռազմերթն իրականացրեց տեղացիներին ֆրանսիական ուժը ցուցադրելու համար³: Ֆրանսիան միայն փոքրաթիվ զորախումբ ուներ տարածաշրջանում, այն էլ կազմված էր հիմնականում հայերից ու ալժիրցիներից: Ֆրանսիական զո-

¹ Gullett H., The Australian Imperial Force, p. 783.

² Kazanjian P., The Cilician Armenian ordeal, Boston, 1989, p. 49-53.

³ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 20:

րախմբի կազմում ընդգրկված էին 800 ֆրանսիացի, 3.000 հայ, 3.000 ալժիրցի ու սենեգալցի¹: Պատերազմից հետո Սիրիան ու Լիբանանը անցնելու էին Ֆրանսիային: Հետևաբար՝ այդ գաղութային կայսրությանն անհրաժեշտ էր որևէ կերպ ցույց տալ իր ներկայությունը բրիտանական գործերի կողքին: Սեփական ներկայությունը ֆրանսիացիները կարող էին ցուցադրել միայն Արևելյան լեգեոնի ռազմերթի միջոցով, ինչպես նաև մամուլի միջոցով այդ գրեթե ամբողջությամբ հայկական զորամիավորման գործունեությունը գովաբանելով, իհարկե, հաճախ «մոռանալով» այդ կամավորական բանակի հայերից կազմված լինելը:

Արարայից մինչև Բեյրութ 250 կմ էր, որը լեգեոնն անցավ մեծ զրկանքների գնով: Երկար ճանապարհը, անապատի կիզիչ արևը, ջրի պակասը, թերի սնունդը, իսպանիական գրիպը և այլ զրկանքներ հյուծեցին լեգեոնականներին: Սակայն նրանց ուժ էր տալիս այն միտքը, որ ամեն մի քայլով մոտենում էին բաղձալի նպատակին՝ Կիլիկիային:

Լեգեոնականներից Կարապետ Թորոսյանը Արարայից մեկնելու առաջին օրվա մասին գրում է. «Մեր խանդավառությունը հասած էր իր գագաթնակետին: Մենք զմեզ կը նկատեինք այն հաաատաւոր Հայերը որոնք ատենին ոչ միայն ուրքով, այլ բուպիկ ուխտի կ'երթային մեր սրբավայրերը իրենց փափաքին իրագործումը խնդրելու Հայոց սուրբերէն»²:

Առաջին օրը լեգեոնը հասավ Հայֆա և բանակեց ծովափին: Ծարավը հագեցնելու համար զինվորները ստիպված էրն ծովեզերքի մոտ ավազը փորել և այդ անորակ ջուրը խմել: Հաջորդ օրը լեգեոնը մտավ Աքրա: Հաջորդող օրերին հետզհետե հոգնածությունն ավելի էր մեծանում: Օրերով ստիպված էին սնվել բրիտանական պաքսիմատով, որը այնքան էր չորացել, որ ուտելու համար պետք է թրջեին ջրով: Սակայն այդ դժվարությունները չէին կարող կոտրել հայ մարտիկների կամքը, որոնք, երկար սպասումից հետո, մոտենում էին հայրենիքին: Երգը, պարը, կատակները բարձրացնում էին մարտիկների ոգին: Չնքուշցի երիտասարդները, որքան էլ հոգնած լինեին, երեկոյան պարտադիր իրենց խմբապարով ոգևորություն էին մտցնում³: Լեգեոնականները Եգիպտոսից դուրս գալուց հետո առաջին անգամ Լիբանանում հանդիպեցին առատահոս սառը ջուր:

¹ Fulton L. Bruce, France and the End of the Ottoman Empire, The Great Powers and the end of the Ottoman Empire, edited by Marian Kent, London, 2005, p. 157.

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 161:

³ Նույն տեղում, էջ 161-162:

Առաջխաղացման ընթացքում բրիտանական զորամասերի զինվորների կեսը վարակվեցին մալարիայով և իսպանական գրիպով: Այդ համաճարակները նրանց փոխանցվեցին թուրքական բանակից: Արդեն Հայֆայում պարզ դարձավ, որ իսպանական գրիպի համաճարակը հասել էր նաև Հայկական լեգեոնին:

Լեյտենանտ Վահան Փորթուգալյանը գրում է. «Այդ յառաջխաղացման ընթացքին անտեսանելի թշնամի մը բանակը կազմալուծման վտանգի ենթարկեց: Խորհրդաւոր համաճարակ մը: Ամէն օր զինուորներ, տասնեակներով, ջերմէ կը բռնուէին, բայց այլ ախտանիշներով, ու կ'իյնային՝ քալելու անկարող: Երբեմն մահով կը կնքուէր հիւանդութիւնը, որուն դարման չէին գտներ բժիշկներ: Շատ ուշ, խաղաղութենէն ետքը, հասկցուեցաւ թէ կոիւի էսպանեոլի համաճարակն էր, որ ըստ վիճակագրութեանց, աւելի զոհեր տարաւ աշխարհի մէջ քան չորս տարուան պատերազմը»¹:

Լեգեոնի բժիշկը հուսադրեց մարտիկներին նրանով, որ հայերը լայնակուրծք էին և կարող էին հաղթահարել այդ հիվանդությունը: Մոտ 800 հայ զինվորներ հիվանդացան իսպանական գրիպով, որոնցից 6-ը մահացան²: Փաստորեն՝ երկու զոմարտականների հայ զինվորների գրեթե կեսը վարակվել էր այդ չարաբաստիկ հիվանդությամբ:

Համաճարակի դեմ պայքարելու համար չկային դեղորայք, պայմաններ, բժիշկներ: Հիվանդներին՝ որպէս բուժում, կերակրում էին սոխի ու լոլիկի աղցանով, որը որոշ չափով նպաստում էր ապաքինմանը: Քայլելու անընդունակ հիվանդ զինվորները երկար ժամանակ անխնամ մնում էին ճանապարհներին, քանի որ բավարար փոխադրամիջոցներ չկային: Դրան գումարվում էր ֆրանսիացի որոշ բժիշկների ցուցաբերած անտարբերությունը: Հայֆայում մնացած հիվանդ լեգեոնականները հոկտեմբերի վերջին մեկնեցին Բեյրութ, քայլելու անընդունականները՝ նավով, իսկ մոտ 150-ը՝ ոտքով³:

Հայկական լեգեոնը հաստատվեց Բեյրութի հարավային մասում գտնվող մի կաթոլիկ վանքի տարածքում: Սկզբում լեգեոնականները ճաշում էին բացօթյա: Բեյրութում այդ ժամանակ սով էր, և բնակչությունը հաց էր մուրում զինվորներից: Հայ կամավորներն իրենց հացը բաժանում էին սովյալ երեխաներին: Այդ մասին տեղեկանալով՝ հրամանատարությունն արգելեց բացօթյա ճաշելը: Բրիտանական նավերը մեկ շաբաթ անց քաղաք

¹ Նույն տեղում, էջ 165:

² Նույն տեղում, էջ 163:

³ Նույն տեղում, էջ 165-167:

հասցրին սնունդ, հագուստ, դեղորայք և այլ անհրաժեշտ ապրանքներ, որով զինվորների և բնակչության վիճակը բարելավվեց¹:

1918 թ. հոկտեմբերից Արևելյան լեգեոնը մտավ Արևելքի ֆրանսիական զորախմբի կազմի մեջ, որի հրամանատարն էր գեներալ ժյուլ Համելինը²:

Բեյրութի ռազմավարական բոլոր կետերի վերահսկողությունը բրիտանացիները հետզհետե վերցնում են իրենց ձեռքը: Հայկական լեգեոնը իրականացնում էր պահակային և պարեկային ծառայություն³:

Նոյեմբերի 18-ին Բեյրութում ցավալի միջադեպ տեղի ունեցավ: Քաղաքում զբոսնող հայ լեգեոնականների հետ ընդհարվեցին տեղի ոստիկաններն ու էմիր Ֆեյսալի զինվորները⁴: Դա Ֆեյսալի կողմից ֆրանսիացիների դեմ կազմակերպված սադրանք էր, քանի որ էմիրը ցանկանում էր Սիրիան ու Լիբանանը դարձնել արաբական անկախ պետության մաս:

Դեպքից մի քանի օր առաջ ֆրանսիական հրամանատարությունը տեղեկություն էր ստացել արաբների կողմից նախապատրաստվող զինված գործողության մասին: Դրանով պայմանավորված՝ քաղաքի պահակակետերում զինվորների քանակը մեծացվել էր, նրանց տրվել էր բավարար զինամթերք: Դեպքը տեղի ունեցավ հետևյալ պայմաններում: Լեգեոնականները գնումներ կատարելուց վճարեցին ֆրանսիական ֆրանկով, քանի որ աշխատավարձը դրանով էին ստանում, սակայն շրջիկ առևտրականը պահանջեց թուրքական լիրա և զինվորների տված թղթադրամը արհամարհանքով ցուցադրաբար գետին նետեց: Դրանից վիճաբանություն ծագեց: Մոտակայքում գտնվող տեղացի ոստիկանը, մոտենալու և վիճաբանությունը դադարեցնել փորձելու փոխարեն, ատրճանակով մի քանի անգամ օդ կրակեց, որն ազդանշան հանդիսացավ, որպեսզի անմիջապես զանազան կողմերից մի քանի տասնյակ զինված արաբներ դուրս գան և հարձակվեն անգլեն լեգեոնականների վրա: Հայ զինվորներից մալաթիացի Աբրահամ Աբրահամյանը սպանվեց, իսկ պանտրմացի Հակոբը վիրավորվեց: Մոտակա պահակակետի հայ լեգեոնականներն անմիջապես օգնության հասան և կրակ բացեցին զինյալների ուղղությամբ: Խռովարարները փախուստի դիմեցին՝ իրենց հետ տանելով մեկ տասնյակից ավելի սպանվածներին և վիրավորներին: Ֆրանսիացի սպաները հայ լեգեոնականներին հորդորեցին նոր քայլեր չձեռնար-

¹ Նույն տեղում, էջ 164:

² Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 168:

⁴ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

կել վրեժ լուծելու համար: Սակայն հայ մարտիկները, տված փայլուն հակահարվածով, արդեն բավարարվել էին և նոր գործողության չէին ձգտում: Հաջորդ օրը արաբներն իրենց սպանվածների դիակները սայլերով բերեցին Բեյրութի կառավարչատուն և փորձեցին ներս մտնել, սակայն փոքրաթիվ հայ պահակները կարողացան այդ սադրիչներին ցրել²:

Ռ. Հերյանը դեպքից 20 օր անց Պ. Նուբարին ուղարկած նամակում հետևյալ կերպ է ներկայացնում իրողությունը. երբ առևտրականը ֆրանկը չի ընդունել, մոտեցել էր ոստիկանը, որին լեգեոնականը բացատրել էր խնդրի էությունը, սակայն արաբ ոստիկանը պատասխանել էր, որ դա վատ փող է և դրանով կարող ես հետևդ մաքրել: Ձինվորը այդ վիրավորանքին պատասխանել էր բռնցքի հարվածով, որից հետո սկսվել էր հրաձգություն: Սպանվել էր մեկ լեգեոնական, վիրավորվել՝ երեքը: Արաբներից սպանվել են երեքը, վիրավորվել ութը³:

Գերմանական բանակի գեներալ, Պրուսիայի ռազմական նախարար (1916-1918 թթ.) Հերման ֆոն Ստեյնը վկայում է, որ դեռևս պատերազմի ժամանակ արաբները շատ դեպքերում մերժում էին ընդունել թղթադրամ⁴: Սակայն թղթադրամն ընդունել-չընդունելու խնդիրը միայն առիթ էր, իրականում դա կազմակերպված սադրանք էր ընդդեմ ֆրանսիական կայսրապաշտական նկրտումների, որի արդյունքում տուժեցին հայ զինվորներ:

Այդ դեպքից հետո մոտ քսան օրով 3-րդ գումարտակի հայ զինվորներին ուղարկեցին Լեռնային Լիբանան, որպեսզի կրքերը հանդարտվեն և նոր ընդհարումներ չլինեն⁵: Լեգեոնի 3-րդ գումարտակը, մինչև Կիլիկիա տեղափոխվելը, հաստատվեց Բեյրութից մոտ 20 կմ հեռավորության վրա գտնվող Ջունիե (Ղազիր) ծովեզրյա ավանում՝ վարժարանի տարածքում⁶: Լեգեոնականները Ջունիեից այցելության գնացին Ջմմառի հայ կաթոլիկական վանքը: Վանականները նվազախմբով և հյուրասիրությամբ դիմավորեցին հայ զինվորներին⁷: Լեգեոնական Արամ Հովսեփյանը նկատում է, որ դա

¹ Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, էջ 170-173: Աճեմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 151-154:

² Աճեմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 154:

³ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 784, թ. 4:

⁴ Stein H., A War Minister and his work. Reminiscences of 1914-1918, London, 1980, p. 241.

⁵ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 21:

⁶ Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, էջ 170: Աճեմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 156-158:

⁷ Աճեմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, էջ 159:

միակ կարճ ժամանակաշրջանն էր, որ իրենք հանգստացել են: 1-ին գումարտակը այնտեղ մնացել էր մոտ երկու շաբաթ, ապա վերադարձել էր Բեյրութ, սակայն զորանոցից դուրս գալ հայ զինվորներին արգելվել էր մինչև Կիլիկիա մեկնելը¹:

Այսպիսով՝ հայ զինվորները հայտնվել էին ֆրանս-արաբական հակադրությունների ու սադրանքների ոլորտում, սակայն կարողացան պատվով դուրս գալ այդ իրավիճակից: Այդ բախումը ձեռնառու էր բրիտանացիներին, ովքեր մի կողմից սրում էին ֆրանս-արաբական հակասությունները, մյուս կողմից առիթ ունեցան Բեյրութի ռազմավարական կետերից հեռացնել ֆրանսիական դրոշի ներքո կռվող հայ զինվորներին և նրանց փոխարինել բրիտանական զորքերով:

Լեգեոնը և հայ տարագիրները

Հայկական զորամասը մեծ ոգևորություն էր առաջացնում ցեղասպանությունը վերապրած տարագիրների մոտ, բարձրացնում նրանց ոգին, հույս ներշնչում ապագայի նկատմամբ: Միաժամանակ լեգեոնականները բազմաթիվ հայ կանանց ու աղջիկների ազատեցին մահմեդականների ձեռքից, ուղեկցեցին հայ գաղթականների քարավանները դեպի Կիլիկիա:

Լեգեոնական Կ. Թորոսյանը գրում է. «Մօտ 10 օր ճամբորդած էինք: Իրիկուն մը կանգ առինք բլուրի մը ստորոտը գիշերելու համար. զբաղած էինք կարգադրութիւններով, երբ տեսանք որ բլուրին գագաթը մարդ մը կանգնած՝ մեզ կը դիտէր: Խմբապետ Արեւեան, որ մեր ամենաշատ սիրուած պաշտօնեան էր, հայերէն հրամաններ կ'արձակէր վրանիս պոռալով: Յանկարծ տեսանք որ բլուրի վրայի մարդը աղաղակ մը փրցնելով սկսաւ վազել դէպի մեզ: Մենք գործերնիս թողուցինք տեսնելու համար թէ ինչ կը պատահի: Երբ ան մօտեցաւ մեզի, կանգ առաւ, դիտեց մեզ ու հայերէն ըսաւ. «Ձեր դէմքէն կը հասկնամ որ դուք Հայ էք»: «Շիտակ ես, ըսինք, բոլորս ալ հայ ենք»: Այս խօսքին վրայ ան գրկեց զինուոր մը ու համբուրեց, յետոյ ուրիշ մը եւ ուրիշ մը: Մարդը ուրախութենէն բարձրաձայն կը խնդար ու միեւնոյն ատեն առատ արցունքի կաթիլներ կը գլորուէին անոր խորշումած այտերէն վար: Մեր հարցումներուն պատասխանելով ըսաւ որ մօտակայ արաբ գիւղ մը կը բնակէր. այնտեղ ոչինչ ունէր բաց միայն մէկ արոտավար կորեկ եւ ըսաւ. «Գետինն անցնի իրենց կորեկը. ես այլեւս ձեզմէ չեմ բաժնուիր»: Ասոր

¹ Արաբա, էջ 29:

նման 15-20 Հայեր, մեծաւ մասամբ կիներ ու անչափահասներ գտնուեցան ու հետեւեցան բանակին»¹:

Այս բնույթի բազմաթիւ վկայություններ կան բոլոր լեզեոնականների հուշերում:

Վ. Փորթուգալյանը գրում է. «Կը պատահէինք երբեմն հայ տարագիր բեկորներու, բոլորը ցնցոտիներու մէջ, լուռ, արցունքը իրենց աչքերուն մէջ՝ թերահաւատութեամբ կը դիտէին ազատարար դաշնակից բանակին անցքը: Օր մը, կ'անցնէինք գիտէ մը, ուր կանգ առինք հանգիստի համար: Լէզեոնականները շարժեցան ըստ զինուորական հրամաններուն, որոնք կը տրուէին ֆրանսերէն: Մէկը կանչեցի եւ հրահանգ մը տուի, հայերէն, բարձրաձայն, ծի նստած ըլլալով: Իրարանցում մը տիրեց հանդիսատեսներուն մէջ: «Հա՛յ են... Հա՛յ են» կը բացականչէին, կարծես հրաշքի մը առջեւ: Ուրիշ օր մը, գնդապետ Ռօմիէլոյի հրամանով, քանի մը ծիաւոր լեզեոնականներ հետս առնելով, գացինք Արաբի մը տունէն փրկել հայ աղջնակ մը, ինչ որ կատարուեցաւ, երկար բանակցութիւններէ ետքը, փափկանկատութեամբ, որովհետեւ Արաբը բարի մարդ մըն էր»²: Լեյտենանտ Հ. Արկյանի գլխավորությամբ լեզեոնականները Աքրայում արարներից ազատեցին դյորթյուցի մի աղջկա, իսկ Սամարայում հետ գնեցին սսեցի մի աղջկա³:

Սերժանտ Վահան Արամյանն իր հուշերում գրում է, որ Հայֆայից հետո մտել են Կազա⁴ քաղաքը, ուր լեզեոնականները հայ գաղթականներ են փնտրել: Տեղի կաթոլիկ եկեղեցում պատսպարված բազմաթիւ տարագիրների են հանդիպել: Այդտեղ տեղեկացել են, որ մոտակա տներից մեկում Մարիամ անունով մի հայ աղջիկ կար, որին արաբ տանտերը ցանկանում էր ամուսնացնել իր որդու հետ: Ֆրանսիացի գնդապետի և Վաղարշակ վարդապետ Արշակունու հետ լեզեոնականներն ազատում են աղջկան և ուղարկում Հայֆա, ապա՝ Պորտ Սայիդ⁵: Վ. Արամյանը Բաղչեում Ց տարեկան սսեցի մի աղջկա ազատեց թուրքերից և Այրանում ժամանակավոր խնամքի հանձնեց մի հունգարացի ծեր զույգի⁶:

¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 162-163:

² Նույն տեղում, էջ 164-165:

³ Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 484-485:

⁴ Հավանաբար խոսքը Սիդոնից հարավ գտնվող Ղազին քաղաքի մասին է:

⁵ Վկայարան հայկական ցեղասպանության, Պատրաստեց Յ. Իսկահանեան, Կ. Ե, Պէյրուֆ, 2013, էջ 68:

⁶ Նույն տեղում, էջ 69:

Բեյրութում հայ զինվորները հանդիպեցին հազարավոր գաղթական հայերի, որոնք չափազանց թշվառ վիճակում էին: Տարագիրները, մոռանալով իրենց ծանր վիճակը, մեծ ցնծություն ապրեցին հաղթող բանակի շարքում տեսնելով հայ կամավորներին¹: Բեյրութի հայերը մեծ ուրախությամբ դիմավորեցին հայ զինվորներին, ամեն կերպ փորձում էին պատվել, հյուրասիրել, օժանդակել նրանց²:

Բեյրութում մեծ թվով դիմումներ եղան կամավորագրվելու Արևելյան լեգեոնին, և այնտեղ 800 հայ կամավորներից կազմավորվեց Դ գումարտակը³: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նաև թուրքական բանակի գերված հայ զինվորները⁴:

Սիրիայում, Լիբանանում, Միջագետքում գտնվող հայ գաղթականության մեջ մեծ էր Հայկական լեգեոնին միանալու ձգտումը: Ժ. Պիկոն Ռուբեն Հերյանին Բեյրութում տեղեկացրել էր, որ նախատեսվում էր հայկական զորքի թիվը հասցնել 20.000-ի: Դա բավական ոգևորեց հայերին: Հալեպից մոտ 800 երիտասարդներ Ռ. Հերյանի գլխավորությամբ ոտքով հասան Ադանա, որպեսզի զինվորագրվեն Հայկական լեգեոնին, սակայն ֆրանսիական հրամանատարությունը մերժեց: Գնդապետ Լ. Ռոմիոն Կիլիկիան գրավելուց հետո ամեն կերպ խոչընդոտում էր հայկական զորամասի մեծացմանը և լավ հարաբերություններ էր հաստատել թուրքերի հետ⁵:

Դամասկոսն ազատագրելուց անմիջապես հետո Արևելյան լեգեոնին միանալու համար կամավորագրվեցին 1.000 հայեր: Հինվորագրվել ցանկացողների թիվը շատ ավելի մեծ էր, սակայն ֆրանսիական հրամանատարությունը դադարեցրեց կամավորագրությունը⁶: Հոկտեմբերի 26-ին հայկական զորագունդը զորահանդես կատարեց Դամասկոսում, ապա Բաբ Շարգի Ս. Սարգիս հայկական եկեղեցում նրանց օրհնեց Կիլիկիայի Սահակ Բ կաթողիկոսը: Հոկտեմբերի 27-ին կամավորները հայ գաղթականների խանդավառ բացականչությունների ներքո Դամասկոսից մեկնեցին Բեյրութ, որպեսզի մասնակցեն հայրենիքի ազատագրմանը⁷: Դամասկոսից Բեյրութ 800 հայ կամավորներին առաջնորդել էր, թուրքական բանակի կապիտան

¹ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 20-21:

² Աճէմեան Խ., էջեր կամատրի օրագրէս, էջ 142:

³ Ամուրեան Ա., Հայ Դատը, էջ 157:

⁴ Աճէմեան Խ., էջեր կամատրի օրագրէս, էջ 142:

⁵ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 221-223:

⁶ ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 680, թ. 4:

⁷ ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 8-9:

Ս. Թորոսյանը: Բեյրութում նա հանդիպեց եղբայրներին՝ Հայկական լեզունին սերժանտ Բարսեղ և կապրալ Արամ Թորոսյաններին, որոնք Ամերիկայից էին կամավորագրվել: Ս. Թորոսյանը իր մարտական փորձը հայրենիքին ծառայեցրեց լեզեոնում: Նշանակում է ստացել Ալեքսանդրետում, ապա Փայասում, իսկ 1919-ի մարտի 28-ին Լ. Ռոմիոյի հրամանով մեկնել է Ադանա¹:

4. Պոլսից Կիլիկիա եկան 600 կամավորներ, սակայն նրանց ևս չընդգրկեցին լեզեոնի մեջ: Բազմաթիվ էին նաև այլ վայրերից զինվորագրվել ցանկացող հայերի մերժված դիմումները²:

Բեյրութից լեզեոնի մի մասը երկօրյա արշավի մեկնեց Լիբանանի Քասրվանի շրջան: Այնտեղ՝ Անթուրայի վանքում, լեզեոնականները հանդիպեցին 500 հայ որբերի: Թուրքերը փորձել էին հավատափոխ ու ազգափոխ անել նրանց՝ թուրքացնել: Հարյուրավոր երեխաներ սպանվել էին, իսկ մյուսները սովի ու մշտական վախի մեջ էին ապրել: Հայերեն խոսելը, իրենց հայկական անունները հիշելը արգելվել էր: Մանուկները խանդավառված ընդառաջ վազեցին հայ զինվորներին և հանդիպումը շատ հուզումնալից էր: Պարտիզակցի մի մանչուկ լեզեոնականներին ասաց. «Դուք գացեք, թուրքերը բոլորն ալ սատկեցուցեք, որ մենք ազատինք: Մենք պիտի մեծանաք, ու ձեր սա աղուորիկ լաթերը պիտի հագնինք, զինուոր ըլլանք. այն ատեն դուք հանգիստ կ'ընեք ու մենք կ'երթանք թշնամիին դէմ...»³: Այստեղ խոսում է ցեղասպանության ականատես, մանկությունից ու ծնողներից զրկված երեխայի վրեժի ցասումը:

1918 թ. դեկտեմբերի 4-ին Հալեպում հայ տարագիրները հավաք կազմակերպեցին և հեռագրով տեղի 50.000 գաղթականների անունից պահանջներն ուղարկեցին Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարին. «1. Անմիջական պարպումը Հայաստանի եւ Կիլիկիոյ՝ թուրք բռնակալներուն կողմէ եւ այդ հողամասերուն գրաւումը՝ համաձայնական եւ հայկական ուժերուն միջոցաւ: 2. Յայտարարութիւն հայոց անկախութեան եւ անմիջական հաստատութիւնը հայկական առժամեայ կառավարութեան մը եւ կարճ միջոցի մը մէջ եւս բռնագաղթի ենթարկուած մերայնոց իրենց բնակավայրերուն մէջ զետեղումը: 3. Համաձայնական պետութեանց կողմէ պաշտպանութիւն այն հայերուն, որոնք ներկայիս կը գտնուին դեռ թուրք լու-

¹ Թորոսյան Ս., Դարդանելից մինչև Պաղեստին, էջ 185-188:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 226:

³ Պարթեւեան Ս., Արարա, էջ 106:

ծին տակ: 4. Վերադարձուիլը եւ հայ կառավարութեան կողմէ իրացուիլը ամէն շարժում եւ անշարժ ինչքերուն, որոնք կը պատկանին մեռնող հայերուն եւ կամ որոնք մեռած են բռնազաղթի ընթացքին ու օրինաւոր ժառանգորդներ ձգած չեն: 5. Վերաշինութիւն եւ վնասուց հատուցում բոլոր վնասուց եւ համայնքային եւ անհատական ամէն կորուստից: 6. Ազատագրումը բոլոր կանանց եւ բոլոր առեւանգուած ու բռնաբարուած մանուկներուն, բռնի ամուսնացեալներուն կամ ծախուածներուն, առաջ թէ ետք բռնազաղթէն, ինչ պատրուակով ալ որ եղած ըլլան: 7. Ամենախիստ կերպով պատժուիլը ջարդարարներուն եւ հայ դժբախտութեանց պատճառ եղողներուն, որոնք ալ եղած ըլլան»¹:

Կիլիկիան ազատագրելուց հետո այնտեղի երկաթուղային կայարանները գտնվում էին հայ լեզեոնականների վերահսկողության տակ: Նրանք կարողացան բազմաթիվ հայ կանանց ազատել թուրքերի ձեռքից Հալեպից Կ. Պոլիս գնացող գնացքների միջից²: Բոլոր գնացքները ստուգվում էին նրանց կողմից և թուրքերի ձեռքում բռնությամբ հայտնված բոլոր կանանց ու երեխաներին ազատում էին:

Ենիճե կայարանի հեռագրատան տնօրենը թուրք էր, որի տանն էր գտնվում 8-10 տարեկան մի գեղեցիկ հայ աղջնակ: Լեզեոնականներից Երվանդ Թյուրայանը և Ենովք Աշտարակեցը հաճախ էին հյուրընկալվում այդ թուրքի տանը: Շուտով նրանք տեղեկացան, որ աղջիկը հայ էր, և այդ մասին հարցրին թուրքին: Վերջինս ոչ միայն պատրաստակամություն հայտնեց աղջկան վերադարձնել, այլ նաև՝ նրա հետ դրեց 3 ոսկի, 6 ձեռք հագուստ և այլ պարագաներ: Հայ զինվորները աղջկան ուղարկեցին Ադանայի որբանոց³:

Ինչպես տեսնում ենք, լեզեոնը զգալի ներդրում ունեցավ թուրքերի ձեռքում հայտնված հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնավոր զորամասի ներկայությունը հաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգևորություն էր առաջացնում Մեծ եղեռն վերապրածների մեջ: Գրեթե բոլոր երիտասարդները ցանկանում էին միանալ լեզեոնին և ազատագրել Կիլիկիան ու Հայաստանը:

Սակայն ֆրանսիական ռազմական իշխանությունները հետզհետե փոխում են իրենց քաղաքականությունը Հայկական լեզեոնի նկատմամբ: Կիլի-

¹ Պոյաճեան Տ., Հայկական լեզեոնը, էջ 207:

² Նույն տեղում, էջ 202:

³ Նույն տեղում, էջ 201:

կիային ինքնավարություն տալու մտադրություն չունենալով՝ վտանգավոր էին համարում հայկական գործառնախ մեծացումը: Նրանց վախեցնում էր նաև ԱՄՆ-ի կողմից Հայաստանի ու Կիլիկիայի մանդատը վերցնելու նախաձեռնությունը: Հետևաբար՝ հրաժարվեցին լեզեոնի մեջ ընդգրկել Բաղդադի ավելի քան 800, Պոլսի 600, Դամասկոսի 1.000, Հալեպի 800 հայ կամավորներին: Նրանց զինվորագրելու դեպքում լեզեոնի գումարտակների թիվը կհասներ 8-ի: Միայն Բեյրութում կամավորագրված 800 հայերին վերցրին ծառայության, որոնցից կազմավորվեց լեզեոնի 4-րդ գումարտակը:

Մուղոսի զինադադարը և Կիլիկիան

1918 թ. հոկտեմբերին արդեն ակնհայտ էր Թուրքիայի մոտալուտ պարտությունը պատերազմում, և հայ գործիչները նման պայմաններում անհրաժեշտ էին համարում քայլեր ձեռնարկել պաշտպանելու հայության շահերը հաշտության բանակցություններում: Թվում էր՝ բարենպաստ իրավիճակ է հասունացել միացյալ հայկական պետականության վերականգնման համար:

Հոկտեմբերի 8-ին Պ. Նուբարը Անտանտի տերություններին հուշագիր ներկայացրեց, ուր պահանջում էր, որպեսզի զինադադարի պայմանների մեջ մտցվեն հետևյալ հոդվածները. 1. Տեղահանված և գաղթական հայերի վերադարձը հայրենիք դաշնակից զորքերի պաշտպանության տակ և հայկական վեց նահանգների ու Կիլիկիայի բոլոր ռազմական կետերի գրավում: 2. Արգելել Օսմանյան կառավարությանը կազմակերպել թուրքերի ներգաղթ այդ նահանգների մեջ: 3. Դաշնակից բանակների կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սովահար հայ բնակչության գոյությունը ապահովելու և երկիրը վարչականորեն կազմակերպելու համար¹:

Պ. Նուբարը Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի բարձրաստիճան պետական գործիչների հետ հանդիպումներում բարձրացնում էր հայերին պատերազմող կողմ ճանաչելու խնդիրը, իսկ հոկտեմբերի 18-ին այդ հարցով պաշտոնապես դիմեց Անտանտի երկրներին²: Դա միջազգային իրավունքի տեսանկյունից կատարված ճիշտ և խորապես մտածված քայլ էր: Նա լավ էր պատկերացնում միջազգային այն չափանիշները, ըստ որի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ են ճանաչվում ոչ միայն ինքնիշխան (սուվերեն) պետությունները, այլև՝ ազգային-ազատագրական շարժումները՝ հանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչվել Ազգային պատվի-

¹ ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 15:

² Աճեմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Աղեքսանդրիա, 1924, էջ 87:

րակությունը կամ փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը դեռևս միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Այսպիսով՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար անհրաժեշտ էր, որ հայերը ճանաչվեին պատերազմող կողմ: Նաև այդ հեռանկարի համար էր, որ Պ. Նուբարն աջակցեց կամավորական շարժմանը և Հայկական լեգեոնի կազմավորմանը:

Հոկտեմբերի 25-ին Ֆրանսիայի ԱԳ նախարար Ս. Պիշոնին ուղարկած ծանուցագրում Ժ. Գուն տեղեկացնում էր, որ Հայ ազգային պատվիրակության նախագահը պահանջել էր հայերին ճանաչել պատերազմող կողմ: Նշում էր, որ նույնանման դիմումներ ուղարկվել են նաև Մեծ Բրիտանիայի և Իտալիայի կառավարություններին: Ժ. Գուն Արևելյան լեգեոնը և Կովկասից Պարսկաստան տեղափոխված և բրիտանացիների հետ համագործակցող հայկական ուժերին համարում էր պատերազմող կողմ: Նա առաջարկում էր Պ. Նուբարին պատասխանել, որ Ֆրանսիան պատրաստ էր հայերին ճանաչել պատերազմող կողմ, եթե դա անեն նաև մյուս դաշնակիցները: Միաժամանակ, առաջարկում էր Սիրիայում ֆրանսիական զորքերի հրամանատարին հրահանգել, որպեսզի Արևելյան լեգեոնին տրամադրեն հայկական դրոշներ, որը ցույց կտար հայերի ինքնավար գոյության իրավունքի ճանաչումը¹:

Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարի ջանքերը որոշակի արդյունք էին տալիս: Ֆրանսիացի բարձրաստիճան գործիչներն արդեն քննարկում էին հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը և ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան լեգեոնը դիտում էին որպես հայկական զորախումբ, որի խնդիրն էր հայկական տարածքների ազատագրումը: Ֆրանս-բրիտանական գաղտնի համաձայնագրերով (Լոնդոնի, Սալքս-Պիկոյի, Սեն Ժան Մորիենի) Կիլիկիան և Արևմտյան Հայաստանի հարավային ու արևմտյան նահանգները պատերազմից հետո մտնելու էին ֆրանսիական ազդեցության գոտու մեջ: Հետևաբար՝ Ֆրանսիայի արտաքին գերատեսչության վերաբերմունքը կարող էր որոշակիորեն պայմանավորել Հայաստանի ապագան:

Ֆրանսիայի ԱԳ նախարար Ս. Պիշոնը հայտարարեց, որ «Հայկական լեգեոնն ու նրա քաջագործությունները ցայտուն կերպով հաստատում են, որ «Ֆրանսիան հայերը կսեպե թուրք-գերմանական զինվորապաշտության լուծը թոթափելու համար պայքարող դաշնակիցներ»²:

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 399:

² Արզումանյան Մ., Արևմտահայկական վերածնունդ, էջ 409:

Այս շրջանում, եթե Ֆրանսիան հայտարարեր Հայաստանին ու Կիլիկիային պատերազմից հետո անկախություն կամ ինքնավարություն տալու մասին և պատրաստակամություն հայտնել վերցնելու նորաստեղծ պետության մանդատը, ապա հայկական կողմը ամեն կերպ կաջակցեր նրան, իսկ բրիտանացիները չէին կարողանա խոչընդոտել: Այնուամենայնիվ, Ֆրանսիական իշխանություններն այդպես էլ չհայտարարեցին նույնիսկ ինքնավարություն տալու մասին: Դա բավական հիասթափեցրեց հայերին, իսկ Մեծ Բրիտանիային թույլ տվեց խաղի մեջ ներքաշել ԱՄՆ-ին, որը ի վերջո հանգեցրեց Հայկական հարցի ձախողմանը:

Թուրքերի հետ Մուղրոսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը, որը ստորագրվել էր առանց դաշնակիցների շահերը հաշվի առնելու, հիմնականում հակասում էր նաև հայության ձգտումներին: Պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրվել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մերձավոր Արևելքում: Չնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայնագրերին ու պայմանավորվածություններին՝ բրիտանացիները փորձում էին Ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվելու Մերձավոր Արևելքում, մասնավոր՝ ֆրանսիական ուժեր այնտեղ գրեթե չկային, եթե չհաշվենք Արևելյան լեգեոնը:

1918 թ. հոկտեմբերի 15-ին թուրքական կողմը բրիտանացիներին խնդրեց առաջարկել զինադադարի պայմաններ: Հոկտեմբերի 27-ին սկսվեցին ռազմական գործողությունները դադարեցնելու շուրջ բանակցություններ Լեմնոս կղզու Մուղրոսի նավահանգստում՝ բրիտանական «Ազամեմնոն» հաճանավի վրա: Բրիտանական կողմից այն վարում էր ծովակալ Արթուր Քայթորփը, թուրքականից՝ ծովային նախարար Հուսեյն Ռաուֆ բեյը: Ֆրանսիական փոխծովակալ Շառլ Օմետը ցանկություն հայտնեց մասնակցելու բանակցություններին, սակայն և՛ բրիտանական, և՛ թուրքական կողմերը մերժեցին¹: Այսպիսով՝ պատերազմի ավարտական փուլում բրիտանացիները սկսեցին Մերձավոր Արևելքում սեփական դիրքերն էլ ավելի ամրապնդելու և Ֆրանսիային տարածաշրջանային զարգացումներից դուրս թողնելու քաղաքականություն: Բրիտանիան այդ շրջանում ցանկանում էր Ֆրանսիայի փոխարեն Հայաստանում և Կիլիկիայում տեսնել ԱՄՆ-ին, իսկ Սիրիան և Մոսուլն ընդգրկել արաբական միասնական թագավորության

¹ Fromkin D., A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York, 2009, pp. 360-373.

կազմում՝ իր հովանու ներքո: Այդ հակասություններն անմիջականորեն անդրադարձան նաև հայության ճակատագրի վրա:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսում ստորագրված զինադադարով թուրքերն անձնատվության (կապիտուլիացիայի) ենթարկվեցին: Մի քանի հոդվածներ անմիջականորեն առնչվում էին հայկական շահերի հետ:

«Հոդված 4. Բոլոր դաշնակցային ռազմագերիները, բոլոր հայ ռազմագերիները և ներկայվածները պետք է ժողովվեն Կ. Պոլսում, որպեսզի առանց որևէ պայմանների հանձնվեն դաշնակիցներին:

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի գրավում դաշնակիցների կողմից:

Հոդված 11. Թուրքական զորքերը անմիջապես հետ են քաշվելու հյուսիսարևմտյան Պարսկաստանից մինչև նախապատերազմյան սահմանը: Թուրքական զորքերն արդեն ստացել են Անդրկովկասի մի մասը էվակուացնելու հրաման, ընդ որում՝ մնացած զորքերը կհեռացվեն, եթե տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ:

Հոդված 16. Հեջազում, Ասիրում, Եմենում, Սիրիայում և Միջագետքում գտնվող բոլոր թուրքական կայազորներ պետք է հանձնվեն մոտակա դաշնակցային հրամանատարությանը, բոլոր զորքերը դուրս են բերվելու Կիլիկիայից, բացառությամբ նրանցից, որոնք անհրաժեշտ են կարգը պահպանելու համար, ինչը կարող էր որոշվել համաձայնագրի 5-րդ հոդվածով:

Հոդված 24. Հայկական վեց վիլայեթներում անկարգություններ ծագելու դեպքում, դաշնակիցները իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունք»¹:

Փաստորեն՝ Մուղրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ծախողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Տավրոսի լեռնահամակարգի թունելների գրավումը և Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը, չնայած այստեղից նույնպես ամբողջապես չէին հեռանալու:

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն Պ. Նուբարի պահանջները չէին ներառված և հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին,

¹ Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943, pp. 85-87. Հայաստանը միջազգային դիվանագիտության... փաստաթղթերում, էջ 537-539:

այլ նույնիսկ Անդրկովկասի մի մասում կարգուկանոնի պահպանությունը իրականացնելու պատրվակով թուրքական զորքերը չէին հեռանալու մինչև «տեղերում իրադրությունն ուսումնասիրելուց հետո դաշնակիցները ներկայացնեն այդպիսի պահանջ»:

Մուղրոսի զինադադարով Արևմտյան Հայաստանի թողնելը թուրքական վերահսկողության տակ կարող էր պայմանավորված լինել բրիտանացիների ձգտումով՝ թույլ չտալու Ֆրանսիային վերցնել միասնական Հայաստանի մանդատը, որը կձգվեր Կովկասից մինչև Միջերկրական: Դա հնարավորություն կտար Ֆրանսիային ամրապնդվելու նաև Սիրիայում և Մոսուլում:

Բրիտանիան այս շրջանում արդեն քայլեր էր ձեռնարկել Մոսուլը իր ազդեցության տակ վերցնելու, իսկ Սիրիայում աջակցում էր էմիր Ֆեյսալի նկրտումներին¹:

Այդ պայմանագրից երևացին հայերին խաբելու «դաշնակիցների» քաղաքականության առաջին քայլերը, որն ավարտվեց Լոզանով: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս չափազանց ոգևորված էին, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ էր ազատ, անկախ, միացյալ հայրենիք ունենալու հնարավորությունը: Ցավոք, այդ գեղեցիկ հեռանկարը հետագա ամիսներին մոտենալու փոխարեն հետզհետե հեռացավ:

Հոկտեմբերի 31-ին Բեռլինում Հ. Օհանջանյանի ղեկավարած ՀՀ պատվիրակությունը խորհրդակցություն գումարեց, որին ներկա էին Մ. Աճեմյանը, դոկտոր Գրինֆելդը, Ավետիսյանը, Ուկրաինայում ՀՀ ներկայացուցիչ Գ. Զամոյանը: Քննարկելով միջազգային իրավիճակը, նրանք եկան այն եզրահանգմանը, որ անհրաժեշտ էր միավորել Ռուսահայաստանը և Թուրքահայաստանը միասնական անկախ պետության մեջ, որը հայտարարելու էր հավերժական չեզոքություն: Եթե միավորումը անհնար լիներ, ապա պետք է ստեղծվեր անկախ Հայաստան՝ արևմտահայկական նահանգների ու Կիլիկիայի հենքի վրա՝ ծովային ելքերով Միջերկրական և Սև ծով՝ Տրապիզոնով²:

Ֆրանսիական պետական գործիչ Դենի Կոշենը, «Ֆիզարո» պարբերականում անդրադառնալով Հայաստանի ապագային, արդարացի էր համարում Կովկասից մինչև Կիլիկիա ձգվող հայկական անկախ պետության կազ-

¹ Фомин А., Война с продолжением. Великобритания и Франция в борьбе за «Османское наследство». 1918—1923, Москва, 2010, ст. 70, 74.

² Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 328:

մավորումը¹: Ֆրանսիացիները դեռևս հույս ունեին, որ հայկական մանդատն անցնելու է իրենց: Դրանով էր պայմանավորված նրանց հայանպաստ հայտարարությունները:

Պ. Նուբարը նոյեմբերի 7-ին և 12-ին դաշնակից տերություններին բողոքի նոտաներ հղեց Մուղրոսի զինադադարի համաձայնագրով հայկական տարածքներում կարգի պահպանությունը թուրքերին թողնելու առթիվ, նշելով, որ այդպիսով հայ գաղթականները չեն կարողանա վերադառնալ իրենց օջախները, իսկ թուրքերը կվայելեն երիտթուրքերի «արիւնոլշտ քաղաքականութեան պտուղը»²: Նա պահանջեց հայկական տարածքներն անմիջապես գրավել դաշնակից զորքերի և Արևելյան լեգեոնի ուժերով:

Պետք է նշել, որ Մուղրոսի զինադադարի ոչ հայանպաստ հոդվածները քննադատեց նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Պոլ Դեշանելը³: Բնականաբար Ֆրանսիան վիրավորված էր բրիտանական զինադադարի համաձայնագրից և փորձում էր քննադատությունը ներկայացնել իբր «հայկական շահերի պաշտպանություն»:

Սակայն հայկական շահերը ոտնահարող կետերի շուրջ բողոքները հիմնականում անպատասխան մնացին «դաշնակիցների» կողմից, որոնք արդեն մոռացել էին պատերազմի տարիներին ոչ միայն հայերին շռայլած խոստումների, այլև՝ միմյանց հետ կնքած համաձայնագրերի մասին և մրցապայքար էին սկսել աշխարհի նոր վերաբաժանման, ավելի ընդարձակ գաղութներ ձեռք բերելու համար և ժամանակ չունեին մտածելու այնպիսի փոքր դաշնակցի մասին, ինչպիսին էր Հայաստանը:

1918 թ. նոյեմբերի 19-ին լորդ Զեյմս Բրայսը և Քենտրբերիի արքեպիսկոպոսը խորհրդարանում բրիտանական կառավարությունից պահանջեցին դաշնակցային զորքերով Կիլիկիան գրավել և հայերին չմոռանալ: Գլխավոր կնքապահ Կրեֆորդի դուքս Էդուարդ Լինսին պատասխանեց, որ դաշնակիցները քննարկում են Կիլիկիան գրավելու հարցը, իսկ «կառավարությունը լրիվ գիտակցում է իր պարտականությունները այդ ժողովրդի ազգային ու մարդկային շահերի նկատմամբ, և վճռել է ոչ մի ջանք չխնայել հայ ազգի պահանջները և իրավունքները պաշտպանելու համար»⁴: Այդ շրջանում արդեն սկսվել էր Կիլիկիան Հայկական լեգեոնի ուժերով ազատագրելու գործընթացը և խորհրդարանում հնչած «հայանպաստ» հայտարարություն-

¹ «Վերաձնունդ», Փարիզ, 1918, թիւ 23, էջ 447:

² Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925, էջ 101:

³ «Վերաձնունդ», Փարիզ, 1918, թիւ 23, էջ 448:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 35:

ներն ուղղակի ձևական բնույթ ունեին և նպատակ ունեին ցույց տալ բրիտանական կողմի «բարի կամքը»:

Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեգեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել շուրջ 150.000 հայեր: Դա ապացուցում է այն ճշմարտությունը, որ այդ ժամանակաշրջանում, երբ զինադադարի պայմանները հնարավորություն էին տալիս, իսկ թուրքը ջախջախված և հուսահատ էր, ցանկության դեպքում դաշնակիցները կարող էին թուրքերին ստիպել հեռանալու հայկական բոլոր տարածքներից: Սակայն դա ժամանակին չարվեց, որն էլ հետագայում հանգեցրեց Հայկական հարցի տապալմանը:

1918 թ. նոյեմբերին Պ. Նուբարը ֆրանսիական մամուլին տված հարցազրույցում ներկայացրեց այն սկզբունքները, որոնց հիման վրա պետք է լուծվեր Հայկական հարցը՝

1. Այլևս ոչ մի կապ թուրքական պետության հետ,

2. Հայկական պետությունն ունենալու էր հանրապետական վարչաձև և դրվելու էր ազատարար ազգերի պաշտպանության տակ, որոնցից մեկը ստանձնելու էր Հայաստանի խնամակալությունը մինչև այն կազմակերպվի և կարողանա ինքնուրույն գոյատևել,

3. Հայաստանի մեջ են մտնելու վեց վիլայեթները և Կիլիկիան: Պ. Նուբարը նշեց «ռուսական» Հայաստանի նկատմամբ որևէ պահանջ չունենալու մասին, սակայն հույս հայտնեց, որ նոր սկզբունքներ որդեգրած Ռուսաստանը, որը հայտարարել էր լեհական ու ֆինլանդական խնդիրները լուծելու մասին, այս հարցում ևս արդարացի մոտեցում կցուցաբերի¹:

Այդ սկզբունքները Պ. Նուբարը զարգացրեց 1918 թ. դեկտեմբերին հրապարակած «Հուլազիի Հայկական հարցի մասին» գրքույկում²: Նա անհրաժեշտ էր համարում վեց վիլայեթներից, Կիլիկիայից ու Մարաշի սանջակից կազմել հայկական պետություն, որը մինչև վերջնական կազմակերպվելը կդրվեր որևէ պետության խնամակալության տակ: Պ. Նուբարը նշում էր, որ այդ պետությանը կմիանար նաև Արարատյան Հանրապետությունը, և Հայաստանը պատնեշ կհանդիսանա պանթուրքիզմի ճանապարհին:

¹ «Վերածնունդ», 1918, թիվ 21-22: «Ճակատամարտ», 1919, թիվ 43:

² Memorandum on The Armenian Question. Presented by the Armenian National Delegation. Paris. 1918.

1918 թ. նոյեմբերի 30-ին Պ. Նուբարն ի լուր աշխարհի հայտարարեց «Ամբողջական Հայաստանի» անկախությունը¹: Հայտարարության մեջ նշված էր, որ հայ ազգի միակամ փափագի համաձայն Ազգային պատվիրակությունը հայտարարում է Ամբողջական Հայաստանի (ներառյալ Կիլիկիայի – Ս. Պ.) անկախությունը: Իսկ “La Voix de l’Arménie” թերթում տպագրած հոդվածում Պ. Նուբարը շեշտեց «Թուրքա» և «Ռուսա» Հայաստանների միավորմամբ Միացյալ Հայաստանի ստեղծման կենսական անհրաժեշտությունը: «Հայաստանը պետք է ըլլայ մէկ, ամբողջ, ազատ, անկախ,- գրում էր նա,- այս է ահա Հայ արինոտ դատի միակ արդար լուծման միակ հաստատուն գրավականը»²:

Նա շատ դժգոհ էր Անտանտի երկրների գործողություններից, որոնք արդեն հակասում էին նախկինում տրված խոստումներին³:

Այսպիսով՝ Ազգային պատվիրակության նախագահը հետզհետե դնում էր միացյալ հայկական պետականության ստեղծման գործընթացի սկիզբը, սակայն հետագա իրադարձությունները թույլ չտվեցին իրականացնել հայ ժողովրդի դարավոր իղձը և կազմավորել ընդարձակ ու կենսունակ անկախ պետություն: Կարծում ենք՝ միասնական Հայաստանի հռչակումից հետո պետք է կազմվեր կառավարություն, որը պետք է դաշնակիցներից պահանջեր պայմաններ ստեղծել տեղափոխվելու էրգրում կամ Ադանա: Սակայն նման քայլեր չկատարվեցին, իսկ միացյալ հայկական պետության հայտարարությունը մնաց թղթի վրա:

Հայերին անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Ֆրանսիան ցանկանում էր Կիլիկիան միացնել Սիրիային: Դա պայմանավորված էր բրիտանացիների առաջարկով ԱՄՆ-ի խաղի մեջ մտնելով և հայկական մանդատի նկատմամբ հավակնություններ դրսևորելով: Ֆրանսիան, զրկվելով հայկական մանդատի հնարավորությունից, փորձում էր տնտեսական ու ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Կիլիկիան կտրել Հայաստանից և դարձնել Սիրիայի մաս, որն անցնելու էր իրեն:

Փարիզաբնակ պատմաբան, բանասեր Կարապետ Բասմաջյանը Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյին հուշագիր ներկայացրեց, ուր պատմական, ազգագրական ու լեզվաբանական փաստերով ցույց էր տալիս, որ Կիլիկիան չի կարող լինել Սիրիայի մաս և պետք է միավորվի Հայաստանի

¹ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 131, թ. 58:

² «Ճակատամարտ», 1919, թիվ 40:

³ ՀԱԱ, ֆ. 282, ց. 1, գ. 46, թ. 1:

հետ, դառնա վերջինիս ելքը Միջերկրական¹: Սակայն ֆրանսիական կողմին ազգագրական ու պատմական փաստերն ամենաքիչն էին հետաքրքրում:

1918 թ. դեկտեմբերի 10-ին ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Հենրի Լոջը ԱՄՆ կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց բանաձև Անկախ Հայաստանի ստեղծման մասին: Հայաստանի կազմի մեջ էին մտնելու Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի բոլոր հայկական տարածքները՝ Կիլիկիայով հանդերձ: Նորանկախ պետության հովանավորությունը սենատորն առաջարկում էր, որ ստանձնի ԱՄՆ-ը²: Այսպիսով՝ առաջ էր քաշվում Ռուսաստանի, Թուրքիայի ու Իրանի տիրապետության տակ հայտնված բոլոր հայկական տարածքների միավորումը միասնական պետության մեջ՝ ԱՄՆ-ի հովանու ներքո: Դա բնականաբար ոգևորում էր հայ գործիչներին:

ԱՄՆ գործիչներից շատերն էին հետաքրքրված վերցնելու մեծ Հայաստանի հովանավորությունը: Միջերկրականից մինչև Սև և Կասպից ծովեր ձգվող երկրին տիրելը ռազմավարական ու տնտեսական առումով չափազանց արդյունավետ կլիներ ամերիկյան կապիտալի համար: ԱՄՆ հսկայական տնտեսական ռեսուրսները հնարավորություն կտային պատերազմից ավերված ու ցեղասպանությունից արյունաքամ եղած Հայաստանին արագորեն վերականգնվելու և ոտքի կանգնելու: Այսպիսով՝ պատերազմի ավարտից հետո բավական իրատեսական էր թվում հայկական բոլոր տարածքների միավորմամբ պետականության ստեղծումը:

Հայ լեզեռնականների մուրքը Կիլիկիա

1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին թուրքական զորքերը հեռացան Կիլիկիայից, և ազատագրված երկրամասը զբաղեցրեց Հայկական լեզեռնը: Հայկական զորամասի պաշտպանության ներքո Կիլիկիա վերադարձան ցեղասպանությունից մազապուրծ հարյուր հազարավոր հայ տարագիրներ:

Հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն պահանջել էր բրիտանական իշխանություններից, որպեսզի Ալեքսանդրետի գրավումը կատարվի միայն ֆրանսիական և հայկական ստորաբաժանումների միջոցով, քանի որ այդ նավահանգիստն առանձնահատուկ կարևորություն ուներ

¹ Բաամաջեան Կ., Ինչու համար Կիլիկիան կ'ուզենք, «Վերածնունդ», Փարիզ, 1919, թիվ 6-7, էջ 91-92:

² Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները, էջ 58:

Ֆրանսիայի համար¹: Նոյեմբերի 10-ին ֆրանսիական նավատորմը մուտք գործեց Ալեքսանդրետը²:

Նոյեմբերի 5-ին ժ. Կլեմանսոն գաղտնի հրահանգ ուղարկեց Ֆ. դը Պիեպպային, որպեսզի Տավրոսը ռազմակալվի Արևելյան լեզեոնի ուժերով, և առաջարկեց այդ ուղղությամբ քայլեր կատարել գեներալ Է. Ալենբիի համաձայնությունը ստանալու համար: Վարչապետը չէր ցանկանում կառավարական մակարդակով միջամտել, քանի որ ռազմական գործողությունների պատասխանատվությունն է. Ալենբիի վրա էր դրված և դա կարող էր նրա արժանապատվությունը վիրավորել և հակառակ ազդեցությունն ունենալ³:

Ֆրանսիական գործիչների ջանքերն արդյունքի հասան: Նոյեմբերի 15-ին գեներալ ժ. Համելինը ռազմական նախարարությանը տեղեկացրեց, որ պատրաստվում է Հայկական լեզեոնը տեղափոխել Կիլիկիա՝ Ալեքսանդրետի վրայով Թուփրակ Կալե, Ադանա և Տավրոսի լեռներ⁴: Դա լուրջ հաջողություն էր ֆրանսիացիների համար, քանի որ բրիտանացիներն ամեն կերպ խոչընդոտում էին նրանց զորքերի ավելացմանը և ամրապնդմանը Սիրիայում և Կիլիկիայում:

1919 թ. հուլիսին ժ. Կլեմանսոն մեղադրելու էր Է. Ալենբիին, որ նա ֆրանսիական զորքերին ուղարկել է Կիլիկիա՝ իմանալով, որ այդ տարածքը հանձնվելու է ԱՄՆ մանդատին, իսկ Սիրիայում թույլ չի տալիս կենտրոնացնել ֆրանսիական ուժեր⁵:

Այնուամենայնիվ՝ 1918 թ. նոյեմբերին համաձայնություն ձեռք բերվեց Ադանայի նահանգը և Ալեքսանդրետի գավառը Հայկական լեզեոնի ուժերով ռազմակալելու շուրջ: Դա կարևոր ձեռքբերում էր հայկական կողմի համար: Մեծ Բրիտանիան չէր կարող արգելել Կիլիկիան ազատագրելու նպատակով կազմավորված զորամասի մուտքը այդ երկրամաս:

Ֆրանսիացիները միշտ կասկածանքով էին վերաբերում բրիտանացիներին, ինչպես նաև հայերի ազգային զգացումներին: Լեզեոնական Արամ Հովսեփյանը գրում է. «Ամեն անգամ որ մեզմեջ ոմանք անգլիերեն կը խօսեին եւ կամ Անգլիացիներու հետ կը յարաբերեին, անոնք իրենց հոգիին մաղձը անմիջապէս կը թափեին մեր վրայ: Դաշնակից էին, սակայն մեկզմեկու

¹ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 402:

² Քիլքքենան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, 1919, էջ 5:

³ Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը, հ. II, էջ 422-423:

⁴ Պոլաճեան Տ., նշվ. աշխ., էջ 178:

⁵ Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Volume VII, United States Government Printing Office, Washington, 1946, p. 196.

թշնամի բարեկամներ ալ էին»¹: Նաև նկարագրում է, որ Ալեքսանդրետում ափ դուրս գալուց հետո ծնկի էր եկել, համբուրել հայկական հողը: Դա դուր չի եկել ֆրանսիացի հրամանատարներին, որի համար 15 օր բանտարկել են կամավորին²: Սա այն շրջանն էր, երբ քննարկվում էր Հայաստանի և Կիլիկիայի նկատմամբ ամերիկյան մանդատի հարցը: Դա բացասական ազդակներ էր առաջացրել ֆրանսիական սպայակազմի մոտ և պոռթկում էր առաջացնում տարբեր առիթներով:

Նոյեմբերի 21-ին Հայկական լեգեոնի 1-ին գումարտակի երկու վաշտերը «Սեն Պրիետ» նավով Բեյրութից ուղարկվեցին Ալեքսանդրետ: Հաջորդ օրը կեսօրին նրանք մտան քաղաք: 1-ին գումարտակի մնացած լեգեոնականները «Լավուազիե» ռազմանավով Ալեքսանդրետ ժամանեցին հաջորդ շաբաթ: Հայ զինվորների մուտքը քաղաք մեծ տպավորություն թողեց թուրքերի վրա: Քաղաքի բոլոր ռազմավարական կետերի պահպանությունը, որը գտնվում էր նոյեմբերի 14-ին Ալեքսանդրետ ժամանած ավիայան զորախմբի հսկողության տակ, հանձնվեց Հայկական լեգեոնին: Քաղաքում կարգը հաստատելուց հետո լեգեոնի 1-ին գումարտակը հրաման ստացավ շարժվելու հյուսիս՝ դեպի Դյորթ Յոլ (Չոք Մարզվան): Դեկտեմբերի 10-ին լեգեոնականները մեկնեցին Պայաս, իսկ հաջորդ երեկո հասան Դյորթ Յոլ: Գյուղաքաղաքում մնացել էին միայն թուրք զավառապետը և ոստիկանապետը՝ մի քանի ոստիկաններով: Նրանք ավանը Հայկական լեգեոնին հանձնեցին և գիշերով հեռացան Ադանա: Հայ զինվորների ներկայությունից քաջալերված՝ հայ գաղթականները սկսեցին վերադառնալ Դյորթ Յոլ, որը կարճ ժամանակում կրկին վերածվեց հայկական կենտրոնի: Հայկական լեգեոնի 1-ին գումարտակը մի քանի օրից հրաման ստացավ զբաղեցնելու Իսլահիե կայարանը³:

Լեգեոնականների հետ միասին Դյորթ Յոլ էին մտել նաև հայրենիք վերադարձող բազմաթիվ կիլիկիահայեր: Նրանք զարմացել էին քաղաքի ամայությունից, քանի որ հայեր արդեն չկային, իսկ թուրքերը հեռացել էին: Քաղաքում մնացած սակավաթիվ թուրքերից էր մոլֆթին: Նա իր տանը գիշերելու հրավիրեց մի խումբ նշանավոր ադանացի հայերի, հյուրասիրեց, իսկ առավոտյան խնդրեց գրություն տալ, որ հյուրասիրել էր հայերին և նրանք շնորհակալ են: Ականատես Տիրան Պապիկյանը գրում է. «Միւֆթին այս գրութիւնը համբուրեց՝ իբրեւ Սուրբ եւ նուիրական բան մը, գլուխը տա-

¹ Արարա, էջ 30:

² Նոյն տեղում:

³ Մուրատեան Գ., նշվ. աշխ., էջ 80-82:

րաւ եւ ծալլելով գրպանը դրաւ, անելցնելով, թէ շնորհիւ այս գրութեան ինք հանգիստ պիտի կրնայ քնանալ, զայն ցուցնելով ի հարկին հայերուն: Միւֆթին վերջին ծայր վախցած, տպաւորուած էր պատահած եղելութիւններէն, մանաւանդ հայ լեզունականներու ներկայութենէն»¹:

Թուրքական բանակը հետանալուց առաջ հսկայական քանակութեամբ զենք ու զինամթերք էր բաժանել մահմեդական բնակչութեանը, որը, որոշ դեպքերում, փորձում էր զինված դիմադրութիւն ցոյց տալ ֆրանս-բրիտանական ուժերին:

Նոյեմբերի 30-ին Ալեքսանդրետում, իսկ դեկտեմբերի 12-ին Բեյլանում 1-ին գումարտակի հայ զինվորները բախում ունեցան թուրքերի հետ, սակայն արագորէն ճնշեցին նրանց զինված ընդվզումները²:

Սակայն պետք է նշել, որ սկզբնական շրջանում թուրքերի զինված ելույթները հազվադեպ էին և միայն հետագայում դրանք ստացան մեծ ծավալներ: Տ. Պոյաճեանը հետևյալ կերպ է նկարագրում իրավիճակը. «Հայ Լեզունականներու կողմէ Կիլիկիոյ գրաման առաջին օրերուն թուրքերը բոլորովին յուսալքուած էին: Քաշուած իրենց տուներուն մէջ անոնք օրէ օր կը սպասէին իրենց գործած ահաւոր ոճիրներու փոխհատուցման: Կարծես տրամադիր էին ենթարկուելու որեւէ պատժի, եւ պատրաստ էին իրենց զենքերը կամաւոր կերպով յանձնել առանց ամենափոքր զանգատի, եթէ զինուորական իշխանութիւնները այդպէս կամենային: Դժբախտաբար իրաց այս նպաստաւոր վիճակը երկար չի տևեց, դիւանագիտական շահախնդրութեանց շնորհիւ: Տակաւ առ տակաւ ֆրանսացի բարձրաստիճան զինուորականները թուրքերու հանդէպ բարեացակամութեան տրամադրութիւններ ցոյց տուին, ի մեծ զարմանս եւ ի վնաս տառապակոծ հայ ժողովուրդին: Ծանօթ ջարդարարներ այլեւս չէին հետապնդուիր: Քաջալերուած այս նպաստաւոր կացութենէն թուրքերը սկսան անելի համարձակ ու ամբարտաւան դառնալ: Այլեւս յստակ էր իրենց համար որ երէկուան իրենց թշնամին հաշտ աչքով սկսած էր նայիլ իրենց վրայ: Ուստի, անոնք ամէն միջոցի դիմեցին զարգացնելու իրենց ի նպաստ եղած դիմափոխութիւնը: Սարքեցին պարահանդէսներ, ճաշասեղաններ, եւ մեծարանքի ամէն ձեւի հիւրասիրութիւններ սիրաշահելու համար ֆրանսացի մեծ ու փոքր պաշտօնեաները»³:

¹ ՀԱԱ, ֆ. 450, ց. 3, գ. 71, թ. 37:

² Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 191:

³ Նոյն տեղում, էջ 191-192:

Նոյեմբերի 28-ին դաշնակցային ուժերի գլխավոր շտաբը թուրքական կողմից պահանջեց իրենց հանձնել Կիլիկիայի այն բոլոր տարածքները, որոնք իրենց համար ռազմական արժեք ունեին և իրենց անվտանգությունն էին երաշխավորում: Դաշնակիցները պետք է գրավեին Ադանայի նահանգն ըստ հետևյալ ժամանակացույցի՝

1. դեկտեմբերի 13-ին Զիհան գետից արևելք գտնվող տարածքները,
2. դեկտեմբերի 17-ին Սիհուն գետից արևելք և Ադանա-Տարսոն գծից հարավ ընկած հողամասերը,
3. դեկտեմբերի 21-ին արևմուտքում մինչև Պոզանտ ընկած տարածքները:
4. Դեկտեմբերի 21-ից հետո վերոնշյալ սահմաններից ներս գտնվող բոլոր թուրք զինվորները և սպաները գերվելու էին, իսկ զենքը և զինամթերքը բռնագրավվելու էր¹:

Դեկտեմբերի 7-ին Հայկական լեգեոնի զինվորների վերահսկողության տակ անցավ Անտիոքը², դեկտեմբերի 18-ին՝ Թոփրակ Կալեն³, դեկտեմբերի 23-ին՝ Օսմանիեն և Իսլահիեն⁴:

Դեկտեմբերի 16-ին հայկական 2-րդ և 3-րդ գումարտակները Բեյրութից բրիտանական «Կամպետտա» և «Եկատերինոսլավ» նավերով մեկնեցին Մերսին: Առաջինը անմիջապես Մերսին էր գնալու, իսկ երկրորդը՝ Ալեքսանդրետ, ապա նոր՝ Մերսին⁵:

Դեկտեմբերի 17-ի երեկոյան «Կամպետտա» նավը մոտեցավ Մերսինին, սակայն փոթորկի պատճառով լեգեոնականները ափ դուրս գալ չկարողացան: Միայն մի նավակ կարողացավ հասնել ափ: Դեկտեմբերի 18-ի առավոտյան հայ զինվորները ոտք դրեցին կիլիկյան հողի վրա: Լեգեոնական Խանը (Մանուկ Բաղդասարյան) հետևյալ կերպ է բնութագրում այդ իրադարձությունը. «Հայ Կամաուրները ծնրադիր հայրենի կոյս եւ միանգամայն սրբազան հողը կը համբուրէին կարօտակէզ արցունքի կայլակներ հոսեցնելով իրենց աչքերէն: Հայրենի հողին անդիմադրելի սիրոյն եւ կարօտին ազդեցութեան տակ հայ կամաուրներս գրեթէ զգայազիրկ զինովութեան նոպաներ անցուցինք: Այդ վայրկեանէն արմատապէս համոզուեցանք որ իսկապէս հարազատ հայրենի հողին մագնիսական ոյժը այնպիսի վիթխարի զօրու-

¹ Bremond E., La Cilicie en 1919-1920, Paris, 1921, p. 6. Պրեմոն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, էջ 10-11:

² Գուշագճեան Մ., նշվ. աշխ., էջ 147:

³ Մուրատեան Գ., նշվ. աշխ., էջ 82:

⁴ http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence

⁵ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 178:

թին մըն է զոր այդ հողին վրայ կանգնող հաւատաւոր հայրենսէրը միայն կը զգայ»¹:

Մ. Գուշագճեանը գրում է. «Հայ լեզեոնականները Կիլիկիա կու գան այն յոյսով ու հաւատքով, որ հայկական Կիլիկիոյ անկախութիւնը կերտելու ու պահպանելու կու գան»²: Հայ լեզեոնականները երկու տարվա դժվարութիւններից, մարզումներից ու սպասումներից հետո կարողացան որպէս հաղթող բանակի զինվորներ մտնել Կիլիկիա:

Հայ զինվորները, հայրենի հողի վրա կանգնելու ուրախության հետ միասին, ականատես եղան եղեռնի հետևանքով հայաթափված հայրենիքի տխուր պատկերին, գողգոթայից փրկված ցնցոտիավոր կանանց ու մանուկների ողբալի վիճակին: Սկզբնական երջանկության զգացումին հետզհետե սկսեց փոխարինել դառնությունը:

Մերսինի նավահանգստում հայ զինորներին դիմավորելու համար հավաքվել էին եղեռնից փրկված հայ կանայք ու երեխաներ: Տ. Պոյաճյանը նկարագրում է, թե ինչպէս էր ցնցոտիավոր մի հայ ծեր կին՝ երեխայի հետ, մոտեցել իրեն, համբուրել ձեռքը և դողդոջուն ու հազիվ լսելի ձայնով ասել. «Բարի եկաք, զաւակներս, ծեր հոգիին մատաղ: Բայց, ուշ եկաք: Ամայութիւն տեսնելու եկաք: Մեր ժողովուրդին խաչելութեան ապացոյցները փնտռելու եկաք: Սակայն բարի եկաք: Ողջ մնացածներս մեր մաշած բազուկներուն եւ թօշնած սրտերուն մէջ տեղ կուտանք ձեզի, ձեզմով վերակենդանանալու եւ յուսադրուելու»³:

Մերսինի զինվորական կառավարիչ նշանակվեց մայոր Մյուլերը⁴: Շուտով 4-րդ գումարտակն ուղարկվեց Ալեքսանդրետ, իսկ 1-ին գումարտակը շարժվեց ավելի հյուսիս⁵: 4-րդ գումարտակը Բեյրութից Ալեքսանդրետ տեղափոխվեց բրիտանական «Թակուս» նավով⁶:

3-րդ գումարտակի 7-րդ վաշտը և գնդացրորդների վաշտը մնացին Մերսինում, իսկ մյուս մասը գնացքով դեկտեմբերի 20-ին մեկնեց Տարսոն և Ադանա⁷: Նույն օրը Կիլիկիայի այդ երկու գլխավոր կենտրոններն անցան

¹ Նույն տեղում, էջ 181:

² Գուշագճեան Մ., նշվ. աշխ., էջ 145:

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 182:

⁴ Աճէմեան Խ., էջեր կամաւորի օրագրէս, էջ 166:

⁵ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 192:

⁶ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 178:

⁷ Պարթեւեան Ս., Արարա, էջ 110:

հայկական զինուժի հսկողության տակ: Դեկտեմբերի 25-ին Ադանա ժամանեց Լ. Ռոմիոն¹:

Տարսոնի հայերը մեծ խանդավառությամբ դիմավորեցին ժամանող հայ զինվորներին: Գնացքը դեռ չկանգնած՝ տեղի հայերը նետվում էին ողջագուրվելու լեգեոնականների հետ: Կայարանում անընդհատ հնչում էին հայկական երգեր: Տարսոնում թողնելով 2 վաշտ՝ լեգեոնը շարունակեց ճանապարհը դեպի Ադանա²:

Տարսոն մտնելուց հետո ֆրանսիական հրամանատարությունը հայտարարեց, որ Հայկական լեգեոնի զինվորների թիվը 12.000-ի է հասցվելու և հնարավոր է, որ ազատագրվի նաև Սեբաստիան³: Դա մեծ խանդավառություն առաջացրեց հայ զինվորների մոտ:

Ադանայում ևս հայ բնակչությունը ցնծությամբ դիմավորեց լեգեոնականների մուտքը քաղաք: Ադանայի երկաթուղային կայարանում լեգեոնականներին դիմավորեցին սպիտակ շորերով, եռագույններով զարդարված հայ աղջիկներ, որը չափազանց ոգևորիչ էր հայ զինվորների համար: Հայ համայնքի ներկայացուցիչները ողջույնի խոսքերով դիմավորեցին ֆրանսիական իշխանություններին և հայ լեգեոնականներին⁴:

«Ամեն կողմէ ծաղիկներ կը տեղային, հուռա՞նքը իրար կը յաջորդէին, լաց կար ու խինդ, գիրկընդխառնում և ողջագուրում,- վկայում է ականատես լեգեոնական Մ. Թաթարյանը,- Չէին հաաաաար կատարուած հրաշքը. հայ զինուոր, կատարեալ զինուոր, զենք ու զրահով, անվախ ու քաջ, Ռուբէններու և Լեւոններու երկրին վրայ ոտք կը դնէր, դարերու գերութեան շղթան կը փշոդէր...»⁵:

Երեկոյան հայ լեգեոնականները հյուրընկալվեցին Սարգիս Ճանճիկյանի ռեստորանում, ուր հավաքվել էին եղեռնից փրկված հայերը: Ճոխ խնջույք կազմակերպվեց: Մի ծերունի հետևյալ խոսքով դիմեց զինվորներին. «Զաականերս, դուք էք մեր կոտորակուած եւ յուսակտուր եղած ժողովորդին միակ յոյսն ու ապաւինը: Գիտէք թէ ինչ ահաւոր տանջանքներ կրեց ան: Այս փոքրիկ ճաշարահն անգամ անխօս վկան է զարհուրելի խժոժութեանց: Մեր ցեղին նահատակները, որոնց թիւը միլիոնը անցած է, ձեզի կը

¹ Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Առաջաբան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, 1937, էջ 10:

² Պարթեւեան Ս., Արարա, էջ 110:

³ Պօյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 204:

⁴ Նույն տեղում, էջ 182:

⁵ Թաթարեան Մ., նշվ. աշխ., էջ 21:

նային իրենց անձանօթ հողաթումբերէն: Դուք էք որ ձեր գործքով հանգստութիւն եւ խաղաղութիւն պիտի պարգեւէք անոնց տառապած հոգիներուն: Վերածնող հայրենիքի պաշտպանն ու պահապանն էք դուք: Հաւատարիմ եղէք ձեր կոչումին եւ հայ ժողովուրդի խտէլին՝ որ ձեր խտէլն է: Թող Հայուն Աստուածը ձեզի պարգեւէ անսահման ուժ, քաջութիւն, կորով ու տոկունութիւն: Կրկնեմ, խմենք Վերածնող Հայրենիքին կենացը»¹:

Դեկտեմբերի 27-ին Կիլիկյան դարպասների մոտ գտնվող Պոզանտի գրավումով ավարտվեց Ադանայի նահանգի ազատագրումը:

Կիլիկիայի ազատագրումը կատարվեց հիմնականում Հայկական լեգեոնի ուժերով: 1-ին գոմարտակի վերահսկողության տակ հայտնվեց Կիլիկիայի արևելքը՝ Բեյլանը, Պայասը, Դյորթ Յուլը, Անտիոքը, Թուփրակ Կալեն, Օսմանիեն, Բաղչեն, Իսլահիեն: 2-րդ գոմարտակն ազատագրեց կենտրոնական շրջանները՝ 4-րդ վաշտը մնաց Ադանայում, իսկ 5-րդ և 6-րդ վաշտերը զբաղեցրին Սիհուն և Ջիհան գետերի միջագետքում գտնվող կարևոր ռազմավարական կետերը: 3-րդ գոմարտակը զբաղեցրեց Կիլիկիայի արևմտյան մասը՝ Մերսինը, Տարսուսը, Ենիճեն, Պոզանտը²: 4-րդ գոմարտակը հաստատվեց Ալեքսանդրետում և շրջակայքում³:

Մարաշը, Այնթապը, Քիլիսը, Բիրեջիկը, Ուրֆան գրավվեցին բրիտանական զորքերի կողմից և միայն 1919 թ. հոկտեմբերի վերջին ֆրանսիական զորքերն ու Հայկական լեգեոնի զինվորները փոխարինեցին նրանց:

1919 թ. փետրվարին Կիլիկիա մտան նաև բրիտանական զորքերը, որոնք ֆրանսիականով փոխարինվեցին նոյեմբերին: 1919 թ. մայիսի 28-ին Մերսինում ափ դուրս եկած 250 ալժիրցիներն առաջին ֆրանսիական զինվորներն էին Ադանայի նահանգի տարածքում⁴: Հայկական լեգեոնը պաշտոնապես ֆրանսիական բանակի մաս չէր կազմում:

1918 թ. դեկտեմբերի 6-ին բրիտանական զորքերը Սիրիայից մտան Քիլիս: Դեկտեմբերի 18-ին մի քանի սպաների ու զինվորների հետ Այնթապ մտավ Մայք Սայքսը, իսկ մեկ շաբաթից քաղաք մտան հնդկական զորամասեր⁵: 1919 թ. փետրվարի 2-ին բրիտանական զորքերն ազատագրեցին Մարաշը, փետրվարի 27-ին՝ Բիրեջիկը, մարտի 24-ին՝ Ուրֆան: Ֆրանսիական

¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 185:

² Նույն տեղում, էջ 199-200:

³ Նույն տեղում, էջ 193:

⁴ Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), էջ 193:

⁵ Սարաֆեան Գ., Պատմութիւն Անթաթի Հայոց, հ. Ա, Լոս Անճելէս, 1953, էջ 1071-1072:

գործերը բրիտանականին փոխարինեցին 1919 թ. հոկտեմբերի 29-ին Մա-
րաշում, իսկ 30-ին՝ Ուրֆայում¹:

1918 թ. դեկտեմբերին Հալեպում Հայ ազգային միության կազմակեր-
պած երեկոյթում Մ. Սալքար հետևյալ խորհուրդը տվեց հայերին. «Եթե դուք
հայերդ ... ձեր սեփական ուժերով Կիլիկիոյ գրաւումը, որպէս կատարուած
իրողութիւն, դաշնակիցներուն առջեւ չի դնեք, մի սպասէք որ անոնք այդ եր-
կիրը ձեզ պիտի թողուն»²:

Սակայն մինչև վերջնական հռախաբարություն ապրելը հայերը չհամար-
ձակվեցին սեփական ուժի վրա հենված գործողությունների գնալ այն ժա-
մանակ, երբ Կիլիկիայում գտնվող միակ զինուժը Հայկական լեգեոնն էր և
սպասում էին, որ մեծ տերությունները իրենց փոխարեն լուծեն հայ ժո-
ղովրդին հուզող հարցերը:

1918 թ. նոյեմբերին Բեյրութում Ժ. Պիկոն ֆրանսիական սպայակույտի
հետ ճաշկերույթի ժամանակ լեյտենանտ Վ. Փորթուգալյանին խնդրեց հու-
շագիր կազմել նոր պայմաններում Արևելյան լեգեոնի վերակազմության մա-
սին: Հայ սպան դեկտեմբերի 18-ին Ժ. Պիկոյին հանձնեց հուշագիր-տեղե-
կագիր, որով հիմնավորում էր Արևելյան լեգեոնը Հայկական լեգեոն վերան-
վանելու և այն հայկական բանակի կորիզը դարձնելու անհրաժեշտությունը:
Տեղեկացնում էր, որ հայկական մամուլում միայն Հայկական լեգեոն անունն
էր օգտագործվում: Առաջարկում էր զինծառայությունը դարձնել 2 տարի,
քանի որ նախկինում ամբողջ պատերազմի ընթացքի համար էին ընդունում
լեգեոն, բայց պատերազմն ավարտվել էր: Առաջարկում էր լեգեոնի հրամա-
նատարական կազմը համալրել հայ սպաներով, իսկ ենթասպաների հաս-
տիքները բացառապես հայերին տալ, քանի որ միայն հայ սպան կարող էր
հասկանալ հայ զինվորի հոգեբանությունն ու մտածելակերպը և արդյունա-
վետությամբ առաջնորդել նրան: Վ. Փորթուգալյանն անհրաժեշտ էր համա-
րում Կիլիկիայում ստեղծել ռազմական ուսումնարան, իսկ փայլուն առաջա-
դիմություն ունեցողներին ուղարկել Ֆրանսիայի ռազմական հաստատույթ-
յուններում կատարելագործվելու³:

Փաստորեն՝ Վ. Փորթուգալյանն առաջարկում էր լեգեոնը ոչ միայն ան-
վանապես հայացնել, այլ նաև սպայակազմով: Նա նախատեսում էր այն

¹ http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence

² Նաթանեան Մ., Նիսիեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան
կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բոստոն, 1950, էջ 81:

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 174-177:

դարձնել ինքնավար Կիլիկիայի բանակի հիմքը, արդեն իսկ փորձում էր պայմաններ ապահովել գրագետ հայ սպայակազմ պատրաստելու ուղղությամբ:

Ֆրանսիայի քաղաքականությունը Կիլիկիայում հասկանալու համար հետաքրքիր է հետևել երկրամասի կառավարիչներին տրված անվանումների փոփոխությանը: Սկզբում Ժ. Պիկոն նշանակվեց Հայաստանում և Սիրիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար, իսկ հետագայում պաշտոնը վերանվանվեց Սիրիայում և Կիլիկիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար, իսկ արդեն Հ. Գուրոն կրում էր Սիրիայում Ֆրանսիայի բարձրագույն կոմիսար տիտղոսը¹: Այստեղ տեսնում ենք, որ Ֆրանսիան սկզբում հավակնություններ էր դրսևորում նաև ամբողջ Հայաստանի նկատմամբ, հետո միայն՝ Կիլիկիայի, իսկ 1920 թ. հրաժարվում է նաև Կիլիկիայից:

Պետք է նշել, որ ամբողջ Հայաստանի նկատմամբ Ֆրանսիայի հավակնություններին կտրականապես դեմ էր Բրիտանիան: 1918 թ. դեկտեմբերի 9-ին լորդ Քերզոնի գլխավորած Մեծ Բրիտանիայի Արևելյան կոմիտի 42-րդ նիստը քննարկում է Ֆրանսիայի կողմից Հայաստանը գրավելու հարցը և կտրականապես ընդդիմանում է այդ գաղափարին: Որոշվում է Ֆրանսիայի առաջ պայման դնել վերցնելու Հայաստանի կամ Սիրիայի մանդատը, բայց ոչ երկուսինը միաժամանակ²:

1918 թ. դեկտեմբերի 25-ին գնդապետ Է. Բրեմոնը նշանակվեց «Հայաստանի և Կիլիկիայի կառավարիչ»: Սակայն 1919 թ. հունվարի 19-ին նրա պաշտոնը վերանվանվեց «Գրավված թշնամի հողամասերի հյուսիսային գոտիի գլխավոր կառավարիչ»: Այդ շրջանում Կիլիկիան, Սիրիան, Լիբանանը և Պաղեստինը բաժանվել էին 4 օկուպացիոն գոտիների: Կիլիկիան՝ Ադանա կենտրոնով, հյուսիսային գոտին էր: Արևմտյան գոտու կենտրոնը Բեյրութն էր, կառավարիչը՝ Քուիեն, արևելյանի կենտրոնը Դամասկոսն էր, կառավարիչը՝ Ալի Ռիզա փաշան, ով թուրքերի նահանջի ժամանակ բրիտանացիների կողմն էր անցել և էմիր Ֆեյսալի աջակիցն էր, իսկ հարավային գոտու կենտրոնը Երուսաղեմն էր, կառավարիչը՝ բրիտանացի գեներալ-մայոր Արթուր Մոնին³:

Ադանայի նահանգում պահպանվեց 3.000-ոց թուրքական ժանդարմերիան, որը կազմվել էր մարտական փորձ ունեցող զինվորներից: Հրամանա-

¹ Նուրադյան մատենադարան, ֆոնդ Occupation française de le Cilicie 1919-1922, թղթապանակ 1:

² Hughes M., Allenby and British Strategy in the Middle East, 1917-1919, London, p. 119.

³ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 187, 199:

տարն էր Կովկասյան ճակատում դիվիզիայի հրամանատար եղած Հաշիմ բեյը¹։ Թուրքական զինված ուժերի պահպանումը Կիլիկիայում հետագայում լուրջ խնդիրներ առաջացրեց ոչ միայն հայերի, այլ նաև ֆրանսիացիների համար։

Կիլիկիայում, Սիրիայում և Լիբանանում 1919 թ. սկզբներին կար ընդամենը 13 ֆրանսիական գումարտակ՝ յուրաքանչյուրը մոտ 1.000 զինվորներով, որոնցից 4-ը՝ հայկական, մեկը՝ սիրիական, 3 հեծելախումբ՝ 100-150 հեծյալներով²։ Դա բավական աննշան ուժ էր տարածաշրջանում ամրապնդվելու համար։ Կարծում ենք՝ նաև այս հանգամանքով է պայմանավորված, որ ֆրանսիացիները հրաժարվեցին մեծացնել Հայկական լեգեոնը։ Ինչպես տեսանք, արդեն իսկ 4 նոր գումարտակներ կազմավորելու համար հայեր էին կամավորագրվել։ Փաստորեն՝ եթե հայկական գումարտակների թիվը դառնար 8, ապա ողջ Մերձավոր Արևելքում կմնար միայն 9 ոչ հայկական գումարտակ։ Ֆրանսիան վախենում էր այդ հեռանկարից, մանավանդ, արդեն իսկ բարձրաձայնվում էր ԱՄՆ-ի հովանու ներքո միացյալ Հայաստան կազմավորելու հարցը։ Մեծաքանակ հայկական բանակի առկայության դեպքում Ֆրանսիան չէր կարողանա խոչընդոտել դրան։

Լեգեոնականները կարևոր դեր ունեցան հայ բնակչության պաշտպանության և զինման գործում։ Ձենք հայթայթելու դրվագներից մեկը ներկայացնում է լեգեոնական Ենովք Աշտարակենցը։ 3-րդ գումարտակի 25 լեգեոնականների՝ ֆրանսիացի կապիտան Դը Ֆալուայի զլխավորությամբ հանձնարարված էր հսկել Ենիճե կայարանը։ Այն երկաթուղային ռազմավարական հանգույց էր, ուր միանում էին Մերսինից ու Ադանայից եկող և դեպի Կ. Պոլիս գնացող երկաթուղային ճանապարհները։ Պատերազմի տարիներին այնտեղ գերմանական ռազմաբազա էր եղել։ Կայարանի օժանդակ գծերի վրա կանգնած էին 20-ից ավելի փակ վագոններ, որոնք կնքված չէին։ Լեգեոնականներից Ենովք Աշտարակենցը և Երվանդ Թյուրապյանը (նախկինում թուրքական բանակի սպա՝ գերված բրիտանացիների կողմից) պատահաբար տեղեկացան, որ վագոնները բեռնված են գերմանական հրացաններով։ Նրանք այդ մասին տեղեկացրեցին տասնապետ Օննիկ Սինանյանին և այլ գործիչների։ Այդ զենքերը, լեգեոնականների ջանքերով, մաս առ մաս գիշերները դուրս բերվեցին և ուղարկվեցին Սիս, Հաճն, Դյորթ Յոլ և այլ վայրեր՝ ինքնապաշտպանության համար։ Երբ բրիտանացիները եկան

¹ Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия, с. 84.

² Աթանասեան Ա., նշվ. աշխ., էջ 23։

վագոնների պարունակությունը ստուգելու և կնքելու, բարեբախտաբար այնտեղ արդեն զենք չէր մնացել: Շուտով ամբողջ կառաչարը հանձնվեց թուրքերին¹:

Հայ գաղթականությունը մեծ խմբերով սկսեց վերադառնալ հայրենիք: Նրանց վիճակը չափազանց ծանր էր: Ականատեսը հետևյալ կերպ է բնութագրում նրանց. «Տարագիրներ կը հասնին հոս շարան շարան ամէն օր չափազանց խեղճ վիճակի մէջ: Անոնց երեսոյթը շատ սրտակեղէք է: Ուքերնին բուպիկ, հագուստները կտոր կտոր եղած, գլուխնին մերկ կը հասնին հոս շարունակ: Չորս տարուան տառապանքը զանոնք կմախքի վերածած է: Անոնց աչքերը փոսացած, ծունկերը դողդողուն, ու կուրծքը անկարող վեր պահելու համար անոնց մեռելացած մարմինը»²:

Պատերազմից հետո, ըստ տեղի ֆրանսիական վարչության հաշվարկների, Ադանայի նահանգ վերադարձան 120.000 հայեր: Նրանց կողքին կային 100.000 անսարի (ալի) արաբներ, 30.000 քրդեր ու ղզլբաշներ, 28.000 հույներ, 20.000 թուրքեր, 15.000 չերքեզներ, 5.000 ասորիներ: Մարաշի գավառ վերադարձան 23.000 հայեր, իսկ մահմեդականների թիվը 136.000 էր³:

1919 թ. հունվարի 12-ին Արևելյան լեզեոնի հայկական 4 գումարտակներում կար 4124 զինվոր, սիրիական գումարտակում՝ 698⁴:

1919 թ. փետրվարին գնդապետ է. Բրեմոնը Բեյրութում հայտարարեց, որ իրենց նպատակը Հայաստանը գրավելը կամ գաղութացնելը չէ, այլ այն կազմակերպելը և հայերին հանձնելը: Նա նշում էր, որ Ադանա հասնելուն պես թուրքերին հեռացնելու էր պաշտոններից և հայացնելու էր կառավարման համակարգը, իսկ արդեն գոյություն ունեցող հայկական 4 գումարտակներին ավելացնելու են 8 նոր գումարտակներ, որի արդյունքում Հայաստանն ունենալու էր 12 գումարտակներից կազմված զուտ հայկական բանակ⁵: Սակայն այդ խոստումներից ոչ մեկը վիճակված չէր իրականություն դառնալ:

Չնայած 1916 թ. նոյեմբերին Լ. Ռոմին Կահիրեում հայերին իր հավանությունը հայտնեց Լոնդոնի մեջ կայացած համաձայնությանը և եգիպտա-

¹ Պոյաճեան Տ., նշվ. աշխ., էջ 200-201, 206:

² ՀԱՍ, ֆ. 430, ց. 1, գ. 807, թ. 2-3:

³ Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия, с. 82.

⁴ Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 44:

⁵ Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիսեր եւ վաւերագրեր ու լուսանկարներ, Կազմեց եւ խմբագրեց՝ դոկտ. Անդրանիկ Տազեւեանը, Պէյրութ, 2013, էջ 54:

հայերին կարդաց վարչապետ Ա. Բրիանի նամակը, ուր վերջինս իր լիակատար համաձայնությունն էր հայտնում Պ. Նուբարի պայմաններին¹, իսկ Ժ. Պիկոն և Ժ. Գուն ամեն կերպ վստահեցնում էին Ազգային պատվիրակության նախագահին, որ Կիլիկիային ինքնավարություն էր տրվելու, սակայն գրավոր համաձայնագրի բացակայությունը հնարավորություն տվեց Ֆրանսիային հետագայում հետ կանգնել իր խոստումներից: Երբ 1921 թ. Ֆրանսիայի Ազգային ժողովում որոշ պատգամավորներ բողոքեցին Կիլիկիայի հայերին լքելու համար, որոնց ինքնավարություն էր խոստացվել Ֆրանսիայի կողմից, «հայասեր» Ա. Բրիանը հայտարարեց, որ «պաշտոնական գրությունների ու փաստաթղթերի մեջ հետք չկա այդպիսի մի համաձայնության»²:

Հակառակ այն բանի, որ Ֆրանսիան դրժեց իր խոստումները՝ Հայկական լեգեոնին վիճակված էր կարևոր դեր կատարել Կիլիկիահայության ճակատագրում: Շ. Թորոսյանը գրում է. «Չնայած թույլ տված սխալներին ու վրիպումներին, մարդկային ու նյութական լրացուցիչ զոհողություններին, Հայկական լեգեոնի ստեղծումն ու ձևավորումը դրական երևույթ էր Կիլիկիահայության կյանքում»³:

Ա. Չուպանյանը գրում է. «Համաշխարհային պատերազմի միջոցին հայ կտրիճներու բոլին ցոյց տուած դիցազնական զոհաբերութեան ոգին ամենէն պանծալի դրուագներէն մին է մեր ցեղին դարաւոր պատմութեան: Փոքր ժողովուրդ մը, հարիւրաւոր տարիներէ ի վեր ծանր լուծերու ենթարկուած, հալածանքով ու ջարդերով կոտորակուած, իրարմէ անջատ ու հեռու բազմաթիւ հատուածներու բաժնուած, կրցաւ իր մէջ վերագարեցնել իր նախահայրերուն արիութեան խիզախ կորովը և իր տուած հազարաւոր կամաւորներուն սխրալի քաջագործութիւններով իր պատուոյ բաժինն ունեցաւ Ազատութեան և Իրաւունքի անունով մղուած մեծ պայքարի մը մէջ: Շնորհիւ այդ քաջերու կատարած շքեղ դերին, մեր փոքրիկ ժողովուրդը ցոյց տուաւ անգամ մը ևս թէ մեծ ազգի մը հոգին ունէր»⁴:

«Հայերը պէտք է մասնակցէին կռիւներուն, որպէսզի իրենց քաղաքական պահանջները գթութիւն եւ բարիք մուրալու նկարագիրը չունենային

¹ Յուշամատեն Մեծ Եղեռնի 1915-1965, էջ 964:

² Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 770:

³ Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 73:

⁴ Կամաւորը, էջ 13:

միայն, այլ ուժի մը վրայ կոթնած պահանջի մը ձեւը ստանային գոնէ մասամբ»¹, - գրում է Լ. Չորմիսյանը:

Անդրանիկ Կենճյանը գրում է. «1918ի Զինադադարին ոգետրութեան մէջ, կէս առ կէս կոտորակուած վերապրող տարագիր թրքահայերն ընդհանրապէս, հայկական նկարագրին յատուկ և պետական-քաղաքական կեանքէ զրկուած ազգի յատկանշական միամտութեամբ ու տհասութեամբ, կը կարծէին այլեւ թէ հայութեան առջեւ պիտի բացուին դրախտին դռները: Ի հարկէ այս համոզումը զօրացած էր Յաղթական Դաշնակից բանակներու հետ անհաշիւ և անվերապահ անձնութիւնութեամբ մը թափուած հայ արեան գնովը»²:

Գաղթականների անվտանգ Կիլիկիա տեղափոխության հարցերը նույնպէս ընկալվել են լեզեոնականների վրա: Լեյտենանտ Հայկ Ազատյանը պատասխանատու էր ցամաքային, իսկ Տ. Թեքեյանը՝ ծովային փոխադրումների համար: Այդ փոխադրությունների ընթացքում լեզեոնականները նաև զենք ու զինամթերք էին տեղափոխում Կիլիկիա՝ բնակչության անվտանգությունն ապահովելու համար³:

Այսպիսով՝ Հայկական լեզեոնը հասավ իր գլխավոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ զինվորն էր, որը թուրքերի դարավոր լծից ազատեց հայրենիքի այդ հատվածը: Ցավոք, ֆրանսիական կողմը հետագայում դրժեց նախկինում տրված խոստումները և այդպես էլ Կիլիկիային ինքնավարություն չտվեց: Լեզեոնականները զգալի ներդրում ունեցան տարագիրներին հայրենիք փոխադրելու, ինչպես նաև հայ բնակչությանը զինելու գործում, որը կարևոր նշանակություն ունեցավ հետագայում քեմալականների դեմ մղված ինքնապաշտպանական մարտերում:

¹ Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Խ. Գ, Պէյրուք, 1975, էջ 619:

² Կէնճեան Ա., Սօց. Դէմ. Հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան ինքնավարութեան աքըղ (Կիլիկեան յուշեր՝ պատմութեան համար) 1919-1921, Պէյրուք, էջ 5:

³ Աւետեան Մ., նշվ. աշխ., էջ 486:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով հիմնահարցի ուսումնասիրությունը՝ հանգել ենք հետևյալ առանցքային եզրակացություններին.

- Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից հայ հասարակական-քաղաքական շրջանակներն ընտրեցին Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ ինքնավարություն ձեռք բերելու տեսլականը: Թվում էր՝ միջազգային իրադրությունը նպաստավոր պայմաններ էր ստեղծել հայության երազանքներն իրականացնելու՝ թուրքական տիրապետության տակ գտնվող բոլոր հայկական տարածքները մեկ ինքնավար մարզի մեջ միավորելու, որն ապագայում պայմաններ կստեղծեր անկախության վերականգնման համար:

- Մինչև 1915 թ. կեսերը ռուսական իշխանությունները չէին բացառում, որոշ դեպքերում նույնիսկ իրենց շահերին համահունչ էին համարում հայկական ինքնավարության ստեղծումը՝ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի միավորմամբ: Սակայն տերությունների միջև գաղտնի համաձայնություններն ու հակասությունները և հատկապես հայոց ցեղասպանության իրականացման հետևանքով արևմտահայկական տարածքների գրեթե ամբողջական հայազրկումն օրակարգից դուրս բերեցին ինքնավար Հայաստանի գաղափարը: Հայաթափված Հայաստանն ու Կիլիկիան այլևս չէին դիտվում որպես հայերի պետական ինքնակազմակերպման տարածք: Նման պայմաններում Ռուսաստանը որդեգրեց Արևմտյան Հայաստանը գրավելու ուղեգիծ, իսկ հայկական ձգտումներն ու շահերը դրվեցին մի կողմ:

- Ռուսաստանը գիտակցելով, որ դաշնակիցները դեմ կլինեն իր առաջխաղացմանը դեպի Միջերկրական Կիլիկիայի վրայով, որոշեց հրաժարվել այդ երկրամասի նկատմամբ իր հավակնություններից՝ հօգուտ Ֆրանսիայի: Ռուս պետական գործիչների համար գերադասելի էր Միջերկրական դուրս գալ Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներով:

- Մեծ Բրիտանիան նույնպես որոշակի հավակնություններ ուներ Կիլիկիայում: Նա ամբողջ Կիլիկիային տիրելու համար չէր պատրաստվում հակամարտության մեջ մտնել Ֆրանսիայի, Իտալիայի և Ռուսաստանի հետ, սակայն հնարավորության դեպքում ցանկանում էր տիրել ռազմավարական և տնտեսական մեծ կարևորություն ունեցող Ալեքսանդրետի նավահանգստին: Այն Բաղդադի երկաթուղագծին կապված ամենամոտ և հարմարավետ նավահանգիստն էր Միջերկրականի արևելքում:

- Ֆրանսիան պատերազմի սկզբից սկսեց հավակնել Կիլիկիային ու Սիրիային: Սակայն բրիտանական դիվանագիտության ջանքերով, հետզհետե ավելի ընդարձակ տարածքներ էր ցանկանում գրավել Մերձավոր Արևելքում:

- Օսմանյան ժառանգության հարցը լուծելու նպատակով Անտանտի երեք գլխավոր երկրները ստորագրեցին Սայքս-Պիկոյի համաձայնագիրը: Ըստ դրա՝ Արևմտյան Հայաստանի հյուսիսային ու արևելյան տարածքներն անցնելու էին Ռուսաստանին, իսկ հարավային ու արևմտյան տարածքները՝ Ֆրանսիային: Արևմտյան Հայաստանը, փաստորեն, բաժանվելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջև: Բրիտանական դիվանագիտության առաջարկած ծուղակներից էր հարավային Հայաստանի և Մոսուլի առաջարկը Ֆրանսիային, որի սահմանները պետք է հասնեին մինչև ռուս-պարսկական սահման: Փաստորեն՝ ռուսների առաջխաղացումը դեպի ավելի հարավ՝ բրիտանական կողմը փորձում էր այս անգամ կանխել Ֆրանսիայի միջոցով, որը պետք է փոխարիներ կործանված օսմանյան պատնեշին: Իսկ բրիտանական տիրույթները ձգվում էին ֆրանսիականից հարավ՝ թիկունքում: Այսպիսով՝ բրիտանական կողմը գտել էր այն խնդրի լուծումը, թե ինչպես պատնեշի ռուսական առաջխաղացմանը դեպի Միջերկրական և Սուեզի անցուղի: Հետևաբար՝ այլևս կարիք չկար պահպանելու Օսմանյան կայսրությունը, որի համար հսկայական ջանքեր էր գործադրել բրիտանական դիվանագիտությունը: Այդ փլուզվող պետության գոյության միակ իմաստը վերջին հարյուրամյակում հանդիսացել էր ռուսներին հարավ չթողնելը:

- Մեծ տերություններին չէր անհանգստացնում, որ Սայքս-Պիկոյի համաձայնագիրը նոր խառնաշփոթի պատճառ կարող էր դառնալ հետպատերազմյան Մերձավոր Արևելքում: Տարբեր պետությունների միջև բաժանվում ու մասնատվում էին հայկական, արաբական, քրդական, ասորական տարածքները: Այդ քաղաքականությունը, որն իր շարունակությունն ունեցավ հետագայում, մինչև այսօր անլուծելի խնդիրներ է առաջացնում այդ տարածաշրջանում:

- 1916-1917 թթ. Կիլիկիան լուրջ կռիվներ էր դարձել Իտալիայի ու Ֆրանսիայի միջև: Իտալիան փորձում ընդարձակել տիրույթները Միջերկրականի հյուսիսարևելյան ափին: Դա հնարավորություն կտար նրան վերահսկել Բեռլին-Բաղդադ երկաթուղին և Միջերկրականի արևելքի ծովային ուղիները: Սակայն Ֆրանսիան չհրաժարվեց Կիլիկիայի նման հարուստ և ռազմավարական առումով կարևոր երկրամասին տիրելու գաղափարից,

որի արդյունքում իտալական նկրտումները բավարարում ստացան Փոքր Ասիայի արևմտյան և կենտրոնական շրջաններում:

- 1915 թ. աշնանը ռուսական դիվանագիտության կողմից առաջ քաշված Ջեմալ փաշային սեփական կառավարության դեմ ապստամբության դրդելու նախագիծը բավական իրական էր: Այն ռուս դիվանագետներին առաջարկել էին հայերը, որոնք հույս ունեին փրկելու Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում ապաստանած հայ տարագիրներին: Հաջողության դեպքում օսմանյան պետությունը կարող էր դուրս բերվել պատերազմից, գուցե նաև միանար Անտանտին: Ջեմալի անհաջողության դեպքում՝ թուրքերը բավական կթուլանային ներքին երկպառակտման հետևանքով, միաժամանակ հնարավոր կդառնար գրեթե առանց դիմադրության Անտանտի երկրների զորքեր մտցնել Պաղեստին, Սիրիա, Կիլիկիա: Սակայն ֆրանսիական և բրիտանական իշխանություններն ավելի ընդարձակ նկրտումներ ունեին Մերձավոր Արևելքում, և Ջեմալի հետ դաշինքը կարող էր դրանց խանգարել: Ահա այդ հանգամանքով էր պայմանավորված այդ բանակցությունների նկատմամբ նրանց սկզբնական վերապահ, ապա նաև բացասական դիրքորոշումը:

- 1917 թ. միջազգային նոր իրավիճակ ստեղծվեց, երբ Ռուսաստանում տապալվեց ցարական վարչակարգը, պատերազմի մեջ մտավ ԱՄՆ-ը: Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը հանդես եկավ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիմքի վրա հաշտություն կնքելու հայտարարությամբ, միաժամանակ իր խնդիրներից մեկը համարեց ասիական Թուրքիայի ոչ թուրք բնակչության ազատագրումը: Ռուսական կառավարության այդ դիրքորոշումը կրկին ոգևորեց հայ գործիչներին և նոր հույսեր արթնացրեց, քանի որ ցարական իշխանությունների վարած ոչ հայանպաստ քաղաքականությունը բավական ծանր հիասթափության պատճառ էր դարձել: Նման պայմաններում հայ գործիչները կրկին վերադարձան Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ու Կիլիկիան միավորելով ինքնավար Հայաստան ստեղծելու գաղափարին, որից ժամանակին ստիպված էին եղել հրաժարվել ցարիզմի վարած գաղութային քաղաքականության հետևանքով:

- 1917 թ. ռուսական հեղափոխությունների ալիքի վրա բարձրացավ անկախ հայկական պետություն կազմավորելու տեսլականը: Մինչ այդ, եթե չհաշվենք հատուկենտ անհատների առաջարկները, բարձրացվել էր միայն ինքնավարության հարցը, իսկ անկախությունը մինչև 1917 թվականն անիրականանալի երազանք էր թվում: Խորհրդային Ռուսաստանը, ապա նաև

Ֆրանսիական, բրիտանական, ամերիկյան կառավարությունները սկսեցին ճանաչել Հայաստանի անկախության հնարավորությունը: Սակայն 1918 թ. սկզբին հայ քաղաքական միտքը դեռևս պատրաստ չէր ընդունելու անկախության հեռանկարը: Անկախություն հռչակելու և սեփական խնդիրներն ինքնուրույն կամ Անտանտի պետությունների աջակցությամբ լուծելու անկարողությունն ի վերջո հանգեցրեց նոր ողբերգության: Նախ Ռուսաստանը դուրս եկավ պատերազմից՝ կնքելով Բրեստ-Լիտովսկի խայտառակ պայմանագիրը, ապա Հայաստանը ստիպված էր չափազանց ուշացումով՝ 1918 թ. մայիսի 28-ին հռչակել անկախությունը, իսկ հունիսի 4-ին կնքել ավելի խայտառակ Բաթումի պայմանագիրը:

- Հայ գործիչների համար ինքնավարությունից ավելի կարևոր էր կոտորածների կանխումը պատերազմի ընթացքում: Եթե հնարավոր էր համարվում կարճ ժամանակում Արևմտյան Հայաստանի գրավումը ռուսական բանակի կողմից, ապա Կիլիկիան հեռու էր Կովկասյան ռազմաճակատից, և տեղի հայությանը թուրքական կոտորածներից փրկելու համար հայ գործիչները ստիպված էին այլ ելք որոնել: Լավագույն տարբերակը Կիլիկիայում բրիտանական կամ Ֆրանսիական զորքեր ափհանելը, նրանց օգնությամբ երկրամասը թուրքերից ազատագրելն էր: Տեղի հայերն իրենց հերթին պատրաստակամ էին կռվել Անտանտի բանակների կողքին: Կիլիկիայում հայկական ապստամբությունը և դաշնակիցների օգնությամբ ազատագրումը հնարավորություն կտար երկրամասը փրկել հայազրկումից, ինչպես նաև՝ պայմաններ կստեղծեր պատերազմից հետո ինքնավարություն ձեռք բերելու համար: Կիլիկիայի ազատագրումով հնարավոր կդառնար կանխել հայերի տեղահանությունն ու կոտորածը նաև մյուս վայրերում, որի հետևանքով թուրքերն ի վիճակի չէին լինի ամբողջ ահավորությամբ իրականացնել Հայոց մեծ եղեռնը: Կիլիկիայում ափհանում կատարելու նպատակով հայ գործիչները սկսած 1914 թ. վերջերից բազմիցս դիմեցին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի ռազմական և քաղաքական շրջանակներին: Կիլիկիայում զորքերի ափհանում իրականացնելու և ռազմական գործողություններ ծավալելու նախաձեռնությամբ հանդես են եկել նաև Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի մի շարք բարձրաստիճան քաղաքական ու ռազմական գործիչներ: Այդ հարցը քննարկվել էր նաև Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարություններում: Թուրքական կողմը բավական անհանգստանում էր Կիլիկիայում հակառակորդի ուժերի ափհանու-

մից, իսկ գերմանական ռազմական գործիչներն այն համարում էին թուրքերի ամենաթույլ կետը:

- Քանի որ Ֆրանսիան ձգտում էր պատերազմից հետո տիրել Կիլիկիային, այդ պատճառով ամեն կերպ խոչընդոտում էր հայերի կամ բրիտանացիների միջոցով Կիլիկիան գրավելու բոլոր նախագծերին: Դա պայմանավորված էր նրանով, որ ֆրանսիացիները բավարար զորք չունեին տարածաշրջանում, որպեսզի սեփական ուժերով լուծեին այդ խնդիրը, միաժամանակ հասկանում էին, որ եթե երկրամասն ազատագրվի հայկական կամ բրիտանական ուժերով, ապա պատերազմից հետո իրենց իրավունքների ճանաչումը Կիլիկիայում կլինի բավական բարդ:

- Երիտթուրքերը հայերի տարագրությունն ու կոտորածը Կիլիկիայում սկսել են ավելի վաղ, քան Արևմտյան Հայաստանում: Դա պատճառն այն էր, որ ցանկացած պահի Անտանտի երկրները կարող էին զորք ավիանել Կիլիկիայում, իսկ թուրքերը բավարար ուժեր չունեին այն պաշտպանելու: Հետևաբար՝ իրենց թիկունքն ավելի ապահով դարձնելու համար թուրքերը շտապում էին տեղահանել տեղի հայ բնակչությանը:

- Դարդանելում ավիանում կատարելու բրիտանական իշխանությունները որոշումից հետո Կիլիկիան անուշադրության մատնվեց: Դա ռազմավարական լուրջ սխալ էր, որի հետևանքով բրիտանացիները ծանր պարտություն կրեցին, մեծ զոհեր տվեցին, վերացավ բրիտանական նավատորմի անպարտելիության մասին հավատը, վարկաբեկվեց նրանց հեղինակությունն Արևելքում, իսկ Կիլիկիան դատապարտվեց հայաթափման: Երկրամասը գրավելու Ֆրանսիայի անկարողությունը և բրիտանական գրավման դեմ նրա հարուցած խոչընդոտները չափազանց ծանր հետևանքներ ունեցան հայերի համար: Անտանտի զորքերի ավիանումը Կիլիկիայում կարող էր տեղահանությունից ու կոտորածից փրկել ոչ միայն տեղի հայությանը, այլ նույնիսկ՝ կանխել Մեծ եղեռնը: Բրիտանա-ֆրանսիական զորքերը Կիլիկիայից շարժվելով ռուսական բանակներին ընդառաջ՝ Թուրքիային կկանգնեցնեին երկու մասի բաժանվելու վտանգի առաջ և կստիպեին դուրս գալ պատերազմից: Նման պայմաններում թուրքերն ի վիճակի չէին լինի կազմակերպել այնպիսի հրեշավոր ոճիր ինչպիսին Մեծ եղեռնն էր, իսկ եթե, այնուամենայնիվ, որոշեին հայկական կոտորածներ իրականացնել, դրանք երբեք այն չափերն ու ահավորությունը չէին ունենա, ինչ եղավ:

- 1915 թ. աշնանը մուսալեոցի քաջամարտիկների ռազմական ունակությունները հայրենի եզերքում կամ Կիլիկիայի որևէ այլ վայրում օգտագոր-

ծելու գաղափարը լուրջ քննարկումների առիթ էր դարձել ֆրանս-բրիտանական իշխանությունների համար: Այս համատեքստում առաջադրվեցին մուսալեոցիների հիմքի վրա հայկական ավելի մեծ զորամաս կազմավորելու մասին մի քանի նախագծեր: Մուսալեոցիները ոչ միայն պատրաստակամ էին կռվելու ատելի թուրքերի դեմ, այլ նույնիսկ իրենք էին բազմաթիվ դիմումներ կատարում հնարավորինս շուտ մարտական գործողություններին մասնակցելու համար: Եգիպտոսի ֆրանսիական և բրիտանական ռազմական իշխանությունները գինվորական մարզումներ սկսեցին մուսալեոցիների հետ: Սակայն հայկական զորամաս կազմավորելուն դեմ արտահայտվեցին հայ ազգային գործիչների զգալի մասը: Դա պայմանավորված էր այն մտավախությամբ, որ թուրքերը հայ կամավորական բանակի գոյությունը կարող էին օգտագործել եղեռնից մազապուրծ մի քանի հարյուր հազար արևմտահայերին կոտորելու համար: Արդյունքում, որոշ ժամանակով հետաձգվեց հայկական կամավորական զորամաս կազմավորելու խնդիրը: Չնայած դրան՝ մուսալեոցի մի քանի տասնյակ մարտիկներ, որոնք մարզվել էին ֆրանսիացի ծովայինների կողմից, պարեկային ծառայություն էին կատարում Կիլիկիայի ափամերձ կղզիներում, իրականացնում դիվերսիոն-հետախուզական գործողություններ:

- Պատերազմում դաշնակիցների հաղթանակից հետո Կիլիկիան, Արևմտյան Հայաստանի հարավային և արևմտյան նահանգները անցնելու էին Ֆրանսիային: Վերջինիս էին անցնելու նաև Սիրիան և Լիբանանը: Հետևաբար՝ ֆրանսիական իշխանություններին անհրաժեշտ էր Միջերկրականի արևելքում զգալի ուժեր կենտրոնացնել, ավելի ակտիվ քաղաքականություն վարել, սեփական ազդեցությունը տարածել տեղի ժողովուրդների վրա: Այդ հանգամանքով էր պայմանավորված, որ 1916 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին Ֆրանսիայի արտաքին գործերի և ռազմական նախարարությունները սկսեցին ամենայն լրջությամբ քննարկել Կիպրոսում 5.000-ոց հայկական զորամաս կազմավորելու հարցը: 1916 թ. սեպտեմբերին, երկարատև բանակցություններից հետո, Ֆրանսիան ձեռք բերեց Մեծ Բրիտանիայի համաձայնությունը Կիպրոսում հայ կամավորական զորամաս կազմավորելու հարցի շուրջ:

- Բրիտանացիների հետ համաձայնություն կայացնելուց բացի՝ ֆրանսիական կողմը պետք է ապահովեր նաև հայկական ղեկավար շրջանակների աջակցությունը: Անցյալում վերջիններիս դիմադրության պատճառով չէին կարողացել ըստ արժանվույն օգտագործել մուսալեոցիների մարտա-

կան կարողությունները: Սակայն այս անգամ խոսքը ոչ թե միայն սուեռիա-
հայերի մասին էր, որոնցից կարող էին ձևավորել մի քանի վաշտ, այլ՝ կոր-
պորաի կազմավորման խնդիր էր դրված: Հետևաբար՝ անհրաժեշտ էր
արևմտահայ ազգային ղեկավարության համաձայնությունն ու սերտ համա-
գործակցությունը: Հակառակ դեպքում՝ նախագիծը կարող էր ձախողվել:
Ֆրանսիացի գործիչները սկսեցին Պ. Նուբարին համոզել, որպեսզի աջակ-
ցի հայկական լեգեոնի ստեղծման աշխատանքներին: Սակայն առանց սպա-
սելու հայ գործիչի պատասխանին, կամ նրան կանխապես դրական պա-
տասխանի տրամադրելու նպատակով, արդեն Լ. Ռոմիոյին ուղարկել էին
Եգիպտոս: Դրանով ֆրանսիացիները փորձում էին հասկացնել, որ իրենք
հայկական կամավորական զորամաս ստեղծելու են առանց հաշվի առնելու
Ազգային պատվիրակության կամ այլ հայկական քաղաքական ու հասարա-
կական կառույցների կարծիքը: Այսպիսով՝ հայ գործիչներին մնում էր համա-
կերպվել և հայկական զորամաս կազմավորելու դիմաց առավելագույն պա-
հանջներ առաջ քաշել:

- 1916 թ. հոկտեմբերին Պ. Նուբարի, Մ. Սայքսի և Ժ. Պիկոյի միջև
համաձայնություն կայացվեց Կիպրոսում ֆրանսիական դրոշի ներքո կռվող
Հայկական լեգեոն կազմավորելու մասին, որի դիմաց Ֆրանսիան պետք է
Կիլիկիային և իրեն անցնող մյուս հայկական տարածքներին պատերազմից
հետո ինքնավարություն տար: Սակայն ֆրանսիական կողմը այդպես էլ
պաշտոնապես չհայտարարեց Կիլիկիային ինքնավարություն տալու պատ-
րաստականության մասին՝ չնայած Պ. Նուբարի բազմաթիվ հիշեցումներին
ու բողոքներին:

- Ֆրանսիացի պաշտոնյաներն անձնական հանդիպումներում ինքնա-
վարության մասին խոստումներ էին շռայլում, և դրանով սիրաշահում էին
հայ ազգային գործիչներին, որոնք ստիպված էին բավարարվել եղածով:
Հայկական զորաբանակ ստեղծելուն աջակցելն արդարացված և ճիշտ քայլ
էր: Դա հնարավորություն էր տալու պատերազմից հետո ճանաչվել Անտան-
տին դաշնակից պատերազմող կողմ և ինքնավարություն պահանջել Կիլի-
կիայում: Փաստորեն՝ Կիպրոսում հայկական կամավորական զորամաս
կազմավորելու հարցը, որը քննարկվում էր 1914 թ. վերջերից, 1916 թ. վեր-
ջին ստացավ իր լուծումը՝ կազմավորվեց Արևելյան լեգեոնը:

- Պատերազմի տարիներին իրադրությունը բավական արագ էր փոխ-
վում: 1916 թ. վերջին ֆրանսիական իշխանությունները Ազգային պատվի-
րակության նախագահին առաջարկեցին պահանջել միացյալ հայկական

պետության ստեղծում իրենց հովանավորության տակ: **Դերերը** փոխվել էին, և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Հայ գործիչները տիպված էին համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայ ժողովրդին:

- Մեծ Բրիտանիայի և Պ. Նուբարի հետ քաղաքական բանավոր համաձայնություն կայացնելուց անմիջապես հետո Ֆրանսիան ակտիվորեն ձեռնամուխ եղավ լեզեոնի կազմավորման աշխատանքներին: Հրամանատար նշանակվեց Լ. Ռոմիոն, ով բավական կշռադատված ու ակտիվ գործունեություն ծավալեց: Նա կարողացավ ոչ միայն հայերին համախմբել իր շուրջը, այլ նաև բրիտանացիների հետ սերտ համագործակցություն հաստատել, համաձայնություն կայացնել Կիպրոսում հայկական զորամասի տեղակայման վայրի ու պայմանների շուրջ:

- Ինչպես ցույց տվեց կամավորագրության ընթացքը, հայ երիտասարդությունը ոգևորությամբ էր արձագանքում Կիլիկիան ազատագրելու և թուրքերից վրեժ լուծելու հնարավորությանը: Միաժամանակ պարզ դարձավ, որ համազգային խնդիրների առաջադրման դեպքում հայության բոլոր շերտերը, կառույցները արագորեն համախմբվում էին: Միավորման գործում վճռորոշ դեր ունեւր Պ. Նուբարի գործոնը, ում նկատմամբ մեծ վստահություն կար բոլոր հոսանքների մոտ: Փաստորեն՝ Ազգային պատվիրակության և նրա նախագահի շուրջ էին միավորվում սփյուռքի կառույցները: Նրանց ոգևորում էր Կիլիկիայի ինքնավարության գաղափարը, քանի որ 1916 թ. արդեն կորցրել էին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հույսը՝ Ռուսաստանի վարած քաղաքականության հետևանքով:

- Լեզեոնի առաջին կամավորները հանդիսացան մուսալեոցիները և եգիպտահայերը: Լեզեոնի մեջ նախատեսվում էր ընդգրկել Անտանտի երկրների ռազմագերիների ճամբարներում հայտնված հայ զինվորներին: Բազմաթիվ հայեր, որոնք կռվել էին թուրքական, բուլղարական բանակներում, հայտնվել էին ռազմագերիների մեջ: Նրանց վիճակը բավական ծանր էր, քանի որ թշնամի էին դիտվում և՛ Անտանտի երկրների կողմից, և՛ Բառլայակ դաշինքի ռազմագերիների: Նրանց զգալի մասը հնարավորության դեպքում միանում էր լեզեոնին: Ամենամեծ մասնակցությունը կամավորագրու-

թյանը ցուցաբերեցին ամերիկահայերը: ԱՄՆ-ի ավելի քան 5.000 հայեր ցանկություն հայտնեցին միանալու լեգեոնին, սակայն միայն 1.200 կամավորների հաջողվեց տեղափոխել Կիպրոս:

- Լեգեոնի կայացման գործում անուրանալի դերակատարություն ունեցան հայազգի սպաները: Նրանցից շատերն ավարտել էին ամերիկյան, ֆրանսիական և թուրքական ռազմական հաստատություններ: Ֆրանսիացիները խուսափում էին նրանց տալ բարձր սպայական կոչումներ, նույնիսկ ԱՄՆ-ի և թուրքական բանակի նախկին սպաներին ավելի ցածր կոչումներ էին տալիս: Չնայած դրան՝ հայ սպաները պատրաստակամ էին ծառայելու Հայկական լեգեոնում, որպեսզի կայանար ապագա ինքնավար Կիլիկիայի բանակի միջուկը համարվող զորամասը:

- Հայկական լեգեոնը բավական երկար ժամանակ ունեցավ մարզումների համար, քանի որ թուրքերի դեմ ռազմական գործողություններ Կիլիկիայում կամ Սիրիայում տեղի չէին ունենում: Ֆրանսիական հրամանատարությունը լեգեոնի մարտունակությունն ու կարգապահությունը բարձր էր դասում և գոհ էր հայ զինվորներից, իսկ սիրիացիներից՝ դժգոհ:

- Պաղեստինյան ռազմաճակատում բրիտանացիների դեպի հյուսիս առաջխաղացմանը զուգահեռ, ֆրանսիական գործիչների մոտ անհանգստությունը մեծանում էր, որ իրենց դաշնակիցը հետագայում կարող էր հետ կանգնել Սայքս-Պիկոյի համաձայնագրից, և Սիրիայի ու հայկական տարածքների կառավարումը վերցնել իր ձեռքը: Ֆրանսիան այդ տարածաշրջանում իրեն ավելի ամուր զգալու համար պետք է զորքեր ունենար, որպիսիք չունեին, հետևաբար՝ փորձում էր հենվել հայ և սիրիացի կամավորներից կազմավորված զորքերի վրա: Այդ ժողովուրդներին սիրաշահելու համար անհրաժեշտ էր խոստանալ ինքնավարություն, սակայն ֆրանսիական կառավարությունն այդպես էլ պաշտոնապես չհայտարարեց Հայաստանին և Սիրիային ինքնավարություն տալու պատրաստակամության մասին՝ չնայած տարածաշրջանով զբաղվող ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաների ու դիվանագետների բազմաթիվ առաջարկներին:

- Պաղեստինյան բանակի մարտունակ զորամասերի զգալի մասը 1918 թ. գարնանը մեկնել էին Եվրոպա, և անհրաժեշտ էր նրանց փոխարեն նոր զորքեր ուղարկել՝ ռազմաճակատը չթուլացնելու նպատակով: Դրանով էր պայմանավորված, որ ֆրանսիական իշխանությունները, չնայած նախապես արած հավաստիացումներին, ստիպված էին փոխել իրենց որոշումը և Արևելյան լեգեոնը տեղափոխել Պաղեստին: 1918 թ. գարնանը լեգեոնի եր-

կու գումարտակները տեղափոխվեցին Եգիպտոս, իսկ օգոստոսի վերջին դիրքեր զբաղեցրին Պաղեստինյան ռազմաճակատի առաջնագծում: Լեզեն-նականները խանդավառությամբ ընդունեցին մարտադաշտ մեկնելու լուրը: Նրանք հոգնել էին երկարատև մարզումներից, և շտապում էին հնարավորինս շուտ վրեժ լուծել թուրքերից:

- Կիլիկիայի ազատագրման ճանապարհը կարող էր բացվել, եթե Պաղեստինում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները ջախջախվեին: Հայկական լեզենն իր ներդրումն ունեցավ դաշնակից ուժերի առաջխաղացմանը դեպի Կիլիկիա՝ մասնակցելով Պաղեստինյան ռազմաճակատի խոշորագույն և վճռորոշ ճակատամարտին: Այն հայտնի է Մեգիդոյի կամ Արմազեդոնի ճակատամարտ անունով: 1918 թ. սեպտեմբերի 19-25-ը տեղի ունեցած այդ հաղթական ճակատամարտի արդյունքում Միջերկրականից մինչև Մեռյալ ծով ձգվող թուրքական ամբողջ ճակատը քայքայվեց, իսկ «Յըլդըրըմ» բանակը դադարեց գոյություն ունենալ: Այսպիսով՝ Մեգիդոյի ճակատամարտի արդյունքում բացվեց դեպի Լիբանան, Սիրիա և Կիլիկիա տանող ճանապարհ:

- 100 կմ ձգվող ռազմաճակատի մոտ 5,3 կմ երկարությամբ տարածքում՝ Զավիյա բնակավայրից մինչև Ռաֆաթ-Արարայի բարձունքները կանգնած էր ֆրանսիական զորախումբը, որի կազմում էին հայկական երկու գումարտակները: Հայկական զորամասը գրոհել է Ռաֆաթի բարձունքները՝ Արարայի հարևանությամբ: Ճակատամարտում հայկական զորամասին բաժին էր ընկել լեռնային, լավ ամրացված դժվարամատչելի հատված: Է. Ալենքին թշնամուց երեք անգամ ավելի փոքր ուժեր էր թողել այդտեղ, որոնց խնդիրն էր լինելու առաջինը գնալ հարձակման և շեղել թշնամու ուշադրությունը գլխավոր ուղղությունից: Փաստորեն՝ հայկական զորախմբից պահանջվում էր միայն շեղել թշնամու ուշադրությունը և պահպանել սեփական դիրքերը: Բրիտանացիները չէին հավատում, որ Հայկական լեզենն ի վիճակի կլինեի կոտրել թուրքերի պաշտպանությունը՝ ունենալով երեք անգամ քիչ զինվոր, մանավանդ որ նախկինում բրիտանացիները երեք անգամ փորձել էին այդ հատվածում առաջ շարժվել ավելի մեծ ուժերով և պարտություն էին կրել: Հայ մարտիկները ցույց տվեցին փայլուն մարտական ունակություններ և համառ մարտերով գրավեցին թուրքական պաշտպանության երեք բնագծերը, և նպաստեցին ընդհանուր հաղթանակին: Ֆրանսիական կողմը, որպեսզի Արևելքում բրիտանացիների կողքին ցույց տար իր ներկա-

յությունը ստիպված էր մամուլով փառաբանել Արևելյան լեգեոնի փայլուն հաղթանակը:

- Ռաֆաթ-Արարայի մարտերից հետո լեգեոնը սիրիական անապատներով շարժվեց հյուսիս: Չնայած ճանապարհին թշնամու այդպես էլ չհանդիպեցին՝ սակայն կիզիչ արևի տակ իրականացվող այդ երթը բավական ծանր էր կամավորների համար: Գնդապետ Լ. Ռոմիոն այդ դժվարին ռազմերթն իրականացրեց տեղացիներին ֆրանսիական ուժը ցուցադրելու համար:

- 1918 թ. հոկտեմբերի 1-ին Արևելյան լեգեոնի երրորդ գումարտակի հայ և սիրիացի զինվորներն ափ դուրս եկան Բեյրութի նավահանգստում: Տեղի բնակչությունը խանդավառությամբ ընդունեց ազատարար զինվորներին: Փաստորեն՝ Բեյրութն ազատագրվեց Արևելյան լեգեոնի ուժերով:

- Հալեպի անկումից հետո թուրքերը ստիպված էին հաշտություն խնդրել: Մինչ այդ բրիտանական ուժերին հաջողվեց գրեթե ամբողջությամբ ոչնչացնել Պաղեստինում, Լիբանանում և Սիրիայում կենտրոնացված թուրքական բանակները: Հայկական զորախումբն իր որոշակի մասնակցություն ունեցավ Օսմանյան կայսրության ջախջախման գործում:

- Լեգեոնը զգալի ներդրում ունեցավ թուրքերի ձեռքում հայտնված հայ կանանց ու աղջիկների ազատման հարցում: Միաժամանակ հայկական կանոնավոր զորամասի ներկայությունը հաղթող դաշնակիցների շարքում մեծ ոգևորություն էր առաջացնում Մեծ եղեռն վերապրածների մեջ: Գրեթե բոլոր հայ երիտասարդները ցանկանում էին միանալ լեգեոնին և մասնակցել Կիլիկիայի ազատագրմանը: Սակայն ֆրանսիական ռազմական իշխանությունները հետզհետե փոխեցին քաղաքականությունը Հայկական լեգեոնի նկատմամբ: Կիլիկիային ինքնավարություն տալու մտադրություն չունենալով՝ վտանգավոր էին համարում հայկական զորամասի մեծացումը: Հետևաբար՝ հրաժարվեցին լեգեոնի մեջ ընդգրկել Բաղդադից, Պոլսից, Դամասկոսից, Հալեպից կամավորագրված մի քանի հազար հայերին: Նրանց զինվորագրելու դեպքում լեգեոնի գումարտակների թիվը կհասներ 8-ի: Միայն Բեյրութում կամավորագրված 800 հայերին վերցրին ծառայության, որոնցից կազմավորվեց լեգեոնի Դ գումարտակը:

- Պ. Նուբարը 1918 թ. հոկտեմբերից բարձրացրեց հայերին պատերազմող կողմ ճանաչելու խնդիրը: Դա միջազգային իրավունքի տեսանկյունից կատարված ճիշտ և խորապես մտածված քայլ էր: Նա գիտակցում էր, որ միջազգային իրավունքի սուբյեկտ են ճանաչվում ոչ միայն ինքնիշխան

պետությունները, այլև՝ ազգային-ազատագրական շարժումները՝ հանձին իրենց ղեկավար մարմինների: Այդպիսին կարող էր ճանաչվել Ազգային պատվիրակությունը կամ փաստացի գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը, որը դեռևս միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Այսպիսով՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդես գալու համար անհրաժեշտ էր, որ հայերը ճանաչվեին պատերազմող կողմ: Նաև այդ հեռանկարի համար էր, որ Պ. Նուբարն աջակցեց կամավորական շարժմանը և Հայկական լեգեոնի կազմավորմանը: Ազգային պատվիրակության նախագահի ջանքերը որոշակի արդյունքներ, անշուշտ, տալիս են: Ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաները սկսում են քննարկել հայերին պատերազմող կողմ ճանաչելու հարցը, իսկ ֆրանսիական դրոշի ներքո մարտնչող Արևելյան լեգեոնը դիտում էին իբրև հայկական զորախումբ, որի խնդիրն էր Կիլիկիայի ազատագրումը:

- Թուրքերի հետ 1918 թ. հոկտեմբերին Մուղրոսում բրիտանական ռազմական իշխանությունների կնքած զինադադարի պայմանագիրը, որը ստորագրվել էր առանց դաշնակիցների շահերը հաշվի առնելու, հիմնականում հակասում էր հայության ձգտումներին: Պատերազմի ավարտական փուլում արդեն իսկ սրվել էին ֆրանս-բրիտանական հակասությունները Մերձավոր Արևելքում: Չնայած նախկինում ստորագրած գաղտնի համաձայնագրերին ու պայմանավորվածություններին՝ բրիտանացիները փորձում էին Ֆրանսիային թույլ չտալ ամրապնդվելու Մերձավոր Արևելքում, մանավանդ՝ ֆրանսիական ուժեր այնտեղ գրեթե չկային, եթե չհաշվենք Արևելյան լեգեոնը: Ֆրանսիական կողմին չթույլատրվեց մասնակցել Մուղրոսի բանակցություններին: Հետևաբար՝ զինադադարի համաձայնագրում հաշվի չէին առնված ո՛չ Ֆրանսիայի, ո՛չ էլ հայության շահերը:

- Մուղրոսի զինադադարով Հայաստանի մեծ մասը թողնվում էր թուրքական զորքերի վերահսկողության տակ, որը հետագայում հանգեցրեց Հայկական հարցի ծախսողմանը: Զինադադարի պայմաններից դրական էր Կիլիկիայից թուրքական զորքերի հեռացման պահանջը: Մուղրոսի պայմանագրից երևացին հայերին խաբելու «դաշնակիցների» քաղաքականության առաջին քայլերը, որն ավարտվեցին Լոզանով: Սակայն այս շրջանում հայ քաղաքական գործիչները դեռևս չափազանց ոգևորված էին, և նրանց թվում էր, որ մի քանի դար տևած անկախության կորստից հետո արդեն մոտ էր ազատ, անկախ, միացյալ հայրենիք ունենալու հնարավորությունը: Այդ գե-

ղեցիկ հեռանկարը հետագա ամիսներին մոտենալու փոխարեն հետզհետե հեռացավ:

- Նոյեմբերի վերջից մինչև դեկտեմբերի երկրորդ կեսը Հայկական լեզեոնի ուժերով Կիլիկիան ազատագրվեց թուրքերից: Զինադադարի 10-րդ և 16-րդ հոդվածները հնարավորություն տվեցին արագորեն և առանց արյուն թափելու ազատագրել հայկական այդ երկրամասը, ուր վերադարձան և նոր կյանք փորձեցին սկսել ավելի քան 150.000 հայեր: Դա ապացուցում է այն ճշմարտությունը, որ այդ ժամանակաշրջանում, երբ թուրքերը ջախջախված և հուսահատ էին, ցանկության դեպքում դաշնակիցները կարող էին նրանց ստիպել հեռանալու բոլոր հայկական տարածքներից: Սակայն դա ժամանակին չարվեց, որն էլ հանգեցրեց Հայկական հարցի ծախողմանը:

- Հայկական լեզեոնը հասավ իր գլխավոր նպատակին՝ Կիլիկիայի ազատագրմանը: Հայ զինվորն էր, որը թուրքերի դարավոր լծից ազատեց հայրենիքի այդ հատվածը: Լեզեոնականները զգալի ներդրում ունեցան տարագիրներին հայրենիք փոխադրելու, ինչպես նաև հայ բնակչությանը զինելու գործում, որը կարևոր նշանակություն ունեցավ հետագայում քեմալականների դեմ մղված ինքնապաշտպանական մարտերում: Սակայն ֆրանսիական կողմը դրժեց նախկինում տված խոստումները, և այդպես էլ Կիլիկիային ինքնավարություն չտվեց: Հակառակ դրան՝ պետք է արձանագրել, որ լեզեոնի կազմավորումը չափազանց կարևոր դերակատարություն ունեցավ հայոց պատմության և արևմտահայ տեսակի պահպանման հոլովոյթում: Նրա պաշտպանության ներքո Կիլիկիա վերադարձավ հայ «մնացորդաց սերունդը», լեզեոնն անուրանալի նշանակություն ունեցավ նաև հետագայում՝ քեմալականների հարձակումների դեմ ինքնապաշտպանություններ կազմակերպելու ժամանակ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. ՀԱԱ, ֆ. 57 (Ամենայն Հայոց կաթողիկոսի դիվան), ց. 5, գ. 19, 21, 27, 28, 31, 57, 72, 76, 86, 90, 108, 112, 129, 144, 151, 154, 157, 158:

2. ՀԱԱ, ֆ. 200 (ՀՀ ԱԳՆ 1918-1920), ց. 1, գ. 5, 131:

3. ՀԱԱ, ֆ. 282 (Ա. Չոպանյան), ց. 1, գ. 45, 46:

4. ՀԱԱ, ֆ. 288 (Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական բյուրո), ց. 1, գ. 2, 3:

5. ՀԱԱ, ֆ. 422 (Անդրանիկ Մինասի Կենճյան), ց. 1, գ. 675, 680:

6. ՀԱԱ, ֆ. 430 (Հայ ազգային պատվիրակություն), ց. 1, գ. 18, 26, 584, 784, 807, 1044, 1320:

7. ՀԱԱ, ֆ. 450 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), ց. 1, գ. 33, 37, 39, 40, 42, 54, 71:

8. ՀԱԱ, ֆ. 450 (Փաստաթղթեր Հայկական հարցի մասին), ց. 3, գ. 71:

9. ՀԱԱ, ֆ. 453 (Ապահ Պետրոսյան), ց. 1, գ. 51, 70, 157, 158, 197, 198, 199:

10. ՀԱԱ, ֆ. 1267 (Առաջին աշխարհամարտի հայ կամավորական գնդերի մասին փաստաթղթեր), ց. 4, գ. 11:

11. ՀԱԱ, ֆ. 1457 (ՀՅԴ), ց. 1, գ. 91:

Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)

12. Ա. Չոպանյանի ֆոնդ, ք. 1, ց. 1, գ. 702:

13. Փարիզի Նուբարյան մատենադարան, ֆոնդ, Legion d'Orient-volontaires armenienne, թղթապանակ Legion d'Orient (Legion armenienne):

14. Փարիզի Նուբարյան մատենադարան, ֆոնդ Occupation francaise de le Cilicie 1919-1922, թղթապանակ 1, 4:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Հայերեն

15. Գուստ Վ., Հայերի ցեղասպանությունը 1915-1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթեր)

րից): Գերմաներենից թարգմանեց և հրատարակության նախապատրաստեց Ռ. Յորդանյանը, Երևան, «Հայագիտակ», 2008, 720 էջ:

16. Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների: Բարենորոգումները Հայաստանում 1912թ. Նոյեմբեր 12-ից մինչև 10 Մայիս 1914թ., թարգմանեց ռուսերենից եւ ֆրանսերենից իրաւ. Սեդրակ Աւագեան, Թիֆլիս, տպ. «ԷՊՕԽԱ», 1915, 200 էջ:

17. Կիլիկեան կսկիծներ: Վաւերագրեր Կիլիկիոյ կաթողիկոսական դիւանէն, 1903-1915, Պէյրուս, Տպ. «Հրազդան», 1927, 210 էջ:

18. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, խմբագիր Զ. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, 812 էջ:

19. «Հայաստանի ավտոնոմիան» յեւլ Անտանտան: Վաւերագրեր իմպերիալիստական պատերազմի շրջանից, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեւան, «Պետական հրատարակչություն N 365», 1926, 93 էջ:

20. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, ՍՄԿՊ ԿԿ առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալ, ՀՍՍՌ ՆԳՄ արխիվային վարչություն; Խմբ.՝ Ա. Ն. Մնացականյան, Ա. Մ. Հակոբյան, Ս. Կ. Բուդոյանյան ևն, 1960, 642 էջ:

21. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոգելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, Կ. Ա. Երևան, 2005, «Հայաստան» հրատ., 484:

22. Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), Աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոգելի, ֆրանսերենից թարգմ. Վարուժան Պողոսյանը, Կ. Բ. Երևան, 2005, «Հայաստան» հրատ., 520 էջ:

23. Ռուստոմ: Նամականի (Մահուան ութսունամեակին աղթի), Խմբագիր՝ Հ. Տասնապետեան, Պէյրուս, 1999, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 669 էջ:

24. Ռուսաստանը և Հայոց ցեղասպանությունը 1915-1917 թթ. (փաստաթղթերի ժողովածու), Կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ պատմական գիտությունների թեկնածու Արմեն Մարության, Երևան, ՀՀ

ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2004, 208 էջ:

25. Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915-1916 թթ. ցեղասպանության մասին, Կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարության, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2001, 73 էջ:

26. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության: Գիրք Դ. Տ. Տ. Սահակ Բ Խապայեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ. 1891-1940: Կազմող՝ Ս. Ա. Բեհրոյան, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 1997, 590 էջ:

Ռուսերեն

27. Армяне в Первой мировой войне (1914-1918 гг.). Москва, Редакционно-издательский дом “Российский писатель”, 2014, 768 с.

28. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией М. Г. Нерсисяна. Второе, дополненное издание, Ереван, Издательство “Айастан”, 1983, 687 с.

29. Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917гг., серия III (1914-1917 гг.), М.-Л., Государственное социально-экономическое издательство, 1935, т. VI, ч. 2, 388 с.

30. Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. Серия III, 1914-1917 гг., М.-Л., Государственное социально-экономическое издательство, 1935 т. VII, 568 с.

31. Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878-1917гг., серия III (1914-1917 гг.), М.-Л., Государственное социально-экономическое издательство, 1935, т. VIII, ч. 1, 578 с.

32. Раздел Азиатской Турции по секретным документам б. министерства иностранных дел. Под редакцией Е.А.Адамова, Москва, Изд. Литиздат НКВД, 1924, 384 с.

33. Сборник договоров России с другими государствами (1856-1917), Под ред. Е. А. Адамова, сост. И. В. Козьменко, Москва, Государственное издательство политической литературы, 1952, 464 с.

Անգլերեն

34. Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, "Mayreni Publishing", 1996, 445 p.

35. Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Volume VII, United States Government Printing Office, Washington, 1946, 985 p.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայերեն

36. Աթանասեան Ա., Կիլիկիոյ մօտաւոր անցեալէն (Պատմական ակնարկ), Առաջարան եւ նօթեր Մ. Ս. Դաւիթ-Բէկի, Փարիզ, տպ. Յ. Թիւրապեան, 1937, 74 էջ:

37. Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը, Պոլիս, տպարան «Յ. Ասատուրեան որդիք», 1920, 319 էջ:

38. Ահարոնեան Գ., Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմութեան վրայ), Գ տպագրութիւն, Լոս Անճելըս, «Շիրակ» հրատ., 1986, 224 էջ:

39. Աղայան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1976, 868 էջ:

40. Աղասի, Զէյթուն եւ իր շրջակաները (Նկարագրութիւն աշխարհագրական, պատմական եւ պատերազմական. Ռուբինեան թագաւորութեան անկումէն մինչեւ մեր օրերը), Պէյրութ, տպ. Շիրակ, 1968, 415 էջ:

41. Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1925, Ա տարի, Աղեքսանդրիա, 1924, 248 էջ:

42. Աճէմեան Լ., Եգիպտահայ տարեցոյց 1926, Բ տարի, Աղեքսանդրիա, 1925:

43. Աճէմեան Խ., Էջեր կամաւորի օրագրէս, Տպ. «Համազգային», Պէյրութ, 1967, 326 էջ:

44. Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և Հայկական եղեռնի գաղտնիքները, Երևան, «Լույս» հրատ., 1990, 356 էջ:

45. Ամջա Հ., Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը), Օսմաններենից թարգմանությունը, ներածականն ու ծանոթությունները պ.գ.դ. Ա. Ավագյանի, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2007, 48 էջ:

46. Ամուրեան Ա., Հայ Դատը: Հայ ժողովրդի ազատագրական ճիգերը, Թեհրան, Տպ. «Ալիք», 1977, 197 էջ:

47. Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, տպարան Ս. Ղազարու, 1926, 694 էջ:

48. Անդրեասեան Տ., Ձեյթունի տարագրությունը եւ Սուէտիոյ ապստամբութիւնը, Բ տպագրութիւն, սրբագրեալ եւ յաւելեալ, Հալեպ, տպ. Գոլէճ, 1935, 118 էջ:

49. Անտոնեան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ Փաշա, Պոսթըն, տպ. «Պահակ», 1921, 304 էջ:

50. Ավազյան Բ., Ամերիկայի Միացյալ Նահանգների հայ գաղութի պատմությունը (Սկզբնավորումից մինչև 1924 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 240 էջ:

51. Աւետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեն եւ Զօր. Անդրանիկ: Վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով, Փարիզ, տպ. «Le Soleil», 1954, 525 էջ:

52. Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, տպ. «Բարձրագույն դպրոց», 1997, 436 էջ:

53. Ատանայի Հայոց պատմութիւն, Խմբագրեց՝ Բիւզանդ. Եղիայեան, Անթիլիաս, Տպարան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970, 1062 էջ:

54. Արարա: Նուիրում Արարայի հինգերորդ տարեդարձին, Հրատ. Հայ լեզնական միութեան, Պոսթոն, 1923, 32 էջ:

55. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածունդ, Երևան, «Հայաստան» հրատ., 1973, 584 էջ:

56. Արզումանյան Մ., Հայաստանը 1914-1917, Երևան, «Հայաստան» հրատ., 1969, 780 էջ:

57. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 822 էջ:

58. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, «Գիտություն» հրատ., 1999, 539 էջ:

59. Գալուստեան Գր. (Կիլիկեցի), Մարաշ կամ Գերմանիկ եւ Էբրոս Ձեյթուն, Նիւ Եորք, Մարաշի հայրենակցական միութեան կեդր. վարչութեան հրատ., «Կոչնակ» տպարան, 1934, 944 էջ:

60. Գանգրունի Հ., Կիլիկիոյ հայութեան վերջին գաղթը (1920-1921), Պէյրութ, Imprimerie Offset Doniguion Freres, 1998, 199 էջ:

61. Գասպարյան Ե., Ֆրանսիան և Մեծ եղեռնը (1915-1918 թթ.), Երևան, «Արտագերս» հրատ., 2000, 223 էջ:

62. Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), «Գիտություն» հրատ., Երևան, 2005, 246 էջ:

63. Գարամանուկեան Յ., Զորավար Արամ Գարամանուկեանի կեանքն ու գործը, Ֆորթ Լի, «Mayreni Publishing», 1998, 490 էջ:

64. Գուշագճեան Մ., Մոսա լեռան հայկական գաղթածախը 1875-1939, Պէյրոս, Տպարան «Կ. Տօնիկեան եւ որդիք», 1988, 190 էջ:

65. Գուշակեան Թորգոմ պատրիարք, Ամբողջ երկեր, Խ. 2, Հնդկահայք: Տպատրութիւններ եւ տեղեկութիւններ, Երուսաղեմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1941, 382 էջ:

66. Դալլաքյան Կ., Արշակ Զոպանյան, Երևան, «Սովետական գրող», 1987, 480 էջ:

67. Դիցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Աշխատասիրեց՝ Արամ Սահակեան, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հրատ., 2014, 1264 էջ:

68. Եսփուճեան Ա., Հայ ժողովուրդին անկախութեան պայքարը Կիլիկիոյ մէջ 1919-1921 թթ., Գահիրէ, Հայ ազգային հիմնադրամի մատենաշար, 1977, 1592 էջ:

69. Եղիայեան Բիզանդ, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, Կիլիկիոյ կաթողիկոսութեան հրատ., 1975, 946 էջ:

70. Զաւեն Արքեպս., Պատրիարքական յուշերս: Վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1947, 424 էջ:

71. Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշերը, Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1960, 44 էջ:

72. Թաթոյան Ռ., Կիլիկիահայության թիվը հայոց ցեղասպանության նախօրյակին, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատարակչություն, 2021, 240 էջ:

73. Թեքեյան Շառլ-Տիրան, Մոսա լեռան հայերի փրկությունը: Հիշողության էջեր, Երևան, «Դալլ» հրատարակչություն, 2002, 80 էջ:

74. Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային - ազատագրական շարժումները 1919-1920 թթ., Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1987, 272 էջ:

75. Թորոսյան Ա., Դարդանելից մինչև Պաղեստին (Թարգմանեց անգլերեն բնագրից Լիլիթ Թութսայանը), Երևան, Ցեղասպանության թանգարան ինստիտուտի տպագրություն, 2012, 208 էջ:

76. Թովուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 360 էջ:

77. Թովուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 369 էջ:

78. Իզմիրլեան Կ., Հայ ժողովուրդի քաղաքական ճակատագիրը անցեալին եւ ներկայիս (Քննական տեսութիւն), Պէյրութ, տպ. Սեան, 1964, 326 էջ:

79. Իսկէնտէրեան Յ., Սւէտիոյ ապստամբութիւնը, Գահիրէ, Տպագր. Զարեհ Ն. Պէրպէրեան, 1915, 48 էջ:

80. Իսկէնտէրեան Յ., Սւէտիոյ բարքերը, Գահիրէ, Հայկական տպարան Օննիկ Հալէպլեան, 1917, 36 էջ:

81. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը: Հայնոռա յարաբերութիւններու լոյսին տակ, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 1957, 442 էջ:

82. Լազեան Գ., Հայաստան եւ Հայ Դատը (Վաւերագրեր), Գահիրէ, տպ. «Նոր աստղ», 1946, 392 էջ:

83. Լեո, Անցյալից (Հուշեր, թղթեր, դատումներ), Թիֆլիս, «Խորհրդային Կովկաս» հրատ., 1925, 477 էջ:

84. Կամատրը (Արարայի յաղթանակի 10-րդ տարեդարձի առթիւ), հրատարակութիւն Գահիրէի Հայ Լեզէոնական Միութեան, Գահիրէ, «Յուսաբեր» տպարան, 1928, 75 էջ:

85. Կէնճեան Ա., Հալաճականի յուշեր 1914-1918, տպ. «Արարատ», Պէյրութ, 1964, 204 էջ:

86. Կէնճեան Ա., Սօց. Դէմ. Հնչակեան կուսակցութիւնը եւ Կիլիկեան ինքնավարութեան արթը (Կիլիկեան յուշեր՝ պատմութեան համար) 1919-1921, տպ. «Արարատ», Պէյրութ, 1958, 325 էջ:

87. Կէօքճեան Վ., Հայկական Կիլիկիոյ ազատագրական պայքարը (Յուշեր եւ նօթեր), Պոսթըն, Հրատարակութիւն Թէքէեան Մշակութային Միութեան "Մարտիրոս Տարագճեան Հիմնադրամ"ի, 1979, 189 էջ:

88. Կիրակոսյան Ա., Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (19-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, «Գիտություն» հրատ., 1999, 509 էջ:

89. Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1967, 560 էջ:

90. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք 2, Երևան, 1983, 462 էջ:

91. Հաճնոյ հերոսամարտի 90ամեակի գիտաժողովի նիսիներ եւ վաւերագրեր ու լուսանկարներ, Կազմեց եւ խմբագրեց՝ ղոկտ. Անդրանիկ Տազէսեանը, Պէյրութ, 2013, Haigazian University Press, 228 էջ:

92. Հայկական հարցը հաշտութեան կօնֆերանսի առաջ, Թիֆլիս, տպ. «Աշխատատւր», 1919, 32 էջ:

93. Հարությունյան Ա., Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914-1918), Երևան, «Հայաստան» հրատ., 1983, 376 էջ:

94. Հովհաննիսյան Լ., Հայկական հարցը և մեծ տերությունները 1914-1917 թթ., Երևան, «Զանգակ-97» հրատ., 2002, 184 էջ:

95. Ղազարյան Հ., Սկրի 1920 թվականի պայմանագիրն ու միացյալ անկախ Հայաստանի հռչակումը, գիրք առաջին, Երևան, «Էդիթ Պրինտ», 2012, 732 էջ:

96. Ճիգմէեան Մ., Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց 1890-1925, Տպագր. «Նոր օր»ի, Ֆրէզնօ, 1930, 572 էջ:

97. Մելիքյան Վ., Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), Երևան, «Մխիթար Գոշ», 1997, 320 էջ:

98. Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, «Մուղնի» հրատ., 2005, 584 էջ:

99. Մեծ պատերազմը եւ հայ ժողովուրդը, Խ. Ա. Ե. Չորբուքեանի նախաբանով, Կ. Պոլիս, 1920, 96 էջ:

100. Մուրատեան Գ., Հայրենիքին ուխտատուները վրեժին ճամբուն վրայ, Կ. Պոլիս, «Սանճագեան» տպ., 1920, 112 էջ:

101. Յուշամատեան Մեծ Եղեռնի (1915-1965), Պէյրութ, «Ատլաս» տպ., 1965, 1119 էջ:

102. Յուշամատեան Մուսա լեւրան, Խմբագրեցին Մարտիրոս Գուշագեան եւ Պօղոս Մատոտեան, Պէյրութ, «Ատլաս» տպ., 1970, 878 էջ:

103. Նասիպեան Ա., Բրիտանիա եւ Հայկական հարցը 1915-1923, հրատ. «Սիւփան», Պէյրութ, 1994, 344 էջ:

104. Ներսիսեան Ա., Մովսէս Տէր Գալուստեան, Երևան, «Էդիթ Պրինտ», 2015, 239 էջ:

105. Նորաշխարհյան Լ., Զեյթունը 1914-1921 թթ. (Հուշեր), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, 272 էջ:

106. Զոպանյան Ա., Նամականի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 1980, 504 էջ:

107. Զորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ, 1908-1922, Պէյրուս, տպ. Սեան, 1975, 750 էջ:

108. Զորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Դ, Պէյրուս, տպ. Սեան, 1975, 404 էջ:

109. Պալաքեան Գ., Հայ գողգոթան: Դրուագներ հայ մարտիրոսագրութենէն: Պեղինէն դէպի Զօր 1914-1920, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, 429 էջ:

110. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, խմբագիր՝ Ա. Կիտուր, հ. Ա, Պէյրուս, Տպարան «Շիրակ», 1962, 639 էջ:

111. Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան 1887-1963, խմբագիր՝ Ա. Կիտուր, հ. Բ, Պէյրուս, Տպարան «Շիրակ», 1963, 611 էջ:

112. Պարթեւեան Ս., Արարա: Հայկական լեգէոնը, Իզմիր, Տպ. Քէշիշեան, 1919, 143 էջ:

113. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 672 էջ:

114. Պրեմօն Է., Կիլիկիա 1919-1921 Շրջանին, թրգ.՝ Տիգրան Պոյաճեան, տպ. «Պահակ»-ի, Պոստոն, 1921, 135 էջ:

115. Պօղոսեան Յ., Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօգան-տաղի հայ գիւղերը, Լօս Անճէլըս, «Պօզանեան տպագրութիւն», 1942, 857 էջ:

116. Պօղոսեան Ս., Թրքահայ սպայի մը օրագիրը (Պատերազմի եւ զինադադարի յուշեր Լիբանանի, Պաղեստինի եւ Եգիպտոսի մէջ) 1916-1919, հ. Բ, Փարիզ, տպ. H. Turabian, 1947, 211 էջ:

117. Պօղոսեան Ս., Պօղոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2004, 264 էջ:

118. Պոյաճեան Տ., Հայկական լեգէոնը: Պատմական Յուշագրութիւն, Տպարան Պայքարի, Ութթրթաւոն, 1965, 415 էջ:

119. Սալբի Մ., Ալեակներ եւ խլեակներ: Հայ վրանաքաղաքի տարեգիրքը, Ադեքսանդրիա, տպ. «Ա.Գասապեան», 1919, 270 էջ:

120. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970:

121. Սապահ-Գիլեան Բ., Կենսագրություն Ստեփան Սապահ-Գիլեանի, Տպագրություն «Էլմաս-Սաթինի», Նիւ Յորք, 1936, 276 էջ:

122. Սապահ-Գիլեան Ս., Ինքնավար Հայաստան, Գահիրե, «2. Պերպե-րեան» տպ., 1915, 96 էջ:

123. Սարաֆեան Գ., Պատմություն Անթեպի Հայոց, Խ. Ա, Լոս Անճելես, տպ. «Սէնթրըլ թայփսէթինկ ընկերություն», 1953, 1088 էջ:

124. Սարուխանյան Տ., Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում և Մեծ Բրիտանիան (1915-1918 թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2005, 202 էջ:

125. Սերոբեան Մ., Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով: Վերլուծումներ Հայկական հարցին շուրջ, Գահիրե, տպ. «Նոր աստղ», 1948, 383 էջ:

126. Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, Գիրք Ա, Երևան, 1996:

127. Սիմոնյան Ռ., Անդրանիկ. Սիբիրական վաշտի ողիսականը, Երևան, 2006, էջ 140:

128. Վկայարան հայկական ցեղասպանության, Պատրաստեց Յ. Իսկահատեան, Խ. Ե, Պեյրուբ, 2013, 368 էջ:

129. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, 704 էջ:

130. Տամատեան Մ., Իմ յուշերէս, Պեյրուբ, ՌԱԿ Պեյրուբի Միհրան Տամատեան ակումբի հրատ., 1985, 191 էջ:

131. Տաշեան Հ., Հայ ազգի տարագրությունը գերմանական վաերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1921, 241 էջ:

132. Տիգրանեան Տ., Անգլիան եւ հայերը, Երեւան, 1994, «Մ. Վարանդեան» հրատ., 220 էջ:

133. Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի յուշերը Մերձատուր Արեւելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին, Խ. Ա, թարգմանեց Ի ֆրանսերէնէ դոկտ. Հմյկ. Ստեփանեան, Պեյրուբ, Հայ կաթողիկէ տպարան, 1960, 690 էջ:

134. Տրուխանովսկի Վ., Ուինստոն Չերչիլ: Քաղաքական կենսագրություն, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, 621 էջ:

135. Փափագեան Վ., Իմ յուշերը, Խ. Գ, Գահիրե, «Հայրենիք» հրատ., 1957, 432 էջ:

136. Քէշեան Ա., Կարմիր դրոշակներ հերոսներու կեանքէն, 1915-1918, Խ. Ա, Պոլսքոէշ, տպ. «Ապթօրիա», 1938, 289 էջ:

137. Քիրքեան Վ., Հայկական Կիլիկիա, Նիւ Եորք, «Կոչնակ»ի Մատենաշար Հրատարակութիւն, 1919, 75 էջ:

138. Քէլէշեան Մ., Սիս-Մատեան (Պատմական, բանասիրական, տեղեկագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ), Պէյրութ, տպ. «Հայ ճեմարան», 1949, 771 էջ:

139. Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, ու ներկայ կացութիւնը, Կոստանդնուպոլիս, Հրատարակիչք Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1911, 287 էջ:

Ռուսերէն

140. Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., Государственное издательство, 1928, 447 с.

141. Гиббонс Г., Последние избиения в Армении, Петроград, Воен. тип. им. Екатерины Великой, 1916.

142. Готлиб В., Тайная дипломатия во время Первой войны /Перевод с английского В. А. Альтшулера и В. П. Готовицкой., Москва, Соцэкгиз, 1960, 604 с.

143. История Первой мировой войны 1914-1918 гг. (под редакцией доктора исторических наук И. И. Ростунова), т. 2, Москва, Наука, 1975, 608 с.

144. Керенский А., Россия на историческом повороте: Мемуары, Москва, Изд. "Республика", 1993, 384 с.

145. Ллойд Джордж Д., Правда о мирных договорах, Под ред. Волков Ф.Д., Никонов А.Д., т. 2, Москва, Иностр. лит., 1957, 556 с.

146. Марукян А., Армянский вопрос и политика России (1915-1917 гг.), Ереван, МИГА НАН РА, 2003, 482 с.

147. Мнацаканянь Г., Разрѣшеніе Армянскаго Вѣдѣнія, Москва, Типографія Х. Бархударянцъ, 1914, 48 с.

148. Ошеровскій Л., Идея автономнаго строя въ Турецкой Арменіи подъ протекторатомъ Россіи, Пятигорскъ, Изданіе Пятигорскаго Армянскаго Комитета по оказанію помощи добровольцамъ-дружинникамъ и бѣженцамъ армянамъ, 1915, 15 с.

149.Палеолог М., Царская Россия во время мировой войны, Москва, 1991, Пер. с фр., 2-е изд., Междунар. отношения, 240 с.

150.Рорбахъ П., Война и германская политика. Съ предисловиемъ проф. С. А. Котляревскаго. Издание Г. А. Лемана и С. И. Сахарова, Москва, 1915, 107 с.

151. Саакян Р., Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, Изд. АН АССР, 1986, 283 с.

152. Сазонов С.Д., Воспоминания, Москва., Харвест, 2002, 368 с.

Անգլերեն

153.Churchill W., The World Crisis, v. 1, Toronto, The Macmillan company of Canada, 1923, 589 p.

154.Cutlack F. M., The Australian Flying Corps in the Western and Eastern theatres of War 1914-1918, Eleventh edition, Angus and Robertson Ltd, Sydney, 1941, 493 p.

155.Einstein Lewis, Inside Constantinople. A Diplomatist's diary during the Dardanelles Expedition, April-September, 1915. New York, E. P. Dutton & Co., 1918, 291 p.

156.Earle E. M., Turkey, the Great Powers, and the Bagdad Railway: a study in imperialism, New York, The Macmillan company, 1924, 364 p.

157.Fisher J., Memories and Records, vol. I, New York, by Goerge H. Doran company, 1920, 286 p.

158.Frederick Maurice, The Armistices of 1918, Oxford University Press, 1943.

159.Fromkin, David, A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East. New York: Avon Books, 1989, p. 214.

160.Graham M. F., Goldstein E., Langhorne R., Guide to international relations and diplomacy, London, YHT Ltd, 2002, 562 p.

161.Grey Ed., Twenty-Five Years, 1892-1916, vol. II, New York, Frederick A. Stokes Company, 1925, 356 p.

162.Gullett H. S., The Australian Imperial Force in Sinai and Palestine, 1914-1918 (10th edition), Sydney, Angus and Robertson Ltd, 1941, 797 p.

163.Hovannisian R., The Republic of Armenia, vol. 1, Los Angeles, 1971, p. 258.

164. Howard H.N., *The Partition of Turkey. A Diplomatic History, 1913-1923*, Norman, University of Oklahoma Press, 1931.

165. Hubatsch Walther, *Germany and the Central Powers in the World War, 1914- 1918*, University of Kansas Publications Social Science Studies, Lawrence, 1963, 138 p.

166. Huges M., *Allenby and British Strategy in the Middle East, 1917-1919*, London, Frank Cass, 224 p.

167. Kazanjian P., *The Cilician Armenian ordeal*, Published by HYE Intentions inc., Boston, 1989, 511 p.

168. Kinross Lord, *The Ottoman Centuries. The Rise and the Fall of the Ottoman Empire*, London, 1977, 638 p.

169. Lawrence T.E., *Seven Pillars of wisdom*, Wordsworth Editions Limited, Ware, Hertfordshire, 1997, 669 p.

170. Leslie Shane, *Mark Sykes: His Life and Letters, with an Introduction by the right hon. Winston Churchill*, Cassell and company Ltd, London, New York, Toronto and Melbourne, 1923, 308 p.

171. Massey W. T., *Allenby's final triumph*, London, Constable and company Ltd, 1920, 347 p.

172. *Memorandum on the Armenian question (Second and Revised Issue)*. Presented by the Armenian National Delegation, Paris, 1918, 17 p.

173. *Memories of a Turkish statesman, 1913-1919: By Djemal Pasha*, New York, George H. Doran Company, 1922, 302 p.

174. Nubar Boghos, *The Pre-War Population of Cilicia*, London, 1920, 7 p.

175. *Out of My Life by Marshal von Hindenburg*, trans. F. A. Holt, London, New York, Toronto and Melbourne 1920), 484 p.

176. Stein, Hermann, *A War Minister and his work. Reminiscences of 1914-1918*, Anchor Press, Ltd., London, 1980, 271 p.

177. Sykes M., *The Caliphs' Last Heritage. A short History of the Turkish Empire*, London, Macmillan, 1915, 638 p.

178. *The Great Powers and the End of the Ottoman Empire*, edited by Marian Kent, Taylor & Francis e-Library, London, 2005, 239 p.

179. Wilcox V., *The Italian Empire and the Great War*, Oxford University Press, 2021, 269 p.

180. William A. Schabas, *Genocide in International Law: The Crimes of Crimes*, Cambridge University Press, 2000, 610 p.

Ֆրանսերեն

181. Bremond E., La Cilicie en 1919-1920 (Extrait de la Revues des Etudes armeniennes-1921), Paris, Imprimerie Nationale, 1921, 76 p.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հայերեն

182. Աճեմեան Խ., Հայկական լեզունը, «Համազգային»-ի տարեգիրք, Պէյրութ, 1953:

183. Ավագյան Բ., Ամերիկահայերի հասարակական-քաղաքական գործունեությունը Սևրի պայմանագրի նախորդող տարիներին, «Մեծ եղեռն. դատապարտումից հատուցում (Հոդվածների ժողովածու)», Երևան, 2011, էջ 50-63:

184. Ավագյան Բ., Կիլիկիահայությունը ԱՄՆ-ում եւ նրանց նպաստը բնօրրանին. Ամերիկահայերը եւ «Արեւելեան-Հայկական Լեզունը», «Հասկ» Հայագիտական տարեգիրք, ԺԱ տարի, 2007-2008, Անթիլիաս, 2009, էջ 61-79:

185. Ավագյան Բ., Հայերի արտահոսքը ԱՄՆ և կապը բնօրրանի հետ սկզբնավորումից մինչև 1985թ., Հայ գաղթականությունը և Հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985թթ., Միջազգային գիտաժողով 8-10 հոկտեմբեր 2011, Երևան-Ծաղկաձոր, զեկուցումներ, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2011, էջ 9-21:

186. Արզումանյան Մ., Միջազգային դիվանագիտությունը և Հայկական հարցն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1969, թիվ 1, էջ 114:

187. Բասմաջեան Կ., Ինչու համար Կիլիկիան կ'ուզենք, «Վերածնունդ», Փարիզ, 1919, թիվ 6-7, էջ 91-92:

188. Գասպարյան Ռ., Հայկական լեզունը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թիվ 1, էջ 3-15:

189. Գարամանուկեան Ա., Հայկական Լեզունը պատմական, իրաական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ե, Պէյրութ, 1974, էջ 39-90:

190. Գօշէն Տընի, Հայաստան, «Հնչակ», Փարիզ, 1914, թիվ 2, էջ 28-29:

191. Կոշեն Դընի, Հայաստան, «Արարատ», Ս. Էջմիածին, 1915, թիվ 1, էջ 30-33:

192. Հարությունյան Կ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը 1916-1920 թվականներին, «Պատմա-Բանասիրական հանդես», Երևան, 1999, թիվ 2-3, էջ 101-111:

193. Հովհաննիսյան Ա., Արևելյան լեգեոնը և Ֆրանսիայի քաղաքականությունը թուրքական նոր հրապարակումների լույսի ներքո, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVIII, Երևան, 2011, էջ 164-170:

194. Մատթեոսեան Վ., Պուենտս Այրէսի Հայ ազգային միութիւնը (1918-1920), «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1998, հ. 18, էջ 131-152:

195. Նաթանեան Մ., Նիւթեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար» նոր տարույ բացառիկ, Բոստոն, 1950, էջ 80-89:

196. Պելլերյան Ա., Ֆրանսա և Հայկական հարցը Առաջին համաշխարհային տարիներուն (1914-1918), «Պատմա-Բանասիրական հանդես», 1990, թիվ 2, էջ 32-40:

197. Պոլ Դյու Վեու, Հայկական լեգեոնի առթիւ, «Այսօր» լրագիր, Փարիզ, 1951, դեկտեմբեր 17:

198. Զիվիլեգեան Ա., Ինքնավար Հայաստանի տերրիտորիան, «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, թիվ 12, էջ 1085-1090:

199. Զիվիլեգեան Ա., Կիլիկիայի հարցը, «Արարատ», Ս. Էջմիածին, 1915, թիվ 1, էջ 25-29:

200. Սելեկիոյ հայ հերոսապետը. Պետրոս Տէովլէթեան, «Արմէնիա», Մարսել, 1915, հոկտեմբեր 6, թիվ 10:

201. Օհանեան Ա., 1918ի Վանի վերջին նահանջը. գաղթականներու անցած ուղին, Պաքուպայի և Նահիր Օմարի գաղթականայնները (Ակնարկ), Իրաքի հայերը գիտաժողովի նիւթեր (29-31 Մայիս 2017), Բեյրութ, Haigazian University Press, 2021, էջ 155-172:

Ռուսերեն

202. Дживелеговъ А., О “Дживелеговской Арменіи” и о “негодованіи патриотически настроенныхъ русскихъ людей”, “Армянскій Вѣстникъ”, Москва, 1916, N 32, с. 2-3.

203. Рѣчь А. К. Дживелегова въ совѣтъ республики 20-го октября 1917 г., “Армянскій Вѣстникъ”, Москва, 1917, N 43-44, с. 3-5.

204. Сайберт У., Справедливость дарования независимости Армении, "Армянский Вестник", Москва, 1917, N 10-11, с. 6-8.

205. Саймондс А., Будущее Армении, "Армянский Вестник", Москва, 1916, N 39, с. 2-3.

206. Сюник, Автономия Армении и интересы России, "Армянский Вестник", Москва, 1916, N 36, с. 2-3.

207. Уильямс У., Армянские чаяния, "Армянский Вестник", Москва, 1917, N 16, с. 2-4.

Անգլերեն

208. Fitzgerald Edward Peter, France's Middle Eastern Ambitions, Sykes-Picot Negotiations and the Oil Fields of Mosul, 1915-1918, *The Journal of Modern History*, The University of Chicago Press, Vol. 66, No. 4, Dec., 1994, pp. 697-725.

209. Halpern P., The Anglo-French-Italian Naval Convention of 1915, *The Historical Journal*, v. 13, no. 1 (March, 1970) p. 106-129.

210. Helmreich Paul C., Italy and the Anglo-French Repudiation of the 1917 St. Jean de Maurienne Agreement, *The Journal of Modern History*, The University of Chicago Press, Vol. 48, No. 2, June, 1976, pp. 99-139.

211. Karol Sorby Jr., The Arab national movement in World War I, *Asian and African Studies*, Vol. 75, 2006, No. 1, pp. 40-54.

212. Kerner Robert J., Russia, the Straits, and Constantinople, 1914-1915, *The Journal of Modern History*, The University of Chicago Press, Vol. 1, No. 3, Sept., 1929, pp. 400-415.

213. Little Edward, Armenia and Turkey, "*Congressional Record*", Washington, March 8, 1918, vol. 56, p. 1-8.

214. Smith J., Great Britain and the 1914-1915 Straits Agreement with Russia: The British Promise of November 1914, *The American Historical Review*, Vol. 70, No. 4, Jul., 1965, pp. 1015-1034.

215. Varnava A., French and British Post-War imperial agendas and forging an Armenian Homeland after the Genocide: The formation of the Legion D'Orient in October 1916, December 2014, *The Historical Journal*, vol. 57, p. 997-1025.

216. Varnava A., Imperialism first, the war second: the British, an Armenian legion, and deliberations on where to attack the Ottoman empire, November

1914–April 1915, *The Historical Research*, vol. 87, no. 237 (August, 2014), p. 533-555.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

- 217. «Այսօր» Փարիզ, 1951, դեկտեմբեր 17:
- 218. «Արարատ», Ս. Էջմիածին, 1914, թիւ 9, 12, 1915, թիւ 1:
- 219. «Արմենիա», Մարսել, 1914, Լ տարի, թիւ 8, 1915, Լ տարի, թիւ 41, ԼԱ տարի թիւ 10:
- 220. «Երիտասարդ Հայաստան», Չիկագո, 1918, հոկտեմբեր 26:
- 221. «Ինքնավար Հայաստան», Բուխարեստ, 1916, թիւ 1-30:
- 222. «Հայկական բանակ», 1996, թիւ 1:
- 223. «Հնչակ», Փարիզ, 1914, թիւ 2:
- 224. «Ճակատամարտ», Պոլիս, 1919, թիւ 40, 43:
- 225. «Վերածնունդ», Փարիզ, 1917, թիւ 1, 2, 5-6, 1918, թիւ 21-22, 23, 1919, թիւ 6-7:
- 226. «Армянский Вѣстникъ», Москва, 1916, N 1, 8, 32, 34, 36, 39; 1917, N 10-11, 16, 43-44.

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

- 227. http://en.wikipedia.org/wiki/Mark_Sykes
- 228. http://en.wikipedia.org/wiki/Maurice_Sarraill
- 229. http://en.wikipedia.org/wiki/Sykes%E2%80%93Picot_Agreement
- 230. <http://web.archive.org/web/20110605134841/http://www.sacktrick.com/igu/germancolonialuniforms/hist%20ottoman.htm>
- 231. http://en.wikipedia.org/wiki/Chronology_of_the_Turkish_War_of_Independence

Սամվել Անդրանիկի Պողոսյան

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պողոսյանը 2003 թվականից դասավանդում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Դասավանդել է նաև Հայաստանի, Հունգարիայի, Մեծ Բրիտանիայի մի շարք բուհերում:

Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում են Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը, հայոց ցեղասպանության պատմությունը, մեծ տերությունների մերձավորարևելյան քաղաքականությունը 20-րդ դարի առաջին քառորդին, հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբարի գործունեությունը, Կիլիկիայի շուրջ զարգացումները 1914-1923 թթ., Ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնը, Հայոց պատմության միջնադարի և նոր շրջանի հիմնահարցերը, դասավանդման խնդիրները բուհում և դպրոցում:

Մասնակցել է ավելի քան երեք տասնյակ միջազգային գիտաժողովների, հրատարակել է ինը տասնյակ գիտական հոդվածներ, 10 գրքեր:

Հրատարակած գրքեր

1. Պողոսեան Ա., Պողոս Նուբար փաշա. ազգային գործիչը, Երևան, «Զանգակ-97», 2004, 264 էջ:
2. Յակոբ Ս. Անասեանի նամականի (ընտրանի): Գիտական խմբագիր և ծանոթագրությունների հեղինակ Ս. Պողոսյան, Երևան, «Գիտություն», 2004, 444 էջ:
3. Պողոսյան Ա., Հայոց ցեղասպանությունը (Պատճառները, ընթացքը, հետևանքները), Երևան, «Զանգակ-97», 2005, 104 էջ:
4. Պողոսյան Ա., Ասրյան Ա., Ստեփանյան Խ., Հովհաննիսյան Է., Հայոց պատմություն (Ուսումնական ձեռնարկ ոչ մասնագիտական ֆակուլտետների համար), Երևան, «ՎՄՎ-Պրինտ», 2009, 304 էջ:
5. Poghosyan S., The Armenian Genocide. A Crime against Humanity and Civilization (A Textbook for International Students), Yerevan, «Tir», 2018, 132 p.
6. Պողոսյան Ա., Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ., Երևան, «Տիր», 2018, 144 էջ:
7. Պողոսյան Ա., Հովհաննիսյան Է., Վիրաբյան Վ., Ստեփանյան Խ., Փահլևանյան Կ., Եփրիկյան Ա., Հակոբ Հարություն, Բեժանյան Մ., Հայ-

կական զինուժը Առաջին աշխարհամարտի տարիներին, Երևան, «Վան Արյան», 2019, 144 էջ:

8. Poghosyan S., Galstyan G., Hovhannisyan E., The collapse of Empires in the 20th century: New states and new identities, «Lusakn», Yerevan, 2020, 332 էջ:
9. Ա. Մարության, Ս. Պողոսյան, Ա. Հակոբյան և ուրիշներ, Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը. քննական հայացք 100-ամյա հեռավորությունից, Երևան, «Լուսակն», 2020, 252 էջ:
10. Վիրաբյան Վ., Պողոսյան Ս., Եփրիկյան Ա., Հայկական զինուժը 1914-1920 թթ., Երևան, «Լուսակն», 2020, 716 էջ:

ՍԱՄՎԵԼ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆ
(պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր)

SAMVEL ANDRANIK POGHOSYAN
(Doctor of Historical Sciences, Professor)

ԿԻԼԻԿԻԱՆ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԾԵՐԸ 1914-1918 ԹԹ.:
ՀԱՅԿԱԿԱՆ (ԱՐԵՎԵԼՅԱՆ) ԼԵԳԵՈՆԸ

THE PROJECTS OF LIBERATION OF CILICIA IN 1914-1918.
THE ARMENIAN (EASTERN) LEGION

Տպագրված է «ԶՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն